

ՀԵՌՓՈՒԼԵՆ ԽՈՍՏՈՒՄՈՒՄ

ՕՏԱՐ ԱՆԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

13

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ВИЗАНТИЙСКИЕ ИСТОЧНИКИ

IV

ФЕОФАН
ИСПОВЕДНИК

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА,
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
Р. М. БАРТИКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դ

ԹԵՈՓԱՆԵՍ
ԽՈՍՏՈՎԱՆՈՂ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ
ԱՊԱԶԱԲԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ

ԲՏԿԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի սեռմամբ

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), **Վ. Ս. ԽԱՉԿՅԱՆ**, Հ. Գ.
ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ),
Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ, Հ. Մ. ԲԱԿՄԱՆՅԱՆ (գիտական ֆարատուգար):
Հատորի խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Ս. Մ. ԿՐԿՅԱՆՍՏՅԱՆ

Կիեվի հրատարակության են երաշխավորել զբախստե՛ր՝ պատ-
մական գիտությունների դեկաներ Բ. Ա. ՈՐԼՈՒԲՈՒՅՍՅԱՆԸ
և Ա. Ե. ՏԵՐ-ՂԵՎՈՆԳՅԱՆԸ

Թեոփանես Խատովանոզ

Թ 460 Ժամանակագրություն (Թարգմ. բնագրից, առաջա-
բանը և ծանոթագր. Հ. Բարթիկյանի, խմբ. Ս. Մ. Կրկյա-
շարյան Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 361 էջ: (Օտար
ազդյունները Հայաստանի և հայերի մասին, 13. Բյու-
զանդական ազդյուններ, 4) ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստ.):

Թեոփանես Խատովանոզի «ժամանակագրությունը» բյուզան-
դական ամենակարևոր ազդյուն է Բյուզանդիայի ու հարևան եր-
կրների պատմության ուսումնասիրության համար՝ հատկապես VII—
VIII դարերի: Նրա տեղեկությունները լույս են սփռում բյուզանդա-
պարսկական և բյուզանդա-արաբական հարաբերությունների, Հա-
յաստանի և հայերի, Բյուզանդիայում գործած հայազգի դոր-
ծիչների դերի վրա:

Նախատեսվում է հայ ժողովրդի պատմությանը հետաքրքրվող-
ների համար:

050504
Թ 703(02)—83 17—83

ԳՄԻ 63.2
902.9

**Թ Ե Ո Փ Ա Ն Ե Ս Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ղ Ը,
ՆՐԱ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
VII—VIII ԳԳ.**

VII—VIII դդ. Բյուզանդական կայսրության ամենաբախտորոշ
շրջաններից է, ամենաճակատագրական թե՛ ներքին և թե՛ արտաքին
նկատառումներով: Այդ դարերում նրա զոյությունն էին սպանում պար-
սիկները, ավարները, խազարները, սլավոնները, բուլղարները և, ամե-
նից շատ՝ արաբները: VII—VIII դդ. կայսրության համար ծանր էին նաև
աշխատավոր զանգվածների դասակարգային պայքարի բռնկումներով
ու աննախադեպ ծավալմամբ: Պայքարը ծավալվել էր ոչ միայն տիրող
ու շահագործվող դասակարգերի միջև, որի արտահայտություններից
մեկը այդ շրջանում բռնկված ու տարածված աղանդավորական շար-
ժումներն էին, այլև նույն իշխող դասակարգերի: VIII դ. և IX դ. առաջին
կեսին այդ պայքարը ծավալվեց «պատկերապաշտների» և «պատ-
կերամարտների» անդիշում կոիվների ու տակնուվրայությունների ջո-
ղի տակ: Թվում է, թե այդ թոհուրոհը ավարտվելու է կայսրության
խորտակմամբ:

VII—VIII դդ. բյուզանդագիտության մեջ ընդունված է որակել ու-
պես մթին ժամանակաշրջան: Բյուզանդական կայսրության պատմու-
թյան և ոչ մի շրջան սկզբնաղբյուրների տեսակետից այնքան աղքատ
չէ, ինչքան հիշյալ դարերը: Դրա պատճառը նախ և առաջ այն է, որ
պատկերամարտների գրչին պատկանող պատմական երկերը պատկե-
րապաշտության լիակատար հաղթանակից հետո (842) նրանց քաղա-
քական հակառակորդների կողմից ոչնչացվեցին, հրապարակի վրա մը-
նացին այդ շրջանը լուսաբանող ընդամենը երկու պատմական երկ՝
պատկերամարտների հանդեպ թշնամարար տրամադրված Թեոփանես
Խատովանոզի «ժամանակագրությունը» և Նիկեիոսի պատրիարքի «Հա-
մատոտ պատմությունը»: Երկուսն էլ օգտագործել են իրենց քաղաքական
հակառակորդների գրչին պատկանող և այժմ կորած երկերը, նրան-

ցից քաղած տեղեկությունները անցկացնելով իրենց հավատամքի քուրայի միջով:

Ո՛վ էր Քեոփանես Խոստովանողը: Ի տարբերություն բյուզանդական բազում հեղինակների, որոնց վերաբերյալ կենսագրական տվյալները ազդատիկ են, սփռված իրենց աշխատությունների տարբեր էջերում, Քեոփանեսի վերաբերյալ մեր տեղեկությունները համեմատաբար առատ են: Հարցն այն է, որ լինելով իր ժամանակի աչքի ընկնող քաղաքական և եկեղեցական գործիչ, Քեոփանեսը պատկերամարտ կայսրերի կողմից հալածանքների է ենթարկվել, վախճանվել արսորավայրում: Պատկերապաշտության հաղթանակից հետո պատկերամարտների հակառակորդների կողմից նա սրբացվեց, ստեղծվեցին եկեղեցու «սուրբ այր» Քեոփանեսի «Վարքերը»¹, որոնք և, ինչքան էլ կանխակալ տեսանկյունից գրված լինեն, հնարավորություն են տալիս գծելու նրա կենսագրությունը: Այդպիսի հնարավորություն են ընձեռում հայսամալորքները, որտեղ մարտի 12-ի (կամ՝ 9-ի) տակ նշվում է սուրբ Քեոփանեսի հիշատակը, ինչպես և նրան նվիրված բազմաթիվ շարականներ: Նշենք այստեղ, որ Քեոփանեսը IX դ. միակ սուրբն է, որի վարքը մեծ հաճույքով ընթերցվում էր հավատացյալների շրջանում: Նրա մահից անմիջապես հետո նրա կենսագրությունը կազմել է Քեոզորոս Ստուդիտեսը՝ իր մի նամակում: Սրբի մահից երեսուն տարի անց նրա կենսագրության շարադրությունը ձևաձևաբան եղան պատրիարք Մեթոդիոսը (842—847), հագիոգրաֆ Սաբան, վրախեռնայի տաճարի լուսարար Նիկեփորը, պրոտասեկրետ Քեոզորոսը, ապա հայտնի վարքագիր Սիմեոն Մետափրաստեսը: Պահպանվել են նաև երկու անանուն վարքագրություններ²:

Քեոփանեսը ծնվել է շուրջ 760 թվականին, հավանաբար Կոստանդնուպոլսում: Ծնողները՝ Իսահակն ու Քեոզոտեն, կենսագրի ասելով, շատ հարուստ մարդիկ էին: Հայրը զորավարի բարձր աստիճան ուներ և գլխավորում էր «էգեական ծով» անունը կրող բանակաթեմը: Կարծիք է հայտնվել, որ Քեոփանեսի ծնողները էգեական ծովի կղզիներում մեծ ձեռնարկություններ ունեին, որտեղ օգտագործվում էր ստրկական աշխատանքը³:

¹ St. Theophanis Chronographia, ed. C. de Boor, vol. II, Lipsiae, 1885: p. 3—30: Քեոփանեսի վարքագրությունների մասին տե՛ս Krumbacher, Geschichte, S. 347: Դրանց լիակատար ցուցակը՝ Bibliotheca hagiographica, t. II, p. 292—294
² Лопарев, Жития святых, стр. 94—95.
³ S. Runciman, in Cambridge Economic History of Europe, vol. II, 1953 p. 106 (аруд: Браунинг, Рабство, стр. 45, прим. 20).

Քեոփանեսը երեք տարեկան հասակում որբանում է հորից և դառնում նրա հսկայական հարստության ժառանգորդը: Տասներկու տարեկան հասակում նրան նշանում են, բայց ութ տարի անց, երբ պիտի տեղի ունենար հարսանյաց հանդեսը, նա հրաժարվում է և իր նշանածի հետ բնակվում աշխարհական, վանականին հատուկ կյանք էին վարում:

Վեոն IV կայսրը (775—780) Քեոփանեսին ուղարկում է գլխավորելու Կյուզիկոսի բերդի շինարարությունը, ինչ որ նա կատարում է, շինարարության վրա ծախսելով, վարքագրի ասելով, և սեփական միջոցներով:

Քեոփանեսը 21—22 տարեկան էր, երբ վախճանվեց Վեոն IV կայսրը: Գուցե ժառանգում է կայսրուհի Իրենեն և նրա որդի Կոստանդին VI-ը, որոնց օրոք պատկերամարտությունը ժամանակավորապես զիջում է իր զինքերը: Այդ ժամանակ ահա Քեոփանեսն ու նրա նշանածը հնարավորություն են ստանում իրենց հայեցողությամբ անօրինելու սեփական ունեցվածքը: Վարքագրի համաձայն նրանք այն բաժանում են աղքատներին, իսկ իրենց ծառաներին (οὐζιστοῦς) ազատություն շնորհում: Քեոփանեսի նշանածը հաստատվում է Իշխանաց կղզում կառուցված վանքի իրենց պատկանող կալվածքում, իսկ Քեոփանեսը դիմում է Օպտիկոն բանակաթեմի՝ Պրոպոնտիսի ափին, Սիգրիանն լեռնային շքեղանում գտնվող Պոլիսրոնիոսի վանքը, վանահայր Ստրատեգիոսին: Հիշյալ վանքը ժամանակին Ստրատեգիոսին էր նվիրել հենց Քեոփանեսը, ով, ձեռամբ հիշյալ վանահոր, վանական է օծվում: Այնուհետև վանքը բազում կալվածներով Ստրատեգիոսին թողնելով, վերջինիս ցանկությամբ անցնում է Կալոնիմոս կղզին, որտեղ, իր հայրական կալվածքում վանք է կառուցում: Իր նյութական կարիքները նա հոգում է ձեռագրերի արտագրությունից վաստակած միջոցներով: Վանահոր մահից հետո Քեոփանեսը վերադառնում է Սիգրիանն լեռը և պարտք վերցրած դրամով ում Գեորգից գնում է Ագրոս կոչվող գյուղը և հաստատվում այնտեղ: 780 թ. հետո Ագրոսում նա վանք է կառուցում և, որպես նրա վանահայրը, մասնակցում 787 թ. VII տիեզերական ժողովին՝ ընդդեմ պատկերամարտության:

Հիսուն տարեկան հասակում Քեոփանեսը ծանր հիվանդանում է և մնացած տարիները ապրում անկողնին գամված:

Պատկերամարտության հաղթանակը Իրենն կայսրուհու օրոք երկար կյանք չունեցավ: Նիկեփոր I կայսեր (802—811) և հատկապես Վեոն V Հայկազնի օրոք (813—820) այն ուժգին հարված ստացավ: Սկսվեցին

պատկերապաշտոնների նոր հալածանքները: Պատկերամարտության բարձրացրած ալիքները չէին կարող շհասնել նաև պատկերապաշտոնների շրջանում մեծ հեղինակություն վայելող Թեոփանեսին: Ծանր հիվանդ Թեոփանեսին բերում են Կոստանդնուպոլիս, որտեղ Լևոն V կայսրը նրանից պահանջում է հավանություն տալ իր պատկերամարտական քաղաքականությանը, մի բան, որ մերժվում է: Կայսրը նրան երկու տարի արդելափակված է պահում Կոստանդնուպոլսի էլեթերիոսի պալատում: Այստեղից նրան 818 թ. տեղափոխում են Սամոթրակե կղզին, որտեղ 23 օր անց, 818 թ. մարտի 12-ին նա կնքում է իր մահկանացուն և թաղվում տեղում: Լևոն V-ի մահից հետո Թեոփանեսի աշակերտները իրենց ուսուցչի աճյունը բերում են Ագրոս վանքին մոտիկ գտնվող Հին-րիս վայրի սբ. Պրոկոպիոսի տաճարը, իսկ հաջորդ տարի տանում սամփոփում են Ագրոսի վանքում:

Ահա համառոտ գծերով Թեոփանես խոստովանողի կենսագրությունը:

Թեոփանես խոստովանողը իր ընկեր Գեորգ Սինկելլոսի խնդրանքով գրել է 284—813 թթ. շրջանի պատմությունը, որը բնագրում վերնագրված է. «Θεοφάνους ἱεροστολεῖς καὶ ἡγουμένου τοῦ Ἀγροῦ καὶ ὁμολογητοῦ Χρονογραφία ἐπὶ ΦΚΗ» («Թեոփանես խոստովանողի՝ մեղապարտ վանականի և Ագրոսի վանքի վանահոր 528 տարվա ժամանակագրություն»): Գեորգ Սինկելլոսը շուրջ 806 թ. սկսել էր կազմել մի ընդարձակ ժամանակագրություն՝ աշխարհի արարչագործությունից ըսկիլը առնող: Այն, հեղինակի 810 թ. վախճանվելու պատճառով, կիսատ էր մնացել, հասցվել էր մինչև Դիոկլետիանոս կայսեր թագավորությունը՝ 284 թ.: Գեորգ Սինկելլոսը, զգալով իր կյանքի մոտալուտ վախճանը, իր պատմագրական երկը ավարտին հասցնելու գործը վստահել է Թեոփանեսին: Այսպիսով, Թեոփանեսը իր «Ժամանակագրության» վրա աշխատել է սկսած 811—815 թթ., կամ 816 թ., սկսելով այն տեղից, որտեղ վերջակետ էր դրել Գեորգ Սինկելլոսը՝ 284 թվականից և հասցրել մինչև Միքայել I կայսեր թագավորությունը (811—813): Նախ-

քան «Ժամանակագրության» պատմական ու դիտական արժեքի մասին խոսելը, պետք է հատուկ շեշտել, որ պատկերամարտ կայսրերի կողմից դաժան հալածանքների ենթարկված Թեոփանես խոստովանողը ծայրահեղ աշառու է պատկերամարտ կայսրերի, պատկերամարտական ողջ շարժման նկատմամբ ընդհանրապես: Նրանց թագավորությունը Թեոփանեսի երկում ներկայացված է որպես Հռոմեական կայսրության (այսինքն՝ Բյուզանդական կայսրության) ամենամոռյալ էջը, երբ այդ կայսրերի դեմ էին հանդես գալիս ոչ միայն պետության արտաքին թշնամիները, այլև անգամ բնության տարերքը⁵: Նույնիսկ Լևոն III կայսեր՝ Բաբենների դեմ 717, 725 և 739 թթ. տարած փայլուն հաղթանակները, (որոնց մասին վկայում են և արաբ հեղինակները), Թեոփանեսի համար աննշան դեպքեր են: Նույնպիսի «զնահատականի» են արժանացած և Կոստանդին V-ի՝ բուլղարների դեմ տարած փայլուն հաղթանակները:

Որո՞նք են Թեոփանես խոստովանողի օգտագործած աղբյուրները: 284 թվականից մինչև Փոկասի թագավորությունն (602—610) ընկած ժամանակաշրջանի պատմության շարադրման համար նա օգտագործել է Սոկրատի, Սոզոմենոսի և Թեոդորետոսի եկեղեցական պատմությունները, «Exc. Barocc.» անանուն երկը, Եվագրիոսի, Մալալասի պատմությունները, Ջատկական ժամանակագրությունը, Պրոկոպիոս Կեսարացու⁶, Հովհաննես Անտիոքացու, Թեոփիլակտոս Սիմոկատասի⁷ երկերը: Այս աղբյուրները, բացի Հովհաննես Անտիոքացու աշխատությունից, որ հատվածաբար է պահպանվել, հասել են մեզ: Սակայն Փոկասի ժամանակաշրջանից սկսած Թեոփանեսի աղբյուրները մեծամասամբ հայտնի չեն: Հերակլիոս I կայսեր շրջանի մասին (610—641) կարելի է հիշատակել զխավորապես Գեորգ Պիսիդացու «De expeditione Heraclii imperatoris contra Persas» և «Heraclias» երկարաշունչ պոեմները⁸, իսկ ավելի ուշ շրջանի համար⁹ Գերմանոս պատրիարքի և Հովհան Դամասկացու¹⁰ գրվածքները, Գրիգոր պապի նամակը Լևոն III

5 Успенский, Очерки, III, стр. 425.
 6 Տէ՛ս Կուչրօս, Феофан Исповедник, էջ 62—73:
 7 Տէ՛ս Կուչրօս, Феофан—компилятор Феофилакта, էջ 203—206:
 8 Հերակլիոսի և նրա հարստության (610—711) շրջանի պատմության շարադրման համար Թեոփանեսի օգտագործած աղբյուրների վերաբերյալ տե՛ս Proudfoot, The sources of Theophanes, p. 367—439.
 9 Անատասիոս կայսեր պատմության վերաբերյալ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների մասին տե՛ս Чернуцов, До питания, էջ 341—345:
 10 Հովհան Դամասկացու մի գրությունը Թեոփանեսը հղում է տալիս (ταύτων ἐγκωμίοις: λόγων τετιμαχεν ὁ ὅσιος πατὴρ ἡμῶν Ἰωάννης): Տէ՛ս ստորև, էջ 128:

կայսեր (717—741), Բայց, հարկավ, սրանք պատմական երկեր չեն, սրանց հիման վրա պատմություն գրել հնարավոր չէ¹¹:

Ամբողջ VIII դ. պատմության և մասնավորապես նշանավոր պատկերամարտ կայսրեր Լևոն III-ի և նրա որդի Կոստանդին V-ի (741—775) շրջանի վերաբերյալ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների մասին քիչ բան է հայտնի Բացառված է պնդել, թե մեր հեղինակի աղբյուրներն եղել են բանավոր: Արաբներին, բուլղարներին դեմ կայսրության մղած պատերազմների, կայսերական ընտանիքի, պատրիարքների փոփոխման վերաբերյալ փաստերը մեր պատմիչի պատմական երկում այնքան ճշգրիտ են ու հստակ, որ նման ենթադրության համար հիմք չկա: Այսպիսով, որոշ է, որ այդ շրջանի պատմությունը Թեոփանեսի ինքնուրույն աշխատանքի արգասիքը չէ, այլ վկայությունն այն բանի, որ նրանից առաջ մեկը կամ ոմանք մշակել են այդ հարուստ փաստական նյութը, որը և Թեոփանեսի համար աղբյուր է ծառայել: Նրանցից մեկը VIII դ. վերջում ստեղծված և գիտությունը «Մեծ ժամանակագիր» (Μέγας χρονολόγιος) անվան տակ հայտնի մի պատմական երկ է, մյուսը՝ 713 թ. զեպերի շարագրանքով ավարտվող ոմն պատրիկ Տրալանոսի գործը¹²:

Կասկածից վեր է, որ Թեոփանեսի գլխավոր աղբյուրը՝ «Մեծ ժամանակագիրը», պիտի հանդես եկած լինեք պատկերամարտ կայսրերի, հատկապես Լևոն III-ի և Կոստանդին V-ի (որա համար նա ուներ բոլոր հիմքերը), ընդհանրապես պատկերամարտական շարժման ժամանակաշրջանի ներբողոցի դեբոս, հանգամանք, որ պատկերապաշտության հաղթանակից հետո նրա երկի ոչնչացման պատճառ դարձավ: Բայց պատկերապաշտությունը հաղթանակեց Թեոփանեսի մահից շուրջ քառորդ դար անց: Երբ մեր պատմիչը ձեռնարկեց իր «ժամանակագրության» շարադրանքը, իշխանության գլուխ էին կանգնած այնպիսի թունդ պատկերամարտներ, ինչպիսիք էին Նիկեփոր I-ը և Լևոն V Հայկազնը, հետևաբար պատկերամարտական ոգով գրված գործը Թեոփանեսի (ինչպես կոտեսենք ստորև՝ նաև Նիկեփոր պատրիարքի) ձեռքում եղել է¹³, այլ հարց է, թե ինչ ձևով և ինչքանով է Թեոփանեսը իր աշխատության մեջ ընդգրկել այն: Համեմատություն կատարելու հնարավորությունից

¹¹ Успенский, Очерки, III, стр. 435: Թեոփանեսի կողմից 780—802 թթ. պատմության շարադրման համար օգտագործված աղբյուրների մասին տե՛ս Speck, Kaiser Konstantin VI, S. 389—398.

¹² Чичуров, Византийские исторические сочинения, стр. 18—19.

¹³ Успенский, Очерки, III, стр. 421.

մենք զուրկ ենք¹⁴: Ինչ վերաբերում է Թեոփանեսի «ժամանակագրության» վերջին մասին, որը առավել կամ պակաս շափով Թեոփանեսի ինքնուրույն աշխատանքի արգասիքը պիտի համարել, ապա այստեղ նա իր ապրած ժամանակաշրջանի պատմությունը տալիս է որպես ականառես և ականջալուր հեղինակ:

Բայց պատկերամարտական ոգով գրված այդ ժամանակագրությունը, ինչպես և բանավոր աղբյուրները և իր՝ Թեոփանեսի, ականատեսի և ականջալուր հեղինակ լինելու հանգամանքները չեն հանդիսացել «ժամանակագրության» միակ աղբյուրները: Հատկապես վաղ շրջանի վերաբերյալ բացի հունարեն նշված հեղինակների գործերից, Թեոփանեսն օգտագործել է նաև ասորական աղբյուրներ, ավելի ճիշտ՝ Թեոփանեսը և ասորի հեղինակները ընդհանուր աղբյուրներ են ունեցել¹⁵:

Ինչպիսի՞ն էր Թեոփանեսի աշխատանքի ոճը, ի՞նչ կարելի է ասել համեմատելով Թեոփանեսի «ժամանակագրության» այն մասերը, որոնց շարադրման համար օգտագործված աղբյուրները պահպանվել են և համեմատություն անելու հնարավորություն են ընձեռում: Պետք է նշել, որ մեր հեղինակը որպես բանաբաղ աչքի է ընկնում իր աղբյուրի ճշգրիտ վերարտադրությամբ, այն աստիճանի ճշգրիտ, որ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների (օրինակ՝ Պրոկոպիոս Կեսարացու գործերի) հրատարակիչները Թեոփանեսի «ժամանակագրության» տվյալներին դիմում են իբրև տարընթեքվածքների¹⁶: Միաժամանակ պիտի ասել, որ եթե մեր պատմիչը փաստական նյութը վերարտադրելու հարցում «անաշտ» է, նա ամենևին էլ «պասսիվ» չէ ձեռքի տակ ունեցած աղբյուրի հեղինակի հայացքների հանդեպ: Թեոփանեսի պատմագրական մեթոդը ակտիվ է, նա ունի սեփական հայացք ու աշխարհայացք¹⁷, որը ցցուն կերպով հանդես է գալիս այս կամ այն աղբյուրից քաղած նյութը վերարտադրելու ժամանակ: Նա հատկապես ըննադատական վերաբերմունք ունի բյուզանդական կայսրերի նկատմամբ, նշանակություն չունի՝ ժամանակագրական առումով իրեն մոտ են կանգնած նրանք, թե ոչ¹⁸:

Թեոփանեսն ամենայն ճշգրտությամբ բերում է իր աղբյուրներից քաղած թվական տվյալները, բայց ինչպես ցույց են տվել ուսումնասի-

¹⁴ Նույն տեղում, III, էջ 420, IV, էջ 236:
¹⁵ Brooks, The sources of Theophanes, էջ 578—587: Pigulevskaja, Theophanes' Chronographia, էջ 55—60: Նույնի, Хронография Феофана, էջ 152—161:
¹⁶ Чичуров, Феофан Исповедник, стр. 62.
¹⁷ Նույն տեղում, էջ 71:
¹⁸ Նույն տեղում:

րողները, հաճախ ազավազում է հատուկ անուններն ու տեղանունները¹⁹: Քեոփանեսը որոշ ղեպերում, առանց այդ բանը նկատելու, միևնույն աշխարհագրական վայրը տեղադրում է տարբեր տեղերում²⁰: Գաբացատրվում է ոչ թե Քեոփանեսի աշխարհագրական գիտելիքների պակասությունը, այլ այն հանգամանքով, որ կոստանդնուպոլսեցի Քեոփանեսի համար աշխարհագրությունը այնքան էլ առաջնակարգ նշանակություն չունի²¹:

Ինչ վերաբերում է Քեոփիլակոսոս Սիմոկատտասի գործին, ապա Քեոփանեսն իր երկում կերպարանափոխում է իր ազգյուրի հետադարձական ոճը, այն դարձնում է մանրամասնեղ շարժում, աչքաթող անում անտիկ Հունաստանի հեղինակներից կատարված բազմաթիվ մեղքերումները: Բայց հակառակ այդ բոլորին, ինչպես և Պրոկոպիոս Կեսարացու ղեպում, նա վերարտադրում է իր ազգյուրը ամենայն ճշգրտությամբ: Նա ոչ թե սոսկ կրճատում է իր ազգյուրը, այլ մշակում այն²²:

Չի կարելի խոսել Քեոփանեսի պատմական երկի մասին, առանց հատուկ կանգ առնելու հեղինակի որդեգրած ու մշակած ժամանակագրական սխեմայի վրա, քանզի այն միանգամայն տարբերվում է բյուզանդական բոլոր պատմագիրների օգտագործածից: Նախ ասենք, որ Քեոփանեսը ղեպերը շարադրում է խստագույնս ըստ տարիների, ընդ որում տալիս է նույն ղեպի վերաբերյալ բազմաթիվ թվական տրվյալներ: Ամենից առաջ նա չի օգտագործում աշխարհի արարչագործության ընդունված Կոստանդնուպոլսի էրան, որի համաձայն մ.թ. առաջին տարին համապատասխանում է աշխարհի արարչագործության 5508 թ., այլ այնքանորչա՞ն թվականը, որի 5492 թ. համապատասխանում է մ.թ. առաջին տարուն: Բայց Քեոփանեսը չի բավարարվել միայն այդ թվականը նշելով: Նա միաժամանակ նշում է ինդիկտոնի տարիները²³, Քրիստոսի մարդեղության, Հռոմի, Կոստանդնուպոլսի, Անտիոքի, Երուսաղեմի, Ալեքսանդրիայի հոգևոր պետերի, բյուզանդական կայսեր, պարսից արքայի, արաբ խալիֆայի գահակալության տարեթվերը: Չունայած այդ բոլոր մանրամասնություններին, ուսումնասիրողները Քեո-

փանեսի ժամանակագրական տվյալները ծայր աստիճան խառնաշփոթ էին համարում²⁴, Բայց հատուկ հետազոտությունը ժխտում է այդ ծայրահեղ կարծիքները: Մասնագետները նշում են միայն, որ Քեոփանեսի աշխարհի արարչագործության թվականը 6102-ից (մ.թ. 609/610) 6265-ը (մ.թ. 772/773), բացառյալ 6207-ից (մ.թ. 714/715) մինչև 6218-ը (մ.թ. 725/726 թ.) տարեթվերը ինդիկտոնի տարիների համեմատությամբ մեկ տարով հտ են մնում²⁵: Վեճեր կան այն հարցի վերաբերյալ, թե Քեոփանեսի նոր տարին երբ է սկսվում: Ոմանք ընդունում են սեպտեմբերի 1-ը, իսկ ըստ Վ. Գրյունելի այն սկսվում է մարտի 25-ին²⁶:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Բյուզանդիայի VII—VIII դդ. պատմության ազգյուրների կատարյալ սովոր պիտի ստիպեր հետագա ժամանակագիրներին իրենց աշխատություններում տվյալ շրջանը լուսաբանելու համար լայնորեն օգտագործելու Քեոփանեսի «ժամանակագրության» տվյալները: Նրանից օգտվել է Կոստանդին Միրանաձինը հատկապես իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ: Այդ գրքի 14-րդ գլուխը՝ «Մուհամեդի ծագումնաբանության մասին», 17-րդ գլուխը՝ «Երանելի Քեոփանեսի ժամանակագրությունից», 18-րդը՝ «Արաբների երկրորդ առաջնորդ՝ Աբուբարը, իշխել է երեք տարի», 19-րդը՝ «Արաբների երրորդ առաջնորդ՝ Օմար», 20-րդը՝ «Արաբների չորրորդ առաջնորդ՝ Օթման», 21-րդը՝ «Քեոփանեսի ժամանակագրությունից, աշխարհի արարչագործության 6171 թ.», 22-րդը՝ «Երանելի Քեոփանեսի ժամանակագրությունից՝ նրանց (արաբների) մասին, և Մուավիայի ու նրա տոհմի մասին, ինչպես նա անցավ Իսպանիա: Հոռոմայեցիների կայսր Հուստինիանոս Քթատ», 25-րդը՝ «Սիգրիանների սուրբ Քեոփանեսի պատմությունից» շարադրված են Քեոփանեսի «ժամանակագրության» հիման վրա: Քեոփանեսից օգտվել են նաև Գեորգ Վանականը (IX դ.), Սիմեոն Լոզոթետը (X դ.), Գեորգ Կեղրենոսը (XI դ.),

19 Նույն տեղում, էջ 64:
20 Նույն տեղում, էջ 66:
21 Նույն տեղում, էջ 67:
22 Чужуров, Феофан—компилятор Феофилакта, стр. 203—206.
23 Индиктационные значения в начале Костантинопольского года, в Костантинопольском Мирабанде, էջ 230, Հովհաննես Սկիլիցես, էջ 276:

24 Успенский, Очерки, III, стр. 397.
25 Քեոփանեսի ժամանակագրության (խրոնոլոգիայի) մասին տե՛ս Hubert, Observations, էջ 491—505; Brooks, The Chronology, էջ 82—97: Նույնի՝ Indictions, էջ 503—504; Hodgkin, The Chronology, էջ 283—289; Martroye, Chronologie, էջ 292—295; Ostrogorsky, Die Chronologie, էջ 1—56: Նույնի՝ Histoire, էջ 117—118; Grumel, L'année, էջ 396—408: Чужуров, Византийские исторические сочинения, էջ 19: Քեոփանեսի՝ Քրիստոսի մարդեղության թվականները սխալ են:
26 Grumel, L'année:

Հովհաննես Զոնարասը (XII դ.), Թեոդորոս Սկուտարիոտեսը (XIII դ.) և բազմաթիվ անանուն ժամանակագիրներ²⁷:

Թեոփանեսի պատմական երկը արժեքավորվել է գեոուս հեղինակի մոտիկ ժամանակակիցների կողմից: Բյուզանդական պատմագրական գործերի մեջ նրան առանձնահատուկ բախտ է վիճակվել: 873—875 թթ. միջև այն լատիներեն է թարգմանվել Հոռմի պապի նվիրակ Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի կողմից²⁸: Հարկավ, Անաստասիոսի ձեռքում եղել է եթե ոչ Թեոփանեսի ինքնագիրը, համենայն դեպս նրանից անմիջապես կատարված մի արտագրություն: Այս հանգամանքը հսկայական նշանակություն ունի Թեոփանեսի հունարեն բնագրի ուսումնասիրության, հաճախ սրբագրման ու լրացման տեսակետից: Անաստասիոսի թարգմանությունը, որ կրում է «Chronographia tripartita» խորագիրը (Յոմասյան ժամանակագրություն) բազմաթիվ վեճեր է առաջացրել ուսումնասիրողների շրջանում: Նշենք այստեղ, որ Անաստասիոսի ինքնագիրը չի պահպանվել, մեզ հասել են ավելի ուշ շրջանի արտագրություններ և հարց է, թե ինչքանով են նրանք ճիշտ արտահայտում Անաստասիոսի գրածը: «Chronographia tripartita»-ի հնագույն արտագրությունները, որոնք ընկած են 4. դե Բոորի հրատարակության հիմքում, հետևյալներն են. «Cassinensis 6, Palatinus 826 և Historia Miscella (պիսավորապես նրա երկրորդ կեսը՝ Vaticanus Palatinus 909): Վերջինիս մասին տիրող է այն կարծիքը, որ դա Լանդուֆոս Սագակի ձեռագիրն է, որ Անաստասիոսի թարգմանության X—XI դդ. մի գրչագրից արված արտագրություն է²⁹:

Անաստասիոսը թարգմանության սկզբում խոսք է տալիս հափտարիմ մնալ իր բնագրին, իր կողմից որևէ բան չավելացնել (nihil meum in hoc opere prosus insertum praenosce) և նա խոստումը կատարում է: «Chronographia tripartita»-ի ամենարժանի գիր հետազոտող 4. դե Բոորը նրա մեջ նշում է թարգմանչի ընդամենը չորս ընդմիջարկություն, որոնք, ի դեպ, անհրաժեշտ էին բնագիրը հասկանալի դառնալու համար³⁰: Այդուհանդերձ դե Բոորը նշում է

նաև, որ Թեոփանեսի հունարեն բնագրի իսկական թարգմանության մասին կարելի է խոսել միայն սկսած Հուստինոս II-ի, անգամ Մավրիկիոսի շրջանի պատմությունից միայն: Դրան նախորդող շարադրանքը, որն իրենից ներկայացնում է ժողովաբաղություն, հաճախ՝ համառոտագրություն, դժվար թե հունարեն բնագրի բնական ուսումնասիրության համար որևէ արժեք ներկայացնի³¹: Հակառակ այդ բոլորին, դե Բոորը, թեև ամենամանրակրկիտ ձևով ուսումնասիրել է Անաստասիոսի առավելություններն ու թերությունները՝ որպես թարգմանչի, ի վերջո հրաժարվեց նրա թարգմանությունը որևէ կերպ արժեքավորելու մտքից հունարեն բնագրի ուսումնասիրության համար³²: Նա անգամ կասկած է հայտնել Անաստասիոսի հունարեն լեզվի գիտելիքների վերաբերյալ³³: Հետագա ուսումնասիրողները չընդունեցին Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի թարգմանության դե Բոորի տված գնահատականը: Ե՛վ Պրեոբրաժենսկիին³⁴, և՛, հատկապես, Ուսպենսկին ըստ արժանվույն գնահատեցին թարգմանության նշանակությունը հունարեն բնագրի բնության առնչությամբ: Ուսպենսկին ցույց տվեց, որ հունարեն բնագրի համեմատությամբ լատիներեն թարգմանության մեջ առկա բացթողումներն ու հավելումները թույլ են տալիս եզրակացնելու, որ դրանք Անաստասիոսի ինքնակամ խմբագրման արգասիք չեն, այլ արտացոլումը Թեոփանեսի հունարեն այն բնագրի, որ իր ձեռքի տակ է ունեցել Անաստասիոսը³⁵: Ուսպենսկին բնագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ եկել է այն եզրակացության, որ Անաստասիոսը անշափ ճշգրիտ է, նա ջանացել է բաց շփոթելու անգամ իր համար դժվարամատչելի և լատիներենում իմաստը մթազնոց և ոչ մի բան³⁶, որ Chronographia tripartita-ն մեղ ամենից շատ է մոտեցնում Թեոփանեսի նախնական շարադրանքին³⁷: Անաստասիոսը ոչ հազվադեպ տալիս էր հունարեն բնագրի տառացի թարգմանությունը, չփորձելով անգամ պահպանել լատիներենի շարահյուսության օրենքները: «Կարելի է վստահորեն ասել, — գրում է Ուսպենսկին, — որ Անաստասիոսը թարգմանության ենթակա բնագրի

31 նույն տեղում, էջ 400:

32 նույն տեղում, էջ 398:

33 նույն տեղում, էջ 418:

34 Преображенский, Летописное повествование, էջ 50 և հտ.:

35 Успенский, Очерки, III, էջ 416: Տե՛ս նաև Липшиц-ի առաջարկներ Ուսպենսկու հիշյալ աշխատության մասին, «Византийский Временник», т. III, стр. 396.

36 Успенский, Очерки, III, էջ 419: Հմմտ. Преображенский, Летописное повествование, стр. 50.

37 Успенский, Очерки, III, էջ 419:

27 Sk'a Moravcsik, Byzantinoturcica, I, S. 533.

28 Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի աշխատասիրած լատիներեն թարգմանության վերջին (բնական) հրատարակությունն իրականացրել է Կարոլոս դե Բոորը: Sk'a Anastasii Bibliothecarii summae ac apostolicae sedis Chronographia tripartita, in Theophanis Chronographia, rec. C. de Boor, vol. II, Lipsiae, 1885, p. 31—340: Նրա մասին նույն տեղում, էջ 401—435:

29 Успенский, Очерки, III, стр. 390.

30 նույն տեղում, էջ 413:

գրական «սրբագրման», կատարելագործման ուղղութիւնով շէր էլ մտածում»³⁸:

Անաստասիոսը թարգմանել և իր «Chronographia tripertita»-ին է կցել նիկեփոր պատրիարքի պատմական երկրորդ աշխատությունը՝ «Χρονογραφικόν σύντομον»-ը, աստվածաշնչային թագավորների, պարսից, հելլենիստական շրջանի թագավորների, հռոմեական և բյուզանդական կայսրերի ցուցակը՝ մինչև 829 թ.:

Խոսել Թեոփանեսի «Ժամանակագրության» մասին առանց կանգ առնելու Թեոփանեսի ժամանակակից մի այլ պատմիչի երկի՝ պատրիարք նիկեփորի (806—815) «Համառոտ պատմության» վրա («Breviarium»), անհնարին է, քանզի, ինչպես կասվի ստորև, եթե չհաշվենք Թեոփանեսի պատմական երկը, ապա նիկեփորի «Breviarium»-ը հանդիսանում է մեզ հասած, բյուզանդիայի VII—VIII դարերի պատմության վերաբերող միակ աղբյուրը: Ե՛լ Թեոփանեսը, և՛ նիկեփորը իրենց երկերի վրա աշխատել են IX դ. 10-ական թվականներին և երկուսն էլ հենվում են այժմ կորած միևնույն աղբյուրների վրա³⁹: Այս հանգամանքը շատ կարևոր է Թեոփանեսի «Ժամանակագրության» տվյալները բնութագրելու առումով: նիկեփորի աշխատությունը հունարեն բնագրում կըրում է հետևյալ խորագիրը. «Τὸν ἐν ἀγίοις πατέρος ἡμῶν Νικηφόρου πατριάρχου Κωνσταντινουπόλεως Ἱστορία σύντομος ἀπὸ τῆς Μαυρικίου βασιλείας» («Արքայն հորն մերոյ նիկեփորայ Կոստանդնուպոլսոյ պատրիարքի Համառոտ պատմութիւն ի թագաւորութենէն Մորկայ»)՝⁴⁰: Այն ընդգրկում է 610—769 թթ. պատմությունը:

Ինչպես ասվեց, Թեոփանեսն ու նիկեփորը օգտվել են միևնույն աղբյուրներից: Դրա մասին է վկայում այդ երկու հեղինակների երկերում նկատվող բազում հատվածների նույնությունը⁴¹: Տեղ-տեղ նմա-

³⁸ Նույն տեղում, էջ 417:

³⁹ Moravcsik, Byzantinoturcica, I, S, 456—457.

⁴⁰ Հուշարեն բնագրի հրատարակություններն են. Nicophori, Breviarium: քննական բնագրի հրատարակությունն իրականացրել է Կ. դե Բոորը. Nicophori, archiepiscopi Constantinopolitani opuscula historica, ed. C. de Boor, Lipsiae, 1880. Ունի ուսուերեն թարգմանություն. Луншун, Никифор: Шի քանի հատվածները հուշարեն բնագրով և ուսուերեն թարգմանությամբ, ընդարձակ ծանոթագրություններով հրատարակել է Չիչուրովը. Чичуров, Византийские исторические сочинения, էջ 151—184: Հատվածաբար թարգմանված է նաև գերմաներեն, բուլղարերեն, սերբերեն, լեհերեն և հունգարերեն (տե՛ս Чичуров, նույն տեղում, էջ 149):

⁴¹ Успенский, Очерки, III, էջ 430:

նություններն այնքան են բառացի, իսկ տարբերություններն այնպիսիք, որ գիտնականներին ստիպեցին հրաժարվել ժամանակին հայտնված այն կարծիքից, թե նրանցից մեկն ու մեկը օգտվել է մյուսից⁴²: Պատկերամարտական այժմ կորած ժամանակագրությունից նիկեփորի քաղած նյութը բազմաթիվ է և Թեոփանեսի կողմից, բայց այդ երկու պատմիչներն իրենց առաջ տարբեր խնդիրներ են դրել: Թեոփանեսը գրում է ավելի ընդարձակ պատմություն, նա ուշադրություն է դարձնում նաև բյուզանդական կայսրության հարևանների վրա, այնինչ նիկեփորը որոշել է գրել սեղմ ու համառոտ մի պատմություն: Ավելի հանգամանորեն կանգ առնելով Լեոն III-ի և Կոստանդին V-ի ժամանակաշրջանի վրա, նա հակառակ որ պատկանում էր պատկերապաշտների ճամբարին, օգտագործելով միևնույն աղբյուրը, պատկերամարտ կայսրերի բնութագրման հարցում ավելի դուսպ է, քան ծայրահեղության հասնող Թեոփանեսը⁴³:

Նշենք սակայն, որ առանձին դեպքերում (օրինակ բուլղար խան Տերվելի շրջանի վերաբերյալ) Թեոփանեսի և նիկեփորի աշխատությունները էապես տարբերվում են, դա վկայում է այն մասին, որ նիկեփորը ունեցել է մի այլ աղբյուր, որին անտեղյակ էր Թեոփանեսը⁴⁴: նիկեփորի երկում հանդիպում են և բազմաթիվ տեղեկություններ, որոնք պարզապես բացակայում են Թեոփանեսի «Ժամանակագրության» մեջ⁴⁵:

Ինչպես ասվեց, բացի «Breviarium»-ից, նիկեփորը գրել է նաև «Χρονογραφικόν σύντομον», աստվածաշնչային, պարսից, հելլենիստական թագավորների, հռոմեական և բյուզանդական կայսրերի մի ցուցակ, որը լատիներեն է թարգմանել Անաստասիոս Բիբլիոթեկարիոսը⁴⁶:

Արդ, ի՞նչ արժեք է ներկայացնում Թեոփանեսի «Ժամանակագրությունը» հայոց պատմության ուսումնասիրության համար: Պետք է նշել, որ VII—VIII դդ. հայոց պատմության վերաբերյալ հայկական աղբյուրների տվյալները թեև քիչ չեն, բայց անբավարար են ժամանակաշրջանի հանգամանակից պատկերը տալու համար: Այդ դարերի վերաբերյալ կարելի է հիշատակել Սեբեոսի, Ղևոնդ վարդապետի, մասամբ Մովսես Կաղանկատվացու արժեքավոր գործերը: Որոշ նշանակություն

⁴² Նույն տեղում, էջ 421:

⁴³ Հմմտ. նույն տեղում, էջ 430:

⁴⁴ Цанкова-Петкова, О территории, էջ 132, ծանոթ. 43:

⁴⁵ Чичуров, Византийские исторические сочинения, стр. 147.

⁴⁶ Միջնադարում հունարենից թարգմանվել է նաև ուսուերեն և հայտնի է «Летописец вскопе» խորագրով:

ունի հունարեն թարգմանությամբ պահպանված և գիտությանը «Narratio de rebus Armeniae» խորագրով հայտնի հայ-քաղկեդոնական մի աշխատանք⁴⁷, որը, սակայն, հիմնականում եկեղեցու պատմությանն է անդրադառնում: Ավելի ուշ հեղինակներից, որոնց գործերը այս կամ այն չափով հետաքրքրություն են ներկայացնում խնդրո առարկա շրջանի պատմության ուսումնասիրության համար, Հովհաննես Գրասխանակերտցու, Թովմա Արծրունու և Վարդան Արևելցու պատմական երկերն են, որոնց՝ մեզ հետաքրքրող նյութը հիմնականում քաղված է Սերեոսից և Ղևոնդ վարդապետից:

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» անփոխարինելի աղբյուր է ամենից առաջ սասանյանների հարստության մայրամուտի ժամանակաշրջանի բյուզանդապարսկական հարաբերությունների վերաբերյալ, հատկապես Հերակլիոս կայսեր երկարատև պատերազմների, որոնց թատերաբեմը հիմնականում Հայաստանն էր: Թեոփանեսի տվյալները հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների համադրությամբ, տալիս են VII դ. 10—20-ական թվականներին Հայաստանում տիրող իրադրության առավել կատարյալ պատկերը: Թեոփանեսի պատմական երկը որոշակի արժեք է ներկայացնում նաև արաբների կողմից Հայաստանի նվաճման, երկրում նրանց տիրապետության հաստատման, նվաճողների վարած քաղաքականության, արաբաբյուզանդական մրցակցության ոլորտում գտնվող Հայաստանի քաղաքական ու սոցիալական վիճակի վերաբերյալ առավել հանգամանալից պատկերացում կազմելու համար: Թեոփանեսը առաջին բյուզանդական պատմիչն է, որ հիշատակում է պավլիկյան ազանդավորներին, նրանց նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության, հայ ազանդավորների Բյուզանդիայում ստեղծած բազմամարդ գաղութների մասին:

Բայց Թեոփանեսի «Ժամանակագրության» արժեքը միայն դրանում չէ: Ի տարբերություն հայ պատմիչների, որոնք ի միջի այլոց են խոսում հայերի՝ Բյուզանդական կայսրության կյանքում խաղացած դերի վերաբերյալ, նա այդ մասին հսկայական նյութ է մատակարարում: VII դարը հայտնի է որպես Բյուզանդական կայսրության մեջ ռազմավարչական արմատական վերափոխումների ժամանակաշրջան: Ստեղծվում են Փոքրասիական բանակաթեմերը, որոնք բախտորոշ դեր են խաղում արաբական վտանգի առջև երկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու ուղղությամբ: Ահա հիմնականում Թեոփանեսից ենք իմանում, որ VII դ.

երկրորդ կեսին և հատկապես ամբողջ VIII դ. ընթացքում այդ բանակաթեմերի ղեկավարությունը հիմնականում վստահված էր հայազգի նշանավոր գործիչների, որոնցից շատերը անհայտ են հայ պատմիչներին: Այդ գործիչներից ոմանք տիրանում են անդամ բյուզանդական կայսեր ժիրանիին ու գայխսոնին⁴⁸:

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» հայոց պատմության համար ունի նաև անուղղակի արժեք: Ուսումնասիրել հայոց պատմությունը (քաղաքական դրությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, դասակարգային պայքարը) հարևան երկրների պատմությունից անկախ հնարավոր չէ: Կայսրության ներքին կյանքում տեղի ունեցած իրադարձությունները, տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, դասակարգային պայքարը հնարավորություն են տալիս զուգահեռներ անցկացնել, ավելի խորությամբ ու հանգամանորեն հետազոտել հայոց պատմությունը: Թեոփանեսը բյուզանդական այն հեղինակներից է, որ կայսրության պատմությունը տալիս է միջազգային ֆոնի վրա:

* * *

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» պահպանվել է բազմաթիվ գրչագրերում, որոնք սակայն ոչ բոլորն են ամբողջությամբ ընդգրկում երկը: Կավազույններն են համարվում հետևյալները.

- Paris. gr. 1710 (X դ.)
- Vatic. gr. 155 (X դ.)
- Paris. gr. 1711 (XI դ.)
- Vatic. gr. 978 (XI—XII դ.)
- Vatic. gr. 154 (XII դ.)
- Paris.-Coislin. gr. 133 (XII դ.)
- Taurin. gr. 226 [B IV 4] (XV դ.)
- Vatic. Barber. gr. 553 [V 49] (XVI դ.)
- Paris. gr. 1709 (XVI դ.)
- Vatic. Palat. gr. 395 (XVI դ.)
- Monac. gr. 391 (XVI դ.)
- Vatic. gr. 979 (XVI դ.)

⁴⁸ Հայազգի այդ բարձրաստիճան գործիչների մանրամասն ցանկը տե՛ս ստորև, էջ XLVIII—L:

47 Տե՛ս Բարթիկյան Narratio:

Vatic. Barber. gr. 233 [II 54] (XVI դ.)
Vatic. Urbinus 87 (XVII դ.)⁴⁹

Թեոփանեսի երկի բնական բնագրի հրատարակիչ Կ. դե Բոորը գտնում է, որ ամենաընտիրը Վատիկանի մատենադարանի № 154 ձեռագիրն է, որտեղ սակայն շարագրանքն ընդհատվում է Հուստինոս I-ի թագավորության ժամանակաշրջանով: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով Թեոփանեսի բնագիրը շատ չի տուժել արտագրող-ամրագրողների կողմից⁵⁰, թեև, հիմնական հետազոտողներից մեկը՝ Գ. Պ. Պրեոբրաժենսկին վճռականորեն դեմ է այդ մտքին: Նա ընդգծում է, որ Թեոփանեսի «Ժամանակագրությունը» բովանդակող և ոչ մի գրք-չագիր զերծ չի մնացել կողմնակի միջամտությունից⁵¹:

Թեոփանեսն հոստովանողի «Ժամանակագրության» հունարեն բրնագիրը առաջին անգամ հրատարակել է J. Goar-ը բյուզանդական պատմիչների փարիզյան մատենաշարում 1655 թ.: Այն վերահրատարակվել է Combefis-ի կողմից բյուզանդական հեղինակների վենետիկյան մատենաշարում՝ 1729 թ.: I. Classen-ը Թեոփանեսի երկի հունարեն բնագիրը, իսկ I. Bekker-ը Անաստասիոս Բիբլիոթեկարիոսի լատիներեն թարգմանությունը հրատարակեցին բյուզանդական հեղինակների բոննյան մատենաշարում⁵²: Migne-ի հայտնի «Հունական հայրարանության» մեջ վերահրատարակվել է բոննյան շարքում լույս տեսած բրնագիրը⁵³: Հունարեն բնական բնագրի հրատարակությունն իրականացրել է C. de Boor-ը⁵⁴: «Ժամանակագրությունը» հատվածաբար հրատարակել է L. F. Tafel-ը⁵⁵:

⁴⁹ Moravcsik, Byzantinoturcica, I, S. 533: Ձեռագրերի մասին Կ. դե Բոորի ուսումնասիրությունը՝ Theophanis Chronographia, vol. II, p. 347—400:

⁵⁰ Krumbacher, Geschichte, S. 345:

⁵¹ Преображенский, Летописное повествование, стр. 32 и сл.

⁵² Theophanis Chronographia ex recensione Ioannis Classeni, volumen I, Bonnae, 1839. Volumen II, Anastasii Bibliothecarii Historia Ecclesiastica, ex recensione Immanuelis Bekkeri, Bonnae, 1841, p. 40—284.

⁵³ Migne, Patrologia graeca, t. 108, Paris, 1863.

⁵⁴ Theophanis Chronographia, rec. C. de Boor, I, Lipsiae, 1883 (վերահրատարակվել է անփոփոխ 1903 թ. Georg Olms Verlagsbuchhandlung, Hildesheim).

⁵⁵ L. F. Tafel, Theophanis Chronographia (Probe einer neuen kritisch-exegetischen Ausgabe), Sitzungsberichte der philos. hist. Cl. der k. Akademie der Wiss., Wien, 9 (1852), S. 21—172.

Նշենք այստեղ, որ բացի Անաստասիոսի թարգմանությունից, Թեոփանեսի «Ժամանակագրության» հունարեն բնագիրը ունի մի երկրորդ լատիներեն թարգմանություն, որն իրականացրել է J. Goar-ը: Այն բերված է հունարեն բնագրին զուգահեռ նախ բյուզանդական պատմիչների փարիզյան, ապա վենետիկյան մատենաշարում: Բոննի մատենաշարում (Corpus Bonnense Historiae Byzantinae) լույս է տեսել I. Classen-ի թարգմանությունը: Ժամանակակից եվրոպական լեզուներով այն թարգմանված է ռուսերեն՝ Օրոլենսկու և Տերնովսկու կողմից⁵⁶: Այդ թարգմանության առանձին հատվածներ լույս են տեսել «Вестник Древней Истории» հանդեսում⁵⁷: Հատվածներ լույս են տեսել Գրացիանսկու և Սկադկինի կազմած «Քրեստոմատիայում»⁵⁸, ինչպես և Բյուզանդիայի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուում⁵⁹, «Բյուզանդական գրականության հուշարձաններ» ժողովածուում⁶⁰ և հենց վերջերս՝ Չիչուրովի գրքում⁶¹:

Թեոփանեսի երկը հատվածաբար թարգմանվել է նաև գերմաներեն⁶²,

⁵⁶ Летопись византийца Феофана в переводе с греческого В. И. Оболенского и Ф. А. Терновского. С предисловием О. М. Бодянского, Москва, 1887 (Чтения в обществе истории и древностей российских, 1884—1887).

⁵⁷ А. В. Мишулин, Древние славяне в отрывках греко-римских и византийских писателей по VII в. н. э. «Вестник Древней Истории» 1941, № 1, § 3. Отрывки из византийских писателей VII—VIII вв. (Феофилакта Симокатты и Феофана).

⁵⁸ Н. П. Грацианский, С. Д. Сказкин, Хрестоматия по истории средних веков, т. I, М., 1949.

⁵⁹ Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951.

⁶⁰ Памятники византийской литературы IV—IX веков, под редакцией Л. А. Фрейберг, М., 1968.

⁶¹ Чичуров, Византийские исторические сочинения.

⁶² Dieterich K., Byzantinischen Quellen zur Länder- und Völkerkunde (5.—15 Jhd), Leipzig, 1912: Bilderstreit und Arabersturm in Byzanz. Das 8. Jahrhundert (717—813). aus der Weltchronik des Theophanes übersetzt, eingeleitet und erklärt von Leopold Breyer, Verlag Styria, Graz—Wien—Köln, 1957. («Byzantinische Geschichtsschreiber», herausgegeben von E. V. Ivanka, Bd. VI).

սերբերեն⁶³, բուլղարերեն⁶⁴, վրացերեն⁶⁵, լեհերեն⁶⁶ և հունգարերեն⁶⁷:

* * *

Հուստինիանոս I-ը իր հետնորդներին թողեց փառքի գագաթնակետին գտնվող, արտաքնապես հզոր հսկայածավալ մի կայսրություն, որը, սակայն, ներքուստ քայքայված օրգանիզմ էր: Երկարատև պատերազմները, ամբողջ երկիրն ընդգրկած ահռելի շինարարությունը կապված էր ու պայմանավորված հարկային լծի ծանրացմամբ: Գյուղատնտեսությունն անկում էր ապրում, ծանր վիճակում էին արհեստագործությունն ու առևտուրը: Հուստինոս II (565—578) և Տիրեբրիոս (578—582) կայսրերը չէին կարողանում կանգնեցնել կայսրության աստիճանական փլուզումը, վերացնել պետության միասնությունը քայքայող կրոնադավանաբանական վեճերը քաղկեդոնիկների և միաբնակների միջև: Մավրիկիոս կայսրը (582—602), գիտակցելով այդ բոլորը, փորձեց դրությունը կայունացնել դիմելով մի շարք բարեփոխումների: Նա որոշ միջոցներ ղեկավարեց վարչական ադարատի ադակենտրոնացման, հարկային լծի որոշ թեթևացման ուղղությամբ, բայց շոշափելի արդյունքների չբնասավ: Դժգոհությունը համընդհանուր էր, իշխանությունների դեմ բռնկվող ապստամբություններն ու խռովությունները՝ հաճախակի: Մանր էր վիճակը հենց մայրաքաղաքում:

Կայսրության ներքին դրությունը է՛լ ավելի էր վատթարացնում արտաքին վտանգը, բայց նրա առաջն առնելու հնարավորություններն այն չէին, ինչ Հուստինիանոս I-ի թագավորության սկզբում: Իտալական թերակղզու մեծ մասը նվաճվեց լանգոբարդների կողմից, կայսրության տիրապետությունն Իսպանիայում սասանվում էր վեստգոթների հարված-

ների ներքո: Իսկ արևելքում դրությունը ողբալի էր: Շարունակվում էր Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հակամարտությունը Հայաստանի համար, Խոսրով I-ի օրոք հաջողությունների նժարը թեքվում էր պարսից կողմը: Դրությունը փոխվեց հօգուտ կայսրության Խոսրովի մահից հետո, երբ նոր արքայից արքայի՝ Որմիզ IV-ի դեմ պայթեց Վահրամ Չուբինի ապստամբությունն ընդդեմ Սասանյան հարստության: Համոզված լինելով, որ սեփական ուժերով չի կարողանալու հաջողության հասնել, Վահրամ Չուբինը դիմեց Մուշեղ Մամիկոնյանի և այլ հայ նախարարների օգնության, բարենպաստ ելքի ղեկավարում խոստանալով նրանց վերականգնել հայոց թագավորությունը. «Ձեզ տուեալ լիցի իմ,— գրում էր նա,— զՀայոց թագաւորութիւնն. զոր և դուք կամիք՝ արասցիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցղուռն Աղուանից. և յԱսորոց կողմանէ՛ գԱրուաստան, զՄրծուին և զնոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացոց»⁶⁸:

Մուշեղ Մամիկոնյանը և հայ մյուս նախարարներն ընդառաջ շնացին ապստամբի խնդրանքին, ականջ չկախեցին Հայաստանի ապագա անկախության մասին ապստամբի հիմնադուրկ խոսքերին: Իսկ պարսից պալատական ավագանին ստեղծված դրությունից ելք է գտնում, սպանելով Որմիզ IV արքային, գահ բարձրացնելով նրա մանկահասակ որդի Խոսրովին: Վահրամ Չուբինի ապստամբությունը ճնշելու համար ավագանին ստիպված դիմում է դարավոր թշնամի Բյուզանդիային, ռազմական օգնության դիմաց խոստանում զիջել Հայաստանի, Ասորիքի և Վրաստանի մեծ մասը, ինչ ընդհանուր առմամբ կատարվում է: 591 թ. կնքված պայմանագրով Խոսրով արքան «...ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց՝ որ ընդ իրով իշխանութեամբ էր, զտուն Տանուտերական մինչև ցգետն Հուրաղգան, և զգաւան Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց, և զԱռեստաւան և ցԳոզովիտ զաւառ մինչև ցՀացին և ցՄակու: Եւ կողմն Վասպուրական զնդին էր ի ծառայութիւն պարսից արքային»⁶⁹:

Այսպիսով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց երկու աշխարհակալ տերությունների միջև, այս անգամ առյուծի բաժինն ընկավ Բյուզանդիային: Հայ ժողովրդի համար ստեղծվեց մի մղձավանջային

⁶³ «Византиски извори за историји народа Југославије», I, стр. 217—237.
⁶⁴ Извори за Българската история VI, Гръцки извори том III, София, 1960, стр. 226—289. Բուլղարիային վերաբերող հատվածները ավելի վաղ բուլղարերեն էր թարգմանել Վ. Բեշևևլևը. В. Бешевлиев, Гръцки и латински извори за историята на България. Теофан, «Прометей». IV (1940), 3, стр. 27—30, 4, стр. 26—29, 5, стр. 23—29, 6, стр. 23—31.
⁶⁵ Сведения византийских писателей о Грузии, том IV, 1. Греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1941.
⁶⁶ Plezia M., Greckie i lacińskie źródła do naistarszych dziejow Słowian. Poznan—Krakow, 1952; Labuda G., Materiały Zródłowe do historii Polski epoki feudalnej, t. I. Słowiańszczyzna pierwotna, Warszawa, 1954.
⁶⁷ Gracianskij N. P.—Szkazkin S. D., Középkori történeti Crestomathia, Budapest, 1952—1953, t. I—II.

⁶⁸ Սեբեոս, էջ 78:
⁶⁹ Նույն տեղում, էջ 84:

ժամանակաշրջան: Երկու ախոյաններն էլ, նայած ժամանակին ու պահանջներին, մեկ հալածում, մեկ ջանում էին սիրաշահել հայերին և, նախ և առաջ, նրանց ավագանուն, նախարարներին: Սրանից էլ ահա այդ անվերջ գաղթներն ու տեղափոխությունները Հայաստանի մի մասից մյուսը⁷⁰: Հայաստանում առաջացավ մի քառասյին վիճակ, որն է՛լ ավելի էր վատթարացնում երկու ախոյան պետությունների որդեգրած հայաջինջ քաղաքականությունը: Հանրահայտ է Մավրիկիոս կայսեր վերագրվող թուղթը՝ պարսից արքայից արքային. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ասէ, ես դիմս ժողովեմ և ի թրակէ գումարեմ. և դու պրոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ դժշնամիս սպանանեն, և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դորա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»⁷¹:

Մավրիկիոսը երբևիցես այդպիսի նամակ գրել է, թե ոչ, հարց է, բայց բոլոր դեպքերում Սեբեոսի երկում բերվածը ամենաճշգրիտ կերպով ներկայացնում է Հայաստանում ստեղծված դրությունը: Խոսքը, հարկավ, ոչ թե Հայաստանը համայն հայ ժողովրդից դատարկելուն էր վերաբերում, այլ նախարարներից ու բնիկ պինված ուժերից: Այդ մասին է գրում հենց Սեբեոսը. «Վասն իշխանաց ամենայն Հայաստանեայց և զաւրաց իւրեանց»⁷², թեև նույն հեղինակը մի այլ տեղում ցույց է տալիս, որ Մավրիկիոսը դեմ չէր կայսրության սահմանները վաշկատուն ցեղերի հարձակումներից ապահովել թրակիայում նաև բազմամարդ հայկական գաղութ ստեղծելու⁷³:

Մավրիկիոսի և Խոսրով արքայի քաղաքականությունը Հայաստանում ուժեղ դիմադրության էր հանդիպում: Հայ նախարարները ջանում էին հնարավոր միջոցներով թոթափել օտարի լուծը և վերականգնել հայոց պետականությունը. «Պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, — ասում էին նրանք, — և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուցուք»⁷⁴: Նրանց հիմնական մտահոգությունը մեկն էր. «Ի բաց կոյ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր»:

70 նույն տեղում, էջ 88, 94, 104, 105:
71 նույն տեղում, էջ 86:
72 նույն տեղում:
73 նույն տեղում, էջ 105:
74 նույն տեղում, էջ 87:

զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս թրակացոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»⁷⁵:

Փոկաս կայսեր օրոք (602—610) շարունակվեցին և հրեադավանների հալածանքները, որոնց հետևանքը եղավ այն, որ կայսրություն տարբեր շրջաններում ու քաղաքներում բռնկվեցին ապստամբություններ ու խռովություններ: Այդ հանգամանքն իր հերթին թուլացրեց երկիրը, դյուրացրեց արտաքին թշնամիների ներխուժումները կայսրության տարածքը: Պարսից արքա Խոսրով II-ը, օգտագործելով Փոկասի կողմից իր «բարերար» Մավրիկիոս կայսեր մահապատժի ենթարկվելը, վերացրեց խաղաղությունը և կայսրության դեմ պատերազմական զորժողովույններ սկսեց, որոնք գնում էին նաև Հայաստանի տարածքի վրա: Նա գրավեց Բյուզանդիային 591 թ. պայմանագրով զիջած մի շարք շրջաններ: Պարսկական զորքերը հասան մինչև Սատաղ, գրավեցին այն, ինչպես և Կարին, Օրեստիաս և Նիկոպոլիս քաղաքները, Կարինի հայ ազգաբնակչությունը բռնազաղթեցրին Համադան քաղաքը: Գերինների մեջ էր և երկարնակ հայ կաթողիկոս Հովհանն, որ վախճանվեց օտարության մեջ⁷⁶:

Կայսրության բանակների կրած պարտությունները, Փոկասի բռնությունները երկրի ներսում պատճառ դարձան, որ 608 թ. կայսեր դեմ ապստամբություն նախապատրաստվի: Այն գլխավորեց Կարթագենի էքսարքոս Հերակլիոսը, ապագա նույնանուն կայսեր հայրը: Այդ ընթացքում ապստամբություն բարձրացրեց և Միջագետքի բյուզանդական զորքերի հրամանատար հայազգի Ներսես զորավարը, որը գրավելով Նղեսիա քաղաքը, ամրացավ այնտեղ: Ստեղծված իրադրությունից շուշացավ օգտվել պարսից արքա Խոսրովը: Նա ապստամբ Ներսեսին ղինական օգնություն ուղարկեց:

610 թ. էքսարքոս Հերակլիոսը Փոկասի դեմ նավատորմիզ ուղարկեց իր նույնանուն որդու գլխավորությամբ: Փոկասը զահնկեց արվեց ու գլխատվեց, զահն անցավ Հերակլիոսի ձեռքը (610—641), որը և հաստատեց շուրջ մեկ դար գոյատևած Հերակլիոսների հարստությունը⁷⁷:

75 նույն տեղում, էջ 92:
76 նույն տեղում, էջ 10 և հտ.:

77 Բելգիացի անվանի բյուզանդագետ Ա. Գրեգուարը էքսարքոս Հերակլիոսին, Հերակլիոս կայսեր հոր անվերապահորեն հայազգի է համարում՝ ծնված Կարին-Պեոզոսուպոլսում: Նա Մավրիկիոսից (582) մինչև Ֆիլիպպիկոսի անկումը (713) ընկած ժամանակաշրջանը անվանում է «Բյուզանդական պատմության առաջին հայկական էրան» («The first Armenian era in Byzantine history»). Grégoire, An Armenian dynasty,

Հերակլիոսը գտավ բայթայված, արտաքին թշնամիների կողմից բզկտվող մի պետություն: Խոսքով II-ը դարձել էր կայսրության սարսափը: Հերակլիոսի՝ արբայից արքայի հետ հաշտություն կնքելու փորձերը հաջողություն չունեցան և պարսկական զորքերը գրավեցին Ասորիքը, Կիլիկիան և Բյուզանդիան հասցով մատակարարող եգիպտոսը: Ահա այդ դժվարին ու ճակատագրական պայմաններում Հերակլիոսը նախաձեռնեց հզոր բանակի կազմակերպման աշխատանքներին: Սկիզբ առավ փոքրասիական նահանգներում վարչական նոր սխեմայի՝ բանակաթեմերի կազմակերպումը, որի էությունը կայանում էր նրանում, որ նահանգում և՛ ռազմական, և՛ վարչական համայն իշխանությունը կենտրոնացած էր լինում մի անձի՝ զորավարի ձեռքում: Նա տեղական բնակչությունից էր հավաքագրում զորքը, որը ծառայության գիմաց մշակելու հող էր ստանում: Փոքրասիական իր նշանակությամբ երկրորդ բանակաթեմը կոչվում էր Արմենիակների՝ բնակչության հիմնական կազմի հայազգի լինելու պատճառով:

Կայսրության արտաքին բաղաբաղականության գլխավոր հարցը մընում էր պարսկական վտանգը: Համոզված լինելով, որ այն հաղթահարել միաժամանակ պայթաբ մղելով երկու ճակատի վրա հնարավոր չէ, Հերակլիոսը ավարների հետ հաշտություն կնքելով, 622 թ. պարսիկների դեմ հարձակման անցավ: Նա վեց տարվա ընթացքում ջախջախելով Խոսրով II-ի բանակները, հաղթական վերադարձավ Կոստանդնուպոլիս: Այս պատերազմների թատերաբեմ դարձան նաև Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Լազիկան: Հայկական զորաբանակները հայ զորավարների գլխավորությամբ պայթարում էին բյուզանդական կայսեր կողմում:

Բայց այն ժամանակ, երբ Հերակլիոսը տոնում էր իր փայլուն հաղթանակները, կայսրության հարավային սահմաններում արդեն հանդես է գալիս մի ուժ, որ դարեր շարունակ պիտի սպառնար կայսրության գոյությունն անգամ: Դա իսլամի դրոշի տակ միավորված արաբներն էին: Նրանք 633 թ. ներխուժեցին Պարսկաստան, 634 թ.՝ Ասորիք: 636 թ. օգոստոսի 20-ին Յարմուկ գետի ափին տեղի ունեցավ մի արյունահեղ

p. 5—6, 8. Հերակլիոսին հայկական ծագում են տալիս և այլ ուսումնասիրողներ: Տե՛ս Charanis, The Armenians, p. 18. Ժանոթ. 41: Մասամբ հայկական՝ К о р р ы с, 'Εσχατολογικά ἀναζητήσεις, էջ 71: Toumanoff, Caucasia, էջ 135: Վերջինս կարծում է, որ նրանք Եկեղյաց գավառի Արշակունիներից էին, հենվելով Սերեոսի մի ավյալի վրա, թե Արշակունիների շտաբիղները Կոստաս II կայսեր «մերձաուրք» էին (տե՛ս Սերեոս, էջ 145): Հարցի մասին տե՛ս նաև ստորև, ժանոթ. 81:

ճակատամարտ, որտեղ կայսերական բանակը գլխովին պարտության մատնվեց, արաբները 638 թ. գրավեցին Աստիոք բաղաբը, ապա ձեռնարկեցին Ասորիքի և Միջագետքի նվաճումը: Նրանք 640 թ. մուտք են գործում բյուզանդական տիրապետության տակ գտնվող Հայաստանի տարածքը, գրավում է Աղձնիքն ու Կորճայքը, Անձևացյաց իշխանը հպատակություն է հայտնում: Գրավելով Չորապահակը, արաբական զորքերը մուտք են գործում Հայաստանի կենտրոնական նահանգները⁷⁸:

Սասանյանները Կադիսիայի և Նեհավենդի ճակատամարտերում ջարդ կրելով, վերանում են պատմության թատերաբեմից: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանը, օգտվելով այդ երկու ախոյանների կրած պարտություններից, հնարավորություն է ստանում միավորելու իր հողերը: Միավորված Հայաստանի իշխան է դառնում նախապես պարսկական Հայաստանի մարզպան ու սպարապետ Թեոդորոս Ռշտունին: Հայաստանը փաստորեն անկախ վիճակում էր, թեև շարունակում էր ճանաչել Բյուզանդիայի գերիշխանությունը:

Թեոդորոս Ռշտունու ջանքերը կանգնեցնելու արաբների ներխուժումները Հայաստան, հաջողություն չեն ունենում: Արաբները ներխուժում են Տարոն, ապա Բզնունիք, Աղիովիտի, Բորկրիի և Կողովիտի վերայով պաշարում ու գրավում են Դվինը և հսկայական ավարով հեռանում դեպի Միջագետք:

Բյուզանդական կայսր Կոստաս II-ը Թեոդորոս Ռշտունուն ճանաչեց պատրիկ և հայոց սպարապետ, նրան զինական օգնություն ուղարկեց, որով հայերը կարողացան ժամանակավորապես դադարեցնել արաբական արշավանքները Հայաստան:

Դժվարին էր Բյուզանդական կայսրության վիճակը հատկապես VII դ. 40-ական թվականների վերջում, երբ արաբները սկսեցին արշավանքները փոքրասիական թերակղզում, ուժեղ նավատորմիղ ստեղծելով նվաճեցին Կիպրոս կղզին: Շուրջ 650 թ. նրանք Ատրպատականի վրայով ներխուժեցին Հայաստան, բայց նրանց մի զորամասը գլխովին պարտություն կրեց Թեոդորոս Ռշտունու կողմից, բայց մյուսը Տալի վրայով ներխուժեց Քարթլի: Բյուզանդիան ի վիճակի չէր պաշտպանել Հայաստանը, և Թեոդորոս Ռշտունին վճռեց խզել կապերը կայսրությունից և Մուսավիայի հետ դաշինք կնքել, ընդունել խալիֆայության գերիշխանությունը:

78 Մանրամասն տե՛ս Тер-Гевондян, Армения, стр. 18 и сл.

Թեոդորոս Ռշտունու որդեգրած նոր քաղաքականությունը դուր չեկավ կայսրության: Նրա դիրքերը թուլացնելու փորձերը հայ իշխանների միջև երկպառակություն հրահրելով արդյունք չտվեցին և Կոստաս կայսրը հակառակ բանակի գլուխն անցած ներխուժեց Հայաստան հասնելով մինչև Դվին քաղաքը: Կայսրության հաջողությունները, սակայն, ժամանակավոր էին: Արաբները կարողացան 655 թ. նվաճել Հայաստանը, որին հաջորդեց Վրաստանի, Առանի, մերձկասպյան շրջանների և Գերբենդի նվաճումը:

Վիճակը փոխվեց Մուավիա խալիֆայի օրոք, երբ ծանր պատերազմները Բյուզանդիայի դեմ երկու ախոյաններին այն աստիճան թուլացրին, որ Հայաստանը շուրջ քաշեց: VII դ. 60—70-ական թվականներին Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրոք քաղաքական, հետևաբար և տնտեսական վիճակը Հայաստանում բավական կայուն էր: Բայց 80-ական թվականներին, երբ այդ երկու աշխարհակալ տերություններին վիճակը կայունացավ, դարձյալ իրենց հայացքը հռոնցին Հայաստանի վրա: Հուստինիանոս II կայսրը⁷⁹ 689 թ. նվաճեց Հայաստանը, Քարթլին և Առանը, իսկ Հայոց իշխան նշանակեց Ներսէճ Կամարականին⁸⁰:

VII դ. վերջին տասնամյակը Բյուզանդիայի և խալիֆայության միջև անվերջ ու արյունահեղ պատերազմների մի շրջան էր, պատերազմներ, որոնց թատերաբեմը դարձյալ Հայաստանն էր: VIII դ. ըսկզբին արաբներն իրենց ենթարկեցին Հայաստանը, Քարթլին ու Առանը, ստեղծեցին «Արմինիա» փոխարքայությունը՝ Դվին մայրաքաղաքով: Հայ ժողովրդի պատմության մեջ բացվեց մի նոր էջ, օտար լծի դեմ ազատագրական պայքարի ու մաքառումների մի շրջան, որ պիտի շուրջ 150 տարի տևեր:

Արաբների կողմից ոչ միայն Հայաստանի, այլև Բյուզանդական կայսրության ամենակարևոր նահանգների՝ Ասորիքի, Փյունիկեի, Կիլիկիայի, Եգիպտոսի, Կիպրոս կղզու և բազմաթիվ այլ շրջանների համեմատաբար դուրին նվաճումը բացատրվում է ոչ միայն արաբների հզորություններ, կամ կայսրության թուլացմամբ՝ Սասանյան Պարսկաստանի և այլ թշնամիների դեմ նրա մղած երկարատև պատերազմներից: Գեոևս Հուստինիանոս I կայսեր օրոք սկիզբ առած կայսրության կազմում գտնվող բազմաթիվ, յուրաքանչյուրն իր ազգային ավանդույթ-

ներով ու օրենքներով ապրող ու ղեկավարվող ժողովուրդները նույն սանրով սանրելու խիստ ու դժվար քաղաքականությունը չէր դադարել նրա հաջորդների օրոք: Քանի դեռ Հայաստանի փոքր մասն էր Բյուզանդիայի կազմում գտնվում, այդ քաղաքականությունը չէր կարող հայ ժողովրդի կյանքի հոգևոր, մշակութային և այլ բնագավառներում էական փոփոխություններ մտցնել: Առ առավելն այն կարող էր որոշ շահով ապազգայնացնել կայսրության կազմում գտնվող նահանգների հայությունը, բայց համայն հայ ժողովրդի վրա էական անդրադարձում ունենալ ի վիճակի չէր: Սակայն 591 թ. հետո, երբ Հայաստանի մեծագույն մասը մտավ Բյուզանդիայի կազմը, ապա հայերի համար սկզբեց իր ազգային ավանդույթները, ազգային դեմքը պահպանելու մահու և կենաց մի պայքար: Մեզ հետաքրքրող շրջանում այն հանդեպ եկավ կրոնական քողի տակ, ազգապահպանման գործը գլխավորեց հայոց եկեղեցին, պետության կորստյան պայմաններում երկիրը և ժողովրդին միավորող հիմնական ուժը: Ահա այդ նկատառումով անհրաժեշտ է մի փոքր ավելի հանգամանորեն խոսել հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների մասին, քանզի նրանք պարզապես հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները սբողող մի վարազույր են ստել:

Բյուզանդիան չէր կարող նպատակներին հասնել, քանի դեռ հայ ժողովուրդը եկեղեցական առումով չէր ենթարկված իրեն և հանդես էր գալիս կայսրության որդեգրած քաղկեդոնական դավանանքի դեմ: Բյուզանդիային մնում էր բոլոր միջոցներով հաղթահարել միակամությունը Հայաստանում, հայ ժողովրդին դարձնել քաղկեդոնական: Եկեղեցուն ենթարկվելը նախապայման էր նաև քաղաքական ենթարկման: Եվ կայսրությունը ամեն միջոցներով դեռևս V դ. սկսած փորձեց իրականացնել իր նպատակները⁸¹:

81 Այս առթիվ տարօրինակ կարծիք է հայտնել հույն բյուզանդագետ ակադեմիկոս Կ. Ամանտոսը: Կանգ առնելով արաբների սկզբնական հաջողությունների վրա, որոնք նա բացատրում է Ասորիքի և Պաղեստինի միարնակների ատելությունը դեպի քաղկեդոնական Բյուզանդիան, գրում է. «Եթե Բյուզանդիան հետևեր հնամենի հոռոմական ավանդույթներին, եթե նա չլսանար բնդանուր լեզու գտնել միարնակների հետ, այլ բռնությամբ հաստատեր ուղղափառությունը (իմա՝ քաղկեդոնականությունը) և իր հունարեն լեզուն, գուցե չկորչեր Ասորիքը: Բյուզանդիան սակայն ենթարկվեց Մյունիխի ազդեցության, զարձակ լիրերայ, գործի չրից հոռոմական պետության դժան միջոցներ՝ ընդդեմ տարբեր ժողովուրդների» («Αμυντος, Ιστορία, τόμ. Α' σελ. 303»):

79 Նրա մասին հատուկ տե՛ս Head, Justinian II.
80 Тер-Гевондян, Армения, стр. 52.

V դ. առաջին կեսին բորբոքված դավանաբանական վեճերի հիմնադրում ընկած էր Քրիստոսի բնության հարցը: Ամենահուժկու շարժումը գլխավորեց նեստորիոսը, որի վարդապետության (նեստորականության) համաձայն Քրիստոսի մեջ առկա են մարդկային և աստվածային անձնավորությունները: Միաբնակներն ընդունում էին Քրիստոսի մեկ՝ աստվածային բնությունը: Քաղկեդոնի ժողովը (451) փորձեց միջին գիծ գտնել և ընդունեց Քրիստոսի երկու բնությունները՝ մարդկային և աստվածային, մեկ անձնավորության մեջ: Քաղկեդոնի ժողովի դավանաբանական հավատամքն ընդունեցին հունական և հռոմեական եկեղեցիները, իսկ բյուզանդական Արևելքը՝ Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Ասորիքը մերժեցին այն:

Դավանաբանական այդ վեճերը, ինչպես ասվեց, սբողում էին տարբեր պետությունների և ժողովուրդների զուտ քաղաքական ու մշակութային շահերի հակադրությունը: Իսկ այդ հակադրությունները ըզզացնել էին տալիս դեռևս Քաղկեդոնի ժողովից էլ առաջ: VIII դ. սկզբին գրված և հունարեն թարգմանությամբ պահպանված հայ-քաղկեդոնիկ անհայտ մի հեղինակի երկասիրությունը հանդիսացող և գիտությունը «Narratio de rebus Armeniae» խորագրով հայտնի աղբյուրի մեջ ասված է, որ Քեոզոսիոս II կայսեր 37-րդ տարում՝ 445—446 թթ., այսինքն Քաղկեդոնի ժողովից 6—7 տարի առաջ, հայերը, ձգտելով ինքնուրույնության, եպիսկոպոս ձեռնադրելու համար այլև չէին գնում Կեսարիա, ինչպես նախկինում⁸²:

Վիճակն այլ էր Բյուզանդական կայսրության հպատակ Հայաստանում: Այստեղ հայոց եկեղեցին չէր կարող բացեիբաց հակադրվել պետության կամքին, թեև ոչ բոլոր հայ եպիսկոպոսները հպատակվում էին հունական եկեղեցու կարգադրություններին: 680 թ. Տրուլլի եկեղեցական ժողովի 32-րդ կանոնը դատապարտում է բյուզանդական Հայաստանի հայ եկեղեցու ավանդույթներով ղեկավարվող հայ հոգևորականներին: Նման դիրք էին բռնում նաև Հայաստանի պարսկական մասից տարբեր պատճառներով Բյուզանդիա տեղափոխված հայոց ավագանու ներկայացուցիչները: Երբ հայոց իշխան Վարդանը 572 թ. Գլինում սպանելով պարսից մարզպան Սուրենին, փախավ Կոստանդնուպոլիս, ոչ մի կերպ չէր հաղորդվում քաղկեդոնիկ հոգևորականության հետ: Նա «ի հաղորդութենէ ի բաց եկաց ասելով թէ վարդապետը

82 Բարթիկյան, Narratio, էջ 462:

մեր ոչ հրամայեցին մեզ»⁸³: Դրա վրա Հուստինոս II կայսրը եկեղեցական ժողով գումարեց⁸⁴, որին մասնակցելու հրավիրեց բյուզանդական Հայաստանի հայ եպիսկոպոսներին ու վարդապետներին և ստիպեց նրանց, այդ թվում և Վարդանին ու նրա մտերիմներին ընդունել Քաղկեդոնի ժողովը: Նրանք, հարկավ առերես, «ձեռագրով զժողովն Քաղկեդոնի ընկալան»⁸⁵, մի մասը, վերադառնալով Հայաստան, այդուհանդերձ, տեղում քաղկեդոնականություն տարածելու փորձեր կատարեց: Վերադարձողների գործունեության ոլորտներն էին Աղվանքը, Վրաստանը, Սյունիքը, որտեղ նրանք հավանաբար հաջողություններ չունեցան, բայց որոշ արդյունքի հասան Տաշիրում, Զորոփորում և Գարդմանում⁸⁶:

Ոչնչով չէր տարբերվում և Մավրիկիոս կայսեր եկեղեցական քաղաքականությունը հայերի նկատմամբ: Դեռ ավելին, վիճակը բարդացավ 591 թ. հետո, երբ Հայաստանի 4/5 մասն անցավ կայսրությանն ձեռքը: «Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն (Մավրիկիոսից—Հ. Բ.) վերստին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի»⁸⁷: Հուստինոս II-ի նման նա ևս Կոստանդնուպոլսում եկեղեցական ժողով է գումարում, հրավիրում հայոց եպիսկոպոսներին: Ճնշման տակ «ղարձեալ հայք ընկալան զժողովն Քաղկեդոնի ձեռագրով յաուրս Մովսէսի կաթողիկոսի հայոց»⁸⁸:

Ստեղծված ծանր վիճակը ստիպում է Մովսես կաթողիկոսին գործնական միջոցների դիմել: Նա պարսից տիրապետության տակ գտնվող Հայաստանի եպիսկոպոսների ու վարդապետների ժողով է գումարում և հրամայում «ամենեկին ոչ հաղորդել ընդ Հոռոմս»⁸⁹ հնազանդեալ քաղկեդոնական ժողովուն⁹⁰: Դրա վրա Մավրիկիոս կայսեր կարգադրությամբ հարկավ, Կարինի Քեոզոսիոս եպիսկոպոսը Հայաստանի հունա-

83 Φοτια, Ο ροδε, στφ. 181.

84 Բարթիկյան, Narratio, էջ 465, 466—467: Φοτια, Ο ροδε, στφ. 182. Միջավայր Անանիա Շիրակացուն վերագրվող ժամանակագրության մեջ ցույց է տրված, որ այդ ժողովը գումարեց Տիրեքիոս կայսրը (578—582): Անանիա Շիրակացու Մասնագրությունը, էջ 397: Հմմտ. Ստեփանոս Տարնեցի, էջ 141:

85 Φοτια, Ο ροδε, στφ. 182. Հմմտ. Բարթիկյան, Narratio, էջ 465, 466—467.

86 Բարթիկյան, Narratio, էջ 466:

87 Սերբոս, էջ 91.

88 Φοτια, Ο ροδε, στφ. 182: Բարթիկյան, Narratio, էջ 466—467: Վարդան վարդապետ, էջ 84:

89 Իժա՝ հայ-քաղկեդոնականներին:

90 Մովսես Կազակատվացի, էջ 303—304: Հմմտ. Ուլստանես Եպիսկոպոս, էջ 63:

կան մասի հայ հոգևորականության ժողով է գումարում և բյուզանդական Հայաստանում հաստատում հակաթոռ կաթողիկոսություն: Առաջին (և վերջին) հայ քաղկեդոնիկ կաթողիկոսը «Յովհանն ոմն Մինասկան» էր: Յովով է գրում Մովսես Կաղանկատվացին այս դեպքերի մասին. «Մովսէս նստէր ի Դուին կաթողիկոս. պատշաճեցին և Հովվմայեցիքն Յովհաննու զկաթողիկոսարան յԱւանի՝ մօտ առ միմեանս»⁹¹:

Քիչ չէին նրանք, որոնք շքանկանալով ենթարկվել բյուզանդական իշխանությունների բռնություններին, լքեցին իրենց բնակության վայրերը և անցան պարսից տիրապետության տակ գտնվող Հայաստան, իրենց պապենական դավանանքը ազատ դավանելու համար⁹²: Բայց կային և այնպիսիք, որոնք ստիպված էին փախչել օտար երկրներ. «փախստական զնացեալ յաւտար երկիր վարէին» գրում է Սեբեոսը⁹³, անգամ կայսեր հրամանը արհամարհողներ⁹⁴: Յավալին այն է, որ «բազումք հաւանեալ փառասիրութեամբ»⁹⁵ ընդունեցին Քաղկեդոնի դավանանքը: Սեբեոսը «փառասերներին» տակ հավանաբար նկատի ունի հայոց ավագանու այն մասը, որ Բյուզանդական կայսրության մեջ պաշտոնների և պատվաստիճանների արժանանալու համար դավանափոխ էր լինում:

Տարբեր չէր վիճակը և պարսկական Հայաստանում ապրող քաղկեդոնիկ հայերի համար: Մավրիկիոս կայսեր մահից հետո, երբ սասանյան Պարսկաստանին հաջողվեց վերանվաճել մոտիկ անցյալում Բյուզանդիային զիջաց հայկական շրջանները և այնտեղի քաղկեդոնիկ հայերը հայտնվեցին միարևակ հայ եկեղեցու իրավասության ոլորտում, նրանց կացությունը բարդացավ: Այս անգամ հայոց եկեղեցու հարցերով սկսեց զբաղվել և պարսից արքունիքը, որ ամեն ջանք էր թափում հայերին անջատելու բյուզանդական եկեղեցուց, հետևաբար և կայսրությունից: Խոսքով II արքան Տիզբոնում 615—616 թթ. եկեղեցական ժողով է գումարում, որին մասնակցում են և բազմաթիվ հայ իշխաններ ու եպիսկոպոսներ⁹⁶: Ինչպես պետք էր սպասել, քաղկեդոնականները

91 Մովսես Կաղանկատվացի, էջ 304:
92 «Գիրք բղբոց», էջ 151—152,
93 Սեբեոս, էջ 91:
94 Նույն տեղում:
95 Նույն տեղում:
96 Նույն տեղում, էջ 150—151: Երվանդ Տեր-Մինասյանը սխալ է համարում Սեբեոսի (և Ասողիկի) տեղեկությունները այս ժողովի մասին: Նրա կարծիքով վերջինիս գումարման միակ շարժառիթը նեստորականների կաթողիկոսության խնդիրն էր: Տե՛ս Տեր-Մինասյան, Պարսից ժողովը, էջ 55:

բը ժողովում տանուլ են տալիս, և շկարողանալով դիմանալ հալածանքներին «ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»⁹⁷:

Բյուզանդիայի կրոնական քաղաքականությունը Հայաստանում չէր տալիս այն արդյունքները, ինչ կայսրությունն ակնկալում էր: Մավրիկիոսի միջոցառումները ոչնչի չհանգեցրին և Հովհաննես հակաթոռ կաթողիկոսը եղավ առաջին և վերջին հայ քաղկեդոնիկ կաթողիկոսը: Մավրիկիոսին հաջորդած կայսրերը շարունակեցին հայադավանների հալածանքները, թեև ջանացին և այլ միջոցների դիմելով հասնել արդյունքի: Հերակլիոս կայսրը պարզ նկատեց, որ քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների պայքարը վնասում է կայսրության միասնությունը, թուլացնում նրան արարական վտանգի հանդեպ: Միաբնակ Ասորիքը, Եգիպտոսը, Հայաստանը բյուզանդական կայսրերի և Կոստանդնուպոլսի կղերի ճնշումներին դիմադրություն էին ցուցաբերում: Հերակլիոսը և Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոսը այդ երկու հոսանքները հաշտեցնելու մի միջին ուղի որոնեցին⁹⁸: Լույս աշխարհ եկավ միակամուրջան՝ մոնոթելիտիզմի վարդապետությունը⁹⁹, որի համաձայն Քրիստոսն ունի երկու բնություն՝ աստվածային և մարդկային, բայց մեկ՝ աստվածային կամք: Այս վարդապետությամբ զիջում էր կատարվում և՛ երկարնակներին (ուսմունքը երկու բնությունների մասին), և՛ միաբնակներին (մեկ կամքի մասին վարդապետությունը): Եթե պետության միասնությամբ շահագրգռված ավելի հեռատես պետական ու եկեղեցական գործիչներ ողջունեցին այս նոր վարդապետությունը, այն հակահարված ստացավ և՛ մեկ, և՛ մյուս դավանանքի ջերմեռանդ կողմնակիցների կողմից: Պետության կենտրոնական մասի և միաբնակ նահանգների միջև դարեր շարունակ լայնացող ու խորացող անդունդը հնարավոր չէր կամրջել նման կիսատ միջոցառումներով: Հերակլիոսին մենում էր անցնել արդեն որդեգրած բռնությունների քաղաքականության: Նա օգտագործելով Սեբեոսի բնութագրմամբ «փառասեր» մարդ-

97 Քարբիկյան, Narratio, էջ 467:
98 Հաշտեցման առաջին փորձը կատարել էր դեռևս Չենոն կայսրը, հրապարակելով իր հայտնի «Հենոտիկոն»-ը («Միաւորութեան գիրք»-ը): Տե՛ս «Գիրք բղբոց», էջ 269—271:
99 Միակամության մասին ուշագրավ աշխատություն է գրել Գ. Հովսեփյանը, որը բարձր է գնահատվել մամանակի մասնագետների կողմից. Owssepian, Monothelitismus (տե՛ս Ա. Պ. Պապադոպոլոսի գրախոսությունը „Byzantinische Zeitschrift“, Bd. IX, 2 Heft, 1900, էջ 544—546),

կանց, տվյալ դեպքում բյուզանդական հայազգի զորավոր Մեծ Գնունուն, ջանում է հայոց կաթողիկոս Եզրին (630—641) ստիպել գնալ Բյուզանդիա՝ քաղկեդոնական դավանանքն ընդունելու, հակառակ դեպքում սպանում էր վերականգնել հակաթոռ կաթողիկոսությունը: Դարձյալ Կարինում 633 թ. եկեղեցական ժողով է գումարվում, որին մասնակցում է Եզր կաթողիկոսը: Սյունյաց եպիսկոպոս Մաթուսաղան հրաժարվում է գնալ և հայոց դավանանքի շարադրանքն ուղարկում է Հերակլիոս կայսեր¹⁰⁰ իր աշակերտ Թեոդորոսի միջոցով: Կայսեր ճնշման տակ Եզրը և հայ մյուս բարձրաստիճան եկեղեցականներն ընդունում են Քաղկեդոնի դավանանքը¹⁰¹:

Հերակլիոս կայսեր նման բռնությունները չէին կարող հայտնվան, և առաջին հերթին հայ ազնվականների մեջ շառաջացնել թշնամություն դեպի կայսրը: Եվ պատահական չէ, որ Հերակլիոսի դեմ նյութված մի շարք դավադրությունների մեջ նրանք գործուն մասնակցություն են ունենում: Հիշատակելի են Վահան Խորխոռունին, Սմբատի՝ Խոսրով Երեմի մականվանյալի, որդի Վարազտիրոց իշխանը, Դավիթ Սահառունին, որոնք «միաբանեալ սպանանել զԵրակլոս»¹⁰²: Նրանց հետ էր և Բյուզանդիայում ծառայող հայոց զորքը¹⁰³:

Ստեղծված անդունդը ճնարավոր չեղավ կամրջել նաև Հերակլիոսի հաջորդների օրոք: Կոստաս II կայսեր ժամանակ Հայաստանում գտնվող բյուզանդական զինվորականները բողոքում էին կայսեր և Կոստանդնուպոլսի պատրիարքին, թե «իրրև գանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ»¹⁰⁴, որ հայերը «անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լեոնի և նզովեն զնոսս»¹⁰⁵: Կայսրը դիմում է հայոց կաթողիկոս Ներսես Գին և Թեոդորոս Ռշտունուն, հրամայելով «վասն միաբանութեան հաւատոյ» ժողով գումարել: Այն գումարվում է Դվինում և որոշում է, թե հայերը նպատակ չունեն հրաժարվելու իրենց հայրենավանդ դավանանքից: Ներսես կաթողիկոսը սակայն, որ երկար տարի-

100 Տե՛ս Մատենադարանի № 8194 ձեռագրի 126—135բ էջերը. «Թուղթ Մաթուսաղայի Սինեաց եպիսկոպոսի զոր գրեաց հրամանաւ Եզրի հայոց կաթողիկոսի և այլ եպիսկոպոսաց առ թագաւորն Հերակլն վասն հաւատոյ»: Ճմմտ. Macler, Notices. էջ 248: Ստեփաննոս Օրբելեան, էջ 115:

101 Բարթիկյան, Narratio, էջ 468: Φοτια, Ο ρροθε, էջ 182:
102 Սերբոս, էջ 133:
103 Նույն տեղում:
104 Նույն տեղում, էջ 148:
105 Նույն տեղում:

ներ ապրել էր հունական միջավայրում և հունական կրթություն էր ստացել, այս հարցում հետևողական չէր: Սերբոսը գրում է նրա մասին, թե «հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի և ի վերայ տումարին Լեոնի»¹⁰⁶: Նա «ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթինս դառնութեան, և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն»¹⁰⁷: Այն հանգամանքը, որ նա «ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»¹⁰⁸, ցույց է տալիս, որ քաղկեդոնականները Հայաստանում թույլ էին: Սակայն երբ Հայաստան եկավ Կոստաս կայսրն իր բանակներով, կաթողիկոսը բավական ուժ գտավ բացահայտելու իր քաղկեդոնիկ դավանանքը: Նա ոչ միայն Դվինի սբ. Գրիգոր եկեղեցում հազորովեց Կոստաս կայսեր հետ և հունարեն պատարագ մատուցեց, այլ օգտվելով տրված առիթից «մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, և բեկանէր ահիւ: Մինչ զի առ մահուն եկիւղիւ ամենեքեան զհրամանս հաղորդութեանն կատարէին»¹⁰⁹:

Երբ Կոստաս կայսրն իր բանակներով ստիպված հեռացավ Հայաստանից, ներսես կաթողիկոսը շամարձակվեց մնալ տեղում և կայսեր հետ գնաց Կոստանդնուպոլիս, որտեղից նա վերադարձավ Հայաստան, ապաստանեց իր հայրենի Տայք նահանգում, որտեղ, հաճանաբար, քաղկեդոնականներն իրենց ավելի ապահով էին զգում: Միայն Թեոդորոս Ռշտունու մահից հետո նա համարձակվեց վերադառնալ իր աթոռին: Արարական վտանգը դեռ այնքան շոշափելի չէր այն ժամանակ, անգամ մինչև VII դ. վերջին տասնամյակները, երկրում ավելի զգալի էր Բյուզանդական կայսրության տիրապետությունը: Կոստաս II կայսրն առանց այլևայլի Հայաստանի մասին ասում էր. «աշխարհն իմն է»¹¹⁰, և չէր տատանվում միջամտել անգամ պարսկական Հայաստանի ներքին գործերին: Հայերը բազմաթիվ փորձեր կատարեցին թոթափելու բյուզանդական լուծը: Կոստաս կայսեր թագավորության 12-րդ տարում Թեոդորոս Ռշտունու զխափորության մեջ «ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց»¹¹¹: Մի քիչ անց նույն բանն արեց և Մուշեղ Մամիկոնյանը. «իսկ

106 Սերբոս, էջ 167:
107 Նույն տեղում:
108 Նույն տեղում:
109 Նույն տեղում:
110 Նույն տեղում, էջ 165:
111 Նույն տեղում, էջ 164:

Մուշեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն...»¹¹²։ Երկու Հայաստանների ղեկավարները զիտակցեցին, որ անհրաժեշտ է վերացնել երկու Հայաստանների միջև եղած հակասությունները, որոնք մեծ տերություններն էին բորբոքում։ «Իսկ իշխանքն Հայոց որ ի Յունաց և որ ի Տաճկաց կողմանէ, Համազասպ և Մուշեղ և այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արինահեղութիւն»¹¹³։

Պակաս դժգոհություններ չէին առաջացնում Բյուզանդական կայսրության կողմից հայկական զորքանակների ու զորահրամանատարների առաքումը երկրի տարբեր հեռավոր շրջանները։ Հայկական զորքերի և նրանց հրամանատարների դասալուծությունները դարձել էին սովորական երևույթ։ Այս շրջանում շարունակվեց և հայ նախարարների մասնակցությունը կայսեր գեմ կազմակերպված հակապետական դավադրություններին ու էլույթներին։ Կոստաս կայսեր գեմ կազմակերպված ապստամբությանը մասնակցում էին բազմաթիվ հայ ազնվականներ՝ Գևորգ մագիստրոսը, Մանուելը, որ Կոստանդնուպոլսի մագիստրոսի պաշտոնն ուներ, թրակացոց զորքերի հրամանատար Սմբատը, վերոհիշյալ Մանուելի փեսան, և ուրիշներ։ Թրակացի զորքերի տված զեկուցագրի համաձայն այս ապստամբության կազմակերպիչը Սըմբատ ասպետն էր¹¹⁴։

Ստեղծված վիճակից դուրս դալու, հակասությունները վերացնելու ուղղությամբ փորձեր կատարելու մասին ամենեին էլ մտահոգված չէին Հերակլիոսին հաջորդած կայսրերը։ Նրանք նույն ոգով շարունակեցին եկեղեցական այդ քաղաքականությունը։ Հուստինիանոս II-ը (685—695, 705—711), Հերակլիոսի հիմնադրած հարստության վերջին ներկայացուցիչը, 690 թ. Կոստանդնուպոլսում եկեղեցական ժողով է գումարում, մասնակցելու հրավիրում հայոց Սահակ Գ կաթողիկոսին (678—705) և բազմաթիվ այլ եպիսկոպոսների, որոնք առերես ստորագրում են միության թղթի տակ, բայց գալով Հայաստան, հրաժարվում դրանից և ամուր կանգնում հայրենավանդ դավանանքի գրույթների վրա։

Հայաստանում արաբական տիրապետության ժամանակ, երբ Բյուզանդական կայսրությունը խալիֆայության դեմ մահու և կենաց մար-

տեր էր մղում, թվում է, թե նա ոչ մի ցանկություն, ավելի ձիշտ՝ կաթողություն չպիտի ունենար միջամտելու հայոց կրոնական գործերին, շանքեր թափեր Հայաստանում և հարևան երկրներում քաղկեդոնական կայսրությունը VIII դ. առաջին երեսնամյակում չէր դադարում տենդագին գործունեություն ծավալել նախ Աղվանքում¹¹⁵, ապա Հայաստանի այնպիսի հեռավոր մի նահանգում, ինչպիսին էր Սյունիքը։ Պահպանվել է Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի՝ (715—730) եկեղեցիների միության վերաբերյալ մի անթվակիր նամակ՝ ուղղված Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսին։ Պատրիարքը առաջ քաշելով «աբինակ բարեպաշտութեան և առ միմեանս կապակցութեան հոգևոր փրոյ և միարանութեան հաւատոյ» քարոզը, իրեն համարում էր մոլորյալ հոտի փրկությանը մտահոգված («որպէս մուրեկոց զհետ ընթացեալ»)՝¹¹⁶ քաջ հովիվ։

Այդպես գրելու համար պատրիարքը անշուշտ ուներ հիմքեր։ Հայաստանն այն ժամանակ գտնվում էր ահավոր վիճակում, կայսրությունն ուղեց օգտագործել այդ հանգամանքը (ինչպես և X դ. սկզբում, Ասորպատականի Յուսուֆ ամիրայի խժոժությունների ժամանակ¹¹⁷)։ VIII դ. սկզբում արաբ խալիֆան վճռել էր «բառնալ յաշխարհէս Հայոց զտոհմ նախարարաց նոցին հեծելովք»¹¹⁸, որի պատճառով հայոց իշխան Սմբատ կուրապաղատը «գրէր առ արքայն Յունաց և խնդրէր զոր ի նմանէն յօգնականութիւն»¹¹⁹։ Հայ-հունական զորքերը պարտվում են, 705 թ. տեղի են ունենում նախճավանի և Խրամի հայտնի դեպքե-

115 Մովսես Կաղանկատվացի, էջ 338։

116 «Քիրք բղբոց», էջ 373։ Ստեփանոս Սյունեցու անունով պահպանվել է և Անփոքի պատրիարքին ուղղված մի պատասխան նամակ՝ «Վասն հաւատոյ դաւանութեան», որը վկայում է, որ հունական եկեղեցին մի քանի ուղղությամբ էր գործում Հայաստանում։ Առեւք, որ Անտիոքի պատրիարքին ուղղված այս պատասխան նամակը Շ. Գասպարյանը կեղծ է համարում (տե՛ս Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, էջ 40), թեև Բյուզանդիայի նախկինում և հետագայում ևս, Սյունիքում ծավալած տենդագին գործունեությունը վկայում է, որ կայսրությունը ինչ որ հատուկ մտադրություններ ուներ Հայաստանի այս անկյունում։ Գիտենք, որ 633 թ. Հերակլիոսն էր Սյունիքում գործունեություն ծավալելու Անգամ X դ. Սյունիքի եպիսկոպոսի հետ նամակագրություն պիտի պահպաներ բյուզանդական արքունիքը (տե՛ս Darrouzes, Un recueil epistolaire, p. 115) և, հավանաբար, որոշ հաջողությունների հասնելը (Հովհ. Սկիլիցես, էջ LXV)։

117 Տե՛ս Բարբիկյան, Նիկիոզայոս Միստիկոսի թղթերը, էջ 253։

118 Ղևնդ, էջ 31,

119 Նույն տեղում, էջ 32։

112 Նույն տեղում, էջ 173։
113 Նույն տեղում, էջ 171—172։
114 Նույն տեղում, էջ 163։

րը, իսկ վերապրած հայ նախարարների մի մասը Սմբատ կուրապազատի գլխավորությամբ ապաստան են գտնում Բյուզանդիային ենթակա շրջաններում¹²⁰:

Ահա համառոտ գծերով հայ-հունական կրոնական քողի տակ հանգես եկող քաղաքական ու մշակութային հակասությունների մասին: Բայց այդ հակասություններն ունեին նաև այլ՝ սոցիալ-տնտեսական և դասակարգային բովանդակություն: Հարկային ծանր լուծը, տեղական իշխանությունների կամայականությունները խանգարում էին կայսրերի կուռ պետություն ստեղծելու ձգտումներին, դեռ ավելին, այդ բնակչությունը ոտքի էին հանում և՛ դասակարգային, և՛ ժողովրդապաշտպարական պայքարի: Այդ պայքարի ամենավաղ օրինակը Հայաստանում պավլիկյան շարժումն էր, որ սկիզբ առավ VIII դ. կեսերին, հենց բյուզանդական Հայաստանում¹²¹: Այդ շարժման մասին շատ է գրվել և ավելորդ է այստեղ նրա վրա հատուկ կանգ առնել¹²², բայց Թեոփանեսի ժամանակագրության անշուրջամբ պիտի ասենք, որ մեր հեղինակը առաջին բյուզանդական պատմիչն է, որ խոսում է այդ աղանդի մասին և՛ ուղղակի, և՛ անուղղակի: Նրա առաջին անուղղակի տեղեկությունը աղանդավորների և նրանց աղգային պատկանելության մասին վերաբերում է Ֆիլիպպիկոս-Վարդան կայսեր (711—713) ժամանակաշրջանին: Հիշյալ կայսրը, գրում է Թեոփանեսը, «արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Չորրորդ Հայքում»¹²³: Նույն զեպրեբի մասին ավելի մանրամասն է գրում Միքայել Ասորին. «Այս ժամանակ,— գրում է նա,— հռոմայեցիների կայսր Ֆիլիպպիկոսը արտաքսեց հայերին իր կայսրության սահմաններից: Նրանք դուրս գալով ապաստանեցին արարների մոտ: Վերջիններս նրանց բնակեցրին Մելիտենեում և նրա շրջակայքում և Չորրորդ Հայ-

120 Նույն տեղում, էջ 35:

121 Պավլիկյանների զգալի մասը հավանաբար հայեր էին կամ, համեմատն զեպոստոս հույներ: Պատմիչը ևն պավլիկյանությունից «գարծի եկող» աղանդավորների համար բնորոշված կանոնները Աղանդավորը պետք է նշովեր աղանդի հիմնադրներին, և «և՛ ինչ նա հունարեն շրտեր, ապա այդ բանը պիտի կատարեր թարգմանի միջոցով» (տես *Methodii, De his, col. 1324*).

122 Վերջին 20 տարում լույս տեսած գործերից հիշատակելի են. 'Αναστασιου, Οι Παυλιανοί; Loos, Le mouvement Paulicien; Garsoïan, The Paulician heresy; Бартикаян, Источники; Липшиц, Очерки; Մելիք-Բախշյան, Հայաստանը, Lemerle, Les Pauliciens.

123 Տե՛ս ասորի, էջ 94:

քում: Այդ հայերը դարձան արարների թագավորության դաշնակիցները և հռոմայեցիների կայսրության հակառակորդները»¹²⁴:

Ինչպես ցույց է տալիս Թեոփանեսը, 752 թ. Կոստանդին V կայսրը Մելիտենեից և Թեոդոսուպոլսից Ֆիլիպպուպոլիս հայեր գաղթեցրեց, որոնք Թրակիայում տարածեցին պավլիկյան աղանդը: Այս փաստը վկայում է, որ Ֆիլիպպիկոսի կողմից կայսրությունից արտաքսված և Մելիտենեում ու Չորրորդ Հայքում հաստատված հայերը պավլիկյան աղանդավորներ էին և այդ հանգամանքն էր նրանց՝ երկրից արտաքսվելու գլխավոր պատճառը:

Թեոփանեսի և Միքայել Ասորու այս տեղեկություններին արձագանքում է նույն այդ զեպրեբի ժամանակակից կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728): Նա իր «Ընդդէմ պաղիկեանց» ճառի հենց սկզբում, գրելով պավլիկյանների մասին, ցույց է տալիս, որ նրանք «խորամանկեալ գտին շարութեանն իւրեանց զէն խողխողէջ քրիստոսասիրաց անձանց, դաշնակից լինելով բռնակալաց կրեատելոցն»¹²⁵, այսինքն՝ արարների: Աշխատավոր զանգվածները միամտորեն կարծում էին, որ արարներն իրենց ազատագրելու են բյուզանդական բռնություններից:

Արարներն ամենևին էլ դեմ չէին օգտվելու նրանց այդ մոլորությունից և աղանդավորների ռազմական կարողությունները օգտագործելու նպատակով նրանց հաստատում էին արաբբյուզանդական սահմանին մոտիկ: Արարները, հավանաբար, օգտագործում էին նրանց անգամ բյուզանդացիների դեմ մղած իրենց զաղափարական պայքարում: Գարձյալ նույն ժամանակներում իշխած արաբ խալիֆա Օմարը (717—720) կտոն III կայսեր զրած նամակում նրան այնպիսի մի մեղադրանք է ներկայացնում, որի աղբյուրը հենց պավլիկյաններն էին: Խալիֆան գրում է կայսեր. «...Ընդէր զսուկերս առաքելոց և մարդարէից պատուէր և կամ զճշան խաչին, որ դատապարտութեան գործաբան էր ըստ օրինաց, կամ զպատկերս, զոր պատուէր...»¹²⁶: Գեորգ Վանականի ասելով, պավլիկյանները «լուտանքներ են թափում պատվա-

124 Michel le Syrien, t. II, p. 482: Հմտ. Бартикаян, К вопросу, стр. 127: Նույնի՝ Источники, էջ 34:

125 Տե՛ս Յովհաննես Բմաստապիի Աձնեցոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1824, էջ 78: Յովհաննես Օձնեցու երկերի մյուս հրատարակություններում «կրեատելոցն» (այսինքն՝ թլիփաղված, արար, մուսուլման) բառը հասկանալի պատճառով կրճատված է:

126 Ղևոնց, էջ 44:

կան խաչի հասցեին, ասելով, թե խաչը հենց Քրիստոսն է և պետք է նրկրպագել փայտը, քանզի այն անիծված գործիք է»¹²⁷։ Իսկ Պետրոս Միկիլիացու ասելով պավլիկյանները խաչը համարում էին հասարակ փայտ, ոճրագործների՝ անեծքի ենթակա գործիք, որը շպետք է երկրպագել և համբուրել։

Մակայն պավլիկյան աղանդավորների սպասածները շատ շուտով հօդս ցնդեցին։ Արարական ծանր լուծը, կամայականություններն ու հալածանքները ցույց տվեցին, որ նրանք գործ ունեն ավելի դաժան ու վատթար թշնամու հետ և պատրաստ էին զենքը ձեռքին համայն հայ ժողովրդի հետ նրանց դեմ պայքարի դուրս գալ։

Ահա այսպիսին էր վիճակը կայսրության արևելյան նահանգներում։ Բայց VII դ. 60—70-ական թվականներից սկսած կայսրության առջև կանգնեց նաև պրոտորուղարների վտանգը։ Հաղթելով բյուզանդական բանակներին և հաստատվելով Մերձդանուբյան շրջաններում, նրանք 681 թ. ստիպեցին կայսրությանը ճանաչել իրենց պետությունը, վճարել տարեկան որոշակի հարկ։ Սա առաջին բարբարոսական պետությունն էր, որ կազմավորվեց արևելահռոմեական կայսրության սահմաններում¹²⁸։ Թշնամիների կողմից կայսրության հողերի նվաճումները արևելքում և արևմուտքում, սահմանների նեղացումն ունեցավ այն հետևանքը, որ փաստորեն վերացավ նախկին Արևելահռոմեական բազմազգ կայսրությունը և նրա փոքրացած սահմաններում ստեղծվեց էթնիկական առումով ավելի միասնական մի հունական պետություն¹²⁹։ Հերակլիոսի և պատրիարք Սերգիոսի որդեգրած նոր վարչապետությունը՝ միակամությունը, այլևս պետք չէր, քանի որ ում սիրաշահելու համար էր այն կյանքի կոչվել, գտնվում էին օտար տիրապետության տակ, իսկ բուն երկրում, առավելապես երկարակյալ բյուզանդիայում միակամության գաղափարը կարող էր միայն վնասել։ Կոստանդնուպոլսում դրամարված VI Տիեզերական ժողովում (680—681) միակամությունը դատապարտվեց, հայտարարվեց հերձված ու մերժվեց։

Հուստինիանոս II-ի օրոք կայսրությունը հաջողությամբ հաղթահարեց Թրակիայից մինչև Թեսաղոնիկե ողողած սլավոնների՝ առանձին պետություն կազմակերպելու վտանգը, հաջող պատերազմ մղեց

127 Бартикян, Источники, стр. 199.
128 «История Византии», т. I, стр. 373.
129 նույն աղբյուր։

արարների դեմ, որն ավարտվեց խալիֆա Արդ ալ-Մալիքի հետ հաշտության կնքմամբ, որի համաձայն արարներն ու բյուզանդացիներն, է միջի այլոց, իրար միջև են բաժանում Հայաստանից, Իբերիայից և Կիպրոսից գանձվող հարկերը¹³⁰։

Այդ շրջանում հայերի դերը բյուզանդական կայսրության մեջ, հատկապես բանակում, զգալի էր։ Նրանք կայսրության տարածքում, ավելի որոշակի՝ Օպսիկիոն բանակաթեմում, հին Պերգամոսում գաղաթ էին ստեղծել¹³¹, որտեղից էր ծագում բյուզանդական գահին 711—713 թթ. տիրացած Վարդան-Փիլիպպիկոսը։ Ավելի մարդաշատ ու կարևոր էր Թրակիայի Ֆիլիպպոպոլիս քաղաքում ստեղծված հայկական գաղութը, որի հիմնական կորիզը պավլիկյան աղանդավորներից էր բաղկացած։

Ֆիլիպպիկոս կայսեր տապալումից հետո կայսրությունը բզկըտվում էր ներքին գահակալական պայքարում, որում հաղթանակ տարավ Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լևոնը։ Նրան օժանդակում էին նաև Արմենիական բանակաթեմի զորքերը։ Լևոնը, որ հյուսիսային Ասորիքի Գերմանիկա (Մարաշ) քաղաքից էր, աղբյուրներում սխալմամբ իսավրացի է կոչված, նրա հիմնադրած հարստությունը՝ Իսավրական, այնինչ այժմ ընդունված է այն Ասորական անվանել¹³²։

Լևոն III-ը, (717—741), բյուզանդական ամենաընդունակ ու կարող կայսրերից մեկը, իր թագավորության առաջին տարին իսկ ջախջախեց Կոստանդնուպոլիսը պաշարած արարներին, զգալի հարվածներ հասցրեց նրանց Փոքր Ասիայում։ Նրան հաջողվեց դաշինք կնքել սկզբում բուլղարների խան Տերվելի, ավելի ուշ՝ խաղարների խաքանի հետ, վերջինիս հետ դաշինքը ամրապնդեց նաև խնամիական կապերով։ Լևոն III-ի որդի Կոստանդինը կնության առավ խաքանի դստեր։ Այդպիսի պայմաններում Լևոն III-ը Փոքր Ասիայի Ակրոյինոն քաղաքում 740 թ. արարների դեմ փայլուն հաղթանակ տարավ։

Լևոն III-ը հսկայական գործունեություն ծավալեց պետությունն ու բանակն ամրապնդելու ուղղությամբ։ Նահանգային ավագանուն թու-

130 Տե՛ս ստորև, էջ 74. «История Византии»-ում (հտ. II, էջ 42) գրված է, որ իբր հաշտության պայմանագրով խալիֆան կայսեր զիջեց Հայաստանի և Կիպրոսի մի մասը։

131 Gelzer, Pergamon (Գեյցեր, Հայ հասարակությունն ի Պերգամոն),
132 «Իսավրացիների» հայկական ծագման մասին տես Bréhier, «Orient ou Byzance?», p. 134, նաև Ալիշան, Բ Վարդան կայսր, էջ 314։ Հմմտ. նաև Աղոնց, Նամակներ, էջ 104.

լացնելու և շեղարացնելու նպատակով փոքրացրեց բանակաթեմերը: Առն III-ի անվան հետ է կապված Բյուզանդական կայսրության պատմության մեջ դարաշրջան կաղմոզ և պատկերամարտություն անունն ստացած մի շարժում, որը շուրջ 120 տարի հուզեց կայսրության բնակչությանը բոլոր խավերն ու գասակարգերը¹³³: Այդ շարժման պատմությանը Քեոփանեսն իր ժամանակագրության մեջ հսկայական տեղ է հատկացնում, այդ պատճառով անհրաժեշտ է ավելի հանգամանորեն կանգ առնել պատկերամարտության վրա:

Միսակատարությունների ձևերն ավելի քան եկեղեցական դոգմաները հուզում էին ժողովրդական լայն զանգվածներին, և պատկերների պաշտամունքի շուրջ ընթացող վեճերը դարձան համընդհանուր: Բյուզանդական հասարակության տարբեր շերտերն իրենց վերաբերմունքով դեպի սրբապատկերները պաշտամունքը, արտահայտում էին իրենց քաղաքական, սոցիալական ու մշակութային ձգտումները¹³⁴: Պատկերամարտությունը ծագեց որպես ժողովրդական զանգվածների շարժում, որը փորձեց օգտագործել նահանգային կալվածատեր ազնվականությունը՝ ընդդեմ մայրաքաղաքի հոգևոր ու աշխարհիկ տիրողների, իսկ կայսրը՝ իր քաղաքական ու անտեսական դիրքերը ամրապնդելու, եկեղեցին իրեն ենթարկելու, եկեղեցու դարեր շարունակ դիզած հարստություններին տիրանալու համար¹³⁵:

Այստեղ պետք է ընդգծել, որ պատկերամարտությունը Բյուզանդիայում չի ծագել «Իսավրական» հարստության կայսրերի օրոք: Պատկերների պաշտամունքի հարցը միշտ էլ հուզել է պաշտոնական եկեղեցին: IV դ. սկզբում էլ վրիթի եկեղեցական ժողովում հատուկ կանոն է ընդունված սրբապատկերների պաշտամունքի դեմ: Եվսերիոս Կեսարացին, Եպիփան Կիպրացին, ապա Մաքբուգի եպիսկոպոս Փիլոքսենոսը պատկերների պաշտամունքի հակառակորդներ էին¹³⁶: Պատկերամարտությունը տարածված էր նաև Հայաստանում, բայց դա չի նշանակում, որ հայոց եկեղեցին պատկերամարտ էր¹³⁷, և ճիշտ չէ այն կարծիքը, որ իսա-

133 Եթե հավատանք պատմիչ Առնոյին, սկզբնական շրջանում Առն III-ը սրբապատկերների պաշտպան ու շատագով էր: Օմար Խալիֆային ուղղած իր նամակում նա գրում էր. «ոչ թէ փայտին և զեղոյն (ներկին Հ. Բ.) որ ի վերայ փայտին՝ երկիր պաղանեմք» (Առնոյ, էջ 91), այլ կենդանագրային:
134 «История Византии», т. II, стр. 52.
135 Նույն տեղում, էջ 52—53:
136 Der Nersessian, Une apologie, p. 388—389: (Այս հոդվածի հայերեն թարգմանությունը տես Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը, էջ 7—30):
137 Տեր-Ներսեսյան, VII դարի մի նրկ, էջ 29:

վերական պատկերամարտությունը կապված է կայսրության արևելյան նահանգների, այդ թվում և Հայաստանի, ինչպես և իսլամի պատկերամարտ կրոնի ազդեցության տակ գտնվող Ասորիքից Բյուզանդիա տեղափոխված բնակչության հետ¹³⁸: Այդ բանը ժխտվում է բազմաթիվ փաստերով¹³⁹:

Հայոց եկեղեցին դեմ չէր սրբապատկերների պաշտամունքին¹⁴⁰: Առնոյ պատմիչի սանլով հայոց Աշոտ Բագրատունի պատրիկը «չին էր զեկեղեցին Դարինից յիւրում ոստանին, և զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արևու մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նմա»¹⁴¹:

Վրթանես Քերթոզի անվամբ պահպանված և պատկերամարտների դեմ ուղղված մի երկ ցույց է տալիս, որ դեռևս VI դ. վերջում և VII դ. սկզբում հայոց եկեղեցում եղել են սրբապատկերներ, որ միաժամանակ եղել է պայքար նրանց պաշտամունքի դեմ, որի պաշտպանությամբ ահա հանդես է գալիս Վրթանես Քերթոզը: Նրա երկը համարվում է պատկերամարտների դեմ ուղղված հնագույն աշխատությունը¹⁴²: Պատկերամարտների դեմ գրել է նաև Հովհան Մայրազոմեցին իր 682 կամ 683 թվականին գրած նամակում¹⁴³:

Արարական տիրապետության շրջանում նվաճողները պայքարել են սրբապատկերների պաշտամունքի դեմ: Եզիզ II (720—724) խալիֆան Նույն Առնոյի ասելով «տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան տեսոն մերոյ և փրկչին և նորին աշակերտացն: Խորտակէր և զնշան տերունեան խաչին Քրիստոսի, զոր ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն ի պատճառս երկրպագութեան համազոյ Երրորդութեանն»¹⁴⁴:

Բայց հարցը կայանում է նրանում, որ VIII դարի 20-ական թվականներին սկիզբ առած պաշտոնական պատկերամարտությունը ընդհանուր ոչինչ չունի վաղ շրջանի պատկերամարտության հետ: Վաղ շրջ-

138 «История Византии», т. II, стр. 52.
139 Der Nersessian, Image worship, p. 405 sq.
140 Der Nersessian, Une apologie, p. 402.
141 Առնոյ, էջ 16:
142 Der Nersessian, Une apologie, p. 379: Նույնի՝ Le peinture; Дурново, Краткая история; Команджян, Цвет: Պատկերամարտության մասին (հայկական սրբապատկերների օգտագործմամբ) տե՛ս նաև Gero, Notes, p. 23—42.
143 Մովսես Կաղանկատվացի, էջ 302—305: Der Nersessian, Image worship, p. 406.
144 Առնոյ, էջ 100: Պատմիչը հանդես է գալիս որպես սրբապատկերների շատագով:

զանում այդ շարժումը կրոնադավանաբանական բնույթ ունի, այնինչ VIII դ. նա սոցիալ-քաղաքական էր և սքոլովում էր պասակերամարտական շղարշով:

Առն III-ին հաջորդեց որդին՝ Կոստանդին V-ը (741—775), որ հազիվ դահ բարձրացած, ստիպված եղավ երկարատև պայքար մղել իր դեմ ապստամբություն բարձրացրած Օպսիկիոն բանակաթեմի զորավար հայազգի Արտավազդի դեմ, իր քրոջ ամուսնու ճնշելով նրա ապստամբությունը և կուրացնելով ապստամբին, Կոստանդին V-ը նախ և առաջ ուշադրություն դարձրեց արաբական վտանգին, շանքեր թափեց օգտագործելու 747 թ. խալիֆայության սահմաններում Օմմայյանների և Աբբասյանների միջև բռնկված գահակալական սուր պայքարը: Դրանից փորձեցին օգտվել նաև հայ նախարարներն ու հայ ժողովուրդը՝ թոթափելու համար արաբական լուծը¹⁴⁵: Հայ ապստամբների և Կոստանդին V-ի միջև պայմանավորվածություն կար: Հայ ապստամբները «ապաստանէին յամուրս աշխարհին Տայոց հանդերձ ընտանեօք իւրեանց և ամենայն ազխիւք. և ապաստանեալ առաւել ի զօրս արքային Յունաց որք էին ի կողմանս Պոնտոսի. քանզի էր ի մէջ սոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոստանդին»¹⁴⁶: Ահա այս ապստամբությանը ցանկացան մասնակցություն ունենալ նաև պավլիկյան աղանդավորները¹⁴⁷: Կոստանդին կայսրը գրավում է Կարինն ու Մելիտենեն, Բյուզանդիա տեղափոխում այդ քաղաքների հայ և ասորի բնակչությունը, այն հաստատում Թրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքում: Թեոփանեսի ասելով նրանք այնտեղ տարածեցին պավլիկյան աղանդը, վկայությունն այն բանի, որ գաղթվածների մեջ կային պավլիկյաններ և հաստատումն այն ենթադրության, որ Ֆիլիպպիկոս-Վարդան կայսեր՝ Բյուզանդիայից արտաքսած հայերը պավլիկյան աղանդավորներ էին¹⁴⁸:

Հայաստանում վիճակը ծանրացավ Աբբասյանների հարստության հաստատմամբ, որոնց ստեղծած կայսրությունը համամուսուլմանական բնույթ էր կրում: Հարկային լուծը էլ ավելի ծանրացավ, կառավարիչների կամայականություններին սահմանափակում չկար և 774 թ. բռնընկվեց մի հուժկու ապստամբություն, որ ստացավ համաժողովրդական բնույթ: Եթե 747—748 թթ. ապստամբության ժամանակ Բյուզանդիան,

145 Ապստամբության մասին մանրամասն տես *Тер-Гевондян, Армения*, стр. 88—97.

146 Առնդ, էջ 123:

147 Баргукян, Источники, стр. 42 и сл.

148 Տե՛ս վերը, էջ XXXVIII—XXXIX:

ըստ երևույթին, օգնության հասավ ապստամբներին, բյուզանդական զորքերի հարձակումը արաբների վրա և հայոց հակաարաբական ելույթը նախօրոք համաձայնեցված էր, այս դեպքում հայերը մնացին մենակ: Աշոտ Բագրատունին, Սահակ Բագրատունու որդին, նույնիսկ փորձեց կանխել ապստամբական շարժումը, պատճառաբանելով, որ Կոստանդին կայսրը «այնպէս ընթացրեալ է յահէ շարաթոյն զազանին (ի՛մա՛ արաբների) և «ամենևին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմտաւ առնուլ զաշխարհս Հայոց ի ձեռաց նորա»¹⁴⁹:

Հայոց ապստամբությունը դաժանորեն ճնշվեց և ղեկավարներից շատերը ստիպված ապաստանեցին Բյուզանդիայում և ծառայության մտան բյուզանդական բանակում, մտադիր լինելով նրա շարքերում մարտնչել ատելի թշնամու դեմ: Աէին ոմանք ի նախարարացն Հայոց,— գրում է Ղևոնդը,— որք մերժեալ լթին զժառանգութիւնս իւրեանց և փախստեալ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»¹⁵⁰: Նրանց թվում էին Տաճատ Անձևացին¹⁵¹ և Արտավազդ Մամիկոնյանը:

Հայ ժողովրդի վիճակը հատկապես ծանրացավ Հարուն աղ-Ռաշիդի օրոք (786—809), երբ էլ ավելի սաստկացավ արաբ տարրի հաստատումը Հայաստանում¹⁵², որ ավերիչ բնույթ պիտի ստանար և փաստորեն նախապատրաստեր սելջուկ թուրքերի նվաճումները: Արաբական ցեղերը բնակեցվում էին արաբաբյուզանդական սահմանին մոտիկ, նրանք հասան մինչև Կարին քաղաքը¹⁵³: Ստեղծված անտանելի վիճակից ելք գտնելու նպատակով հայերը ստիպված գաղթում էին. «զնացին փախստեալ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան

149 Առնդ, էջ 143:

150 Առնդ, էջ 133, նաև 143—144:

151 Նույն տեղում, էջ 158: Նա հետագայում անցավ արաբների կողմը, նշանակվեց Հայոց իշխան (781) և իր մահկանացուն կնքեց 785 թ. Դերբենդում, խազարների դեմ աքաղանքի դնացած ժամանակ:

152 Տե՛ս Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները: Նույնի՛ն՝ Армения, էջ 114 և հտ.:

153 Կոստանդին V կայսրը շատ լավ էր պատկերացնում այդ արար տարրից բխող վտանգը և երբ 752 թ. գրավեց Կարին քաղաքը «բնակեալսն ի նմա Սառակինոս բառաւոր նոցին ընտանեօքն յաշխարհն Յունաց» (Առնդ, էջ 129): Բայց դա ոչ մի օգուտ չվեց. քանզի հաջորդ տարին Եգիպտոսի խալիֆան «ածեալ արս յորդոցն իսմայելի բնակեցոյց ի նմա նոցին ընտանեօքն՝ պահել զքաղաքն և զգուշանալ ի թշնամեաց: Եւ կարգեաց նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս Հայոց» (Առնդ, էջ 130):

ծՔԻ արանց հանդերձ կանամբք և մանկտեալ¹⁵⁴։ Գաղթականներին առաջնորդում էին հայ նախարարները և նրանց հեծելազորը։

Կոստանդին V-ի մահից հետո իշխանությունն անցնում է նրա որդու՝ Լեոն IV-ի ձեռքը (775—780)։ Նա պատկերապաշտների հանդեպ շէր վարում այն խիստ քաղաքականությունը, ինչ իր հայրը։ Վանականների հալածանքները դադարեցին։ Պատկերապաշտներն սկսեցին հրապարակ գալ և լայն գործունեություն ծավալել Լեոն IV-ի այրի Իրենեի իշխանության օրոք, որ միաժամանակ իր անլափահաս որդու՝ Կոստանդին խնամակալն էր։ 787 թ. Նիկիայում կայացավ VII Տիեզերական ժողովը, որը դատապարտեց պատկերամարտությունը, 797 թ. Իրենեն կուրացնելով իր որդի Կոստանդին VI-ին, դարձավ միահեծան կայսրուհի։ Սակայն երբ նա 802 թ. վճռեց ամուսնանալ Ֆրանկների թագավոր Կարլոս Մեծի հետ, որն այդ միջոցով ուզում էր իր իշխանության տակ միավորել վաղեմի Հռոմեական կայսրությունը, Կոստանդնուպոլսի ավագանին կայսրուհուն զահեղեկեց արեց և կայսր հռչակեց պատրիկ Նիկեիփորին։ Միաժամանակ բանակաթեմային ավագանին կայսր հռչակեց հայազգի Վարդանին՝ մականունը՝ «Թուրք¹⁵⁵», Անատոլիկոն բանակաթեմի ղեկավարին։ Նրա ապստամբությունը սակայն ճշմարտացի

Նիկեիփոր I-ը Ֆինանսական խստագույն քաղաքականություն վարեց, ջանաց կարդավորել բանակի վիճակը։ Նրա միջոցառումները մեծ զժգոհություն առաջացրին վանականների ու վաշխառուների շրջանում։ Կայսրը անհաջողություններ ունեցավ նաև արաբների ու բուլղարների դեմ մղվող պատերազմներում։ 811 թ. հուլիսի 26-ին նա սպանվեց խան Կրումի դեմ տված ճակատամարտում։ Կայսր հռչակվեց Միքայել I Ռանգաբեն (811—813), որի օրոք հրապարակ ելան Նիկեիփորի կողմից հալածված եկեղեցականներն ու վանականները։ Սկսվեցին աղանդավորների և առաջին հերթին պավլիկյանների հալածանքները։ Բուլղարների դեմ մղվող պատերազմը շարունակվում էր ոչ հօգուտ կայսրության։ Նման պայմաններում բանակաթեմային ղժգոհ ավագանին ստիպեց Միքայելին հրաժարվել զահից։ Բանակը կայսր հռչակեց հայազգի Լեոն V-ին (813—820), Հայաստանից Բյուզանդիա գաղթած

Ֆեոդալներից մեկին, որով Բյուզանդական կայսրության պատմության մեջ սկսվում է պատկերամարտության երկրորդ շրջանը։

Վերևում առիթ ունեցանք նշելու, որ VII—VIII դդ. Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում ստեղծվել էին հայկական բազմամարդ գաղութներ¹⁵⁶։ Բյուզանդական աղբյուրներում նրանց մասին հիշատակությունները շատ սուղ են, հատկապես խնդրո առարկա ժամանակաշրջանում, հետևաբար դժվար է առավել կամ պակաս շափով հստակ պատկերացում կազմել նրանց ներքին վիճակի վերաբերյալ։ Մի փոքր ուշ շրջանի աղբյուրների տվյալների հիման վրա պարզվում է, որ Թրակիայի հայկական գաղութի ազգաբնակչությունը փաստորեն շէր շփվում իրեն շրջապատող օտար տարրի հետ, հետևաբար երկար ժամանակ անաղարտ պահեց իր նիստն ու կացը, սովորությունները, մի խոսքով՝ աղգային դեմքը։ Հայերը, գրում է Կոստանդին Միքանածին կայսրը (913—959) Ադրիանուպոլսում «ըզում էին ինչպես հարազատ երկրում և սեփական ժողովրդի մեջ, նրանք կարողություն կուտակեցին, անաղարտ ու մաքուր պահելով իրենց ազնվական ժագումն ու աղգային դեմքը»¹⁵⁷։ Կարելի է ենթադրել, որ այդ գաղութներում հայերը զբաղվում էին նախ և առաջ առևտրով ու արհեստագործությամբ, թեև այդ բանը հաստատող ուղղակի փաստերը բացակայում են։ Անուղղակի տեղեկությունները վկայում են Թրակիայի հայկական գաղութում զարգացած արհեստագործություն լինելու մասին։ Հայտնի է, որ բուլղար խան Կրումը 813 թ. գրավելով Ադրիանուպոլիս քաղաքը, քշել տարել է հայ բնակչություն, ավար է վերցրել բարձրարվեստ հայկական բրդյա զորգեր և կարպետներ, հանդերձներ, տնային պղնձյա սպասներ¹⁵⁸, որոնք, հարկավ, տեղի հայ արհեստավորների արտադրանքն էին։

Նշենք այստեղ, որ Թրակիայի հայկական գաղութում եղել են և անվանի հայ ճարտարապետներ, որոնք մասնակցեցին IX դ. սկզբում բուլղարական մայրաքաղաքներ Պլիսկայի և Պրեսլավայի պալատական շինարարությանը¹⁵⁹։

¹⁵⁶ Bréhier, Les Colonies; Gelzer, Pergamon (Գեյցեր, Հայ հասարակությունն և Պերգամոն); Бартикая, О протоболгарских надписях.

¹⁵⁷ Կոստանդին Միքանածին, էջ 35։

¹⁵⁸ Theophanes Continuatus, p. 212; Symeon Magister, p. 617.

¹⁵⁹ Якобсон, К изучению, стр. 202: Հմմտ. և Бартикая, О протоболгарских надписях, стр. 75—76.

¹⁵⁴ Վեոնդ, էջ 168։

¹⁵⁵ Հենց վերջերս Վարդան «Թուրքի» վերաբերյալ լույս տեսավ ընդարձակ մի հաղված։ Տես Μαυροματτη-Κατσουγιααννοπούλου, 'Η επανάσταση του στρατηγού Βαρδάνη, σελ. 217—236.

Բոլոր վերոնշյալի մասին մենք գաղափար ենք կազմում ուսումնասիրելով աղբյուրների անուղղակի տվյալները, ինչպես և ճարտարագետական հուշարձանները: Իսկ ի՞նչ են տալիս աղբյուրների ուղղակի տեղեկությունները: Աղբյուրները (մեզ հետաքրքրող շրջանի համար նախ և առաջ Թեոփանեսի «Ժամանակագրությունը») հարուստ տեղեկություններ են հաղորդում Բյուզանդիայում աչքի ընկած հայ բարձրաստիճան գործիչների վերաբերյալ, գլխավորապես ռազմական գործիչների: Ավելորդ չէ այստեղ ներկայացնել VII—VIII դդ. բյուզանդական հայազգի գործիչների մանրամասն ցուցակը, որ կազմել է Կ. Թումանովը¹⁶⁰: Հեղինակը հղում է աղբյուրների համապատասխան տեղերը: Այդ աղբյուրներից մենք նշում ենք միայն Թեոփանեսի «Ժամանակագրությունը» (թ՝ տառով՝ կից տալով աշխարհի արարչագործության տարեթիվերը, որոնց տակ հիշված են հիշյալ անձնավորությունները), Առանձին գործիչների որևէ նախարարական տան պատկանելիք (եթե այդ բանը վկայված չէ հայկական աղբյուրներում), Թումանովի (կամ այլ մասնագետների) ենթադրությունն է: Բյուզանդական աղբյուրները չեն հիշատակում հայազգի գործիչների նախարարական որ տան պատկանելիք:

Մավրիկիոս-Փոկասի ժամանակաշրջանում (582—610)

- Առառ Խորխոսունի, պատրիկ, զորավար Թրակիայում
- Հերակլիոս Ավագ, զորավար, պատրիկ, Աֆրիկայի էքսարքոս (թ՝ 6078, 6079, 6080, 6100, 6101)
- Մանակ Մամիկոնյան, զորավար Թրակիայում
- Մուշեղ Բ Մամիկոնյան, զորահրամանատար Թրակիայում
- Թեոդոսիոս Խորխոսունի, զորավար Հայաստանում
- Հերակլիոս I-ի ժամանակաշրջանում (610—641)
- Վահան զորավար (թ՝ 6118, 6125, 6126)
- Դավիթ Սահառունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա
- Սահակ Կամսարական (՞), Իտալիայի էքսարքոս
- Մանուել Արշակունի, մագիստրոս, Եգիպտոսի փոխարքա (թ՝ 6126)
- Մյեթ Բ Գնունի, զորավար (թ՝ 6118)

¹⁶⁰ Toumanoff, Caucasia. p. 149—151.

Նիկեասա պատրիարք, Հերակլիոս Ավագի զարմիկը
Թեոդորոս զորավար (թ՝ 6125)
Թեոդորոս մագիստրոս
Վահան Խորխոսունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա
Վարազախիբց Բ Բագրատունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա

Կոստանդին III (Կոստաս II)—Հուստինիանոս II-ի ժամանակաշրջանում (641—711)

- Վահան Յոթղևյան, Չորրորդ Հայքի կառավարիչ (թ՝ 6194)
- Վարդան-Ֆիլիպպիկոս, զորահրամանատար, կայսր (թ՝ 6203, 6204, 6205)
- Վարազ-Բակուր, պրոտոսպաթար, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (թ՝ 6203)
- Հովհաննես Գնունի (669 թ. հռչակվեց կայսր)
- Մեթ Գ Գնունի, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (668—669 թթ. հռչակվեց կայսր, թ՝ 6160)
- Պասազևաթես Պարսկածին, պատրիկ, Արմենիակների բանակաթեմի զորավար (տե՛ս ժանոթ. 332)
- Սմբատ Ե Բագրատունի, սպաթարոկանդիդատ, դրոնգար, զորահրամանատար Թրակիայում
- Թեոդորոս զորավար
- Թեոդորոս Միակես (Հմայակ), պատրիկ (թ՝ 6196, 6205)
- Վալենտին Արշակունի, պատրիկ, էքսկուրիտորների կոմես (թ՝ 6136)

Լևոն III-Կոստանդին V-ի ժամանակաշրջանում (717—775)

- Արտավազդ Մամիկոնյան, Արմենիակների բանակաթեմի զորավար, կուրապաղատ, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (742—743 թթ. հռչակվեց կայսր, թ՝ 6209, 6218, 6232, 6235)
- Արտավազդ, դոմեստիկոս (թ՝ 6235)
- Վարդան, պատրիկ, Արմենիակների բանակաթեմի զորավար (հաջորդի՝ Կոստանդինի հայրը)
- Կոստանդին, սպաթար, պրոտոստրատոր (նախորդի՝ Վարդանի որդին, թ՝ 6263, 6257)

Նիկեփոր Մամիկոնյան, զորահրամանատար Թրակիայում (Արտավազդ Մամիկոնյանի կայսերակիցը, Թ. 6233)

Նիկեոսա Մամիկոնյան, Անատոլիկոն բանակաթեմի զորավար, մոնաստրատեզոս (Թ. 6234, 6235)

Տրդատ Մամիկոնյան, պատրիկ (Թ. 6234)

Լևոն IV-Իրենեի ժամանակաշրջանում (775—802)

Ալեքսանդր Մուսեղիս (Մուշեղ) Մամիկոնյան, սպաթար, վիզլայի դրոնգար, պատրիկ, Արմենիակների բանակաթեմի զորավար (կայսր հռչակվեց 792 թ., Թ. 6283, 6284, 6285)

Արտավազդ Մամիկոնյան, Անատոլիկոն բանակաթեմի զորավար (Թ. 6270)

Վարդան, պատրիկ, Թրակեսիոն բանակաթեմի զորավար (Թ. 6291)

Վարդան, պատրիկ, սխուրի դոմեստիկոս (Թ. 6288)

Վարդ, Արմենիակների բանակաթեմի զորավար (Թ. 6273)

Վարդ պատրիկ (Թ. 6284)

Վարդգոսիոս Բագրատունի (°), Արմենիակների բանակաթեմի զորավար (Թ. 6270)

Կաստանդին Արտաշիւր, պրոտոսպաթար (Թ. 6285)

Գրիգոր Մուսալակի ուղի Մամիկոնյան, պատրիկ, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (Թ. 6270, 6295)

Տանատ Անձևացի, Բուկելարների բանակաթեմի զորավար (Թ. 6270, 6274)

Նիկեփոր I—Ստավրակիոսի ժամանակաշրջանում (802—811)

Արշավիր Կամսարական (°), քվեստոր, պատրիկ (Թ. 6300)

Վարդան «Թուրք», պատրիկ, Անատոլիկոն, Օպսիկիոն, Թրակեսիոն, Բուկելարների բանակաթեմերի զորավար (6295, 6296)

Վարդան Անձևաս, սպաթար (Թ. 6299)

Միխայել I-ի ժամանակաշրջանում (811—813)

Լևոն Գնունի, Անատոլիկոն բանակաթեմի զորավար, պատրիկ (Թ. 6304, 6305), ապագա Լևոն V կայսրը (813—820)

* * *

Սույն աշխատությունը պատրաստ էր, երբ հնարավոր եղավ ծանոթանալու անգլիացի բյուզանդագետ Կ. Մանգոյի «Ո՞վ է գրել Թեոֆանեսի ժամանակագրությունը» խորագիրը կրող հոդվածին¹⁶¹: Կ. Մանգոն, նշանակություն շտալով ձեռագիր ավանդության, Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի, Կոստանդին Միրանաժինի, Հովհաննես Սկիլիցեսի վկայություններին, գտնում է, որ Թեոֆանեսը չէր կարող «Ժամանակագրության» հեղինակը լինել, որ նա պարզապես ձևի է բերել Գեորգ Սինկելլոսի պատրաստի «դոսիեն»: Անգլիացի պատմաբանն աշխատում է իր միտքը հիմնավորել այն հանգամանքով, որ Գեորգ Սինկելլոսի մահվան և Թեոֆանեսի կողմից «Ժամանակագրության» շարադրման միջև ընդ ժամանակ էր մնում, որ Թեոֆանեսը շատ զարգացած մարդ չէր, այն էլ վատառողջ, որ Թեոֆանեսի «Վարքում» «Ժամանակագրության» որպես նրա հեղինակության մասին խոսք չկա: Կ. Մանգոն ենթադրում է, որ Գեորգ Սինկելլոսը մինչև Նիկեփոր I կայսեր (անգամ Միքայել I) պատմության վերաբերյալ նյութն արդեն հավաքած էր: Նա մատնացույց է անում «Ժամանակագրության» մի շարք տեղեր, որոնք, իր կարծիքով, չեն հաստատում երկի՝ Թեոֆանեսին պատկանելու հանգամանքը, այլ, ավելի հավանական է, Գեորգ Սինկելլոսին:

Հենց վերջերս սովետական բյուզանդագետ Ի. Ս. Չիչուրովը¹⁶² մեկ առ մեկ քննության ենթարկելով Կ. Մանգոյի փաստարկները, ցույց տվեց, որ դրանք կոնտրաստից անշատ անշատ են վերջված, որ հիշյալ տեսությունն անհամոզեցուցիչ է:

* * *

Ստորև տալիս ենք Թեոֆանես կոստանդինոպոլի «Ժամանակագրության» ամբողջական թարգմանությունը՝ սկսած Փոկասի (602—610) թագավորության սկզբից: Նախորդող մասը զանց ենք առել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրա շարադրման համար Թեոֆանեսի օգտագործած աղբյուրները պահպանվել են: Նրանք հետագայում կկազմեն սույն մատենաշարի առանձին հատորները (մեկը՝ Պրոկոպիոս Կեսարացին արդեն կազմել է «Բյուզանդական աղբյուրների» առաջին գիրքը): Թարգմանությունը կատարված է Թեոֆանեսի «Ժա-

¹⁶¹ Mango, Who wrote the Chronicle of Theophanes, p. 9--17.

¹⁶² Чичуров, Феофан Исповедник—публикатор, редактор, автор?

մանակագրության» Կարոլոս դե Բոորի աշխատասիրած հունարեն քրն-
նական բնագրից¹⁶³: Փակագծերում տրվում է աշխարհի արարչագոր-
ծության թվականը, (anno mundi), որ մեր պատմիչը դրել է իր ժամա-
նակագրական սխտեմի հիմքում (տե՛ս վերը, էջ XII): Ասենք այստեղ,
որ Թեոփանեսի բնագրում թվական տվյալները արտահայտված են և՛
բառերով, և՛ «թվերով» (հունարեն այբուբենով):

¹⁶³ *Theophanis Chronographia*, recensuit *Carolus de Boor*, volumen I, Textum
graecum continens, Lipsiae, 1883, p. 290—503.

ΘΕΟΦΑΝΟΥΣ ΑΜΑΡΤΩΛΟΥ
ΜΟΝΑΧΟΥ ΚΑΙ ΗΓΟΥΜΕΝΟΥ
ΤΟΥ ΑΓΡΟΥ ΚΑΙ ΟΜΟΛΟΓΗΤΟΥ
ΧΡΟΝΟΓΡΑΦΙΑ ΕΤΩΝ ΦΚΗ'

ԹԵՈՓԱՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ՝
ՄԵՂԱՊԱՐՏ ՎԱՆԱԿԱՆԻ
ԵՎ ԱԳՐՈՍԻ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀՈՐ
528 ՏԱՐՎԱ ՓԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ Ե Ո Փ Ա Ն Ե Ս Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ղ Ի՝
Մ Ե Ղ Ա Պ Ա Ր Տ Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ի Ե Վ Ա Գ Ր Ո Ս Ի Վ Ա Ն Բ Ի՝ Վ Ա Ն Ա Հ Ո Ր
528 Տ Ա Ր Վ Ա Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն՝
Գ Ի Ո Կ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս Ի Թ Ա Գ Ա Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Վ Ա Ն Ի Յ՝
Մ Ի Ն Չ Ե Վ Մ Ի Բ Ե Ա Յ Ե Լ Ի՝ Ե Վ Ն Ր Ա Ո Ր Գ Ի Թ Ե Ն Փ Ի Լ Ա Կ Տ Ո Ս Ի
Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի Ն, Ա Յ Ն Է՝ Ա Շ Խ Ա Ր Հ Ի 5777 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Յ,
Մ Ի Ն Չ Ե Վ 6305 Թ Վ Ա Կ Ա Ն Ը՝ Ը Ս Տ Ա Լ Ե Բ Ս Ա Ն Գ Ր Ս Յ Վ Ո Յ,
Ի Ս Կ Ը Ս Տ Հ Ո Ւ Մ Ա Յ Ե Յ Վ Ո Յ՝ 6331 Թ Վ Ա Կ Ա Ն Ը՝

Ամենաերանելի արքա Գեորգիոսը⁵, որ Կոստանդնուպոլսի սրբազ-
նազույն պատրիարք Տարասիոսի⁶ սինկելլոսն⁷ էլ եղավ, զարգացած,
բազմազեռ, մեծաթիվ ժամանակագիրներ, պատմիչներ ընթերցած ու
ճշգրտորեն հետազոտած մի մարդ, Աղամից մինչև քրիստոնյաների հա-
լածիչ հոռմայեցիների կայսր Դիոկլետիանոսն ընկած շրջանի վերա-
բերյալ մի համառոտ ու ճշմարտապատում ժամանակագրություն շա-
բազրեց: Նա մանրագնին հետազոտություն մը ճշգրտեց թվականները,
հարթեցրեց և ուղղեց նրանց միջև առկա հակասությունները և, ինչպես
ոչ ոք իրենից առաջ, տվեց բոլոր ժողովուրդների հին թագավորների
ժամանակի ու գործունեության պատմությունը, ինչպես և, իր ուժերի
ներածի սահմաններում, մեծ ու տիեզերական աթոռների քահանայա-
պետների (ես նկատի ունեմ Հոռմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիա-
յի, Անտիոքի և Երուսաղեմի եկեղեցիները ուղղափառորեն հովված-
ների, ինչպես և հերձվածող քահանայապետների կողմից եկեղեցին
ազազակաբար վարածների) պատմությունն ու ճշգրիտ ժամանակը:
Բայց քանի որ նրա վախճանը վրա հասավ և նա չկարողացավ ավար-
տին հասցնել իր գործը, ինչպես ասացինք, նա շարադրեց մինչև Դիո-
կլետիանոսն ընկած շրջանը, և թողնելով երկրային կյանքը, ուղղափառ
զավանանքով գնաց Տիրոջ մոտ, նա մեզ, որպես հարազատ ընկերոջ,
թողեց իր շարագրած գիրքը և մեզ առիթ տվեց պակասը լրացնելու
Իսկ մենք, որ քաջատեղյակ էինք մեր սեփական տգիտության, ինչպես
և գործի դժվարության, հրաժարվում էինք այդ բանն անել՝ որպես մեր

ուժերից վեր: Բայց քանի որ նա թախանձագին խնդրեց մեզ չզլանալ և անկատար շթողնել գործը, մենք ստիպված անդրադարձանք դրան: Ահա մենք, նրա խնդրանքին հլու հնազանդ, ոչ սովորական ջանքեր գործադրելով, ձեռնարկեցինք մեր կարողություններից վեր գործին: Մենք ևս բազում գրքեր որոնեցինք և մեր կարողությունների սահմաններում հետազոտելով շարադրեցինք Դիոկլետիանոսից մինչև Միքայելի ու նրա որդի Թեոփիլակտոսի թագավորությունը՝ կայսրերի, պատրիարքների, նրանց գործերի մասին ճշգրտապատում սույն ժամանակագրությունը: Մենք մեզանից ոչինչ չհորինեցինք, այլ նյութը քաղեցինք բացարձակապես անցյալի պատմիչներից ու լուսագրաֆներից, դեպքերը շարադրեցինք ըստ յուրաքանչյուրի տեղի ունեցած ժամանակի, առանց շփոթության, որպեսզի ընթերցողներն իմանան, թե սվյալ դեպքը՝ պատերազմական, եկեղեցական, քաղաքական, ժողովրդական և այլն, սվյալ կայսեր թագավորության ո՞ր տարում տեղի ունեցավ: Ես կարծում եմ, որ հենքի գործերն իմանալը ընթերցողների համար շատ օգտակար է և եթե մեկը մեր սույն երկասիրության մեջ որևէ պիտանի բան գտնի, թող պատշաճ գոհությունը աստծուն մատուցի, իսկ մեզ՝ տղետներին ու մեղապարտներին համար Տիրոջ ազոթի: Իսկ եթե որևէ պակասություն հայտնաբերի, թող այն վերագրի մեր տղիտության ու թշվառ մտքի անկատարության և ներողամիտ լինի՝ հանուն Տիրոջ, քանզի աստծուն սիրելի է այն, ինչ արվում է կարողության սահմաններում...⁸

[A. M. 6095]

Աշխարհի արարչագործության 6095 թ.

Քրիստոսի մարդկության 595 թ.

Հռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավորության 1-ին տարին⁹

Պարսից խոսքով արքայի 39-ամյա թագավորության 15-րդ տարին¹⁰

Կոստանդնուպոլսի կիրիակոս պատրիարքի 11-ամյա աթոռակալության 9-րդ տարին¹¹

Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա աթոռակալության 3-րդ տարին¹²

Ալեքսանդրիայի Եվդոզիոս պատրիարքի 27-ամյա աթոռակալության 24-րդ տարին¹³

Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթոռակալության 3-րդ տարին¹⁴

Այդ տարվա նոյեմբեր ամսին՝ ինդիկտոնի¹⁵ 6-րդ տարին Փոկաս բռնակալը տիրանալով գահին, կոտորեց, ինչպես վերևում ասվեց¹⁶,

Մավրիկիոսին¹⁷ իր հինգ արու զավակների հետ, հրամայեց նրանց գլուխները բազում օրեր ցուցադրվեն Տրիբունալիոնի Կամպոսում¹⁸: Քաղաքացիները զնում էին դիտելու այդ գլուխները, մինչև որ նեխեցին: Մահապատժի ենթարկվեցին նաև Մավրիկիոսի եղբայր Պետրոսը և բազում ուրիշներ: Իսկ Մավրիկիոսի որդի Թեոդոսիոսի մասին լուր տարածվեց, թե նրան հաջողվել է փախուստի դիմել ու փրկվել: Պարսից խոսքով արքան¹⁹ օժանդակում էր նման համբավի տարածմանը և տեսակ-տեսակ սուտ լուրեր տարածում, որ իբր Թեոդոսիոսը իր մոտ է գտնվում, որ ինքը հետամտում է, որ նա տիրանա հռոմայեցիների թագավորությանը²⁰: Խոսքովն ուզում էր ահա այդ խարդախ ճանապարհով տիրանալ հռոմայեցիների թագավորության²¹, մի բան, որ բազմիցս պարզ դարձավ, հատկապես այն բանից, որ նա վայրապար պատերազմներ էր սկսում և հռոմեական երկրում սարսափելի ավերածություններ գործում: Երբ Փոկասը դեսպան Բիլիոսին խոսքովի մոտ ուղարկեց, վերջինս ձերբակալեց նրան և բանտարկեց այն հաշվով, որ նա այլևս հռոմեական երկիր չվերադառնա²², իսկ Փոկասին էլ վերադարձան պատասխան գրեց: Փոկաս բռնակալը կայսրուհի Կոստանդինային²³ երեք դստերով հանդերձ «Լևոնի» կոչվող մասնավոր բնակարանում տնային կալանքի ենթարկեց:

Ալեքսանդրիա քաղաքում մի բարեպաշտ գեղագիր կես դիշերին հակուժից տուն վերադառնալիս տեսնում է արձանները պատվանդանի վրայից տասպալված: Այդ արձանները բարձրաձայն ասում էին, թե Մավրիկիոսը իր զավակներով հանդերձ սպանվել է, մի խոսքով այն ամենը, ինչ տեղի ունեցավ Բյուզանդիոնում: Առաջնության նա գնաց ու տեսածն ու լսածը պատմեց ավգուստալիոսին²⁴, որը պատվիրեց նրան այդ մասին ոչ ոքի չասել: Նա իր համար նշեց երևույթի ճշգրիտ օրը և սպասում էր տեսնել, թե ինչ է դա նշանակում: Ինն օր անց սուրհանդակ ժամանեց, բերելով Մավրիկիոսի մահապատժի մասին լուրը: Դրանից հետո ավգուստալիոսը ժողովրդին հրապարակեց դեերի կանխագուշակումը:

Հռոմայեցիների նախկին զորավար Նարսեսը բռնակալի դեմ ապստամբություն բարձրացրեց և զբաղեց Եղեսիան²⁵: Փոկասը զորավար Գերմանոսին զբաղեցրեց կարգադրեց պաշարել Եղեսիան: Նարսեսն իր հերթին պարսից խոսքով արքային նամակ է գրում՝ կոչ անելով զորահավաք կազմակերպի և հռոմայեցիներին պատերազմ հայտարարի: Փոկասն իր եղբայր Դոմենցիոլոսին մագիստրոսի²⁶ պատվաստիճանը շնորհեց, իսկ Պրիսկոսին նշանակեց էքսկուբիտորների կոմես²⁷:

[A. M. 6096]

[Հոռոմայեցիների Փոկաս կայսեր] 2-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կիրիակոս պատրիարքի] 10-րդ տարին

[Նրուսահեմի Իսահակ պատրիարքի] 4-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոզիոս պատրիարքի] 25-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարվա ղեկտեմբեր ամսին՝ ինդիկտիոնի 7-րդ տարին, Փոկասը թափարով մասնակցեց տոնակատարութիւններին և ժողովրդին բազում դրամ բաշխեց²⁸, Իսկ պարսից Խոսրով արքան մեծաթիվ զորք հավաքելով, հոռոմայեցիների դեմ ուղարկեց: Գերմանոսն այդ լուրն առնելով ցնցվեց, բայց ստիպված պատերազմի բռնվեց: Գերմանոսն այդ պատերազմում վերավորվեց, թիկնապահները նրան Կոստանդինե²⁹ հասցրին: Հոռոմայեցիները պարտութիւն կրեցին: Տասնմեկ օր անց Գերմանոսը վախճանվեց: Փոկասը իաքանին³⁰ վճարվող պախտն³¹ ավելացնելով և ենթադրելով, որ այդ ճանապարհով ապահովել է ավարների ցեղի շեղումը, զորքերը Եվրոպայից Ասիա տեղափոխեց, զրանց մի մասը պարսիկների դեմ ուղարկեց, իսկ մյուսը՝ իր մեծամեծ, ներքինի լեոնտիոսի զլխավորութիւնով նարսեսի՝ Եղեսիան պաշարելու: Խոսրովը զորքեր գումարելով, շարժվում է Դարայի վրա³²: Նարսեսը Եղեսիայից զուրս գալով, ապաստանում է Հիերապոլիտում³³: Խոսրովի ու հոռոմայեցիների բախումը տեղի ունեցավ Արքսամունում³⁴: Խոսրովը փղերով բերդ սարքելով, նախահարձակ է լինում և մեծ հաղթանակ տանում, նա բազում հոռոմայեցիների գերի է վերցնում ու սրի բաշխում, որից հետո զինված ուժերը թողնելով Չոնդոսիսին³⁵, վերադառնում է իր երկիրը: Փոկասը, իմանալով կատարվածի մասին, լեոնտիոսի վրա գազազեց և նրան երկաթե ձեռնակապանքների մեջ առած Բյուզանդիոն բերեց, նրա փոխարեն զորավար նշանակելով իր զարմիկ Դոմենցիոլոսին, որին կուրապաղատի պատվաստիճանը³⁶ շնորհեց:

[A. M. 6097]

[Հոռոմայեցիների Փոկաս կայսեր] 3-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կիրիակոս պատրիարքի] 11-րդ տարին

[Նրուսահեմի Իսահակ պատրիարքի] 5-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոզիոս պատրիարքի] 26-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին Խոսրովը Կարդարիզանին³⁷ ու Ռուսիազանին³⁸ ուղարկեց, ովքեր հոռոմայեցիների բազում քաղաքներ առան: Դոմենցիոլոսը նարսեսին պատվո խոսք տալով և բազում երդումներով վստահեցնելով, կայսեր մոտ ուղարկեց, որը, սակայն, խոսքի տերը չեղավ և նարսեսին ողջակեզ արեց³⁹: Դա հոռոմայեցիներին խիստ տխրեցրեց, քանզի պարսիկները նարսեսից շատ էին սարսափում, այն աստիճան, որ պարսից երեխաները նարսեսի անունը լսելով դող էին ընկնում, իսկ պարսիկներին՝ խիստ ուրախացրեց:

[A. M. 6098]

Կոստանդնուպոլսի պատրիարք Թովմաս⁴⁰: Աթոռակալեց երեք տարի:

[Հոռոմայեցիների Փոկաս կայսեր] 4-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի] 1-ին տարին

[Նրուսահեմի Իսահակ պատրիարքի] 6-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոզիոս պատրիարքի] 27-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին մի ներքինի սքոլաստիկոս⁴¹, պալատի փառավոր մարդկանցից մեկի՝ Թագին տիրանալու մտազրույթիւն ունեցող պատրիկ⁴² Գերմանոսի խորհրդով կես զիշերին առնելով տիրուհի Կոստանդինային և վերջինիս երեք դստերին, ապաստանում է Մեծ եկեղեցում⁴³: Քաղաքում մեծ տակնուվրայութիւն եղավ: Պրասինոսները⁴⁴ կոխիասում⁴⁵ հավաքվելով, Կոստանդինային էին վատաբանում: Գերմանոսը պրասինոսների դեմարքոսին⁴⁶ մեկ տաղանդ⁴⁷ ոսկի ուղարկեց՝ նրանց գործակցութիւնն ազերսելով, բայց զեմոսի ղեկավարութիւնը մերժեց: Բռնակալն իր մարդկանց եկեղեցի ուղարկեց՝ կանանց այնտեղից զուրս հանելու համար, բայց Կիրիակոս պատրիարքն ընդդիմացավ բռնակալին, թույլ չտվեց կանանց բռնութիւնով տաճարից զուրս հանել: Ստանալով Փոկասի երդումը, որ նրանց վատութիւն չի անի, կանայք սուրբ տաճարից զուրս բերվեցին և վանքում արգելափակվեցին: Փոկասը Գերմանոսին հոգևորական խուզելով⁴⁸, տնային կալանքի ենթարկեց: Այն ժամանակ Փիլիպպիկոսն էլ հոգևորական խուզվեց⁴⁹ և հաստատվեց Խրիստոպոլիտում⁵⁰, իր կառուցած վանքում: Իսկ պարսիկներն այդ տարին գրավեցին Դարան, ողջ Միջագետքն ու Ասորիքը և անթիվ անհամար գերիներ տարան: Կիրիակոս պատրիարքի վախճանվելու առթիվ նրա փոխարեն հոկտեմբերի 11-ին պատրիարք է

ձեռնադրվում նույն եկեղեցու սարկավագ ու սակելլարիոս⁵¹ Թով-
ման:

[A. M. 6099]

Աշխարհի արարչագոր- ծութեան 6099 թ.	Քրիստոսի մարդեղու- թեան 599 թ.	Հոռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավո- րութեան 5-րդ տարին
---------------------------------------	-----------------------------------	---

Պարսից Խոսրով արքայի 29-ամյա թագավորութեան 19-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թով- մաս պատրիարքի 3-ամյա աթոռակալութեան 2-րդ տարին	Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա ա- թոռակալութեան 7-րդ տա- րին
--	--	---

Ալեքսանդրիայի Թեոդո- րոս պատրիարքի 2-ամյա աթոռակալութեան 1-ին տարին ⁵²	Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթո- ռակալութեան 7-րդ տարին
--	---

Այդ տարին Փոկաս բռնակալը իր դուստր Դոմենցիային կնութեան
տվեց էքսկուրիտորների կոմես պատրիկ Պրիսկոսին: Հարսանյաց հան-
դեսը տեղի ունեցավ Մարինեի պալատում⁵³, որից հետո կայսեր հրա-
մանով ձիարշավական մրցումներ կազմակերպվեցին: Երկու կողմերի⁵⁴
դեմարքոսները Տեորակիոսում⁵⁵ կայսերական քավրատոնի⁵⁶ կողքին
կանգնեցրին Պրիսկոսի և Դոմենցիայի լավրատոնները: Կայսրը, տես-
նելով զա, զայրացավ, հրամայեց իր մոտ բերեն զեմարքոսներ Թեո-
փանեսին ու Պամփիլոսին, որոնց ստամայում⁵⁷ մերկ կանգնեցնելուց
հետո, հրամայեց ներքինացնել: Միաժամանակ նա նրանց մոտ իր
պրոտոկուրսորին⁵⁸ ուղարկեց իմանալու՝ ո՞ւմ թուլլովութեամբ այդ
բանն արեցին: Նրանք պատասխանեցին, թե այդ բանը ընդունված
կարգի համաձայն գրամմիստներն⁵⁹ արեցին: Դեմոսն ու ամբոխները
գոչում էին. «Շատ տարիներ ապրի մարդասեր տերը»: Երբ գրամմիստ-
ներին հարցրին, ինչո՞ւ այդպես վարվեցին, նրանք պատասխանեցին.
«Բոլորը նրանց կայսեր զավակներ հորջորջեցին, մենք էլ ինքնաբերա-
բար այդպես վարվեցինք»: Պրիսկոսը կայսեր զայրույթից վախեցել էր:
Փոկասն ընդառաջ զնաց ամբոխների կոչին՝ նրանց նկատմամբ մար-
դասեր լինել: Այդ օրվանից Պրիսկոսը Փոկասի դեմ ոխ կապեց և նրա
հանդեպ անկեղծ շէր: Պետրոնիա անունով մի կին լինում է Կոստանդի-
նա թագուհու մոտ, որպեսզի վերջինիս ու Գերմանոսի միջև կապի դեր
խաղա: Մավրիկիոսի որդի Թեոդոսիոսի կենդանի լինելու համբավը

զնալով ծավալվեց և այդ առթիվ Կոստանդինյան և Գերմանոսը հուսա-
դրվեցին: Բայց ամբարիշտ Պետրոնիան այդ ամենի մասին բռնակա-
լին տեղյակ պահեց, որը Կոստանդինային հանձնեց էպարքոս⁶⁰ Թեո-
պոմպոսին խոշտանգելու: Խոշտանգումների տակ նա խոստովանեց,
որ իրենց ասածին տեղյակ էր Թոմանոս պատրիկը: Վերջինս ձերբա-
կալվեց և քննութեան ժամանակ խոստովանեց, որ բռնակալի դեմ
եյուսթիված դավադրութեան այլ գործակիցներ էլ ունի: Ձերբակալվեց
նաև Արևելքի էպարքոս⁶¹ Թեոդորոսը, որին բռնակալը արջառաջիլներ
հարվածների տակ սպանեց, էլպիդիոսի ձեռքերն ու ոտքերը կտրեց,
իսկ մարմինը կրակը գցեց⁶², Թոմանոսին զլխատեց, Կոստանդինային
երեք դատրերով հանդերձ սրի քաշեց Եվտրոպիոսի մոլոսում⁶³, այնտեղ,
որտեղ մահապատժի էր ենթարկվել Մավրիկիոսը, Գերմանոսին և
վերջինիս դստեր Պրոտե կղզում⁶⁴ սրակոտոր արեց, նմանապես և Հով-
հաննեսին, Յիտասին⁶⁵, Պատրիկիոսին, սուրբդիոբայի⁶⁶ աստիճանն
ունեցող Թեոդոսիոսին, Անդրեաս Սկոմբրոսին և Հորմիդդի թղթապահ⁶⁷
Դավթին:

Նույն տարին պարսիկները անցնելով Եփրատը, գերեվարեցին ողջ
Ասորիքը, Պաղեստինն ու Փյունիկեն, հոռոմայեցիներից հսկայական
ավար ձեռք բերեցին:

[A. M. 6100]

Աշխարհի արարչագոր- ծութեան 6100 թ.	Քրիստոսի մարդեղու- թեան 600 թ.	Հոռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավո- րութեան 6-րդ տարին
---------------------------------------	-----------------------------------	---

Պարսից Խոսրով արքա- յի 39-ամյա թագավորու- թեան 20-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թով- մաս պատրիարքի 3-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին	Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա աթո- ռակալութեան 8-րդ տարին
--	--	--

Ալեքսանդրիայի Թեոդո- րոս պատրիարքի 2-ամյա աթոռակալութեան 2-րդ տարին	Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթո- ռակալութեան 8-րդ տարին
--	---

Այդ տարին Պրիսկոսը, չկարողանալով տանել Փոկասի շարագոր-
ծութունները⁶⁸ և նրա կողմից այդբան անմեղ մարդկանց ոչնչացումը,
Աֆրիկայի զորավար Հերակլիոս պատրիկին նամակ գրեց, որպեսզի
նա իր որդի Հերակլիոսին և [հայր Հերակլիոսի] փոխզորավար Գրի-
գորա⁶⁹ պատրիկի որդի Նիկիտասին ուղարկի ընդդեմ Փոկաս բռնա-

կալի, բանդի տեղեկացել էր, որ Աֆրիկայում Փոկասի դեմ ապստամբութուն է նյութվում, որի առթիվ Աֆրիկայի նավերի առաքումը կանգնեցրել էին⁷⁰: Փոկասը Մավրիկիոսի ողջ գերդաստանը, Թրակիայի զորավար Կոմենտիոլոսին և բազում այլ մարդկանց մահապատժի ենթարկեց: Այդ ընթացքում մահ տարածամ էլ եղավ և ամեն տեսակի միջատների խուժում: Պարսիկները Կարդարիզանի գլխավորությամբ արշավանքի գուրս եկան և գրավեցին Հայաստանն⁷¹ ու Կապադովկիան, մարտ ավեցին ու փախուստի մատնեցին հոռմայեցիների զորքերը, գրավեցին Գալատիան ու Պափլագոնիան, հասան Քաղկեդոն, չինացելով և ոչ մի տարիք: Ահա այնպես եղավ, որ մայրաքաղաքից դուրս հոռմայեցիներին պարսիկներն էին տանջում, իսկ մայրաքաղաքում նրանցից ավելի դաժան էր վարվում Փոկասը՝ սպանելով ու շրջվայելով:

[A .M. 6101]

Կոստանդնուպոլսի Սերգիոս⁷² պատրիարք: Աթոռակալեց 29 տարի: Ծրուսաղեմի Զարթրիա⁷³ պատրիարք: Աթոռակալեց 22 տարի: Ալեքսանդրիայի Հովհաննես⁷⁴ պատրիարք: Աթոռակալեց 10 տարի:

[Ալեքսանդրիայի Սերգիոսի] 6101 թ.	[Քրիստոսի մարդկություն] 601 թ.	[Հոռմայեցիների Փոկաս կայսեր] 7-րդ տարին
[Պարսից Խոսրով արքայի] 21-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 1-ին տարին	[Ծրուսաղեմի Զարթրիա պատրիարքի] 1-ին տարին
[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 1-ին տարին	[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 9-րդ տարին	

Այդ տարին Անտիոքի հրեաները քրիստոնյաների դեմ խռովություն բարձրացրին, Անտիոքի մեծ պատրիարք Անաստասիոսին սրախողվող արեցին և նրա սեռական օրգանները կտրելով, բերանը զրեցին, որից հետո մարմինը քարշ տվեցին Մեսս պողոտայով: Նրանք սպանեցին նաև բազում մեծատունների, որոնց դիակները կրակի տվեցին⁷⁵: Փոկասը Բոնոսոսին Արևելքի կոմես նշանակելով, իսկ Կոստանասին՝ ստրատելատ⁷⁶, [հրեաների] դեմ ուղարկեց, բայց նրանք չէին կարողանում ճնշել նրանց խռովությունը: Այնուհետև զորքեր հավաքելով, հարձակվեցին հրեաների վրա, նրանցից շատերին կոտորեցին, խեղեցին ու քաղաքից արտաքսեցին: Փոկասը ձիարշավական մրցումներ կազմա-

կերպեց, որտեղ պրասինոսները նրա գլխին լուսանքներ թափեցին, թե՛ «Գարձյալ հարբեցիր, դարձյալ հիմարացար»: Փոկասի կարգադրությամբ քաղաքի էպարքոս Կոզմասը շատերի ձեռքն ու ոտքը կտրեց, դրանք Սֆինդոնեում⁷⁷ կախեց, ուրիշներին գլխատեց, իսկ ոմանց էլ պարկերի մեջ գցելով ծովը նետեց ու ջրահեղձ արեց: Գրա վրա պրասինոսները ժողովելով, կրակի տվեցին Պրետորիոնը⁷⁸, Սեկրետոնը⁷⁹, սկրինիաներն⁸⁰ ու բանտերը: Բանտարկյալները փախուստի դիմեցին: Փոկասը զազազած պրասինոսներին զրկեց քաղաքական գործունեություն վարելու իրավունքից: Իսկ Աֆրիկայի զորավար Հերակլիոսը⁸¹ սենատի պահանջով իր որդի Հերակլիոսին ռազմանավերով Փոկաս բռնակալի դեմ ուղարկեց: Այդպես վարվեց և նրա փոխզորավար Գրիգորասը, որն իր որդի Նիկետասին ցամաքով ուղարկեց: Պայմանն այն էր, որ ով առաջինը հաղթի բռնակալին, ինքն էլ թագավորի⁸²:

Այդ տարի սարսափելի ձմեռ արեց, այն աստիճան, որ ծովը սառցակալեց և բազում ձկներ ոչնչացան: Այն ժամանակ Փոկասը հրամայեց որսի ժամանակ նետահար անեն Մակրոբիոս սկրիբոնին⁸³, նրա մարմինը կախեն Հեբլոմոնում⁸⁴ գտնվող Թեոդոսիանոսների աշտարակում⁸⁵ այն նիդակից, որով մարզվում են տիրոնները⁸⁶, որպես իր դեմ նյութված դավադրության կողմնակից: Էպարքոս⁸⁷ Թեոդորոս Կապադովկացին, զինանոցի պետ էլպիդիոսը և ուրիշներ որոշել էին ձիարշավական մրցումների ժամանակ սպանել Փոկասին: Պրետորյան էպարքոս Թեոդորոսը նրանց ճաշկերույթի էր հրավիրել և աստիճանաբար հայտնել իր նպատակը: Դիպվածով ճաշկերույթին ներկա էր նաև լարդիտիոնների կոմես⁸⁸ Անաստասիոսը, որի ընթացքում Թեոդորոսը սեղանակիցներին տեղյակ պահեց դավադրության մանրամասնություններին: Անաստասիոսը այնտեղ գտնվելու համար զղջաց, բայց շարտահայտվեց, լուռ մնաց: Էլպիդիոսը պնդում էր իր ասածի վրա. «Ուզո՞ւմ եք ձիարշավական մրցումների ժամանակ իր գահին բազմած Փոկասին բռնեմ, նրա աչքերը հանեմ ու սպանեմ»: Նա [դավակիցներին] խոստանում էր զենքով ապահովել: Սակայն Անաստասիոսը դավադրության նախապատրաստության մասին Փոկասին տեղյակ պահեց, որը հրամայեց քննության ենթարկել էպարքոսին, էլպիդիոսին և դավադրությանը տեղյակ բոլոր իշխանավորներին: Նրանք խոստովանեցին նյութված դավադրության մասին, այդ թվում և այն, որ ուղում էին Թեոդորոսին կայսր հռչակել: Փոկասը հրամայեց Թեոդորոսին, էլպիդիոսին, Անաստասիոսին և բոլոր նրանց, ովքեր տեղյակ էին նրա ծրագրած դավադրությանը, գլխատել:

[A. M. 6102]

Աշխարհի արարչագործութեան 6102 թ.	Քրիստոսի թվան 602 թ.	մարդեղութեան
----------------------------------	----------------------	--------------

Հոռմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորութեան 1-ին տարին ⁸⁹	Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորութեան 22-րդ տարին	Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալութեան 2-րդ տարին
---	--	---

Երուսաղեմի պատրիարքի 22-ամյա աթոռակալութեան 2-րդ տարին	Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի 10-ամյա աթոռակալութեան 2-րդ տարին	
--	---	--

Այդ տարին, հոկտեմբեր ամսի 4-ին, երկուշաբթի օրը, ինդիկտիոնի 14-րդ տարին, Աֆրիկայից տեղ հասավ Հերակլիոսը՝ զրահապատ կամրջակով⁹⁰ նավերով, որոնք իրենց կայմերին ունեին փոքր աշտարակներ⁹¹ և աստվածամոր պատկերներ, (ինչպես այդ մասին գրում է Գեորգ Պիսիդասիս)⁹², ինչպես և Աֆրիկայից ու Մավրիտանիայից⁹³ հավաքագրված բազում զորք, նմանապես և պատրիկ Գրիգորասի որդի Նիկեատասը՝ Ալեքսանդրիայում և Պենտապոլսում⁹⁴ հավաքագրված մեծաթիվ հետևակազորով: Հերակլիոսը ամեն ինչի մասին տեղյակ էր պահել Հռոգաս Աֆրոսի դուստր Եվդոկիային, որն այն ժամանակ Եպիփանիայի՝ Հերակլիոսի մոր հետ Կոստանդնուպոլսում էր գտնվում: Փոկասը, լսելով, որ Հերակլիոսի մայրը քաղաքում է գտնվում, ինչպես և Հերակլիոսի նշանած Եվդոկիան, ձեռքակալեց նրանց և արգելափակեց նոր ապաշխարության կոչվող տերունական վանքում⁹⁵: Հերակլիոսը, հասնելով Աբիդոս⁹⁶, հանդիպեց Աբիդոսի կոմես Թեոդորոսին և նրան հարցուփոխեց անելով տեղեկացավ Կոստանդնուպոլսում տիրող կացության մասին: Փոկասը իր եղբայր մագիստրոս Դոմենցիոսին Երկար պարիսպները հսկելու ուղարկեց: Մագիստրոսը, իմանալով Հերակլիոսի Աբիդոս հասնելու մասին, պարիսպների պահպանության գործը լքելով, մտավ Կոստանդնուպոլիս: Հերակլիոսը Աբիդոսում ընդունեց Փոկասի աջուրած բոլոր իշխաններին և նրանց հետ բարձրացավ Հերակլիա⁹⁷: Իսկ Կիզիկոսի մետրոպոլիտ Ստեփանոսը Արտակի⁹⁸ սուրբ Աստվածածնի եկեղեցուց մի թագ վերցնելով, տարավ Հերակլիոսին, ով Կոստանդնուպոլիս հասնելով, Սոֆիայի⁹⁹ նավահանգստում խարիսխ գցեց: Հերակլիոսը Քրիստոսի օգնությամբ մարտում հաղթում է Փոկաս բռնակալին, որին դեմոսները ձեռքակալելով, սպանում են՝ Բո-

յինում¹⁰⁰ հրակեզ անում: Հերակլիոսը, մտնելով արքունիք, պալատի սուրբ Ստեփանոսի աղոթարանում թագադրվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի¹⁰¹: Նույն օրը ավգուստա¹⁰² թագադրվեց և [Հերակլիոսի] նշանած Եվդոկիան: Սերգիոս պատրիարքի կողմից նրանք երկուսն էլ ստացան նաև ամուսնական պսակներ, որով միևնույն օրը Հերակլիոսը ինքնակալ դարձավ և փեսայացավ: Մայիս ամսին պարսիկներն արշավեցին Ասորիքի վրա, զրավեցին Ապամիան և Եղեսիան¹⁰³ ու հասան մինչև Անտիոք¹⁰⁴: Նրանց ընդդիմակալած հոռմայեցիները պարտություն կրեցին, բովանդակ զորքը կորավ, շատ քչերին հաջողվեց փրկվել: Նույն ինդիկտիոնի հուլիս ամսի 7-ին Հերակլիոսը Եվդոկիայից զուտոր ունեցավ՝ Եպիփանիային, որն օգոստոս ամսի 15-ին Վլախեոնայում¹⁰⁵ մկրտվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի:

[A. M. 6103]

Աշխարհի արարչագործութեան 6103 թ.	Քրիստոսի թվան 603 թ.	մարդեղութեան
----------------------------------	----------------------	--------------

Հոռմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորութեան 2-րդ տարին	Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորութեան 23-րդ տարին	Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին
---	--	---

Երուսաղեմի պատրիարքի 22-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին	Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի 10-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին	
--	---	--

Այդ տարին պարսիկները զրավեցին Կապադովկիայի Կեսարիան, որտեղ բազում բյուր բնակիչների գերի վերցրին: Հերակլիոս կայսրը հոռմայեցիների պետության գործերը դտավ անմխիթար վիճակում: Եվրոպան ավարներն էին ամայացրել, բովանդակ Ասիան ավերակ էին դարձրել պարսիկները, քաղաքների բնակչությունը գերի վերցրել, հոռմայեցիների զորքերը պատերազմներում ոչնչացրել: Տեսնելով դա, կայսրը շփոթեց ինչ անի: Նա հետաքրքրվեց, բանակում կա՞ն արդյոք նրանցից, ովքեր Փոկասի հետ արշավել էին Մավրիկիոսի դեմ՝ վերջինիս թագավորության օրոք, և բոլոր բանակաթեմերում¹⁰⁶ միայն երկու հոգի գտնվեց:

Նույն տարվա մայիսի 3-ին, ինդիկտիոնի 15-րդ տարին, կայսրը Եվդոկիայից որդի ունեցավ, Հերակլիոս Փոքրին, որին կոչում էին նաև

Նոր Կոստանդին: Օգոստոս ամսի 14-ին, նույն ինդիկտիոնի 15-րդ տարին, ավգուստա եվդոկիան վախճանվեց¹⁰⁷:

[A. M. 6106]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 5-րդ տարին քայի] 26-րդ տարին գիոս պատրիարքի] 6-րդ
տարին

[A. M. 6104]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով արքա- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 3-րդ տարին լի] 24-րդ տարին գիոս պատրիարքի] 4-րդ
տարին

[Երուսաղեմի Չաքարիա [Ալեքսանդրիայի Հով-
պատրիարքի] 6-րդ տարին հաննես պատրիարքի] 6-րդ
տարին

[Երուսաղեմի Չաքարիա [Ալեքսանդրիայի Հով-
պատրիարքի] 4-րդ տարին հաննես պատրիարքի] 4-րդ
տարին

Այդ տարվա հոկտեմբեր ամսի 4-ին, ինդիկտիոնի առաջին տարին, Հերակլիոսի դուստր Եպիփանիան պալատի սուրբ Ստեփանոսի աղոթարանում ավգուստա թագադրվեց՝ ձեռամբ Սերգիոս պատրիարքի: Իսկ ինդիկտիոնի նույն առաջին տարվա դեկտեմբերի 25-ին Հերակլիոսի որդի Հերակլիոսը, որ և Կոստանդին Կրտսեր¹⁰⁸, թագադրվեց¹⁰⁹ ձեռամբ Սերգիոս պատրիարքի:

Նույն տարին սարակիսոսները Ասորիքի վրա արշավեցին և բազում վայրեր ավարտելով վերադարձան:

Այդ տարին պարսիկները պատերազմով գրավեցին Հորդանանը, Պաղեստինը և սուրբ քաղաքը¹¹³, որի բնակիչներից շատերին, ինչպես ասում են ոմանք, ինն բյուր հոգու, հրեաների ձեռքով կոտորեցին: Հրեաները յուրաքանչյուրն իր կարողության համեմատ քրիստոնյաներ էին գնում և նրանց սպանում: [Իսկ պարսիկները] իրենց հերթին Երուսաղեմի Չաքարիա պատրիարքին, [Քրիստոսի] պատվական ու կենարար խաչափայտը, բազում գերիների տարան Պարսկաստան¹¹⁴:

Նույն տարին կայսրը Մարտինայից որդի ունեցավ՝ մյուս Կոստանդին, որը վլախեռնայի [պալատում] մկրտվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի:

[A. M. 6105]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 4-րդ տարին քայի] 25-րդ տարին գիոս պատրիարքի] 5-րդ
տարին

[A. M. 6107]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 6-րդ տարին քայի] 27-րդ տարին գիոս պատրիարքի] 7-րդ
տարին

[Երուսաղեմի Չաքարիա [Ալեքսանդրիայի Հով-
պատրիարքի] 5-րդ տարին հաննես պատրիարքի] 5-րդ
տարին

[Երուսաղեմի Չաքարիա [Ալեքսանդրիայի Հով-
պատրիարքի] 7-րդ տարին հաննես պատրիարքի] 7-րդ
տարին

Այդ տարին պարսիկները Դամասկոսն առան և բազում ժողովուրդ գերեվարեցին: Հերակլիոս կայսրը Խոսրովին դեսպաններ ուղարկեց, կոչ արեց դադարեցնել անողորմ արյունահեղությունը, որոշել հարկերի չափը և պահա¹¹⁰ ստանալ: Բայց Խոսրովը դեսպաններին ձեռնունայն էտ ուղարկեց, նրանց հետ բանակցություններ չվարեց, քանզի հույս ուներ, որ իրեն կհաջողվի ամբողջությամբ նվաճել հռոմայեցիների տերությունը: Նույն տարին Հերակլիոսը Մարտինայի¹¹¹ հետ ամուսնացավ և նրան ավգուստա հռչակեց: Թագադրությունը տեղի ունեցավ Ավգուստեանում¹¹², ձեռամբ Սերգիոս պատրիարքի:

Այդ տարին պարսիկներն առան բովանդակ Եգիպտոսը, Ալեքսանդրիան, Լիբիան՝ մինչև Եթովպիա և բազում գերիներով, ավարով ու զրամով վերադարձան: Նրանց շահաջողվեց գրավել Փաղկեդոնը¹¹⁵ և պաշարման համար զորամաս թողնելով, հեռացան:

[A. M. 6108]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 7-րդ տարին քայի] 28-րդ տարին գիոս պատրիարքի] 8-րդ
տարին

[Երուսաղեմի Չաքարիա [Ալեքսանդրիայի Հով-
պատրիարքի] 8-րդ տարին հաննես պատրիարքի] 8-րդ
տարին

Այդ տարին պարսիկները հարձակվեցին Քաղկեդոնի վրա և գրոհով առան այն¹¹⁶, Նույն տարվա հունվարի 1-ին, ինդիկտիոնի 5-րդ տարին, Հերակլիոսի որդի Կոստանդին Կրտսերը, որ և Հերակլիոսի որդի Հերակլիոս, կոնսուլ¹¹⁷ հռչակվեց: [Կայսրը] նրա եղբոր՝ Կոստանդին Փոքրին, որ Հերակլիոսից ու Մարտինայից էր ծնվել, կեսար¹¹⁸ հռչակեց:

[A. M. 6109]

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 8-րդ տարին [Պարսից Խոսրով արքայի] 29-րդ տարին [Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 9-րդ տարին

[Նրուսահեմի Զաքարիա պատրիարքի] 9-րդ տարին [Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին Հերակլիոսը Խոսրովին՝ Պարսկաստան դարձյալ դեսպաններ ուղարկեց՝ խաղաղության առաջարկելով: Խոսրովը նրանց կրկին ետ ուղարկեց, ասելով. «Ես ձեզ չեմ խնայելու, քանի չեք ուրացել խաչյալին¹¹⁹, որին աստված եք համարում, և չեք երկրպագել արեգակին»:

[A. M. 6110]

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 9-րդ տարին [Պարսից Խոսրով արքայի] 30-րդ տարին [Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 10-րդ տարին

[Նրուսահեմի Զաքարիա պատրիարքի] 10-րդ տարին [Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարին ավարնեբը Քրակիայի վրա արշավեցին: Հերակլիոսը նրանց մոտ դեսպաններ ուղարկեց՝ խաղաղություն առաջարկելով: Խաբանը¹²⁰ հանձն առավ և կայսրն իր բոլոր թիկնապահներով, բազում և թանկարժեք նվերներով Նրկար պարսից դուրս եկավ խաբանին ընդունելու, քանզի նրանից հաշտություն կնքելու երաշխիքներ էր ստացել: Բայց այդ բարբարոսը, դժելով խոստումն ու երդումները, հանկարծակի շարամտորեն կայսեր վրա ուղղվեց¹²¹: Կայսրը, անակնկալից ապշած, փախուստի դիմելով, քաղաք վերադարձավ: Բարբարոսը, ձեռք գցելով կայսերական գույքն ու թիկնապահներին, բոլոր նրանց, ում կարողացավ բռնել, վերադարձավ, Քրակիայի բազում շրջաններ

ավարի առնելով, քանզի նրանց բնակիչները խաղաղության հույսով օրոքված, անակնկալի հանդիպեցին:

[A. M. 6111]

Աշխարհի արարչագործության 6111 թ. Քրիստոսի մարդեղության 611 թ.

Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 10-րդ տարին Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 31-րդ տարին Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Նրուսահեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 11-րդ տարին Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 1-ին տարին¹²²

4571

Այդ տարին Հերակլիոսը ավարների խաբանին դեսպաններ ուղարկեց, պարսավեց նրա անօրեն քայլը և խաղաղություն կնքելու կոչ արեց, քանզի նպատակ ունենալով արշավել Պարսկաստանի վրա, ուզում էր խաբանի հետ հաշտություն կնքել: Խաբանը կայսեր սիրալիրությունից ազդված հայտնեց, թե զղջացել է և խոստացավ խաղաղություն հաստատել: Գեսպանները հաշտություն կնքելով, խաղաղությամբ վերադարձան:

Նույն տարին պարսիկները գրոհով առան Գալատիայի Անկյուրան:

[A. M. 6112]

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 11-րդ տարին [Պարսից Խոսրով արքայի] 32-րդ տարին [Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 12-րդ տարին

[Նրուսահեմի Զաքարիա պատրիարքի] 12-րդ տարին [Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարին Խոսրովը ծանրացրեց իր լուծը հպատակների վրա՝ արյունահեղությամբ ու [ծանր] հարկապահանջությամբ: Հաղթանակից գլխապտույտ ստացած, նա չէր կարողանում հանդիստ մնալ: Այն ժամանակ Հերակլիոսը աստժո հանդեպ նախաձախնդրությամբ լցված և (ինչպես իրեն էր թվում), ավարների հետ խաղաղություն հաստա-



տած, Եվրոպայի զորքերը Ասիա տեղափոխեց, վճռելով աստծո օգնութեամբ Պարսկաստանի վրա արշավել:

[A. M. 6113]

[Հռոմայեցիների Հերակ- [Պարսից Խոսրով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
լիոս կայսեր] 12-րդ տարին քայի] 33-րդ տարին գիոս պատրիարքի] 13-րդ
տարին

[Երուսաղեմի Զաքարիա [Ալեքսանդրիայի Գեորգ
պատրիարքի] 13-րդ տարին պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարվա ապրիլ ամսի 4-ին, ինդիկտոնի 10-րդ տարին, Հերակլիոս կայսրը Զատիկի տոնը¹²³ տոնելով, երկուշաբթի երեկոյան անհայադ Պարսկաստանի վրա շարժվեց¹²⁴: Միջոցների պակաս զգալով, նա պարտքով վերցրեց եկեղեցիների դրամները, նաև Մեծ եկեղեցու բազմականթեղ ջահերը և պաշտամունքային այլ սպասներ, որոնցից ոսկե և արծաթե բազում դրամ կտրեց: Իր որդուն նա թողեց Կոստանդնուպոլսում՝ Սերգիոս պատրիարքի խնամքի տակ, կարգադրեց, որ պեսզի նա, պատրիարքը, խոհեմ, շատ խելացի ու փորձառու մի մարդու՝ Բոնոսոս պատրիկի հետ կառավարեն գործերը: Նա դիմեց նաև ավարների խաբանին, խնդրելով սատար կանգնի հռոմայեցիներին՝ ըստ կնքված բարեկամական դաշնագրի¹²⁵, որին և իր որդու խնամակալ նշանակեց: Մայրաքաղաքից դուրս գալով և նավելով, նա հասավ Պլուլե¹²⁶ կոշվող տեղը, այնտեղից՝ զորքերի համախմբման վայրերը¹²⁷, զուժարեց տեղական զորքերը և նրանց կազմը համալրեց նոր զորքերով¹²⁸, ապա սկսեց նրանց ռազմավարություն սովորեցնել: զորքը երկուսի բաժանելով, նա նրանց միմյանց դեմ անարյուն մարտեր էր մղել տալիս, սովորեցնում պատերազմական ուռաններ դռել, պատերազմական երգեր երգել, որպեսզի երբ իսկական մարտի բռնվեն, չշփոթվեն, այլ, կարծես խաղի, արիաբար դիմեն թշնամու վրա: Կայսրը վերցնելով Քրիստոսի անձեռակերտ պատկերը¹²⁹, պատկերը արարչին ամենայն բանին աստծո, ով առանց նկարելու կենդանագրեց, ով անսերմ ծնունդ առավ, և այդ աստվածագիր պատկերին ապավինելով պայքարի դիմեց, զինվորներին հավաստիացնելով, որ մինչև մահ նրանց հետ է մարտնչելու, վերաբերվելու է նրանց ինչպես իր հարազատ զավակներին: Նա կամենում էր տիրել ոչ թե վախ սփռելով, այլ սեր: Զինվորներին գտնելով շատ անհոգ ու անարի, անկարգ ու անկազմակերպ, երկրի

բազում շրջաններում ցրված, սեղմ ժամկետում բոլորին մի տեղ կենտրոնացրեց: Բոլորը միահամուռ կերպով կայսեր հզորությունն ու բաշտությունը փառաբանեցին: Իսկ նա սրտապնդում էր նրանց հետևյալ խոսքերով. «Ո՛վ եղբայրներ ու որդիներ, տեսնում եք ինչպես ոսթաներն աստծո մեր երկիրը ոտնատակ արեցին, քաղաքները՝ անապատ, կրակի տվեցին եկեղեցիները: Անարյուն զոհաբերության սեղանները¹³⁰ ոճրագործների հեղած արյամբ ողողվեցին, անառականոցի վերածվեցին մարմնական կրքերին օտար եկեղեցիները»: Ապա դարձյալ երկու մասի բաժանելով զորքը, նրանց զորավարություններ անել տվեց: Շարքի էին կանգնած փողահարներ ու վահանակիրների փաղանգներ, զրահակիր մարտիկներ: Երբ տազմաները լիակատար պատրաստության մեջ էին, կայսրը հրամայեց հարձակվեն միմյանց վրա: Տեղի ունեցան ուժեղ բախումներ ու ընդհարումներ, կարծես իսկական պատերազմ լիներ: Տեսնելու բան էր սահմակեցուցիչ, բայց անվտանգ այդ տեսարանը, անարյուն ջարդը, այն, թե ինչ ձեռքով նախքան իսկական ճակատամարտը յուրաքանչյուրը այդ անվտանգ կոտորածից փորձ ձեռք բերեց, ապազայում ավելի վստահ լինելու համար: Կայսրն ահա այդպես զինելով բոլորին, կոշ արեց անօրինություններ չգործել, սատար կանգնել արդարություն: Հասնելով Հայաստանի շրջանները, նա հրամայեց ընտիր զինվորների շտապեն առաջ. պարսիկներին դաշնակից սարակինոսների¹³¹ բազում ձիավորներ որոշել էին գաղտագողի կայսեր վրա հարձակվել, բայց վերջինիս հրամանով առաջ գնացած զինվորները հանդիպելով նրանց, գերի վերցրին նրանց զորավարին և շղթայակապ Հերակլիոսի մոտ բերեցին, իսկ մնացածներին հետապրելով, շատերին կոտորեցին: Երբ ձմեռը վրա հասավ, կայսրը շրջվեց դեպի Պոնտոսի կլիման¹³² և բարբարոսները, կարծելով, որ նա մտադիր է ձմեռել այնտեղ, որոշեցին նրան օղակել: Բայց կայսրը պարսիկներից ծածուկ թևանցելով ներխուժեց Պարսկաստան¹³³: Լսելով նրա անակնկալ ներխուժման մասին, բարբարոսները մտածմունքի մեջ ընկան: Պարսից զորավար Շահր վարազը¹³⁴ իր զորքի գլուխն անցած եկավ Կիլիկիա, նպատակ ունենալով Ռոմանիա ոտք գնելով, ստիպել կայսեր վերադառնալ, բայց երկյուղ կրելով, որ կայսրը կարող է հանկարծ Հայաստանի վրայով Պարսկաստան ներխուժել և այն տակնուվրա անել, չգիտեր ինչ նախաձեռնի: Նա ստիպված հետևեց հռոմեական բանակին, մտադիր լինելով մի անլուսին գիշեր հարձակվել ու գողանալ պատերազմը¹³⁵, բայց բանի որ լիալուսին էր, հրաժարվեց ծրագրից և իր համար սուրբ համարվող լուսնին հայհոյեց: Դրա վրա լուսինը այդ գիշեր խա-

վարեց¹³⁶, սակայն Շահր Վարազը վախեցավ կայսեր վրա հարձակվել, նա այժմամի պես լեռ բարձրացավ և բարձրից դիտեց հոռոմայեցիների ճարտար և իմաստուն ռազմարվեստը: Կայսրը համոզվելով նրա վեհե-րոտություն, բանակեց հանդատյան համար պատշաճ տեղում և նրան գրգռում էր մարտի: Պարսիկները ծածուկ կերպով հաճախ լեռից ցած էին իջնում և մասնակի ընդհարվում, բայց ամեն տեսակետից հոռոմայեցիներն էին գերազանցում: Զորքը տեսնելով, թե ինչպես կայսրն առաջինն էր նետվում թշնամու դեմ և քաջաբար մարտնչում, զնալով արիություն էր լցվում: Մի փոքր առաջ դասալիք եղած մի պարսիկ ծառայության էր մտել կայսեր բանակում: Ահա նա փախել էր պարսիկների մոտ, հավատացած լինելով, որ նրանք կոչնչացնեն հոռոմայեցիների բանակը: Բայց տեսնելով նրանց վեհերոտությունը, տասը օր անց կայսեր մոտ եկավ և ճշգրտորեն պատմեց բարբարոսների թուլամորթության մասին: Իսկ Շահր Վարազը այլևս չուզեցնալով լեռան վրա ժամավաճառ լինել, ստիպված մարտի դիմեց¹³⁷: Նա իր զորքը կրեք մասի բաժանելով, վաղ առավոտյան, ղեռ արևը շժագած, հանկարծակի իջավ ցած՝ մարտի պատրաստ: Կայսրը այդ բանին նախօրոք տեղյակ, իր զորքը նույնպես երեք մասի բաժանած, առաջնորդեց մարտի: Արևը ծագեց կայսեր թիկունքում, նրա ճառագայթները խանգարում էին պարսիկների տեսողությանը, ճառագայթներ, որոնց պարսիկները երկրպագում են որպես աստված¹³⁸: Կայսրը ձևացրեց, որ զորքով փախուստի է դիմում: Պարսիկները խախտելով իրենց փաղանգները, ընկան հոռոմայեցիների նտեից, կարծելով, որ հալածում են նրանց, բայց հոռոմայեցիները շրջվելով և քաջաբար մարտնչելով, նրանց փախուստի մատնեցին, շատերին կոտորեցին, մինչև լեռը հալածական արեցին, խորխորատներն ու դժվարանցանելի տեղեր գցեցին ու բնաջնջեցին: Պարսիկները խորխորատներում այժմամների պես էին ցատկոտում: Հոռոմայեցիները բազմաթիվ գերիներ ձեռք բերեցին, զրավեցին պարսիկների ճամբարը ողջ ունեցվածքով հանդերձ, ապա բարձրացնելով ձեռքերը, աստծուն գոհություն հայտնեցին, ջանասիրությամբ աղոթեցին լավ ռազմավարած կայսեր համար: Նրանք, ովքեր անցյալում չէին համարձակվում պարսիկների բարձրացրած փողուն անդամ նայել, այժմ ավար էին վերցնում կատարյալ հանդերձանքով նրանց վրանները: Ո՞վ կսպասեր, որ պարսիկ անշափ աննկուն ժողովուրդը հոռոմայեցիներին թիկունք ցույց կտա: Զորքը զորավարի¹³⁹ գլխավորությամբ Հայաստանում թողնելով ձմեռելու, կայսրը վերադարձավ Բյուզանդիոն¹⁴⁰:

[A. M. 6114]

Աշխարհի արարչագործության 6114 թ.	Քրիստոսի մարդկության 614 թ.	Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 13-րդ տարին	Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 35-րդ տարին	Կոստանդնուպոլսի Մերգիոս պատրիարքի 29-ամյա անողակալության 14-րդ տարին
Երուսաղեմի պատրիարքի 22-ամյա անողակալության 14-րդ տարին	Ջաբարիա Գեորգ պատրիարքի 14-ամյա անողակալության 4-րդ տարին			

Այդ տարվա մարտ ամսի 15-ին, ինդիկտիոնի 11-րդ տարին, Հերակլիոս կայսրը, մայրաքաղաքից դուրս գալով, փութանալի Հայաստան հասավ, իսկ պարսից Խոսրով արքան Շահր Վարազին իր զորքով ուղարկեց հոռոմայեցիների երկիրը ներխուժելու: Հերակլիոսը Խոսրովին հաշտություն կնքելու կոչով նամակ գրեց, հակառակ դեպքում սպառնում էր իր զորքով ներխուժել Պարսկաստան: Բայց Խոսրովը ո՛չ հաշտություն էր կնքում, ո՛չ էլ հավատ ընծայում, որ Հերակլիոսը կհամարձակվի Պարսկաստանին մոտենալ: Կայսրը ապրիլ ամսի քսանին ներխուժեց Պարսկաստան: Խոսրովը, իմանալով այդ մասին, հրամայեց Շահր Վարազին վերադառնալ, իսկ ինքը Պարսկաստանից գումարելով իր զորքերը և հանձնելով Շահնիսին¹⁴¹, հրամայեց նրան փութանալի միանալ Շահր Վարազին և շարժվել ընդդեմ կայսեր: Իսկ Հերակլիոսը, ժողովելով իր զորքը, սրտապնդեց այն խրախուսիչ խոսքերով. «Իմ եղբայրներ, մեր գիտակցության մեջ ունենալով աստժո երկյուղը, մաքառենք վրեժխնդիր լինել աստծուն հասցված անարգության համար: Արիանանք քրիստոնյաներին բազում շարիք պատճառած թշնամիների դեմ, խնայենք հոռոմայեցիների անկախ պետությունը և ընդդիմակայենք չարամտորեն զենք կապած թշնամուն, լցվենք վախը սպանող հավատքով¹⁴², Նկատի ունենանք, որ պարսից երկրում ենք գտնվում և փախուստը շատ վտանգավոր է: Վրեժխնդիր լինենք կույսերի պղծման համար, նայելով մեր խեղանդամ դարձած զինվորներին, կարեկցենք նրանց: Վտանգն անհատույց չէ, նա հավիտենական կյանք է պարգևում¹⁴³: Կանգնենք արիաբար և տեր աստվածը մեզ սատար կկանգնի, նա կոչնչացնի մեր թշնամիներին»: Կայսրը բազում նման հորդորներով սրտապնդեց զինվորներին, որոնցից մեկը բոլորի անունից պատասխանեց նրան. «Սըր-

տապնդեցի՛ր մեզ, տե՛ր, քո հորդորող խոսքերով, այդ խոսքերը սրեցի՛ն մեր սրերը և հոգի փշեցին նրանց: Քո խոսքերով մեզ թեւավորեցիր: Մենք կարմրում ենք, տեսնելով, թե ինչպես ես դու դեպի մարտ մեզ առաջնորդում: Մենք կանսանք քո բոլոր հրամաններին»: Կայսրը զորքի ղեկին անցած, փութանակի խորագույն Պարսկաստան¹⁴⁴ խուժեց, կրակի տալով քաղաքներն ու գյուղերը: Այստեղ էլ մի սարսափելի հրաշք կատարվեց. ամառ ժամանակ զով քամի փչեց, որ հոռմայեցի զինվորներին ապշեցրեց ու հուսազրեց: Հերակլիոսը լսելով, որ խոսքովը քառասուն հազարանոց զորքով Գանձակ¹⁴⁵ քաղաքում է գտնվում, դիմեց նրա դեմ: Նախապես նա իրեն ենթակա սարակիստներին¹⁴⁶ ումանց ուղարկեց առաջ, որոնք հանդիպելով խոսքովի վիզլային, մի մասին կոտորեցին, մյուսին էլ՝ իրենց զորավարի հետ միասին շղթայակապ կայսեր բերեցին: Խոսքովն իմանալով այդ մասին, լքելով քաղաքն ու զորքը, դիմեց փախուստի: Հերակլիոսը հետապնդեց նրան, հասածին սրի քաշեց, իսկ մնացածները փախուստի դիմելով, ցիրուցան եղան: Կայսրը գրավեց Գանձակ քաղաքը¹⁴⁷, որի արվարձաններում իր զինվորներին հանգիստ տվեց: Կայսեր կողմն անցած պարսիկներն ասում էին, որ խոսքովը փախուստի դիմելով, այդ շրջանում եղած ամեն ինչ կրակի տվեց: Նա եկավ արևելքում գտնվող Թեբարմայիս¹⁴⁸ քաղաքը, որտեղ էին գտնվում Հրո տաճարը, լյուդացոց թագավոր Կրեսոսի գանձերը, ինչպես նաև ածուխների մոլորությունը¹⁴⁹, որոնք առնելով շարժվեց դեպի Գաստակերտ¹⁵⁰: Իսկ կայսրը Գանձակից դուրս գալով, հասնում է Թեբարմայիս, մտնում քաղաք և կրակի տալիս Հրո տաճարը¹⁵¹: Ողջ քաղաքը մոխիր դարձնելով, նա հետապնդում էր խոսքովին Մարաց երկրի կապաններում: Խոսքովն այդպիսի մի դժվարանցանելի վայրից մյուսն էր գնում: Հերակլիոսը հետապնդելով նրան, բազում քաղաքներ ու գյուղեր առավ¹⁵², Երբ ձմեռը վրա հասավ, նա մտածում էր իր զորքով ո՛ր ձրմեռի: Ոմանք խորհորդ տվեցին Ալեքանիայում¹⁵³ ձմեռել, ուրիշները՝ խոսքովի վրա շարժվել: Կայսրը հրամայեց զորքին երեք օր սրբվել¹⁵⁴, իսկ ինքը, ընթերցելով աստծո ավետարանները, գտավ, որ կարելի է Ալեքանիայում ձմեռել: Նա իսկույն վերադարձավ և շարժվեց դեպի Ալեքանիա: Նա իր հետ էր տանում բազում պարսիկ ռազմագերիների, բայց և անվերջ հարձակումների ենթարկվում պարսից զորքերի կողմից, սակայն աստծո օգնությամբ նա բոլորին հաղթեց: Ծանապարհին վրա հասավ սաստիկ ձմեռն ու սառնամանիքը: Հասնելով Ալեքանիա, նա իրեն հատուկ գթասրտությամբ ողորմեց և կապանքներից ազատեց իր գերի վերցրած հիսուն հազար ռազմագերիներին, նրանց հանդեպ հոգատարություն

ցուցաբերեց, հանգիստ տվեց, և բոլորը արտասովից մաղթում էին նրան Պարսկաստանի փրկիչը դառնալ, բնաջնջելով տիեզերակործան Խոսրովին:

[A. M. 6115]

[Հոռմայեցիների Հերակ- [Պարսից Խոսքով ար- [Կոստանդնուպոլսի Սեր-
կայսեր] 14-րդ տարին բայի] 36-րդ տարին գիսս պատրիարքի] 15-րդ
տարին

[Նրոտաղեմի Զաքարիա [Ալեքսանդրիայի Գեորգ
պատրիարքի] 15-րդ տարին պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին պարսից խոսքով արքան զորավար նշանակեց Շահ-բարդականին¹⁵⁵, գործունյա, բայց շատ ամբարտաձան մի մարդու: Նրբան տալով խոսքովական և Պերոզական¹⁵⁶ կոչվող զորքերը, ուղարկեց Ալեքանիա՝ Հերակլիոսի դեմ: Նրանք անցնելով Ալեքանիայի սահմանները, չհամարձակվեցին կայսեր դեմ բացահայտ մարտի դուրս գալ, այլ բռնեցին Պարսկաստան տանող կիրճերը, մտադիր լինելով նրան ծուղակը գցել: Բայց Հերակլիոսը դարնանը Ալեքանիայից շարժվեց դեպի Պարսկաստան, ձիշտ է, ավելի երկար, բայց պարենաշատ հարթավայրերով: Շահբարդականը շարժվեց նեղբայց կարճ ճանապարհով, նպատակ ունենալով հասնել կայսեր, նախքան նա ոտք կդնի պարսից երկիրը: Հերակլիոսը հորդորում էր իր զինվորներին, ասելով. «Իմացե՛ք, եղբայրներ, որ պարսից զորքը դեզերելով դժվարանցանելի վայրերում, հոգնեցնում, ուժասպառ է անում ձիերին: Եկեք մենք փութանք մեծ արագությամբ հասնել խոսքովին, որպեսզի անակնկալ կերպով խուժելով նրա վրա, խուճապի մատնենք»: Զորքը, սակայն, դեմ էր գրան, հատկապես դաշնակից լազերը, արագներն ու իրերները: Սա դառնում է փորձանքների պատճառ, քանզի այդ միջոցին վրա հասավ և Շահր վարազը այն զորքով, որին խոսքովը կատարելապես զինել էր և Հայաստանի վրայով Հերակլիոսի դեմ ուղարկել: Իսկ Շահբարդականը կրնկակոխ հետապնդում էր Հերակլիոսին, բայց կովի շէր բռնվում, սպասելով միանալ Շահր վարազին և ապա մարտի մեջ մտնել: Հոռմայեցիները իմանալով Շահր վարազի հարձակման մասին, վեհերոտեցին և ընկնելով կայսեր ոտքերը, արտասովից ներողություն խնդրեցին իրենց անխոհեմ անհնազանդության համար: Նրանք համոզվեցին, թե ինչքան վատ բան է, երբ ծառան չի ենթարկվում տիրոջ կարգադրություններին, և ասացին. «Մեզ ձեռք մեկնիր, տեր, քանի թշվառականներս չենք կորչել: Մենք կկատա-

ընենք քո բոլոր հրամանները: Դրա վրա կայսրը փութաց Շահբաբը և կանգնեց իր կողքին, և զարմացավ նրան, որ իր հրամանները իրականացրեց: Երկուսն էլ¹⁵⁷ ետևում թողնելով, նա փութանալի հոստովի վրա շարժվեց: Հոստովացիներից երկու զինվոր դասալիք լինելով, անցնում են պարսիկների կողմը և հավատացնում նրանց, որ հոստովացիները վախից են փախչում: Լուր էլ ստացվեց, թե պարսից զորավար Շահենը մի այլ զորքով շտապում է օգնության: Շահր Վարազն ու Շահբաբը ղազանը իմանալով այդ մասին, ջանացին Հերակլիոսի հետ կովի բռնելով նախքան Շահենը տեղ կհասնեն. որպեսզի հաղթանակի փառքը նա իրեն չվերագրի: Նրանք հավատ ընծայելով նաև դասալիքների ասածին, շարժվեցին Հերակլիոսի վրա, և մոտենալով, նրան բանակեցին, զճոռելով վաղ առավոտյան բախվել: Իսկ Հերակլիոսը երեկոյան ճամփա ընկավ և ամբողջ գիշեր ընթացավ: Հեռանալով նրանցից, նա խոտառատ մի դաշտ գտավ, որտեղ և ճամբարեց: Բարբարոսները, կարծելով, որ հոստովացիները երկյուղից են փախչում, խառնիճաղանջ կերպով շտապեցին հասնել նրանց: Հերակլիոսը ընդդիմակայեց և կովի բռնվեց: Նա ապավինեց մի ծառայի տակ վրա, այնտեղ ժողովեց իր զինվորներին և աստծո օգնությամբ բարբարոսներին փախուստի մատնեց, հետապնդեց կիրճերով և շատ-շատերին կոտորեց: Ընկավ և Շահբաբը և Շահենը՝ թիկունքին սրի հարված ստանալով: Մարտի ընթացքում իր զորքով վրա հասավ Շահենը, որին ևս կայսրը փախուստի մատնեց, նրանցից շատերին կոտորեց, իսկ մնացածներին ցիրուցան արեց, գրավեց նաև նրանց տուղոնը¹⁵⁸: Շահր Վարազը միացավ Շահենին, հավաքեց վերապարած բարբարոսներին, մտադիր լինելով դարձյալ դիմել Հերակլիոսի վրա¹⁵⁹: Կայսրը շարժվեց դժվարամատչելի, քարքարոտ և դժվարանցանելի Սյունիք¹⁶⁰ երկրի վրայով, իսկ բարբարոսները հետապնդում էին նրան: Լազերը և աբազները երկյուղից դրդված հրաժարվեցին հոստովացիների հետ ունեցած դաշնակցությունից և զնացին իրենց երկիրը: Դա ուրախացրեց Շահենին և նա Շահր Վարազի հետ եռանդազին շարժվեց Հերակլիոսի վրա: Կայսրը հավաքեց զորքը, հորդորեց, սրտապնդեց այն, ասելով. «Եղբայրներ, թշնամու մեծաթվությունը թող ձեզ չվհատեցնի, քանզի եթե աստված կամենա, մեկը հազարին փախուստի կմատնի: Զոհ բերենք մեզ հանուն մեր եղբայրների փրկության, արժանանանք մարտիրոսական պսակին, ապագան էլ մեզ կփառաբանի, իսկ աստված՝ կհատուցի»: Ահա այսպիսի և նման այլ բազում հորդորներով նա զինվորներին սրտապնդեց, պատրաստակամ մարտի հանեց: Ախոյաններն իրար

գեմ, շատ մոտիկ հեռավորության վրա կանգնած, առավոտից մինչև երեկո մարտի շղիմեցին: Երբ վրա հասավ երեկոն, կայսրը ճամփա ընկավ, իսկ բարբարոսները դարձյալ հետապնդում էին նրան: Պարսիկները, ցանկանալով նրա առաջը կտրել, այլ ճանապարհով զնացին, բայց ընկան տղմուտների մեջ, մոլորվեցին և մեծ վտանգի ենթարկվեցին: Իսկ կայսրը նրանցից առաջ մտավ Պարսկահայաստանի¹⁶¹ սահմանները: Այն պատճառով, որ այդ երկիրը գտնվում էր պարսիկների տիրապետության ներքո, շատերը Շահր Վարազին միացան, որով նրա զորքը ստվարացավ: Բայց երբ վրա հասավ ձմեռը, նրան միացած այդ բազմությունը ցրվեց իր տեղերը՝ տներում դադար առնելու: Հերակլիոսը, իմանալով դա, որոշեց գիշերով գողանալ պատերազմը¹⁶²: Սառնամանիք էր, Շահր Վարազը ոչինչ չէր կասկածում, և Հերակլիոսը, ընտրելով տուրքով ձիեր, զինելով ամենաքաջ զինվորներին և նրանց երկու մասի բաժանելով, մեկին հրամայեց առջևից գնալ՝ ընդդեմ Շահր Վարազի, իսկ ինքը մյուս մասով հետևեց նրանց: Նրանք գիշեր ժամանակ փութանալի գնացին և գիշերվա իններորդ ժամին հասան Սալվանոն¹⁶³ վայրը: Պարսիկներն այստեղ էին գտնվում: Իմանալով հարձակման մասին, նրանք ոտքի կանգնեցին և հարձակվեցին հոստովացիների վրա: Վերջիններս բոլորին կոտորեցին, միայն մեկ հոգի փրկվեց, որը և Շահր Վարազին տեղեկացրեց կատարվածի մասին: Շահր Վարազը տեղից վեր կացավ, ձի հեծավ և մերկ ու բոբիկ փախուստի դիմելով փրկվեց: Սրա կանանց, պարսից ծաղիկը համարվող նշանավոր իշխանների, սատրապների և ընտիր զինվորների, որոնք տների տանիքները բարձրացած մարտ էին մղում, Հերակլիոսը կրակով հաղթահարեց՝ ոմանց կոտորեց, ոմանց ողջակեց արեց, ուրիշներին էլ գերի վերցրեց: Քիչ էր մնացել Շահր Վարազի բացի ոչ ոք չփրկվի: Ձեռք գցեցին նաև Շահր Վարազի զննքերը՝ ոսկե վահան, դաշույն և նիզակ, թանկագին քարերով ազուցված ոսկե գոտի և կոշիկներ¹⁶⁴: Այդ բոլորն առնելով, կայսրը շարժվեց գյուղերում ցիր ու ցան եղած պարսիկների վրա, որոնք, իմանալով Շահր Վարազի փախուստի մասին, իրենք ևս քառատրոփ փախուստի դիմեցին: Կայսրը հետապնդեց նրանց և շատերին կոտորեց ու գերեվարեց: Մնացածները խայտառակ կերպով Պարսկաստան վերադարձան: Կայսրը ժողովեց իր զինվորներին և ուրախությամբ ձմեռեց այդ վայրերում:

[A. M. 6116]

Աշխարհի արարչագործութեան 6116 Թ.

Քրիստոսի մարդկայնության 616 Թ.

Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 15-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 37-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 16-րդ տարին

Երուսաղեմի Չարարիս պատրիարքի 22-ամյա աթոռակալության 16-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 6-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսի 1-ին Հերակլիոս կայսրը, գումարելով իր զորքը, մտածում էր որ ճանապարհով շարժվի. նրա առաջ երկու ճանապարհ կար, երկուսն էլ նեղ ու դժվարանցանելի: Մեկը տանում էր դեպի Տարանտա¹⁶⁵, մյուսը՝ ասորոց երկիրը¹⁶⁶: Տարանտա տանող ճանապարհը համեմատաբար լավն էր, բայց ամեն տեսակի պարենից զուրկ: Մյուսը, որ Տավրոսի վրայով տանում է դեպի Ասորիք, լի էր ամեն տեսակ պարենով: Ահա բոլորը նախընտրություն են տալիս այս ճանապարհին, հակառակ որ ավելի վառիթափ էր և ձյան հաստ շերտով ծածկված: Մեծ դժվարությամբ կտրելով այդ ճանապարհը, յոթերորդ օրը հասնում են Տիգրիս գետը, որն անցնելով, ժամանում են Մարտիրոսպոլիս և Ամիդ: Այստեղ զինվորներն ու գերիները հանգստանում են: Այստեղից կայսրը հնարավորություն ունեցավ նաև Բյուզանդիոն նամակ ուղարկել և տեղեկացնել իր դրության մասին և քաղաքը ցնծությամբ լցնել: Իսկ Շահր Վարազը, հավաքելով իր ցիրուցան եղած զորքը, շարժեց Հերակլիոսի դեմ: Կայսրը ընտիր զինվորների մի ջոկատ առանձնացնելով, ուղարկեց կլիստոսները հսկելու, իսկ ինքը զնաց արևելյան կողմում գտնվող լեռնանցքները՝ Շահր Վարազին դիմագրավելու: Անցնելով Նիմֆիոս¹⁶⁷ գետը, կայսրը հասավ Եփրատին, այն տեղը, որտեղ գտնվում էր պարաններով հյուսածո և նավակներից պատրաստված կամուրջը: Բայց Շահր Վարազը քանդելով կամրջի պարանները, կամուրջը մի ափից մյուսն էր տեղափոխել: Երբ կայսրը հասավ և հնարավորություն չունեցավ կամրջից օգտվել, նա գետանց գտավ մի այլ տեղում: Մարտ ամսին, առանց որևէ վտանգի և անսպասելի անցնելով գետը, հասավ Սամոսատ: Գարձյալ անցնելով Տավրոսը, նա ժամանեց Գերմանիկա¹⁶⁸, ապա

Ադանայի¹⁶⁹ վրայով եկավ Սարոս¹⁷⁰ գետը: Շահր Վարազը նույն տեղից վերստին կապեց կամուրջը և առանց որևէ խոչընդոտի հանդիպելու անցավ Եփրատը և հետապնդեց կայսեր: Վերջինս, անցնելով Սարոսի կամուրջը, զորքի և ձիերի հանգստյան համար հարմար վայր գտավ, ուր բանակեց և նրանց հանգիստ տվեց: Շահր Վարազը բռնեց դիմացի կողմը, բայց տեսնելով, որ կամուրջը և նրան պաշտպանող աշտարակները հոռոմայեցիների ձեռքն են անցել, որոշեց ճամբարել: Բազմաթիվ հոռոմայեցիներ անկանոն վազում էին կամրջի վրայով և հարձակումներ գործելով մեծ վնաս հասցնում պարսիկներին: Կայսրն արգելեց նրանց անկազմակերպ հարձակումներ գործել, քանզի դա հնարավորություն կտար թշնամուն լինել կամրջի վրա և անցնել այն: Բայց զինվորները չլսեցին կայսեր: Շահր Վարազը դիմեց խորամանկության: Նա ձևացրեց, որ փախուստի է դիմում և այդ կերպ բազում հոռոմայեցիների, հակառակ կայսեր կարգադրության, դրդեց իր ետևից ընկնեն: Շահր Վարազը ետ դառնալով, հալածեց նրանց և ում որ կամրջից դուրս գտավ, կոտորեց: Նրանք ահա այդպես պատժվեցին իրենց անհնազանդության համար: Կայսրը, տեսնելով, որ բարբարոսները հետապնդելով տարված վճարացրել են իրենց մարտաշարքը, որ նրանք արդեն կոտորում են աշտարակներում գտնվող բազում հոռոմայեցիների, նրանց վրա շտապեց: Կամրջի մեջտեղում աժդահա մի մարդ կայսեր հանդիպեց և վրան հարձակվեց, բայց կայսրը հարվածեց նրան և գետի հոսանքի մեջ շարտեց: Բարբարոսները, տեսնելով նրա տապալումը, փախուստի դիմեցին, բայց կամրջի նեղության պատճառով սկսեցին իրենց գետը զցել, կարծես գորտ լինեին: Ոմանք սրախողխող էին լինում, իսկ բարբարոսների մեծ մասը, որ գետի ափին էր կուտակվել, դիմադրում էր, նետեր արձակում, շէր թույլ տալիս հոռոմայեցիներին անցնել: Կայսրն արիաբար անցնելով կամուրջը, իր փոքրաթիվ թիկնապահներով մարտնչում էր ինչպես գերմարդ, մի բան, որ ապշեցրեց անգամ Շահր Վարազին, որը դիմելով իր մոտ կանգնած Կողմաս անունով մի հոռոմայեցի դասալիքի և հավատուրացի¹⁷¹, ասաց. «Տեսնո՞ւմ ես կայսեր¹⁷², ո՞ր Կողմաս, ինչպես է նա քաջաբար մարտնչում, այսքան բազմության դեմ միայնակ կովում և ինչպես դարբնոցի սալ հարվածներից աներեր մնում»: Հերակլիոսը մյուս զինվորներից ջոկվում էր իր կայսերական երկարավիզ կոշիկներով: Նա այս մարտում բազում հարվածներ ստացավ, բայց դրանցից և ոչ մեկը մահացու չէր: Մարտը շարունակվեց ամբողջ օրը և միայն երկկոյան մարտնչողներն իրարից հեռացան: Շահր Վարազը երկյուղով լցված, գիշերով նահանջեց, իսկ կայսրը, հավաքելով իր զինվորներին,

շարժվեց դեպի Սեբաստիա քաղաքը, անցավ Ալիս գետը և բովանդակ ձմեռն այդ վայրում անցկացրեց: Խոսրովը մուլեզնած հրաման տվեց պարսից տիրապետության տակ գտնվող բոլոր եկեղեցիների գանձերը հավաքել: Նա կայսեր վատություն արած լինելու համար ստիպում էր քրիստոնյաներին ընդունել նեստորի դավանանքը¹⁷³:

[A. M. 6117]

[Հռոմայեցիների Հերակ- լիոս կայսեր] 16-րդ տարին	[Պարսից Խոսրով ար- քայի] 38-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Սեր- զիոս պատրիարքի] 17-րդ տարին
[Նրուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 17-րդ տարին	[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 7-րդ տարին	

Այդ տարին պարսից Խոսրով արքան նոր զորակոչ արեց, զինվորա-
գրեց և՛ օտարականներին, և՛ քաղաքացիներին, և՛ ստրուկներին՝ ծա-
գումն ուշադրության շաննելով: Այս նորակոչիկներին նա հանձնեց զո-
րավար Շահենին, Շահր Վարազի փաղանդից էլ ընտրելով հիսուն հազար
հոգու, միացրեց դրան: Այդ զինվորներին նա անվանեց «ոսկենիզակա-
վորներ», և կայսեր դեմ ուղարկեց: Իսկ Շահր Վարազին նրա մնացած
զորքով Կոստանդնուպոլսի վրա ուղարկեց, որպեսզի Արևմուտքի հոների
(սրանց ավարներ են կոչում), բուլղարների¹⁷⁴, սկլավների¹⁷⁵ և գեպեդ-
ների¹⁷⁶ դաշնակցությամբ, շարժվեն քաղաքի վրա և այն օղակեն: Կայս-
րը, իմանալով այդ մասին, իր զորքը երեք մասի բաժանեց, մի մասն
ուղարկեց քաղաքի պաշտպանության¹⁷⁷, երկրորդը, հանձնելով իր եղ-
բոր՝ Թեոդորոսին, հրամայեց մարտնչել Շահենի դեմ, իսկ երրորդ մասն
էլ ինքը վերցնելով, շարժվեց դեպի Լազիկա, որտեղ նա դաշնակցելու կոչ
արեց Արևելքի թուրքերին¹⁷⁸, որոնց խաղարներ¹⁷⁹ են անվանում: Շահենը
նորակոչիկներով՝ հասավ կայսեր եղբայր Թեոդորոսին և պատրաստվեց
մարտի: Աստված՝ փառաբանյալ Աստվածածնի միջնորդությամբ սատար
կանգնեց. մարտի ժամանակ բարբարոսների վրա անսպասելիորեն կար-
կուտ տեղաց և նրանցից շատերին բախեց, իսկ Հռոմայեցիների զորա-
շարքի տեղում պարզ եղանակ էր: Հռոմայեցիները պարսիկներին պար-
տության մատնեցին և շատ-շատերի կոտորեցին: Խոսրովը, իմանալով
այդ մասին, զայրացավ Շահենի դեմ, որը բազում ապրումներից հի-
վանդացավ ու վախճանվեց: Խոսրովի հրամանով աղով զմրսած նրա
մարմինը արքայի մոտ բերեցին, որն այն բազում անարզանքների են-

Քարկեց: Խաղարները, խաբանից¹⁸⁰ հետո երկրորդ մարդը համարվող
Իբենց զորավար Զիեբելի¹⁸¹ զխավորությամբ, կոտրելով Կասպից դռ-
ները, ներխուժեցին Պարսկաստան, Ատրպատական¹⁸² երկիրը: Նրանք
Իբենց ճանապարհին հանդիպածը պարսիկն գերեվարում էին, քաղաք-
ներն ու գյուղերը հրի մատնում: Կայսրն իր հերթին Լազիկայից դուրս
գալով, միացավ նրանց: Զիեբելը, տեսնելով կայսեր, նրա մոտ փութաց,
համբուրեց նրա պարանոցը, երկրպագեց նրան՝ Տփղիս¹⁸³ քաղաքում
գտնվող պարսիկների աչքի առաջ: Թուրքերի ողջ զորքը երեսն ի վայր
գետին ընկնելով, օտար ժողովուրդներին հատուկ ձևով մեծարեց նրան,
նմանապես և նրանց հրամանատարները, որոնք բարձրանալով ժայռերի
վրա, նույն կերպ երկրպագեցին: Զիեբելը կայսեր մոտ բերեց աղվամազը
նոր բուսած իր որդուն¹⁸⁴: Նա բավականություն էր ստանում կայսեր
խոսքերից, հիանում նրա արտաքինի և խոհեմության վրա: Զիեբելը, որ-
պես դաշնակից, քառասուն հազար քաջ զինվորներ ընտրելով և հանձնե-
լով կայսեր, իր երկիրը վերադարձավ: Կայսրը, առնելով նրանց, շարժ-
վեց Խոսրովի վրա: Շահր Վարազը Քաղկեդոնի վրա հարձակվեց, իսկ
ավարները քաղաքին¹⁸⁵ մոտեցան Թրակիայից, բազում քաղաքավեր մե-
քենաներ զործի դրեցին, Իստրոս¹⁸⁶ գետից միակտուր նավակներով¹⁸⁷
անթիվ անհամար քանակությամբ ժողովուրդ բերեցին և լցվեցին Եղջու-
րի ծոցում¹⁸⁸, վճռելով գրոհով առնել քաղաքը: Թեև տասը օր նրանք
ցամաքից ու ծովից պաշարման մեջ առան քաղաքը, այդուհանդերձ
աստժո զորության մաստարով, անբեժ և կույս Աստվածամոր միջնոր-
դությամբ, պարտություն կրեցին: Նրանք ցամաքում և ծովում բազում
զոհեր տալով, խայտառակ կերպով իրենց տեղերը վերադարձան: Բայց
Շահր Վարազը, որ Քաղկեդոնի մոտ էր կանգնած, շղնաց, ձմեռեց տե-
ղում, ավարառելով ու թալանելով Պերատիկա¹⁸⁹ շրջաններն ու նրանց
քաղաքները:

[A. M. 6118]

Աշխարհի արարչագոր- ծության 6118 թ.	Քրիստոսի թյան 618 թ.	մարդնու- թյան 618 թ.
Հռոմայեցիների Հերակ- լիոս կայսեր 31-ամյա թա- ղավորության 17-րդ տարին	Պարսից Խոսրով արքա- յի 39-ամյա թագավորու- թյան 39-րդ տարին	Կոստանդնուպոլսի Սեր- զիոս պատրիարքի 29-ամ- յա աթոռակալության 18-րդ տարին
Նրուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա ա- թոռակալության 18-րդ տա- րին	Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա ա- թոռակալության 8-րդ տա- րին	

Այդ տարվա սեպտեմբեր ամսին Հերակլիոսը թուրքերի¹⁹⁰ հետ միասին ներխուժեց Պարսկաստան: Այդ բանն անակնկալի բերեց Խոսրովին, քանզի արշավանքը տեղի ունեցավ ձմեռ ժամանակ: Սակայն թուրքերը խիստ ձմռան և պարսիկների անվերջ հարձակումների պատճառով չկարողացան կայսեր հետ միասին տոկալ և կամաց-կամաց սկսեցին հեռանալ և ի վերջո բոլորն էլ լքելով նրան, վերադարձան: Կայսրը, գիմելով իր զինվորներին, ասաց. «Եղբայրներ, իմացե՛ք, որ ոչ ոք չի ցանկանում զաշնակցել մեզ, այլ միայն աստված և նրան անսերմ ծընած մայրը, ցույց տալու համար իր զորությունը: Փրկութունը զորքի կամ զենքերի քանակի մեջ չէ, այլ աստծո ողորմածությունն ապավինելու մեջ, նրան ապավինողներին է նա օգնության հասնում»: Խոսրովը, հավաքելով իր բոլոր զորքերը և նրանց զորավար կարգելով Հրազատեսին¹⁹¹, մի շատ ուղիղ և քաջ մարդու, Հերակլիոսի դեմ ուղարկեց: Իսկ կայսրը, Պարսկաստանի քաղաքներն ու գյուղերը կրակի էր տալիս, սրի քաշում գերի ընկած պարսիկներին: Բնդիկտիոնի 15-րդ տարվա հոկտեմբեր ամսի 9-ին նա հասավ Խամաեթա¹⁹² վայրը, ուր զինվորներին մեկ շաբաթ հանգիստ տվեց: Հրազատեսը, գալով Գանձակ, անցավ նրա թիկունքը և հետապնդում էր հռոմայեցիներին, որոնք իրենց ճանապարհին հանդիպած պարենը սպառում էին, թողնելով սոված շան պես հետևող Հրազատեսին բավարարվի կայսեր թողած փշրանքներով: Կեր շտնելու պատճառով նրա ձիերից շատերը սատակեցին: Գեկտեմբեր ամսի 1-ին կայսրը հասավ Մեծ Ձաբ¹⁹³ կոչվող գետը և անցնելով այն, բանակեց Նինվե¹⁹⁴ քաղաքի մոտ: Հրազատեսը, հետապնդելով նրան, նույնպես հասավ գետանցը: Այդ տեղից երեք մղոն ցածր տեղում նա մի այլ գետանց գտավ ու անցավ: Կայսրը նրա դեմ Վահան ստրատելատի¹⁹⁵ զբլխավորությամբ փոքրաթիվ, բայց ընտիր զինվորների ուղարկեց: Վահանը պարսից մի ջոկատի հանդիպեց, որի հրամանատարին սպանելով, կայսեր բերեց նրա գլուխն ու զուտ ոսկուց պատրաստված սուրը: Նա շատերին սպանեց, իսկ 26 հոգու գերի վերցրեց, այդ թվում և Հրազատեսի սուսերակրին, որը կայսեր հայտնեց, թե Հրազատեսը Խոսրովի հրամանով պետք է իր, Հերակլիոսի, դեմ կռվի, որ արքան երեք հազար զինվոր է ուղարկել նրան, որոնք սակայն դեռ տեղ չեն հասել: Կայսրը, իմանալով դա, տուլղոնը առաջ ուղարկեց, իսկ ինքը ետևից գնաց, մտածելով մարտ տալու հարմար տեղ գտնել՝ նախքան երեք հազար հոգին կմիանային Հրազատեսին: Մարտի հարմար մի դաշտ գտնելով, նա հրամայեց զորքին շարքի կանգնել: Հրազատեսը ևս տեղ հասնելով, զորքը դասավորեց երեք սեպի ձևով և շարժվեց կայսեր դեմ: Ծակատամարտը

տեղի ունեցավ դեկտեմբեր ամսի 12-ին, շաբաթ օրը: Առաջինը մարտի նետվեց կայսրը և հանդիպելով պարսից մի հրամանատարի, աստծո զորությամբ և Աստվածածնի օգնությամբ գետին տապալեց: Վերջինիս հետ մարտի նետվողները գիմեցին փախուստի: Կայսրը մի ուրիշին էլ հանդիպելով, նրան ևս գետին տապալեց: Մի երրորդն էլ վրա հասավ, նիզակով խոցեց, վիրավորեց կայսեր շրթունքը¹⁹⁶, բայց կայսրը նրան էլ սպանեց: Հնչեցին պատերազմական փողերը, երկու կողմերը բախվեցին միմյանց, մարտը սաստիկ բորբոքվեց, պարսիկ հետևակայինները նիզակով խոցեցին աղյուրը կայսեր ֆալբաս նժույգի, որի անունը Դորկոն էր: Նա իր զնչին թրի բազմաթիվ հարվածներ էլ ստացավ, բայց որովհետև կաշվե զրահներով էր պաշտպանված, չվնասվեց: Մարտում սպանվեց Հրազատեսը, պարսից երեք տուրմարի¹⁹⁷, գրեթե բոլոր սպաները և զինվորների մեծ մասը: Հռոմայեցիներից սպանվեցին հիսուն հոգի, մեծ թիվ էին կազմում վիրավորները, բայց նրանցից միայն տասը հոգի վախճանվեցին: Ծակատամարտը տևեց առավոտից մինչև ժամը 11-ը¹⁹⁸: Հռոմայեցիները տիրացան պարսիկների 28 դրոշների, չհաշված ջարդվածները: Դիակապտելով ընկածներին, առան նրանց զրահները, սաղավարտները և բոլոր զենքերը: Հակառակորդները գտնվում էին իրարից երկու նետնկեց հեռավորության վրա. [Թշնամին] փախուստի չէր դիմել: Հռոմայեցի զինվորները գիշերը ջրեցին ու կերակրեցին իրենց ձիերին, իսկ պարսից ձիավորները մինչև գիշերվա ժամը յոթը¹⁹⁹ մնացին սպանված պարսիկների դեակների մոտ: Գիշերվա ժամը ութին նրանք երկյուղից զրդված վերադարձան իրենց զորքի մոտ և նրա հետ միասին գրենացին բանակեցին մի շատ ապառաժ լեռան ստորոտում: [Հռոմայեցիների] ձեռքն անցան զուտ ոսկուց պատրաստված սրեր, ոսկեզօծ զուտիներ, մարգարիտներ, նաև Հրազատեսի ամբողջությամբ ոսկե վահանը, որի վրա կար 120 գամ, նրա զուտ ոսկե զրահը, բերեցին նրա սկահրամանգիտը²⁰⁰, գլուխը, ապարանջանները, ամբողջությամբ ոսկե նրա թամբը: Գերի վերցվեց պարսիկներին ենթակա իրերների իշխան Բարսամուսեսը²⁰¹: Ոչ ոք չի հիշում պարսիկների և հռոմայեցիների միջև տեղի ունեցած նման ճակատամարտ, քանզի ամբողջ օրը նա դադար չունեցավ: Հաղթեցին հռոմայեցիները: Դա տեղի ունեցավ միայն ու միայն աստուծո օգնությամբ: Կայսրը, գոտնպնդելով զորքը, Խոսրովի վրա շարժվեց, նպատակ ունենալով նրան ահաբեկել ու ստիպել ետ կանչի Բյուզանդիոնը [պաշարող]²⁰² Շահր վարազին: Գեկտեմբեր ամսի քսանմեկին կայսրն իմացավ, որ Հրազատեսի վերապրած զինվորները միացան Խոսրովի ուղարկած երեք հազար հոգուն և գրավելով Նինվեն, շտա-

պում են իր ետևից: Կայսրը, անցնելով Մեծ Ջաբ գետը, տուրմարխ Գեորգին հազար զինվորներով փութանակի ուղարկեց գրավելու Փոքր Ջաբի²⁰³ կամուրջները, նախքան այդ մասին խոսքովն իմանա: Գեորգը 48 մղոն անցնելով, գիշեր ժամանակ գրավեց Փոքր Ջաբի շորս կամուրջները, գերի վերցրեց բերդերում հանդիպած պարսիկներին, իսկ դեկտեմբեր ամսի քսաներեքին կայսրը տեղ հասնելով ու անցնելով կամուրջների վրայով, ճամբարեց Իեդդեմի²⁰⁴ ապարանքներում: Նա զինվորներին ու ձիերին հանգիստ տվեց, այնտեղ նշեց Քրիստոսի ծննդյան տունը²⁰⁵: խոսքովն իմանալով, որ հոռմայեցիները գրավել են Փոքր Ջաբի կամուրջները, Հրազատեսի պարսկական զորքին հրամայեց մեծ ճիգ գործադրի և կայսրից շուտ հասնի իրեն: Նրանք հապճեպ գետանցելով Փոքր Ջաբը, այլ ճանապարհով կայսրից առաջ անցան և շարժվեցին առաջ: Կայսրը գրավեց Դեզերիզան²⁰⁶ կոչվող ապարանքը, որն ավերեց, կրակի տվեց, իսկ պարսիկները, անցնելով Տորնա²⁰⁷ գետի կամուրջը, բանակեցին: Կայսրը գրավեց խոսքովի մի ուրիշ՝ Ռուա²⁰⁸ կոչվող ապարանքը, որը ևս ավերակ դարձրեց: Նա երկուդում էր, որ թշնամիներն ուզում են իրեն մարտ տալ Տորնա գետի կամրջի վրա, սակայն նրանք տեսնելով կայսեր, թողեցին կամուրջն ու հեռացան: Կայսրն առանց որևէ խոչընդոտի անցավ կամուրջը և գրավեց Բեկլալ²⁰⁹ կոչվող մի այլ ապարանք, որտեղ խոսքովը ձիերը և զորքերը կառուցել, որը ևս կայսրն ավերեց: Պարսից զորքում ծառայող հայերից ոմանք գիշերով եկան կայսեր մոտ և հայտնեցին, թե «խոսքովը փղերով և անձնական զորքով բանակած է Դաստակերտ²¹⁰ կոչվող ապարանքից հինգ մղոն հեռավորության վրա գտնվող Բարասոթ²¹¹ կոչվող վայրում, որ նա կարգադրել է զորքն այնտեղ կենտրոնանա, որպեսզի քեզ մարտ տան, քանզի այնտեղով հոսում է զժվարանցանելի մի գետ, որի կամուրջը նեղ է, այդ տեղում կան շարժման համար արգելքներ ստեղծող բնակարաններ, ճահճացած գետակներ»: Կայսրը, խորհրդակցելով հրամանատարների և զինվորների հետ, մնաց Բեկլալ ապարանքում, նա այնտեղ, ցանկապատի մեջ գտավ երեք հարյուր բտած թռչուններ, մի այլ ցանկապատում մոտ հինգ հարյուր բտած վիթեր, մի ուրիշում՝ հարյուր բտած վայրի էջ: Այդ բոլորը նա զինվորներին նվիրեց: Հունվարի մեկը նրանք այնտեղ նշեցին, քանզի գտան անհամար քանակությամբ ոլխարներ, խոզեր, արջառներ: Ողջ զորքն ըմբռնանց ու հանգստացավ, փառավորեց աստծուն: Ձեռք գցելով այդ անասուններին արածացնողներին, նրանք նրանցից ճշգրիտ իմացան, որ խոսքովը, տեղեկանալով կայսեր Տորնա գետի կամուրջն անցնելու մասին, դեկտեմբեր ամսի քսաներեքին

փութանակի հեռացել է Դաստակերտի ապարանքից, շտապելով դեպի Կտեսիփոն²¹², նախօրոք արքունիքում եղած ամբողջ գանձերը բարձելով էր սպասարկության համար անանձնացված փղերի, ուղտերի և ջորիների վրա: Նա գրեց նաև Հրազատեսի զինվորներին, որ մտնեն այդ ապարանքը, իշխանավորների տները և ինչ որ գտնեն տանեն: Կայսրը զորքի կեռը Դաստակերտ ուղարկեց, իսկ ինքն այլ ճանապարհով շարժվեց դեպի մի այլ ապարանք, որ Բերդարխ²¹³ է կոչվում: Զինվորներն այդ ևս ավերակ դարձնելով ու կրակի տալով, աստծուն գոհություն հայտնեցին, որ Քստովածածնի միջնորդությամբ նման հրաշքներ գործեց: Քանզի ո՞վ կհուսար, որ խոսքովը հոռմայեցիների կայսեր առաջ Դաստակերտի ապարանքից փախուստի կղբիմի և կզնա Կտեսիփոն, նա, ով 24 տարի չէր կամեցել տեսնել Կտեսիփոնի երեսը և իր արքունիքը Դաստակերտում էր հաստատել: Հոռմայեցի զինվորները Դաստակերտի ապարանքում հոռմեական երեք հարյուր զորջ գտան, որոնց պարսիկները տիրացել էին տարբեր ժամանակներում: Նրանք այնտեղ գտան նաև լքված այլևայլ իրեր, բազում ալոնե²¹⁴, ալոնեի յոթանասուն-ութսուն լիտր²¹⁵ ծանրությամբ փայտ, շատ մեծաքս, պղպեղ, կերպասից²¹⁶ անհաշիվ հանդերձներ, շաքար, կոճապղպեղ և այլ շատ բան: Ոմանք ձեռք բերեցին նաև արծաթ, հսկայական քանակությամբ բարձրորակ մաքուր մետաքսից հանդերձներ, ասեղնազործ զորգեր և օթոցներ, որոնք սակայն ծանր լինելու պատճառով կրակը գցեցին: Նրանք կրակի տվեցին նաև խոսքովի տաղավարներն ու վրանները, որոնք նա բանակելիս կանգնեցնում էր դաշտում, ինչպես նաև նրա բազմաթիվ արձանները: Նույն այն ապարանքում զինվորները գտան անհամար ջայլամներ, վիթեր, վայրի էջեր, սիրամարգեր և փասիաններ, նրա որսատեղում՝ վիթխարի առյուծներ ու վագրեր: Պարսիկների կողմից գերված բազմաթիվ ռազմագերիներ՝ եզեսացիներ ու ալեքսանդրացիներ, ինչպես և այլ քաղաքներից կայսեր մոտ ապավինեցին: Կայսրը Դաստակերտում նշեց նաև Մկրտության տունը²¹⁷, բերկրացրեց, հանգիստ տվեց զինվորներին ու ձիերին: Նա քանդեց, գետնին հավասարեցրեց խոսքովի ապարանքները՝ անգին, հրաշալի ու ապշեցուցիչ շինություններ, որպեսզի խոսքովն իմանա, թե ինչպիսի ցավ էր նա պատճառում հոռմայեցիներին, երբ ամայացնում, կրակի էր տալիս նրանց քաղաքները: Գերվածների մեջ կային նաև ապարանքի բազմաթիվ սպասավորներ որոնք այն հարցին, թե խոսքովը Դաստակերտից ե՞րբ հեռացավ, պատասխանեցին, թե «ձեր գալուց 9 օր առաջ: Ձեր գալու լուրն առնելով, նա ապարանքին մոտիկ գտնվող քաղաքի պարսպի վրա գաղտնի կերպով անցք բացեց, նրա, ապա պարտեզների միջով ին-

քը, կինը և երեխաները ծածկաբար դուրս եկան, որպեսզի քաղաքում իրարանցում չլինի»։ Այդ մասին ոչ իր զինվորներն իմացան, ոչ էլ հրամանատարները, մինչև որ նա կտրեց անցավ հինգ մղոն տարածություն։ Ահա դրանից հետո նա հայտնեց, որ զինվորներն իր ետևից գան Կտեսիփոն։ Նա, ով դալու ժամանակ չէր կարողանում օրական հինգ մղոն կտրել, փախչելիս 25 մղոն էր անցնում։ Մինչ այդ իրար շճանաչող նրա կանայք ու երեխաները իրար հրմշտելով, խառնիճաղանջ փախուստի դիմեցին։ Երբ գիշերը վրա հասավ, խոսրովը մի խեղճ ու կրակ գյուղացու տունը մտավ գիշերելու, հազիվ կարողանալով դռնից ներս անցնել։ Վերջն այդ գուռը Հերակլիոսը տեսնելով՝ ապշեց²¹⁸։ Երեք օրում խոսրովը հասավ Կտեսիփոն։ 24 տարի առաջ, երբ Փոկաս կայսեր ժամանակ խոսրովը Դարան էր պաշարում, գուշակներից ու աստղագուշակներից պատգամ էր ստացել, թե հենց այն պահին, երբ Կտեսիփոն վերադառնա, նա սպանվելու է։ Եվ նա, ով չէր ուզում Դաստակերտից դեպի Կտեսիփոն մեկ մղոն գնալ, ստիպված փախուստի դիմեց այնտեղ, բայց չսիզախեց մնալ, Տիգրիս գետի նավակամուրջն անցնելով, նա դնաց մյուս ափում գտնվող մեր կողմից Սելևկիա²¹⁹, իսկ պարսիկների կողմից Վեհ Արտաշի կողմը քաղաքը, ուր բերեց և ողջ գանձերը։ Նա այնտեղ մնաց իր կնոջ Շիրինի²²⁰, իր երեք այլ կանանց և դուստրերի հետ։ Մնացած կանանց և երեխաների մեծ մասը նա ուղարկեց 40 մղոն դեպի արևելք գտնվող մի ամրացված վայր։ Պարսիկներից ոմանք խոսրովի առաջ Շահր Վարազին հռոմեասիրության մեջ²²¹ զրպարտեցին և այն բանում, թե նա շարախոսում է իր հասցեին, խոսրովն իր սպաթարին նամակով Քաղկեդոն ուղարկեց՝ Շահր Վարազի հրամանատար Կարդարիզանի մոտ, կարգադրելով նրան սպանել Շահր Վարազին, ապա վերցնել պարսից զորքը և շտապել Պարսկաստան՝ օգնության։ Նամակարերը, սակայն, Գալատիայում ընկնում է հռոմայեցիների ձեռքը, որոնք պարսիկներից թաքուն նրան բերում են Բյուզանդիոն և հանձնում կայսեր որդուն։ Վերջինս նամակաբերից իրերին տեղյակ դառնալով, անհապաղ իր մոտ է հրավիրում Շահր Վարազին։ Նա եկավ ու ներկայացավ կայսեր [որդուն], որը նրան հանձնեց Կարդարիզանին հասցեագրված նամակը, ծանոթացրեց նամակաբերին։ Ընթերցելով նամակը և իրականությանը տեղյակ դառնալով, նա տեղն ու տեղը զիջեց և կայսեր որդու և պատրիարքի հետ հաշտություն կնքեց։ Նա կեղծեց խոսրովի նամակի բովանդակությունը, իր անվան կողքին ավելացրեց 400 այլ սատրապների, հազարապետների և հարյուրապետների անունները, որոնք պետք է սպանվեին, և վարպետորեն կնիքը տեղը դնելով, հրավիրեց հրամանատարներին և հենց իրեն՝

Կարդարիզանին ու ընթերցելով նամակը, վերջինիս ասաց. «Համաձա՞յն ես այդ կատարել»։ Հրամանատարները գազազած գահընկեց հայտարարեցին խոսրովին և կայսեր [որդու] հետ հաշտություն կնքեցին։ Միմյանց հետ խորհրդակցելով, նրանք վճռեցին Քաղկեդոնից հեռանալ ու առանց ավարառելու իրենց երկիրը գնալ։ Հերակլիոսը նամակ գրեց խոսրովին. «Թեև հալածում եմ քեզ, բայց խաղաղություն եմ տենչում։ Իմ ցանկությամբ չէ, որ հրի եմ մատնում Պարսկաստանը, դու ես ինձ գրան ստիպել։ Արդ, զցենք զենքերը և հաշտություն կնքենք, հանգնենք կրակը, քանի նա ամեն ինչ չի ճարակել»։ խոսրովը մերժեց և դա ավելի բորբոքեց պարսից ժողովրդի ատելությունը նրա դեմ։ խոսրովը զինակոչեց իր իշխանավորների բոլոր սպասավորներին, իր և իր կանանց ծառաներին և զինելով ամենքին ուղարկեց միանալու Հրազատեսի զորքին և կանգ առնելու Նարվա²²² գետի ափին՝ Կտեսիփոնից 12 մղոն հեռավորության վրա։ Նրանց կարգադրեց երբ կայսրը գետն անցնի, ոչնչացնեն կամուրջն ու նավակամուրջը։ Կայսրը հունվար ամսի յոթին Դաստակերտից դուրս գալով, երեք օր հետո բանակեց Նարվա գետից 12 մղոն հեռու, որի ափին էր գտնվում պարսից զորքը, այդ թվում և երկու հարյուր փիղ։ Կայսրը Արմենիակների²²³ տուրմարի Գեորգիոսին կարգադրեց գնալ մինչև գետը և իմանալ, ունի՞ արդյոք Նարվան գետանց։ Տեսնելով, որ [պարսիկները] կտրել են կամուրջները, որ Նարվան գետանց չունի, նա կայսեր մոտ վերադարձավ։ Կայսրը շարժվեց, եկավ Սիազուրոն²²⁴, ամբողջ փետրվար ամիսը գյուղերն ու քաղաքները կրակի տալով։ Իսկ մարտ ամսին նա եկավ Բարգան կողմը գյուղը, ուր մնաց յոթ օր։ [Այստեղից] նա գորավար Մծեծին²²⁵ ավարառության ուղարկեց։ Վերջինիս կողմն անցավ Շահր Վարազի բանակում հազարապետի աստիճանն ունեցող Վշնասպ Ասպաղը²²⁶ ուրիշ հինգ հոգու հետ, որոնցից երեքը կոմսաներ էին, իսկ երկուսը՝ սպաներ։ Մծեծը ահա սրանց բերեց կայսեր։ Այս Վշնասպ Ասպաղը շատ կարևոր տեղեկություններ տվեց կայսեր, թե «Երբ խոսրովը Դաստակերտից փախավ դեպի Կտեսիփոն և Սելևկիա, նա թանջով հիվանդացավ, որ նա ցանկացավ Մարդանշահին²²⁷, Շիրինից ծնված որդուն արքա թագադրել, և որ երբ վերստին անցավ գետը, նա իր հետ բերեց Մարդանշահին, Շիրինին և վերջինից մյուս որդի Շահրիյարին²²⁸, իսկ իր անդրանիկ որդի Շերոյէին, վերջինիս եղբայրներին, նրա կանանց թողեց գետի այն կողմը։ Շերոյէն, իմանալով, որ խոսրովն ուղում է Մարդանշահին թագադրել, ցնցվեց։ Նա Վշնասպ Ասպաղի մոտ իր կաթնեղբորն ուղարկեց ասելու, թե «Եկ գետի այն կողմը, որ հանդիպենք»։ Բայց Վշնասպ Ասպաղը խոսրովի երկյուղից չհամարձակվեց

գետն անցնել և հայտնեց նրան, թե «ինչ որ վճռել ես զբազմոր հայտնիր ինձ քո կաթնեղբոր միջոցով»: Շերոյնն զրեց նրան, թե «Դու գիտես, որ պարսից տերութիւնը վատթար խոսրովի պատճառով կործանվեց, նա ուզում է Մարդանշահին թագադրել, արհամարհելով ինձ՝ իր անդրանիկ որդուն: Եթե դու համոզես զինվորներին ինձ ընդունեն, ես կբարձրացնեմ նրանց սոցիկները, հաշտութիւն կկնքեմ հոռմայեցիների կայսեր և թուրքերի²²⁹ հետ, և մենք լավ կպարենք: Դու և քո զինվորները ջանացեք, որ ես թագավորեմ, ես բոլորիդ առաջ կբաշնեմ և կհատուցեմ հատկապէս քեզ»²³⁰, Ես [Շերոյեի] կաթնեղբոր միջոցով հայտնեցի նրան, թե «Իմ ուժերի ներածի չափով՝ կաշխատեմ զորքին համոզել և ջանք կկատարեմ»: Ես 22 կոմսաների հետ խոսեցի և համոզեցի նրանց, ինչպես և այլ բազում հրամանատարների և զինվորների: Այդ մասին ես հայտնեցի Շերոյեին, որն ինձ կարգադրեց վերցնեմ երիտասարդ տաքսատուներին²³¹ և մարտ ամսի 23-ին հանդիպեմ նրան Տիգրիս գետի նավակամրջակի վրա, որպեսզի նրա հետ զորքով շարժվենք խոսրովի վրա: Նա ասաց նաև, որ Շերոյեի հետ են Շահր Վարազի երկու որդիներն էլ, նաև ճագղեմի²³² որդին և բազում իշխանազուններ, Արամի որդին, բոլորն էլ ընտրանի: Արդ, եթե հաջողվի սպանել խոսրովին, լավ, բայց եթե անհաջողութեան մատնվեն, ապա բոլորը Շերոյեի հետ կհարեն կայսեր: Նա է ինձ քո մոտ ուղարկել, տեր, քանզի նա պատկառանք է տալով հոռմայեցիների թագավորութեան հանդեպ, թագավորութիւն, որը ժամանակին փրկեց խոսրովին, որպեսզի նա այժմ հոռմայեցիների զըլխին բազում փորձանքներ բերի: Կայսրը, աչքի առաջ ունենալով նրա ապերախութիւնը, իրավունք ունի ինձ էլ շահատալու: Կայսրը նրան ետ դնալի Շերոյեն ուղարկեց հաղորդելու, որ նա բացի բանտերի դռները և այնտեղ արգելափակված հոռմայեցիներին դուրս հանի, նրանց զինի և խոսրովի վրա շարժվի: Շերոյեն հնազանդվեց կայսեր և բանտարկյալներին ազատելով, հարձակվեց հայրասպան [իր] հոր՝ խոսրովի վրա: Վերջինս փորձեց փախուստի դիմել, բայց ապարդյուն: Նրան ձերբակալեցին, թևերը մեջքին ամուր երկաթե կապանքների մեջ առան, ոտքերին ու վզին սուղակապարներ կախեցին և առաջնորդեցին Խավարի տունը, որը նա նոր էր կառուցել և ամրացրել՝ գանձատան վերածել: Նրան շատ քիչ հաց էին տալիս ու ջուր, սովամահ անում, համաձայն Շերոյեի կարգադրութեան. «Թող իզուր տեղ կուտակած ոսկին ուտի, որի սիրուն շատերին սովամահ արեց, աշխարհն ամայացրեց»: Նրա մոտ նա սատրապներին էր ուղարկում, որպեսզի գլխին թուր ու լուտանք թափեն: Ապա բերել տվեց նրա որդի Մարդանշահին, որին խոսրովն

ուզում էր թագադրել և նրա աչքի առաջ սրի քաշեց: Նրա աչքի առաջ կոտորեցին նրա բոլոր մյուս զավակներին: Շերոյեն խոսրովի մոտ ուղարկեց վերջինիս բոլոր թշնամիներին՝ նրան գանահարելու, գլխին թուր ու լուտանք թափելու: Դա հինգ օր տեց, որից հետո Շերոյեի հրամանով նրան նետահար արեցին: Եվ այդպես, դանդաղորեն նա շարաշար ավանդեց իր շար հողին²³³: Դրանից հետո Շերոյեն Հերակլիոսին նամակով ավետեց²³⁴ պիղծ խոսրովի սպանութեան մասին, նրա հետ կայուն խաղաղութիւն կնքեց²³⁵, վերագարձրեց զնրաններում գտնվող բոլոր քրիստոնյաներին, Պարսկաստանում գտնվող բոլոր ռազմագերիներին, այդ թվում և Ջաբարիա պատրիարքին: Նա վերագարձրեց նաև Շահր Վարազի կողմից Երուսաղեմի զբաղման ժամանակ այնտեղից տարված [Քրիստոսի] պատվական ու կենարար խաչափայտը:

[A. M. 6119]

Պարսից արքա Շերոյե²³⁶, թագավորեց մեկ տարի:

[Աշխարհի արարչագործութեան] 6119 թ.	[Քրիստոսի մարդկութեան] 619 թ.	[Հոռմայեցիների Հերակլիոս կայսեր] 18-րդ տարին
[Պարսից Շերոյե արքայի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 19-րդ տարին	
[Երուսաղեմի Ջաբարիա պատրիարքի] 19-րդ տարին	[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 9-րդ տարին	

Այդ տարին երբ պարսիկները և հոռմայեցիների միջև հաշտութիւն կնքվեց, կայսրն իր եղբայր Թեոֆորոսին նամակներով և Շերոյե արքայի պաշտոնյաներով ուղարկեց, որպեսզի Եդեսիայում, Պաղեստինում, Երուսաղեմում և հոռմայեցիների այլ քաղաքներում գտնվող պարսիկներին հոռմայեցիների երկրի միջով հաշտ ու խաղաղ և անվնաս անցկացնեն Պարսկաստան: Այսպիսով կայսրը Պարսկաստանի դեմ վեց տարի պատերազմ մղելուց հետո, 7-րդ տարին հաշտութիւն կնքեց և մեծ ուրախութեամբ Կոստանդնուպոլսի վերագարձավ²³⁷: Դրա մեջ ինչ-որ խորհուրդ կար. աստված վեց օրվա մեջ համայն աշխարհն արարչագործելուց հետո, յոթերորդ օրը հանգստյան օր կոչեց: Ահա նույն ձևով և Հերակլիոսը, վեց տարի բազում խոնջանքների միջով անցնելով, յոթերորդ տարին խաղաղութեամբ ու բերկրանքով քաղաք վերագարձավ ու

հանգստացավ: Քաղաքի բնակչությունը նրա գալստյան լուրն առնելով, բոլորը միասին տենչանքով լի, ձիթենու ճյուղեր բռնած, ջահերով, պատերիարքով, [Հերակլիոսի] որդի Կոստանդին կայսրով²³⁸ զուրս եկան Հիերիա²³⁹: Հերակլիոսին ընդառաջ, փառաբանելով նրան բերկրալից ու արտասովալից: Նրա որդին մոտեցավ [Հերակլիոսին] և երկրպագեց: Նրանք զրկախառնվեցին ու հողը արցունքներով ցողեցին: Համայն ժողովուրդը տեսնելով դա, աստծուն գոհությամբ հայտնեց: Ահա կայսեր այդպես դիմավորելով, բերկրալից մտան քաղաք:

[A. M. 6120]

Պարսից արքա Արտաշիր²⁴⁰, Թագավորեց յոթ ամիս:

[Աշխարհի արարչագործության] 6120 թ. [Քրիստոսի մարդեղության] 620 թ. [Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 19-րդ տարին

[Պարսից Արտաշիր արքայի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 20-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 20-րդ տարին [Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարվա գարնանը կայսրը թագավորանիստ քաղաքից դուրս գալով, պատվական ու կենարար խաչափայտով գնաց Երուսաղեմ՝ աստծուն գոհությամբ հայտնելու: Երբ հասավ Տիրեբիաս, քրիստոնյաները նրա առաջ ոմն Բենիամինի ամբաստանեցին, թե նա իրենց նեղում է: Շատ հարուստ լինելով կայսեր և նրա զորքը նա ընդունեց: Կայսրը պարսավեց նրան. «Ինչո՞ւ ես ճնշում քրիստոնյաներին»: Նա պատասխանեց. «Որովհետև նրանք իմ հավատքի թշնամիներն են»: Նա հրեա էր: Կայսրը խրատեց նրան, հորդորեց ու մկրտեց քրիստոնյա Եվստաթիոս Նեպոլիսեցու տանը: Նա էլ էր կայսեր ընդունելի: Մտնելով Երուսաղեմ, կայսրը Զաքարիա պատրիարքին վերահաստատեց իր աթոռին, սեփական տեղում ամփոփեց պատվական ու կենարար խաչափայտը և աստծուն բազում գոհությամբ հայտնեց: Ապա հրեաներին սուրբ քաղաքից արտաքսեց, կարգադրեց, որ նրանք լինեն քաղաքից երեք մղոնից ոչ պակաս հեռավորության վրա²⁴¹: Գալով Եղեփա, ուղղափառներին հանձնեց եկեղեցին, որը՝ Խոսրովի ժամանակներից սկսած նեստորականների ձեռքն էր անցել: Հիերապոլսում նա իմացավ, որ պարսից արքա Շեքո-

յեն վախճանվել է, որ պարսից զահին տիրացել է նրա որդի Արտաշիրը: Սա իշխեց 7 ամիս, Շահր վարազը նրա դեմ ապստամբեց և սպանեց, պարսից վրա թագավորեց 2 ամիս²⁴²: Պարսիկներն սպանեցին նրան և արքա հռչակեցին Բորաննին²⁴³, Խոսրովի դստեր, որ պարսից վրա իշխեց 7 ամիս: Սրան հաջորդեց Որմիզդը²⁴⁴, սարակինոսները նրան թշնեցին, որով պարսից թագավորությունն անցավ արաբների ձեռքը և այդպես է մինչև օրս:

[A. M. 6121]

Աշխարհի արարչագործության 6121 թ. Քրիստոսի մարդեղության 621 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 20-րդ տարին Պարսից Որմիզդ արքայի 11-ամյա թագավորության 1-ին տարին Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 21-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 21-րդ տարին Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Այդ տարին, Հերակլիոս կայսեր Հիերապոլսում եղած ժամանակ, նրա մոտ եկավ հակոբիկներ²⁴⁵ պատրիարք Աթանասիոսը, մի զարհուրելի, շարագործ մարդ, ասորիների բնածին նենգություններ լի: Հավատքի հարցերի շուրջ նա կայսեր հետ բանավեճի բռնվեց: Հերակլիոսը խոստացավ նրան Անտիոքի պատրիարք նշանակել, եթե ընդունի Քաղկեդոնի ժողովը: Նա երկերեսանիորեն ընդունեց, խոստովանեց Քրիստոսի երկու, իրար միացած բնությունները: Նա հարցրեց կայսեր [Քրիստոսի] ներգործության և կամքի մասին՝ ինչպես պետք է խոստովանել ի Քրիստոս՝ երկա՞կ, թե՞ միակ: Կայսրը հարցին անտեղյակ, գրեց Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքին, հրավիրեց նաև Փասիսի Կյուրոս եպիսկոպոսին և նրան հարցուփորձ անելով գտավ, որ նա համակարծիք է Սերգիոսին՝ [Քրիստոս] մեկ կամք²⁴⁶ և մեկ ներգործություն ունի: Սերգիոսը, լինելով ծագումով ասորի, հակոբիկ ծնողների որդի, խոստովանեց և գրեց Քրիստոսի մեջ առկա մեկ բնական կամքի և մեկ ներգործության մասին: Կայսրը երկուսի կարծիքը համեմատելով տեսավ, որ Աթանասիոսն էլ համախոհ է նրանց: Վերջինս գտնում էր, որ եթե ներգործությունը մեկ է, ապա բնությունն էլ մեկ կլինի: Կայսրն

խմանալով նրանց հայեցակետը, նամակ է գրում Հոռմի Հովհաննես պապին²⁴⁷ և տեղեկացնում այդ երկուսի կարծիքների մասին: Վերջինս մերժեց նրանց հերձվածը: Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի վախճանման առթիվ Ալեքսանդրիա որպես պատրիարք է ուղարկվում Կյուրոսը, որը միանալով Փարանի Թեոդորոս եպիսկոպոսին²⁴⁸, գլուխ բերեց այդ խախուտ միությունը, խոստովանելով ի Քրիստոս միայն մեկ բնական ներգործություն: Սրանց նման ընթացքի պատճառով Քաղկեդոնի ժողովն²⁴⁹ ու ընդհանրական եկեղեցին մեծ նախատինք ապրեցին: Հակորիկներն ու թեոդոսիանոսները պարծենում էին, ասելով. «Ոչ թե մենք միաբանեցինք Քաղկեդոնին, այլ ավելի շուտ Քաղկեդոնը միաբանեց մեզ: Քրիստոսի մեկ ներգործություն խոստովանելով, դրանով իսկ նույն մեկ բնություն խոստովանեց»: Այդ ընթացքում Երուսաղեմի պատրիարք է ձեռնադրվում Սոփրոնիոսը²⁵⁰, որն իրեն ենթակա եպիսկոպոսների ժողով գումարելով, նզովեց միակամության գավանները և ժողովական փաստաթղթերը Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքին և Հոռմի Հովհաննես պապին ուղարկեց: Հերակլիոսը, լսելով այդ մասին, ամոթահար եղավ, նա թեև շցանկացավ շեղյալ հայտարարել իր կարգադրությունները, բայց ի վիճակի էլ չէր տանել նախատինքը: Այն ժամանակ, կարծելով, թե ինչ-որ մի մեծ բան է անում, հրապարակում է այսպես կոչված էրիկտը, որի համաձայն շպետք է խոստովանել ի Քրիստոս ո՛չ մեկ, և ո՛չ էլ երկու ներգործություն²⁵¹: Սևերիանոսները²⁵², ծանոթանալով դրան, ընդհանրական եկեղեցին ծաղր ու ծանակի ենթարկեցին, ասելով. «Նախկինում նեստորի²⁵³ ուսմունքը դավանող քաղկեդոնականները խելքի եկան, ճշմարտությանը վերադարձան և մեզ միացան, Քրիստոսի մեկ ներգործության հետ մեկ բնություն խոստովանեցին, բայց այժմ, ոտնահարելով ճշմարտությունը, մեկից էլ, մյուսից էլ զրկվեցին և այժմ խոստովանում են ի Քրիստոս ո՛չ մեկ, և ո՛չ էլ երկու բնություն»: Սերգիոսի մահից հետո Կոստանդնուպոլսի աթոռին նստեց Պյուրոսը²⁵⁴, որն ամբարշտաբար հաստատեց Սերգիոսի և Կյուրոսի գավանները: Երբ Հերակլիոսը վախճանվեց և թագավորեց նրա որդի Կոստանդինը, Պյուրոսը Մարտինեի²⁵⁵ հետ միասին թունավորեցին [կայսեր]: Թագավորում է Մարտինեի որդի Հերակլեոնասը²⁵⁶: Բայց սենատը և քաղաքը Պյուրոսին, Մարտինեին և վերջինիս որդուն որպես ամբարիշտների արտաքսեցին քաղաքից: Թագավորում է Կոստասը²⁵⁷, Կոստանդինի որդին, իսկ Կոստանդնուպոլսի պատրիարք է ձեռնադրվում Պավղոսը²⁵⁸, նա էլ հերձվածող: Հոռմի Հովհաննես պապը եպիսկոպոսների ժողով գումարելով, նզովեց միակամականների հերձվածը: Ժողով գումարելով միաբանակ-

ներին այդպես նզովեցին նաև Աֆրիկայի, Բյուզանդիոնի, Նումիդիայի և Մավրիտանիայի մի շարք եպիսկոպոսներ: Հոռմի Հովհաննես պապի ննջումից հետո նրա փոխարեն պապ է ձեռնադրվում Թեոդորոսը²⁵⁹, իսկ Պյուրոսը գալով Աֆրիկա, հանդիպում է ամենասուրբ Մաքսիմոս արքային, որը մեծ հարգանք էր վայելում մենակյացի իր վսեմ գործունեությամբ, նաև տեղի աստվածակիր եպիսկոպոսներին, որոնք նրան նախատելուց և համոզելուց հետո, Հոռմ, Թեոդորոս պապի մոտ ուղարկեցին: Պյուրոսը պապին հանձնեց իր ուղղափառությունը հաստատող գիրքը, որից հետո ընդունվեց նրանից: Բայց հեռանալով Հոռմից և գալով Ռավեննա, շան նման իր փոխածին դարձավ²⁶⁰: Թեոդորոս պապը, տեղեկանալով այդ մասին, գերագույն առաքյալ Պետրոսի գերեզմանի մոտ եկեղեցական ժողով գումարեց: Նա սուրբ բաժակը խնդրեց, թունաքի մեջ Քրիստոսի կենարար արյունից²⁶¹ կաթեցրեց և իր ձեռքով ստորագրեց Պյուրոսի և նրա համախոհների կարգալույծ լինելը: Պյուրոսի Կոստանդնուպոլսի վերադառնալուց և Պավղոսի մահից հետո հանդուգն այլադավանները Պյուրոսին դարձյալ հաստատեցին Կոստանդնուպոլսի աթոռին: Թեոդորոս պապի մահից հետո Հոռմի պապ է ձեռնադրվում սրբազնագույն Մարտինոսը²⁶², Մաքսիմոսն Աֆրիկայից Հոռմ ժամանելով, զրգոնց Մարտինոս պապի նախանձախնդրությունը: Հարյուր հիսուն եպիսկոպոսների ժողով գումարվեց, որտեղ նզովեցին Սերգիոսին, Պյուրոսին, Կյուրոսին և Պավղոսին, հաստատեցին և հրապարակեցին Քրիստոսի մեր աստուծո երկու կամք և երկու ներգործություն ունենալու [ուսմունքը]: Հերակլիոսի թոռ Կոստաս կայսեր թագավորության 9-րդ և ինդիկտիոնի 8-րդ տարում: [Կայսրը] տեղեկանալով այդ մասին, զաղաղեց, սուրբ Մարտինոսին և Մաքսիմոսին Կոստանդնուպոլսի բերել տվեց և խոշտանգելուց հետո Խերսոն և նրա շրջաններն արքայեց: Նա պատժեց նաև արևմտական բազում եպիսկոպոսների: Մարտինոսի արքայվելուց հետո Հոռմի պապ է ձեռնադրվում Ազաթոնը²⁶³, որն աստվածային նախանձախնդրությամբ դրդված, նա էլ սուրբ ժողով գումարեց, մերժեց միակամականների հերձվածը և հաստատեց [Քրիստոսի] երկու կամքի և երկու ներգործության մասին ուսմունքը: Ահա երբ կայսրերի և ամբարիշտ հոգևորականների կողմից եկեղեցին այդպես ալեկոծվում էր, հանդես եկավ հռչակավոր անապատական Ամալիկը, խարազանելով մեզ՝ քրիստոնյաներիս: Հոռմեական զորքն առաջին անգամ լինելով սարսափելի պարտություն կրեց, ես նկատի ունեմ Գաբրիելի և Յարմուկի²⁶⁴ [ղեկերը] և Դաթեմոնի արյունահեղությունը, որին հաջորդեց Պաղեստինի Կեսարիայի²⁶⁵ և Երուսաղեմի

անումը, Եգիպտոսի կործանումը այլա [կայսրության] միջերկրյա շրջանների և կղզիների, որը Ռոմանիայի գերեզմարումը, Փյունիկեում հռոմեական զորքի ու նավատորմի կատարյալ կործանումը, քրիստոնյա բոլոր ժողովուրդների և երկրների ամայացումը, մի բան, որ դադարեց միայն եկեղեցին հալածողի շարաշար սպանմամբ Սիկիլիայում²⁶⁶:

[A. M. 6122]

Աշխարհի արարագործության 6122 թ.

Քրիստոսի մարդնություն 622 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 21-րդ տարին Արարների Մոհամեդի իշխանության 9-րդ տարին առաջնորդ կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 22-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 22-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 12-րդ տարին

Այդ տարին վախճանվեց սարակինոսների առաջնորդ և սուտ մարգարե Մոհամեդը, հաջորդ նշանակելով իր ազգական Աբու Բաբրին²⁶⁷: Նույն տարին նրա համբավը տարածվեց: Բոլորը սարսափի մեջ էին: Մոլորյալ հրեաները նրա հանդես գալու սկզբում կարծում էին, որ հենց սա է, որ կա իրենց սպասած օծյալը, նրանց երևելիներից ոմանք անգամ մոտը գնացին և ընդունեցին նրա կրոնը՝ հրաժարվելով աստվածատես Մովսեսի կրոնից: Այդ բանն անողները տասը հոգի էին և հետոն եղան մինչև նրա սպանությունը: Երբ տեսան, որ նա ուղտի միս է ուտում, համոզվեցին, որ իրենց կարծածը չէ և շփտեին ինչպես վարվել: Թշվառականները, վախենալով հրաժարվել նրա կրոնից, սովորեցնում էին՝ մեր՝ քրիստոնյաներիս դեմ անօրինություններ գործել: Բայց շարունակում էին մնալ նրա հետ: Ես անհրաժեշտ եմ գտնում պատմել սրա ծագման մասին: Նա սերում էր Աբրահամի որդի Իսմայիլի՝ շատ նշանավոր մի ցեղից: Սրանց բոլորի հայրն է համարվում Իսմայիլից սերած Նիզարոսը²⁶⁸, որն ունենում է երկու որդի՝ Մունդարոսին և Ռաբիային²⁶⁹: Մունդարոսը ծնավ Կուրասոսին, Կայսոսին, Թեմիմեին, Ասադոսին²⁷⁰ և այլ անհայտ գավակներ: Սրանք բոլորը վրանաբնակ էին և ապրում էին Մադիանիտ անապատում²⁷¹, զբաղվելով անասնապահու-

թյամբ: Ավելի խորքերում²⁷² ապրում են այլ՝ Իեկտանի ցեղին պատկանող [արաբներ], որոնք կոչվում են Ամանիտներ²⁷³, այսինքն՝ Հոմերիտներ²⁷⁴: Սրանցից ոմանք ուղտերով վաճառականություններ էին զբաղվում: Վերոհիշյալ Մոհամեդը, լինելով աղքատ ու որբ, որոշում է իր ազգական Խադիգա²⁷⁵ անունով մի կնոջ վարձով ծառայել որպես ուղտապան և Եգիպտոսում ու Պաղեստինում վաճառականություն անել: Մի փոքր անց նա հանդգնեց սողոսկել այդ այրի կնոջ մոտ և նրան կնություն առնել, տիրանալով նրա ուղտերին և ունեցվածքին: Գալով Պաղեստին, նա շփման մեջ մտավ հրեաների և քրիստոնյաների հետ, ծանոթացավ նրանց սուրբ գրքերին: Նա ընկնավորությամբ հիվանդացավ²⁷⁶: Նրա կինը, իմանալով այդ մասին, շատ տխրեց, որ ինքը լինելով ազնվական, կապվեց մի մարդու հետ որը բավական չէ աղքատ էր, այլև ընկնավոր: Մոհամեդը փորձում է նրան հաճոյանալ, ասելով. «Ես տեսիլքի մեջ Գաբրիել կոչվող հրեշտակին եմ տեսնում և շարողանալով նրա տեսքին դիմանալ, ուշաթափվում, ընկնում եմ»: Կինը մի ծանոթ վանական ունեց²⁷⁷, որն իր վատության պատճառով արսորվել էր և այնտեղ էր ապրում: Ահա սրան նա ամեն ինչ տեղեկացրեց, տվեց և հրեշտակի անունը: Վանականն, ուզենալով նրան իրազեկ դարձնել, ասաց. «Նա ճշմարիտ է, հյլավի բոլոր մարգարեներին հենց այդ հրեշտակն է ուղարկվում»: Առաջինն այդ կինն եղավ ահա, ով ականջ կախեց և հավատաց սուտ արքայի խոսքին, և ցեղակից այլ կանանց հայտնեց, որ Մոհամեդը մարգարե է: Համբավը կանանց շրջանից մուտք գործեց տղամարդկանց շրջանը, նախ և առաջ Աբու Բաբրին, որին և Մոհամեդը իրեն հաջորդ նշանակեց: Սրա հերձվածն ի վերջո զենքի ուժով տարածվեց էթիոպի²⁷⁸ շրջաններում: Սկզբում հերձվածը տասը տարի ծավալվեց ընդհատակում, զենքի ուժով նույնպես տասը տարի, իսկ բացահայտ՝ ինն: Մոհամեդն իր հետևորդներին վարդապետեց, թե թշնամուն սպանողը կամ թշնամուց սպանվողը դրախտ է գնում²⁷⁹: Իսկ դրախտը նրա ասելով ուտել-խմելու, կանանց հետ հարաբերվելու տեղ է, որ այնտեղ կան գինու, մեղրի և կաթի գետեր, իսկ կանայք այստեղի կանանց նման չեն, ուրիշ բան են, խառնակությունն ու հաճույքն էլ՝ երկարատև²⁸⁰: Անվայել ու հիմար այլ բաներ էլ էր նա ասում, ինչպես և այն, թե պետք է միմյանց կարեկցել և օգնել անարդարության զոհերին:

Նույն տարին, ինդիկոսների շորորդ տարին, նույնմբեր ամսի յոթին, արենլբում Հերակլիոսին որդի ծնվեց՝ Գավիթը: Նույն օրը ծնվեց նաև Հերակլիոսը, Մեծ Հերակլիոսի որդի Փոքր Հերակլիոսի (որ և Կոստանդին էր կոչվում), որդին: Նա մկրտվեց Վախեռնալում, ինդիկոսների

հինգերորդ տարին, նոյեմբեր ամսի երեքին, ձեռամբ Սերգիոս պատրիարքի:

[A. M. 6123]

Արաբների առաջնորդ Աբու Բաբր: Իշխեսց երեք տարի: Երուսաղեմի Մոզեստոս պատրիարք²⁸¹: Աթոռակալեսց երկու տարի:

[Աշխարհի արարչագործութեան 6123 թ. [Քրիստոսի մարդեղութեան] 623 թ.

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 22-րդ տարին [Արաբների Աբու Բաբր առաջնորդի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 23-րդ տարին

[Երուսաղեմի Մոզեստոս պատրիարքի] 1-ին տարին [Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարին պարսիկները ապստամբեցին և պատերազմեցին միմյանց դեմ: Այդ ժամանակները հնդիկների թագավորը Հերակլիոսին՝ պարսիկներին հաղթելու առթիվ շնորհավորանքներ ուղարկեց, մեծ քանակությամբ մարգարիտներ և թանկագին քարեր: Մի փոքր առաջ վախճանվել էր Մոհամմեդը: Նա շորս ամիրաններ էր նշանակել՝ պատերազմելու քրիստոնյա արաբների²⁸² դեմ: Նրանք, մտադիր լինելով հարձակվել Մուսեոն գյուղում գտնվող [քրիստոնյա] արաբների վրա, վերջիններիս զոհամատուցման օրը, հասան ու կանգ առան այդ գյուղի դիմաց: Գյուղում էր գտնվում Թեոդորոս վիկարիոսը²⁸³, որն այդ մասին տեղեկացավ իր վարձկան ուն կորասենից²⁸⁴, անունը Կոստաբա²⁸⁵: Հավաքելով անապատի բոլոր կայագրների զինվորներին և սարակիստից իմանալով իրենց վրա հարձակվելու ճշգրիտ օրն ու ժամը, վիկարիոսը նախահարձակ է լինում Մոթուս կոչվող գյուղում և սպանում երեք ամիրանները և նրանց մեծաթիվ զինվորները: Մի ամիրա միայն փրկվեց, ետևը, որին կոչում էին «Սուրն աստուծո»²⁸⁶: Այս շրջանի արաբներից ոմանք կայսրերի կողմից փոքր ռոճիկներ էին ստանում՝ պահպանելու համար անապատի անցումները: Ահա հենց այս ժամանակ ինչ-որ ներքինի եկավ զինվորների ռոճիկները վճարելու: Արաբներն էլ եկան սովորության համաձայն իրենց ռոճիկները ստանալու, բայց ներքինի վրձնողնց նրանց, ասելով. «Տեբը²⁸⁷ հազիվ է կարողանում զինվորների ռոճիկը տալ, ո՞րտեղից տա այս շներին»: Արաբները նեղացած գնացին իրենց ցեղակիցների մոտ և նրանց առաջնորդեցին անապատի անցումը

համարվող անչափ հարուստ Գազայի²⁸⁸ շրջանը, Սինա լեռան սահմաններում:

[A. M. 6124]

Աշխարհի արարչագործութեան 6124 թ. Քրիստոսի մարդեղութեան 624 թ.

Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 23-րդ տարին Արաբների առաջնորդ Աբու Բաբրի 3-ամյա իշխանության 2-րդ տարին Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 24-րդ տարին

Երուսաղեմի Մոզեստոս պատրիարքի 2-ամյա աթոռակալության 2-րդ տարին Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 14-րդ տարին

Այդ տարին Աբու Բաբրը շորս զորավարներ ուղարկեց, որոնք, ինչպես վերևում ասացի, արաբների ուղեկցությամբ եկան և գրավեցին Հիրան²⁸⁹ և Գազայի²⁹⁰ ողջ շրջանը: Պաղեստինի Կեսարիա քաղաքից փոքրաթիվ զինվորներով հաղիվ տեղ հասած Սերգիոսը մարտի բռնվեց և առաջինն էլ սպանվեց իր երեք հարյուր զինվորներով հանդերձ: Արաբները փայլուն հաղթանակ տարած, բազում զերիններով ու ավարով վերադարձան:

Նույն տարին Պաղեստինում երկրաշարժ եղավ, երկնքի հարավային մասում դեկիտես²⁹¹ կոչվող աստղն երևաց: Նա արաբների տիրակալությունն էր կանխագուշակում: Աստղը երևաց 30 օր, հարավից հասնելով հյուսիս: Նա սրածև էր:

[A. M. 6125]

Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարք²⁹²: Աթոռակալեսց 3 տարի: Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարք²⁹³: Աթոռակալեսց 10 տարի:

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 24-րդ տարին [Արաբների առաջնորդ Աբու Բաբրի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 25-րդ տարին [Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի] 1-ին տարին [Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարին վախճանվեց Աբու Բաքըը, ամիրայանալով երկու և կես տարի: Իշխանությունն անցավ Օմարին²⁹⁴, որն Արաբիա զորք ուղարկելով²⁹⁵ գրավեց Բոստրա քաղաքը²⁹⁶ և այլ քաղաքներ: Նրանք հասան մինչև Գարիթա²⁹⁷: Սրանց դեմ դուրս եկավ Հերակլիոս կայսեր եղբայր Թեոդորոսը, որը պարտություն կրելով եկավ կայսեր մոտ Եդեսիա²⁹⁸, Կայսրը զորավար նշանակեց մի ուրիշի՝ Վահանին, իսկ Թեոդորոս սակեղարիոսին հոռոմեական զորքով արաբների դեմ ուղարկեց: Հասնելով Եմեսա²⁹⁹, նա բազում սարակինոսների հանդիպեց, նրանց շարդ տվեց՝ իրենց ամիրայով հանդերձ³⁰⁰, իսկ կենդանի մնացածներին հալածական արեց մինչև Դամասկոս: Այնտեղից նա գնաց բանակեց Բարդանեսիոն դեպի ափին: Իսկ Հերակլիոսը հուսահատ, թողնելով Ասորիքը, Երուսաղեմից առավ պատվական խաչափայտը և գնաց Կոստանդնուպոլիս, Վահանին և Թեոդորոս սակեղարիոսին հրամայելով Դամասկոսից շերտվել դեպի Եմեսա: Նրանք 40 հազար զորք ունեին և հալածեցին արաբներին Եմեսայից մինչև Դամասկոս:

[A. M. 6126]

Աշխարհի արարչագործությունն 6126 թ. Քրիստոսի մարդեղությունն 626 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 25-րդ տարին Արաբների Օմարի 12-ամյա իշխանության 1-ին տարին առաջնորդ Կոստանդնուպոլսի Սկրզիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 26-րդ տարին

Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 2-րդ տարին Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Այդ տարին արաբները անհամար զորքով Արաբիայի վրա³⁰¹ արշավեցին, Դամասկոսի շրջանները: Վահանը, իմանալով այդ մասին, դիմեց կայսերական սակեղարիոսին, որպեսզի նա իր զորքով շտապի իրեն օգնության, քանզի արաբները մեծաթիվ էին: Սակեղարիոսը եկավ Վահանի մոտ: Եմեսայից դուրս գալով, նրանք հանդիպում են արաբներին և հենց առաջին օրը, որը երեքշաբթի էր, լոռս ամսի³⁰² քսաներեքին, մարտի բռնվում: Սակեղարիոսի զորքը պարտություն է կրում: Վահանի զորքերն ապստամբություն քարձրացնելով, Վահանին կայսր էն

հռչակում, իսկ Հերակլիոսին՝ գահընկեց հայտարարում: Դրա վրա սակեղարիոսի զինվորները թողեցին հեռացան, իսկ սարակինոսները հարձար առիթ գտնելով, մարտ են տալիս: Հռոմայեցիների դեմ հարավային բամի փչեց, նրա բարձրացրած փոշին թույլ չտվեց իրենց թշնամիներին գիմարել և ահա դրա պատճառով նրանք պարտվեցին, փախուստի դիմեցին դեպի Յարմուկ³⁰³ գետի կիրճերը, ուր և զլխովին ոչնչացան: Երկու զորավարների գլխավորած զորքը 40 հազար հոգի էին: Այստեղ սարակինոսները փայլուն հաղթանակ տանելով, շարժվեցին Դամասկոսի վրա և գրավելով այն, ինչպես և Փյունիկեի շրջանները, այնտեղ էլ հաստատվեցին: Ապա Եգիպտոսի վրա արշավեցին: Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքը լսելով այդ մասին, մտահոգության մեջ ընկավ: Վախենալով նրանց ագահությունից, նա պայմանագիր կնքեց, խոստացավ, որ Եգիպտոսը նրանց տարեկան 12 բյուր դինար կվճարի, ըստ կնքված պայմանավորվածության ոսկի կվճարի: Վճարելով երեք տարվա համար, նա Եգիպտոսը ավերածություններից փրկեց: Կյուրոսը կայսեր առաջ ամբաստանվեց՝ Եգիպտոսի ոսկին սարակինոսներին տալու համար: Կայսրը, զայրացած, նրան կանչեց, իսկ ավզուստալիոս նշանակեց հայազգի ոմն Մանվելի: Երբ ժամանակը լրացավ, սարակինոսների գործակալներն եկան ոսկին ստանալու, բայց Մանվելը նրանց ձեռնունայն դուրս հանեց, ասելով. «Ես անգին Կյուրոսը չեմ, որ ձեզ հարկ վճարեմ: Ես գինված եմ»: Հենց որ սրանք հեռացան, սարակինոսները Եգիպտոսի վրա հարձակվեցին, Մանվելին մարտ տվեցին և փախուստի մատնեցին: Նա մի քանի հոգով փրկվեց Ալեքսանդրիայում: Ահա այն ժամանակ սարակինոսները Եգիպտոսը հարկատու դարձրին: Հերակլիոսը կատարվածին իրազեկ դառնալով, [արաբների] մոտ Կյուրոսին ուղարկեց՝ նրանց համոզելու Եգիպտոսից հեռանալ, խոստանալով հարգել նախկին համաձայնությունը: Կյուրոսը գնալով սարակինոսների ճամբարը, արդարացավ նրանց, թե համաձայնության խախտման հարցում ինքը մեղք չունի և եթե ուզում են, ինքը նախկին համաձայնությունը երդումներով կհաստատի: Սարակինոսները, սակայն, տեղի չտվեցին և պատրիարքին ասացին. «Կարո՞ղ ես այս հսկայական սյունը կու տալ»: Նա պատասխանեց. «Հնարավոր չէ»: Նրանք ասացին. «Մեզ համար էլ այլևս հնարավոր չէ Եգիպտոսից հեռանալ»³⁰⁴:

[A. M. 6127]

Աշխարհի արարչագործութեան 6127 թ.	Քրիստոսի մարդեղութեան 627 թ.
Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորութեան 26-րդ տարին	Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանութեան 2-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալութեան 27-րդ տարին	Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի 3-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին	Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալութեան 3-րդ տարին
--	---	---

Այդ տարին Օմարը³⁰⁵ Պաղեստինի վրա արշավեց և երկու տարի պաշարման մեջ առնելով սուրբ քաղաքը, պայմանով տիրացավ նրան. Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքը համայն Պաղեստինի անձեռնմխելիութեան մասին հաստատագույն երաշխիքներ ստացավ³⁰⁶: Օմարը սուրբ քաղաք մտավ ուղտի բրդից պատրաստված կեղտոտ հագուստներով և սաղայելական կեղծավորութեամբ ցանկացավ տեսնել Սողոմոնի կառուցած հրեից տաճարը, մտադիր լինելով այն իր խայտառակ կրոնի աղոթատեղին դարձնել: Սոփրոնիոսը նրան ականատես լինելով, ասաց. «Ճշմարիտ սա է Դանիել մարգարեի ասած «պղծութիւնն աւերածին», որ սուրբ տեղում է կանգնած»³⁰⁷: Բարեպաշտութեան պաշտպանն արտասովորից ողբաց քրիստոնյաներին: Երբ [Օմարը] տեղ հասավ, պատրիարքն առաջարկեց նրան սավան ու հանդերձներ, բայց նա մերժեց հագնել դրանք: Պատրիարքը հազիվ կարողացավ նրան համոզել հագնել, մինչև որ լվացին նրա [կեղտոտ] հանդերձները, որից հետո Օմարը ստացածը Սոփրոնիոսին վերագարձրեց և հագավ սեփական հանդերձները: Այդ ընթացքում վախճանվեց Սոփրոնիոսը, խոսքով ու գործով երուսաղեմացւոց եկեղեցին անշափ զարդարողը, Հերակլիոսի և նրա համախոհ միակամայականներ Սերգիոսի և Պյուրոսի շարափառութեան դեմ պայքարողը: Նույն տարին Օմարը Ասորիք ուղարկեց Իսդի³⁰⁸, որը համայն Ասորիքը սարակիստներին ենթարկեց:

[A. M. 6128]

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 27-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օմարի] 3-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 28-րդ տարին	[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարին Օսրոնի կառավարիչ³⁰⁹ Հովհաննեսը, մականունը Կատեսաս, եկավ Խալկիս³¹⁰, Իսդի մոտ և նրա հետ պայման կնքեց՝ վճարել տարեկան տասը բյուր դահեկան և այնքան ժամանակ, ինչ այդ գումարը վճարվում է նրան, ոչ խաղաղաբար, ոչ պատերազմով նա իրավունք չունենա անցնել Եփրատ գետը: Այդ պայմանը կնքելով Հովհաննեսը վերադարձավ Եդեսիա և հավաքելով տարեկան հարկը, առաքեց Իսդին: Հերակլիոսը, լսելով այդ մասին, Հովհաննեսին համարեց մեղավոր, քանզի առանց կայսեր գիտութեան նա դիմեց նման քայլի: Պաշտոնանկ անելով նրան, դատապարտեց քսոսրի, իսկ նրա պաշտոնը տվեց ոմն Պտոլեմեոս ստրատելատի:

[A. M. 6129]

[Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 28-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օմարի] 4-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 29-րդ տարին	[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին արաբները գրավեցին Անտիոքը: Օմարը սարակիստներին ենթակա բովանդակ երկրի՝ Եփրատից մինչև Եփրատ, զորավար և ամիրա նշանակեց Մուավիային³¹¹:

[A. M. 6130]

Աշխարհի արարչագործութեան 6130 թ.	Քրիստոսի մարդեղութեան 630 թ.	Հոռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորութեան 29-րդ տարին
Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանութեան 5-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պյուրոս պատրիարքի 3-ամյա աթոռակալութեան 1-ին տարին	Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալութեան 6-րդ տարին

Այդ տարին Իսդը բովանդակ զորքն անցկացրեց Եփրատի վրայով և հասավ Եդեսիա: Եդեսացիք բացեցին քաղաքի դարբասները, նախօրոք իրենց երկրի ապահովութեան, ստրատելատի և նրա հոռոմայեցի զինվորների կյանքի անվտանգութեան մասին երաշխիքներ ստանալով: Սարակիստներն այնուհետև շարժվեցին Կոստանդիայի³¹² վրա և պաշարելով այն, գրոհով առան, սպանելով երեք հարյուր հոռոմայեցիների: Այն-

տեղից գնացին Դարա և այն էլ գրոհով առան, շատերին կոտորեցին: Ահա այդպես Իսղը նվաճեց համայն Միջագետքը:

[A. M. 6131]

[Հռոմայեցիների Հերակ-
լիոս կայսեր] 30-րդ տարին

[Արարների առաջնորդ
Օմարի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պյու-
րոս պատրիարքի] 2-րդ
տարին

[Ալեքսանդրիայի Կյու-
րոս պատրիարքի] 7-րդ
տարին

Այդ տարին սարակինոսները Պարսկաստանի վրա արշավեցին և պատերազմելով պարսիկների դեմ, նրանց զլխովին պարտության մատ-
նեցին և բոլորին հպառակեցրին: Պարսից արքա Որմիզը արքունիքը լքելով, փախուստի դիմեց խորին Պարսկաստան: Սարակինոսները զերի վերցրին Որմիզի դուստրերին՝ թագավորական ողջ կայսրով հանգերծ և Օմարի մոտ բերեցին:

Այդ տարին Օմարը հրամայեց իրեն ենթակա համայն երկրում մարդահամար և հաշվառում անցկացնել: Մարդկանց, անասունների և տունկերի հաշվառում անցկացվեց:

[A. M. 6132]

[Հռոմայեցիների Հերակ-
լիոս կայսեր] 31-րդ տարին

[Արարների առաջնորդ
Օմարի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պյու-
րոս պատրիարքի] 3-րդ
տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս
պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսին, ինդիկտիոնի տասնչորսերորդ տարին չրգողութունից վախճանվեց Հերակլիոս կայսրը³¹³, թագավորելով երե-
սուն տարի և տասը ամիս³¹⁴: Նրանից հետո շորս ամիս թագավորած նրա որդի Կոստանդինի թունավորեցին իր խորթ մայր Մարտինեն և պատ-
րիարք Պյուրոսը: Թագավորում է Մարտինեի որդի Հերակլեոնասը իր մոր Մարտինեի հետ:

[A. M. 6133]

Հռոմայեցիների կայսր Հերակլեոնաս: Թագավորեց 6 ամիս: Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարք³¹⁵: Աթոռակալեց 12 տարի:

[Հռոմայեցիների Հերակ-
լեոնաս կայսեր] 1-ին տա-
րին

[Արարների առաջնորդ
Օմարի] 8-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավ-
ղոս պատրիարքի] 1-ին
տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս
պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին Մուավիան յոթամյա պաշարումից հետո գրավեց Պա-
ղեստինի Կեսարիան, որտեղ կոտորեց յոթ հազար հռոմայեցի:

Այդ տարին սենատը Հերակլեոնասին, նրա մայր Մարտինեին և վալենտինոսին տապալեց³¹⁶: Մարտինեի լեզուն կտրեցին, Հերակլեոնա-
սի՝ քիթը և աքսորելով նրանց, դահ բարձրացրին Կոստասին³¹⁷: Կոս-
տանդինի որդուն՝ Հերակլիոսի թոռան: Նա թագավորեց քսանյոթ տարի: Պյուրոսին կարգալույծ անելուց հետո, հոկտեմբեր ամսին, ինդիկտիոնի տասնհինգերորդ տարին Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց
երեց և եկեղեցու տնտես Պավղոսը: Նա տասներկու տարի աթոռակա-
լեց³¹⁸:

[A. M. 6134]

Աշխարհի արարչագոր-
ծության 6134 թ.

Քրիստոսի մարդեղության
634 թ.

Հռոմայեցիների Կոս-
տաս կայսեր 27-ամյա թա-
գավորության 1-ին տարին

Արարների առաջնորդ Օ-
մարի 12-ամյա իշխանու-
թյան 9-րդ տարին

Կոստանդնուպոլսի Պավ-
ղոս պատրիարքի 12-ամյա
աթոռակալության 2-րդ
տարին

Ալեքսանդրիայի Կյուրոս
պատրիարքի 10-ամյա ա-
թոռակալության 10-րդ տա-
րին

Այդ տարին Կոստասը գահ բարձրանալով, դիմեց սենատին ու ասաց.
«Իմ հայր Կոստանդինը իր հոր և իմ պապ Հերակլիոսի օրոք վերջինիս
հետ երկար թագավորեց, բայց նրա մահից հետո հույժ քիչ, քանզի իր
խորթ մոր՝ Մարտինեի նախանձը բեկեց [ժողովրդի] նրա՝ Կոստանդինի
հետ կապած լավագույն հույսերը, նախանձը նրան կյանքից զրկեց:
Մարտինեն այդ քայլին դիմեց Հերակլիոսից ունեցած իր ապօրինի որդու՝
Հերակլեոնասի սիրույն: Բայց դուք ձեր աստվածահաճո որոշմամբ Մար-
տինեին և նրա որդուն արդար կերպով թագավորութունից հեռացրիք,
որպեսզի հռոմայեցիների գահին չբազմի ամենաանօրենը: Ձեր արտա-
կարգ լրջախոհությամբ դուք շատ լավ գիտակցեցիք այդ: Արդ, ես ձեզ

եմ դիմում՝ եղե՛ք բոլոր հպատակների փրկութեան համար իմ խորհրդականներն ու գործակիցները»։ Այդպես ասելով, նա փակեց սենատի նիստը, սենատորներին առատ նվերներ բաշխելով։

[A. M. 6135]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 2-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 3-րդ տարին [Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարին Օմարն սկսեց Երուսաղեմի տաճարի կառուցումը, բայց շենքը կանգուն չէր մնում, այլ անընդհատ փուլ էր գալիս։ Նա ուզեց պատճառն իմանալ և հրեաներն ասացին. «Քանի Զիթենյաց լեռան տաճարի վրա եղող խաչը ցած չեք առել, շենքը կանգուն չի մնա»։ Դրա վրա այնտեղից ցած առան խաչը, որով նրանց շենքը կանգուն մնաց։ Այդ առթիվ քրիստոսատյացները այլ բազում խաչեր էլ ցած առան։

[A. M. 6136]

Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարք³¹⁹, Աթոռակալեց 10 տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 3-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 11-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 4-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարին Կոստասի դեմ ապստամբություն բարձրացրեց Վալենտինիանոս պատրիկը³²⁰։ Կայսրը [զորք] ուղարկեց, նրան սպանեց, իսկ նրա զինվորներին սիրաշահեց։ Դիոս ամսի հինգին, շաբաթվա վեցերորդ օրը, ժամը իննին արևի խավարում եղավ։

[A. M. 6137]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 4-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 5-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարվա Դիոս ամսին³²¹, շաբաթվա հինգերորդ օրը, հավատության մի պարսիկ սպանեց սարակինոսների առաջնորդ Օմարին. վերջինիս երկրպագելու պահին դաշույնը նրա փորը խրեց և այդպիսով կյանքից զրկեց։ Օմարն ամիրայացավ 12 տարի։ Նրան հաջորդեց իր ազգական Օթմանը, Ֆանի որդին³²²։

[A. M. 6138]

Արարների առաջնորդ Օթման։ Իշխեց 10 տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 5-րդ տարին [Արարների առաջնորդ Օթմանի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 6-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարին Աֆրիկայի պատրիկ Գրիգորիոսը աֆրիկացիների³²³ հետ ապստամբություն բարձրացրեց։

[A. M. 6139]

Աշխարհի արարչազոր-Ֆրիստոսի մարգեղության 200-թյան 6139 թ. 639 թ. Հռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 6-րդ տարին

Արարների առաջնորդ Օթմանի 10-ամյա իշխանության 2-րդ տարին Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 7-րդ տարին Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարին երկրի վրա սաստիկ քամի փչեց, որը բազում տուններ, հսկայական ծառեր արմատախիլ արեց, գետին տապալեց սյունակյացների բազում սյուներ։ Այդ նույն տարին սարակինոսները Աֆրիկայի վրա արշավեցին և հարձակվելով ապստամբ Գրիգորիոսի վրա, փախուստի մատնեցին, նրա կողմնակիցներին կոտորեցին, իսկ Գրիգորիոսին Աֆրիկայից դուրս բռնեցին։ Ապա աֆրիկացիների վրա հարկեր նշանակելով, վերադարձան։

եմ զիմում՝ եզե՛ք բոլոր հպատակների փրկության համար իմ խորհրդականներն ու զործակիցները: Այդպես ասելով, նա փակեց սենատի նիստը, սենատորներին առատ նվերներ բաշխելով:

[A. M. 6135]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 2-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պազդոս պատրիարքի] 3-րդ տարին [Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարին Օմարն սկսեց Երուսաղեմի տաճարի կառուցումը, բայց շենքը կանգուն չէր մնում, այլ անընդհատ փուլ էր գալիս: Նա ուզեց պատճառն իմանալ և հրեաներն ասացին. «Փանի Զիթենյաց լեռան տաճարի վրա եզոդ խաչը ցած չեք առել, շենքը կանգուն չի մնա»: Դրա վրա այնտեղից ցած առան խաչը, որով նրանց շենքը կանգուն մնաց: Այդ առթիվ քրիստոսատյացիները այլ բազում խաչեր էլ ցած առան:

[A. M. 6136]

Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարք³¹⁹: Աթոռակալեց 10 տարի:

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 3-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 11-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պազդոս պատրիարքի] 4-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարին Կոստասի զեմ ապստամբություն բարձրացրեց Վալենտինիանոս պատրիկը³²⁰: Կայսրը [զորք] ուղարկեց, նրան սպանեց, իսկ նրա զինվորներին սիրաշահեց: Դիոս ամսի հինգին, շաբաթվա վեցերորդ օրը, ժամը իննին արևի խավարում եղավ:

[A. M. 6137]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 4-րդ տարին [Արարների առաջնորդ Օմարի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պազդոս պատրիարքի] 5-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարվա Դիոս ամսին³²¹, շաբաթվա հինգերորդ օրը, հավատուրաց մի պարսիկ սպանեց սարակինոսների առաջնորդ Օմարին. վերջինիս երկրպագելու պահին դաշույնը նրա փորը խրեց և այդպիսով կյանքից զրկեց: Օմարն ամիրայացավ 12 տարի: Նրան հաջորդեց իր ազգական Օթմանը, Ֆանի որդին³²²:

[A. M. 6138]

Արարների առաջնորդ Օթման: Իշխեց 10 տարի:

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 5-րդ տարին [Արարների առաջնորդ Օթմանի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Պազդոս պատրիարքի] 6-րդ տարին [Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարին Աֆրիկայի պատրիկ Գրիգորիոսը աֆրիկացիների³²³ հետ ապստամբություն բարձրացրեց:

[A. M. 6139]

Աշխարհի արարչագործության 6139 թ. Քրիստոսի մարդեղության 639 թ. Հռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 6-րդ տարին

Արարների առաջնորդ Օթմանի 10-ամյա իշխանություն 2-րդ տարին Կոստանդնուպոլսի Պազդոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 7-րդ տարին Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարին երկրի վրա սաստիկ քամի փչեց, որը բազում տուններ, հեկայական ծառեր արմատախիլ արեց, գետին տապալեց սյունակայանների բազում սյուներ: Այդ նույն տարին սարակինոսները Աֆրիկայի վրա արշավեցին և հարձակվելով ապստամբ Գրիգորիոսի վրա, փախուստի մատնեցին, նրա կողմնակիցներին կոտորեցին, իսկ Գրիգորիոսին Աֆրիկայից դուրս բռնեցին: Ապա աֆրիկացիների վրա հարկեր նշանակելով, վերադարձան:

[A. M. 6140]

[Հոռոմայեցիների Կոստաս կայսեր] 7-րդ տարին	[Արարների առաջնորդ Օթմանի] 3-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 8-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին Մուավիան ծովով արշավեց Կիպրոսի վրա³²⁴։ Նա հազար յոթ հարյուր նավ ունեւր։ Գրավելով Կոստանդիան³²⁵, ողջ կղզով հանդերձ, ավարառեց այն։ Լսելով, որ Կակոբիզոս կուբիկուլարիոսը³²⁶ հոռոմական մեծաթիվ գործով իր վրա է գալիս, նա նավարկեց Արադոսի դիմաց, ուր խարիսխ դցելով, փորձեց գրավել կղզու Կաստելլոն ավանը՝ բոլոր միջոցները³²⁷ գործի դնելով։ Բայց արդյունքի չհասնելով, նրանց մոտ է ուղարկում ոմն Թոմարիբոս եպիսկոպոսի ահաբեկելու նրանց՝ դադարեցնել դիմադրությունը, թողնել քաղաքն ու հեռանալ կղզուց։ Բայց հենց որ եպիսկոպոսը նրանց մոտ էղավ, նրան պահեցին, Մուավիայի պահանջներին չընդառաջեցին, որը տեսնելով, որ Արադոսի պաշարումից ոչինչ չի ստացվում, վերադարձավ Դամասկոս, քանզի ձմեռը վրա էր հասել։

[A. M. 6141]

[Հոռոմայեցիների Կոստաս կայսեր] 8-րդ տարին	[Արարների առաջնորդ Օթմանի] 4-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 9-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին Մուավիան մեծ պատրաստություն տեսած, արշավեց ընդդեմ Արադոսի³²⁸ և այն որոշ պայմաններով առավ։ Նրա բնակիչներին նա իրավունք տվեց բնակվել ուր որ ցանկանան, իսկ քաղաքը կրակի տվեց, նրա պարիսպները հիմնահատակ կործանեց, կղզին անապատ դարձրեց և այդ վիճակում է այն մինչև այսօր։
Նույն տարին Մարտինոս պապը Հռոմում միակամականների դեմ ժողով գումարեց³²⁹։

[A. M. 6142]

[Հոռոմայեցիների Կոստաս կայսեր] 9-րդ տարին	[Արարների առաջնորդ Օթմանի] 5-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 10-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին զորահրամանատար Բուսուրը³³⁰ արարներով արշավեց ընդդեմ Իսավրիայի³³¹, կոտորեց, շատերին զերեվարեց և հինգ հազար զերիններով վերադարձավ։ Կոստաս կայսրը ոմն Պրոկոպիոսի հաշտություն կնքելու համար Մուավիայի մոտ ուղարկեց։ Երկու տարի ժամանակով հաշտություն կնքվեց, որի համար Մուավիան Դամասկոսում պատանդ պահեց Թեոդորոսի որդի Գրիգորիոսին։

[A. M. 6143]

[Հոռոմայեցիների Կոստաս կայսեր] 10-րդ տարին	[Արարների առաջնորդ Օթմանի] 6-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 11-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարին կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց հայոց պատրիկ Պասազնաթեսը³³², նա Մուավիայի հետ դաշինք կնքեց և իր հարազատ որդուն պատանդ տվեց։ Կայսրը, տեղեկանալով այդ մասին, եկավ մինչև Կապադովիայի Կեսարիան, բայց Հայաստանից հույսը կտրած, վերադարձավ։

[A. M. 6144]

Աշխարհի արարչագործության 6144 թ.	Քրիստոսի մարդեղության 644 թ.	Հոռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 11-րդ տարին
Արարների առաջնորդ Օթմանի 10-ամյա իշխանության 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 12-րդ տարին	Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 9-րդ տարին

Այդ տարին Հելիոպոլսում³³³ մեծազ շերակլիոսի զարմիկ Գրիգորիոսը, որի զմբաված մարմինը բերվեց Կոստանդնուպոլիս: Նույն տարին երկնքից փոշի թափվեց և մարդկանց մեծ սարսափ պատեց:

[A. M. 6145]

Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարք³³⁴: Աթոռակալեց 12 տարի: Վախճանվեց Պավղոսը, իսկ Պյոլոսը կրկին անգամ աթոռակալեց 4 ամիս և 23 օր:

[Հոռմայեցիների Կոստաս կայսեր] 12-րդ տարին	[Աբարների առաջնորդ Օթմանի] 8-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 1-ին տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարին Մուավիան գրավելով Հոռոսը, զետին տապալեց Հոռոսի կոլոսսը³³⁵ կանգնեցումից 1360 տարի անց: Մյուսը գնեց մի եղևնացի հրեա վաճառական և նրա պղինձը ինն հարյուր ուղտերի վրա՝ բարձած տարավ: Նույն տարին արաբների զորավար Հաբիբը³³⁶ արշավեց Հայաստանի վրա: Հանդիպելով հոռմայեցիների զորավար Մավրիանոսին, նրան հալածական արեց մինչև Կովկասյան լեռները, իսկ երկիրն ավարառեց:

[A. M. 6146]

[Հոռմայեցիների Կոստաս կայսեր] 13-րդ տարին	[Աբարների առաջնորդ Օթմանի] 9-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 2-րդ տարին
---	---------------------------------------	---

Այդ տարին Մուավիան հրամայեց մեծ տորմիղ հանդերձել, քանզի որոշել էր Կոստանդնուպոլսի վրա նավարկել: Նախապատրաստական ողջ աշխատանքը Փյունիկեի Տրիպոլիս քաղաքում էր կատարվում: Տրիպոլսում ապրող քրիստոսասեր երկու եղբայրներ, Բուկինատորի որդիները, տեսնելով դա, աստվածային նախանձախնդրությամբ զրդված, խուժեցին քաղաքի բանտի վրա, որտեղ արգելափակված էին բազում հոռմայեցիներ, և ջարդելով դարբասները, աղատեցին բանտարկյալներին, ապա հարձակվելով քաղաքի ամիրայի վրա, սպանեցին նրան ու նրա մարդկանց, և ողջ հանդերձանքը կրակի տալով, նավ նստան և Ռոմանիա³³⁷ նավարկեցին: Այդ դեպքը, սակայն, չկանգնեցրեց նրանց նա-

խապատրաստությունները: Մուավիան անձամբ արշավեց Կապադովկիայի Կեսարիայի վրա, իսկ Աբուլաթարին նշանակեց տորմիղի կառուցման պետ: Նա, հասնելով Լյուկիայի Փյունիքս վայրը, որտեղ զրտնրվում էր Կոստաս կայսրը հոռմեական նավատորմիղով, ծովամարտի է բռնվում: Նավամարտից առաջ կայսրը երազ է տեսնում, թե ինքը Թեսաղոնիկեում է գտնվում: Զարթնելով, նա իր երազը մի երազահանի պատմեց, որն ասաց. «Ո՞վ կայսր, երանի չքնեիր և շտեսներ այդ երազը, քանզի բո Թեսաղոնիկեում լինելը նշանակում է «Ուրիշին ընձեռիր հաղթանակը», ասել է հաղթանակը բո թշնամու ձեռքն է անցնում»³³⁸: Կայսրը նավամարտի և ոչ մի պատրաստություն չտեսած, հոռմեական տորմիղը պատերազմի առաջնորդեց: Մարտում հոռմայեցիները պարտվեցին, ծովի ջրին միախառնվեց հոռմայեցիների արյունը: Կայսրը իր հանգերձներն ուրիշին հագցրեց: Վերոհիշյալ Բուկինատորի որդին, ցատկելով կայսերական նավի մեջ և կայսեր փախցնելով, տեղափոխեց մի այլ նավ և հեղակարծորեն փրկեց նրան: Այդ ամենատարին կայսեր նավի վրա քաջաբար մարտնչելով, շատերին ջարդ տվեց և իր կյանքը զոհաբերեց կայսեր սիրույն: Թշնամիները շրջապատել էին նրան, ենթադրելով, որ հենց նա է կայսրը: Շատերին խողխողելուց հետո, թըշնամիները նրան ևս սպանում են՝ կայսերական հանդերձները կրողի հետ միասին: Կայսրն ահա փախուստի դիմելով, փրկվեց. բոլորին լքելով, նա նավեց Կոստանդնուպոլիս:

[A. M. 6147]

[Հոռմայեցիների Կոստաս կայսեր] 14-րդ տարին	[Աբարների առաջնորդ Օթմանի] 10-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 3-րդ տարին
---	--	---

Այդ տարին էթրիօսցիք³³⁹ սպանեցին արաբների առաջնորդ Օթմանին: Նա ամիրայացավ տասը տարի: Այդ առթիվ արաբների մեջ հուզումներ առաջացան. անապատում ապրողները Ալիին՝ Ալիի³⁴⁰ եղբորորդուն էին ուզում, որ Մոհամմեդի փեսան էր, իսկ Ասորիքում և Եգիպտոսում ապրողները՝ Մուավիային: Հաղթեց Մուավիան և իշխեց քսանչորս տարի:

[A. M. 6148]

[Հոռմայեցիների Կոստաս կայսեր] 15-րդ տարին	[Աբարների առաջնորդ Մուավիայի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 4-րդ տարին
---	--	---

Այդ տարին Մուսուլիան Ալիի դեմ արշավեց: Նրանք երկուսն էլ հավաքվեցին Բարբալիսոսի³⁴¹ միջև, Եփրատի մոտ գտնվող Կեսարիոնում³⁴²: Մուսուլիայի կողմնակիցներն ավելի հզոր լինելով, տիրացան ջրին, իսկ Ալիի կողմնակիցները ծարավից տառապելով, սկսեցին դասալիք լինել: Մուսուլիան, որ չէր ուզում պատերազմել, հաղթանակ տարավ առանց ջանք գործադրելու:

[A. M. 6149]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 16-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 2-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին կայսրն արշավեց Սկլավինիայի³⁴³ դեմ, շատերին գերեվարեց և հպատակեցրեց: Նույն տարին տեղի ունեցան և սուրբ Մաքսիմոսի³⁴⁴ ու նրա աշակերտների հետ կապված դեպքերը: Նրանք մարտընչում էին հանուն ուղղափառության՝ ընդդեմ միակամականների: Կոստասը, չկարողանալով նրանց թեքել դեպի իր շարափառությունը, սրբի աջը և աստվածային իմաստությունը լի և բազմագետ լեզուն կրտրեց, քանզի նա, Մաքսիմոսը, Անաստասիոս անունը կրող իր երկու աշակերտներով նրա ամբարշտության դեմ շատ բան էին գրել: Այդ բանը նրանք չափածո էին գրել, ուսումնասիր մարդիկ այդ մասին գիտեն:

[A. M. 6150]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 17-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 3-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Մուսուլիայի առաջարկությամբ հռոմայեցիների և արարների միջև հաշտություն կնքվեց: Պատճառը արարների մեջ բռնկված ապստամբությունն էր: Հաշտության պայմանագրի համաձայն արարները հռոմայեցիներին վճարելու էին օրական հազար դահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ³⁴⁵: Այդ նույն տարվա Դեսիոս ամսին³⁴⁶, ինդիկտիոնի երկրորդ տարին, ուժեղ երկրաշարժ էլ եղավ և ավերածություններ Պաղեստինում և Ասորիքում:

Նույն տարին Հռոմի սրբազնագույն Մարտինոս պապը, որն արիաբար մարտնչել էր հանուն ուղղափառության և խոստովանող դարձել, ասքորվեց և վախճանվեց արևելքի շրջաններում:

[A. M. 6151]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 18-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 4-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին Կոստասը սպանեց իր հարազատ եղբայր Թեոդոսիոսին: Երբ արաբները Սապֆիում³⁴⁷ էին գտնվում, սպանվեց Պարսկաստանի [ամիրա] Ալին: Այլպիսով Մուսուլիան դարձավ միահեծան թագավոր, հաստատվեց Գամասկոսում, որտեղ և կենտրոնացրեց զբամական գանձերը:

[A. M. 6152]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 19-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 5-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի արաբական մի հերձված երևան եկավ՝ խարուրգիտ³⁴⁸ կոչվողների: Մուսուլիան հաղթահարեց նրանց, Պարսկաստանի [խարուրգիտներին] ստորացրեց, իսկ Ասորիքի՝ բարձրացրեց: Առաջիններին նա կոչեց իսամիտներ, մյուսներին՝ հերակիտներ: Իսամիտների ոռճիկը բարձրացրեց մինչև երկու հարյուր դահեկան, իսկ հերակիտների ոռճիկն իջեցրեց մինչև երեսուն դահեկան:

[A. M. 6153]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 20-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 6-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի կայսրը լքելով Կոստանդնուպոլիսը, զնաց Սիկիլիայի Սիրակուսա քաղաքը, մտադիր լինելով արքունիքը Հռոմ տեղափոխել: Նա [Կոստանդնուպոլիս] մարդ ուղարկեց իր կնոջ և երեք որդիներին՝ Կոստանդինին, Հերակլիոսին և Տիբերիոսին բերելու, բայց բյուզանդացիք չլիողեցին նրանց:

[A. M. 6154]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 21-րդ տարին [Արարների առաջնորդ Մուսուլիայի] 7-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարի արարենքը Ռոմանիայի վրա արշավեցին, շատերին գե-
րեվարեցին և բազում վայրեր ամայացրին:

[A. M. 6159]

[Հռոմայեցիների Կոս- [Արարենքի առաջնորդ [Կոստանդնուպոլսի Թով-
տաս կայսեր] 26-րդ տարին Մուավիայի] 12-րդ տարին մաս պատրիարքի] 3-րդ
տարին

[A. M. 6155]

[Հռոմայեցիների Կոս- [Արարենքի առաջնորդ [Կոստանդնուպոլսի Պետ-
տաս կայսեր] 22-րդ տարին Մուավիայի] 8-րդ տարին բոս պատրիարքի] 11-րդ
տարին

Այդ տարի Սիկիլիայի բնակչության մի մասը գերեվարվեց և իր
ցանկությունները Դամասկոս հաստատվեց:

Այդ տարի Արմենիականների զորավար Շապուհ Պարսկածինը³⁵⁴ Կոս-
տաս կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց, նա Մուավիայի մոտ

[A. M. 6156]

[Հռոմայեցիների Կոս- [Արարենքի առաջնորդ [Կոստանդնուպոլսի Պետ-
տաս կայսեր] 23-րդ տարին Մուավիայի] 9-րդ տարին բոս պատրիարքի] 12-րդ
տարին

Այդ տարի պահոց շփոթում եղավ: Խալեդի որդի Աբդեռահմանը
արշավեց Ռոմանիայի վրա, այնտեղ էլ ձմեռեց: Նա բազում շրջաններ
ավարտեց: Իսկ սկիավենները³⁴⁹ սրա կողմն անցնելով, նրա հետ՝ հինգ
հազար հոգի, իջան Ասորիք և հաստատվեցին Ապամիայի շրջանի Սելև-
կոբոլոս³⁵⁰ գյուղում:

Սերգիոս ստրատելատին³⁵⁵ ուղարկեց, խոստանալով Ռոմանիան ենթար-
կել Մուավիային, եթե վերջինս դաշնակցի իրեն՝ ընդդեմ կայսեր: Կայ-
սեր որդի Կոստանդինը, իմանալով այդ մասին, Մուավիայի մոտ նվեր-

[A. M. 6157]

Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարք³⁵¹: Աթոռակալեց երեք տա-
րի:

Անդրեաս կուրիկուլարիոսին ուղարկեց, որպեսզի նրան համոզի
չանցնել ապստամբի կողմը: Անդրեասը, գալով Դամասկոս, տեսավ, որ

[Հռոմայեցիների Կոս- [Արարենքի առաջնորդ [Կոստանդնուպոլսի Թով-
տաս կայսեր] 24-րդ տարին Մուավիայի] 10-րդ տարին մաս պատրիարքի] 1-ին
տարին

Այդ տարի Ռոմանիայի վրա արշավեց Բուսուրը, վախճանվեց
Ապամիայի եպիսկոպոս Թոմարիքոսը, հրո ճարակ դարձավ Եմեսայի
Եպիսկոպոսը:

Սերգիոսը իրենից առաջ է տեղ հասել: Մուավիան ձևացնում էր, թե իր
համակրանքը կայսեր կողմն է: Սերգիոսը Մուավիայի մոտ էր նստած:

[A. M. 6158]

[Հռոմայեցիների Կոս- [Արարենքի առաջնորդ [Կոստանդնուպոլսի Թով-
տաս կայսեր] 25-րդ տարին Մուավիայի] 11-րդ տարին մաս պատրիարքի] 2-րդ
տարին

Այդ տարին Բուսուրը դարձյալ Ռոմանիայի վրա արշավեց, ավա-
րանեց Հեքսապոլսի³⁵² շրջանները, իսկ Ֆադալասն³⁵³ այնտեղ ձմեռեց:

Երբ ներս մտավ Անդրեասը, Սերգիոսը տեղից վեր կացավ: Մուավիան
պարսավեց Սերգիոսին, ասելով. «Ինչո՞ւ վախեցար»: Սերգիոսը պատ-

ճառաբանեց, թե սովորությունից զրոյված այդպես արեց: Մուավիան,
դիմելով Անդրեասին, հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»: Նա պատասխանեց.

«Ուզում եմ, որ դու օգնություն տաս ընդդեմ ապստամբի»: Նա ասաց.

«Ինձ համար երկուսդ էլ թշնամի եք, շատ սովորին էլ կօգնեմ»: Անդ-

րեասն ասաց. «Վստահ եղի՛ր, ո՞վ ամիրա, որ քեզ համար ավելի լավ է

քիչ ստանալ, բայց կայսրից, քան թե շատ՝ ապստամբից: Բայց ինչպես

որ ճիշտ ես գտնում, այդպես էլ վարվիր»: Անդրեասն այդ ասելուց

հետո լռեց: Մուավիան ասաց. «Այդ մասին կմտածեմ»: Նա հրամայեց

երկուսին էլ դուրս գան: Մուավիան, Սերգիոսին առանձին կանչելով,

ասաց. «Այլևս շխտարհվեա Անդրեասի առաջ, քանզի վախենալու պատ-

ճառ չունես»: Հաջորդ օրը Սերգիոսը Անդրեասից առաջ գնաց և նստեց

Մուավիայի մոտ: Երբ Անդրեասը ներս մտավ, նա նախորդ օրվա նման

չկանգնեց: Անդրեասը վերից վար խոթոռ նայելով Սերգիոսին, հայհո-

յեց նրան ու սպառնաց. «Քանի ողջ եմ ես, քեզ ցույց կտամ իմ ուլ լինե-

լը»: Սերգիոսն ասաց. «Ես քո առաջ ոտքի չեմ կանգնի, քանզի դու ոչ

տղամարդ ես, ոչ էլ կին³⁵⁶: Մուավին, երկուսին էլ լռեցնելով, ասաց

Անդրեասին. «Համաձայնվիր տալ այնքան, ինչքան Սերգիոսը»: Թեև

նա ինչքա՞ն է տալիս», հարցրեց Անդրեասը: Մուավիան ասաց. «Նա

արարենքին է տալիս պետական հարկերը»: Անդրեասն ասաց. «Ավա՛ղ

քեզ, Մուավիա, որ համաձայն ես մարմինը տալ սովերը ստանալու

համար: Ինչպես ուզում ես, այդպես էլ արա, դաշնակցի Սերգիոսի

հետ: Ես այդ բանը չեմ անի: Թեև քեզ ենք դիմել, բայց ապավինում ենք աստծուն, ով քեզնից հզոր լինելով, կպաշտպանի հոռմայեցիներին, նրա վրա ենք մենք մեր հույսերը դնում»: Ապա «Ողջ լեր» ասելով, դուրս եկավ Դամասկոսից և գնաց դեպի Մելիտենե, քանզի ապստամբը այդ տեղերում էր գտնվում, որտեղ որ Սերգիոսն էլ պետք է գնար: Հասնելով Արարիսոս³⁵⁷, նա հանդիպեց կիւստուրի պահապանին. նա ապստամբին չէր միացել: Նրան նա կարգադրեց ուշադիր լինել, ձերբակալել վերադարձող Սերգիոսին և իր մոտ բերել, իսկ ինքը գնաց Ամնեսիա, սպասելով ստանալ Սերգիոսին: Կատարվածի մասին նա տեղյակ պահեց կայսեր: Սերգիոսը Մուավիայի հետ իր ուզած ձևով դաշինք կնքելով, նրանից Շապուհին դաշնակից օգնական բարբարոսական զորք ստացավ՝ Ֆադալասի չխափորությամբ: Սերգիոսը Ֆադալասից առաջ էր գնում և ուրախությամբ շտապում գեպի Շապուհը, բայց տեղ չհասած ընկավ կիւստուրներում Անդրեասի լարած որոգայթը: Նրան շղթայակապ Անդրեասի մոտ բերեցին: Սերգիոսը, տեսնելով Անդրեասին, ընկավ նրա ոտքերը և զթություն աղերսեց: Անդրեասն ասաց նրան. «Մուավիայի ներկայություն իր ամոթությունով պարծեցող և ինձ ձվատ անվանող Սերգիոսը դու չե՞ս: Այսուհետև քո ամոթությամբ քեզ ոչ մի օգուտ չի տալու, այլ քո մահվան պատճառ է դառնալու»: Այդ ասելով, նա հրաման տվեց նրա ամոթությամբ կտրել, իսկ նրան՝ փայտից կախել: Կոստանդինը իմանալով Ֆադալասի՝ Շապուհին օգնության գնալու մասին, Շապուհի դեմ Նիկեփոր պատրիկի գլխավորությամբ հոռմեական զորք ուղարկեց: Շապուհն Անդրիանուպոլսում էր գտնվում: Իմանալով, որ Նիկեփորն իր դեմ է գալիս, նա պատերազմի պատրաստություն տեսավ: Օրերից մի օր, ըստ իր սովորության, նա ձի հեծած, քաղաքից դուրս էր գալիս: Երբ մոտեցավ քաղաքի դարբասին, նա ձիուն մտրակեց: Ձին սանձակոտոր եղավ, Շապուհի դուխը հարեց դարբասին և նրան շարաշար սպանեց: Աստված ահա այսպես հաղթանակը կայսեր շնորհեց: Ֆադալասը, հասնելով Հեքսապոլիս և կատարվածի մասին իմանալով, ապշահար եղավ: Նա Մուավիային մարդ ուղարկեց օգնություն խնդրելով, քանզի հոռմայեցիների մեջ արդեն համերաշխություն էր տիրում: Մուավիան իր որդուն՝ Եզրիին³⁵⁸, ուղարկեց, տալով մեծաքանակ բարբարոսական զորք: Երկուսն էլ հասան Քաղկեդոն և շատերին գերեվարեցին: Նրանք գրավեցին նաև Փոյուզիայի Ամորիոսը և հինգ հազարանոց կայազոր թողնելով այնտեղ, Ասորիք վերադարձան: Երբ վրա հասավ ձմեռը, կայսրը նույն Անդրեաս կուբիկուլարիոսին [Ամորիոս] է ուղարկում: Առատ ձյունից և գիշերային ժամանակից օգտվելով, Անդրեասը աստիճաններով բարձ-

բացավ պարսպի վրա, մտավ Ամորիոս և բոլոր հինգ հազար արաբներին գլխովին կոտորեց: Նրանցից մեկ հոգի անգամ չփրկվեց: Նույն ժամանակ, հորդառատ անձրևների հետևանքով Եզեսիան հեղեղվեց և շատերը կորան: Երկներում նշան էլ երևաց:

[A. M. 6160]

Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարք³⁵⁹: Աթոռակալեց վեց տարի:

[Աշխարհի արարչագործության] 6160 թ.	[Քրիստոսի մարգեղության] 660 թ.
[Հոռմայեցիների Կոստաս կայսեր] 27-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 13-րդ տարին
	[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Սիկիլիայի Սիրակուսա քաղաքի Դափնե կոշվող բազանիքում սպանվեց Կոստաս կայսրը: Պատճառը հետևյալն էր: Կայսեր եղբայր Թեոդոսիոսի սպանության պատճառով³⁶⁰ բյուզանդացիներն ատեցին [Կոստասին], առավել ևս այն բանի համար, որ նա ծաղր ու ծանակի ենթարկելով, Կոստանդնուպոլսի բերեց Հոռմի սրբազնագույն Մարտինոս պապին և աքսորեց Խերսոնի շրջանները, որ իմաստնագույն Մարսիմոս խոստովանողի լեզուն ու ձեռքը կտրեց, բազում ուղղափառների խոշտանգեց, նրանց ունեցվածքը բռնագրավեց ու աքսորեց, քանզի նրանք հավանություն չէին տալիս իր հերձվածին, որ Մարսիմոս խոստովանողի Անաստասիոս անունը կրող երկու աշակերտներին աքսորեց ու խոշտանգեց: Ահա այդ բոլորի պատճառով ամենքը սաստիկ ատեցին նրան, և նա վախեցած ուզեց իր արքունիքը Հոռմ տեղափոխել, թագուհուն և երեք որդիներին Կոստանդնուպոլսից դուրս բերել: Բայց դրան արգելք կանգնեցին Անդրեաս կուբիկուլարիոսը և Կոլոնիայի Թեոդորոս [պատրիկը]: [Կոստասը] Սիկիլիայում մնաց վեց տարի և երբ գնաց վերոհիշյալ բազանիքը, նրա հետ ներս մտավ և ոմն Անդրեաս, Տրոյիլոսի որդին, նրա սպասավորը: Երբ Կոստասն սկսեց օճառվել, Անդրեասը վերցրեց դուլը, խփեց կայսեր գլխին և իսկույն փախավ³⁶¹: Դրսում գտնվողները, տեսնելով, որ կայսրը ուշանում է բազանիքից դուրս գալ, ներս շտապեցին և կայսեր գտան մեռած: Նրան հողին հանձնելով, ոմն հայի՝ Մթեթին³⁶², բռնի կայսր հռչակեցին. նա շատ փառավոր ու զեղեցիկ տղամարդ³⁶³ էր: Կոստանդինը, լսելով իր հոր սպանության մասին, մեծ տորմիղով Սիկիլիա է հասնում, ձերբակալում Մը-

ժեծին և իր հորը սպանողների հետ մահապատժի ենթարկում: Արևմուտքում կարգ ու կանոն հաստատելով, նա շտապեց Կոստանդնուպոլիս: Նա հոռոմայեցիների վրա թագավորեց իր եղբայրների՝ Տիբերիոսի և Հերակլիոսի հետ:

[A. M. 6161]

Հոռոմայեցիների կայսր Կոստանդին: Թագավորեց 17 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 304 1-ին տարին [Արարների առաջնորդ Մուավիայի] 14-րդ տարին [Կոստանդնուպոլիսի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի եղբայրների հետ թագավորեց Կոստանդինը: Սարակիսիոսներն արշավեցին Աֆրիկա և, ինչպես պատմում են, ութսուն հազար հողի գերեզմանեցիներ: Անատոլիկոն բանակաթեմի [ղինվորներն] եկան Ներխուսպոլիս³⁶⁵, առելով, թե «Մենք երրորդութանն են հավատում, հետևաբար պետք է երեքին էլ թագադրենք»: Կոստանդինը շփոթվեց, քանզի միայն ինքն էր թագադրված, իսկ նրա եղբայրները ոչ մի պատիվ չունեին: Նա Կոլոնիայի Թեոդորոս պատրիկին ուղարկեց, որ գովելով նրանց նախաձեռնությունը, հանգստացրեց, ապա գլխավորներին առնելով քաղաք բերեց, [իբրև թե] սենատի հետ խորհրդակցելու և ցանկությունը կատարելու համար: Կայսրը նրանց իսկույն դիմացի ափին գտնվող Սիկեում³⁶⁶ կախաղան բարձրացրեց: [Զինվորներն] այդ բանին սկանառես եղած, ամոթահար ու ցավագին, տուն վերադարձան: Իսկ կայսրն իր եղբայրների թթերը կտրեց:

[A. M. 6162]

Աշխարհի արարչագործութան 6162 թ. Քրիստոսի մարդկություն 662 թ.

Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր 17-ամյա տարին [Արարների առաջնորդ Մուավիայի] 24-ամյա իշխանության 15-րդ տարին [Կոստանդնուպոլիսի Հովհաննես պատրիարքի] 6-ամյա ամբողջականության 3-րդ տարին

Այդ տարի սաստիկ ձմեռ արեց, մարդիկ և անասունները շատ տուժեցին: Ֆաղալասը Կյուզիկոսում³⁶⁷ ձմեռեց:

[A. M. 6163]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 4-րդ տարին [Արարների առաջնորդ Մուավիայի] 16-րդ տարին [Կոստանդնուպոլիսի Հովհաննես պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Բուսուրն³⁶⁸ արշավեց, նա շատերին գերեզմանեցիներով վերադարձավ:

[A. M. 6164]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 4-րդ տարին [Արարների առաջնորդ Մուավիայի] 17-րդ տարին [Կոստանդնուպոլիսի Հովհաննես պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի, մարտ (Պուլստրոս) ամսին երկնքում Իրիս երևաց, բոլոր մահկանացուներին սարսափ պատեց, բոլորն ասում էին, թե աշխարհի վերջն է եկել:

Այդ տարի քրիստոսուրացները³⁶⁹ մեծ տորմիլ պատրաստեցին և Կիլիկիայի ափերով նավելով, ձմեռեցին՝ Արդելայի որդի Մոհամմեդը՝ Ջուլուսիայում, իսկ Կայսուր³⁷⁰ Կիլիկիայում և Լյուկիայում: Եղիպտոսում մահ տարածում եղավ: [Ամիրապետը] նրանց³⁷¹ օգնության ուղարկեց մի այլ տորմիլ՝ շատ զործույնյա և քաջ պատերազմող համարվող խալե³⁷² ամիրայի գլխավորությամբ: Վերոհիշյալ Կոստանդինը, իմանալով աստվածամարտների՝ դեպի Կոստանդնուպոլիս շարժվելու մասին, հրակիր կաթսաներով մեծ դիերներ³⁷³ պատրաստեց, ինչպես և սիֆոնակիր³⁷⁴ դրոմոններ, հրամայելով խարիսխ գցել Պրոկլիանեսիոսի Կեսարիոսի նավահանգստում:

[A. M. 6165]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 5-րդ տարին [Արարների առաջնորդ Մուավիայի] 18-րդ տարին [Կոստանդնուպոլիսի Հովհաննես պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին աստվածամարտների վերոհիշյալ տորմիլը, նավելով եկավ Թրակիայի ափերին խարիսխ գցեց՝ սկսած Հեբզոմոնի արևմտյան ծայրից, այսինքն Մագնալրա կոչվողից մինչև արևելյան՝ Կյուկլոբիոն³⁷⁵ կոչվող թերակղզին: Ամեն օր, առավոտից մինչև երեկո, Ոսկե դռան պատենշից մինչև Կյուկլոբիոն նրանք բախվում էին միմյանց: Եվ այդպես ապրիլ ամսից մինչև սեպտեմբեր, որից հետո [սարակիսիոսները] նահանջեցին, եկան Կյուզիկոս և, գրավելով այն, ձմեռեցին այն-

տեղ: Գարնանը նրանք դարձյալ քրիստոնյաների դեմ ծովում պատե-
րազմեցին: Այդ բանը տեեց յոթ տարի: [Սարակիճոսները] ասածն և
աստվածամոր [քրիստոնյաներին] ցուցաբերած օգնությունից խայտա-
ռակ պարտություն կրելով, բազում մարտիկներ կորցնելով և հսկայա-
կան քանակությամբ վիրավորներ ունենալով, տխուր տրտում վերա-
դարձան: Ծամփա ընկած աստվածասույզ տորմիդն էլ Սյուլլայոնի³⁷⁶
կողմերում սաստիկ բքի ու փոթորկալի քամու հանդիպելով, ջարդու-
փշուր եղավ և ամբողջությամբ ոչնչացավ: Այժի որդի Սուֆիանը, երկ-
րորդ եղբայրը, հոսմեական զորահրամանատարներ Ֆլորուսին, Պետրո-
նասին և Կիպրիանոսին մարտ տվեց: Երեսուն հազար արաբ սպանվեց:
Հենց այդ ժամանակ Ասորիի Հիերապոլիս քաղաքից սերող ճարտարա-
պետ Կալլինիկոսը, անցնելով հռոմայեցիների կողմը, ծովային կրակ
պատրաստեց, որով արարների նավերը անձնակազմի հետ հանդերձ
հրո ճարակ արեց: Այդպիսով ահա հռոմայեցիները հաղթանակած վե-
րադարձան, միաժամանակ հայտնաբերած եղան ծովային կրակը³⁷⁷:

[A. M. 6166]

Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարք³⁷⁸: Աթոռակալեց երկու
տարի:

[Հռոմայեցիների տանգին կայսեր] տարին	Կոս- 6-րդ	[Արարների Մուավիայի] 19-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կոս- տանդին պատրիարքի] 1-ին տարին
---	--------------	--	---

Այդ տարի Ֆաղալասն ու Կալիսի որդի Աբդելան Կրետեում ձմե-
ռեցին:

[A. M. 6167]

[Հռոմայեցիների տանգին կայսեր] տարին	Կոս- 7-րդ	[Արարների Մուավիայի] 20-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կոս- տանդին պատրիարքի] 2-րդ տարին
---	--------------	--	---

Այդ տարի, շաբաթ օր, երկնքում նշան երևաց:

[A. M. 6168]

Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարք³⁷⁹: Աթոռակալեց երկու
տարի:

[Հռոմայեցիների տանգին կայսեր] տարին	Կոս- 8-րդ	[Արարների Մուավիայի] 21-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Թեո- դորոս պատրիարքի] 1-ին տարին
---	--------------	--	---

Այդ տարի Ասորիքում և Միջագետքում մորեխի մեծ ներխուժում
եղավ:

[A. M. 6169]

Աշխարհի արարչագոր- ծության 6169 թ.	Քրիստոսի մարգելության 669 թ.
---------------------------------------	---------------------------------

Հռոմայեցիների տանգին կայսեր 17-ամյա թագավորության 9-րդ տա- րին	Կոս- Արարների Մուավիայի 24-ամյա իշ- խանության 22-րդ տարին	առաջնորդ իշ- տարին	Կոստանդնուպոլսի Թեո- դորոս պատրիարքի 2-ամ- յա աթոռակալության 2-րդ տարին
---	--	--------------------------	--

Այդ տարի մարդայիտները³⁸⁰ մուտք գործեցին Լիբանան և տիրեցին
Սև լեռից սկսած մինչև սուրբ քաղաքը: Նրանք գրավեցին Լիբանանի
բարձունքները: Բազում սարուկներ, գեթիներ և տեղաբնիկներ նրանց
մոտ ապաստան փնտրեցին: Կարճ ժամանակվա ընթացքում նրանց թի-
վը բազում հազարների հասավ: Մուավիան և նրա խորհրդականները,
իմանալով այդ մասին, շատ երկյուղեցին, ենթադրելով, որ հռոմայեցի-
ների թագավորությունն աստված է պահում: Նա Կոստանդին կայսեր
մոտ դեպքաններ ուղարկեց խաղաղություն աղերսելով, խոստանալով
կայսեր վճարել տարեկան պախտ: Կայսրն ընդունեց դեպքաններին,
լսեց նրանց դիմումը և նրանց հետ Ասորիք ուղարկեց Հովհաննես պատ-
րիկին, մականունը Պիցիզավդիս, որպես պետության հին ընտանիքից
սերող³⁸¹, շատ փորձառու ու խոհեմ մի մարդու, արարների հետ գործի-
մացությամբ բանակեցրել և հաշտություն կնքելու համար: Երբ նա Ասո-
րիք ժամանեց, Մուավիան ամիրաների և կորասեններին³⁸² մեծ շքախում-
բով նրան փառավոր ընդունելություն ցուցաբերեց: Խաղաղության շուրջ
նրանք երկար բանակեցեցին և երկու կողմերն էլ համաձայնեցին եր-
դումով հաստատված հաշտության պայմանագիր կնքել, որի համաձայն
հազարացիք հոսմեական պետությանը կվճարեն տարեկան երեք հազար
դահեկան պախտ, [կտան] հիսուն ռազմագերի և հիսուն ազնվացեղ ձի:
Այսպիսով հռոմայեցիների և արարների միջև երեսուն տարի ժամանա-
կով կայուն խաղաղություն կնքվեց: Պայմանագրի բնագրերը երկու
կողմից էլ երդումներով հաստատվելուց և փոխանակվելուց հետո, բազ-
միցս հիշատակված բարեհամբավ այրը³⁸³ բյուր նվերներով կայսեր մոտ
վերադարձավ: Երբ այդ մասին տեղեկացան արևմտականները՝ ավար-
ների խաբանն ու ավելի հեռուն բնակվող ռեքսերը³⁸⁴, էքսարքոսները³⁸⁵
և կաստալդները³⁸⁶, նաև արևմուտքի ժողովուրդների գլխավորները, նը-
վերներով դեպքաններ ուղարկեցին կայսեր և խնդրեցին սեր և խաղա-

ղություն հաստատել: Կայսրը նրանց խնդրանքին ընդառաջ գնաց և հաստատեց Տիրոջ խաղաղությունը: Ե՛վ արևելքում, և՛ արևմուտքում մեծ անդորր տիրեց:

[A. M. 6170]

Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարք³⁸⁷: Աթոռակալեց վեց տարի:

[Աշխարհի արարչադոր- թուխան] 6170 թ. [Թրիստոսի մարզեղո- թյան] 670 թ. [Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 10-րդ տարին

[Աբարների առաջնորդ Մուավիայի] 23-րդ տարին [Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Միջագետքում ուժեղ երկրաշարժ եղավ, փլվեց Բատանը³⁸⁸, նաև Եղեսիայի եկեղեցու դմբեթը: Մուավիան վերականգնեց այն՝ քրիստոնյաների ջանքերով:

[A. M. 6171]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 11-րդ տարին [Աբարների առաջնորդ Մուավիայի] 24-րդ տարին [Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարվա Արտեմիսիոս³⁸⁹ ամսի 6-ին, ինդիկտիոնի 1-ին տարին վախճանվեց Մուավիան՝ սարակինոսների առաջին խորհրդականը³⁹⁰, նա զորավար եղավ 20, իսկ ամիրայացավ՝ 24 տարի: Իշխեց նրա որդի Եզիդը³⁹¹:

Այդ տարի բուլղարների ցեղը մուտք գործեց Թրակիա³⁹²: Հարկավոր է խոսել Ուննոգուևդուր բուլղարների և Կոտրագ³⁹³ [բուլղարների] մասին: Եվքսինյան Պոնտոսի հյուսիսային հեռաստաններում կա Մեոտիս կոչվող լիճը³⁹⁴, որի մեջ է թափվում Օվկիանոսից սարմատների երկրով հոսող խոշորագույն Ատեղ անունով գետը³⁹⁵: Այդ գետի մեջ է թափվում Տանայիս գետը³⁹⁶, որը սկիզբ է առնում Կովկասյան լեռներում գտնվող Իբերական դռներից: Տանայիսի ու Ատեղի խառնվելուց հետո (նախապես հիշատակված Մեոտիս լճից վերև Ատեղը երկուսի է բաժանվում), առաջանում է Կուֆիս գետը³⁹⁷, որը թափվում է Պոնտական ծովի վերջում, նեկրոպելի մոտ³⁹⁸, «Խոյի մոութ» կոչվող թերակղզում³⁹⁹: Վերոհիշյալ լճից գետանման ծովն է: Գետը Բոսպորի⁴⁰⁰ և կիմմերների միջով հոսում և թափվում է Եվքսինյան Պոնտոս: Այդ գետում որսում են մուրզուլիս կոչվող և նրա նման այլ [ձկներ]: Խնդրո առարկա լճի

արևելյան կողմերում դեպի Ֆանագուրիա և այդտեղ բնակվող հրեաների շրջանում 100⁰⁰ բազմաթիվ ցեղեր են ապրում: Այդ լճից դեպի Կուֆիս կոչվող գետը, (ուր որսում են բուլղարական փայլուն ձուկը), հին, մեծ Բուլղարիան է, այնտեղ են բնակվում նաև կոտրագ կոչվողները, որոնք ևս սրանց ցեղակից են: Արևմուտքում [վախճանված] Կոստանդին օրոք, վերոհիշյալ Բուլղարիայի և կոտրագների տեր Կրոբատը⁴⁰¹ մեռավ, հինգ որդի թողնելով, որոնց և ավանդեց իրարից երբեք չբաժանվել, որպեսզի բոլորի վրա իրենք տիրեն և ուրիշ ցեղի հպատակ չդառնան: Բայց նրա վախճանվելուց փոքր անց նրա հինգ որդիները բաժանվեցին և հեռացան իրարից՝ յուրաքանչյուրն իրեն հպատակ ժողովրդի հետ: Անդրանիկ որդին՝ անունը Բատրայան⁴⁰², հարգելով հոր պատգամը, մնաց իր նախնյաց երկրում մինչև օրս: Նրա երկրորդ եղբայրը, անունը Կոտրագոս, անցնելով Տանայիս գետը, ավագ եղբոր հիմաց բնակվեց: Չորրորդ և հինգերորդ եղբայրները, անցնելով Իստրոս, այն է՝ Դանուբ գետը, մեկը գնաց Ավարիայի Պանոնիա, հպատակվեց ավարների խաբանին և իր ամբողջ զորքով մնաց այնտեղ, իսկ մյուսը, հասնելով Ռավեննայի մոտ գտնվող Պենտապոլիսը, հպատակվեց քրիստոնյա թագավորության: Վերջապես երրորդ եղբայրը, անունը Ասպարուխ⁴⁰³, անցնելով Դանուբից հյուսիս գտնվող Դանապրիս և Դանաստրիս գետերը⁴⁰⁴, հասավ Օգլոս գետը⁴⁰⁵ և բնակվեց այս [գետերի] ու [Դանուբի] միջև ընկած տարածության վրա, գտնելով, որ նշված տարածքը և՛ մեկ, և՛ մյուս կողմից զովարամատչելի է և ապահով: Առջևից նա ճահճային է, իսկ մյուս կողմերից նրան պատսպարում էին գետերը: Այս հանգամանքը թշնամիներից մեծ ապահովություն ընձեռեց տրոհումից բավականին թուլացած այդ ցեղին: Այս ժողովուրդն, ահա, երբ հինգ մասի էր տրոհված ու մանրացած, Բերդիփայի⁴⁰⁶ հեռավոր խորքերից, նախկին Սարմատիայից ասպարեղ նկավ խաղարների մեծ ցեղը և տիրեց բովանդակ հեռաստանի վրա, ընդհուպ մինչև Պոնտական ծովը: Նա իրեն հպատակեցրեց ավագ եղբայր Բատրայանին՝ Առաջին Բուլղարիայի իշխանին և մինչև օրս նրանից հարկեր է գանձում: Կոստանդին կայսրը, տեղեկանալով, որ մի ինչ-որ կեղտոտ ու անմաքուր ցեղ հանկարծակի Դանուբից այն կողմ, մինչև Օգլոս բնակություն է հաստատել և ոտնատակ է անում ու ավարառում մերձդանուբյան տարածությունները, (խոսքը այժմ նրանց տիրած երկրի մասին է, որն այն ժամանակ գտնվում էր քրիստոնյաների ձեռքում) շատ զայրացավ: Նա հրամայեց բանակաթեմային բոլոր [զորքերին] անցնել Թրակիա: Նավատորմից պատրաստելով, նա ցամաքով ու ծո-

վով շարժվեց նրանց վրա, փորձելով ուժով վռնդել նրանց: Նա հետեակը դուրս բերեց Օզլուս և Դանուբ գետերի միջև ընկած մայր ցամաքը, իսկ նավերին հրամայեց խարխիսի գցել մերձակա ափերին: Բուլղարները, տեսնելով այս հսկայական, մեծաթիվ զորքը, հուսարեկ լինելով փախան ու աճաստանեցին վերահիշյալ ամրություն մեջ: Նրանք երեք-չորս օր շհամարձակվեցին այդ ամրությունից դուրս գալ: Հոռոմայեցիները տեղի ճահիճների պատճառով մարտ չտվեցին, իսկ պիղծ ցեղն այդ բանը թուլություն նշան համարելով, դատեպնդվեց: Կայսրն այդ միջոցին ծանր հոգատապ ունեցավ և ստիպված հինգ զրոմաններով և իր մերձավորների Մեսեմբրիա⁴⁰⁷ վերադարձավ, ուր սովորաբար լուգանքներ էր ընդունում: Նա զորավարներին ու զորքին թողեց, կարգադրելով ընդհարվել նրանց հետ, դուրս քաշել ամրությունից և կովի բռնվել, եթե ամրությունից դուրս գան: Հակառակ դեպքում պաշարել նրանց: Սակայն հեծելազորայինները ենթադրելով, որ կայսրը փախել է, խուճապահար իրենք էլ փախուստի դիմեցին, թեև նրանց ոչ ոք չէր հալածում: Բուլղարները, տեսնելով դա, հետապնդեցին նրանց, մեծ մասին սրախողխող արեցին, շատերին խոցահարեցին, քշեցին մինչև Դանուբ գետը, որն անցնելով, հասան Վաննա⁴⁰⁸ կոչվող [վայրը]՝ Օղլուստի⁴⁰⁹ մոտ գտնվող երկրամասը: Տեսնելով վայրի ծայրատիճան պատասպարվածությունը (թիկունքից այն Դանուբ գետով էր պաշտպանված, առջևից ու կողքից՝ կլեյսուրներով և պոնտական ծովով), տիրեցին մերձակա սլավոնական ցեղերի, այսպես կոչված յոթ տոհմերի⁴¹⁰ վրա, Սևերներին⁴¹¹ բնակեցրին Բերեգաբ⁴¹² կոչվող կլեյսուրից սկսած մինչև գեպի արևելք ընկած շրջանները, իսկ դեպի հարավ-արևմուտք ձգվող շրջաններում՝ մինչև Ավարիա⁴¹³ մնացած յոթ հարկատու ցեղերին: Ժամանակի ընթացքում նրանք բազմացան և լկտիանալով սկսեցին հոռոմեական պետությանը պատկանող ամրոցների և վայրերի վրա հարձակումներ գործել և մարդկանց գերեզմարել: Կայսրը ստիպված նրանց հետ հաշտություն կնքեց, համաձայնվեց տարեկան պախտ վճարել՝ համոթ հոռոմայեցիների: Դա կատարվեց մեր բազում մեղքերի պատճառով: Հիբալի ապշեցուցիչ էր մոտ ու հեռու ժողովուրդների համար այն, որ և՛ արևելքում, և՛ արևմուտքում, և՛ հյուսիսում, և՛ հարավում բոլորին իրեն հպատակեցնողը, նորելուկ ու պիղծ մի ցեղից պարսվեց: Սակայն կարծելով, որ դա քրիստոնյաների համար աստծո նախախնամություն էր տեղի ունեցավ, ավետարանի խոսքերը լսելով, խաղաղություն հաստատեց: Նա մինչև իր վախճանը ոչ ոքի դեմ պատերազմ չմղեց, հիմնական ուշադրությունը բևեռելով իր նախապապ Հերակլիոս կայսեր և Կոստանդնուպոլսի

աթոռին անարժանորեն նստած շարափառ Սերգիոսի և Պյուրոսի՝ մեր Տիրոջ աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մեկ կամք և մեկ ներգործություն դավանողների օրոք բաժան բաժան եղած աստծո սուրբ եկեղեցիները միացնելուն: Ամենաքրիստոնյա կայսրը, ջանալով խորտակել սրանց շարափառությունը, Կոստանդնուպոլսում 289 եպիսկոպոսների ժողով գումարեց⁴¹⁴, որտեղ նախկին հինգ սուրբ և տիեզերական ժողովների որոշումները հաստատեց: Այդ նույն վեցերորդ սուրբ, ամենաճշմարիտ տիեզերական ժողովում, որը գլխավորում էին ինքը՝ ամենաբարեպաշտ Կոստանդին կայսրը և բարեպաշտ հոգևոր պետերը, հաստատվեց երկու կամքի և ներգործության մասին բարեպաշտ դավանանքը:

[A. M. 6172]

Արարների առաջնորդ Եզիդ: Իշխեց 3 տարի:

[Աշխարհի արարչագործության] 6172 թ.	[Քրիստոսի մարդկության] 672 թ.	[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 12-րդ տարին
[Արարների առաջնորդ Եզիդի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 3-րդ տարին	

Այդ տարի բարեպաշտ Կոստանդին կայսեր որոշմամբ Կոստանդնուպոլսում գումարվեց 289 եպիսկոպոսների և հայրերի սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովը:

[A. M. 6173]

Աշխարհի արարչագործության 6173 թ.	Քրիստոսի մարդկության 673 թ.		
Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր 17-ամյա թագավորության 13-րդ տարին	Արարների Եզիդի 3-ամյա իշխանության 2-րդ տարին	առաջնորդ իշխանության 6-ամյա աթոռակալության 4-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի 6-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարի Կոստանդինը իշխանությունից հեռացրեց իր եղբայրներ Հերակլիոսին և Տիրերիոսին, և իր որդի Հուստինիանոսի հետ միահեծան թագավորեց:

[A. M. 6174]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 14-րդ տարին	[Արարների առաջնորդ Եզիդի] 3-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 5-րդ տարին
---	--------------------------------------	--

Այդ տարի Պարսկաստանի վրա բռնատիրեց խաբերա Մուխտարը⁴¹⁵: Նա իրեն մարգարե էր անվանում: Արաբների մեջ հուզումներ առաջացան:

[A. M. 6175]

Արաբների առաջնորդ Մրվան⁴¹⁶: Իշխեց մեկ տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 15-րդ [Արաբների առաջնորդ Մրվանի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Գեորգ զորոս պատրիարքի] 6-րդ տարին տարին

Այդ տարի վախճանվեց Եզիզը: Էթրիբի արաբներն իրար անցան, ոտքի ելան և իրենց առաջնորդ ընտրեցին Ջուրբերի որդի ոմն Աբդալաչի⁴¹⁷: Փյունիկեի և Պաղեստինի [արաբները] հավաքվելով գալիս են Գամասկոս՝ մինչև Գաբթի, Պաղեստինի ամիրա Հասանի⁴¹⁸ մոտ: Նրանք աջակցություն ցուցաբերեցին Մրվանին և նրան առաջնորդ կարգեցին: Նա ամիրայացավ 9 ամիս: Նրա վախճանվելուց հետո իշխանությունը ժառանգեց նրա որդի Աբդալմեխիբը⁴¹⁹, որն ամիրայացավ 21 և կես տարի: Սա ձեռք զցելով ապստամբներին, մահապատժի ենթարկեց Ջուրբերի որդի Աբդալաչին և Գադախին:

[A. M. 6176]

Արաբների առաջնորդ Աբդալմեխիբ: Իշխեց 22 տարի:

Կոստանդնուպոլսի Քեոզորոս պատրիարքի երկրորդ աթոռակալություն⁴²⁰: Աթոռակալեց 3 տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 16-րդ [Արաբների առաջնորդ Աբդալմեխիբի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Քեոզորոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ասորիքում սաստիկ սով ու մահ տարածվեց եղավ: Աբդալմեխիբը տիրեց [արաբ] ժողովրդի վրա: Այդ պատճառով, որ մարդայիտները չիբանանի շրջանների վրա հարձակումներ էին գործում, ժանտախտն էլ չէր վերանում, նույն Աբդալմեխիբը կայսեր մոտ դեսպաններ ուղարկեց, խնդրելով նորոգել Մուավիայի օրոք կնքված հաշտությունը, հանձն առավ դարձյալ վճարել 365 հազար դահեկանը, տալ 365 ստրուկներին, ինչպես և 365 ազնվացեղ ձիեր:

[A. M. 6177]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 17-րդ [Արաբների առաջնորդ Աբդալմեխիբի] 2-րդ տարին [Կոստանդնուպոլսի Քեոզորոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի հանգչեց բարեպաշտ Կոստանդին կայսրը, իշխելով 17 տարի: Թագավորեց որդին՝ Հուստինիանոսը⁴²¹:

[Պետր է նշել, որ իզուր են դատարկաբանում ոմանք, ասելով, որ իբր վեցերորդ ժողովի զլիսավոր կանոնները ընդունվեցին [ժողովից] չորս տարի հետո: Ինչպես բոլոր հարցերում, այստեղ ևս նրանց կեղծիքը պարզ երևում է: Ճշգրիտ ժամանակագրական նշումը վկայում է, որ միակամականների դեմ վեցերորդ տիեզերական սուրբ ժողովի գումարման ճիշտ թվականը Հերակլիոսի թոռ Կոստանդինի թագավորության 12-րդ տարին է, աշխարհի արարչագործության 6172 թվականը, որ դրանից հետո Կոստանդինը թագավորեց ևս 5 տարի, որի վախճանվելուց հետո տասը տարի միահեծան թագավորեց նրա որդի Հուստինիանոսը: Հուստինիանոսի տապալումից հետո 3 տարի թագավորեց Լեոնտիոսը, Լեոնտիոսից հետո 7 տարի Տիբերիոս Ապսիմարոսը, ապա վերստին տապալված Հուստինիանոսը 6 տարի: Քթատ Հուստինիանոս կայսեր երկրորդ թագավորության 2-րդ տարում ընդունված պեղրետում հիշատակված են այս բոլորը: 3-րդ դեկրետի մեջ բառացի ասված է հետևյալը. «Կրկնամուսիներին, որոնք մինչև անցած հունվար ամսի 15-ը, ինդիկտիոնի անցած՝ 4-րդ տարին՝ 6199 թ. դեռևս այդ մեղքի մեջ են գտնվում և դրանից չեն ցանկանում հրաժարվել, որոշեցինք կանոնական կերպով կարգալույծ անել»: Եվ մի քիչ հետո. «Ուլբեր ձեռնադրությունից հետո նույնիսկ մեկ անգամ ապօրինի ամուսնանան, լինեն երեցներ, սարկավազներ կամ կիսասարկավազներ, նրանց կարճ ժամանակով զրկել սուրբ պաշտոն կատարելու իրավունքից և պատուհասել, որից հետո վերականգնել իրենց աստիճանին, բայց ոչ մի դեպքում առաջ չբաշել ավելի բարձր աստիճանի՝ անգամ եթե բացահայտ կերպով լուծել են իրենց ապօրինի ամուսնությունը»: Այսպիսով, վերոբերյալ ժամանակագրական նշումից պարզ երևում է, որ տիեզերական սուրբ ժողովից մինչև այս դեկրետի հրապարակումը անցել է 27 տարի: Կոստանդնուպոլսի տիեզերական սուրբ ժողովի ժամանակ պատրիարք էր Գեորգը, ընթանում էր նրա աթոռակալության 3-րդ տարին: Ժողովից հետո նա աթոռակալեց ևս 3 տարի, նրանից հետո Քեոզորոսը՝ 3 տարի, Պավղոսը՝ 7 տարի, Կալլինիկոսը՝ 12 տարի և Կյուրոսը՝ 2 տարի:

Սրանից ստացվում է, որ հիշյալ պատրիարքների աթոռակալության տարիների գումարը նույնպես կազմում է 27 տարի: Ընդունված ղեկրետի ժամանակից մինչև Ֆիլիպպիկոսի առաջին տարին կազմում է 5 տարի: Ֆիլիպպիկոսի թագավորության առաջին տարում կայացավ մուլեգին ժողովը՝ ընդդեմ վեցերորդ տիեզերական սուրբ ժողովի: Իր պատրիարքության 6-րդ տարում Կյուրոսը կարգալույծ արվեց, Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ Հովհաննեսը, Կրետի մետրոպոլիտ՝ Անդրեասը, Կյուզիկոսի մետրոպոլիտ՝ Գերմանոսը, որոնք իրենց ժամանակակից բոլոր [եպիսկոպոսների] հետ նզովեցին միակամականների դեմ գումարված տիեզերական սուրբ վեցերորդ ժողովը և ստորագրեցին այդ որոշման տակ: 3 տարի անց, երբ Հովհաննեսը վախճանվեց, Կյուզիկոսի [մետրոպոլիտ] Գերմանոսը դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարք, որը Առնի թագավորության 13-րդ տարին արտոբեց: Պատրիարք դարձավ Անաստասիոսը՝ 24 տարի, նրանից հետո Կոստանդինը՝ 12 տարի, Նիկետոսը՝ 14, Պավղոսը՝ 5, Տարասիոսը՝ 21, Նիկեփոսը՝ 8, Թեոդոտոսը՝ 6, Անտոնիոսը՝ 16 և Հովհաննես Լեկանոմանտիսը՝ 6 տարի և 1 ամիս]:

[A. M. 6178]

Աշխարհի արարչագործության 6178 թ. Փրիստոսի մարդկություն 678 թ.

Հոստանդնուպոլսի Զուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 1-ին տարին	Արարների առաջնորդ Արղալմելիբի 22-ամյա իշխանության 3-րդ տարին	Կոստանդնուպոլսի Քեոզրոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 3-րդ տարին
--	--	--

Այդ տարի Արղալմելիբը հաշտությունը հաստատելու համար Հուստինիանոսի մոտ ղեսպանություն ուղարկեց: Այն կնքվեց հետևյալ պայմաններով. կայսրը լուծարեի է ենթարկում Լիբանանի մարդախիտների զորաքանակը և արգելում նրանց ներխուժումները: Իսկ Արղալմելիբը հոստանդնուպոլսի է վճարում օրական հազար դահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ: Կիպրոսի, Հայաստանի և Իբերիայի հարկերը երկու կողմերը կիսում են հավասարապես⁴²²: Կայսրը Արղալմելիբի մոտ Պավղոս մագիստրիանոսին⁴²³ ուղարկեց համաձայնությունն ստորագրելու: Պայմանագիրը կնքվեց և դրա տակ դրվեցին վկաների ստորագրությունները: Մագիստրիանոսը պատիվների արժանանալուց հետո վերադարձավ: Կայսեր կարգնորոշումը 12 հազար մարդախիտները ետ կանչվեցին⁴²⁴,

որով նա անդամահատեց հոստանդնական [կայսրության] հզորությունը, քանզի Մոպսուեստիայից մինչև Չորրորդ Հայք՝ այժմ արաբների կողմից բնակեցված սահմանամերձ բաղաբները, ժամանակին, մարդախիտների արշավանքների պատճառով, անապահով էին ու անմարդաբնակ: Արղ, [մարդախիտների] վերացման պատճառով, Ռոմանիան արաբներից սոսկալի փորձանքներ կրեց, մինչև օրս էլ կրում է:

Նույն տարին Արղալմելիբը Պարսկաստան սուտ [մարդարե] և խոտվարար Մուխտարի դեմ Մուսավիայի եղբայր Զիադոսին⁴²⁵ ուղարկեց, որը սպանվեց Մուխտարի կողմից: Այդ բանը լսելով, Արղալմելիբն եկավ Միջագետք: Նրա դեմ Մայիդին ապստամբություն բարձրացրեց: Արղալմելիբը ետ եկավ, Մայիդին անձեռնմխելիության մասին երաշխիքներ տալով մտավ նրա կողմից գրավված Դամասկոսը, բայց այնուհետև սպանեց նրան: Իսկ Հուստինիանոսը շուրջ 16 տարեկան պատանի լինելով, անխոհեմաբար էր կառավարում երկիրը: Նա հոստանդնական զորքով Հայաստան ուղարկեց Լեոնտիոս զորավարին, որն այնտեղի սարակինոսներին չարդ ալով, երկիրն իրեն հպատակեցրեց, ինչպես նաև Իբերիան, Ալբանիան, Վրկանաց աշխարհը⁴²⁶ և Մարաստանը: Նա այդ երկրները հարկատու դարձնելով, կայսեր բազում գրամ ուղարկեց: Արղալմելիբը, իմանալով այդ մասին, գրավեց Կերկեսիոնը⁴²⁷ և իրեն ենթարկեց Թեոպոլիսը⁴²⁸:

[A. M. 6179]

Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարք⁴²⁹: Աթոռակալեց 7 տարի:

[Հոստանդնուպոլսի Զուստինիանոս կայսեր] 2-րդ տարին	[Արարների առաջնորդ Արղալմելիբի] 4-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 1-ին տարին
--	--	---

Այդ տարի Ասորիքում սով եղավ, որի պատճառով շատերն անցան Ռոմանիա: Կայսրը, գալով Հայաստան, այնտեղ ընդունեց Լիբանանի մարդախիտներին: Դրանով նա քանդեց մի պղնձե պարիսպ: Ապա նա վերացրեց բուլղարների հետ կնքված խաղաղությունը, խարխլեց իր հոր կարգադրությունները ու հաստատած կարգ ու կանոնը: Որոշելով հրպատակեցնել Բուլղարիան և Սկլավիանները⁴³⁰, նա հեծելազորին հրամայեց անցնել Թրակիա:

[A. M. 6180]

[Աշխարհի արարչագործութեան] 6180 թ.

[Քրիստոսի մարդկություն] 680 թ.

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 3-րդ տարին

[Արարների առաջնորդ Աբղալմելիքի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պապըղոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսն արշավեց Սկլավինիայի և Բուլղարիայի վրա և դիմադրություն ցուցաբերած բուլղարներին ետ մղեց: Արշավելով մինչև Քեսաղոնիկե, նա սկլավների հոծ բազմություններ և՛ զենքով, և՛ խաղաղ ճանապարհով հնազանդեցնելով, Աբիդոսի վրայով տարավ բռնակեցրեց Օպսիկիոնի⁴³¹ շրջանները: Վերադարձին, կլեյսուրի նեղ տեղում բուլղարները կարեցին նրա ճանապարհը, և նա, բազում զոհեր ու վիրավորներ տալով, հազիվ անցավ:

Նույն տարին Աբղելա Զուբերը⁴³² Մուխտարի դեմ ուղարկեց իր եղբայր Մուսաբոսին: Մարտում Մուխտարը պարտություն կրելով փախուստի դիմեց Ասորիք: Մուսաբոսը հետապնդեց նրան և հասնելով քապանեց: Իսկ Աբղալմելիքը արշավելով Մուսաբոսի դեմ, պարտության է մատնում նրան ու սպանում և ողջ Պարսկաստանն իրեն հպատակեցնում:

[A. M. 6181]

Աշխարհի արարչագործութեան 6181 թ.

Քրիստոսի մարդկություն 681 թ.

Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 4-րդ տարին

Արարների առաջնորդ Աբղալմելիքի 22-ամյա իշխանության 6-րդ տարին

Կոստանդնուպոլսի Պապըղոս պատրիարքի 7-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարի Աբղալմելիքը Մեքքա՝ Զուբեյրի⁴³³ դեմ իսլամին⁴³⁴ ուղարկեց, որը և սպանեց նրան այնտեղ: Իսլամին Աբղալմելիքին հպատակեցրեց ընդդիմացող երկիրը, կրակի տվեց [Զուբեյրի] կռատունը նրանց պաշտած կուռքի հետ միասին: Այդ պատճառով [Աբղալմելիքը] իսլամին Պարսկաստանի զորավար նշանակեց: Աբղալմելիքին հպատակվեց Պարսկաստանը, Միջագետքը և էֆրիքի մեծ Արաբիան: Նրանց ներքեղալին կոիվներն ահա այսպիսով վերջ գտան:

[A. M. 6182]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 5-րդ տարին

[Արարների առաջնորդ Աբղալմելիքի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պապըղոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի արաբական պետության մեջ վերջ գտան, դադարեցին բոլոր պատերազմները: Աբղալմելիքը բոլորին իրեն հպատակեցնելով, խաղաղվեց:

[A. M. 6183]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 6-րդ տարին

[Արարների առաջնորդ Աբղալմելիքի] 8-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պապըղոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսն անխոհեմաբար վերացրեց Աբղալմելիքի հետ ունեցած խաղաղությունը: Նա ջանաց Կիպրոս կղզու [բնակչությունը] արտագաղթեցնել, բացի այդ նա ընդունեց Աբղալմելիքի նոր կտրած, նախկինում շրջանառության մեջ չեղած դրամը: Բազում կիպրացիներ նավարկելիս ջրասույզ եղան, հիվանդություններից կոտորվեցին, իսկ մնացածները Կիպրոս վերադարձան⁴³⁵: Աբղալմելիքը, լսելով այդ մասին, սաղալակական կեղծավորությամբ կոչ էր անում չվերացրած իսլամները, ընդունել իր դրամը⁴³⁶, այնպես ինչպես արաբները, թեև շրջանառության մեջ չեն ընդունում հոռոմեական դրամը, ընդունում են այն որպես քաշով մետաղ: Արաբների նոր դրամ կտրելուց հոռոմայեցիները ոչ մի վնաս չեն կրում: Կայսրը նրա աղերսը վախի նշան համարեց, չհասկացավ, որ նրանց նպատակը մարդայիտների զորաբանակի լուծարքն էր, խաղաղությունը վերացնելու հարմար առիթի որոնումը: Ինչ որ եղավ: Աբղալմելիքը կարգադրեց Մեքքայի տաճարը կառուցել, որի համար ուղեց օգտագործել սուրբ Գեթսեմանիի⁴³⁷ սյուները: Գեներալները լուրջությամբ Մանսուրի որդին⁴³⁸, մի շատ քրիստոսասեր, կոնի լուրջությամբ Մանսուրի որդին, Պաղեստինի քրիստոնյաների առաջնորդը, ոչ պակաս քրիստոսասեր Պատրիկիոսը, մականունը Կլավսյուս, խնդրեցին այդ քայլին չդիմի, խոստացան դիմել և համոզել Հուստինիանոսին այդ սյուների փոխարեն այլ սյուներ ուղարկել: Ինչ որ եղավ:

[A. M. 6184]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 7-րդ տարին	[Արարների առաջնորդ Արզալմեխի] 9-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պալատի Գոսպատրիարքի] 6-րդ տարին
---	--	--

Այդ տարի Հուստինիանոսը իր գաղթեցրած սկլավների մեջ ընտրություն կատարեց, 30 հազար հոգու ղինվորագրեց⁴³⁹, զինեց, անվանեց «արտակարգ զորք»⁴⁴⁰ և հրամանատար նշանակեց Նեվուլոս⁴⁴¹ անունով մեկին: Նրանց վրա հույս զնելով, նա արաբներին գրեց, թե շեղյալ է հայտարարում հաշտության պայմանագիրը: Այդ «արտակարգ զորքն» աննելով, ինչպես և ողջ հեծելազորը, կայսրը շարժվեց դեպի ժովափնյա Սեբաստուպոլիսը⁴⁴²: Արաբները ձևացնում էին, թե դեմ են խաղաղության վերացմանը, որ իրենց այդ բանին կայսրն է մղում, նրա հեղհեղուկությունը, և ղինվելով, իրենք ևս եկան Սեբաստուպոլիս: Վկայակոչելով երկուսի միջև երդումներով հաստատված պայմանագիրը, նրանք կոչ էին անում կայսեր շխախտել այն, քանզի աստված կղատի և կպատահասի մեզափորձներին: Այն պատճառով, որ կայսրը այդ խոսքերին ականջ անգամ չկախեց, ընդհակառակը, փութաց մարտի, արաբները հաշտության պայմանագրի բնագրով [գլանափաթեթը] բացելով, գրոշակի փոխարեն երկար ձողի ծայրին կապեցին և Մոհամմեդ⁴⁴³ զորավարի գլխավորությամբ հոռոմայեցիների վրա հարձակվեցին ու մարտ տվեցին: Սկզբում արաբները պարտություն էին կրում: Մոհամմեդը հոռոմայեցիների դաշնակից սկլավների զորավարի հետ գաղտնի բանակցեց, նրան սկեղորմով լի մի կապարձ ուղարկեց, բազում խոստումներ տալով խաբեց, համոզեց 20 հազար սկլավներով իր կողմն անցնել և դա ահա կանխորոշեց հոռոմայեցիների փախուստը: Դրա վրա Հուստինիանոսը նիկոմեդիայի ծոցի մոտ գտնվող Լեկատե կոչվող զառիթափ և ժովափնյա վայրում նրանց մնացածներին, կանանցով և երեխաներով հանդերձ, սրակոտոր արեց⁴⁴⁴:

[A. M. 6185]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 8-րդ տարին	[Արարների առաջնորդ Արզալմեխի] 10-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պալատի Գոսպատրիարքի] 7-րդ տարին
---	---	--

Այդ տարի Հայաստանի պատրիկ Սմբատը⁴⁴⁵, իմանալով հոռոմայեցիների պարտության մասին, Հայաստանը արաբներին հանձնեց: Նրանց ենթարկվեց նաև ներքին Պարսկաստանը՝ Խորասան կոչվածը, ուր

Սարինոս անունով մի բախտախնդիր հանդես եկավ և սպանեց բազմաթիվ արաբների: Քիչ էր մնացել, որ նա գետահեղձ աներ հենց Խազանին: Այսուհետև հազարացիները առավել ևս լիտիացած, ավարառեցին Ռոմանիան:

[A. M. 6186]

Աշխարհի սրբաշագործություն 6186 թ.	Քրիստոսի մարդկություն 686 թ.	Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 9-րդ տարին	Արարների առաջնորդ Արզալմեխի 22-ամյա իշխանության 11-րդ տարին	Կոստանդնուպոլսի Կալիսիկոս պատրիարքի ⁴⁴⁶ 12-ամյա ավտոկալուսիայի 1-ին տարին
-----------------------------------	------------------------------	---	---	--

Այդ տարի, հյուպերբերետայոս⁴⁴⁷ ամսի 5-ին, շաբաթվա 1-ին օրը, ժամը 3-ին արևի խավարում եղավ, որով մի քանի պայծառ աստղ երևաց: Մոհամմեդը, իր հետ վերցնելով գաղթական սկլավներին՝ որպես Ռոմանիային քաջատեղյակ մարդկանց, Ռոմանիայի վրա արշավեց և բազում մարդկանց գերեվարեց: Ասորիքում խոզերին բնաջնջեցին: Իսկ Հուստինիանոսն զբաղված էր պալատական շենքերի կառուցմամբ: Նա կառուցեց Հուստինիանոսի տրիկլինոն⁴⁴⁸ կոչվածը, ինչպես և պալատի շրջապարիսպը: Նա շինարարության պետ⁴⁴⁹, տեր ու տիրական նշանակեց իր սակեկարիոս և ներքինապետ Ստեփանոս Պարսկին, մի շատ արյունարբու և դաժան մարդու, որն անդթորեն, առանց հազնալու ձաղկում էր բանվորներին, անգամ քարկոծում նրանց և նրանց վերակացուններին: Երբ կայսրը [քաղաքից] բացակայում էր, այդ վայրի գազանը հանդգնեց անկախը [քաղաքից] բացակայում էր, այդ վայրի գազանը հանդգնեց անկախը նրա մոտը՝ ավզուստա Անաստասիային կաշեփոկով մտրակահարել, կարծես նա երեխա լիներ: Նա շատ վատ էր վերաբերվում նաև քաղաքի ողջ բնակչությանը, որի պատճառով կայսրը ատելի դարձավ: [Կայսրը] գեներալիտի լոգոթետի⁴⁵⁰ պաշտոնում նշանակեց ոմն արքա, անունը Թեոդորոս, որն անցյալում անապատական էր Քրակիայի Ստեփանի⁴⁵¹ շրջանում: Սա ևս սարսափելի ու շատ սանձարձակ մարդ էր, որ պետության բազում իշխանավորների, երևելի մարդկանց, ոչ միայն պաշտոնյաների, այլև քաղաքի բնակիչների, առանց պատճառի, առանց այլեայլի, սուղանում էր, կաշառք պահանջում, զրավում ունեցվածքը, պարանից կախում և հարգով մխարկում: [Քաղաքի] էպարքոսն էլ կայսերական հրամանով բազում մարդկանց երկար ժամանակով բանտ նետեց: Այդ բոլորը ավելի ևս բորբոքեցին ժողովրդի ատելությունն ընդդեմ կայսեր:

Կայսրը Կալլիստիկոս պատրիարքից պահանջում էր, որ նա աղոթք ասի պալատի մոտ գտնվող մետրոպոլիտի սուրբ աստվածածնի եկեղեցին քանդելու համար: Կայսրն ուզում էր եկեղեցու տեղում ջրավազան կառուցել և վենետիկների դեմոսի տրիբունաներ⁴⁵² կայսեր այդտեղ ընդունելու համար: Բայց պատրիարքն ասաց. «Եկեղեցու կառուցման համար աղոթք ունենք, բայց եկեղեցի քանդելու վերաբերյալ մեզ աղոթք չեն ավանդել»: Երբ կայսրը ճշնում գործադրեց՝ ամեն կերպ պահանջելով աղոթքը, պատրիարքն ասաց. «Փառք միշտ համբերող աստծուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»: Այդ խոսքերը լսելով, քանդեցին եկեղեցին և ջրավազանը կառուցեցին, իսկ մետրոպոլիտի եկեղեցին շինեցին Պետրիոնում⁴⁵³:

[A. M. 6187]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 10-րդ [Արարների առաջնորդ Արզամեյիթի] 12-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կալիստիկոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Մոհամմեդն արշավեց Չորրորդ Հայքի վրա և բազում գերիներով վերադարձավ⁴⁵⁴:

Նույն տարին Հուստինիանոսը գահընկեց արվեց հետևյալ կերպ: Նա պատրիկ և զորավար Ստեփանոսին, մականունը Ռուսիոս, հրաման էր տվել գիշերով Կոստանդնուպոլսի դեմոսին ջարդ տա⁴⁵⁵ սկսելով պատրիարքից: Լեոնտիոս պատրիկը, որը նախկինում Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարն էր եղել, հաջող պատերազմ մղել, նաև երեք տարի բանտ նստել, հանկարծ մեղադրվեց և ետ կանչվելով, Հելլադա [բանակաթեմի]⁴⁵⁶ զորավար նշանակվեց: Նրան հրաման տրվեց երեք դրոմոններով նույն օրն իսկ հեռանալ քաղաքից: Նույն գիշերը Սոֆիայի Հուլիանոսյան նավահանգստում⁴⁵⁷, Մավրոսի⁴⁵⁸ մոտ, նա պատրաստվում էր քաղաքից նավել և հրածեշտ էր տալիս իր մոտ եկած ընկերներին, որոնց մեջ էին նրա մտերիմներ Կալիստրատոսի վանքի վանական և աստղաբաշխ Պավլոսը, նախկին կլեյսուրարի Գրիգոր Կապադովկացին, որն հետագայում վանական դարձավ և Ֆլորոսի [վանքի] վանահայր: Երբ Լեոնտիոսը բանտում էր, նրանք շատ հաճախ էին այցելում նրան և վստահեցնում, թե նա հռոմայեցիների կայսր է դառնալու: Լեոնտիոսն ասաց նրանց. «Գուր ինձ բանտում վստահեցնում էիք, թե կայսր կդառնամ: Արդ, ես այժմ շարաշար հոգիս եմ ավանդելու: Չէ՞ որ ամեն րոպե ես մահվան եմ սպասում»: Նրանք ասացին. «Թավական է

դու չզլանաս, իսկ դա անպայման կիրականանա: Գու միայն լսիր մեր խոսքը և հետևիր մեզ»: Լեոնտիոսը, առնելով իր մարդկանց և ինչքան զենք որ ուներ, շատ ծածուկ պրետորիոն⁴⁵⁹ բարձրացավ: Նրանք թակելով հարբասն, ասացին, թե կայսրն է եկել այնտեղի ոմանց վերաբերյալ կարգադրություններ անելու: Երբ ժամանակվա հյուպարքոսին⁴⁶⁰ իմաց տրվեց և նա շտապ գալով բացեց դարբասները, Լեոնտիոսը բռնեց նրան, ապտակեց և ձեռքն ու ոտքը շղթայեց: Լեոնտիոսը մտավ բանտ, կապանքներից ազատեց բազում ազնվական մարդկանց, որոնցից շատերը գինվորականներ էին՝ վեց-ութ տարի բանտարկված, և զինելով, նրանց հետ դուրս եկավ ֆորում⁴⁶¹, գոչելով. «Ով քրիստոնյա է, թող սուրբ Սոֆիա գնա»: Նա բոլոր ռեզիդենտները⁴⁶² մարդիկ ուղարկեց, հրամայելով նույն բանը հայտարարել: Քաղաքի բնակչությունն իրար անցած փութաց դեպի եկեղեցու ջրավազանը, իսկ ինքը իր երկու վանական ընկերների և բանտից ազատված մի քանի հայտնի մարդկանց ուղեկցությամբ բարձրացավ պատրիարքի մոտ պատրիարքարան: Նրան ևս նա գտավ շատ շփոթված՝ Ստեփանոս Ռուսիոսի ստացած հրամանի պատճառով, համոզեց իջնել ջրավազանը և հայտարարել. «Հենց սա է Տիրոջ ծագեցրած օրը»: Ողջ բազմությունն աղաղակեց. «Փորփրվեն Հուստինիանոսի ոսկորները»⁴⁶³: Համայն ժողովուրդը խուժեց դեպի ձիարշավարան: Երբ լույսը ծագեց, Հուստինիանոսին սֆենդոնեի⁴⁶⁴ միջով բերեցին ձիարշավարան, քիթն ու լեզուն կտրեցին և Խերսոն⁴⁶⁵ քաղաքներ: Ամբոխը ձերբակալեց գեներալներ լոգոթետ վանական Թեոդոտոսին և սակելարիոս Ստեփանոս Պարսկին, նրանց ոտքերը չվաննեքով կապեց և քարշ տվեց Մեսս պողոտայով, տարավ Յլի հրապարակը⁴⁶⁶ և կրակի տվեց, որից հետո Լեոնտիոսին կայսր հռչակեց⁴⁶⁷:

[A. M. 6188]

Հռոմայեցիների կայսր Լեոնտիոս: Թագավորեց 3 տարի:

[Հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր] 1-ին տարին [Արարների առաջնորդ Արզամեյիթի] 13-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կալիստիոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի գահ բարձրացավ Լեոնտիոսը և հարևանների հետ խաղաղ մնաց:

[A. M. 6189]

[Հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր] 2-րդ տարին [Արարների առաջնորդ Արզամեյիթի] 14-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կալիստիոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Վալիդն⁴⁶⁸ արշավեց Ռոմանիայի վրա և բազում գերի-
ներով վերադարձավ: Ապստամբեց Լազիկայի Սերգիոս պատրիկը, Բար-
նուկիոսի որդին, և Լազիկան արաբներին հպատակեցրեց:

[A. M. 6190]

[Աշխարհի արարչագոր- [Քրիստոսի մարդեղու- [Հոռոմայեցիների Լեոն-
ծության] 6190 թ. թյան] 690 թ. տիրոս կայսեր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ [Կոստանդնուպոլսի Կալ-
Աբդամեւիւրի] 15-րդ տարին լինիկոս պատրիարքի] 5-րդ
տարին

Այդ տարի արաբներն արշավեցին Աֆրիկայի⁴⁶⁹ վրա, առան այն և
տեղում իրենց զորքից կայազոր հաստատեցին: Լեոնտիոսը, իմանալով
այդ մասին, մի կարող մարդու, Հովհաննես պատրիկին հոռոմեական
ողջ նավատորմիղով այնտեղ ուղարկեց: Հասնելով Կարթագեն, նա պա-
տերազմով բացել տվեց այնտեղի նավահանգիստը [փակող] շղթան,
թշնամիներին փախուստի մատնեց, երկրից վճնդեց և ազատագրեց Աֆ-
րիկայի բոլոր բերդերը: Տեղում սեփական կայազոր թողեց, կատար-
վածի մասին հայտնեց կայսեր և, սպասելով նրա կարգադրութուննե-
րին, տեղում ձմեռեց: Ամիրապետը⁴⁷⁰, իմանալով այդ մասին, նրանց
դեմ շատ ավելի հզոր ու մեծ նավատորմիղ ուղարկեց, մարտ տալով
վերոհիշյալ Հովհաննեսին, իր նավատորմիղով հանդերձ նավահանգըս-
տից քշեց, [քաղաքը] օղակի մեջ առավ, իսկ ինքն էլ դրսում բանակեց:
Վերոհիշյալ [Հովհաննեսը] ճամփա ընկավ դեպի Ռոմանիա, կայսրից
ավելի մեծ ուժ ստանալու մտադրությամբ: Դեպի կայսրը գնալու ճա-
նապարհին նա հասավ Կրետե: Զորքը, սակայն, սեփական հրամանա-
տարների ազդեցության տակ, չէր ուզում կայսեր մոտ վերադառնալ
(նրան վախն ու ամոթն էր համակել) և նա վճիռ է կայացնում. կայսեր
զահրնկեց հայտարարում և Կորիկոսում նստող Կիբլուրեոտների [բա-
նակաթեմի]⁴⁷¹ զրուցար Ապսիմարոսին կայսր հռչակում՝ Տիրեբրոս
վերանվանելով, Երբ Լեոնտիոսը Կոստանդնուպոլսի նեոբսիոն⁴⁷² նա-
վահանգիստն էր մաքրում, քաղաքում ժանտախտ բռնկվեց և շուրս ամս-
վա ընթացքում բազում կյանքեր խլեց: Ապսիմարոսը իր նավատորմի-
ղով տեղ հասավ և խարիսխ գցեց Սիկեում՝ քաղաքի դիմացի ափը: Որոշ
ժամանակ քաղաքացիները չէին ուզում Լեոնտիոսին դավել, բայց դա-
վեցին Վլախեոնայի անմարտկոց պարիսպը պահպանող դրսեցի հրա-

մանատարները, որոնց՝ սարսափելի երդումներով սուրբ սեղանից վերց-
րել և տվել էին ցամաքային պարսպի բանակիները: Ահա սրանք նենգա-
բար հանձնեցին քաղաքը: Մովսիսն հետևակը, մտնելով քաղաքացիների
տները, կողոպտեց նրանց: Ապսիմարոսը կտրեց Լեոնտիոսի բիթը և հը-
րամայեց նրան արգելափակել Դեմատոսի վանքում⁴⁷³, իսկ նրա իշ-
խաններին ու մտերիմներին, որպես նրա հետ մինչև մահ գնալու ուխ-
տած, գանահարեց, բռնագրավեց նրանց ունեցվածքը և քսորեց: Իսկ
իր հարազատ եղբայր Հերակլիոսին, որպես շատ կարող մարդու, դրսի
հեծելազորի գլխավոր հրամանատար նշանակելով, Կապադովկիայի և
կիլիստրների կողմերն ուղարկեց՝ թշնամիների վրա հսկելու և նրանց
հետևելու:

[A. M. 6191]

Աշխարհի արարչագոր- Քրիստոսի մարդեղու-
ծության 6191 թ. թյան 691 թ.
Հոռոմայեցիների Ապսի- Արաբների առաջնորդ Կոստանդնուպոլսի Կալ-
մարոս կայսեր 7-ամյա Աբդամեւիւրի 22-ամյա իշ- լինիկոս պատրիարքի 12-
թագավորության 1-ին տա- խանության 16-րդ տարին աթոռակալության
րին 6-րդ տարին

Այդ տարի թագավորությանը տիրացավ Ապսիմարոսը⁴⁷⁴: Պարս-
կաստանում ապստամբություն բարձրացրեց Աբդեռահմանը, որը տիրեց
երկրին և Խազանին⁴⁷⁵ այնտեղից հալածական արեց:

[A. M. 6192]

[Հոռոմայեցիների Ապսի- [Արաբների առաջնորդ [Կոստանդնուպոլսի Կալ-
մարոս կայսեր] 2-րդ տարին Աբդամեւիւրի] 17-րդ տարին լինիկոս պատրիարքի] 7-րդ
տարին

Այդ տարի սաստիկ մահ տարածած եղավ: Մոհամմեդը արաբական
մեծաթիվ զորքով Աբդեռահմանի դեմ արշավեց և, գրավելով Պարս-
կաստանը, միացավ Խազանին: Նրանք պատերազմելով Աբդեռահմանի
դեմ, սպանեցին նրան և Պարսկաստանը Խազանին վերադարձրին: Իսկ
հոռոմայեցիներն արշավեցին Ասորիքի վրա, եկան մինչև Սամոսատ,
ասպատակեցին մերձակա շրջանները, շատերին կոտորեցին, ինչպես
պատմում են՝ 200 հազար արաբ: Նրանք մեծ ավարով և բազում արտը
գերիներով վերադարձան, նրանց մեջ անշափ մեծ սարսափ տարա-
ծելով:

[A. M. 6193]

[Հոռոմայեցիների Ապսի- մարոս կայսեր] 3-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգամեիբի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կալ- լինիկոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի Արգելան⁴⁷⁶ Ռոմանիայի վրա արշավեց, պաշարեց Տա- րանտան, բայց հաջողութուն չունենալով, վերադարձավ ու կառուցեց Մոպսուլեստիան, որտեղ և կայսզոր հաստատեց:

[A. M. 6194]

[Հոռոմայեցիների Ապսի- մարոս կայսեր] 4-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգամեիբի] 19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կալ- լինիկոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի Վահանը, մականունը Հեպտադեմոն⁴⁷⁷, Չորրորդ Հայքը արաբներին հպատակեցրեց, իսկ Ապսիմարոսը Նիկեիոր պատրիկի որ- դի Ֆիլիպպիկոսին, որպես թագավորելու ցնորքներով տարված, Կեֆա- լոնիա արտոբեց: Նա պատմում էր, թե երազում արժիվը իր գլխին ստվեր էր անում: Կայսրը, լսելով դա, նրան իսկույն արտոբեց:

[A. M. 6195]

[Հոռոմայեցիների Ապսի- մարոս կայսեր] 5-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգամեիբի] 20-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կալ- լինիկոս պատրիարքի] 10- րդ տարին

Այդ տարի հայոց նախարարները⁴⁷⁸ սարակինոսների դեմ ապստամ- բեցին և Հայաստանում եղած սարակինոսներին կոտորեցին: Նրանք հապճեպ Ապսիմարոսին դիմեցին և հոռոմայեցիներին իրենց երկիրը բերեցին: Մոհամեդը, արշավելով նրանց դեմ, շատերին կոտորեց, Հայաստանը սարակինոսներին հպատակեցրեց, իսկ հայոց մեծամեծնե- րին մի տեղ հավաքելով, ողջակեզ արեց⁴⁷⁹: Նույն այդ ժամանակ Ազա- րը տասը հազարանոց զորքով Կիլիկիայի վրա արշավեց: Կայսեր եղ- բայր Հերակլիոսը հանդիպելով նրանց, շատերին ջարդ տվեց, իսկ մնա- ցածներին շղթայակապ կայսեր ուղարկեց:

[A. M. 6196]

[Հոռոմայեցիների Ապսի- մարոս կայսեր] 6-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգամեիբի] 21-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կալ- լինիկոս պատրիարքի] 11- րդ տարին

Այդ տարի Խունեիի որդի Եզիզը Կիլիկիայի վրա արշավեց: Կայսեր եղբայր Հերակլիոսը պաշարեց և զրավեց Սիս բերդը⁴⁸⁰, [Եզիզին] մարտ տվեց և սպանեց տասներկու հազար արաբ: Հուստինիանոսը, որ Խերսոնոսում էր մնում, հայտարարում էր, թե ինքը վերստին է թագավո- րելու: Տեղի բնակիչները, վախենալով կայսրից, որոշեցին կամ սպանել Հուստինիանոսին, կամ էլ բռնել և կայսեր ուղարկել: Հուստինիանոսը, իմանալով դա, կարողացավ ճողոպրել և, հասնելով Գարաս⁴⁸¹, խնդրեց հանդիպել խազարների խաբանին⁴⁸²: Վերջինս, իմանալով այդ մասին, Հուստինիանոսին փառք ու պատվով ընդունեց և իր հարազատ քրոջ՝ Թեոդորային⁴⁸³ նրան կնության տվեց: Փոքր անց խաբանի թույլտվու- թյամբ նա իջավ Ֆանագորիա⁴⁸⁴ և Թեոդորայի հետ այնտեղ հաստատ- վեց: Ապսիմարոսը, տեղեկանալով այդ մասին, գիմեց խաբանին, բա- զում նվերներ խոստացավ, եթե վերջինս Հուստինիանոսին կենդանի, կամ ծայրահեղ դեպքում նրա գլուխը, իրեն ուղարկի: Խաբանը ընդառաջ զնաց նրա խնդիրքին և Հուստինիանոսի մոտ թիկնապահներ ուղարկեց, որոնք իբրև թե նրան պաշտպանելու էին իր հայրենակիցների դավերից: Նա հանձնարարեց տեղում գտնվող իր ներկայացուցիչ Պապացիսին և Բոսպորի արխոնտ Բալզիցիսին⁴⁸⁴ իր կարգադրությունն ստանալուն պես սպանեն Հուստինիանոսին: Խաբանի մի ծառան սակայն Թեոդորա- յին տեղյակ պահեց, այդ մասին իմացավ և Հուստինիանոսը, որը հրա- վիրելով վերոհիշյալ Պապացիսին մասնավոր խոսակցության, նրան աղեղի լարով խեղդամահ արեց, ինչպես և Բոսպորի արխոնտ Բալզիցի- սին: Այնուհետև նա փութանակի Թեոդորային հազարիա ուղարկեց, իսկ ինքը Ֆանագորիայից ծածուկ փախչելով, իջավ Տոմիս⁴⁸⁵: Չկնորսական սարբին մի նավակ գտնելով, մտավ մեջը և նավարկելով Ասադի⁴⁸⁶ ա- փով եկավ մինչև Խերսոնի մոտ գտնվող Սյումբուրոնը: Նա զազտնի մարդ ուղարկեց Խերսոն և իր մոտ կանչեց Վարադբակուրին⁴⁸⁷, նրա եղ- բոր, նաև Սալիբասին, Ստեփանոսին, Մորոպավղոսին և Թեոփիլոսին: Ահա սրանց հետ նա նավ նստեց և անցավ Խերսոնի փարոսը, ապա նեկ- րոպպին⁴⁸⁸, Դանապրի և Դանաստրի գետաբերանը: Փոթորկի հանդի- պելով, բոլորն էլ հուսաբեկ եղան: Հուստինիանոսի մտերիմ Միա- կեսն⁴⁸⁹ ասաց նրան. «Ահա, տեր, մենք կորած ենք, փրկվելու համար աստծուն ուխտիր, որ եթե նա վերադարձնի քեզ քո թագավորութունը, դու քո և ոչ մի թշնամուց վրեժխնդիր չես լինելու»: Նա զայրացած պա- տասխանեց. «Եթե նրանցից որևէ մեկին խնայեմ, թող աստված ինձ այստեղ ջրասույզ անի»: Նա փոթորկից անվնաս դուրս գալով, մտավ Դանուբ գետը: Նա Ստեփանոսին Բուլղարիայի տեր Տերվելիսի⁴⁹⁰ մոտ

ուղարկեց՝ իր պապենական թագավորութիւնը տիրանալու համար օգնութիւն խնդրելու, խոստանալով նրան տալ բազում նվերներ, նաև իր դստեր՝ կնութիւնը՝ Տերվելիսը նրան երգվեց կատարելու հնազանդութիւնն և աջակցութիւն, պատվով ընդունեց Հուստինիանոսին, ապա ոտքի հանեց իրեն հպատակ բուլղար և սկլավ ժողովուրդը և հաջորդ տարի զենքերն առած շարժվեցին զնպի թագավորանիստ քաղաքը:

[A. M. 6197]

Աշխարհի արարչագործութեան 6197 թ. Քրիստոսի մարդեղութեան 697 թ.

Հոռոմայեցիների Ապսիմարոս կայսեր 7-ամյա թագավորութեան 7-րդ տարին Արարների Արղամելիքի 22-ամյա իշխանութեան 22-րդ տարին Կոստանդնուպոլսի Կալիսիկոս պատրիարքի 12-ամյա աթոռակալութեան 12-րդ տարին

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Աբդալմելիքը: Իշխեց նրա որդի Վալիդը⁴⁹¹:

Նույն տարին Հուստինիանոսը Տերվելիսի և նրան դաշնակցած բուլղարների հետ հասավ թագավորանիստ քաղաքը և բանակեց Խարսիոսի դարբասից⁴⁹² սկսած մինչև Վլախեոնա: Նրանք երեք օր դիմում էին քաղաքի բնակիչներին, բայց նրանցից հայհոյանք էին լսում, նրանց հետ խոսել անգամ չէին ուզում: Հուստինիանոսը մի քանի հայրենակիցներով, առանց մարտ տալու, ստորգետնյա ջրմուղի միջով անցավ քաղաք և հեղաշրջման խուճապ ստեղծելով, տիրացավ քաղաքին: Նա կարճ ժամանակով հաստատվեց Վլախեոնայի պալատում:

[A. M. 6198]

Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր երկրորդ թագավորութիւնը⁴⁹³: Իշխեց 6 տարի:

Արաբների առաջնորդ Վալիդ: Իշխեց 9 տարի: Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարք⁴⁹⁴: Աթոռակալեց 6 տարի:

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 1-ին տարին [Արաբների առաջնորդ Վալիդի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Հուստինիանոսը վերստին տիրացավ գահին, իսկ Տերվելիսին, բազում նվերներով, թագավորական սպասքներով, խաղաղու-

թյամբ ետ ուղարկեց⁴⁹⁵: Ապսիմարոսը քաղաքը լքելով, փախավ Ապսիմոնիաս⁴⁹⁶: Նրան հետապնդեցին, բռնեցին և Հուստինիանոսի մոտ բերեցին: Հերակլիոսին էլ Թրակիայից շղթայակապ բերեցին, իրեն դաշնակցած բոլոր արխոնտների հետ միասին: Հուստինիանոսը բոլորին պարսպի վրա կախեց: Նրա կարգադրութեամբ բովանդակ միջերկրայեքում⁴⁹⁷ նրանց կողմնակիցներից շատերին բռնեցին և, մեղավոր թե անմեղ, նույնպես կոտորեցին: Կայսրը Ապսիմարոսին և Լեոնտիոսին շրջմեղ, նույնպես կոտորեցին: Կայսրը Ապսիմարոսին և Լեոնտիոսին մրցում-թայակապ ամբողջ քաղաքով մեկ ծանակեց: Չիարշավական մրցումների ժամանակ, երբ Հուստինիանոսը բազմած էր իր գահին, նրանց քարշ տվեցին և գցեցին նրա ոտքերը: Հուստինիանոսը ոտքը դրեց նըրանց պարանոցին և այդպես պահեց մինչև ձիարշավի առաջին շրջանի ավարտը: Դեմոսը դռնեց. «Դու իժի և քարբի վրա կոխեցիր, առում ու վիշապ տրորեցիր»⁴⁹⁸: Հուստինիանոսը նրանց ուղարկեց Կյուլենգիոն⁴⁹⁹, ուր և գլխատեց: Նա Կալիսիկոս պատրիարքին կուրացրեց և Հոռոմապոսից, պատրիարքական աթոռին նստեցրեց Ամաստրիա կղզու⁵⁰⁰ անապատական Կյուրոսին, քանզի նա կանխագուշակել էր իր երկրորդ թագավորութեան մասին: Նա անթիվ, ահահամար քաղաքական ու զինվորական զործիչների կոտորեց, շատերին պարկերի մեջ գցելով ծովը նետեց և դառն մահվան արժանացրեց, ուրիշներին ճաշի կամ ընթրիքի հրավիրեց, որի ավարտից հետո ոմանց կախեց, ոմանց էլ սրակոտոր արեց: Բորեց, որի ավարտից համակեց: Այնուհետև Խաղաբիայից իր կնոջ բերելու համար տորմիդ ուղարկեց, բայց ճանապարհին բազում նավեր լու համար տորմիդ ուղարկեց, բայց ճանապարհին բազում նավեր լու համար տորմիդ հանդերձ ջրասույզ եղան: Խաբանը, իմանալով այդ մարդկանցով հանդերձ ջրասույզ եղան: Խաբանը, իմանալով այդ մասին, հայտնեց նրան. «Հիմար, չէի՞ր կարող կնոջդ տանելու համար երկար ծով երեք նավ ուղարկել և շունչացնել այդքան մարդկանց: Գուցե կու կամ երեք նավ ուղարկել և շունչացնել այդքան մարդկանց: Գուցե կարծում ես, որ կնոջդ էլ պիտի պատերազմով առնես: Քեզ որդի է ծնվել, մարդ ուղարկիր, երկուսին էլ տար»: Հուստինիանոսն ուղարկեց Թեոփիլակտոս կուբեկուլարիոսին և բերել տվեց Թեոփորային և նրա որդի Տիբերիոսին, որոնց թագադրեց: Նրանք իր հետ թագավորեցին:

[A. M. 6199]

Երուսաղեմի Հովհաննես պատրիարք⁵⁰¹: Աթոռակալեց երեսուն տարի:

ԹԵՈՓՈՒՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 2-րդ տարին [Արարների առաջնորդ Վալիդի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 2-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի թշվառական Վալիդը, քրիստոնյաների հանդեպ նախանձով տարված, հափշտակեց Դամասկոսի ամենասուրբ կաթողիկե եկեղեցին. տաճարը շատ էր գեղեցիկ: Նա կարգադրեց պետական հաշվեմատյանները հունարեն չկազմել, այլ արաբերեն, բացառյալ թվանշանները, քանզի նրանց տառերով⁵⁰² անհնարին է գրել միանիշ, երկանիշ, եռանիշ թվեր կամ ութ ու կես, կամ երեք: Այդ է պատճառը, որ մինչև օրս նրանք քրիստոնյա նոտարներ են պահում:

[A. M. 6200]

Աշխարհի արարչագործության 6200 թ. Քրիստոսի մարդեղության 700 թ. Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 6-ամյա թագավորության 3-րդ տարին

Արարների առաջնորդ Վալիդի 9-ամյա իշխանության 3-րդ տարին Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի 6-ամյա պաթոակալության 3-րդ տարին Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա պաթոակալության 3-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսը վերացրեց հռոմայեցիների և բուլղարների միջև կնքված հաշտության պայմանագիրը. հեծելազորը Թրակիա անցկացնելով և նավատորմիղը մարտական վիճակի բերելով, նա բուլղարների և Տերվելիսի վրա հարձակվեց: Հասնելով Անքիալոս⁵⁰³, նավատորմիղին կարգադրեց [քաղաքի] առաջ խարիսիս գցել, իսկ հեծելազորին առանց որևէ պահակության և անկեղակարծ բանակել [քաղաքից] վերև գտնվող հովիտներում: Զորքը ոչխարների պես ցրվեց հովիտներով մեկ խոտ հավաքելու, իսկ բուլղարների հետախույզները լեռներից տեսնելով հռոմայեցիների ողորմելի կարգուկանոնը, մի տեղ հավաքվեցին, հանկարծակի զաղանների պես նետվեցին և հռոմայեցիների հոտին մեծ ջարդ տվեցին, բազում գերիներ վերցրին, ձի ու զենք ձեռք

բերեցին: Հուստինիանոսը վերապրածների հետ բերդում ապաստանեց և երեք օր դարբասները փակ պահեց: Տեսնելով, որ բուլղարները շեն հեռանում, առաջինն ինքը կտրեց իր ձիու ջլերը, ապա հրամայեց բոլորին նույն բանն անել: Պարիսպների վրա հաղթական նշաններ թողնելով, նա գիշեր ժամանակ ու ծածուկ հեռացավ, խայտառակ կերպով մտավ քաղաք:

[A. M. 6201]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 4-րդ տարին [Արարների առաջնորդ Վալիդի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 4-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Մասլաման⁵⁰⁴ ու Աբասը⁵⁰⁵ Մարիանոսի կողմից Մայու-մայի⁵⁰⁶ գլխավորած [արաբական] զորքի կրած ջարդից զազաղած, արշավեցին Տիանայի⁵⁰⁷ վրա, պաշարեցին այն ու ձմեռեցին այնտեղ: Կայսրը [արաբների] դեմ կովելու և նրանց բշելու համար զորքով և շինականների աշխարհագործով երկու զորավար ուղարկեց, Թեոդորոս Կարտերուկասին⁵⁰⁸ և Թեոփիլակտոս Սալիբասին⁵⁰⁹: Սակայն նրանց մեջ ծագած գժտության պատճառով [արաբների] դեմ կովի ձեռնարկեցին անգամ գժտության պատճառով [արաբների] դեմ կովի ձեռնարկեցին անգամ կաղմակերպ և պարտություն կրեցին, հազարավոր մարդիկ սպանվեցին, շատերն էլ գերի ընկան: Արաբները ձեռք գցեցին նաև սրանց տուլզոնն ու պարենը և շարունակեցին քաղաքի պաշարումը, մինչև որ գրավեցին այն: Մինչ այդ նրանց պարենը վերջացել էր և նրանք որոշել էին հեռանալ: Տիանա քաղաքի բնակիչները այդ բանի ականատես լինելով հուսաբեկ եղան և արաբներից անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, քաղաքից դուրս եկան դեպի արաբները, լքեցին քաղաքը, որը մինչև օրս էլ այդպես անմարդաբնակ է: Արաբները, սակայն, իրենց խոստումը դրժեցին և նրանց անապատը բռնեցին, շատերին էլ ստրկացրին:

ԹԵՈՓԱՆԵՍ ԿՈՍՏՈՎԱՆՈՎ

[A. M. 6202]

[Աշխարհի արարչագործութեան] 6202 թ.

[Քրիստոսի մարդկորութեան] 702 թ.

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 5-րդ տարին

[Արարների առաջնորդ Վալիդի] 5-րդ տարին

[Գոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 5-րդ տարին

[Նրուսողմի Հովհաննես պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Արամն արշավեց Ռոմանիայի վրա և բազմաթիվ գերիներով վերադարձավ: Հելիոպոլսի շրջանում նա սկսեց Գարիսի⁵¹⁰ կառուցումը:

[A. M. 6203]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 6-րդ տարին

[Արարների առաջնորդ Վալիդի] 6-րդ տարին

[Գոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 6-րդ տարին

[Նրուսողմի Հովհաննես պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Օթմանն արշավեց Կիլիկիայի վրա և պայմանով բազում բերդերի տիրացավ: Դավաճանություններ [արարների] ձեռքն անցավ և Կամախը՝ մերձակա շրջաններով: Հուստինիանոսը Մավրոս պատրիկին և Ստեփանոս պատրիկին, մականունը՝ Ասմիկոսոս, մեծ նավատորմիղ հանդերձելով, Խեբոսն ուղարկեց: Նա ոխ էր կապել, չէր մոռացել խերսոնցիների, բոսպորցիների և մյուս կլիմաների՝ իր դեմ կատարած ոտընձգությունը: Նավատորմիղը, որ բաղկացած էր ամեն տեսակի նավերից՝ դրոմոններից, տրիբաններից, միթիագոզներից, ձկնորսական նավերից, մինչև անգամ խելանդիոններից, հանդերձել էին քաղաքում բնակվող սենատորները, արհեստավորները, դեմոտներն ու ամեն տեսակի պաշտոնյաները: Նրանց⁵¹¹ նա ճամփու դրեց, կարգադրելով սրածել հիշյալ բերդերի ողջ բնակչությունը, ոչ ոքի կենդանի չթողնել: Նրանց հետ ուղարկեց և էլիաս սպաթարին, որը պետք էր Խերսոնի կառավարիչ դառնար: Նրանք հասան Խերսոն և առանց որևէ դիմադրության տիրացան բերդերին, բոլորին սրի քաշեցին, խնայեցին միայն երեխաներին, որոնց ստրկացրին: Խերսոնի կառավարիչ Տուղունոսին⁵¹², որպես խաբանի տեղապահի⁵¹³, ապա դիրքով ու ծագումով առաջին քաղաքացի համար-

վող Ջոյիլոսին և Խերսոնի ուրիշ բառասուն երևելիների ու մեծամեծների՝ ընտանյոք հանդերձ շղթայակապ կայսեր ուղարկեցին, Խերսոնի այլ յոթը հայտնի մարդկանց փայտե շամփուրի քաշելով, կրակի վրա խոթովեցին: Ուրիշ քսան հոգու էլ թևերը մեջքին կապոտած, խելանդիոնի մեջ թողնվ կապեցին, ապա խելանդիոնը քարերով լցրին և ջրասույզ ների փրկության առթիվ գազազեց, նա հրամայեց նրանց անհապաղ իրեն ներկայանան: Նավատորմիղը հոկտեմբեր ամսին ճանապարհ ընկավ և Տավրուրա⁵¹⁴ կոչվող աստղի ծագելու ժամանակ բաց ծով դուրս գալով, քիչ մնաց գլխովին ջրասույզ լինելու: Փոթորկի զոհ գնացած մարդկանց թիվը հաշվեցին 73 հազար հոգի: Հուստինիանոսը, տեղեկանալով այդ մասին, ամենևին էլ չտխրեց, ընդհակառակը, բերկրանքով լցվեց: Հափշտակված լինելով օրեցօր սաստկացող մոլեգնություններ, սպառնալիքներով մի ուրիշ նավատորմիղ ուղարկեց, հրամայելով ամեն ինչ վալիքներով մի ուրիշ նավասարեցնել, մինչև անգամ ռոր միգիցէ զորքի տալ ու գետնին հավասարեցնել, միանալով դա, որոշեցին պաշտմով⁵¹⁵: Այդ բերդերի [բնակիչները], իմանալով դա, որոշեցին պաշտպանվել, ստիպված լինելով շեղարկվել կայսեր, դիմեցին Խաղարիայի խաբանին և իրենց պաշտպանություն համար զորք խնդրեցին: Այդ ընթացքում գործի են անցնում նաև էլիաս սպաթարը, աքսորական Վարթապետը⁵¹⁶, որն այն ժամանակ Կեֆալոնիայից ետ էր կանչվել և նավադանը⁵¹⁶, որն այն ժամանակ Կեֆալոնիայից, լսելով այդ մասին, տորմիղով Խերսոնում էր գտնվում: Հուստինիանոսը, լսելով այդ մասին, մի քանի դրոմոններով [Խերսոն] ուղարկեց գեներալների լոգոթեա Կեորգ պատրիկին՝ Ասորի մականվանյալին, Հովհաննես էպարքոսին, Թրակեպոսին՝ տուրմարիս Քրիստափորին՝ երեք հարյուր զինվորներով: Նրանց նա կարգադրեց, որ Տուղունոսն ու Ջոյիլոսը պետք է վերահաստատվեն Խերսոնում, խաբանին բացատրություններ տալու համար ապոկրիսիարիոս ուղարկեն, իսկ էլիասին ու Վարդանին իր մոտ բերեն: Նրանք բոլորը խաբանի գեցեցին Խերսոնում, բայց Խերսոնի բնակիչները նրանց չընդունեցին: Հաշորդ օրը քաղաքացիները թույլ տվեցին ներս մտնել միայն ղեկավարներին, բայց այնուհետև նրանց ետևից փակելով դարմախյն ղեկավարներին, բայց այնուհետև նրանց հետ միասին սրի քաշեցին, բասները, գեներալների լոգոթեաին էպարքոսի հետ միասին սրի քաշեցին, Տուղունոսին, Ջոյիլոսին և վերոհիշյալ տուրմարիսին՝ երեք հարյուր զինվորներով խաղարներին հանձնեցին, ուղարկեցին խաբանին: Տուղունոսը ճանապարհին մեռավ, իսկ խաղարները նրա փոխարեն տուրմարիսին և երեք հարյուր զինվորներին սպանեցին: Այդ ընթացքում Խերսոնցիները, ինչպես և մյուս բերդերի բնակիչները Հուստինիանոսին գահընկեց հայտարարեցին, իսկ իրենց մոտ աքսորված Ֆիլիպպիկոս Վարդա-

նին կայսր հռչակեցին: Հուստինիանոսը, իմանալով այդ մասին, էլ ավելի գազազեց, էլիսա սպաթարի երեխաներին իրենց մոր ծոցում սրի քաշեց, իսկ այդ կնոջը ստիպեց ամուսնանալ իր հնդիկ խոհարարի հետ: Այնուհետև մի նոր նավատորմիդ հանդերձելով, Մավրոս պատրիկի՝ Բեսոս մականվանյալի գլխավորությամբ [Խերսոն] ուղարկեց, տալով նրան բերդամարտության համար անհրաժեշտ խոյ, մեքենաներ և ամեն տեսակի քաղաքավեր միջոցներ, պատվիրելով Խերսոնի պարիսպները, ողջ քաղաքը գետնին հավասարեցնել, բնակչությունը մինչև վերջին մարդը կոտորել և իր կատարածի մասին հաճախակի զեկուցել: Նավարկելով նա հասավ [Խերսոն], խոյի օգնությամբ քանդեց Կենտենարեսիոն, ինչպես և նրա մոտ գտնվող Սիագրոս կոչվող աշտարակները: Երբ վրա հասան խաղարները, կռիվը դադարեց: Իսկ Վարդանը փախուստի դիմեց դեպի խաբանը: Նավատորմիդն այսպիսով ոչնչի չհասավ և այդ իսկ պատճառով չէր համարձակվում կայսեր մոտ վերադառնալ, և ըստիպված ինքը ևս Հուստինիանոսին գահընկեց հայտարարեց, իսկ Վարդանին՝ կայսր: Խաբանից նրանք խնդրեցին Ֆիլիպպիկոսին իրենց տա: Խաբանը նրանցից խոսք պահանջեց, թե Ֆիլիպպիկոսին չեն դավի, ապա և յուրաքանչյուրից՝ մեկական դահեկան: Զինվորներն իսկուհն համաձայնեցին և ստացան Ֆիլիպպիկոս կայսեր: Երբ նավատորմիդն ուշացավ, որևէ զեկուցագիր էլ տեղ չհասավ, Հուստինիանոսը կռահելով դրա պատճառը, Օպսիկիոնի և Թրակեսիոնի [զորքի] մի մասով զնաց Սինոպ, Խերսոնում կատարվածի մասին տեղեկություններ ստանալու: Երբ նա զննում էր պերատիկա կողմերը⁵¹⁷, տեսնում է դեպի քաղաք նավող տորմիդը և առյուծի պես մոնչալով, ինքն էլ շտապեց դեպի քաղաք: Ֆիլիպպիկոսն իրենից առաջ տեղ հասնելով, գրավեց քաղաքը: Հուստինիանոսն եկավ Դամատրիս⁵¹⁸ և իր մարդկանցով այնտեղ բանակեց: Ֆիլիպպիկոսն առանց հապաղելու Մավրոս պատրիկին և Հովհաննես սպաթարին՝ մականունը Ստրութոս, Տիբերիոսի դեմ է ուղարկում, իսկ էլիսան մի զորախմբով՝ Դամատրիս, Հուստինիանոսի դեմ, մի այլ զորախումբ էլ՝ փախուստի դիմած Վարագրակուրի: Մավրոսը, վերոհիշյալ Ստրութոսի հետ գալով Վլախեսոնա, Տիբերիոսին գտավ մի ձեռքով աստվածածնի սուրբ սեղանի սյունիկը բռնած, մյուս ձեռքով՝ պատվական [խաշա]փայտ, վզից էլ հմայիլ կախած: Բեմից ցած նըստած էր Անաստասիան, իր հոր մայրը, որն ընկնելով Մավրոսի ոտքերին, պաղատում էր չսպանել իր թոռ Տիբերիոսին, քանզի նա ոչ մի վատ բան չի գործել: Այդ միջոցին, երբ [Անաստասիան] նրա ոտքերն էր գրկած և արտասովալից աղերսում էր, Ստրութոսը բեմ բարձրացավ և

բռնի քաշեց Տիբերիոսին: Նրանից նա վերցրեց պատվական [խաշա]փայտը, դրեց սուրբ սեղանին, հմայիլն էլ իր վզից կախեց: Տղային տարան Կալլինիկեի վերին կողքի դռնով, մերկացրին և գետին փռելով ոչխարի պես մորթեցին, ապա կարգադրեցին նրա մարմինն այսպես կոչված Պավլինեի Սրբոց Անարծաթից տաճարում թաղել⁵¹⁹: Զերբակավեց և Օպսիկիոնի կոմես Վարագրակուր պրոտոպատրիկը, որը նույնպես մահապատժի ենթարկվեց: Իսկ էլիսան իր զինվորներով բարձրացավ Դամատրիս և բանակցությունների մեջ մտավ այնտեղ գտնվող զորքի հետ: Երբ Հուստինիանոսի զինվորները նրանից անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստացան, զլսովին լքեցին Հուստինիանոսին և փախան: Նրան մենակ թողնելով, Ֆիլիպպիկոսի կողմն անցան: Վերոհիշյալ էլիսա սպաթարը գազազած, հարձակվեց [Հուստինիանոսի] վրա, բռնեց նրան վզից և իր գոտուց կապած դաշույնով նրա գլուխը կտրեց, ապա այն Ռոմանոս սպաթարի միջոցով Ֆիլիպպիկոսին առաքեց, որը նույն սպաթարի միջոցով արևմուտք ուղարկեց, մինչև Հոմա: Նախքան Ֆիլիպպիկոսի թագավորելը, Կալլիստրատոսի վանքի անապատական մի հերետիկոս գուշակ, գնալով Ֆիլիպպիկոսի մոտ ասել էր. «Դու կայսր կդառնաս»: Նա ցնցվեց, իսկ անապատականն ասաց. «Ինչո՞ւ ես հակադրվում ասածո կամբին: Ես քեզ ասում եմ. վեցերորդ ժողովն⁵²⁰ ի շարս եղավ, երբ թագավորես, մերժի՛ր այն և քո թագավորությունը ամուր ու երկարամյա կլինի»: Նա երզվեց այնպես անել: Երբ Լեոնտիոսին փոխարինեց Հուստինիանոսը, Ֆիլիպպիկոսն անապատականի մոտ զնաց: Վերջինս ասաց. «Անհոգ մնա, դա կլինի»: Երբ Ապսիմարոսը թագավորեց, Ֆիլիպպիկոսը դարձյալ նրա մոտ զնաց և նա կրկին ասաց. «Անհոգ մնա, այն սպասում է քեզ»: Ֆիլիպպիկոսն իր ընկերներից մեկին վստահեց այդ գաղտնիքը, բայց նա զնաց հայտնեց Ապսիմարոսին: Վերջինս Ֆիլիպպիկոսին գանակոծեց, խուզեց և շղթայակապ Կեֆալոնիա քարոքեց: Հուստինիանոսն իր երկրորդ թագավորության ժամանակ նրան ետ կանչեց: Ֆիլիպպիկոսը, համաձայն սուտանուն անապատական արքայի պահանջի, եպիսկոպոսների ստահող ժողով գումարեց և մերժեց սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովը: Բայց հենց այդ նույն տարին էլ տխմարը կուրացվեց⁵²¹: Նա պալատում զրտած լինելով երկար տարիների ընթացքում նախկին կայսրերի կողմից բռնագրավումների միջոցով և տարբեր պատրվակներով, հատկապես հիշյալ Հուստինիանոսի կողմից կուտակված բազում դրամ ու փառահեղ ունեցվածք, անհոգ կյանք էր վարում, ամբողջությամբ անխնա ու ապարդյուն ցրիվ տալիս: Թեև զարգացած ու խոհեմ մարդու համարում

ուներ նա, բայց կյանքում անամոթ ու ապիկար, ամեն ինչում անճարակ էր: Ի վերա ամենայնի նա հերետիկոս էր և շնացող: Նա Կյուրոս պատրիարքին հեռացրեց և նրա աթոռին իր համակիր, իր պես հերձվածող Հովհաննեսին⁵²² նստեցրեց:

[A. M. 6204]

Աշխարհի արարչագործության 6204 թ. Քրիստոսի մարդկության 704 թ. Հոռոմայեցիների Ֆիլիպպիկոս կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին

Արարների առաջնորդ Վախիդի 9-ամյա իշխանության 7-րդ տարին Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի 3-ամյա աթոռակալության 1-ին տարին Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ տարի Ֆիլիպպիկոսը արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Զորբորդ Հայքում⁵²³, Մասլաման գրավեց Ամասիան ու այլ բերդեր և ձեռք բերեց բազում գերիներ: Ամասիայի Գեորգե կաթողիկոսը տեղափոխվեց Մարտիրոսոսի: Ֆիլիպպիկոսն առանց ամաչելու մոլեզունքներն հանգես եկավ սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովի դեմ, ջանալով չեղյալ հայտարարել նրա հաստատած աստվածային դրույթները: Իրեն համախոհ նա գտավ ի դեմս Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի (նրան ինքն էր պատրիարք նշանակել, հեռացնելով Կյուրոս պատրիարքին, որին արգելափակեց Խորալի վանքում)⁵²⁴: Իր համախոհների թվում էին նաև Կյուղիկոսի Գերմանոս կաթողիկոսը, որ հետագայում Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ, Կրեանի Անդրեաս կաթողիկոսը, Նիկուլյոսը, որը կավկոզիակոսից⁵²⁵ բժշկագիտության մասնադեպ դարձավ, իսկ այն ժամանակ քվեստոր էր, Մեծ եկեղեցու սարկավագ էլպիդիոսը, խարաֆիթյան Անտիոքոսը և սրբանց նմանները, որոնք գրավոր նդովեցին վեցերորդ սուրբ ժողովը: Բուլղարները Ֆիլիպպի⁵²⁶ վրայով գաղտագողի խուժեցին Սաենոնը, մեծ ջարդ սվեցին, արշավեցին մինչև քաղաք, բնակիչներին գտան քաղաքից դուրս եկած՝ ճոխ ու հարուստ հարսանյաց հանդեսներով, առատ սեղաններով զբաղված, սեղաններ, որոնց վրա կային արծաթյա և այլ տեսակի սպասներ, և հասան մինչև Ոսկե դուռը, գերեվառեցին բովանդակ Թրակիան, անհամար անասուններ քշելով վերագարձան իրենց երկիրը: Արաբները նույնպես արշավեցին, Միսթիան ու այլ բերդեր գրավեցին, բազում բնտանիքների գերի տարան և անհամար քանակությամբ անասուններ քշեցին:

[A. M. 6205]

[Հոռոմայեցիների Ֆիլիպպիկոս կայսեր] 2-րդ տարին [Արարների առաջնորդ Վախիդի] 8-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի Արասն արշավեց Ռոմանիայի վրա, Պիսիդիայի Անտիոքը գրավեց և բազում գերիներ վերցնելով վերագարձավ: Պերիտիոս⁵²⁷ ամսի 28-ին Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ: Այդ միջոցին լրացավ Ֆիլիպպիկոսի թագավորության երկրորդ տարին և տարեդարձի առթիվ ձիարշավական մրցումներ էին տեղի ունենում, որտեղ պրասինոսները հաղթանակ տարան: Կայսրը որոշեց Պենտեկոստեի շաբաթ օրը ձի նստած, շքախմբով, երաժշտությամբ գնալ լոգանք ընդունել Զևքսիպոսի հանրային բաղանիքում և ապա մեծատոհմիկ քաղաքացիների հետ ճաշել Միջօրեին, սակայն, երբ նա հանգստանում էր, Օպսիկիոնի կոմես Գեորգ պատրիկի՝ Բուրաֆոս մականվանյալի, ինչպես և Թեոդորոս Միակիս պատրիկի զբոսով Թրակիա բանակաթեմի տաքսատոսներով Ոսկե դռներից հանկարծակի ներս մտավ Օպսիկիոնի պրոտոստրատոր Ռուֆոսը, խուժեց պալատ, Ֆիլիպպիկոսին գտավ կեսօրվա հանգիստն առնելիս, և բռնելով նրան, տարավ պրասինոսների օրնատորիոնը⁵²⁸ և այնտեղ կուրացրեց. այդ մասին ոչ ոք էլ չիմացավ: Հաջորդ, այն է Պենտեկոստեի օրը, երբ ժողովուրդը խռնվել էր Մեծ եկեղեցում, Արաբները պրոտոասեկրետը, վերանվանվելով Անաստասիոս⁵²⁹, կայսր թագազրվեց: Պենտեկոստեի հաջորդ շաբաթ օրը կուրացվեց Թեոդորոս Միակիսը, իսկ երկրորդ շաբաթ օրը՝ Գեորգ Բուրաֆոսը⁵³⁰, և Թեսաղոնիկե քաղաքից:

[A. M. 6206]

Աշխարհի արարչագործության 6206 թ. Քրիստոսի մարդկության 706 թ. Հոռոմայեցիների Արաբմիոս կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին

Արարների առաջնորդ Վախիդի 9-ամյա իշխանության 9-րդ տարին Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի 3-ամյա աթոռակալության 3-րդ տարին Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 9-րդ տարին

քաղաքացիների բնակարանները և շտեմնաված թալանեցիներ, ոչ ոքի չլինալիս: Արտեմիոսի քաղաքում թողած դեկավարներին և Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքին բռնելով, Նիկիա ուղարկեցին, որպեսզի Արտեմիոսն ու նրա հետ եղողները համոզվեն [կատարվածի մասին]: Արտեմիոսը, տեսնելով նրանց, հուսաբեկ եղավ և անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, հանձնվեց ու վանականի սքեմը հագավ: Թեոդոսիոսը նրան ձեռք չտվեց, այլ Թեսաղոնիկե արքային: Այսպիսով, Ֆիլիպպիկոսը թագավորեց 2 տարի և 9 ամիս, իսկ Արտեմիոսը 1 տարի և 3 ամիս: Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լեոնը⁵³⁸, որ Արտեմիոսին էր պաշտպանում, Թեոդոսիոսին չենթարկվեց: Նրան համախոս էր ու դաշնակից Արմենիակների բանակաթեմի զորավար հայադգի Արտավազը⁵³⁹, որին նա խոստացավ իր դստեր կնություն տալ, ինչ որ արեց:

[A. M. 6208]

Աշխարհի արարչագործության 6208 թ.	Փրիստոսի մարդկություն 708 թ.	Հոռոմայեցիների Թեոդոսիոս կայսեր 1-ամյա թագավորության 1-ին տարին
Արարների առաջնորդ Սուլեյմանի 3-ամյա իշխանության 2-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի 15-ամյա ամուսնակալության 2-րդ տարին	Նրուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա ամուսնակալության 11-րդ տարին

Այդ տարի Մասլաման արշավեց Կոստանդնուպոլսի վրա⁵⁴⁰, կանխաձեռն ցամաքով Սուլեյմանի⁵⁴¹ գլխավորությամբ զորք ուղարկելով, իսկ Օմարին էլ՝ ծովով: Ինքն էլ շարժվեց նրանց ետևից՝ պատերազմական մեծ պատրաստությամբ: Սուլեյմանն ու Բաբրը, հասնելով Ամորիոն, Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լեոնին նամակ են գրում. «Մեր համոզմամբ դու ես արժանի հոռոմայեցիների կայսր դառնալու: Արդ, եկ մեզ մոտ, որ խաղաղության շուրջ բանակեցնեք»: Սուլեյմանը, տեսնելով, որ Ամորիոնը զորք չունի, որ [քաղաքը] զորավար [Լեոնի] հանդեպ թըշնամաբար է տրամադրված վերջինիս Արտեմիոսի դաշնակիցը լինելու պատճառով, պաշարեց այն, ուզենալով Մասլամային էլ այնտեղ բնդունել: Երբ [Սուլեյմանը] մոտեցավ քաղաքին, սարակիստներն սկսեցին Լեոնին կայսր ներքողել, կոչ անելով [քաղաքացիներին] նույն բանն անել: Ամորիոնի [բնակիչները], տեսնելով, որ սարակիստները սիրով [Լեոնին] են ներքողում, իրենք էլ նույն բանն արեցին: Զորավար [Լեոնը], իմանալով, որ առանց տաքսատոսների ու հրամանատարների Ամո-

րիոնը կրնկնի, հայտնում է Սուլեյմանին. «Եթե դու ցանկանում ես, որ ես քո մոտ գամ խաղաղության շուրջ բանակեցնու, ապա ինչու՞ ես քաղաքը պաշարման ենթարկել»: Նա պատասխանեց. «Դու եկ, և ես կզնամ»: Զորավարը, նրանից խոսք վերցնելով, երեք հարյուր հեծյալներով նրա մոտ գնաց: Հագարացիք, տեսնելով նրան, հագան իրենց զրահներն ու լանջակալները և նրան ընդառաջ գնացին, բանակեցին իրենց հիմնական զորքից կես մղոն հեռու: [Լեոնը] երեք օր գնաց եկավ նրանց մոտ, բանակեց խաղաղության և [արաբների] քաղաքից հեռանալու հարցի շուրջը, բայց նրանք պատասխանում էին. «Նախ դու հաշտությունը կնքիր, բայց նրանք պատասխանում են. «Զորավարն իմանալով, որ ուզում են իսկ մենք դրանից հետո կզնանք»: Զորավարն իմանալով, որ ուզում են իրեն բռնեն, երևելի սարակիստներից շատերին բնթրիքի հրավիրեց: Նրանց բնթրելու միջոցին Սուլեյմանը երեք հազար զրահակիր սարակիստների ուղարկեց նրան շրջապատելու և շրջակալու, որ փախչի: Պահանջների ուղարկեց նրան շրջապատելու և շրջակալու. «Մեզ բազում հեծյալ սակախումբը իմացավ դա և նրան հայտնեց. «Մեզ բազում հեծյալ սակախոսներ են շրջապատած»: Զուբեր անունով մի հեծյալ ներկայացավ [Լեոնին] և ասաց. «Ինչ որ ստրուկ ահագին դրամ գողանալով փախել է, դրա համար է, որ մենք ձի հեծանք»: Զորավարը կռահեց նրանց խորամանկությունը և ասաց. «Անհոգ եղեք, մեր բերդերից որ մեկում էլ նա գնա, կգտնենք նրան»: Բայց անհանգստացած այնուամենայնիվ կարողացավ իր մարդու միջոցով ծածուկ հայտնել Ամորիոնի բնակիչներին. «Աստժո սիրույն, չհանձնվենք, դուրսը, շուտով Մասլաման էլ կհասնի»: [Քաղաքի] եպիսկոպոսը գնում է [Լեոնի] մոտ, իսկ վերջինս նրան նույն բանն է ասում: Սուլեյմանն իմանալով, որ եպիսկոպոսը գնացել է նրա մոտ, դիմում է զորավարին. «Մեզ հանձնիր եպիսկոպոսին»: Բայց նա թաքցրեց նրան և իր մարդկանցից մեկին կարգադրեց. «Մեր զորույցի միջոցին դու նրան այլ զգեստ հագցրու և փայտ կամ ջուր բերելու պատրվակով սարերն ուղարկիր»: Երբ սարակիստները համառում էին եպիսկոպոսի հարցում, զորավարն ասաց. «Նա այստեղ չէ: Արդ, դուք ամիրայի պոսի հարցում, զորավարն ասաց. «Նա այստեղ չէ: Արդ, դուք ամիրայի մոտ գնացեք, ձեր ետևից ես էլ կգամ և ամեն ինչի շուրջ կխոսենք»: Նրանք, մտածելով, որ երբ նա ամիրայի մոտ գա կըջապասեն և կբռնեն, թողեցին նրան: [Լեոնը] իր երկու հարյուր մարդկանց հետ ձի նստեց և որսի գնալու պատրվակի տակ, թեքվեց դեպի ձախ: Նրա հետ եղող սարակիստների հարցին, թե «Ո՞ր ես գնում», նա պատասխանեց. «Հովիտը, ուզում եմ բանակատեղիս փոխեմ»: Նրանք ասացին. «Միտք ծուռ է, մենք քո հետ չենք գա»: Դրա վրա զորավարը դիմելով իր մարդկանց, ասաց. «Մեզ խոսք տվեցին, բայց մտադիր էին մեզ բռնել և մեր միջոցով քրիստոնյաներին կոտորել: Նրանք մեր մարդկանցից և մեզ մնացած

ձիերից և ոչ մեկին ձեռք չեն գցի»։ Եվ տասը մղոն կտրելով, բանակեց։
 Հաջորդ օրը նա [արարների մոտ] ուղարկեց իր ստրատորները դոմես-
 տիկոսին⁵⁴² և հայտնեց. «Քեև դուք ինձ խոսք տվեցիք, բայց մտադրել
 էիք ինձ նենգորեն բռնել։ Հենց դրա համար է, որ հեռացա»։ Մասլաման
 արդեն անցել էր կելեսուրները, բայց Սուլեյմանն այդ մասին տեղյակ
 չէր։ Ամիրան ու զինվորներն ըմբոստացան Սուլեյմանի դեմ և «Ինչո՞ւ
 ենք նստել այս պարիսպների տակ և չենք գնում թալանի» ասելով, հա-
 վաքեցին իրենց վրաններն ու շարժվեցին։ Ջորավարը Նիկեաս տուրմար-
 խին 800 զինվորով Ամորիոն մտցրեց, դուրս բերեց կանանց ու երեխանե-
 րի մեծ մասը, իսկ ինքը գնաց Պիսիդիա։ Երբ Մասլաման Կապադովկիա
 հասավ, կապադովկացիք հուսաբեկ դիմեցին նրան՝ հանձնվելու խնդրան-
 քով։ Մասլաման, իմանալով Քեոզոսիոս կայսեր դեպի զորավարը տածող
 թշնամության մասին, ցանկացավ նրան իր կողմը քաշել, հաշտվել հե-
 տը և նրա միջոցով հպատակեցնել Ռոմանիան։ Նա նրանց ասաց. «Գուք
 զորավարի համախոհները չե՞ք»։ Նրանք պատասխանեցին, թե «Այո՞»։
 Այնուհետև, թե. «Գուք նրա պես չե՞ք վարվում», թե «Այո՞»։ Գրա վրա նա
 ասաց. «Գնացե՛ք ձեր բերդերը և ոչ սրից մի՛ վախեցե՛ք»։ Նա իր զին-
 վորներին կարգադրեց չթալանել զորավարին ենթակա բոլոր շրջանները։
 Ջորավարը, իմանալով այդ մասին և կոահելով, որ Սուլեյմանը հայտնած
 պիտի լինի Մասլամային, թե թույլ է ավել իրեն՝ զորավարին, գնալու,
 նամակ է գրում Մասլամային, թե «Ես ուզում էի քո մոտ գալ, բայց երբ
 եղա Սուլեյմանի մոտ, նա ուզեց ինձ բռնել։ Գրա համար ես հիմա վախե-
 նում եմ քո մոտ գալ»։ Մասլաման ասում է զորավարի սուրհանդակին.
 «Գիտեմ, զորավարն ինձ խաբուս է, որպեսզի նրա շրջաններին ձեռք չը-
 տամ»։ Ջորավարի սուրհանդակը պատասխանեց. «Ծիշտ չէ, [զորավա-
 րի] գրածը ստույգ է»։ Մասլամայի հարցին, թե «Ինչպիսի՞ն է Ամորիոնի
 դիրքը զորավարի նկատմամբ», նա պատասխանեց. «Լավ է, նրան է են-
 թարկվում»։ Մասլաման դաշտացած, անպատվեց նրան ու ասաց. «Ինչո՞ւ
 ես ստում»։ Նա պատասխանեց. «Ամեն ինչ ասածիս պես է, [զորավարը]
 սուրմարխի գլխավորությամբ տաքսատոսներ է մտցրել [քաղաք], իսկ
 ավելորդ ընտանիքներին հեռացրել այնտեղից»։ Մասլաման լսելով դա
 շատ տխրեց և վրդովված նրան վռնեց։ Նա որոշել էր ամռանը գրավել
 այն, ապա վերցնել նավատորմիդը և իջնել Ասիա ու ձմեռել։ Նա դարձ-
 լալ կանչեց զորավարի սուրհանդակին և հարցաքննեց նրան։ Վերջինս
 երդվեց, թե «Ասածս ամբողջությամբ ճշմարտություն է. սուրմարխի
 գլխավորությամբ հազար զինվոր [քաղաք] են մտել, իսկ [զորավարը]
 բնակիչների ողջ ունեցվածքը, ապա և շքավոր ընտանիքներին [քաղա-

քից] հեռացրել է»։ Մասլաման դրա վրա զորավարին նամակ գրեց, թե
 «Ե՛կ իմ մոտ, ես քեզ հետ կհաշտվեմ ու ամեն ինչ քո ուզածի պես կա-
 նեմ»։ Ջորավարը, տեսնելով, որ նա արդեն մոտեցել է Մասսալեոնին⁵⁴³,
 որ հինգ օր հետո նա ոտք կդնի իր շրջանները, նրա մոտ երկու հյուպա-
 տոս⁵⁴⁴ ուղարկեց և հայտնեց. «Քո նամակը ստացա, քո առաջարկու-
 թյունն ընդունեցի և ահա քո մոտ եմ գալիս, բայց, հարկավ, գիտես, ես
 զորավար մարդ եմ, հետևաբար ինձ հետ կլինի գույք, դրամ և զորք։ Արդ,
 դու յուրաքանչյուրի համար երաշխիք տուր։ Եթե իմ պահանջներին ընդ-
 առաջ գնաք, ես ողջ առողջ ու անվնաս վերադառնամ, լավ ու բարի»։
 Հյուպատոսները նրան հանդիպեցին Քեոզոսիան⁵⁴⁵ [վայրում]։ Մաս-
 լաման ասաց. «Տեսնո՞ւմ եք, որ խաբում է ինձ ձեր զորավարը»։ Նրանք
 պատասխանեցին. «Աստված մի արասցե»։ [Մասլաման], տալով նրանց
 պահանջած երաշխիքները, ճամփեց։ Այդ միջոցին, երբ հյուպատոսները
 պատահիր գրությամբ գնում էին զորավարի մոտ, Մասլաման շխարհա-
 ստորագիր գրությամբ գնում էին զորավարի մոտ, Մասլաման շխարհա-
 նալով իր հսկայական զորքով մի տեղում մնալ, գալիս է Ակրոյինոն⁵⁴⁶.
 Ջորավարը, տեսնելով, որ [Մասլաման] արդեն ոտք է դրել իր շրջաննե-
 րը, քաշվեց Նիկոմեդիա։ Հանդիպելով Քեոզոսիոսի որդուն, բռնեց նրան
 ողջ թագավորական սպասավորությամբ ու պալատական պաշտոնեու-
 թյամբ հանդերձ։ Մասլաման իջավ Ասիա, ձմեռեց այնտեղ, իսկ Օմարը՝
 Կիլիկիայում։ Ջորավարը, վերցնելով կայսեր որդուն և խորհրդակցելով
 իր մարդկանց հետ, եկավ Խրիսուպոլիս։ Քեոզոսիոսը, իմանալով կա-
 տարվածի մասին, խորհրդակցեց Գերմանոս պատրիարքի և սենատի հետ
 և լեոնի կողմից նույն պատրիարքի միջոցով իր անձեռնմխելիության կ
 եկեղեցու անասանելիության մասին⁵⁴⁷ երաշխիքներ ստանալով, գահը
 զիջեց նրան։ Քեոզոսիոսը իր որդու հետ կղերական դարձան և իրենց
 մնացած կյանքն անցկացրին խաղաղության մեջ։ Մասլաման գալով
 Պերգամոն, պաշարեց և աստծո թույլտվությամբ ու սատանայի ներգոր-
 ծություններ առավ այն։ Քաղաքի բնակիչները մի ինչ-որ կախարհի խոր-
 հրդով ծննդաբերելու մոտ մի կնոջ փորը բացեցին և վերցնելով
 մանկան կաթսայի մեջ եփեցին։ Կովել ցանկացող ամեն մեկը աստծուն
 խորշեցի այս զոհաբերության արյունով ներկեցին իրենց աչ թևքը և այ-
 նուհետև թշնամիներին հանձնվեցին։

[A. M. 6209]

Հռոմայեցիների կայսր Լեոն Իսավրացի⁵⁴⁸, Թագավորեց 24 տարի։

[Աշխարհի արարչագործություն] 6209 թ.

[Քրիստոսի մարդկություն] 709 թ.

[Հոռոմայեցիների կոտորած] 1-ին տարին

[Արարների առաջնորդություն] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 3-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 12-րդ տարին

Այդ տարի թագավորեց Կոնոն: Նա ծագումով Գերմանիկայից⁵⁴⁹ էր, բայց իրականում՝ Իսավրիայից⁵⁵⁰: Հուստինիանոս կայսեր առաջին թագավորության ժամանակ նա իր ծնողների հետ վերաբնակեցվել էր Թրակիայի Մեսեմբրիա [բաղաբուս]: [Հուստինիանոսի] երկրորդ թագավորության ժամանակ, երբ նա բուլղարների հետ իշավ, Կոնոն նրան ընդառաջ ելավ 500 ուլսարից բաղկացած նվերով: Հուստինիանոսին դա դուր եկավ և նրան իսկույն սպաթարի կոչում շնորհեց ու մտերմացավ հետը: Ոմանք նախանձից գրգված [Կոնոն] ամբաստանեցին, թե իր թագավորության վրա աչք ունի Սակայն երբ դրա շուրջ քննություն արվեց, նրանք խայտառակվեցին որպես զրպարտիչներ: Այնուամենայնիվ այդ օրվանից շատերն սկսեցին այդ մասին խոսել: Հուստինիանոսը թեև չէր ուզում նրան բացելից վատություն անել, բայց կասկածի որդը մտավ իր մեջ և նա նրան դրամ տալով, Ալանիա ուղարկեց՝ ալաններին Աբաղզիայի դեմ ոտքի հանելու համար (Աբաղզիան, Լադիկան և Իբերիան սարակինոսների տիրապետության տակ էին գտնվում)⁵⁵¹: Նա գնաց Լադիկա, դրամը թողեց Փասիա⁵⁵² [բաղաբուս], մի քանի տեղացիներով գնաց Ապսիլիա⁵⁵³, անցավ Կովկասյան լեռներն ու եկավ Ալանիա: Հուստինիանոսը, կամենալով նրա ոչնչացման համար պատրվակ ստեղծած լինել, մարդ ուղարկեց և Փասիսից առավ դրամը: Ալանները սպաթարին մեծ պատիվներով ընդունեցին, նրա առաջարկներին ընդառաջ դնացին և ներխուժելով Աբաղզիա, գերեզմարեցին այն: Աբաղզիների տերը հայտնում է ալաններին, թե «Հուստինիանոսը, երևի, սրանից այլևի խաբեքս մարդ չունի, որ ուղարկեի և ձեզ մեր դեմ գրգռե՝ ձեր հարեալների նա ձեզ դրամ խոստացավ, բայց խաբեց, քանզի Հուստինիանոսը մարդ ուղարկեց և այդ դրամն առավ: Արդ, դուք մեզ հանձնեք նրան, մենք ձեզ երեք հազար դահեկան կտանք, մեր դարավոր բարեկամությունն էլ թող անխախտ մնա»: Ալանները պատասխանեցին, թե «Մենք նրան ընդառաջ գնացինք ոչ թե դրամի սիրույն, այլ կայսեր հանդեպ տածած մեր սիրո: Աբաղզիները դարձյալ մարդ ուղարկեցին նրանց մոտ, ասելով, թե «Մեզ տվեք նրան, կտանք վեց հազար դահեկան»: Ալանները, ցանկանալով հետախուզել աբաղզիների երկիրը, համաձայնվեցին վեց հազար դահե-

կանի դիմաց հանձնել սպաթարին: Ալանները սպաթարին ամեն ինչի մասին տեղյակ պահեցին և ասացին. «Ինչպես տեսնում ես, Ռոմանիա տանող ճանապարհը փակ է, ինչպես պիտի դնաս հայտնի չէ: Եկ դիմենք իտրամանկության, ձևացնենք, որ հանձնում ենք քեզ, նրանց մարդկանց հետ մեր մարդկանց կուղարկենք, կհետախուզենք նրանց կլեյսուրները, ասպատակ կսփռենք և կավերենք նրանց երկիրը, որով կատարած կլինենք մեր ծառայությունը»: Եվ ահա, ալանների ղեսպանները գնում են Աբաղզիա և հայտնում, թե համաձայն են հանձնել սպաթարին: Այդ առթիվ նրանք [աբաղզիներից] շատ ընծաներ ստացան: [Աբաղզիները] դարձյալ բազում ղեսպաններ են ուղարկում որոշված գումարով, սպաթարին ստանալու համար: Ալաններն ասում են սպաթարին. «Այս մարդիկ, ինչպես նախօրոք հայտնել ենք, եկել են քեզ տանելու, Աբաղզիան ընդունում է քեզ: Երբ մոտենանք նրանց, ապա որպեսզի մեր ծրագիրը չբացահայտվի (նրանց երկիրը գնացող վաճառականներ պակաս չեն), մենք քեզ բացահայտ կհանձնենք: Երբ դուք շարժվեք առաջ, մենք ծածուկ ետևից կհարձակվենք, նրանց կսպանենք, իսկ քեզ կթաքցնենք, մինչև որ հավաքվի մեր զորքը և անակնկալ ներխուժենք նրանց երկիրը»: Այդոր հավաքվի մեր զորքը ղեսպանները ստանալով սպաթարին և վերպես էլ եղավ: Աբաղզիների ղեսպանները ստանալով սպաթարին և վերջինիս մարդկանց, կապանքների մեջ առան ու ճանապարհ ընկան: Ալանները իրենց տեր Իտաքսեսի ղլխավորությամբ նրանց ետևից վրա հասնելով, սպանեցին աբաղզիներին, իսկ սպաթարին թաքցրին: [Իտաքսեսը] զորք հավաքելով շարժվեց Աբաղզիայի վրա և կլեյսուրների միջով անակնկալ մուտք գործելով, աբաղզիներին մեծ ջարդ տվեց ու բազում գերիներ բռնեց, տարավ: Հուստինիանոսը լսելով, որ իր ծրագիրն առանց դրամի էլ զլուխ եկավ, աբաղզիներին նամակ գրեց, որտեղ ասված էր. «Եթե դուք փրկեք մեր սպաթարին և թույլ տաք նրան անվնաս անցնել ձեր երկրով, ապա ձեր բոլոր զանցանքները կներենք»: Նրանք ուրախությամբ ընդունեցին այդ առաջարկը և դարձյալ մարդ ուղարկեցին Ալանիա, ասելով, թե «Մեր երեխաներին ձեզ պատանդ կտանք, տվեք մեզ սպաթարին, որպեսզի նրան Հուստինիանոսին ուղարկենք»: Սպաթարը ընդունեց դա և ասաց. «Աստված ինձ մի դուռ կբացի, որ դուրս գամ: Ես Աբաղզիայի վրայով գնացողը չեմ»: Որոշ ժամանակ անց հոռոմայեցիների և հայերի մի զորաբանակ Լադիկա մտավ և պաշարեց Արխայուպոլիսը⁵⁵⁴, բայց լսելով սարակինոսների գալու մասին, թողեց հեռացավ: Նրանից շուրջ երկու հարյուր հոգի առանձնանալով, ասպատակ սփռելով բարձրացան Ապսիլիայի շրջաններն ու Կովկասյան լեռները: Երբ սարակինոսները հասան Լադիկա, հոռոմայեցիների և հայերի զորքը վերադարձավ

Ֆասիս: Երկու հարյուր հոգին մնաց Կովկասյան լեռներում և հուսարեկ եղած սկսեց ավազակութեամբ պարապել: Ալանները, իմանալով այդ մասին, կարծեցին, որ Կովկասյան լեռներում հոռմայեցիների մեծաքանակ զորք կա, և ուրախացած ասացին սպաթարին. «Հոռմայեցիները մտածեցել են, նրանց մոտ գնա»: Սպաթարը իր հետ առնելով հիսուն ալանների, մայիս ամսին, կլոր դահուկներով անցավ ձյունածածկ Կովկասյան լեռները, հանդիպեց նրանց և բերկրացած հարցրեց. «Զորքն ո՞ւր է»: Նրանք պատասխանեցին. «Երբ սարակինոսները հարձակվեցին, նրանք թողեցին և վերադարձան Ռոմանիա, իսկ մենք, չկարողանալով Ռոմանիա վերադառնալ, շարժվեցինք դեպի Ալանիա», Սպաթարի հարցին՝ «Հիմա ի՞նչ անենք», նրանք պատասխանեցին. «Այդ երկրով մեզ անհնարին է անցնել»: Սպաթարն ասաց. «Այլ ճանապարհով չենք կարող դուրս գալ»: Այնտեղ մի բերդ կար, անունը Երկաթե [բերդ]⁵⁵⁵, որի բերդապահը սարակինոսներին հպատակ ոմն Փարեսման էր: Նա հայերի հետ հաշտ էր ապրում: Սպաթարը նրա մտա մարդ ուղարկեց և ասաց. «Քանի որ հայերի հետ հաշտ ես ապրում, ապա ինձ հետ էլ հաշտվիր և ենթարկվիր կայսրության, օգնիր մեզ հասնել ծովափ և անցնել Տրապիզոն»: Նա մերժեց: Դրա վրա սպաթարը իր մարդկանցից հայերի էլ է ուղարկում, պատվիրում դարանակալել և կարգադրում. «Երբ որ նրանք բերդից դուրս գան աշխատանքի գնալու, նրանցից որքան կարող եք բռնեք, դոսից պահեք դռները, մինչև որ մենք էլ վրա հասնենք»: Նրանք գնացին, դարանակալեցին և երբ [բերդի] մարդիկ դուրս եկան աշխատանքի, հանկարծակի հարձակվեցին, դարբասին տիրացան և շատերին գերեցին: Բերդում մնաց Փարեսմանը՝ փոքրաթիվ մարդկանցով, երբ այդ միջոցին սպաթարն էլ վրա հասավ, որ դիմելով նրան, կոչ արեց խաղաղություն բացել՝ դարբասները: Նա մերժեց ու դիմեց կովի: Բերդն անառիկ էր, այդ պատճառով նրանք չկարողացան այն գրավել: Ապսիլացիների առաջնորդ Մարինոսը իմանալով, որ բերդը օդակի մեջ է առնված, երկյուղի մեջ ընկավ, որովհետև ենթադրեց, թե սպաթարը մեծաթիվ զորք ունի: Իր հետ երեք հարյուր հոգի վերցնելով, նա գնաց սպաթարի մոտ ու ասաց. «Ես քեզ ողջ առողջ ծովափ կհասցնեմ»: Փարեսմանը, տեսնելով իրավիճակը, ասաց սպաթարին. «Ըմ երեխան քեզ պատանդ, ես համաձայն եմ ծառայել կայսրության»: Վերցնելով նրա երեխային, նա ասաց. «Բայց կայսրության ինչպիսի՞ ծառա ես դու քեզ համարում, երբ մեզ հետ ես խոսում [բերդում] փակված: Առանց բերդին տիրանալու մենք յայտեղից գնացողը չենք»: Դրա վրա Փարեսմանն ասաց. «Ինձ երաշխիք տուր»: Սպաթարը նրան անձնանմանիություն մասին երաշխիք տվեց, խոստացավ բերդ մտնել

երեսուն հոգով միայն: Բայց նա իր խոսքի տերը չեղավ և իր հետ ներս մտնող երեսուն հոգուն արեց հետևյալ կարգադրությունը. «Հենց որ ներս մտնենք, դուք բռնեք դարբասները, թող բոլորը ներս մտնեն»: Երբ այդպես էլ եղավ, նա հրամայեց բերդը կրակի տալ: Մեծ հրդեհ բռնկվեց, պես էլ եղավ, նա հրամայեց բերդը կրակի տալ: Մեծ հրդեհ բռնկվեց, ընտանիքները իրենց ունեցվածքից ինչ որ կարող էին կրել, առնելով դուրս էին գալիս: Սպաթարն այնտեղ մնաց երեք օր ևս և հիմնահատակ քանդելով նրա պարիսպները, շարժվեց իջավ Ապսիլիա՝ վերջինիս առաջնորդ Մարինոսի հետ, արժանանալով ապսիլացիների փառավոր ընդունելություն: Այնտեղից նա իջավ ծովափ ու [նավով] եկավ Հուստինիանոսի մոտ: Հուստինիանոսի սպանությունից և Ֆիլիպպիկոսի կուրացումից հետո թագավորած Արտեմիոսը սպաթարին նշանակեց Անատոլիկոնի զորավար: Երբ Թեոդոսիոսը գահ բարձրացավ, Արտեմիոսն էլ վտարվեց, երբ հոռմայեցիների պետությունը տակն ու վրա էր լինում բարբարոսների ներխուժումների, Հուստինիանոսի ոճրագործությունների և Ֆիլիպպիկոսի սրբապղծությունների պատճառով, հիշյալ Լևոնը պաշտպանում էր Արտեմիոսին՝ ընդդեմ Թեոդոսիոսի: Նրան համախոհ էր ու դաշնակից Արմենիակների զորավար Արտավազը, որին նա, զահին տիրանալուց հետո, կուրապաղատի տիտղոսը⁵⁵⁶ շնորհեց և իր զստեր Աննային նրան կնություն տվեց:

Մասլաման, որ Ասիայում⁵⁵⁷ էր ձմեռել, ընդունեց Լևոնի խոստումները⁵⁵⁸, սակայն Լևոնը խոստացածի և ոչ մեկը չկատարեց: Մասլաման, տեսնելով, որ նրանից խաբվել է, եկավ Աբյուզոս, մեծաթիվ զորք անցկացրեց Թրակիա և շարժվեց մայրաքաղաքի վրա: Ամիրապետ⁵⁵⁹ Սուլեյմանին էլ գրեց օգնություն հասնի իր նախապատրաստած նավատորմի ղով: Մասլաման ասպատակելով Թրակիայի բերդերը, օգոստոս ամսի 15-ին պաշարեց քաղաքը⁵⁶⁰: Վերջինիս բնակիչները ամրացրել էին ցամաքային պարիսպը՝ մի մեծ խրամատ փոքրել, որի ետևում առանց շաղախի մի ցածր շրջապարիսպ կառուցել: Ինդիկտինի 1-ին տարվա սեպտեմբեր ամսի 1-ին քրիստոսամարտ Սուլեյմանն ամիրաներով, 1800 վիթիարի նավերով, պատերազմական կատենաներով⁵⁶¹ ու դրոմոններով տեղ հասավ ու խարխիս գցեց Մազնավրայից⁵⁶² մինչև Կյուկլորին⁵⁶³: Երկու օր անց, երբ հարավային քամի փչեց, նրանք շարժվեցին ու մոտենրկու օր անց, երբ հարավային քամի փչեց, նրանք շարժվեցին ու մոտենեցան քաղաքին: Մի մասն անցավ Եվտրոպիոսի⁵⁶⁴ և Անթեմիոսի⁵⁶⁵ թացան քաղաքին: Մի մասն անցավ Եվտրոպիոսի⁵⁶⁴ և Անթեմիոսի⁵⁶⁵ թագամասերը, իսկ մյուսը՝ Թրակիայի ափերը, խարխիս գցելով Գալատի բերդամասերը, իսկ մյուսը՝ Թրակիայի ափերը, խարխիս գցելով Գալատի բերդից⁵⁶⁶ մինչև Բանալին⁵⁶⁷: Հսկայական բեռից ծանրաշարժ դարձած և [հոռմայեցիների] կողմից որսացվող մեծ նավերի պահպանության համար [արարներն] առանձնացրին շուրջ 20 կատենա, որոնց յուրաքանչյուրի մեջ

կային 100 զրահակիր զինվորներ: Երբ նրանք հոսանքի մեջ էին գտնվում, եղանակը պարզեց, իսկ Ստենոնից փշած թեթև քամին նրանց դեպի դուրս քշեց: Ակրոպոլիսում գտնվող բարեպաշտ կայսրը նրանց դեմ խսկույն հրակիր նավեր ուղարկեց, աստծո օգնությամբ նրանց հրո ճարակ դարձրեց: Նըրանց մի մասը բոցերով փաթաթված ծովափնյա պարիսպների մոտ շրպերտվեց, մյուսը՝ զինվորներով հանդերձ ջրասուղեղ եղավ: Ուրիշ նավեր էլ հրաբուրեք քշվեցին մինչև Օքսիա և Պլատիա⁵⁶⁸ կղզիները: Այդ բանը քաղաքացիներին գոտեպնդեց, թշնամիներն էլ ճանաչելով հեղուկ կրակի մեծ ուժը, անշափ վճատվեցին: Նրանք մտադիր էին այդ երեկո մոտենալ ծովափնյա պարիսպներին և աստիճաններ հենել ատամնաշարերին: Բայց աստված, ամենասուրբ աստվածածնի միջնորդությամբ խափանեց նրանց ծրագիրը. նույն գիշերը բարեպաշտ կայսրը ծածուկ կերպով Գալատից շղթան քաշեց⁵⁶⁹: Թշնամիները, ենթադրելով, որ կայսրը [շղթան] հանեց նենգորեն՝ իրենց ներս քաշելու մտադրությամբ, չհամարձակվեցին ներս մտնել և խարիսխ գցել Գալատից ներս, նրանք նավեցին Սոսթենիոսի ծոցը⁵⁷⁰ և իրենց նավերը այնտեղ պատսպարեցին: Հոկտեմբեր ամսի 8-ին նրանց առաջնորդ Սուլեյմանը վախճանվեց և պմիրապետ դարձավ Օմարը⁵⁷¹: Իսկ Քրակիայում սաստիկ ձմեռ արեց, գետինը 100 օր ծածկված մնաց սառույց կտրած ձյունով, թշնամիների բազում ձիեր, ուղտեր և այլ անասուններ սատակեցին: Գարնանը Սոֆիամն եկավ՝ Եգիպտոսում պատրաստված նավատորմիղով: Նա ուներ ցորենակիր 400 կատենաներ և դրոմոններ: Իմանալով հունական հրո տեսած գործի մասին, նա Բյութանիայի ամերով նավեց, անցավ դիմացի ամբը և Կալոս Ագրոսի⁵⁷² նավահանգստում խարիսխ գցեց: Փոքր անց տեղ հասավ և Եղիզը՝ Աֆրիկայում պատրաստված մի այլ նավատորմիղով: Նա իր տըրամադրության տակ ուներ 360 կատենա, զենք ու պարեն: Նա ևս իմանալով հեղուկ հրո մասին, խարիսխ գցեց Սատյուրոսում, Բրիայում՝ մինչև Կարտալիմեն⁵⁷³: Այս երկու տորմիղներում ծառայող եգիպտացիք⁵⁷⁴ ծածուկ համաձայնության գալով, գիշեր ժամանակ բարձրացրին կատենաների խարիսխները և փախան քաղաք՝ կայսեր ներքոգելով: Հիերիայից սկսած մինչև քաղաքը, ծովը նավերով ծածկվեց: Կայսրը նրանցից տեղեկացավ ծոցում թաքնված երկու տորմիղների մասին և պատրաստելով հրակիր սիֆոններ, դրանք տեղադրեց դրոմոնների ու դիբրանների վրա և այդ երկու տորմիղների դեմ ուղարկեց: Աներծ աստվածածնի միջնորդությամբ աստված սատար կանգնեց և թշնամիները տեղն ու տեղը ջրասուղեղ եղան: Մերոնք ավարով ու նրանց պարենով բերկրությամբ ու հաղթանակով վերադարձան: Կրվոսում և Սոֆոնում⁵⁷⁵ մարդայիտների

նման զարանակայած կայսերական իշխանավորներն անակնկալ կերպով հետևակազորը նետեցին Պյուլեից⁵⁷⁶ մինչև Նիկիա և Նիկոմեդիա արաբական զորքով ասպատակ սփռող Մարդասանի վրա և նրա զորքը բաժան-բաժան անելով, ստիպեցին հեռանալ այնտեղից: Երբ Պերատիկայի ամբը մի փոքր շունչ քաշեց, խելանդիոնները կարողացան քաղաքից դուրս գալ և առատ պարեն բերել: Ջինոբասնավերը նույնպես առանց որևէ դժվարության կարողանում էին կղզիների և [քաղաքի] ծովափնյա պարիսպների մոտ ձուկ որսալ: Իսկ երբ արաբների մեջ սաստիկ սով եղավ, նրանք ստիպված սկսեցին իրենց սատակած անասուններն ուտել՝ ձիերին, ավանակներին և ուղտերին: Պատմում են, որ նրանք ուտում էին անգամ մեռածների դիակները, իրենց աղբը՝ շաղելով և փոում եփելով: Նրանց մեջ բռնկվեց նաև համաճարակ, որն անթիվ զոհեր տարավ: Ի վերա ամենայնի նրանց դեմ կովի ելավ նաև բուլղարների ազգը, որն, ինչպես ասում են տեղյակ մարդիկ, 22 հազար արաբ կոտորեց⁵⁷⁷: Այդ ընթացքում նրանց գլխին բազում այլ փորձանքներ էլ եկան, և նրանք համոզվեցին, որ աստված և ամենասուրբ կույս աստվածամայրն են այդ քաղաքի և քրիստոնեից թագավորության պահպանները, որ աստված երբեք չի լքում իրեն մաքուր սրտով զիմողներին (թեպետև կարճ ժամանակով տառապում ենք մեր գործած մեղքերի պատճառով):

[A. M. 6210]

Արաբների առաջնորդ Օմարը Իշխեց 2 տարի:

[Աշխարհի արաբազոր- ծուխյան] 6210 թ.	[Քրիստոսի մարգեղու- թյան] 710 թ.	[Հռոմայեցիների ևճոն կայսեր] 2-րդ տարին
[Արաբների առաջնորդ Օճարի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Գեր- մանոս պատրիարքի] 4-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարի Սիկիլիայի զորավար Սերգիոս պրոտոսպաթարը⁵⁷⁸, լսելով, որ սարակինոսները պաշարել են մալրաքաղաքը, [Սիկիլիայում] իր մարդկանցից մեկին՝ Վասիլ Կոստանդնուպոլսեցուն՝ Գրիգոր Օնոմազուլոսի որդուն սեփական կայսր թագադրեց, վերանվանելով Տիբերիոս: Վերջինս հիշյալ Սերգիոսի խորհրդով իր համար նոր մարդկանց նշանակեց և սեփական իշխանավորների: Կայսրը, լսելով այդ մասին, իր խարտուլար Պավղոսին նշանակելով պատրիկ և Սիկիլիայի զորավար, այնտեղ ուղարկեց, որպես օգնական տալով երկու սպաթար և փոքրաթիվ

մարդկանց, ինչպես և արևմտական կողմերի իշխանավորներին ուղղված կարգադրություններ և ժողովրդին ուղղված կայսերական հրովարտակ⁵⁷⁹։ Նրանք գիշերով մտան մի թիավոր դրոմոնի մեջ, դուրս եկան Կյուզիկոսի կողմերը և վայրից վայր, ցամաքով ու ծովով առաջ գնալով, հանկարծակի հասան Սիկիլիա։ Երբ նրանք Սիրակուսա մտան և Սերգիոսն իմացավ այդ մասին, իրարանցման մեջ ընկավ, և կռահելով, որ նրանք իր համար են եկել, փախավ Կալարրիային սահմանակից լոնգոբարդներին մոտ։ Երբ ժողովուրդն հավաքվեց և հրովարտակն ընթերցվեց, նրան պարզ դարձավ, որ թագավորությունն էլ է կանգուն, թշնամիների դեմ մղվող պայքարում մայրաքաղաքի բնակչության ոգին էլ բարձր։ Երբ նրանց պատմեցին նաև երկու տորմիդների հետ տեղի ունեցած դեպքերի մասին, ժողովուրդը Լևոնին կայսր ներբողեց, իսկ Վասիլ Օնոմագուլոսին և նրա նշանակած իշխանավորներին շղթայակապ զորավարի ձեռքը հանձնեց։ Վերջինս Վասիլին և նրա մոնոստրատեգոսին⁵⁸⁰ գլխատեց և նրանց զմուսած գլուխները սպաթարների միջոցով կայսեր ուղարկեց։ Մնացածներին էլ զանակոծեց, խուզեց, ոմանց քիթը կտրեց ու աքսորեց։ Ահա այդ ճանապարհով արևմտականների մեջ կատարյալ կարգուկանոն հաստատվեց։ Ինչ վերաբերում է վերոհիշյալ Սերգիոսին, ապա նա զորավարից անձեռնմխելիության երաշխիքներ խնդրելով և ստանալով, նրա մոտ գնաց։ Այդպիսով արևմտական բոլոր շրջանները խաղացվեցին։

Իսկ Օմարը, ստանալով արաբների գերազույն իշխանությունը, Մասլամային կարգադրեց վերադառնալ։ Եվ ահա հազարացիք օգոստոս ամսի 15-ին կատարյալ խայտառակ եղած ճամփա ընկան։ Նահանջի ժամանակ աստված աստվածամոր միջնորդությամբ նրանց նավատորմիդ գլխին փոթորիկ թափեց և նրանց նավերը ցիրուցան արեց, ոմանց Պրոկոնիսոսի⁵⁸¹ և այլ կղզիների մոտ ջրասույզ արեց, ոմանց էլ Ապոստոլոֆներում և այլ ափերում։ Վերապրածների վրա էգեական ծովով նավարկելիս հանկարծակի աստծո սարսափելի պատիժը թափվեց՝ հր կարկուտ, որը ծովը եռացրեց, [նավերի] ձյութը հալեցրեց և նավերը գինվորներով հանդերձ ջրասույզ եղան։ Տասը նավ միայն փրկվեց, այն էլ աստծո նախախնամությամբ, որպեսզի մեզ և արաբներին հայտնի դարձնեն աստծո մեծագործությունները, որոնք տեղի ունեցան նրանց նկատմամբ։ Այդ տասը նավից հինգը մերոնց ձեռքն ընկան, մնացած հինգը փրկվեցին Ասորիք և հաղորդեցին աստծո զորության մասին։

Այն պատճառով, որ նույն տարին Ասորիքում ուժեղ երկրաշարժ էլ եղավ, Օմարն արգելեց գինու գործածությունը քաղաքներում, քրիստոն-

յաներին ստիպում էր հավատափոխ լինել։ Հավատափոխ եղողներին նա աղատում էր հարկերից, իսկ շեղողներին՝ սպանում։ Նա շատերին մարտիրոսական մահվան արժանացրեց։ Նա օրենք հրապարակեց, համաձայն որի քրիստոնյան իրավունք չունի վկայություն տալ ընդդեմ սարակիստսի։ Նա դավանական բնույթի նամակ էլ գրեց Լևոնին, մտադիր լինելով նրան համոզել հավատափոխ լինել⁵⁸²։

[A. M. 6211]

[Հոռոմայեցիների կայսեր] 3-րդ տարին	Լևոն	[Արաբների առաջնորդ Օմարի] 2-րդ տարին
[Կոստանդնուպոլսի մանոս պատրիարքի] 5-րդ տարին	Գեր	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 14-րդ տարին

Այդ տարի ամբարիշտ Լևոն կայսրը իրենից առավել ամբարիշտ որդի ունեցավ Կոստանդին⁵⁸³՝ Նեոի կարապետին։ Իսկ դեկտեմբեր ամսի 25-ին [Լևոնի] կին Մարիան թագադրվեց Ավգուստոնոնի սրիկլինում⁵⁸⁴ և շքախմբով, մեծակ, առանց ամուսնու գնաց Մեծ եկեղեցին և աղոթելով մեծ խորանի մուտքի առջև, անցավ մեծ մկրտարանը։ Իրենից առաջ փոքրաթիվ հարազատներով այնտեղ էր եկել իր ամուսինը։ Երբ Գերմանոս պատրիարքը մկրտում էր շարության և նրանց թագավորության ժառանգ Կոստանդինին, վերջինս դեռ հենց մանուկ հասակում բացահայտեց իր վատության ու զարշահոտության պայցույցները. իսկական ականատեսները պատմում են, որ նա սուրբ ավազանի մեջ կեղտոտեց, որի առթիվ սրբազնագույն Գերմանոս պատրիարքը մարգարեաբար առաց, թե «Դա նշան է այն բանի, որ քրիստոնյաների ու եկեղեցու գլխին նա մեծ փորձություններ է բերելու»։ Բանակաթեմերի և սենատի մեծերը մկրտությունից հետո ընդունեցին նրան։ Սուրբ պատարագից հետո ավգուստա Մարիան իր մկրտված որդու հետ շքախմբով վերադարձավ, եկեղեցուց մինչև պալատի խալկն դարբասը փող ցրիվ տալով։

Նույն տարին Նիկեոսա Քսիլիսիտեսը Թեսաղոնիկեում գտնվող Արտեմիոսին նամակ է գրում, կոչ անելով գնալ Տերվիխսի մոտ և բուլղարական օգնական զորքով զալ ընդդեմ Լևոնի։ Նա համաձայնվեց ու գնաց։ [Բուլղարները] նրան տվեցին զորք և 50 կենտինար ոսկի⁵⁸⁵, որոնցով նա շարժվեց Կոստանդնուպոլսի վրա։ Երբ քաղաքացիները [Արտեմիոսին] շնորհունեցին, բուլղարները նրան Լևոնին հանձնեցին և նրանից նըվերներ ստանալով վերադարձան։ Կայսրը նրան և Քսիլիսիտեսին մահա-

պատժի ենթարկեց, Քսիլինիտեսի ունեցվածքը բռնագրավեց (լինելով մագիստրոս⁵⁸⁶, նա շատ հարուստ էր): Բուլղարներն իրենց հերթին, որպես Արտեմիոսի համախոհներին, գլխատեցին Սիսինիոս պատրիկին, մականունը՝ Հոենդակես⁵⁸⁷, իսկ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսին կայսեր հանձնեցին, որը Արտեմիոսի հետ գլխատվեց: [Լևոնը], որպես [Արտեմիոսի] ընկերների և համախոհների, մահապատժի ենթարկեց նաև Օպսիկիոն բանակաթեմի կոմես Իսոես պատրիկին⁵⁸⁸, պրոտոասեկրետ Թեոկտիստոսին, նաև պարիսպների [պաշտպանություն] պետ⁵⁸⁹ Նիկետաս Անթրաքսին: Մնացածների բիթը կտրելով և ունեցվածքը բռնագրավելով, արսրեց:

[A. M. 6212]

Աշխարհի արարչագործության 6212 թ.	Քրիստոսի մարդնություն 712 թ.	Հոռոմայցիների կայսեր 24-ամյա թագավորության 4-րդ տարին	Լևոն
Արաբների առաջնորդ Ն-գիդի 4-ամյա իշխանության 1-ին տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի 15-ամյա աթոռակալության 6-րդ տարին	Երուսաղեմի կայսերի 30-ամյա աթոռակալության 15-րդ տարին	Հովհաննես

Այդ տարի, ինդիկտոնի 3-րդ տարին, Ջատկի օրը տասնինն ակուբիաների տրիբունալիոնում⁵⁹⁰ Կոստանդինը իր հայր Լևոնի կողմից թագադրվեց, ընդունված մաղթանքները հղեց երանելի Գերմանոս պատրիարքը:

Նույն տարին վախճանվեց արարների ամիրապետ Օմարը, իշխելով 2 տարի և 4 ամիս: Ամիրապետ դարձավ Եղիզը⁵⁹¹: Պարսկաստանում նրա դեմ ապստամբում է նույն Եղիզ անունով մեկը, մականունը՝ Մուալաբի⁵⁹²: Պարսկաստանում շատերը սրա կողմն անցան: Եղիզը նրա դեմ Մասլամային ուղարկեց, սպանեց նրան և Պարսկաստանը հպատակեցրեց:

[A. M. 6213]

[Հոռոմայցիների կայսեր] 5-րդ տարին	Լևոն	[Արաբների ևզիդի] 2-րդ տարին	Առաջնորդ
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 7-րդ տարին	[Երուսաղեմի ևզիդի] 16-րդ տարին	Հովհաննես

Այդ տարի ինչ-որ ասորի սուտ Քրիստոս երևաց: Նա հրեաներին մոլորեցրեց ասելով, թե հենց ինքն է Քրիստոսը, որդին ասածո:

[A. M. 6214]

[Հոռոմայցիների կայսեր] 6-րդ տարին	Լևոն	[Արաբների ևզիդի] 3-րդ տարին	Առաջնորդ
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 8-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 8-րդ տարին	[Երուսաղեմի ևզիդի] 17-րդ տարին	Հովհաննես

Այդ տարի կայսրը հրեաներին և մոնտանյաններին⁵⁹³ ստիպեց մկրտվել: Հրեաներն ակամա մկրտվում էին, բայց հետո լվանում հանում [մեռոնը], հաղորդվում էին կերած՝ պղծում հավատքը: Իսկ մոնտանյանները գուշակություն անելով, օր նշանակեցին և մտնելով իրենց մոլորության կանխավ նշած [աղոթա]տները, իրենց ողջակեզ արեցին:

[A. M. 6215]

[Հոռոմայցիների կայսեր] 7-րդ տարին	Լևոն	[Արաբների ևզիդի] 4-րդ տարին	Առաջնորդ
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 9-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 9-րդ տարին	[Երուսաղեմի ևզիդի] 18-րդ տարին	Հովհաննես

Այդ տարի ծագումով Փյունիկեի ծովափնյա Լավոդիկիայից մի հրեա կախարհ Եղիզի մոտ եկավ և գուշակեց, որ նա արաբների վրա կիշխի 40 տարի, եթե նա, Եղիզը, իր համայն տիրապետության մեջ գտնվող քրիստոնյաների եկեղեցիներից վերացնի սրբապատկերները: Տխմար Եղիզը հավատաց նրան և սուրբ ու նվիրական պատկերների դեմ⁵⁹⁴ համընդհանուր օրենք հրապարակեց: Բայց մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի շնորհիվ և նրա անարատ մոր ու բոլոր սրբերի միջնորդությամբ հենց նույն տարին էլ Եղիզը մեռավ: Շատերը նրա սաղայելական օրենքի մասին լլսեցին անգամ: Բայց այդ դառն ու անօրեն ամբարշտությունը Լևոն կայսրն ընդունեց և մեր գլխին բազում փորձանքներ բերեց⁵⁹⁵: Նա այդ տխմարության համախոհ գտավ ի դեմս ինչ-որ Բշիրի⁵⁹⁶, Ասորիքում գերի ընկած նախկին մի քրիստոնյայի, որը քրիստոնեությունն ուրանալով, ընդունեց արաբների կրոնը: Նա մի փոքր առաջ ազատվելով [արաբական] ստոր-

կուստանդնուպոլսից, հոռոմայեցիները պետութիւնը եկալ և որպէս մարմնով հզոր և շարափառութեան համախոհ Լեոնի կողմից մեծ պատվով ընդունվեց: Նա կայսեր սատարը դարձալ այդ կարգի մեծ ամբարիշտ գործում: [Լեոնի] համախոհներէջ էր նաև ամենայն ազտեղութեամբ լի նախախալ⁵⁹⁷ անկիրթ հայիկոպոսը:

[A. M. 6216]

Արարների առաջնորդ Հիշամ⁵⁹⁸, Իշխեց 19 տարի:

[Հոռոմայեցիների և տն կայսեր] 8-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 1-ին տարին
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 10-րդ տարին	[Նրուաղեմի Հովհաննես պատրիարքի] 19-րդ տարին

Ես այժմ կայստմեմ, թե ինչպէս Հոռոմի երանելի Ստեփանոս պապը⁵⁹⁹ փախուստի դիմեց Ֆրանկների երկիրը և փրկվեց:

Այս երանելի Ստեփանոսը լոնգոբարդների ռեքս Աստուլֆոսի⁶⁰⁰ կողմից բազում փորձութիւնների հանդիպելով, Պիպինոսի⁶⁰¹, Ֆրանկ ազգի մայրորդմի և գերագույն կառավարչի օրոք Ֆրանկների մտտ փախալ: Նրանց մտտ տիրոջ, այսինքն ռեքսի իշխանութիւնը ժառանգական է: Ռեքսերը ոչինչ չեն անում, չեն կառավարում, սոսկ շափից ալելի ուտում են ու խմում, մնում տանը, իսկ մայիս ամսի մեկին ողջ ժողովրդի ներկայութեան գահին են բազմում, երկրպագում ժողովրդին և արժանանում վերջինիս երկրպագութեան, ընդունված կարգի համաձայն նվերներ ստանում և փոխհատուցում, որից հետո մինչև հաջորդ մայիս ամիսը ինքնամիտի անցկացնում: Մայրորդմը իր և ժողովրդի անունից ամեն ինչ վարող մեկն ունի: Մայրորդմի տոհմից սերտղները կոչվում էին կրիստաաներ, որ թարգմանաբար նշանակում է «մազոտ կոնակ ունեցողներ»⁶⁰², քանզի նրանց կոնակը խողի մեջքի պէս մազոտ է լինում: Արդ, Աստուլֆոսի զաժանութիւնից ու անմտութիւնից ստիպված, բայց և նրա թուլութեամբ, Ստեփանոսը գնաց Ֆրանկիա, Աստուլֆոսից նախօրոք իրավունք ստանալով գործել իր հայեցողութեամբ: Տեղ հասնելով նա ձեռնադրում է այնտեղ մեծ համբալ վալելող և ռեքսի կողմից պետութեան վերակացու նշանակված Պիպինոսին: Նա անցալում մարտընչել էր Աֆրիկայից Իսպանիա անցած և մինչև օրս այդ երկրին տիրող արաբների դեմ, որոնք փորձել էին Ֆրանկների դեմ էլ մարտնչել: Բազում զորքով նրանց դեմ դուրս եկած Պիպինոսը էրիզանոս զետի⁶⁰³ ափին

սպանում է այդ ազգի առաջնորդ Արդուահամանին, ինչպէս նաև մեծ թվով արաբների, և դառնում Ֆրանկ ժողովրդի հիացմունքի և սիրո առարկան, և ոչ միայն սրա պատճառով, այլև իր այլ առաքինութիւնների: Նա առաջինն էր, որ դարձալ [Ֆրանկ] ժողովրդի առաջնորդը ոչ ըստ ծագման. նույն այդ Ստեփանոսը քաղեց Պիպինոսի՝ ռեքսի հանգեպցուցարերած երգմնազանցութեան մեղքը: Պիպինոսը խուզելով իրենից առաջ իշխող ռեքսին, առք փառք վանքում արգելափակեց, ապահովելով նրա անգորքը: Այս Պիպինոսը երկու որդի ունեցալ՝ Կարուլոսին և Կարուլոմագնոսին⁶⁰⁴:

Նույն տարին վախճանվեց Եղիզը, որն արաբների վրա ամիրայացալ 4 տարի: Ամիրայակտ դարձալ նրա եղբայր Հիշամը, որն սկսեց գլուղելուս և քաղաքներում ապարանքներ կառուցել, պարտեղներ ու այգիներ տնկել, ջրանցքներ անցկացնել: Նա Ռոմանիայի վրա արշալեց, բայց իր գինվորներից շատերին կորցնելով, վերադարձալ:

Հոռոմի Ստեփանոս պապը Ֆրանկների մտա՝ փախալ:

[A. M. 6217]

Հոռոմի Գրիգոր պապ⁶⁰⁵: Աթոռակալեց ինն տարի:

[Հոռոմայեցիների և տն կայսեր] 9-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 2-րդ տարին	[Հոռոմի Գրիգոր պապի] 1-ին տարին
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 11-րդ տարին	[Նրուաղեմի Հովհաննես պատրիարքի] 20-րդ տարին	

Այդ տարի ամբարիշտ Լեոն կայսրը առաջին անգամ լինելով, խոսք բացեց սուրբ ու նվիրական պատկերների վերացման մասին⁶⁰⁶: Հոռոմի Գրիգոր պապը, իմանալով այդ մասին, վար դրեց Խտալիայի և Հոռոմի հարկերը, Լեոնին դավանական բնույթի նամակ գրեց, թե կայսրը իրավասու չէ հավատքի հարցերով զբաղվելու, փոփոխելու սուրբ հայրերի հաստատած եկեղեցու վաղեմի կարգուկանոնը:

Նույն այդ տարին հորդած ուղիւր ողողեց Եղեմիա քաղաքը և շատերին քշեց տարալ կորցրեց:

[A. M. 6218]

[Հոռոմայեցիների և տն կայսեր] 10-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 3-րդ տարին	[Հոռոմի Գրիգոր պապի] 2-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 12-րդ տարին	[Նրուաղեմի Հովհաննես պատրիարքի] 21-րդ տարին	

Այդ տարի Մասլաման արշավեց Կապադովկիայի Կեսարիայի վրա և առավ ան: Ասորիքում մահ տարածամ եղավ: Ամիրապետի ուղտերը հրո ճարակ դարձան սուր Եղիայում⁶⁰⁷: Հիշամի որդի Մուավիան Ռոմանիայի վրա արշավեց և երկիրը ոտնառակ անելով, վերադարձավ:

Նույն թվականին, ինդիկտիոնի 9-րդ տարին, ամառ ժամանակ Թերա և Թերասիա կղզիներին⁶⁰⁸ միջև ծովի խորքից մի քանի օր գոլորշիներ բարձրացան՝ կարծես կրակարանից, որ վառվելով աստիճանաբար ըստ վարացան ու քարացան, ողջ ծուխը կրակի տեսք ստացավ: Երկրային նյութը այնքան ստվար էր, որ ժայթքած պեմզայի բլրաշափ կտորներ շարտվեցին համայն Փոքր Ասիայի, Լիսբոսի, Աբջուզոսի, ափամերձ Մակեդոնիայի վրա, այդ ծովի ամբողջ երեսը լողացող պեմզայի բեկորներով ծածկվեց: Հրաբխի տեղում նախկինում գոյություն չունեցող կղզի առաջացավ, որ Հիերա կոչվող կղզուն միացավ: Վերոհիշյալ Թերա և Թերասիա կղզիները, ինչպես այս մեկը՝ աստվածամարտ Լեոնի օրոք, ժամանակին հենց այդպես ջրից են դուրս եկել: [Լեոնն] իր անձի դեմ աստծո ցուցաբերած այս ցասումը հօգուտ իրեն կատարված համարելով, առավել լիտիություն սկսեց պատերազմել սուրբ ու նվիրական պատկերների դեմ⁶⁰⁹, դաշնակից ունենալով աստվածուրաց Բշիրին, իր տիմարության պաշտպանին, երկուսն էլ բացարձակապես անուսում էին, լի տգիտությունով, որը և բազում դժբախտությունների աղբյուրն է: Մայրաքաղաքի բնակիչները այդ նոր վարդապետությունից հույժ դժգոհ, մտադրել էին կայսեր դեմ ապստամբություն բարձրացնել: Նրանք խալկե մեծ դարբասի վրայից Տիրոջ պատկերն իջեցրած մի քանի կայսերական պաշտոնյաների սպանեցին, որի համար շատերն իրենց բարեպաշտության սիրույն խնդման ենթարկվեցին՝ անդամահատման, խարազանման, արքորի, ունեցվածքի կորստյան, հատկապես տոհմիկ և կրթյալ մարդիկ: Մարակիտոսամիտ այս Լեոնը փակեց ուսումնարանները, սուրբ Կոստանդինից մինչև օրս ծաղկող բարեպաշտության ուսուցումը արգելեց, բազում այլ լավ բաներ բնաջինջ արեց: Այդ միջոցին Հելլադայի և Կիկլադյան կղզիների բնակիչները, աստվածային նախանձախնդրությամբ զրդված⁶¹⁰, համաձայնության եկան և նրա դեմ խոշոր տորմիղ հանեցին: Նրանց հարեց և ոմն Կողմաս՝ գահի թեկնածու: Բանակը գլխավորում էին Հելլադայի տուրմարի Ագալլիանոսը և Ստեփանոսը, որոնք մայրաքաղաքին մոտենալով, ինդիկտիոնի 10-րդ տարվա ապրիլ ամսի 18-ին բախվեցին բյուզանդացիներին⁶¹¹ և պարտվեցին, նրանց նավերը հեղուկ կրակի ճարակ դարձան: Ապստամբների մի մասը ջրասույզ եղավ փոսի մոտ, այդ թվում և Ագալլիանոսը, որ սպառազինությամբ հանդերձ իրեն

ջուրը գցեց: Վերապրողները կայսեր կողմն անցան: Կողմասն ու Ստեփանոսը գլխատվեցին: Ամբարիշտ Լեոնն ու նրա համախոհները բորբոքված շարունջամբ սաստկացրին բարեպաշտության հալածանքը: Ինդիկտիոնի այդ նույն 10-րդ տարվա ամռանը յուրայինների դեմ տարված վատթար հաղթանակից հետո, երկու սարակինոս ամիրաների զորաբանակներ հարձակվում են Բյութանիայի Նիկիա քաղաքի վրա՝ Ամբրը⁶¹² 15 հազար թեթևազեններով, որ պաշարեց անպատրաստի վիճակում գտնվող քաղաքը, և նրա ետևից ութուկես բյուր զինվորներով եկող Մուավիան: Բայց երկարատև պաշարումից, պարիսպների մասնակի քանդումից հետո էլ, այնտեղ գտնվող պաշտելի սուրբ հայրերի տաճարի, ինչպես և նրանց աստծուն ընդունելի աղոթքների պատճառով, նրանց շահագրգռվեց գրավել քաղաքը: Այս տաճարի պատերից էին կախված նրանց նվիրական սրբապատկերները, որոնք մինչև օրս պաշտելի են իրենց՝ սուրբ հայրերի համախոհներին: Արտավազգի⁶¹³ ստրատոր ոմն Կոստանդին, տեսնելով պատից կախված աստվածածնի պատկերը, մի քար վեցրեց և շարտեց նրա վրա, ջարդ ու փշուր արեց այն և ցած գրցելով տրորեց: Տիրուհին գալով նրա երազում ասաց. «Այդ ինչ մեծ սխրանք գործեցիր իմ դեմ: Բայց ճշմարիտ այդ [քարը] բո գլխին գրցած եղար»: Հաջորդ օրը, երբ սարակինոսները պարսպի վրա գրոհեցին և մարտն սկսվեց, այս Կոստանդինը որպես քաջ զինվոր շտապեց դեպի պարիսպը, բայց բարանից նետված մի քար փշրեց թշվառականի գանգն ու երեսը, նա իր ամբարշտության արժանի հատուցում ստացավ: [Արարները] բազում գերիներով ու ավարով վերադարձան: Այս դեպքում էլ աստված ամբարիշտ Լեոնին ցույց տվեց, որ այդպես եղավ ոչ թե ցեղակիցների բարեպաշտության պատճառով, ինչպես նա կարծում էր, այլ ինչ-որ աստվածային, անձառելի վճռով, սուրբ հայրերի միջնորդությամբ և այդ քաղաքում պաշտվող նրանց նվիրական պատկերների օգնությամբ արաբների այդպիսի զորությունը նրանց քաղաքի վրա դեմ առավ, ի պարսավումն, հանդիջում դատապարտումն բռնակալի, և ի հաստատումն բարեպաշտների: Այդ ամբարիշտը մեղանշում էր ոչ միայն սրբապատկերների պաշտամունքի հարցում, այլև ամենասուրբ աստվածածնի ու բոլոր սրբերի միջնորդության, ամենապիղծը իր ուսուցիչներին՝ արաբների նման խորշում էր նրանց մասունքներից: Նա այս ժամանակից սկսեց անպատկառոտն ընդհարվել Կոստանդնուպոլսի երանելի Գերմանոս պատրիարքի հետ, նախատել իրենից առաջ թագավորած բոլոր կայսրերին, պատրիարքներին ու քրիստոնյա ժողովուրդներին, նրանց կոապաշտ համարելով, քանզի երկր-

պազել էին սուրբ ու նվիրական պատկերները: Նա այն աստիճան անհավատ էր ու տխմար, որ չէր հասկանում, որ խոսքը հարաբերական երկրպագութիւնն⁶¹⁴ մասին է:

[A. M. 6219]

[Հոռոմայեցիների Լեոն կայսեր] 11-րդ տարին [Արարների առաջնորդ Հիշամի] 4-րդ տարին [Հոռոմի Գրիգոր պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 13-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 22-րդ տարին

Այդ տարի Մուավիան⁶¹⁵ առավ Ատեուս բերդը⁶¹⁶ և վերադարձավ:

[A. M. 6220]

[Հոռոմայեցիների Լեոն կայսեր] 12-րդ տարին [Արարների առաջնորդ Հիշամի] 5-րդ տարին [Հոռոմի Գրիգոր պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 14-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 23-րդ տարին

Այդ տարի Մարաստանի և Հայաստանի վրա արշավեց Խազարիայի խաբանի որդին և արաբների զորավար Գարախին Հայաստանում հանդիպելով, նրա զորքի հետ միասին կոտորեց: Ավարի առնելով հայոց և մարաց աշխարհը, նա վերադարձավ, արաբների մեջ մեծ սարսափ տարածելով⁶¹⁷:

[A. M. 6221]

[Հոռոմայեցիների Լեոն կայսեր] 13-րդ տարին [Արարների առաջնորդ Հիշամի] 6-րդ տարին [Հոռոմի Գրիգոր պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 15-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 24-րդ տարին

Այդ տարի Մասլաման թուրքաց երկրի⁶¹⁸ վրա արշավեց, պատերազմ տեղի ունեցավ և երկու կողմից էլ սպանվողներ եղան: Մասլաման վեհերոտելով փախուստի դիմեց և Խազարիայի լեռների վրայով վերադարձավ:

Այդ նույն տարին ուղղափառ հավատքի դեմ մոլեզնած անօրին Լեոն կայսրը սուրբ Գերմանոսին կանչեց և փորձեց քաղցր խոսքով գայթակղեցնել: Երանելի պատրիարքն ասաց նրան. «Լսել էինք, որ սուրբ ու նվիրական պատկերների վերացում պիտի լինի, սակայն ոչ քո թագավորության օրոք»: Երբ Լեոնն ստիպեց նրան հայտնել, թե «Ո՞ւմ թագավորության օրոք», պատրիարքը պատասխանեց. «Կոնոնի ժամանակ»: Կայսրն ասաց. «Ավազանի անունս հենց Կոնոն է»: Պատրիարքն ասաց. «Մի՛ արասցե, տեր, որ այս փորձությունը քո ձեռքով իրականանա, քանզի այդ իրականացնողը նեոի կարապետն է և մարմնացյալ սուրբ տնօրինության տապալողը»: Այդ խոսքերի վրա կայսրը զայրացավ երանելու վրա, ինչպես ժամանակին Հերովդեսը՝ Հովհաննես Կարապետի: Պատրիարքը Լեոնին հիշեցրեց այն պայմանների մասին, որ նա՝ կայսրը, ընդունել էր գահ բարձրանալիս՝ աստծուն խոսք տվել ոչ մի հարցում չսասանել Քրիստոսի եկեղեցին իր առաքելական ու աստվածատուր դրույթներից: Բայց թշվառականը դրանից էլ չամաչեց: Նա ջանում էր տարբեր պատրվակներ առաջ բաշել, որպեսզի պատրիարքին իր թագավորության դեմ ոտնձգություններ կատարելու մեջ մեղադրելու հիմքեր ստեղծի, որպեսզի նրան որպես դավադրի և ոչ խոստովանողի հեռացնի պատրիարքությունից: Այդ գործում նրան սատարող էր ու գործակից [Գերմանոսի] աշակերտ ու սինկելլոս Անաստասիոսը, որին, որպես ամբարշտության կողմնակցի, կայսրը ալօրինաբար խոստացել էր պատրիարքական աթոռը: Երանելի Գերմանոսը թեև գիտեր, որ Անաստասիոսը խոտորվել է, նմանվելով Տիրոջ, իմաստուն ու հեղ կերպով հիշեցնում էր նրան՝ նոր Հուդային, դավաճանության մասին: Նա ի վերջո համոզվեց, որ [Անաստասիոսը] անդարձ մոլորվել է: Երբ Գերմանոսը մի անգամ կայսեր մոտ գնալիս, Անաստասիոսը տրորեց իր զգեստի ծայրը, նա ասաց. «Մի՛ շտապիր, դեռ կհասցնես մտնել դիպիոնն»⁶¹⁹: Նա, ինչպես և այդ խոսքը լսողները, շրփովեցին: Նա շփտեք, թե ինչ գուշակութուն է դա: Այն իրականացավ 15 տարի անց, ինդիկտիոնի 12-րդ տարին, Կոստանդին հալածի⁶²⁰ թագավորության երրորդ տարին: Ամենքը համոզվեցին, որ Գերմանոսը աստվածուստ է ստացել այդ ապերախտի մասին մարգարեանալու շնորհը: Հարցը հետևյալն է. Կոստանդինը, երբ ճնշելով իր փեսա Արտավազդի խոտվությունը, իր ձեռքն առավ թագավորության սանձերը, այս Անաստասիոսին և իր՝ կայսեր, այլ ոսոխների զանակոծեց, Անաստասիոսին՝ որպես իր թշնամիների հետ միասին իրեն գահընկեց հայտարարած և Արտավազդին թագադրած (այդ մասին իր տեղում կասվի)

դիւպիտոնի միջով դուրս բերեց ձիարշավարան և մերկ, ավանակի վրա հակառակ նստեցրած, ծանակեց: Ահա բարեպաշտ դավանանքի առաջամարտիկը Բյուզանդիոնում այս սուրբ ու աստվածային Գերմանոսն էր, նա էր գազանանուն⁶²¹ Լեոնի և նրա պաշտպանների դեմ գազանամարտիկ, իսկ ավագ Հոռոմոս՝ սրբազնագույն առաքելական այր Գրիգորը, ծայրագույն առաքյալ Պետրոսի սինթրոնոսը, որ փայլում էր բանիվ ու գործով: Նա էր, որ հանեց Հոռոմը, Իտալիան և համայն արևմուտքը Լեոնի և նրա թագավորության քաղաքական ու եկեղեցական հայատախուժյան տակից: Ասորիքի Գամասկոսում իր կենցաղավարութեամբ ու խոսքով փայլում էր երեց ու վանական, հոյակապ վարդապետ Հովհաննես Ոսկեհոսը⁶²², Մանսուրի [թոռը]: Լեոնը Գերմանոսին, որպես իրեն ենթակա մարդու կարողացավ հեռացնել պատրիարքական աթոռից: Բայց Գրիգոր պապը նամակներով բացահայտ քննադատում էր նրան, նամակներ, որոնք շատերին է հայտնի, իսկ Հովհաննեսը արևելքի եպիսկոպոսներով ամբարշտին նզովքի ենթարկեց: Ինդիկտիոնի 13-րդ տարվա հունվար ամսի 7-ին, շաբաթվա 3-րդ օրը, ամբարիշտ Լեոնը տասնինն ակոբիտների տրիբունալիոնում ժողով գումարեց⁶²³ ընդդեմ սուրբ ու նվիրական պատկերների, որին մասնակցելու հրավիրեց և սրբազնագույն Գերմանոս պատրիարքին, ենթադրելով, որ իրեն կհաջողվի համոզել ստորագրել սուրբ պատկերների դեմ ընդունած որոշման տակ: Բայց աստծո քաջարի ծառան նրա պիղծ շարափառութեան առջև ամենևին չերեքաց և պաշտպանելով ուղղափառութունը, հանձնեց հմիփորոնը, հրաժարվեց պատրիարքութունից և բազում հորդորակուն խոսքերից հետո ասաց. «Եթե ես Հովնանն եմ, ինձ ծովը գցեք⁶²⁴. առանց տիեզերական ժողովի, ո՞վ կայսր, ես չեմ կարող դավանանքի մեջ նորամտծութուններ կատարել»: Նա թողեց, հեռացավ Պլատանիոս կոչվող տեղը, իր հայրենի տունը և դադար առավ, պատրիարքական աթոռին նստելով 14 տարի, 5 ամիս և 7 օր: Նույն հունվար ամսի 22-ին երանելի Գերմանոսի սուտանուն աշակերտ և սինկելլոս Անաստասիոսը, որ իր աշխարհական իշխանապիւրութեամբ Լեոնի շարափառութեան կողմնակիցը դարձավ, ձեռնադրվեց Կոստանդնուպոլսի սուտ պատրիարք: Իսկ Հոռոմի սրբազան Գրիգոր պապը, ինչպես նախապես ասացի, մերժեց Անաստասիոսին և լիբելլներ⁶²⁵, Լեոնին նամակներով մեղադրեց ամբարշտութեան մեջ և Հոռոմը, համայն Իտալիան հանեց նրա թագավորության ենթակայութունից: Դրա վրա բռնակալը էլ ավելի գազազած, սաստկացրեց գոտեմարտը սրբապատկերների դեմ: Բազում կղերական-

ներ ու վանականներ, բարեպաշտ աշխարհականներ ուղղափառութեան պաշտպան կանգնելով, մարտիրոսական պսակին արժանացան:

[A. M. 6222]

Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարք⁶²⁶, Աթոռակալեց 24 տարի:

[Հոռոմայեցիների կայսեր] 14-րդ տարին	ևս [Արաբների Հիշամի] 7-րդ տարին	առաջնորդ տարին	[Հոռոմի Գրիգոր պապի] 6-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 1-ին տարին		[Երուսաղեմի նես պատրիարքի] տարին	Հովհաննես պատրիարքի] 25-րդ տարին

Այդ տարի Մասլաման արշավեց Ռոմանիայի վրա և գալով Կապադոկիա, նենգութեամբ առավ Խարսիանոն բերդը⁶²⁷:

[A. M. 6223]

[Հոռոմայեցիների կայսեր] 15-րդ տարին	ևս [Արաբների Հիշամի] 8-րդ տարին	առաջնորդ տարին	[Հոռոմի Գրիգոր պապի] 7-րդ տարին
-------------------------------------	---------------------------------	----------------	---------------------------------

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 2-րդ տարին		[Երուսաղեմի նես պատրիարքի] տարին	Հովհաննես պատրիարքի] 26-րդ տարին
---	--	----------------------------------	----------------------------------

Այդ տարի Մասլաման արշավեց Թուրքիայի⁶²⁸ վրա և հասնելով Կասպից դռները, վեհերտեց ու վերադարձավ:

[A. M. 6224]

[Հոռոմայեցիների կայսեր] 16-րդ տարին	ևս [Արաբների Հիշամի] 9-րդ տարին	առաջնորդ տարին	[Հոռոմի Գրիգոր պապի] 8-րդ տարին
-------------------------------------	---------------------------------	----------------	---------------------------------

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 3-րդ տարին		[Երուսաղեմի նես պատրիարքի] տարին	Հովհաննես պատրիարքի] 27-րդ տարին
---	--	----------------------------------	----------------------------------

Այդ տարի Լեոն կայսրն իր որդի Կոստանդինն ամուսնացրեց սըկյութներ⁶²⁹ խաքանի դստեր հետ, որին քրիստոնյա մկրտեց և անվանեց Իրենե⁶³⁰: Սա սուրբ գիրքը սերտելով, իր բարեպաշտութեամբ աչքի ընկավ, նա խարաղանում էր նրանց ամբարշտութունը: Հիշամի որդի Մուավիան Ռոմանիայի վրա արշավեց և հասնելով Պափլագոնիա, բա-

զում գերիներով ետ դարձավ: Իսկ կայսրը պապի դեմ մոլեգնած, ինչպես և Հռոմի ու Իտալիայի անջատման պատճառով, մի մեծ նավատորմիդ հանդերձեց և Կիբիրեոտների զորավար Մանիի գլխավորությամբ նրանց դեմ ուղարկեց: Բայց տխմար [Լևոնը] խայտառակվեց, քանզի նավատորմիզը Ադրիական ծովում ջրասուչը եղավ: Գրա վրա աստվածամարտն առավել ևս մոլեգնած, արաբական մտածելակերպով էլ զինված, Կայսրիայի և Սիկիլիայի բնակչության երրորդ մասի վրա գլխահարկ նշանակեց⁶³¹: Ինչ վերաբերում է ավագ Հռոմում պատվոզ սուրբ և ծայրագույն առաքյալների պատրիմոնիաներին⁶³², երեք ու կես տաղանդ չափով ոսկուն, որ դեռ հին ժամանակներից եկեղեցուն էր վրձարվում, կայսրը կարգադրեց պետական գանձարանը մուծել: Նա հրամայեց վերահսկողություն սահմանել և ցուցակագրել արական սեռի նորածիններին, ինչպես ժամանակին արեց փարավոնը հրեաների [նորածինների] առնչությամբ, մի բան, որ [Լևոնի] ուսուցիչներ արաբներն անգամ չհանգզեցին անել արևելքի բրիտանյաների նկատմամբ:

[A. M. 6225]

[Հռոմայեցիների Լեոն [Արաբների առաջնորդ [Հռոմի Գրիգոր պապի] կայսեր] 17-րդ տարին Հիշամի] 10-րդ տարին 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 4-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 28-րդ տարին

Այդ տարի Ասորիքում մահ տարածամ եղավ և շատերը մեռան:

[A. M. 6226]

Հռոմի պապ Զաքարիա⁶³³: Աթոռակալեց 21 տարի:

[Հռոմայեցիների Լեոն [Արաբների առաջնորդ [Հռոմի Զաքարիա պապի] 18-րդ տարին Հիշամի] 11-րդ տարին սի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 5-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 29-րդ տարին

Այդ տարի Մանսուրի որդի Թեոդորոսը անապատի շրջաններն աքսորվեց, երկնքում լուսավոր հրո նշան երևաց, Մուսավիան Ասիան ասպատակեց:

[A. M. 6227]

[Հռոմայեցիների Լեոն [Արաբների առաջնորդ [Հռոմի Զաքարիա պապի] 19-րդ տարին Հիշամի] 12-րդ տարին սի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 6-րդ տարին [Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 30-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը⁶³⁴ արշավեց Հայոց աշխարհ, բայց ոչինչ չարեց:

[A. M. 6228]

[Հռոմայեցիների Լեոն [Արաբների առաջնորդ կայսեր] 20-րդ տարին Հիշամի] 13-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 3-րդ տարին [Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի Մուսավիան արշավեց Ռոմանիայի վրա և վերադարձից մի քանի օր անց ձիուց գլորվեց ու մեռավ:

[A. M. 6229]

[Հռոմայեցիների Լեոն [Արաբների առաջնորդ կայսեր] 21-րդ տարին Հիշամի] 14-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 4-րդ տարին [Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը Ասիայում շատերին գերեզմանեց, այդ թվում և ոմն պերգամացու, որ պնդում էր, թե ինքը Հուստինիանոսի որդի Տիրերիոսն է: Հիշամը սրան հարազատ որդու պես պատվեց, կայսրերին սարսափեցնելու համար կալսերավալել՝ զորքով ու գայիսոնով, զրոշներով Երուսաղեմ ուղարկեց, հրաման տալով համայն Ասորիքով մեկ փառք ու պատվով ման ածեն, ի տես և ի վարմանս բուլորի:

[A. M. 6230]

[Հոռմայեցիների կայսեր] 22-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 15-րդ տարին
[Հոռմի Զաքարիա պապի] 5-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը արշավեց Ռոմանիայի վրա, գրոհով առավ Երկաթե բերդը⁶³⁵ և Մարիանոս պատրիկի⁶³⁶ որդի Եվստափիոսին գերի վերցրեց:

[A. M. 6231]

[Հոռմայեցիների կայսեր] 23-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 16-րդ տարին
[Հոռմի Զաքարիա պապի] 6-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 8-րդ տարվա մայիս ամսին Սուլեյմանը 9 բյուր զորքով, 4 զորավարներով, որոնց զխավորում էր Գամերը, Ռոմանիայի դեմ արշավանք կազմակերպեց: Գամերը բյուր թեթևազեններով մարտընչում էր Ասիական երկրի շրջաններում, նրան ենթակա Մելիքն ու Բատալը՝ երկու բյուր հեծյալներով՝ Ակրոյինոնի⁶³⁷, իսկ Սուլեյմանը վեց բյուրով՝ Կապադովկիայի Տիանայի Ասիայում ու Կապադովկիայում մարտնչողները տղամարդկանց ու կանանց մեծաթիվ գերիներով ու անասուններով անվնաս վերադարձան, բայց Մելիքի⁶³⁸ ու Բատալի⁶³⁹ զորքերը Ակրոյինոնում Առնի և Կոստանդնի հետ մարտի բռնվելով, վերջիններիս կողմից պարտություն կրեցին. շատերը սպանվեցին, այդ թվում և նրանց երկու հրամանատարները: Նրանցից ութ հարյուր մարտիկ, հանդիպելով վեց հազար հոգու դիմադրության, փախուստի դիմեցին և փրկվեցին Սինադայում⁶⁴⁰ և միանալով Սուլեյմանին, վերադարձան Ասորիք: Նույն տարի սրանցից շատերն էլ Աֆրիկայում սպանվեցին՝ իրենց զորավար Գամասկացու հետ միասին:

[A. M. 6232]

[Հոռմայեցիների կայսեր] 24-րդ տարին	[Արարների առաջնորդ Հիշամի] 17-րդ տարին
[Հոռմի Զաքարիա պապի] 7-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ՝ բռնակալ և ամենաանօրեն Ասորու⁶⁴¹ թագավորության 24-րդ տարում հիերակիտները⁶⁴² Դամասկոսում շուկաներ կրակի տվեցին: Նրանց կախաղան հանեցին: Պերիտիոս⁶⁴³ ամսի 28-ին ուղիւր Եգիպտոսի ողողեց:

Նույն տարվա հոկտեմբեր ամսի 26-ին, ինդիկտիոնի 9-րդ տարին, շորեքշարթի օր, ժամը 8-ին Կոստանդնուպոլսում սաստիկ ու սոսկալի երկրաշարժ եղավ: Եկեղեցիներ ու վանքեր փլվեցին, բազում ժողովուրդ սպանվեց: Տապալվեց նաև Ատալոսի դռան վրա կանգնած Մեծ Կոստանդնի անդրին, Ատալոսի [անդրու] հետ միասին, նաև Քսերոլոֆոսում սյան վրա կանգնած Արկադիոսի անդրին, Ոսկե դռան վրա գտնվող Թեոդոսիոս Մեծի անդրին, քաղաքի ցամաքային պարիսպները, Թրակիայում՝ քաղաքներ ու դուռեր ավերակ դարձան, Բյութանիայում՝ Նիկոմեդիան, Պրենեստոսը, Նիկիան, ուր մեկ եկեղեցի միայն փրկվեց⁶⁴⁴: Երկրաշարժը տևեց 12 ամիս: Առանձին տեղերում ծովը հեռացավ իր ափերից: Կայսրը, տեսնելով քաղաքի փլված պարիսպները, դիմեց ժողովրդին ու ասաց. «Դուք պարիսպները կառուցելու միջոցներ չունեք, այդ պատճառով մենք այդ գործը հանձնարարեցինք գործավարներին: Նրանք ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր օլոկոտինից մեկ միլիարեսիոն⁶⁴⁵ են պահանջում: Պետությունն այդ դումարն առնելով կկառուցի պարիսպները»: Ահա այստեղից սկիզբ առավ գործավարներին երկու կերատ վճարելու սովորությունը⁶⁴⁶: Հոռմայեցիների տոմարով աշխարհի արարչագործության՝ Ադամի 6248 թվականն էր, եզրպատասցվոց, այն է ալեքսանդրացվոց տոմարով՝ 6232 թվականը, Փիլիպոս Մակեդոնացու՝ 1063⁶⁴⁷: Առնն իշխեց 24 տարի, 2 ամիս և 25 օր, ինդիկտիոնի 15-րդ տարվա մարտ ամսի 25-ից մինչև ինդիկտիոնի 9-րդ տարվա հունիս ամսի 18-ը: Նմանապես և նրա որդին, իր ամբարշտության ու թագավորության ժառանգորդ Կոստանդինը, աստժո թույլտվությամբ իշխեց 34 տարի, 3 ամիս և 2 օր՝ նույն ինդիկտիոնի 9-րդ տարվա հունիս ամսի 18-ից, մինչև ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամիսը: Ահա այսպես, ինչպես ասացինք, ինդիկտիոնի նույն 9-րդ տարին, հունիս ամսի 18-ին Առնը բացի հոգևոր

մահից, ունեցաւ նաև մարմնական վախճան: Միահեծան թագավորում է նրա որդի Կոստանդինը: Նախորդ գլուխներում ես համառոտակի պատմեցի, թե քրիստոնյաների գլխին ինչքան փորձանք եկավ ամբարիշտ ևևոնի թագավորության օրոք, ինչպես ուղղափառ հավատքի հարցերում, այնպես էլ շարաշահումների ու արծաթասիրության հետ կապված՝ Միկելիսյան, Կալարրիսյան, Կրետեում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններում: Ես նկատի ունեմ նրա շարափառության պատճառով Իտալիայի անջատման, երկրաշարժների, մահ տարածամների, սովի, ալլազգիների ապստամբությունների մասին: Արդ, այսուհետև անհրաժեշտ է շարադրել նրա ամբարշտագույն և ամենաթշվառական որդու անօրեն գործերի մասին, որոնք ավելի պիղծ են և աստծուն ատելի Բայց, հերավի, վերադիտող, վերաբեռնուչ և ամենատես աստվածը թողեց, որ այդ բոլորը կատարվեն՝ պարզապես հօգուտ հետագա սերունդների, հօգուտ այդ ամենաանօրենի պիղծ շարափառության մոլորության մեջ դեգերող թշվառական ու ամբարիշտ մարդուկների, մոլորության, որ սկիզբ առավ ինդիկտիոնի 10-րդ՝ նրա թագավորության առաջին տարին < և ամբարշտորեն տևեց մինչև 14-րդ ինդիկտիոնը՝ նրա կորստյան տարին >⁶⁴⁸, Քանզի այդ ամեն ինչ ավերող, խելակորույս, արյունուռտ և ամենավայրենի գաղանը, ավելի շուտ բռնատիրելով, քան օրինականորեն կառավարելով, նախ հանդես եկավ մեր աստծո և փրկչի Հիսուսի Քրիստոսի, նրա ամենասուրբ և անբիծ մոր և բոլոր սրբերի դեմ, մոգովյամբ, անառակովյամբ ու արյունոտ զոհաբերությանմբ⁶⁴⁹, զոմաղբի, աղբի և մեղի վրա խաբեպատիր գուշակություններ կատարեց, տարվեց արվամուրյամբ ու դիվակուռությանմբ: Մի խոսքով երիտասարդ հասակից պարապեց մարդու հոգին ավերող ամեն ինչով: Երբ հոր իշխանության հետ միասին նա ստացավ նաև նրա շարափառությունը, ապա կարիք կա՞ ասել, թե այդ ամենապիղծը հենց սկզբից ինչպիսի շարիք հղացավ, որը բացահայտորեն բոցավառեց: Այդ բանին ականատես եղած քրիստոնյաները անշափ տագնապ ապրեցին, հենց սկզբից ատեցին նրան իր լիտիության համար և անցան նրա փեսայի՝ իր քրոջ Աննային կնություն ատած Օպսիկիոնի կոմես Արտավազդ կուրապաղատի⁶⁵⁰ կողմը, վճռելով որպես ուղղափառի նրան տալ թագավորությունը:

Նույն տարի արաբների առաջնորդ Հիշամը իրեն ենթակա բոլոր քաղաքներում գտնվող քրիստոնյա ռազմագերիներին մահապատժի ենթարկեց: Նրանց թվում էր նաև անվանի Մարիանոս պատրիկի երանելի որդի Եվստաթիոսը: Նրան թեև շատ ստիպեցին, բայց նա չուրացավ իր ճշմարիտ հավատքը և մարտիրոսացավ Միշագետքի նշանավոր խառան քա-

ղաքում: Այնտեղ գտնվող նրա սուրբ ու նվիրական մասունքները շնորհոքն աստծո բուժում են ամեն մի ախտ: Շատ ուրիշներ էլ իրենց արյունը թափեցին հանուն Քրիստոսի ու մարտիրոսացան:

[A. M. 6233]

Աշխարհի արարչագործության 6233 թ.	Քրիստոսի մարդեղության 733 թ.	Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Հիշամի 19-ամյա իշխանության 18-րդ տարին	Հոռոմի Չաքարիա պապի 21-ամյա ամրոտակալության 8-րդ տարին	Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի 24-ամյա ամրոտակալության 12-րդ տարին

Այդ տարի մեր առ աստված կատարած մեղքերի և բաղում զանցանքների համար թագավորեց Կոստանդինը, հալածիչը հայրենավանդ օրենքների: Ինդիկտիոնի հաջորդ՝ 10-րդ տարվա հունիս ամսի 27-ին կայսրը գնաց Օպսիկիոնի շրջանները՝ ընդդեմ արաբների և եկավ Կրասոս⁶⁵¹ կողմող [քաղաքը]: Հիշյալ Արտավազդը Օպսիկիոնի զորքով գրտնջվում էր Դորիլեոնում⁶⁵²: Նրանց մեջ փոխադարձ կասկած կար: Կոստանդինը նրա մոտ մարդ ուղարկեց, խնդրելով իրեն առաքեն նրա՝ Արտավազդի որդիներին, այն է իր, Կոստանդինի, զարմիկներին, քանզի նրանց տեսնելու ցանկություն ուներ, բայց նպատակը նրանց բռնելն ու հսկողության տակ պահելն էր: Արտավազդը կասեց նենգությունը և գիտենալով [կայսեր] անսահման խորամանկությունը, հուսաբեկ եղավ: Նա դիմեց զինվորներին և համոզելով նրանց, բոլորով միասին նրա վրա հարձակվեց: Ընդդիմակայած սարակինոսամիտ Բշիր⁶⁵³ պատրիկին նասրի քառեց: Կոստանդինը պահեստի մի թամբած ձի գտնելով, հեծավ ու փախավ Ամորիոն, ապա անցնելով Անատոլիկոն բանակաթեմը (նրա զորավարն այն ժամանակ կանդիոսոսն էր), փրկվեց, բանակաթեմի զորքերին իր կողմը գրավեց, տալով մեծ խոստումներ: Այնուհետև նա Թրակեսիոն բանակաթեմի զորավար Սիսինակիոսի մոտ մարդ ուղարկեց և այդ բանակաթեմի զինվորներին համոզեց դաշնակցեն իրեն: Սկիզբ են առնում սարսափելի կոռիվներ, ստորագասների միջև զինված ընդհարումներ, որոնց մի մասը կայսր էր հայտարարում [Կոստանդինին], մյուսը՝ [Արտավազդին]: Արտավազդը իրազրության մասին գրում է քաղաք, իր փոխանորդ պատրիկ և մագիստրոս Թեոփանեսին, և դրածն ուղարկում

Աթանասիոս սիլենտիարիոսի միջոցով: Արտավազդին համախոհ Քենփանեսը ժողովրդին հավաքեց Մեծ եկեղեցու կատեխումենայում և Արտավազդի նամակների և վերոհիշյալ Աթանասիոսի միջոցով բոլորին հավաստիացրեց, թե կայսրը մահացել է, որ բանակաթեմերը կայսր են հռչակել Արտավազդին: Դրա վրա ողջ ժողովուրդը սուտանուն պատրիարք Անաստասիոսի հետ միասին անեծքի ու նզովքի ենթարկեցին Կոստանդնին, որպես ամբարիշտի ու անաստվածի, բերկրությամբ ընկալեցին նրա սպանության լուրը՝ մեծագույն շարիքից փրկվելը: Նրանք Արտավազդին որպես ուղղափառ և աստվածային վարդապետության պաշտպան մարդու կայսր հռչակեցին⁶⁵⁴, Մոնոտեսն իսկույն դիմեց Թրակիա, իր հարազատ որդի Նիկեփորին՝ Թրակիայի զորավարին, որպեսզի նա այնտեղի զորքի գլուխն անցած շարժվի քաղաքի պաշտպանության: Մոնոտեսը փակեց պարիսպների դարբասները և պահակակետեր հաստատեց, ձերբակալեց Կոստանդնի համախոհներին, որոնց գանակոծեց, խուզեց ու բանտ նետեց: Այն պահին, երբ Արտավազդը Օպսիկիոնի զորաբանակով մտավ քաղաք, Կոստանդինը երկու բանակաթեմերի՝ Թրակեսիոնի և Անատոլիկոնի զորքերով հասավ Խրիսուպոլիս, բայց ոչինչ չկարողանալով անել, վերադարձավ և ձմեռեց Ամորիոնում: Արտավազդը ամբողջ քաղաքում կանգնեցնել տվեց սրբապատկերները: Արաբները, իմանալով այդ երկուսի միջև գնացող պայքարի մասին, Սուլեյմանի հրամանատարությամբ Ռոմանիայից շատերին գերի բռնեցին: Իսկ սուտանուն պատրիարք Անաստասիոսը, ձեռքը դնելով սուրբ ու կենարար [խաչա]փայտի վրա, երգվեց ժողովրդին, թե «Երգվում եմ հանուն այս [փայտի] վրա գամվածի, որ Կոստանդինն ինձ այսպես ասաց. Մարիամի աշխարհ բերածին, Քրիստոս կոչեցյալին, աստծո որդի չհամարես, այլ սովորական մարդ, քանզի Մարիամը նրան աշխարհ բերեց այնպես, ինչպես ինձ իմ մայր Մարիամը»: Ժողովուրդը, լսելով դա, [Կոստանդնին] զահրեկեց հայտարարեց:

[A. M. 6234]

Անտիոքի պատրիարք Ստեփանոս⁶⁵⁵: Աթոռակալեց 2 տարի:

[Հոռոմայեցիների տանգին կայսեր]	Կոս- 2-րդ	[Արաբների առաջնորդ Հիշամի]	19-րդ տարին	[Հոռոմի Զարթա պատրիս]	9-րդ տարին
--------------------------------	--------------	----------------------------	-------------	-----------------------	------------

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի]	Ա- 13-րդ տարին	[Անտիոքի Ստեփանոս պատրիարքի]	1-ին տարին
--	-------------------	------------------------------	------------

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Հիշամը: Սա Ստեփանոս անունով մտերիմ մի ասորի վանական ուներ, որ, ճիշտ է, մի քիչ անուսում էր, բայց բարեպաշտ: Անտիոքի եկեղեցու աթոռը 40 տարի թափուր էր, որովհետև արաբները չէին թույլատրում այնտեղ պատրիարք նստի: Հիշամն ասաց, որ եթե արևելքի քրիստոնյաները ցանկանում են իրենց թույլ տրվի պատրիարք ունենալ, թող այս Ստեփանոսին ընտրեն: Անտիոքացիք համարելով, որ դա աստվածուստ է, Թեուպոլսի⁶⁵⁶ պատրիարք ձեռնադրեցին նրան և այդ ժամանակից մինչև օրս պատրիարքությունն անխափան գոյություն ունի:

Այդ տարի արաբների իշխանությանը տիրացավ Հիշամի որդի Վալիդը⁶⁵⁷: Կոստանդինը նրա մոտ Անդրեաս սպաթարին ուղարկեց, իսկ Արտավազդը՝ Գրիգոր լուսթեաին, երկուսն էլ դաշնակցություն էին խնդրում: [Այդ տարին] շորային էր, տեղ-տեղ երկրաշարժեր եղան, մինչև իսկ Մաբայի⁶⁵⁸ անապատում լեռներն իրար միացան, գյուղեր գետնի տակ կուլ գնացին: Նույն տարին Ալեքսանդրիայի Կողմաս պատրիարքը վերացրեց Հերակլիոսի ժամանակ Ալեքսանդրիայի պատրիարք եղած Կյուրոսից ըսկիլք առած միակամականների շարափառությունը և քաղաքում ուղղափառությունը հաստատվեց: Գամբը բազում արաբներով Ռոմանիայի վրա արշավեց և բազում գերիներով վերադարձավ: Հունիս ամսին երկնքի հյուսիսային մասում նշան երևաց: Վալիդը հրամայեց Գամասիոսի սըրբազնագույն մետրոպոլիտ Պետրոսի լեզուն կտրել, քանզի նա բացեիբաց խարազանում էր արաբների և մանիքեցիների ամբարշտությունը: Նրան նա աքսորեց Երջանիկ Արաբիա, ուր և մարտիրոսացավ հանուն Քրիստոսի. նա պարզ ու հստակ կատարեց սուրբ պատարագը, ինչպես այդ մասին պատմում են ականջալուր մարդիկ: Այդ նույն ժամանակները հանուն Քրիստոսի կամովին նահատակվեց և նրա նման փութեռանդ ու անվանակից Մալումայի⁶⁵⁹ [մետրոպոլիտ] Պետրոսը: Երբ նա հիվանդացավ, իր մտերիմ արաբ իշխանավորներին կանչեց (ինքը պետական հարկերի խարտուղարի պաշտոնն էր վարում) և ասաց նրանց. «Ձեր ինձ արած այցելության վարձը, թեև անհավատ բարեկամներ եք, աստծուց կստանաք: Ես ցանկանում եմ, որ դուք լինեք վկաներն իմ կտակի, որը հետևյալն է. ով չի հավատում հանուն Հոր և Որդվո և Հոգվույն սրբո, միացած համագո և կենարար Երրորդության, նա կույր է հոգով և հավիտենական զր-ժոխքին արժանի: Այդպիսին է նաև ձեր սուտանուն մարգարե Մահամմեդը, կարապետը նեոի: Հավատացեք իմ խոսքերին, որոնց վկա են այսօր երկինք ու երկիր, ձեռք բաշքեք նրա ցնդաբանությունից: Ես ձեր լավն եմ ուզում, որպեսզի դուք նրա հետ զժոխք չգնաք»: Լսելով նրա նման և այլ

քաղում աստվածաբանական բովանդակութեամբ խոսքերը, նրանք քար կտրեցին, գազազեցին, բայց մեծահոգութուն ցուցաբերեցին, քանզի կարծեցին, որ նա հիվանդութեան ազդեցութեան տակ զառանցում է: Բայց երբ նա ազարինվեց, սկսեց ավելի բարձր գոչել, թե «Նզովք Մոհամմեդին և նրա ցնդաբանութեանը, բոլոր նրանց, ովքեր հավատում են այդ ցնդաբանութեան»: Նա սրի քաշվեց ու մարտիրոսացավ: Մրան մեր սուրբ հայր Հովհաննեսը, (որին իր խոսքի և կենցաղի մեջ փթթող հոգու սկեցող շնորհքի համար իրավամբ տրվեց Ոսկեհոս⁶⁶⁰ մականունը), ներբողյաններով մեծարեց: Եկեղեցու այս նոր վարդապետին, եկեղեցու այս նոր ուսուցչին, իր անշափ ուղղափառութեան համար ամբարիշտ Կոստանդին կայսրը ամեն տարի նզովքի էր ենթարկում և նրա պապի Մանսուր անվան փոխարեն, որ փրկյալ է նշանակում, հրեական ձևով Մանվիր էր անվանում: Նույն տարի Վալիդը կիպրացիներին Ասորիքում վերաբնակեցրեց:

Իսկ Արտավազը իր որդի Նիկեոսին մոնոստրասեզոս նշանակելով, Արմենիակների բանակաթեմն ուղարկեց, իր որդի Նիկեփորին էլ [կայսերակից] թագազրեց՝ ձեռամբ Անաստասիոս պատրիարքի: Նույն տարվա մայիս ամսին Արտավազը գնաց Օպսիկիոնի կողմերը, զորահավաք կազմակերպեց, մուտք գործեց Ասիա և սկսեց նրա նվաճումը: Կոստանդինը, իմանալով դա, նրա վրա շարժվեց, նրան հասավ Սարգիսի⁶⁶¹ կողմերում (նա Կելբեհնոսից⁶⁶² էր բարձրանում), մարտ տվեց, պարտութեան մատնեց և հալածական արեց մինչև Կյուզիկոս: [Արտավազը] Կյուզիկոս հասնելով, դրոմոն նստավ և նավելով փրկվեց քաղաքում⁶⁶³: Ինդիկտինին նույն 11-րդ տարվա օգոստոս ամսին Արտավազի որդի Նիկեոսա մոնոստրատեզոսը Կոստանդինին մարտ տվեց, բայց պարտութուն կրելով փախուստի դիմեց դեպի Մոզրենե⁶⁶⁴: Անվանի ալլ իշխանավորների շարքին սպանվեց քաջարի զինվորական հայազգի Տիրիդատես պատրիկը, Արտավազի հորեզբորդին⁶⁶⁵: Երկու կողմից էլ շատերն ընկան. հայերն ու Արմենիակները⁶⁶⁶ պատերազմեցին Կոստանդինի պաշտպաններ Անատոլիկոն և Թրակեսիոն [բանակաթեմների] զորքերի դեմ: Այս ժամանակները նախաշար բանասարկուն քրիստոնյաների մեջ այնպիսի մոլեգնություն սերմանեց, իրար մորթելու դրդեց, որ անգամ զավակները ծնողներին, եղբայրները եղբայրներին էին անողորմաբար կոտորում, միմյանց կայրն ու տներն անխնա հրո ճարակ դարձնում:

[A. M. 6235]

Արարների առաջնորդ Վալիդ: Իշխեց 1 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 3-րդ [Արարների առաջնորդ Վալիդի] 1-ին տարին [Հոռոմի Զաքարիա պապի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 14-րդ տարին [Անտիոքի Ստեփանոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի հյուսիսում նշան երևաց, տեղ-տեղ փոշի թափվեց, իսկ Կասպից դռներում՝ երկրաշարժ եղավ: Ապրիլ ամսի 16-ին, հինգշաբթի օր արարները սպանեցին Վալիդին⁶⁶⁷: Նա 1 տարի տիրակալեց: Իշխանութեան է տիրանում Եզիդ կիպոսը⁶⁶⁸: Սա բազում դրամ ծախսելով, տիրեց Դամասկոսին և Դամասկոսի, Պարսկաստանի և Եգիպտոսի արարներից իշխելու հավանություն ստացավ: Հայաստանի կառավարիչ Մովսեսը⁶⁶⁹, Մոհամմեդի որդին, լսելով այդ մասին, շտապեց Միջագետք, ձևացնելով, որ հանդես է գալիս Վալիդի որդիների պաշտպանի դերում՝ ընդդեմ Եզիդի: 5 ամիս անց Եզիդը մահանում է, ի վերա Դամասկոսի ժառանգորդ թողնելով իր եղբայր Աբրալիմին, որի դեմ է հանդես գալիս Մովսեսը: Նա Միջագետքի զորքով գալիս է Եգիպտոս, իսկ այնտեղից Գարիս⁶⁷⁰ կոչվող դաշտը՝ Դամասկոսի ու Անտիլիբանանի⁶⁷¹ շրջաններում: Այստեղ կիտա, այսինքն Վատ կոչվող գետի ափին նա Սուլեյմանին ճակատամարտ է տալիս, պարտութեան մատնում նրան և 20 հազար հոգու կոտորում: Միայն Սուլեյմանը փոքրաթիվ մարդկանցով կարողացավ Դամասկոս փախուստի դիմել ու փրկվել: Մտնելով այդ քաղաքը, նա սպանեց Վալիդի որդիներին, որոնց իբրև թե պաշտպան էր կանգնել Մովսեսը, և յուրացնելով մեծ քանակությամբ դրամ, Դամասկոսից դուրս եկավ: Մըրվանը, մտնելով Դամասկոս, բազում մեծամեծների կոտորեց, նաև Վալիդի և նրա որդիների սպանութեանը մասնակից եղողներին⁶⁷², ուրիշներին խեղեց, բոլոր դրամներն ու գանձերն էլ Միջագետքի Խառան քաղաքը տեղափոխեց:

Ինդիկտինի 12-րդ տարվա սեպտեմբեր ամսին Կոստանդինն իջավ Քաղկեդոնի կողմերը և այնտեղից անցավ դիմացը՝ Թրակիայի շրջանները, իսկ Թրակեսիոն բանակաթեմի զորավար Սիսինիոսը Աբյուդոսի վրայով գնաց կանգ առավ ցամաքային պարսպի առաջ: Նա Խարսիոսի դռնից մինչև Ոսկե դուռը գնաց, եկավ, իրեն ամբոխներին ցույց տալով, ապա վերադարձավ ու բանակեց սուրբ Մամասում: Քաղաքի բնակիչներն ըսվեցին պարենի պակաս զգալ: [Արտավազը] ասեկրես⁶⁷³ Աթանասիոսին և իր դոմեստիկոս Արասավազին նավերով ուղարկեց պարեն հայ-

թայթելու, բայց Աբյուղոսից դուրս նրանց Կիբիրեոսների նավատորմի զը հանդիպեց և բռնելով կայսեր մոտ բերեց: Չեռք բերված հացահատիկը կայսրն իր զինավորներին նվիրեց, իսկ Աթանասիոսին ու դոմեստիկոս Արտավազդին իսկույն կուրացրեց: Արտավազդն այնուհետև փորձեց բացել ցամաքային պարսպի դռները և Կոստանդինն ճակատամարտ տալ: Ընդհարման ժամանակ Արտավազդի կողմնակիցները պարտություն կըրեցին, շատերն սպանվեցին, այդ թվում և Մոնոտեսը: Արտավազդը հըրակիր նավեր պատրաստելով, սուրբ Մամաս ուղարկեց՝ ընդդեմ Կիբիրեոսների նավատորմի: Կիբիրեոսները նրանց փախուստի մատնեցին: Քաղաքում սաստիկ սով եղավ, մեկ մող⁶⁷⁴ գարին 12 դահեկանով վաճառվեց, իսկ ընդդեմի մողը՝ 19, կորեկի և լյուպինի մողը 8 դահեկանով, ձիթայուղի 5 լիտրը⁶⁷⁵ մեկ դահեկանով, մեկ քսեստես⁶⁷⁶ գինին մեկ սեմիսիոնով⁶⁷⁷: Երբ ժողովուրդն սկսեց սովամահ լինել, Արտավազդն ստիպված թույլ տվեց նրանց քաղաքից հեռանալ: Նա դուրս եկողներին մեկ-մեկ ստուգում էր և ոմանց թույլ չտվեց, այդ իսկ պատճառով ոմանք ծածկում էին իրենց դեմքը, կանացի զգեստներ հագնում, ուրիշներն էլ վանականի սքեմ և մազե շորեր: Այդ ճանապարհով ահա նրանք կարողանում էին ճողոպրել ու դուրս գալ: Մոնոստրատեզոս Նիկետասը, հավաքելով Մողրենեում ցրված իր զորքը, եկավ մինչև Խրիստապոլիս: Վերադարձին նրան կայսրը հետապընդեց և հասավ Նիկոմեդիայում ու բռնեց նախկին Եպիսկոպոս կուրատոր Մարկելլինոսի հետ, որին տեղն ու տեղը զլխատել հրամայեց, իսկ կապյալ մոնոստրատեզոսին բերեց և պարսպից [Արտավազդին], նրա հորն էր ցույց տալիս: Նույնմբեր ամսի 2- երեկոյան նա հանկարծակի ցամաքային պարսպի վրա գրոհեց և գրավեց քաղաքը: Արտավազդը պատրիկ Բակտանդիոսի հետ խելանդիոն մտավ, նախ զնաց Օպսիկիոն ու ապաստանեց Պուզանեի⁶⁷⁸ բերդում: Կայսրը բռնեց նրանց, Արտավազդին և նրա երկու որդիներին կուրացրեց⁶⁷⁹, իսկ Բակտանդիոսին Կյուսենդիոնում զլխատեց: Նրա զլուխը երեք օր ցուցադրեց Միլիոնում⁶⁸⁰: 30 տարի անց այդ սխալալ ու անգութ կայսրը [Բակտանդիոսի] կնոջը հըրամայեց գնալ Լորայի վանքը (Բակտանդիոսն այնտեղ էր թաղված), գերեզմանից հանել [ամուսնու] ոսկորները ու իր զղեստի մեջ փաթաթած տանել Պելագիոսի կոչվող գերեզմանատունը և գցել բռնի մահով վախճանվածների գերեզմանների մեջ⁶⁸⁰: Ո՞վ տմարդություն: Նա մահապատժի ենթարկեց Արտավազդին դաշնակցած բազում այլ մեծամեծների, անհամար մարդկանց կուրացրեց, ուրիշների ձեռքերն ու ոտքերը կտրեց: Իր հետ քաղաք մուտք գործող զրսեցի իշխանավորներին նա թույլատրեց

բնակարանները մտնել և քաղաքացիների ունեցվածքը թալանել: Նա բազում, անհամար այլ փորձանքներ բերեց քաղաքացիների զլխին: Նա ձիարշավական մրցություններ կազմակերպեց և դիպիոնի միջով այնտեղ բերեց կապյալ Արտավազդին, նրա որդիներին ու ընկերներին, հրատեղ բերեց կապյալ Արտավազդին, նրա որդիներին ու ընկերներին, սպարակայնորեն զանակոծված սուտանուն պատրիարք Անաստասիոսին, որին հակառակ կողմից էլ հեծած ձիարշավարան մտցրեց և հրապարակայնորեն ծանակեց: Բայց որպես իր համախոհի, նրա մեջ երկյուղ սերմանելով ու խեղձացնելով, [ղարձյալ] նստեցրեց պատրիարքական աթոռին: Թրակեսիոնի զորավար Միսիսիոս պատրիկին, իր հորեղբորորդուն, որն իրեն մեծապես աջակցել էր և իր հետ մարտնչել, 40 օր անց ասածո արդար դատաստանով կուրացրեց. համաձայն [սուրբ] զրոց, ամբարըշտին օգնողը, նրա ճանկն էլ կընկնի:

[A. M. 6236]

Աշխարհի արարչագործություն 6236 թ. Քրիստոսի մարդեղություն 736 թ.

Հոռմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 4-րդ տարին	Արարների Մովսիսի ⁶⁸¹ 6-ամյա իշխանության 1-ին տարին	առաջնորդ 6-ամյա իշխան	Հոռմի Զաքարիա պապի 21-ամյա աթոռակալության 11-րդ տարին
---	---	-----------------------	---

Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի 24-ամյա աթոռակալության 15-րդ տարին	Անտիոքի Թեոփիլակոսոս պատրիարքի ⁶⁸² 7-ամյա աթոռակալության 1-ին տարին
---	--

Այդ տարի Ասորիքում մի մեծ գիսավոր աստղ երևաց: Թեբիտն⁶⁸³ ու արուրիտների⁶⁸⁴ իշխան Գախակը Մովսիսի դեմ ապստամբեցին: Մովսիսը նրանց բռնեց և 12 հազար ռազմիկների հետ եմեսայի սահմաններում մահապատժի ենթարկեց: [Մովսիսը] նույն տարին արևելքի բրիտանյանների խնդրանքով թույլ տվեց եղեսացի Թեոփիլակոսոս երեցին Անտիոքի պատրիարք ձեռնադրել (Սահփանոսը ննջել էր), ընդհանրական թղթեր պատրիարք ձեռնադրել (Մահփանոսը ննջել էր), ընդհանրական թղթեր հրապարակեց, որտեղ արարներին հրամայվում էր անհաժանքով վերաբերվել նրան, այդ հոգևոր շնորհքով լի, մեծախոհ մարդուն: [Մովսիսը] եմեսայում կախեց 120 խալբեոսների⁶⁸⁵, իսկ շատ ու շատ բրիտանյանների արյունը հեղած, բազմաթիվ բնակավայրեր ավերած ու գերեզմանների արյունը հեղած, բազմաթիվ բնակավայրեր ավերած ու գերեզմանը Աբասին բանտում սպանեց: Մահապատժի իրականացնելու համար Մովսիսը մի եթովպացու ուղարկեց, որը եռացող կրով լի տուպրակով

նրա մոտ մտալ, այդ կիրը լցրեց նրա գլխին ու քթին և խեղդամահ արեց: Այդ կախարդի համար նա արգար պատիժ հորինեց, քանզի [Արասը] կախարդութեամբ ու զիվակոչութեամբ քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ էր բերել: Նա մասնակից էր և Վալիդի⁶⁸⁶ սպանութեան:

[A. M. 6237]

[Հոստանդնուպոլսի Կոստանդնուպոլսի կայսեր] 5-րդ տարին [Արարների առաջնորդ Մովսեսի] 2-րդ տարին [Հոստի Չարարիա պատերի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անատոսիոս պատրիարքի] 16-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակոսոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Սուլեյմանը, հավաքելով իր զորքերը, դարձյալ հարձակվեց Մովսեսի վրա, բայց պարտվեց և իր զինվորներից 7 հազար հոգի կորցրեց: Փախուստի դիմելով նա Պալմիրայում փրկվեց, որտեղից անցավ Պարսկաստան: Ապստամբություն բարձրացրին նաև հմեսացիք, հելիոպոլսեցիք և դամասկացիք, որոնք Մովսեսի առջև փակեցին իրենց քաղաքների դռները: Վերջինս իր որդուն Դախակի դեմ ուղարկեց, իսկ ինքը գալով Եմեսա, շորս ամիս հետո առավ այն: Դախակը Պարսկաստանից էր գալիս մեծ զորքով: Միջագետքում Մովսեսը նրա վրա հարձակվեց, շատ զոհեր տվեց, բայց վերջը նրան բռնեց ու սպանեց: Այդ միջոցին Կոստանդինը, օգտվելով արաբների միջցեղային պատերազմից, արշավեց Ասորիքի և Դուլխիայի⁶⁸⁷ վրա և գրավեց Գերմանիկիան: [Կայսրը] հիշյալ քաղաքների արաբ բնակչության անձեռնմխելիության մասին երաշխիքներ տալով, թույլ տվեց առանց զենքի հեռանան, իսկ իր մոր ազգականներին Քյուզանդոն վերաբնակեցրեց, այդ թվում և բաղմամբիվ ասորի միաբնակ աղանդավորների, որոնցից շատերը, որ Թրակիայում են բնակվում⁶⁸⁸, մինչև օրս երեքսրբյան աղոթքում խաչում են երրորդութունը ըստ Պետրոս Թափիչի⁶⁸⁹: Օգոստոս ամսի տասից մինչև տասնհինգը մառախլապատ խավար տարածվեց: Այդ ժամանակ Մովսեսը հաղթանակ տանելով և գրավելով Եմեսան, Հիշամի բոլոր ազգականներին ու աղատություն ստացած ստրուկներին կոտորեց, Հելիոպոլսի, Դամասկոսի և Երուսաղեմի պարիսպները խորտակեց, բազում զինատաների⁶⁹⁰ մահապատժի ենթարկեց, այդ քաղաքներում կենդանի մնացածներին խեղանդամ դարձրեց:

[A. M. 6238]

[Հոստանդնուպոլսի Կոստանդնուպոլսի կայսեր] 6-րդ տարին [Արարների առաջնորդ Մովսեսի] 3-րդ տարին [Հոստի Չարարիա պատերի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անատոսիոս պատրիարքի] 17-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակոսոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի, հունվար ամսի 18-ին, ժամը 4-ին Պաղեստինում, Հորդանանում և համայն Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ, բազում, անթիվ բյուր մարդիկ իրենց մահկանացուն կնքեցին, Եկեղեցիներ ու վանքեր փլվեցին, հատկապես սուրբ քաղաքի անապատում:

Այդ նույն տարի մահ տարածվեց եղավ, որն սկիզբ առնելով Սիկիլիայից ու Կալարիայից, կրակի պես տարածվեց հասավ Մոնեմվասիա⁶⁹¹, Հելլադա⁶⁹² և մերձակա կղզիները: Ինդիկտիոնի ամբողջ 14-րդ տարին համաճարակը կանխավ խարազանում էր ամբարիշտ Կոստանդնոսին, և թեև ստիպում մեղմացնել սուրբ Եկեղեցիների ու սրբապատկերների դեմ նրա կատաղությունը, այդուհանդերձ նա մնաց անուղղելի, ինչրի պես փարավոնը հնում: Ժանտախտը ինդիկտիոնի 15-րդ⁶⁹³ տարին հասավ նաև մայրաքաղաք: Նա սկսեց անշմարելի մուտք գործել մարդկանց հագուստների, եկեղեցական սրբազան հանդերձների, վարագույրների, խաչերի ու բազում կանթեղների մեջ: Մարդիկ շատ վշտացան ու մոռնվեցին, քանզի չկարողացան այդ նշանին բացատրություն տալ: Աստծու պատուհասը սկսեց անողորմարար կոտորել ոչ միայն քաղաքի բնակիչներին, այլև նրա համայն շրջակայքի: Շատերի աչքին ուրվականներ էին երևում, նրանք էքստազի մեջ էին ընկնում, նրանց թվում էր, թե տարօրինակ ու խոժոռողեմ մարդկանց հետ են քայլում, որոնք իրենց հանդիպողներին ձայն են տալիս որպես բարեկամների և խոսակցում նրանց հետ: Այդ մարդիկ գրի էին առնում դրանց ասածը, որն այնուհետև մեկնաբանում էին: Տեսնում էին, թե ինչպես նրանք տներն են մտնում, այդ տան մարդկանց ոմանց սպանում, ոմանց էլ սրով խոցում: Պատահում էր, որ մարդկանց աչքին երևացածի ու նրանց լսածի մեծ մասն իրականութուն էր դառնում: Ինդիկտիոնի 1-ին տարվա գարնանը ժանտախտն աղելի սաստկացավ, իսկ ամռանը՝ կրակ կտրեց: Բազում ընտանիքներ մինչև վերջին մարդը ոչնչացան, մեռելներին թաղող չկար: Այդ շատ զբոսավարին պայմաններում մարդիկ մտածեցին թամբած անասունների վրա հյուպոտետրականթիլ տախտակներ⁶⁹⁴ դնել և նրանց վրա դուրս բերել:

վախճանվածների դիակները, ինչպես նաև սալլերի վրա՝ իրար դարսած: Երբ քաղաքի ներսում և արվարձաններում գտնվող գերեզմանատեղիները լցվեցին, սկսեցին հորեր, փոսեր և բազում խաղողի այգիներ փորել մարդկանց թաղելու համար: Հին պարիսպներից ներս գտնվող պարտեզներում անգամ մարդկանց դիակները թաղեցին և մի կերպ կարողացան լուծել այդ հարցը: Եվ երբ սրբապատկերների դեմ իշխանությունների ձեռնարկած հալածանքի պատճառով բոլոր ընտանիքները նահատակվեցին, դրա վրա բարդվեց հագարացիների նավատորմիղը, որ Ալեքսանդրիայից Կիպրոս հասավ, հոռմեական նավատորմիղի գտնված տեղը: Կերամեայի նավահանգստում Կիբիրեոսների զորավարը⁶⁹⁵ նրանց նավատորմիղի վրա անսպասելի հարձակում գործեց, փակեց նավահանգիստը և, ինչպես պատմում են, [արաբների] հազար դրոմոններից միայն երեքը փրկվեցին:

[A. M. 6239]

[Հոռմալեցիների Կոստանդին կայսեր] 7-րդ տարին [Արաբների առաջնորդ Մրվանի] 4-րդ տարին [Հոռմի Զաքարիա պապի] 14-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 18-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի արուրիտներն սպանեցին Գրիգորին, իսկ արաբների առաջնորդ Մրվանը, ինչպես ասացի վերևում, հաղթանակ տարավ:

[A. M. 6240]

[Հոռմալեցիների Կոստանդին կայսեր] 8-րդ տարին [Արաբների առաջնորդ Մրվանի] 5-րդ տարին [Հոռմի Զաքարիա պապի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 19-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Պարսկաստանի ամենաարևելյան կողմերից խորասանցի մավրոֆորները⁶⁹⁶ կոչվող մարդիկ⁶⁹⁷ Մրվանի դեմ շարժվեցին՝ սուտանուն մարգարե Մոհամեդից մինչև այս Մրվանը իշխած տոհմի, այսինքն Ումայյի կոչվող տոհմի դեմ⁶⁹⁸: Երբ Վալիդի սպանությունից հետո արաբների մեջ կոիվ ծագեց և նրանք այդ կովով էին զբաղված, Եխիմի⁶⁹⁹

և Ալիմի որդիներ կոչվածները (որոնք նույնպես սուտանուն մարդարեի ազգականներն էին և փախել էին ու թաքնվել Փոքր Արաբիայում), հավաքվեցին Աբրայիմի շուրջը, Աբումուսլիմ⁷⁰⁰ անունը կրող ազատություն ստացած իրենց մի ստրկին խորասան՝ այնտեղի իշխանավորներից ու մանց մոտ ուղարկեցին, խնդրելով զաշնակցել ընդդեմ Մրվանի: Նրանք հավաքվեցին ոմն Խակտարայի⁷⁰¹ մոտ և խորհուրդ անելով, ստրուկներին իրենց տերերի դեմ ոտքի հանեցին, մի դիշերով մեջ շատերին կոտորեցին, ապա տիրանալով նրանց զենքերին, ձիերին ու դրամին, հզորացան: Նրանք երկու ցեղի են բաժանված, կայսիսիների և իմանիտների: Աբու-մուսլիմը, տեսնելով, որ իմանիտներն ավելի հզոր են, կայսիսիների դեմ հանեց, կոտորեց նրանց, ապա Խակտարայի հետ եկավ Պարսկաստան և պատերազմելով Իբնդարայի⁷⁰² դեմ, հաղթանակ տարավ, նրա [զինվորներին]՝ շուրջ 100 հազար հոգու իրեն ենթարկեց, ապա հարձակվեց Իբնուբեյրայի⁷⁰³ վրա, որ 200 հազար հոգով էր բանակել և նրան էլ ջարդելով, Ջաբ գետի ափին հասավ Մրվանին: Մրվանը 300 հազարանոց բանակ ուներ, Աբումուսլիմը պատերազմեց նրա դեմ և անհամար բազմություն կոտորեց: Տեսնելու բան էր, թե ինչպես սուր Գրքի ասածի պես, «հալածեսցէ մի զհազարս, և երկուք շարժեսցեն զբիրսս»⁷⁰⁴: Մրվանը ականատես լինելով [հակառակորդների] փայլուն հաղթանակին, գալիս է Խառան, անցնում գետը, ջարդում նավակամուրջը, և վերցնելով իր բոլոր գանձերն ու ընտանիքը և 3 հազար ցեղակից տղամարդկանց, փախչում է Եգիպտոս:

[A. M. 6241]

[Հոռմալեցիների Կոստանդին կայսեր] 9-րդ տարին [Արաբների առաջնորդ Մրվանի] 6-րդ տարին [Հոռմի Զաքարիա պապի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 20-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի մավրոֆորները, հետապնդելով Մրվանին, նրան ձեռք զրցեցին ու սպանեցին⁷⁰⁵. տեղի ունեցավ շատ արյունահեղ ճակատամարտ: Մավրոֆորների հրամանատարն էր Ալիմի որդի Սալիմը, Աբումուսլիմի [խորասան] ուղարկած վերոհիշյալ փախստականներից մեկը: Մնացածները, հավաքվելով Սամարիայում ու Տրախոնիտիս⁷⁰⁶ երկրում, իրենց առաջնորդ ընտրեցին Աբուլաբասին⁷⁰⁷, նրա հաջորդ՝ նրա եղբայր Աբդա-

լային⁷⁰⁸, նրանից էլ հետո՝ Իսե իբն Մուսեին: Ասորիքի կառավարիչ նշանակեցին Արդալային՝ Սալիմի եղբոր ու Ալիմի որդուն, Եգիպտոսի իշխանութիւնը տվեցին հենց այդ Սալիմին, իսկ Աբուլաբասի եղբայր Արդալային, [օրինական] ժառանգին, նշանակեցին Միջագետքի կառավարիչ: Գլխավոր առաջնորդ Աբուլաբասը հաստատվեց Պարսկաստանում: Նա, և իրեն ղաշնակցած պարսիկները իշխանութիւն մայրաքաղաքը Գամասկոսից տեղափոխեցին, ինչպես և Մրվանից խլված բոլոր զանձերը: Մրվանի վերապրած որդիներն ու ազգականները Եգիպտոսից գնացին Աֆրիկա⁷⁰⁹, այնտեղից էլ Լիբիան ու Եվրոպան բաժանող Ովկիանոսի Սպանիկե⁷¹⁰ կռվող նեղուցի վրայով անցան դիմացի ափը և Եվրոպայի Սպանիկե⁷¹¹ կռվող երկրում բնակութիւն հաստատեցին. նրանք մինչև օրս էլ այնտեղ են: Իրենցից առաջ այնտեղ էին հաստատվել Մուավիայի կողմից նախով այնտեղ ափ նետվածները, որոնք իրենց ազգականներն էին ու հավատակիցները: Մրվանի ժամանակ սկիզբ առած տակնուվրայութիւնները տեղեցին 6 տարի⁷¹²: Այդ ընթացքում Ասորիքի բոլոր երևելի քաղաքների պարիսպները հիմնահատակ կործանվեցին, բացի Անտիոքի պարիսպներից, քանզի Մրվանը որոշել էր այն իր ապաստարանը դարձնել: Նրա կողմից անթիվ արաբներ կոտորվեցին (պատերազմական զործերում նա շատ էր հմուտ): Նա պատկանում էր էպիկուրյաններին, այսինքն ավտոմատիստներին⁷¹³ ազանդին և ամբարշտութիւնը հաղորդակից էր դարձել Խառանում բնակվող հեթանոսների միջոցով:

Ինդիկտիոնի նույն 3-րդ տարվա հունվար ամսի 25-ին Կոստանդին կայսրը Խաղարիայի խաբանի դատրից որդի ունեցավ, որին Լեոն անվանեց: Նույն տարի Ասորիքում երկրաշարժ եղավ, շատ մեծ, սարսափելի ավերածութիւններ, քաղաքների մի մասն ամբողջութեամբ հիմնահատակ կործանվեց, ոմանք կիսով չափ, ուրիշներն էլ իրենց պարիսպներով և տներով հանդերձ լեռնային տեղերից անվնաս կերպով, վեց կամ մի քիչ պակաս մզոն տարածութիւն սողացին դեպի դաշտավայրերը: Ականատեսները պատմում են, որ Միջագետքի հողագետները երկու մղոն տարածութիւն վրա ճեղքվեց և նրա խորքերից դուրս եկավ այլ տեսակի՝ շատ սպիտակ ու ավազոտ հող: Այդ ճեղքի միջից, ինչպես ասում են, դուրս եկավ առանց բծերի ջրու նման մի կենդանի, որ մարդկային լեզվով խոսում էր, նախագուշակելով անապատի ցեղերի արաբների վրա արշավելու մասին, ինչ որ եղավ: Հաջորդ՝ ինդիկտիոնի 4-րդ տարին, սուրբ Հոգեգալստյան տոնին, ամբարիշտ Կոստանդին կայսրը իր որդի Լեոնին կայսր թագադրեց⁷¹⁴, ձեռամբ սուտանուն պատրիարք Անաստասիոսի, իր համախոհի:

[A. M. 6242]

Արաբների առաջնորդ Մոհամմեդ⁷¹⁵: Իշխեց 5 տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 10-րդ տարին [Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 1-ին տարին [Հռոմի Զաքարիա պատրիարքի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 21-րդ տարին [Անտիոքի Թեոփիլակոսոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի խալիփացիք մավրոֆոր պարսիկների դեմ ապստամբութիւն բարձրացրին: Եմեսայի սահմաններում նրանց ձեռքով 4 հազար հոգի սպանվեց: Նույն պարսիկները այդպես վարվեցին նաև կայսրի ներքին հետ, Արաբիայում: Երբ Մրվանի զմուսված զլուխը տեղ հասավ, ապստամբութիւնները մեծամասամբ վերջ դտան: Նույն տարվա Դեսիոս⁷¹⁶ ամսի 29-ին ննջեց Անտիոքի սրբազնագույն պատրիարք Թեոփիլակոսոսը:

[A. M. 6243]

Անտիոքի Թեոդորոս պատրիարք⁷¹⁷: Աթոռակալեց 6 տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 11-րդ տարին [Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 2-րդ տարին [Հռոմի Զաքարիա պատրիարքի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 22-րդ տարին [Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի իշխանութիւն նոր տիրացած [արաբները] նենգութեամբ ձերբակալեցին և Պաղեստինի Անտիպատրիս [քաղաքում] սպանեցին քրիստոնյաներից շատերին, որպես նախկին տիրողների ազգականների: Նույն տարին Կոստանդինը Թեոդոսուպոլիսն ու Մելիտենեն առավ և հայերին գերի վերցրեց⁷¹⁸: Վիկարիոսի որդի Թեոդորոսը, ծագումով Փոքր Արաբիայից, Անտիոքի պատրիարք ձեռնադրվեց:

[A. M. 6244]

[Հոստանդինների Կոստանդին կայսեր] 12-րդ տարին [Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 3-րդ տարին [Հոստի Զաքարիա պատրիարքի] 19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 23-րդ տարին [Անտիոքի Քեոզորոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի ամբարիշտ Կոստանդինն իր խելքը կորցնելով, ծրագրեց եկեղեցու և ուղղափառ հավատքի գլխին բազում փորձանքներ բերել: Նա ամեն օր ժողովներ էր գումարում և ժողովրդին նենգորեն համոզում սեփական հայացքներին հետևել, իր կատարյալ ամբարշտության համար ճանապարհ էր հարթում:

[A. M. 6245]

[Հոստանդինների Կոստանդին կայսեր] 13-րդ տարին [Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 4-րդ տարին [Հոստի Զաքարիա պատրիարքի] 20-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 24-րդ տարին [Անտիոքի Քեոզորոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի Կոստանդնուպոլսի պատրիարքի աթոռն ամբարշտորեն վարած և արդեն հոգով վախճանված Անաստասիոսը վախճանվեց նաև մարմնով, խորդապսոս կոչվող [աղիքային] շատ ծանր հիվանդությունից: Նա կղկղանք փսխեց՝ աստժո և իր ուսուցիչ [Գերմանոսի]⁷¹⁹ հանդեպ ցուցաբերած հանդգնության համար արժանի պատիժ կրեց: Այդ նույն տարին ամբարիշտ Կոստանդինը Եփեսոսի եպիսկոպոս Քեոզորոսի՝ Ապսիմարոսի որդու և Պերգեի եպիսկոպոս Պաստիլլասի գլխավորությամբ Հիերիայի պալատում սուրբ և նվիրական պատկերների դեմ 348 եպիսկոպոսների ապօրինի ատյան գումարեց⁷²⁰, որտեղ նրանք հաստատեցին իրենց հայացքները: Տիեզերական աթոռներից (ես նկատի ունեմ Հոստի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի) ոչ մեկը չմասնակցեց: [Ատյանը] տեղեց այդ նույն ինդիկտիոնի 7-րդ տարվա փետրվար ամսի 10-ից մինչև օգոստոսի 8-ը: Այդ ընթացքում աստվածածնի ոսոխներն եկան Վլախեոնա, որտեղ Կոստանդինը Սիլեոնի նախկին եպիսկոպոս վանական Կոստանդինին ձեռքից բռնած ամբիոն բարձրացավ, աղոթեց, ապա բարձրաձայն ասաց. «Բազում տարիներ կեցցե տիեզերական

պատրիարք Կոստանդինը»: Նույն ամսի 27-ին կայսրը շարագործված պատրիարք Կոստանդին և մյուս եպիսկոպոսների հետ բարձրացավ ֆորում, որտեղ համայն ժողովրդի ներկայության հրապարակեցին իրենց շարափառ հերձվածք, նրովեցին սրբազնագույն պատրիարք Գերմանոսին, Գեորգ Կիպրացուն, Հովհաննես Ոսկեհոս Դամասկացուն՝ Մանսուրին՝ սուրբ այրերի ու արգո վարդապետների⁷²⁰:

[A. M. 6246]

Կոստանդնուպոլսի պատրիարք Կոստանդին⁷²¹: Աթոռակալեց 12 տարի:

[Հոստանդինների Կոստանդին կայսեր] 14-րդ տարին [Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 5-րդ տարին [Հոստի Զաքարիա պատրիարքի] 21-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 1-ին տարին [Անտիոքի Քեոզորոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի մեռավ Մոհամմեդը, որ և Աբուլարաս, իշխելով 5 տարի: Նրա եղբայր Աբդալան Մեքքայում էր գտնվում, իրենց աստվածանորգությամբ վալրում: Նա Պարսկաստանում գտնվող Աբումուսլիմին նամակ գրեց՝ պահպանել իշխանության գահն իրեն՝ Աբդալային, ժառանգական իրավունքի համաձայն: Աբումուսլիմը, իմանալով, որ Ալիմի որդի, Ասորիքի մոնոստրատեգոս Աբդալան, Մուսլիմի եղբայրը մտադիր է յուրացնել իշխանությունը, որ գալիս է Պարսկաստանի վրա տիրելու, որ նա թշնամաբար էր տրամադրված Պարսկաստանի [արաբներին] և բարեկամաբար՝ Ասորիքի [արաբներին]՝ իր դաշնակիցներին, իր կողմնակից զորքերին ոտքի հանելով, Մծբինում նրան ճակատամարտ է տալիս, հաղթում նրան և շատերին կոտորում: Նրանցից շատերը սկլավներ⁷²² էին և անտիոքացիք: Փրկվում է միայն Աբդալան, որը մի քանի օր անց շտապ կարգով Մեքքայից Պարսկաստան եկած մյուս Աբդալայից, Մոհամմեդի եղբորից անձեռնմխելիության մասին երաշխիքներ խնդրեց: [Մոհամմեդի եղբայր] Աբդալան [Ալիմի որդի Աբդալային] արգելափակեց մի խարխուլ տնակում, ապա կարգադրեց թաքուն կերպով բրել տնակի հիմքերը և այդ ձևով նրան սպանեց: Իսկ Աբումուսլիմը Ասորիքի արաբների վրա գազազել էր, քանզի նրանք մավրոֆորների դեմ ապստամբություն էին բարձրացրել, նրանցից շատերին Պաղեստինում, Եմեսսայում և ծովափում կոտորել: Ահա այդ պատճառով նա որոշեց զորքերով նրանց

վրա արշավել, բայց [Մոհամմեդի եղբայր Աբդալան] չթողեց: Իրս վրա [Աբումուսլիմը] զայրացած իր զորքով շարժվեց դեպի Խորին Պարսկաստան: [Աբդալան] զրանից շատ վախեցավ, խնդրեց, երզվեց իրենց իշխանության պիղծ սիմվոլներով (խոսքը սուտ մարգարե Մոհամմեդի զավազանի և սանդալների մասին է), համոզեց նրան, որ նա մեկ օրվա ճանապարհ կտրելով, իր մոտ գա, քանզի ուզում է նրան, իր հարազատ հորն արժանավայել շնորհակալիք հայտնել: [Աբումուսլիմը] խաբվեց, 100 հազար հեծյալներով [Աբդալայի] մոտ գնաց և երբ անձամբ նրան հանդիպեց, [Աբդալան] իր իսկ ձեռքով սպանեց նրան⁷²³, Զորքը նույն օրն էլ ցրվեց, բազում նվերներ ստանալով: Ահա այս ձևով Աբդալան տիրացավ իշխանության:

[A. M. 6247]

Աբաբների առաջնորդ Աբդալա⁷²⁴, Իշխեց 21 տարի:
Հոռմի Պավղոս պապ⁷²⁵, Աթոռակալեց 7 տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 15-րդ տարին [Աբաբների առաջնորդ Աբդալայի] 1-ին տարին [Հոռմի Պավղոս պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 2-րդ տարին [Աստիոքի Թեոդորոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Հելիոպոլսի [եպիսկոպոս] Նիկետասը համայն եկեղեցու կողմից նդովվեց: Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից ու Մելիտենից դաղթեցրած ասորիներին ու հայերին Թրակիայում վերաբնակեցրեց⁷²⁶: Նրանցից ընդարձակվեց պավլիկյանների աղանդը⁷²⁷: Այդ պատճառով, որ քաղաքի⁷²⁸ բնակչությունը համաճարակի հետևանքով նոսրացել էր, նա նույն ձևով կղզիներից, Հելլադայից և Կատտիկա⁷²⁹ շրջաններից ընտանիքներ բերեց, բնակեցրեց և խտացրեց քաղաքի բնակչությունը: Նույն տարի բուլղարները կառուցված բերդերի համար պախտպահանջեցին: Կայսրը նրանց դեսպանին անպատվեց, զրա վրա բուլղարները զինված հարձակում գործելով, հասան մինչև Երկար պարիսպը ու գրոհեցին մայրաքաղաքի վրա: Նրանք բազում ազարով ու գերիներով անվնաս իրենց երկիրը վերադարձան:

[A. M. 6248]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 16-րդ տարին [Աբաբների առաջնորդ Աբդալայի] 2-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 2-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսի 9-ին Պաղեստինում և Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ: Աբաբների նախանձի առարկա Անտիոքի Թեոդորոս պատրիարքը իրենց գաղտնիքները հաճախակի նամակներով կայսեր հայտնելու մեջ մեղադրելով, արսուրվեց: Հիշյալ Սալիմը այնուհետև նրան իր հայրենի Մոաբիտ երկիրն⁷³⁰ արսուրեց: Նույն Սալիմը կարգադրեց նոր եկեղեցիներ շինուցել, ոչ մի տեղում խաչ չերևա, քրիստոնյաները արաբների հետ կրոնի շուրջ չվիճեն: Նա 80 հազար զորքով արշավեց Ռոմանիայի վրա, եկավ Կապադովկիա, և լսելով, որ Կոստանդինն իր դեմ է զինվում, վախեցած, ոչ մի ավարառություն չգործած, ձեռնունայն վերադարձավ: Սոսկ իր կողմն անցած փոքրաթիվ հայերի առավ եկավ:

[A. M. 6249]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 17-րդ տարին [Աբաբների առաջնորդ Աբդալայի] 3-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 3-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Աբդալան ընդլայնեց հարկադրվող քրիստոնյաների շրջանները, հարկադրեց աստվածահաճ կյանք վարող բոլոր վանականներին, ձգնաժողովներին ու սյունակյացներին, կնքեց եկեղեցիների դանձատները, հրավիրեց հրեաներին, որ վաճառեն զանձերը. ազատություն ըստացած ստրուկները գնեցին զրանք:

[A. M. 6250]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր] 18-րդ տարին

[Արարների առաջնորդ Արդալայի] 4-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Կոստանդինը Մակեդոնիայի Սկլավինիաները⁷³¹ գերեվարեց, իսկ մնացած [սկլավներին] հպատակեցրեց:

Նույն տարի մոզեբի դավանանքին պատկանող մավրոֆոր պարսիկներից ոմանք սատանայի ազդեցություն տակ իրենց ունեցվածքը ծախեցին, մերկացած պարիսպների վրա բարձրացան և այնտեղից իրենց ցած գցեցին, կարծելով, որ երկինք պիտի թռչնու: Բայց [երկնքի] ծառանգության անմասն լինելով, երկիր էին վերադառնում, շարժ ու փշուր անելով իրենց մարմինը: Այդ մոլորության պարագլուխներին, թվով 16 հոգու, Աբդալան Սալիմի ձեռքով բերիայում⁷³² և Խալկիսում մահապատժի ենթարկեց:

[A. M. 6251]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր] 19-րդ տարին

[Արարների առաջնորդ Արդալայի] 5-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի արարները նախանձից զրգոված կարճ ժամանակով հեռացրին քրիստոնյաներին պետական դիվանատներից, բայց ստիպված եղան դարձյալ նրանց վերադարձնել, քանզի իրենք ի վիճակի չէին թվանըշաններ գրել: Նրանք արշավեցին Ռոմանիայի վրա, շատերին գերեվարեցին, Մելան դեռի⁷³³ ափին մարտ տվեցին և սպանեցին Արմենիակների զորավար Պավղոսին՝ բազում զինվորներով, 42 երևելի մարդկանց շղթայակապ տարան, ինչպես և շատերի գլուխները: Կայսրը արշավեց Բուլղարիայի վրա, եկավ Բերեգաբայի կլեյսուրը, որտեղ նրան ընդդիմակայեցին բուլղարները, որոնք նրա զինվորներից շատերին սպանեցին, այդ թվում նաև Թրակեսիոնի զորավար Լեոն պատրիկին, մի ուրիշ Լեոնի՝ դրոմոսի լոգոթեսին⁷³⁴, և շատ զինվորների, տիրացան նրանց զենքերին: Դրանից հետո [Հոռմայեցիները] անփառունակ վերադարձան:

[A. M. 6252]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր] 20-րդ տարին

[Արարների առաջնորդ Արդալայի] 6-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի ծոպատիկ եղավ, արևելքի ուղղափառները Զատիկ արեցին ապրիլի 6-ին, իսկ մոլորված հերետիկոսները՝ 13-ին:

Նույն տարի սուրբ Հովհաննես Կարապետ Մկրտչի զանգը Քարայրի վանքից⁷³⁵ եմեսացվոց քաղաքի նրա անվան նշանավոր տաճարը փոխադրվեց: Այնտեղ կառուցվեց տապան, որը մինչև օրս հավատացյալները երկրպագում են, պատվում նյութական ու հոգևոր անուշահոտություններով, բոլոր հավատացյալներն այստեղ ապաքինում են ստանում: Նույն տարին արևելքում 10 օր, իսկ արևմուտքում՝ 21 օր դոկիտես⁷³⁶ շատ փայլուն աստղն երևաց: Թեոդորոս անունով մի լիբանանցի ասորի, Լիբանանի Հելիոպոլիս քաղաքի շրջակայքում արարների դեմ ապստամբություն բարձրացրեց, պատերազմ եղավ և երկու կողմից շատերն ընկան: Ի վերջո պարտվելով, նա փախուստի դիմեց, իսկ իր բոլոր լիբանանցի կողմնակիցները մահապատժի ենթարկվեցին: Տակնուվրայություններ և պատերազմներ տեղի ունեցան նաև Աֆրիկայում: Օգոստոս ամսի 15-ին, շաբաթվա 6-րդ օրը, ժամը 10-ին արևի խավարում եղավ: Դարեկում⁷³⁷ հանդես եկան մավրոֆորներից ոմանք, որոնք ամիրապետի որդուն, իրենց սնուցողին, աստված կոչեցին և նման դավանանքի սկիզբ դրեցին: Մավրոֆորները մտան իրենց մոլորության տունը և բանալեպաններին՝ 60 հոգու սպանեցին: Նրանցից ոմանք զնացին Բասրասոս⁷³⁸, շատերին գերեվարեցին և բազում դրամ ձեռք բերեցին:

[A. M. 6253]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր] 21-րդ տարին

[Արարների առաջնորդ Արդալայի] 7-րդ տարին

[Հոռմի Պավղոս պապի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի կասիոսները մավրոֆորների դեմ ընդվզեցին. պատճառը կանայք էին: [Մավրոֆորներից] ոմանք բնակվում էին մի տան մեջ, որանդ ապրում էին երեք եղբայր: Ահա սրանց կանանց նրանք ուղեցին բռնաբարել: Երեք եղբայրները հարձակվեցին նրանց վրա, սպանեցին ու թաղեցին: [Կասիոսները] եկան ու սպանեցին մնացած [մավրոֆորներին]: Սելիխը ծածուկ նրանց դեմ զորք ուղարկեց, բռնեց ու կախեց երեք եղբայրներին, շատերին էլ կոտորեց: Զատիկի տոնին [Սելիխը] մտավ մայր եկեղեցին և երբ սուրբ պատարագի ժամանակ մետրոպոլիտան ասաց. «Ժողովուրդը ըս և եկեղեցին ըս պաղատում են քեզ» ասույթը, նրան դուրս հանեցին և բանտ նետեցին: Սուրբ պատարագը մի ուրիշն ավարտեց: Մեծ աճ տիրեց և եթե մետրոպոլիտը հանդարտեցներ [Սելիխին] հեղ ու խոնարհ խոսքերով, մեծ փորձանք էր գալու: Նա երանելի Անաստասիոսն էր:

Նույն տարին հալածիչ Կոստանդինը վլախեոնայում՝ սուրբ Մամասի ձիարշավարանում գանահարությունը սպանեց արգելի վանական Անդրեաս Կալիբիտեսին⁷³⁹, քանզի նա դատափեռում էր նրա ամբարշտությունը, նրան կոչում նոր վաղես և Հուլիանոս: Կայսրը՝ հրամայեց նրա գին ուղխը գցել, բայց նրա թույրերը կարողացան այն առնել և թաղել [Լեկադիոսի էմպորիոնում]:

[A. M. 6254]

Հոռմի Կոստանդին պապ⁷⁴⁰: Աթոռակալեց 5 տարի:

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր]	22-րդ տարին	[Արարների առաջնորդ Արդալայի]	8-րդ տարին
----------------------------------	-------------	------------------------------	------------

[Հոռմի Կոստանդին պապի]	1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի]	9-րդ տարին
------------------------	------------	---------------------------------------	------------

Այդ տարի արևելյան կողմում դոկիտես աստղն երևաց, Ֆաթիմայի որդին սպանվեց, իսկ բուլղարները ապստամբելով, իրենց տոհմիկ տերերին⁷⁴¹ կոտորեցին և իրենց տեր կարգեցին Տելեցես⁷⁴² անունով երեսուն տարեկան մի շարաբարո մարդու: Բազում սկիավներ փախուստի դիմելով, կայսեր կողմն անցան: Վերջինս նրանց Արտանասի վրա⁷⁴³ բնակեցրեց: Հունիս ամսվա 16-ին կայսրը դուրս եկավ դեպի Թրակիա, միաժամանակ Եվրասիան Պոնտոսի վրայով նավատորմիչ ուղարկեց՝ մոտ 800 խելանդիոն, որոնց յուրաքանչյուրի վրա 12-ական ձի կար: Տելեցես-

սը, լսելով ցամաքով ու ծովով իր դեմ կատարված արշավանքի մասին, մերձակա ալլազգիներից որպես դաշնակից առնելով 20 հազար հողու, նրանց ամրություններում հաստատեց և իրեն ապահովեց: Կայսրը տեղ հասնելով, բանակեց Անքիալոսի դաշտում: Ինդիկտինի 1-ին տարվա հունիս ամսի 30-ին, հինգշաբթի օր, ալլազգիների բազմությամբ երևաց և Տելեցեսը ձակատամարտ տեղի ունեցավ, երկար ժամանակ երկու կողմից էլ շատերը կոտորվեցին: Տելեցեսը պարտություն կրած փախավ: Ձակատամարտը տևեց ժամը 5-ից մինչև ուշ ժամանակ, որի ընթացքում բազմաթիվ բուլղարներ սպանվեցին, մեծաթիվ ժողովուրդ գերի ընկավ, ուրիշներն էլ անցան [կայսեր] կողմը: Կայսրը տարած հաղթանակից ոգևորված, այդ առթիվ քաղաքում շքերթ կազմակերպեց, նա զինված քաղաք մտավ զորքով, արժանանալով դեմոսների փառաբանության: Գերված բուլղարներին քսիլոպանդուրաններով⁷⁴⁴ քարշ տվեց, քաղաքացիներին հրամայեց Ոսկե դռնից դուրս գլխատեն: Բուլղարները Տելեցեսի դեմ ապստամբեցին, նրան ու նրա իշխանավորներին սպանելով, իշխանությունը տվեցին Սաբինոսին⁷⁴⁵, իրենց նախկին տեր Կորմեսիոսի փեսային: Սաբինոսն իսկույն խաղաղության առաջարկով դիմեց կայսեր, բայց բուլղարները ժողով զուամբելով, վճռականապես ընդդիմացան Սաբինոսին ու ասացին. «Դու Բուլղարիան հոռմայեցիների ստրուկն ես դարձնում»: Ապստամբություն բռնկվեց, Սաբինոսը Մեսեմբրիայի բերդը փախելով, անցավ կայսեր կողմը⁷⁴⁶: Բուլղարներն իրենց ուրիշ տեր կարգեցին՝ Պագանոս⁷⁴⁷ անունով մեկին:

[A. M. 6255]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր]	23-րդ տարին	[Արարների առաջնորդ Արդալայի]	9-րդ տարին
----------------------------------	-------------	------------------------------	------------

[Հոռմի Կոստանդին պապի]	2-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի]	10-րդ տարին
------------------------	------------	---------------------------------------	-------------

Այդ տարի անապատի և Բասրաթոնի⁷⁴⁸ բնակիչները երկու եղբայրների գլխավորությամբ Արդալայի դեմ ապստամբեցին: Արդալան սպանել ափեց նրանց՝ 80.000 զինվորներով հանդերձ: Նույն տարին թուրքերը⁷⁴⁹ Կասպից դռներից դուրս գալով, Հայաստանում մեծ կոտորած սարքեցին և բազում գերիներ վերցնելով, վերադարձան: Ասորիքի Ապամիային մերձակա Եպիփանիայի Կոմանացի մականվանյալ ոմն Կողմաս եպիսկոպո-

սի դեմ Եպիփանիայի քաղաքացիները Անտիոքի Թեոդորոս պատրիարքին բողոք գրեցին՝ եկեղեցու սրբազան սպասքի պակասելու առթիվ: Կողմասը, չկարողանալով դրանք տեղը դնել, ուրացավ ուղղափառ դավանանքը և Կոստանդնի՝ սրբապատկերների դեմ ուղղված հերձվածի համախոհ դարձավ: Անտիոքի պատրիարք Թեոդորոսը, Երուսաղեմի Թեոդորոսը և Ալեքսանդրիայի Կողմասը իրենց ենթակա եպիսկոպոսներով, յուրաքանչյուրն իր քաղաքում, սուրբ Հոգեգալստյան օրը, սուրբ ավետարանի ընթերցումից հետո ժողովրդի հավանությամբ միահամուռ կերպով նզովեցին նրան:

Նույն տարին հոկտեմբեր ամսի սկզբից սաստիկ ու դժնդակ սառնամանիք արեց, ոչ միայն մեր երկրում, այլև ավելի սաստիկ արևելքում, հյուսիսում և արևմուտքում, այն աստիճան, որ Պոնտոսի հյուսիսային ափը 100 մղոն երկարությամբ, 30 կանգուն խորությամբ սառցակալեց: Նույնը տեղի ունեցավ նաև Զիզքիայից⁷⁵⁰ մինչև Դանուբ, սառցակալեցին Կուֆի գետը, նաև Դանաստրիսն ու Դանապրիսը, նեկրոպոլիսն և մնացած ափը՝ մինչև Մեսեմբրիա և Մեդիա⁷⁵¹: Այդ սառույցը ևս 20 կանգուն ըստ վարացավ տեղացած ձյունով, այնպես որ ծովը ցամաք դարձավ, նրա վրայով նազարիայից, Բուրգարիայից, շրջակա մյուս երկրներից մարզիկ, վալլի ու ընտանի անասուններ կարողանում էին քայլել: Ինդիկտիոնի նույն՝ երկրորդ տարվա փետրվար ամսին այդ սառույցը աստժո հրամանով տրոհվեց բազում լեռանման բեկորների, որոնք քամու ուժով թռչվեցին, բերվեցին Դաֆնուսիա և Հիերոն, ապա Ստենոնով հասան քաղաք մինչև Պրոպոնտիս, կղզիներն ու Աբիդոս և ողողեցին ողջ ծովափը: Դրա ականատեսը մենք էլ եղանք. իմ հասակակից 30 երեխաներով մենք բարձրացանք նրանց մեկի վրա ու խաղ էինք անում: [Սառցարեկորների] վրա կարելի էր տեսնել վալլի և ընտանի կենդանիների սատակները: Յանկացողը կարող էր ոտքով, առանց ղժվարության Սոֆիանից քաղաք գալ, իրիսուպոլից՝ սուրբ Մամաս ու Գալատես, կարծես ցամաքի վրայով: [Սառցարեկորներից] մեկը, հարվելով Ակրոպոլսի⁷⁵² աստիճանին, ջարդոսփշուր արեց այն, անգամ ներսի կողմում գտնվող տները պարսպին, ուժգին սասանեց այն, անգամ ներսի կողմում գտնվող տները ցնցվեցին: Այն ջարդվեց և երեք մասի բաժանվելով քաղաքը Մանգանոնից մինչև Բոսպոր գոտևորեց: Բեկորներից մեկի բարձրությունը գերազանցում էր քաղաքի պարիսպները: Քաղաքի բոլոր տղամարդիկ, կանայք ու երեխաները անդով դիտում էին դա և լաց ու կոծով տուն վերադառնում, ի վիճակի չլինելով, որոշել, թե ինչի նշան է դա: Նույն տարվա մարտ ամսին երկնքից բազում աստղեր էին ցած ընկնում, բոլոր ակա-

նատեսներն սկսեցին ենթադրել, թե աշխարհի վերջն է եկել: Սաստիկ երաշտ էլ եղավ, այն աստիճան, որ աղբյուրներն անգամ ցամաքեցին: Կայսրը կանչելով պատրիարքին, ասաց. «Արդ, մեզ ի՞նչ վնաս դրանից, եթե աստվածածինն անվանենք քրիստոսածին»: Նա փաթաթվելով կայսեր ասաց. «Ողորմա՛ տեր, մտքովդ անգամ շանցնի նման բան: Գուշե՞ս ահանում ինչքան է խաբաղանվում ու նզովվում նեստորիոսը⁷⁵³ համայն եկեղեցու կողմից»: Կայսրը պատասխանեց. «Ես հարցրի, որ իմանամ: Քո խոսքն է կարևոր»:

[A. M. 6256]

Աշխարհի արարչագործության 6256 թ.	Քրիստոսի մարդկություն 756 թ.	Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 24-րդ տարին
Արարների տաշնորդ Աբդալայի 21-ամյա իշխանության 10-րդ տարին	Հռոմի Կոստանդին պապի 5-ամյա աթոռակալության 3-րդ տարին	Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի 12-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Այդ տարի թուրքերը դարձյալ Կասպից դռներով մտան Իբերիա և պատերազմելով արաբների դեմ, երկու կողմից էլ շատերն սպանվեցին: Իսկ Աբդալան այսպիսի խորամանկությամբ տապալեց Իսե իբն Մուսեին, որին, ինչպես վերևում ասվեց, ընկել էր իրենից հետո իշխելու երրորդ վիճակը: Աբդալան, տեսնելով, որ նա տանջվում է զլխացավից, որ նրա աչքերը խավարում են, համոզեց, որ կբուժվի, եթե քթին փչվի ինչ-որ փոշտացուցիչ, որը պատրաստում է իր բժիշկը, Մուլսես անունով մեկը՝ Անտիոքի եկեղեցու սարկավագը: Վերջինիս նա արդեն կաշառել էր ու համոզել գեղը շատ թունդ պատրաստել, բացի այդ, շատ էլ թմրեցուցիչ: Իսեն հավատաց Աբդալայի խոսքերին, հակառակ որ [վախենալով] նենգությունից, խուսափում էր նրա հեռաճաշել, ընդունեց քթաղեղը: Նրա զլխի բոլոր զգայարանները դադարեցին գործելուց, նա զրկվեց մտածելու ընդունակությունից և անձայն փոկեց գետին: Աբդալան հրավիրելով ցեղապետներին ու իշխանավորներին, ասաց. «Գուր ի՞նչ կարծիքի եք ձեր ապագա թագավորի մասին»: Բոլորը միահամուռ կերպով մերժեցին նրան և հավանություն տվեցին նույն Աբդալայի որդուն՝ Մոհամմեդին, Մահդի մականվանյալին⁷⁵⁴: Իսկ զգայազուրկ Իսեին տարան իր տունը: Երբ երեք օր անց նա ուշքի եկավ, Աբդալան շինծու պատճառաբանու-

թյուններով մխիթարեց, 100 տաղանդ ոսկով խայտառակությունը փոխ-
հատուցեց:

Նույն տարի Բուլղարիայի տեր Պաղանոսը կայսեր նամակ գրեց,
խնդրելով անձնական տեսակցություն: Հավանություն ստանալով, նա
իր բույարներով քնաց դեպի կայսրը: Վերջինս գահին բազմած, իր կող-
քին Սարինոսին նստեցրած, ընդունեց, պախարակեց նրանց անկարգու-
թյունը, Սարինոսի դեմ տածած ատելությունը: Նրանք առերես հաշտվե-
ցին⁷⁵⁵: Կայսրը Բուլղարիա թաքուն մարդ ուղարկեց և բռնել սվեց սեկ-
բոսների իշխան Սկլավոնոսին, որը Թրակիայում բազում ավերածու-
թյուններ էր գործել, բռնեց նաև սկամարների⁷⁵⁶ առաջնորդ Խրիստիանո-
սին, որն ուրացել էր քրիստոնեությունը և կրոնափոխ եղել: Սուրբ Թով-
մայի ծովապատնշի մոտ նրա ձեռքերն ու ոտքերը կտրեցին, ապա բը-
ժիշկներին կանչեցին, որոնք նրան դեռևս կենդանի աճուկից մինչև կրծ-
քավանդակը հերձեցին, իմանալու համար մարդու կազմությունը: Որից
հետո նրան կրակը գցեցին: Կայսրը անակնկալ կերպով քաղաքից դուրս
եկավ և ընդարմացնող խաղաղության պատճառով կլեյսուրները ան-
պաշտպան գտնելով, մուտք գործեց Բուլղարիա, հասնելով մինչև Ցի-
կաս⁷⁵⁷: Հանդիպածը զոլյակները⁷⁵⁸ նա կրակի տվեց, բայց երկյուղ ըզ-
գալով վերադարձավ, ոչ մի սխրանք չգործած:

[A. M. 6257]

[Հռոմայեցիների Կոս-
տանդին կայսեր] 25-րդ [Արարների առաջնորդ
Արդալայի] 11-րդ տարին
տարին

[Հռոմի Կոստանդին պա-
պի] 4-րդ տարին [Կոստանդնուպոլսի Կոս-
տանդին պատրիարքի] 12-
րդ տարին

Այդ ինդիկտոնի 4-րդ տարվա նոյեմբեր ամսի 20-ին ամբարիշտ
ու պիղծ կայսրը, բոլոր աստվածավախների դեմ գազազած, հրամայեց
Դամատրի⁷⁵⁹ լեռան մոտ գտնվող սուրբ Ավքսենտիոսի վանքում ճգնող
նորավկա Ստեփանոսին⁷⁶⁰ քարշ տան: Ոսոխները՝ նրա բթամտության
կողմնակիցներ ու համախոհներ սխոլարիոսներն ու մնացած զինվորա-
կանները⁷⁶¹, պարանով կապելով ոտքը, նրան Պրեստորիոնից մինչև
Պելագիոս քարշ տվեցին, ուր և կտոր կտոր անելուց հետո, նրա
նվիրական նշխարները բռնի մահով վախճանվածների փոսը գցեցին⁷⁶²:
Պատճառն այն էր, որ Ստեփանոսը շատերին հորդորում էր վանք մտնել,

համոզում արհամարհել թագավորական աստիճաններն ու զանձերը: Այս
մարդը բոլորին մեծ հարգանք էր ներշնչում, քանզի շուրջ 60 տարի ճրգ-
նավորական կյանք էր վարել, աչքի ընկել իր բազում առաքինություննե-
րով: Կայսրը սրբապատկերները պաշտելու մեջ մեղադրված բազում զո-
րահրամանատարների ու զինվորների տարբեր պատիժների ու սարսա-
փելի խոշտանգումների ենթարկեց: Նա իր թագավորության բոլոր հպա-
տակներից երգում պահանջեց սրբապատկերները շերկրպագելու վերա-
բերյալ: Բացի այդ, նա սուտանուն պատրիարք Կոստանդին ամբիոն
հանեց, բարձրացնել տվեց նվիրական ու կենարար խաչափայտը ու երգ-
վել, թե ինքը սրբապատկերները երկրպագողներին չի պատկանում,
միաժամանակ նրան համոզեց հրաժարվի մենակացությունից ու կու-
սակրոնությունից, միս ուտի և հանդուրժի կիթառերգությունը կայսերա-
կան սեղանին: Բայց արդար դատաստանը նրան երկար չթողեց ոճրա-
գործի ձեռքում: Ինդիկտոնի 4-րդ տարվա հունվար ամսի 21-ին կայս-
րը բուլղարների դեմ շարժվեց, նա Աքելոոս⁷⁶³ ուղարկեց 2600 խելան-
զիոն՝ բոլոր բանակաթեմերի զորքերով: Բայց երբ նավերը ծովափում
խարխսի գցեցին, հյուսիսային քամի փչեց և քիչ մնաց, որ բոլորը ջար-
դուփշուր լինեին: Բազում զորք ծովահեղձ եղավ, կայսրը ստիպված հը-
րամայեց ցանցեր գցել, հավաքել խեղձածների մարմինները և հողին
հանձնել: Հուլիս ամսի 17-ին նա անփառունակ քաղաք մտավ: Ինդիկ-
տոնի նույն 4-րդ տարվա օգոստոս ամսի 21-ին ձիարշավարանում նա
խարաղանեց ու անարգեց մենակացների սքեմը, հրամայեց չուրաբան-
չյուր արբային մի կնոջ ձեռքից բռնած անցնել ձիարշավարանի միջով՝
ողջ ժողովրդի թրակոնություն ու լուտանքների տակ: Նույն ամսի 25-ին
ձիարշավարան բերվեցին ու ծաղրուծանակի ենթարկվեցին կայսեր դեմ
ստնձգություններ կատարած լինելու մեջ մեղադրված 19 բարձրաստիճան
իշխանավորներ: Պատճառը սակայն իրականում նախանձն էր, քանզի
նրանք գեղադեմ էին, թիկնեղ ու բոլորի կողմից փառաբանված: Սրան-
ցից ոմանց նա անգամ սպանեց՝ իրենց բարեպաշտության համար. նը-
րանք վերոհիշյալ ճգնավոր Ստեփանոսի մոտ էին լինում և ներբողում նրա
շարժարանները: Տուժողների գլխավորներն էին՝ Կոստանդին պատրիկը,
նախկինում դրոմոսի լոգոթետ (կայսրը սրան Պոզոպազուրոս էր անվա-
նում), սրա եղբայր էքսկուրիտորների դոմեստիկոս Ստրատեգիոս սպա-
թարը⁷⁶⁴, նախկինում դրոմոսի լոգոթետ և Սիկիլիայի զորավար Անտիո-
քոսը, Օպսիկիոնի կոմես Դավիթ սպաթարը, Թրակիայի զորավար պրո-
տոսպաթար Թեոփիլակոս Իկոնիատեսը, Հիմերիոս պատրիկի սպաթար
Խրիստոֆորոսը, Վարդան պատրիկի որդի կայսերական պրոտոստրատոր

Կոստանդին սպաթարը, Մարինակիսի կանդիդատ⁷⁶⁵ Թեոփիլակտոսը և ուրիշները: Ջիարչավարանում ծաղրուծանակի ենթարկելուց, համայն ժողովրդի կողմից թրակոծ անելուց ու նզովելուց հետո, կայսրը վճիռ արձակեց. երկու եղբայրներին՝ Կոստանդինն ու Ստրատեգիոսին Կյունեգիոնում գլխատել: Ողջ ժողովուրդը մեծապես ողբաց նրանց: Երբ կայսրն իմացավ այդ մասին, զայրացավ, էպարքոս Պրոկոպիոսին ձաղկեց ու պաշտոնանկ արեց, որպես նման բան թույլ տված: Մնացած բոլորին կուրացրեց ու արքայեց: Անդուրն ամեն տարի արքայազնների մոտ մարդ էր ուղարկում, նրանց խարազանի 100-ական հարված հասցնելու համար: Նույն՝ 4-րդ ինդիկտոնի նույն օգոստոս ամսի 30-ին գարշանունը⁷⁶⁶ մուլեգնեց իր անվանակից ու համախոհ պատրիարքի դեմ: Նա իրեն համախոհ ու բարեկամ մի բանի կղերականների, վանականների ու աշխարհականների կազմակերպեց ասեն, թե «Լսել ենք պատրիարքի ու Պողոսպոլսոսի խոսակցությունը ընդդեմ կայսեր»: Նրանց նա պատրիարքարան ուղարկեց պատրիարքին բանազատելու: Երբ նա մեղադրանքը չընդունեց, կայսրը նրանց նվիրական խաչափայտի վրա երդվել տվեց, թե «Պատրիարքից ենք լսել նման զրախոսությունը»: Դրա վրա կայսրը մարդ ուղարկեց ու կնքեց պատրիարքարանը, իսկ պատրիարքին արքայից Հիերիա, ապա Պրինկիպոս⁷⁶⁷:

[A. M. 6258]

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեոս⁷⁶⁸: Աթոռակալից 14 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր]	26-րդ տարին	[Արաբների առաջնորդ Արդալայի]	12-րդ տարին
[Հոռոմի Կոստանդին պապի]	5-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Նիկեոս պատրիարքի]	1-ին տարին

Այդ տարի մեռավ Արդալա իբն Ալին. նրա վրա աշտարակը փուլ եկավ, որի մեջ նա անվտանգ էր գտնվում: Իր ամիրապետության օրոք Արդալան, իր տիրապետության տակ ապրող քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց: Նա հանել տվեց եկեղեցիների խաչերը, արգելեց հսկելը, իրենց լեզուն⁷⁶⁹ սովորելը: Իրենց կողմից արուրիտ կոչվածները, որ թարգմանաբար նշանակում է «չերմեոանդներ», Պալմիրայի անապատում ապստամբություն բարձրացրին: [Արաբների], որպես անհավատների, ատելությունն աստծո եկեղեցիների դեմ հասկանալի է: Քրիստոնե-

յաների կայսրը, սակայն, դուցե աստծո հանդեպ մեր անասելի մեղքերի պատճառով (ինչպես Իսրայելի մոլեգին Աբաբը)⁷⁷⁰, իր թագավորության սահմաններում ապրող ուղղափառ եպիսկոպոսների, վանականների, աշխարհականների, իշխանավորների ու հպատակների գլխին ավելի շատ փորձանքներ բերեց, քան մոլեգին արաբները: Նա ամենուրեք զրավոր ու բանավոր, որպես անօգուտ, մերժեց սուրբ կույս աստվածածնի և բոլոր սրբերի մեզ համար օգնության աղբյուր հանդիսացող միջնորդությունը, գերեզմաններից փորում հանում ու ցրվ էր տալիս [սրբերի] սուրբ նշխարները, երբ իմանում էր, որ բարեպաշտ մարդիկ, ըստ սովորության երկրպագում են դրանք՝ հոգու ու մարմնի ապաքինման համար: Երկրպագողներին, որպես ամբարիշտների, սպառնում էին մահապատժի ենթարկել, գոչքը բռնադրավել, արքայի ու խոշտանդել: Աստվածաշնորհ մասունքը, որն իր տիրոջ համար գանձ էր, հափշտակվում էր ու այնուհետև անհայտացվում: Պիղծ կայսրը հենց այդպես վարվեց նաև փառաբանյալ վկա Եվփեմիայի⁷⁷¹ ամենանվիրական մասունքի հետ, տապանի հետ միասին այն ծովը գցելով, քանզի նա չէր կարող տեսնել, թե ինչպես այդ մասունքներից ժողովրդի համար մեռն էր բխում, պարսավում սրբերի միջնորդության վերաբերյալ նրա տխմարությունները: Բայց աստված, որ ըստ սուրբ գրոց պահպանում է աստվածասեր մարդկանց ոսկորները, անվնաս պահպանեց նրա մասունքը և կեմնոս կղզում լույս աշխարհ բերեց. նա մարդկանց երազում երևաց և հրամայեց վերցնել այն ու պահել: Բարեպաշտ կայսր Կոստանդինի և Իրենեի օրոք⁷⁷², ինդիկտոնի 4-րդ տարին Եվփեմիայի աճյունը պատշաճ հարգ ու պատվով վերստին բերվեց իր՝ սրբուհու տաճարը, որը եկեղեցիների թշնամին զինանոցի ու զուգարանի էր վերածել: [Կոստանդինն ու Իրենեն] մարբեցին այն, վերստին սրբազործեցին՝ ի պարսավումն նրա անաստվածության և ի հաստատումն իրենց աստվածապաշտություն: Մենք վերահիշյալ ամենաբարեպաշտ կայսրերի և սրբազնագույն Տարասիոս պատրիարքի⁷⁷³ հետ ականատեսը եղանք այդ զարմանալի և արժանահիշատակ հրաշքի, որ կատարվեց անօրենի մահվանից 22 տարի անց: Նրանց հետ մենք ևս, անարժաններս մեծ շնորհքի արժանացած, համբուրեցինք մասունքները: Նույն՝ ինդիկտոնի 5-րդ տարվա նոյեմբեր ամսի 16-ին կայսեր վճռի համաձայն ապօրինաբար Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց սկլավական ծագում ունեցող ներքինի Նիկեոսը: Չորային եղանակ եղավ, երկնքից ցող անգամ լիսփվեց, քաղաքից շուրջ կատարելապես վերացավ: Զրամբարներն ու ավազանները դատարկվեցին, մշտահոս աղբյուրներն անգամ ցամաքեցին: Կայսրը տեսնելով դա, սկսեց նորոգել

Վալերիանոսի ջրմուղը, որը գործել էր մինչև Հերակլիոսի ժամանակ և ավերվել ավարների կողմից: Նա տարբեր տեղերից վարպետներ բերեց, Ասիայից և Պոնտոսից 1000 հյուան և 200 ծեփագործ, Հելլադայից և կղզիներից՝ 500 աղյուսագործ, իսկ Քրակիայից՝ 5000 բանվոր և 200 կղմինդրագործ: Նրանց վրա նա կարգեց վերակացուներ և մեկ պատրիկ: Գործի ավարտումից հետո ահա ջուրը հոսեց քաղաք: Նույն՝ ինդիկտիոնի 5-րդ առաին նա զորավար նշանակեց իր համախոհներին, իր շարափառ ծրագրերի արժանի իրականացնողներին: Անատոլիկոն բանակաթեմի զորավար նշանակեց Միքայել Մելիսսենոսին, Քրակեսիոնի զորավար՝ Միքայել Լախանոդրակոնին⁷⁷⁴, Բուկելլարների զորավար՝ Մանիին⁷⁷⁵, շար Մանիի անվանակցին: Մարզ կարո՞ղ է մեկ առ մեկ պատմել սրանց գործած սրբապղծությունների մասին, որոնց մենք մասամբ կանդրադառնանք իր տեղում: Չէ՞ որ ավետարանի խոսքերով ասած, համայն աշխարհն անգամ փոքր կգա կայսեր սիրույն սրանց գործած արարքների մասին հանգամանորեն գրված գրքերն ամփոփելու համար:

[A. M. 6259]

Հոռոմի պապ Ստեփանոս⁷⁷⁶: Աթոռակալեց 3 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր]	27-րդ տարին	[Արարների առաջնորդ Սեդալայի]	13-րդ տարին
-----------------------------------	-------------	------------------------------	-------------

[Հոռոմի Ստեփանոս պապի]	1-ին տարին	[Կոստանդնուպոլսի նիկեոսա պատրիարքի]	2-րդ տարին
------------------------	------------	-------------------------------------	------------

Այդ՝ ինդիկտիոնի 6-րդ տարվա հոկտեմբեր ամսի 6-ին սուտանուն պատրիարք Կոստանդինը Պրինկիպոս կղզուց քաղաք բերվեց: Բունակալ Կոստանդինը այն աստիճան ծեծեց նրան, որ նա քայլել չէր կարող: Կայսրը հրամայեց նրան դեսպակի վրա տանել և նստեցնել Մեծ եկեղեցու սուլեայում⁷⁷⁷: Նրա հետ էր մի ասեկրեստ՝ թղթի գլան բռնած, ուր գրված էին նրա դանցանքները: Կայսերական հրամանով այնտեղ հավաքված համայն ժողովրդին բարձրաձայն ընթերցվեց թուղթը: Ասեկրեստը սինթրոնոնում բազմած նիկեոսա պատրիարքի ներկայությամբ յուրաքանչյուր կետի ընթերցումից հետո ապառկում էր Կոստանդինին: Այնուհետև նրան ամբիոն բարձրացրին ու կանգնեցրին, իսկ նիկեոսան առավ թուղթը, եպիսկոպոսներ ուղարկեց, վերցրեց նրա եմփոբոնը և նզովեց նրան: Նրան «խավարամիտ» անունը տալով, եկեղեցու ետևի դռնից դուրս հանեցին: Հաջորդ՝ ձիարշավական մրցումների օրը նրա մո-

րուքը, գլուխն ու հոնքերը ածիլեցին, մետաքսե, անթև մի կարճ շոր հագրերին, թամբած ավանակի վրա հակառակ կողմից նստեցրին, ավանակի պոչը ձեռքը տվեցին և դիփպիոնով ձիարշավարան մտցրին, որտեղ համայն ժողովուրդն ու զեմոսը նզովեց ու թքակոծ արեց նրան: Ավանակին քաշում էր նրա եղբորորդի⁷⁷⁸ Կոստանդինը, որի քիթն էին կտրել: Երբ նա հասավ զեմոսներին, վերջիններս իջան⁷⁷⁹, նրան թքակոծ արեցին, գլխին հող թափեցին: Բերելով ստամա⁷⁸⁰, նրան ավանակից ցած զլորեցին և նրա պարանոցին կոխեցին: Ապա նստեցրին զեմոսների դիմաց և նա մինչև ձիարշավական մրցումների ավարտը լսում էր նրանց ծանակող խոսքերը: Նույն ամսի 15-ին [կայսրը] նրա մոտ պատրիկներին ուղարկեց ու ասաց. «Ի՞նչ կարծիքի ես մեր հավատքի և մեր գումարած ժողովի մասին»: Նա խելակորույս, ցանկանալով այդ ձևով սիրաշահել նրան, ասաց, թե «Ճշմարիտ է հավատքդ և հրավիրածդ ժողովը»: [Պատրիկները] առանց այլևայլի պատասխանեցին և ասացին. «Քո պիղծ բերանից մենք հենց այդ էինք ուզում լսել: Այս օրվանից գնա ի խավար և ի նբզովը»: Նա դատապարտվեց ու գլխատվեց Կյունեգիրոնում: Նրա գլուխն ականջներից կապեցին և Միլիոնում երեք օր կախած պահեցին ի տնս ժողովրդյան, իսկ մարմինը ոտից պարանով կապելով, Մեսե պողոտայով քարշ տվեցին տարան Պելագիոսի գերեզմանատունը⁷⁸¹ և բռնի մահով վախճանվածների [փոսը] զցեցին: Երեք օր հետո էլ գլուխը բերեցին և նույն տեղը զցեցին: Ո՞վ վայրի գազանի խելացնորություն, դաժանություն ու անողորմություն: Թշվառականը շպտակառն՞ց սուրբ ավազանից, չէ՞ որ իր երրորդ կնոջից ծնված երկու երեխաներին նա էր մկրտել: Նա միշտ էլ զազանաբարո ու վայրենի էր: Այդ տարվանից սկսած սուրբ եկեղեցիների դեմ նա ավելի մեծ մոլեգնություն ցուցաբերեց: Նրա հրամանով սյունից ցած իջեցրին փառավորյալ Պետրոս սյունակայացին, որին, իր դոգմաները շրնդունելու պատճառով, ոտքերից կապել տվեց ու հրամայեց կենդանի կենդանի քարշ տան Մեսե պողոտայով և նրան էլ Պելագիոսում նետեն: Ուրիշներին պարկերի մեջ էր գցում, պարկերին քարեր կապում ու հրամայում ծովը նետել: Նա մարդկանց կուրացնում էր, բթբեր կտրում, խարազանում, բարեպաշտներին շարշարելու բազմապիսի ձևեր հորինում: Քաղաքում ահա ինքն անձամբ և իր համախոհների հետ էր գործում, ես նկատի ունեմ սխոլերի դոմեստիկոս Անտոնիոս պատրիկին, Պետրոս մագիստրոսին, տագմաների իր գասսախարակած զինվորներին, իսկ դոսի բանակաթեմերում՝ վերոհիշյալ զորավարների: Ինքը զվարճանում էր նվազով ու կերուխումով, իր շրջապատի մարդկանց զազրախոսություն ու պարել սովորեցնում: Եթե մեկը հանկարծ ցած ընկ-

նելիս կամ ցամ զգալով քրիստոնյաների համար սովորական «Աստվածածին օդնյա՛» ասեր, կամ հսկեր, եկեղեցի հաճախեր, բարեպաշտ կյանք վարեր, տեղի անտեղի երգում շաներ, նա, որպես կայսեր թշնամի, անզրթորեն պատժվում էր և «ամենեմոնևտոս»⁷⁸² անունն ստանում: Աստծուն փառավորելու համար ստեղծված և մեղքերից փրկվելու համար ապաստարան վանքերն իր համախոհ զինվորների սովորական զորանոցների էր վերածում: Բյուզանդիոնի ամենահին՝ Դալմատոսի վանքը նա զինվորների բնակության տրամադրեց, Կալիստրատոսի կոչվող վանքը, նաև Դիոսի և Մաքսիմինոսի վանքերը, վանականների այլ սուրբ մենաստաններ ու կուսանոցներ հիմնահատակ կործանեց: Վանական դառնալու ցանկություն հայտնած զինվորական ու քաղաքական հայտնի գործիչներին, հատկապես իր նախկին մտերիմներին ու համախոհներին, որոնք իր զազրագործություններին ու խայտառակություններին մասնակից էին դարձել, հենց նրանց էր մահվան դատապարտում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանք կարող են հայտնել իրենց իմացածը և իրեն խայտառակ անեն: Հենց այդ նկատառումներով նա դավադրության մեջ մեղադրեց Պողոսպապուրոսի եղբայր Ստրատեղիոսին և սուրբ Ավքսենափոսի վանքի ճգնաժող երանելի Ստեփանոսի հետ սպանեց: Ստրատեղիոսը գեղեցիկ մարդ էր, կայսրը սիրում էր մտերմանալ նմանների հետ իր զազրագործությունների համար, բայց տեսավ, որ նա խորշում է իր անօրեն արվամոլությունից և որ այդ մասին տեղեկացնում երանելի Ստեփանոսին, որից փրկարար սպեղանի ստանում: Այդ տարի կայսրը միջոցներ ձեռք առավ և քաղաքում միերքների էժանություն եղավ, քանզի նոր Միդաս⁷⁸³ դառնալով, սակի կուտակեց, երկրագործներին կատարելապես աղքատացրեց, նրանք հարկերը վճարելու համար ստիպված սկսեցին աստծո պարզևած բերքը էժան վաճառել: Նույն տարի սուտանուն պատրիարք նիկեոսը քերեց հանեց պատրիարքարանի փոքր սեկրետի խճանկար սրբապատկերները, մեծ սեկրետի փայտի վրա նկարված սրբապատկերները ցած առավ, մնացած սրբապատկերների դեմքերը ներկով ծածկեց: Նա նույնն արեց նաև Աբրամիեոնում:

[A. M. 6260]

[Հռոմայեցիների տանգին կայսեր]	Կոս- 28-րդ	[Արարների առաջնորդ Աբդալայի]	14-րդ տարին
[Հռոմի Ստեփանոս պ- պի]	2-րդ տարին	[Կոստանդնուպոլսի նիկե- ոսս պատրիարքի]	3-րդ տարին

Ինդիկտիոնի 7-րդ տարվա ապրիլ ամսի 1-ին, շաբաթ օրը, 19 աղուբիտների արիբունալիոնում երրորդ անգամ ամուսնացած կայսրը իր երրորդ կնոջ Եվդոկիային ավզուատա թագադրեց, իսկ հաջորդ օրը, այն է ապրիլ ամսի 2-ին, սուրբ Զատիկի կիրակի օրը նույն տրիբունալիոնում նրանից ծնված իր երկու որդիներ Խրիստոֆորոսին ու Նիկեփորին կեսար հռչակեց: Արարողությունը կատարեց պատրիարքը, իսկ կայսրը նրանց վրա գցեց խլենաները⁷⁸⁴ և հաղցրեց կեսարի գլխապանները: Նույն ձևով նա նորելիսսիմոս⁷⁸⁵ հռչակեց նրանց ամենակրտսեր եղբայր Նիկեոսասին, որի վրա գցեց ոսկեթել խլենա, իսկ գլխին պսակ դրեց: Գրանից հետո կայսրերն անցան զնացին, ճանապարհին մինչև Մեծ եկեղեցին դրամ ցրիվ տալով՝ տրիմիսիա, սեմիսիա և նոր հատած դահեկաններ⁷⁸⁶:

[A. M. 6261]

[Հռոմայեցիների տանգին կայսեր]	Կոս- 29-րդ	[Արարների առաջնորդ Աբդալայի]	15-րդ տարին
[Հռոմի Ստեփանոս պ- պի]	3-րդ տարին	[Կոստանդնուպոլսի նիկե- ոսս պատրիարքի]	4-րդ տարին

Այդ տարի Ասորիքում գերիների փոխանակություն կատարվեց՝ տղամարդ տղամարդու⁷⁸⁷ դիմաց, կին՝ կնոջ, երեխա՝ երեխայի: Աբդալան թուլլատրեց [արարներին] մորուքն ածիլել, հագնել մեկուկես կանգունանոց կամ ելավկիա⁷⁸⁸: Աբդալան 80 հազարանոց զորքով ամբողջ ամառն ապարդյուն պաշարեց Կամախը և խայտառակ եղած վերադարձավ: Ինդիկտիոնի 8-րդ տարվա սեպտեմբեր ամսի 1-ին Աթենքից ժամանած Իրենեն մետաքսյա պալիոններով⁷⁸⁹ զարդարված բազում դրոմոններով ու խելանդիոններով Հիերիայից թագավորանիստ քաղաքը մբտավ: Նրան դիմավորեցին և ուղեկցեցին քաղաքի մեծամեծներն իրենց կանանցով հանդերձ: Նույն սեպտեմբեր ամսի 3-ին պատրիարքը եկավ պալատ և Փարոսի եկեղեցում կատարվեց այդ Իրենեի և Լեոն կայսեր նշանադրության արարողությունը: Դեկտեմբեր ամսի 17-ին Ավզուատեոնի տրիկլինում Իրենեն կայսրուհի թագադրվեց և գնալով Դափնի սուրբ Ստեփանոսի աղոթարանը, Կոստանդնի որդի Լեոն կայսեր⁷⁹⁰ հետ ամուսնական պսակներն ստացավ:

[A. M. 6262]

Հոռոմի պապ Աղրիանոս⁷⁹¹, Աթոռակալեց 27 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 30-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգալայի] 16-րդ տարին

[Հոռոմի Աղրիանոս պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի նիկեոսա պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Բանակասն⁷⁹² արշավեց Ռոմանիայի վրա և բազում ժողովուրդ գերեվարեց: Հոռոմայեցիները մտան Չորրորդ Հայք և թալանեցին այն: Մեռավ Սալեսի⁷⁹³, Գերմանիկիան մտավ Պաղեստինի կազմի մեջ: Նույն տարի Լախանոզրակոն⁷⁹⁴, ընթանալով իր ուսուցչի⁷⁹⁵ հետքերով, Թրակեսիոն բանակաթեմի բոլոր վանականներին ու միանձնուհիներին նփեսոս հավաքեց և բերելով Յուկանիստերիոն⁷⁹⁶ կոչվող դաշտը, ասաց նրանց. «Ով ուզում է հնազանդ լինել կայսեր և մեզ, թող ըստ պիտակ հանդերձներ հագնի և հենց հիմա ամուսնանա: Հակառակվողը կկուրացվի և Կիպրոս կաքսորվի»: Ասածն էլ արեց. այդ օրը շատերը նահատակվեցին, բայց շատերն էլ դառալիք լինելով [հոգով] կորան: [Լախանո] զրակոնը սրանց մտերմացավ: Նույն՝ ինդիկտիոնի 9-րդ տարվա հունվար ամսի 14-ին Լեոն կայսրն ու Իրենեն որդի ունեցան, որին, թեև նրա պապ Կոստանդինը գեռ կենդանի էր, Կոստանդին անվանեցին⁷⁹⁷:

[A. M. 6263]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 31-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգալայի] 17-րդ տարին

[Հոռոմի Աղրիանոս պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի նիկեոսա պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Բանակասը Ռոմանիայի վրա արշավեց և Իսավրիայից իջնելով Սիկեի բերդը, պաշարեց այն: Կայսրը, լսելով դա, Անատոլիկոնի զորավար Միքայելին, Բուկելլարների՝ Մանիին և Արմենիակների՝ Վարդանին նամակ գրեց: Նրանք եկան և բռնեցին նրանց նահանջի ճանապարհը՝ շատ դժվարանցանելի մի կլեյտուր: Կիբիրոտների նավատոր-

միդն էլ [բանակաթեմի] զորավար պրոտոսպաթար Պետրոնասի զլսաժորությամբ խարիսխ գցեց բերդի նավահանգստում: Բանակասը, տեսնելով դա, հուսաբեկ եղավ, բայց հորդորելով գոտեպնդեց իր զորքերին, մեծագույն ազազակով [հոռոմայեցիների] հեծելազորի վրա հարձակվեց, այն պարտության մատնեց, շատերին կոտորեց և գերեվարելով ամբողջ շրջանները, բազում ավարով վերադարձավ:

Նույն տարին Թրակեսիոնի զորավար Միքայել Լախանոզրակոնն իր նոտար Լեոնին, մականունը Կուլուկես, և նախկին աբբա Լեոն Կուցոզակախլոսին ուղարկեց և նրանց միջոցով վաճառքի հանեց տղամարդկանց ու կանանց բոլոր մենաստանները, ամբողջ սուրբ սպասքը, գրքերը, անասունները, նրանց ողջ սեփականությունը, եկամուտը տալով կայսեր, Իսկ ինչքան որ վանականների կամ սուրբ հայրերի գրած գրքեր գտավ, դրանք էլ կրակի տվեց, նմանապես և մարդկանց մոտ որպես հմայեկ պահվող որևէ սրբի մասունքները, իսկ կրողին էլ որպես ամբարշտի պատժեց: Բազում վանականների խարազանի հարվածների տակ սպանեց, ոմանց սրի քաշեց, անթիվ մարդկանց էլ կուրացրեց: Ոմանց մոլորեցնելին մոմից ու ձեթից պատրաստված քսուկ էր քսում և այն կրակի տալով, վառում նրանց զեմքն ու գլուխը, ուրիշներին էլ բազում տանջանքների ենթարկելով, աքսոր ուղարկում: Իրեն ենթակա բանակաթեմում նա վանականի սքեմ հագած մարդ շնորհեց: Բարին ատեցող կայսրը, իմանալով այդ մասին, նրան շնորհակալական նամակ գրեց, թե «Դու ինձ հոգեհարազատ մարդ ես, իմ բոլոր ցանկությունները կատարող»: Ահա մնացած [բանակաթեմների զորավարները] սրա հետքերով գնացին և նույն բանն արեցին:

[A. M. 6264]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 32-րդ տարին

[Արարների առաջնորդ Արգալայի] 18-րդ տարին

[Հոռոմի Աղրիանոս պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի նիկեոսա պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի Արգալան Մուալաբիտին մեծ զորքով Աֆրիկա ուղարկեց: Ալֆազար Բադինարը Ռոմանիա ներխուժեց և հինգ հարյուր հոգի գերեվ բերեց: Մուպսուեստացիք հանդիպելով նրան և մարտ տալով, հազար արաբ սպանեցին: Արգալան Երուսաղեմ գնաց ու ծոմ պահեց: Նա կարգադրեց քրիստոնյաների և հրեաների ձեռքին գրել⁷⁹⁸, Դրա վրա բազում քրիստոն-

լաներ ծովով Ռոմանիա փախան: Սիկեից դուրս Սերգիոս Կուրիկոսը բռնվեց, իսկ Կիպրոսում՝ Սերգիոս Լախերբաֆոսը՝ տեղացիների ներկայացուցիչը:

[A. M. 6265]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 33-րդ տարին [Արարների առաջնորդ Արդալայի] 19-րդ տարին

[Հոռոմի Ազրիանոս պապի] 4-րդ տարին [Կոստանդնուպոլսի Նիկեոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 12-րդ տարվա մայիս ամսին Կոստանդինը Բուզարիայի դեմ հանեց 2000 խելանդիսնից բաղկացած նավատորմիդ: Ինքը կարմիր խելանդիսներով շարժվեց մուտք գործելու համար Գանուր գետը, հեծելազորի հրամանատարներին թողեց կլեյսուրներից դուրս, որպեսզի երբ բուզարներն իրենով զբաղված լինեն, նրանք ներխուժեն Բուզարիա: Հասնելով Վառնա, նա երկյուղեց և մտազիր էր վերադառնալ: Բուզարները, տեսնելով նրան, վախեցան և նրա մոտ մի բոյար և Յիգատոսին⁷⁰⁰ ուղարկեցին հաշտութուն աղերսելով: Կայսրը, տեսնելով նրանց, շատ ուրախացավ ու հաշտութուն կնքեց: Նրանք փոխադարձաբար երդվեցին, որ ոչ բուզարները Ռոմանիա ոտք դնեն, ոչ էլ կայսրը փորձ անի Բուզարիա մտնել: Այդ առթիվ փաստաթղթեր փոխանակվեցին: Կայսրը վերադառնալով քաղաք, բոլոր բանակաթեմերից կայսրերը հաստատեց նաև իր կառուցած բերդերում: Ինդիկտիոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսին, կայսրը Բուզարիայի իր հետախույզներից տեղեկացավ, որ Բուզարիայի տերը⁸⁰⁰ Բերգիտիան⁸⁰¹ գրավելու և նրա բռնակալությունը Բուզարիա գաղթեցնելու նպատակով 12 հազարանոց զորք և բոյարների է ուղարկում: Կայսրը շուրջնալով բացահայտել Բուզարիայի վրա արշավելու իր մտադրությունը (Բուզարիայի տիրոջ դեսպանները իր մոտ էին ժամանել), դեռ նրանց քաղաքում գտնվելու ժամանակ ձևացրեց, թե արաբների դեմ պիտի արշավի: [Նրանց ներկայություն] անցան դրոշակակիրներն ու ծառայող անձնակազմը: Այն բանից հետո, երբ նա բաց թողեց դեսպաններին, իսկ հետախույզներից էլ իմացավ նրանց [քաղաքից] դուրս գալու մասին, անցնելով զորքի գլուխը, շտապ կարգով շարժվեց առաջ: Նա մի տեղ կենտրոնացնելով բանակաթեմերի տաքսատոսներին, ինչպես և թրակեսիոնցիներին, տազմաներին միացնելով օպտիմատոսներին⁸⁰², կազմեց 80 հազարանոց մի բանակ: Մտնե-

լով կիթոսորիա⁸⁰³ կոչվող վայրը, առանց փող հնչեցնելու խույսցավ [բուզարների] վրա և պարտության մատնելով, փայլուն հաղթանակ տարավ: Նա մեծ ավարով ու բազմաթիվ զերիներով վերադարձավ ու քաղաքում հաղթական շքերթ կազմակերպեց: Այս պատերազմը նա ազնիվ անվանեց, քանզի ոչ ոք իրեն դիմադրություն չցուցաբերեց, քրիստոնյա չսպանվեց, քրիստոնյայի արյուն չթափվեց⁸⁰⁴:

[A. M. 6266]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 34-րդ տարին [Արարների առաջնորդ Արդալայի] 20-րդ տարին

[Հոռոմի Ազրիանոս պապի] 5-րդ տարին [Կոստանդնուպոլսի Նիկեոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի Աֆրիկայից 280 [մարդու] գլուխ բերվեց և Ասորիքում հրապարակացնորեն ցուցադրվեց: Կայսրը բուզարների հետ կնքած հաշտությունը խախտած լինելով, դարձյալ մեծ նավատորմիդ պատրաստեց: Նրա մեջ 12 հազար հեծյալ նստեցրեց և բոլոր ծովակալների հետ ճամփու դրեց: Ինքը վախեցավ նաև նստել և հեծելազորի մոտ մնաց: Երբ նավատորմիդը հասավ Մեսեմբրիա, հյուսիսային սաստիկ քամի փչեց, շատերը կորան, քիչ էր մնացել, որ բոլոր [նավերը] խորտակվեին: Կայսրը վերադարձավ ձեռնունայն: Բուզարիայի տեր Տելերիգոսը իմանալով, որ իր գաղտնիքները կայսեր են հայտնում իր շրջապատի մարնալով, որ իր գաղտնիքները կայսեր են հայտնում իր շրջապատի մարդիկ, նրան նամակ է գրում, ասելով, թե «Որոշել եմ քո մոտ փախչել, դու ինձ անձեռնմխելիություն մասին երաշխիքներ ուղարկիր, հաղորդիր դու ինձ անձեռնմխելիության մասին երաշխիքներ ուղարկիր, հաղորդիր նաև, թե ովքեր են քո մարդիկ այստեղ, որպեսզի վստահեմ նրանց և նրանց օգնության դիմեմ»: Կայսրը հիմարաբար գրեց, և նա ինչ պետքն էր իմանալով, թե ովքեր են կայսեր գործակալները, բոլորին կոտորեց: Կոստանդինը, լսելով դա, շատ փետեց իր սպիտակած մազերը:

[A. M. 6267]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 35-րդ տարին [Արարների առաջնորդ Արդալայի] 21-րդ տարին

[Հոռոմի Ազրիանոս պապի] 6-րդ տարին [Կոստանդնուպոլսի Նիկեոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 13-րդ տարվա օգոստոս ամսին Կոստանդին կայսրը արշավեց բուլղարների դեմ: Աստծո ցասմամբ նրա աճուկը սաստիկ ածխացավ, նա հիվանդացավ բժիշկներին անձանոթ հիվանդությամբ, ունեցավ շատ բարձր ջերմություն, որից նեղվելով ստիպված զինվորների ուսերի վրա դրված պատգարակով վերադարձավ Արևադարձայն պոլիս⁸⁰⁵: Այնտեղից նա եկավ Միլիմվրիա⁸⁰⁶, նավ նստեց և ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամսի 13-ին, հասնելով Ստրոնգիլոս բերդը⁸⁰⁷, խելանդիոնի մեջ շարաշար մահվամբ վախճանվեց, աղաղակելով ու ասելով, թե «Դեռ կենդանի անմար հրո մատնվեցի»: Նա խնդրում էր [աստվածամոր] ներքողեն, սուրբ կույսի ու աստվածածնի այդ անհաշտ թշնամին: Նա իր հոր մահից հետո միահեծան թագավորեց 34 տարի, 2 ամիս և 26 օր: Բաղում քրիստոնյանների, վանականների արյամբ պղծվածը, զիվակուցությամբ ու ղոհամատուցմամբ պարսպածը, սուրբ եկեղեցիները, ուղիղ ու ճշմարիտ հավատքը հալածածը, վանքերն ապակահածը, գործած ամեն տեսակի ոճիրներով Դիոկլետիանոսից ու անցյալի բռնակալներից ավելի աչքի բնկածը, ահա այգպես հոգին ավանդեց: Նույն ամսին մեռավ և արարների առաջնորդ Աբդալան⁸⁰⁸: Ահա այդ երկու ամենասարսափելի զազանները, որոնք բազում տարիներ նույն ձևով հոշուտում էին մարդկությունը, մեռան նախախնամությամբն աստծո: Իշխանությունն անցնում է այդ երկուսի որդիներին՝ Լեոնին⁸⁰⁹ և Մահզիին⁸¹⁰: Հենց այդ նույն տարին լոնդրաբողների ռեքս Թեոդոտոսը⁸¹¹ քաղաք ժամանեց և կայսեր մոտ ապաստանեց:

[A. M. 6268]

Աշխարհի արարազոր- ծություն 6268 թ.	Քրիստոսի մարդեղություն 768 թ.	Հոռոմայեցիների Լեոն կայսեր 5-ամյա թագավո- րության 1-ին տարին
Արարների առաջնորդ Մահզիի 9-ամյա իշխանու- թյան 1-ին տարին	Հոռոմի Ադրիանոս պապի 27-ամյա աթուոսկալություն 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի նիկե- տոս պատրիարքի 14-ամյա աթուոսկալության 11-րդ տարին

Այդ տարի Մահզին մեծ զորքով Ռոմանիա ուղարկեց Աբասյալիին⁸¹², որը ծխի օգնությամբ բացել տվեց Կասիս կոշվոզ քարայրը և այնտեղ գտնվողներին գերելով, վերադարձավ: Լեոն կայսրն սկսեց ծախսել հոր թողած դրամները, որոնցով նա սիրաշահեց ժողովրդին և քաղաքի բնակչությունը: Նա կարճ ժամանակ իրեն բարեպաշտ ձևացրեց, աստվածածնին ու վանականներին հարգող: Նա արբաններից մետրոպոլիտներ կարգեց և

ամենազխալոր աթուոսներին հաստատեց, յուրաքանչյուր բանակաթեմում մեծաթիվ զորքեր հավաքագրեց, բաղմացրեց տագմաներում ծառայողների քանակը: Դրա վրա բանակաթեմների զորավարները մեծ բազմությամբ մտան քաղաք, խնդրելով նրա որդի Կոստանդինին կայսր [թագադրել]: Լեոնը, ինչպես բնորոշված է կայսրերին, դրա դեմ դուրս եկավ, ասելով, թե «Նա իմ միակ որդին է, ես վախենում եմ ձեզ ընդառաջ զրնալ, քանզի եթե հանկարծ ես վախճանվեմ, դուք նրան կսպանեք, չէ՞ որ նա դեռ մանուկ է, և մի ուրիշին [կայսր] կհռչակեք»: Նրանք երգումներով խոսք տվեցին, որ բացի իր սրբուց ոչ ոք չի թագավորի, եթե անդամ աստված իր մահը ցանկանա: Երբ ժողովուրդը Մաղկազարդի կիրակիից մինչև ավագ հինգշաբթի օրը, հավաքվելով ձիարշավարանում և խնդրելով իրեն տաղտկալի դարձավ, [կայսրը] ավագ ուրբաթ օրը հրամայեց նրանց երգվել: Համայն ժողովուրդը՝ բանակաթեմների զինվորները, սենատորները, ներքին տագմանների զինվորները, բոլոր քաղաքացիներն ու արհեստանոցների աշխատողները⁸¹³ նվիրական ու կենարար խաչափայտի վրա երգվեցին, որ իրենք Լեոնից ու Կոստանդինից բացի, նրանց չափայտի վրա երգվեցին, որ իրենք Լեոնից ու Կոստանդինից բացի, նրանց չափակներից դուրս ոչ ոքի կայսր չեն ճանաչի և իրենց երգումը սեփական ձեռքով արձանագրեցին: Հաջորդ օրը, որ ավագ շաբաթ էր, կայսրը գնաց 19 ախուրիտների տրիբունալիոնը և իր եղբայր Եվդոկիմոսին նոբելիսսիմոսի տիտղոսը տվեց (Անթիմոսին նոբելիսսիմոս էր հռչակել զեռ հայրը՝ իր կենդանության օրոք): Կայսրը երկու կեսարների, երեք նոբելիսսիմոսների, ինչպես և նոր Կոստանդինի⁸¹⁴ հետ Մեծ եկեղեցին եկավ, կայսրերի սովորության համաձայն փոխեց իր հանդերձանքը և իր որդու ու պատրիարքի հետ ամբիոն բարձրացավ: Համայն ժողովուրդը ներս մտավ և իր զրավոր [երգումը] դրեց սուրբ սեղանին: Կայսրը դիմեց նրանց հետևյալ խոսքերով. «Ահա, եղբայրներ, ես կատարում եմ ձեր խնդրանքը և ձեզ պարգևում իմ կայսր որդուն: Ահա դուք ստանում եք նրան եկեղեցուց և ձեռքից Քրիստոսի»: Ժողովուրդը բարձրագույն աղաղակեց. «Արձագանքի՛ր մեզ, Որդին աստծո, թե քո ձեռքից ենք ուրպես կայսր ստանում տեր Կոստանդինին, մենք կպահպանենք նրան, նրա սիրույն մեր կյանքը կզոհենք»: Հաջորդ օրը, որ Զատիկ ավագ կիրակին էր, ինդիկտիոնի 14-րդ տարվա ապրիլ ամսի 24-ը, վաղ արշալույսին, կայսրը պատրիարքի հետ գնաց ձիարշավարան: Երբ բերվեց սուրբ սեղանը, պատրիարքը համայն ժողովրդի ներկայության աղոթքն արեց, իսկ կայսրը թագադրեց իր որդուն: Այնուհետև երկու կայսրերը, երկու կեսարները և երեք նոբելիսսիմոսների հետ գնացին Մեծ եկեղեցին: Կայսրից հետո գնաց նաև կայսրուհի Իրենեն՝ գավազաններ բռնած սխուրեղի դմես-

[A. M. 6272]

Կոստանդնուպոլսի պատրիարք Պավոս⁸²⁵, Աթոռակալեց 5 տարի:

[Հոռուայեցիների ևևն
կայսեր] 5-րդ տարին [Արարների առաջնորդ
Մահդիի] 5-րդ տարին

[Հոռուի Աղրիանոս պա-
պի] 11-րդ տարին [Կոստանդնուպոլսի Պավ-
ոս պատրիարքի] 1-ին
տարին

Այդ տարի արաբների առաջնորդ Մահդին մեծ զորքով ու պատրաս-
տությամբ եկավ Դաբեկոն, իր որդի Ահարոնին⁸²⁶ Ռոմանիա ուղարկեց,
իսկ ինքը վերադարձավ սուրբ քաղաքը⁸²⁷, նա Մուրեխիասին, մականունը
Ջելոտես, լիազորեց կազմակերպել քրիստոնյաներին պատկանող ստրուկ-
ների փախուստը, ամայացնել սուրբ եկեղեցիները: Նա եկավ Եմեսա,
հայտարարեց, որ ինքը ոչ որի խղճի վրա չի բռնանում, միայն անհա-
վատներին է ուզում [մահամեղականացնել], որպեսզի հայտնի դառնան
ոլբեր են հրեադավան, ոլբեր քրիստոնյա, որից հետո նա առանց հա-
պաղելու սկսեց այնպես անաստված կերպով մարդկանց լլկել, ինչպես
ո՛չ կիսիասը, ո՛չ էլ Ագրիկուլտոսը⁸²⁸ երբեկից արել էին: Նա շատերին
սպանեց: Բայց մեր աստծո՝ Քրիստոսի շնորհիվ նրա մղեկնությունը կա-
նայք հաղթահարեցին, այն էլ նորահավատներ, Եմեսայի սարկավազա-
պետի և Եսայիասի որդու կանայք, որոնք թեև բազում տանջանքների են-
թարկվեցին, բայց ամբարշտության առաջ տեղի շտվեցին: Նրանք խա-
րազանի հազարական հարված ստացան, բազում այլ խոշտանգումների
ենթարկվեցին և ի վերջո Քրիստոսից հաղթական պսակին արժանացան:
[Մուրեխիասը] հասավ մինչև Դամասկոս և, քամահրելով արարների՝
քրիստոնյաներին տված խոստումը, բազում եկեղեցիներ ամայացրեց:
Ինդիկտիոնի 3-րդ տարվա փետրվար ամսի 6-ին Պանբուտայաց⁸²⁹ կիրակի
օրը, մեռավ Կոստանդնուպոլսի պատրիարք ներքինի Նիկեաոսը, ծագու-
մով սկլավ: Պասեքի երկրորդ կիրակին ծագումով կիպրացի, բանիվ ու
զործով փառավոր արգո Պավլոս դպիրը, մեծ հարկադրանքի տակ Կոս-
տանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց. երկրում տիրող հերձվածի
պատճառով, նա երկար ժամանակ հրաժարվում էր: Պասեքի մեջտեղի
շաբաթը ձերբակալվեցին նաև Հակոբ պրոտոսպաթարը⁸³⁰, կուբի-
կուլարիոսներ ու պարակլիմոմենոսներ Պապիասը⁸³¹, Ստրատեգիոսը և
Թեոփանեսը, նույնպես կուբիկուլարիոսներ ևևնն ու Թովման, ինչպես
և ուրիշ բարեպաշտ մարդիկ որպես նվիրական սրբապատկերները եր-

կրբապագո: [Կոստանդին] հալածչի որդի ևևնը ահա այս ժամանակ
լույս աշխարհ հանեց թաքուն պահած իր շարությունը. նա անգթորեն
բրածեծ արեց նրանց, մաղերը խուղեց և շղթայակապ Մեսե պողոտայով
ժանակելուց հետո, Պրեատրիոնում բանտարկեց: Այստեղ իր մահկանա-
ցուն կնքեց վերոհիշյալ Թեոփանեսը, որ խոստովանող դարձավ և մար-
տիրոսի պսակին արժանացավ: Մյուս բոլորը սրա վախճանից հետո իս-
կական վանականներ դարձան: Իսկ Ահարոնը⁸³² ներխուժելով Արմենիակ-
ների բանակաթեմը, ամբողջ ամառը բանակեց Սեմալուոս⁸³³ բերդի
առջև, որը գրավեց սեպտեմբեր ամսին՝ պաշտպաններին երաշխիքներ
տալով: Նա Թումամային 50 հազարանոց զորքով Ասիա⁸³⁴ էր ուղարկել:
Միքայել Լախանոցրակոնը հանդիպեց նրա ասպատակությամբ զբաղված
[զորքը] և կարճատև մարտում սպանեց Թումամայի եղբոր: Ինդիկտիո-
նի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսի 8-ին վախճանվեց Կոստանդինի որդի
ևևնը հետևյալ կերպ: Լինելով թանկագին քարերի մուգին սիրահար,
կաթոգին ցանկացավ Մեծ եկեղեցու թագը, որը վերցրեց ու հազավ: Նրա
զլխին կաթուռուցքներ ելան, ունեցավ բարձր ջերմություն և մեռավ:
Թագավորելով հինգ տարուց վեց օր պակաս:

[A. M. 6273]

Աշխարհի արարչազոր-
ծություն 6273 թ. Քրիստոսի մարգեղության
773 թ. Հոռուայեցիների Կոստան-
դին կայսեր և նրա մոր
10-ամյա թագավորության
1-ին տարին

Արարների առաջնորդ
Մահդիի 9-ամյա իշխանու-
թյան 6-րդ տարին Հոռուի Աղրիանոս պապի
27-ամյա աթոռակալության
12-րդ տարին Կոստանդնուպոլսի Պավ-
ոս պատրիարքի 5-ամյա
աթոռակալության 2-րդ տա-
րին

Այդ՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսի 8-ին արտասովոր
կերպով և աստվածուստ ամենաբարեպաշտ Իրենեին և իր որդի Կոստանդ-
նին թագավորություն է ընձեռնվում, որպեսզի այս հարցում ևս մար-
դիկ ապշեն աստծո [նախախնամության] վրա, տեսնելով, թե ինչպես
աստված վճռեց այրի կնոջ և որը տղայի ձեռքով տապալել իր՝ աստծո,
նրա սպասավորների և բոլոր եկեղեցիների դեմ ուղղված աստվածա-
մարտ Կոստանդինի ամբարշտությունն ու բռնությունը, ինչպես անցյա-
լում սատանայինը՝ տկար ու անզրագետ ձկնորսների ձեռքով⁸³⁵: Իշխա-
նություն տիրանալուց 40 օր անց (նրա որդին դեռ տասը տարեկան էր)

[A. M. 6274]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա՝ մոր] 2-րդ տարին

[Արարների առաջնորդ Մահգիի] 7-րդ տարին

[Հոռոմի Աղրիանոս պապի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 3-րդ տարին

մեծամեծներից ոմանք խորհուրդ արեցին և որոշեցին աքսորից բերել և կայսր Տուլակել նախկին կեսար Նիկեփորին, բայց գործը բացվեց: Չերազարվեցին գրոմոսի լուսթեա Գրիգորը, Արմենիականների նախկին ղորավար Վարդապե⁸³⁶, էքսկուրիտորների դոմեստիկոս վիկարիոսի սպաթար Կոստանդինը, Գոգեկանեսի գրունգար՝ Ռանգաբնի որդի Թեոփիլակտոսը և շատ ուրիշներ: [Կայսրուհին] նրանց բրածեծ անելուց և խուզելուց հետո աքսորեց տարբեր շրջաններ: Իր ամուսնու եղբայրներ կեսարներին և նորելիսսիմոսներին նա խուզեց, բռնի հոգևորական արեց ու քստիպեց Քրիստոսի ծննդյան տոնին ժողովրդին հաղորդություն տալ: Նույն օրը կայսրուհին շքամբով իր որդու հետ եկեղեցի բերեց իր ամուսնու այնտեղից վերցրած թագը՝ արգեն մարգարիտներով զարդարված, նա էլ պիղիոս պատրիկին Սիկիլիայի ղորավար նշանակեց (անցյալում նա այնտեղ ղորավարն էր) և փետրվար ամսին ճամփու դրեց: Ապրիլ ամսի 15-ին նույն էլ պիղիոսը կեսարներին համախոհ լինելու մեջ ամբաստանվեց: Կայսրուհին Թեոփիլոս սպաթարին [Սիկիլիա] ուղարկեց, հանձնարարելով անհապաղ ձերբակալել նրան և իր մոտ բերել: Բայց սիկիլիացիք հրաժարվեցին հանձնել նրան: Դրա վրա կայսրուհին դանակոծեց և խուզեց [էլպիդիոսի] կնոջ ու որդիներին և Պրեստրիոնում արգելափակեց: Հունիս ամսին նա ուղարկեց բոլոր պերատիկա զորքերը՝ հսկելու կլեյսուրները, ուշագիր հետևելու արաբների ռազմերթի դուրս գալը: Նա զորքերի ընդհանուր հրամանատար նշանակեց ներքինի Հովհաննես սակելլարիոսին, իր մտերիմին: Իսկ Մահգիին Կերիրի գլխավորությամբ մեծամթիվ զորք ուղարկեց: Նրանք հանդիպեցին միմյանց Մելոն⁸³⁷ կոչվող վայրում: Ծակատամարտում արաբները պարտվում են, նրանցից շատերը սպանվում, իսկ մնացածները խայտառակ եղած վերադառնում: Այս ժամանակ բարեպաշտներն արգեն համարձակ դարձան, աստծո խոսքը՝ լսելի, փրկվել ցանկացողները կարող էին անարգել հրաժարվել աշխարհիկ կյանքից, աստծո փառաբանությունը երկիրք բարձրացավ, վանքերը ստրի կանգնեցին և ամեն մի բարիք լույս աշխարհ եկավ: Քանզի մի մարդ Թրակիայի Նրկար պարիսպների մոտ գետինը փորելիս, մի տապան գտավ, որը մաքրելուց հետո նրա մեջ պակաս մի մարդ տեսավ: Տապանի վրա փորագրված էին հետևյալ խոսքերը. «Քրիստոսը կույս Մարիամից է ծնվելու: Ես հավատում եմ նրան: Կոստանդին և Իրենե կայսրերի օրոք, ո՛վ արեգակ, դու ինձ դարձյալ կտեսնես»⁸³⁸:

Այդ տարի Իրենեյն ֆրանկների ռեքս Կարուլոսի⁸³⁹ մոտ Կոնստանս սակելլարիոսին⁸⁴⁰ և Մամալուս պրիմիկերիոսին⁸⁴¹ ուղարկեց, որպեսզի [Կարուլոսի] էրիթրո⁸⁴² անունով դատեր կնուխյան խնդրի իր որդի Կոստանդին կայսեր համար: Համաձայնության գալուց և փոխադարձաբար երդումներ անելուց հետո, այնտեղ թողեցին ներքինի Նիսսայոս նոտարին, որպեսզի նա [էրիթրոսին] հունարեն գիրն ու լեզուն⁸⁴³, Հռոմեական կայսրության նիստն ու կացը սովորեցնի: [Կայսրուհին] մեծ նավատորմի զինելով և բանակաթեմերից ընտիր զորքեր ու կարող հրամանատարներ հավաքագրելով, ներքինի Թեոդորոս պատրիկի՝ շատ գործունյա մի մարդու գլխավորությամբ Սիկիլիա ուղարկեց՝ ընդդեմ էլպիդիոսի: Բազմամթիվ ճակատամարտերում հաղթող եղան Թեոդորոսի զորքերը, իսկ էլպիդիոսը դրանից սարսափած, վերցնելով ունեցած զորամասերը Նիկեփոր դուքսի հետ փոխադրվեց Աֆրիկա: Անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, նա անցավ արաբների կողմը, որոնք ընդունելով նրան, նրա հանդեպ վերաբերվում էին ինչպես հոռոմայեցիների կայսեր, ստից թագադրեցին նրան՝ կարմիր կոշիկներ հագցրին, զլխին էլ թագ դրեցին: Երբ հոռոմայեցիների զորքը դրանով էր զբաղված, Մահգիի որդի Ահարոնը, մավրոֆորներից, համայն Ասորիքից ու Միջագետքից, անապատից հավաքագրված հսկայական զորքով ու պատրաստությամբ հասավ Խրիսուպոլիս, թողնելով Բոնուսոսին Նակոլիան⁸⁴⁴ պաշարելու և ապահովելու իր թիկունքը: Նա 30 հազարանոց զորքով Ասիա ուղարկեց Բուրնիխեին, որը Դարենոս⁸⁴⁵ կոչվող վայրում Լախանոդրակոնի գլխավորած Թրակեսիոն բանակաթեմի զորքերին ճակատամարտ տվեց և նրա նույնպես 30 հազար հոգուց բաղկացած զորքից 15 հազարին կոտորեց: Կայսրուհին Անտոնիոս դոմեստիկոսի զբլխավորությամբ տագմաներն ուղարկելով, բռնեց Բանենը⁸⁴⁶, ուր և պաշարեց [արաբներին]: Վերջիններիս մոտ ապաստանեց Բուկելլարների ղորավար Տաճատը, բանզի նա առելությունով էր լցված դրոմոսի լուսթեա ներքինի Ստավրակիոս պատրիկի դեմ, որն այն ժամանակ գերա-

գույն հրամանատարն էր և ամեն ինչի տնօրինողը: [Տաճատի] խորհրդով արարները հաշտութիւն խնդրեցին: Այդ հարցով արարների մոտ գնացին Ստավրակիոսը, Պետրոս մագիստրոսը և Անտոնիոս դոմեստիկոսը, առանց լրջորեն մտածելու նախապես անձեռնմխելիութեան երաշխիքներ և նրանց մեծամեծների երեխաներին որպես պատանդ առնելու: Ահա, առանց ծանր ու թեթև անելու գնալով, նրանք բռնվեցին [արարների] կողմից ու կապանքների մեջ առնվեցին: Երկու կողմերն էլ ստիպված հաշտութիւն կնքեցին, Ավգուստան⁸⁴⁷ և Ահարոնը բազում նվերներ փոխանակեցին և իմիջի այլոց որոշեցին [հոռմայեցիները արարների] հարկ վճարեն: Հաշտութեան կնքումից հետո [արարները] հեռացան, թողնելով նաև նակոլիայի բերդը: Իսկ Տաճատը ետ ստացավ կնոջ և իր ողջ ունեցվածքը⁸⁴⁸:

[A. M. 6275]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 3-րդ տարին	[Արարների առաջնորդ Մահգիի] 8-րդ տարին
[Հոռմի Աղրիանոս պապի] 14-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Իրենեն, արարների հետ հաշտութիւն կնքելով, հնարավորութիւն ունեցավ օրսեոս զրոմոսի լոգոթեոս⁸⁴⁹ Ստավրակիոս պատրիկին մեծ ուժով սկլավական ցեղերի դեմ ուղարկել: Վերջինս իջավ Թեսալոնիկե և Հելլադա, բոլորին հնազանդեցրեց ու կայսրութեան հարկատու դարձրեց: Նա մուտք գործեց նաև Պելոպոնես և հոռմայեցիների կայսրութիւն բազում գերիներ ու ավար բերեց:

[A. M. 6276]

[Հոռմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 4-րդ տարին	[Արարների առաջնորդ Մահգիի] 9-րդ տարին
[Հոռմի Աղրիանոս պապի] 15-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 7-րդ տարվա հունվար ամսին վերոհիշյալ Ստավրակիոսը սկլավների դեմ կատարած արշավանքից վերադարձավ և

ձիարշավադաճում հաղթական շքերթ կազմակերպեց: Նույն ինդիկտիոնի 7-րդ տարվա մայիս ամսին կայսրուհի Իրենեն իր որդու հետ ղինական մեծ ուժով գնաց Թրակիա: Նա իր հետ տարավ զործիքներ ու մոզայիկներ, հասավ մինչև Բերիա⁸⁵⁰, հրամայեց [քաղաքը] կառուցել⁸⁵¹ և վերանվանեց Իրենուպոլիս: Նա միանգամայն անվնաս իջավ մինչև Ֆիլիպուպոլիս⁸⁵² և հանգիստ վերադարձավ, նախապես կառուցելով և Անքիալոսը⁸⁵³, Հենց այդ տարին մեռավ արարների առաջնորդ Մահգիին, որ և Մոհամմեդ: Իշխանութիւնն անցավ նրա որդի Մոսեի⁸⁵⁴ ձեռքը: Նույն ինդիկտիոնի 7-րդ տարվա օգոստոս ամսի 31-ին սուրբ և սրբազնագույն պատրիարք Պավղոսը հիվանդութեան պատճառով հրաժարվեց աթոռից և իջնելով Ֆլորոսի վանքը, վանականի սրբմը հազավ, առանց կայսրուհուն այդ մասին տեղյակ պահելու: Կայսրուհին, իմանալով դա, տխրագին, իր որդու հետ նրա մոտ գնաց ու բարձրագոչ ասաց. «Ինչո՞ւ այդպես արեցիր»: Նա արտասովից պատասխանեց. «Երանի երբեք շնատեի հոգևոր դահին, երբ աստծո եկեղեցին բռնատիրված է, տիեզերական մյուս գահերից բաժանված ու նզովվում է»: [Իրենեն] հրավիրելով պատրիկներին ու սենատի գլխավորներին, նրանց Պավղոսի մոտ ուղարկեց նրա ասածները լսելու: Պավղոսն ասաց նրանց. «Քանի չի դումարվել տիեզերական ժողովը և չի ուղղվել ձեր դավանած սխալը, դուք փրկութիւն չունեք»: Նրանց հարցին «Ձեռնադրութեանը ժամանակ դու ինչո՞ւ ստորագրեցիր սրբապատկերները շերկրագելու մասին վավերագիրը», նա պատասխանեց. «Հենց դրա համար եմ ողբում ու ապաշխարում, աղաչում աստծուն ինձ չբախտի որպես հոգևորականի, որ մինչև օրս լռել է, ձեր կատաղութիւնից սարսափած ճշմարտութիւնը չի վարդապետել»: Դրա վրա նա խաղաղութեամբ հոգին ավանդեց, կայսրուհուն և քաղաքի բարեպաշտ մարդկանց մեծ սգի մեջ սուղելով: Քանզի նա արգո այր էր, արտակարգ զիմացող, ամենայն ակնածանքի արժանի: Ե՛վ պետութիւնը, և՛ կայսրուհին մեծ վստահութիւն էին տածում դեպի նա: Այդ օրվանից ահա բոլորը բացահայտ կերպով սկսեցին խոսել սուրբ ու նվիրական պատկերների մասին, տարակուսանք հայտնել նրանց [արգելման] ճշտութեան շուրջը:

[A. M. 6277]

Արարների առաջնորդ Մոսե: Իշխեց 1 տարի: Կոստանդնուպոլսի պատրիարք Տարասիոս⁸⁵⁵: Աթոռակալեց 27 տարի:

[Հոռմալիցիների Գոստանդին կայսեր և նրա մոր] 5-րդ տարին

[Արարների առաջնորդ Մոսերի] 1-ին տարին

[Հոռմի Աղբիանոս պապի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Իրենե կայսրուհին համայն ժողովրդին Մազնավրայում հավաքելով, ասաց, «Եղբայրներ, գիտե՞ք ինչ արեց Պավղոս պատրիարքը: Եթե նա կենդանի լիներ, մենք չէինք թողնի նրան հրաժարվել քահանայապետությունից, նկատի ունենալով անդամ այն, թե նա վանականի սքեմն է հագել: Արդ, քանի որ նա աստծո հաճությամբ վախճանվել է, մի մարդ ընտրենք, որ կարողանա մեզ հովվություն անել, վարդապետական քարոզչությունը ամրապնդել աստծո եկեղեցին»: Բոլորը միահամուռ կերպով ասացին, որ այդպիսին լինի միայն ու միայն Տարասիոս ասեկրեոսը: Կայսրուհին ասաց նրանց. «Մենք էլ ենք այդպես գտնում, բայց նա հրաժարվում է: Արդ, թող նա բացատրի, ինչո՞ւ է հակառակվում կայսրուհու և համայն ժողովրդի ընտրության»: [Տարասիոսը] այսպես արդարացավ ժողովրդին. «Մեր՝ քրիստոնյաներիս ճշմարիտ հավատքի պահպանն ու նախանձախնդիր՝ ի փառս աստծո մեր հավատացյալ կայսերը, մտահոգված լինելով անել այն, ինչ հաճելի է աստծուն և մեր օգտին է, բայց առավել ևս եկեղեցու օգտին, այժմ խելամտորեն կշռադատելով բարեպաշտորեն որոշել են իրենց այս մայրաքաղաքում քահանայապետ առաջադրել ինձ, և հրամայեցին իրենց որոշումը ինձ հայտնել: Երբ ես ինձ այդ բանին անարժան համարելով և գտնելով, որ ի վիճակի չեմ կրելու, տանելու այդ ծանր լուծը կտրականապես մերժեցի, ինձ հրամայեցին անձնապես ձեր առջև հանդես գամ, քանզի դուք համերաշխ եք այդ որոշման: Արդ, ո՞վ աստվածավախ, աստծուն հանապաղ ձեր սրտում ունեցող, Քրիստոսի՝ մեր ճշմարիտ աստծո անունը կրող քրիստոնյաներ, լսեցե՞ք նվաստիս ու տրուպիս պաշտպանողական կարճ խոսքը: Ես, ինչպես արդեն ասել եմ մեր բարեպաշտ ու ամեն ինչում ուղղափառ կայսրերին, ձեզ էլ եմ պատճառարանում, որ վախենում եմ հավանություն տալ ձեր վճռին, աստծուց երկյուղում եմ առանց ծանր ու թեթև անելու ընդառաջ գնալ, որպեսզի մեծ մեղքի մեջ չընկնեմ: Եթե աստծո ձայնը լսած, երկիրքը դպրոց ունեցած, դրախտին ակնատես եղած, անձառելի խոսքեր լրսած, աստծո անունը հեթանոսների և թագավորների առաջ պաշտպա-

նած աստվածային Գոռոս առաքյալը կորնթացիներին գրելով ասաց. «Զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ»⁸⁵⁶, ապա ես, այս աշխարհում ապրող աշխարհականս, կայսերական պաշտոնյաս, ինչպե՞ս կարող եմ առանց զննելու, լրջորեն կշռադատելու, թույլք կատարել պատրիարքական բարձունքը: Ես շատ փոքր եմ այդ սարսափելի ու հանդուգն քայլի համար: Իսկ վախենալուս և մերժելուս պատճառը հեղեյալն է. տեսնում եմ Քրիստոսի, մեր աստծո վեմի՝⁸⁵⁷ վրա հիմնարկված եկեղեցին բաժան-բաժան ու տրոհված, տեսնում եմ, թե ինչպես դուք այսօր մի բան եք ասում, վաղը՝ մի այլ, ինչպես են մեզ հակադրվում արևելքի մեր հավատակից քրիստոնյաները, որոնց համախոհ են արևմտականները, թե ինչպես մենք նրանց բոլորից օտարացել ենք և դարձել նրանց մշտական նզովքի առարկան: Նզովքը սարսափելի բան է, նա հեռացնում է աստծուց, երկնից թագավորությունից, տանում դեպի խավարն արտաքին⁸⁵⁸: Եկեղեցու օրենքն ու կանոնը կազ ու կռիվ չգիտե, և ինչպես որ նա խոստովանում է մեկ մընոնը կազ ու կռիվ չգիտե, և ինչպես որ նա խոստովանում է մեկ մընոնը համոտություն պիտի լինի: Աստծո համար չկա ավելի հաճելի և ընդունելի բան, քան մեր միությունը մեկ ընդհանրական եկեղեցու մեջ, ինչպես որ մենք, եղբայրներ, այդ բանը խոստովանում ենք նաև մեր ճշմարիտ հավատո հանդանակում: Արդ, խնդրում եմ, և համոզված եմ, որ դուք ևս այդպես եք մտածում, քանզի գիտեմ, որ աստվածավախ մարդիկ եք, ամենաբարեպաշտ և ուղղափառ մեր կայսրերին տիեզերական ժողով գումարել, որպեսզի մեկ աստծո արարածներս միանանք, երրորդություն պաշտողներս նրա նման միացած, միաբան ու հավասար լինենք, մեր գլխի՝ Քրիստոսի ներդաշնակ ու համերաշխ մարմինը, սուրբ հոգին դավանողներս ոչ թե իրար դեմ, այլ միասին լինենք, ճշմարտության կողմնակիցներս՝ լինենք համախոհ ու միաբան, մեր միջև վեճ ու թշնամություն չլինի, որպեսզի ամեն մի բանականությունից բարձր գլուխը խաղաղությունն աստծո պահպանի մեզ: Այսպիսով, եթե ուղղափառության պաշտպան մեր կայսրերը հրամայում են ընդունել իմ խնդրանքը, ես կտամ իմ համաձայնությունը, կկատարեմ նրանց հրամանը, ձեր ընտրության ընդառաջ կզնամ: Հակառակ դեպքում ես հրաժարվում եմ, քանզի չեմ ուզում նզովքի ենթարկվել և դատապարտվել մեր տիրոջ Հիսուսի Քրիստոսի՝ արդար դատավորի դատաստանի օրը, կրոնի թագավորը, ո՞չ իշխանները, ո՞չ էլ բազմությունը մարդկանց չեն կարող ինձ փրկել: Ինչպես որ ձեզ հաճելի է, եղբայրներ, իմ պաշտպանողականին, ավելի ճիշտ՝ իմ խնդրանքին պատասխան տվեք»: Բոլորը

աիրով ունկնդրեցին և համաձայնվեցին ժողով գումարել: Տարասիոսը վերստին դիմեց ժողովրդին ու ասաց. «Լևոն կայսրը⁸⁶⁰ բնաջնջեց սրբապատկերները, իսկ ժողովրդը⁸⁶¹, երբ այն գումարվեց, սրբապատկերները բնաջնջված գտավ: Արդ, քանի որ նրանք կայսեր ձեռքով ոչնչացվեցին, դարձյալ քննության ենթակա հարց է, նրանք վճռեցին, ինչպես կարծում էին, ոչնչացնել եկեղեցու հնուց եկող մի կարգը: Ինչպես առաջալն է ասում, «Բանն աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ»⁸⁶²: Նույն՝ ինդիկտիոնի 8-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին մեր սուրբ հայր Տարասիոսը Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց: Նա իր քաղկեդոնականությունը հաստատող փաստաթղթերը և իր հավատքի լիբելլոսը Հռոմ ուղարկեց և Աղրիանոս պապի հավանությանն արժանացավ: Կայսրուհին էլ իր կողմից պապին գրեց և խնդրեց նամակ ուղարկի և ներկայացուցիչներ՝ ժողովին ներկա լինելու համար: Պապը իր եկեղեցու տնտես Պետրոսին և սուրբ Սաքայի վանքի վանահայր Պետրոսին ուղարկեց, արդո, բւլոբ առաքինություններով օժտված մարդկանց: Կայսրուհին ու պատրիարքը մարդիկ ուղարկեց նաև Ալեքսանդրիայի ու Անտիոքի [պատրիարքներին] (արաբների հետ հենց նոր կնքված հաշտությունը դեռ ուժի մեջ էր): Անտիոքից բերեցին պատրիարքի նախկին սինկելլոս Հովհաննեսին, զործով ու խոսքով ականավոր ու հռչակավոր մի մարդու, սրբությանը լի, իսկ Ալեքսանդրիայից՝ Թովմային, շերմեռանդ ու ամենաբարեպաշտ մի մարդու, որ հետագայում դառնալով Իլիբրիկոնի մեծաբաղաբ թեազոսիկի արքեպիսկոպոսը, իր գործունեությամբ աչքի ընկավ:

[A. M. 6278]

Արաբների առաջնորդ Ահարոն⁸⁶³, իշխեց 23 տարի:

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 6-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 1-ին տարին
---	--

[Հռոմի Աղրիանոս պապի] 17-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 2-րդ տարին
-----------------------------------	---

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Մոսեն⁸⁶⁴. նրա իշխանությունն անցավ եղբոր՝ Ահարոնի ձեռքը: Սա քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց:

Նույն այդ տարին կայսրերը հրավիրեցին իրենց տիրապետության տակ գտնվող բոլոր եպիսկոպոսներին: Ինչպես ասվեց վերևում, տեղ հասան և Հռոմի Աղրիանոս պապի ուղարկած թղթերն ու ներկայացուցիչները, ինչպես և Անտիոքի ու Ալեքսանդրիայի պատրիարքների: Ինդիկտիոնի 9-րդ տարվա օգոստոս ամսի 7-ին մայրաքաղաքի Սուրբ առաքելոց տաճարում ժողով գումարվեց⁸⁶⁵. սկսեցին ընթերցել սուրբ գրքերը, համեմատել իրար: Կայսրերը դիտողի դերում էին կատեխումենայում⁸⁶⁶, Սիոլարների, էքսկուրիտոսների և մյուս տաղմանների զինվորները իրենց հրամանատարների ղրգմամբ, իրենց շար ուսուցչի վարդապետությամբ հափշտակված, մերկացնելով սրերը հարձակվեցին նրանց վրա ու սպառնացին սպանել քահանայապետին, ուղղափառ եպիսկոպոսներին և վանահայրերին: Կայսրուհին իր մոտ կանգնած հավատարիմ մարդկանց օգնությամբ փորձեց նրանց զուրս հանել, բայց ապարդյուն, դեռ ավելին, նրանք սկսեցին անպատվել: Պատրիարքը տեղից բարձրանալով ուղղափառ եպիսկոպոսների ու վանականների հետ մտավ խորանը, իսկ շարափառության կողմնակից եպիսկոպոսները նրանց վրա տալով գոչեցին «Մենք հաղթեցինք»-ը⁸⁶⁷: Բայց ասած շրնորհիվ այդ կատաղածներն ու տմարդները ոչ ոքի վնաս չհասցրին: Ահա այդպես ժողովը ցրվեց և յուրաքանչյուրն իր տեղը գնաց:

[A. M. 6279]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 7-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 2-րդ տարին
---	--

[Հռոմի Աղրիանոս պապի] 18-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 3-րդ տարին
-----------------------------------	---

Ինդիկտիոնի 10-րդ տարվա սկզբին՝ սեպտեմբեր ամսին կայսրուհին զրոմոսի լոգոթեա Ստավրակիոս պատրիկին Թրակիա ուղարկեց, այդ պահին այնտեղ գտնվող պերատիկա զորքերի մոտ, և համոզեց աշակցել իրեն, Իրենեին, ոճրագործ Կոստանդինի զինվորագրած և դաստիարակած ամբարիշտ մարտիկներին քաղաքից զուրս հանելու համար: Կայսրուհին, ձևացնելով, որ իբր արշավանք է կազմակերպում արևելյան շրջանները ներխուժած արաբների դեմ, համայն կայսերական սպասավորությունն ու կոհորտը քաղաքից զուրս հանեց մինչև Մալագինա⁸⁶⁸: Թրա վրա պերատիկա զորքերը մտան քաղաք ու գրավեցին այն, իսկ

կայսրուհին [գուրս եկած զորքերին] դիմելով, ասաց. «Ուղարկեք ինձ ձեր զենքերը, քանզի ձեր կարիքն այլևս չունենմ»։ Աստված նրանց խելքն առավ և նրանք հանձնեցին զենքերը։ Ահա դրանից հետո կայսրուհին նրանց ընտանիքներին նավ նստեցնելով քաղաքից արտաքսեց, հըրամայելով յուրաքանչյուրին գնալ իր ծննդավայրը։ Սեփական զորք հավաքագրելով և նրանց վրա կարգելով իրեն հավատարիմ հրամանատարների, նա մայիս ամսին երկրի բոլոր շրջանները մարդիկ ուղարկեց և եպիսկոպոսներին Բյուզանդիայի Նիկիա քաղաքը ժողովի հրավիրեց։ Ամբողջ ամառվա ընթացքում բոլորը հավաքվեցին Նիկիայում։ Կայսրուհին Հոսմի և արեւելի [պատրիարքների] ներկայացուցիչներին ետ չէր ուղարկել⁸⁶⁹, նրանք բազաքում էին գտնվում։ Ինդիկտիոնի 11-րդ տարվա սեպտեմբեր ամսի 9-ին, կիրակի օր, օրվա 5-րդ ժամին սուրբ պատարագի ժամանակ արևի ամբողջական խավարում եղավ։

[A. M. 6280]

[Հոսմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 8-րդ տարին	[Արարների առաջնորդ Ահարոնի] 3-րդ տարին
[Հոսմի Ադրիանոս պապի] 19-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Կոստանդնուպոլսի սրբազնագույն Տարասիոս պատրիարքը գնաց Նիկեացվոց քաղաքը, որտեղ գումարվեց 350 եպիսկոպոսների 7-րդ սուրբ և տիեզերական ժողովը⁸⁷⁰։ Ընդհանրական եկեղեցին վերստացավ իր վաղեմի փայլը։ Ժողովը դավանանքի մեջ ոչ մի նորամուծություն չկատարեց, այլ աներեր պահպանեց սուրբ և երանելի հայրերի դրույթները, մերժեց նոր հերձվածք, իսկ երեք սուտանուն պատրիարքներին՝ Անաստասիոսին, Կոստանդինոսը և Նիկեասին, նրանց բոլոր համախոհներին նզովեց։ Եպիսկոպոսների առաջին համաժողովն ու նիստը կայացավ ինդիկտիոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսի 11-ին, Նիկիայի սուրբ Սոֆիայի մայր տաճարում։ Նոյեմբեր ամսին բոլորը եկան մայրաքաղաք։ Կայսրերը եպիսկոպոսների հետ Մագնավրայում բազմած, ընթերցվեց որոշումը⁸⁷¹, նրա տակ ստորագրեցին կայսրն ու նրա մայրը, որով նրանք հաստատեցին ուղղափառությունն ու սուրբ հայրերի հինավուրց դրույթները, ապա պատվասիրելով հոգևորականներին, ճամփու դրեցին։ Աստծո եկեղեցին խաղաղվեց, թեպետև բանսար-

կուն իր գործավորների միջոցով չի դադարում որոմ սերմանելուց։ Աստծո եկեղեցին, սակայն, իր դեմ մղվող պայքարում միշտ հաղթող է։

[A. M. 6281]

[Հոսմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 9-րդ տարին	[Արարների առաջնորդ Ահարոնի] 4-րդ տարին
[Հոսմի Ադրիանոս պապի] 20-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին արաբները ավարառության ելան Ռոմանիայի դեմ և ներխուժեցին Անատոլիկոն բանակաթեմը՝ Կոպիդնադոն⁸⁷² կոչվող վայրը։ Հոսմայեցիների զորավարներն հավաքվելով, մարտնչեցին նրանց դեմ, բայց պարտվեցին։ Շատերն ընկան, այդ թվում և [քաղաքից] արտաքսված բազմաթիվ սխուրիոսներ։ Սպանվեցին նաև Անատոլիկոնի նշանավոր տուրմարխ Դիոդենեսը⁸⁷³, Օպսիկիոնի հրամանատարներ։ Կայսրուհի Իրենեն ֆրանկների հետ կնքած ամուսնական պայմանագիրը չեղյալ հայտարարելով, Թեոփանես պրոտոսպաթարին ուղարկեց և Արմենիակների [բանակաթեմի] Ամնիա [վայրից] աղջիկ բերեց, անունը Մարիա, որին իր որդի Կոստանդին կայսեր հետ ամուսնացրեց։ Վերջինս իր նախկին նշանած՝ ֆրանկների ռեքս Կարուլոսի դստեր նկատմամբ տածած սիրո պատճառով չէր ուզում և շատ տխրեց։ Հարսանյաց հանդեսը կայացավ ինդիկտիոնի 12-րդ տարվա նոյեմբեր ամսին։ Թրակիայի զորավար Ֆիլետոսը գնաց Ստրիմոն⁸⁷⁴, բայց առանց ժամապահության հաստատելու բանակելով, ենթարկվեց բուլղարների անակնկալ հարձակման և սպանվեց ուրիշ շատերի հետ միասին։ Իրենեն ստրատիոտիկոնի լոգոթեմ⁸⁷⁵ Հովհաննես սակելարիոսին Մեծ Լոնգորարդիայի նախկին ռեքս Թեոդոտոսի⁸⁷⁶ հետ Լոնգորարդիա ուղարկեց, հնարավորության դեպքում Կարուլոսի դեմ կովելու և նրանից ոմանց անջատելու։ Նրանց միացավ Միկիլիայի զորավար Թեոդորոս պատրիկը։ Հովհաննեսը պատերազմում ֆրանկների ձեռքը գերի ընկավ և շարաշար սպանվեց։

[A. M. 6282]

[Հոստանդինիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 10-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարեի] 5-րդ տարին

[Հոստանդինիների Կոստանդինի] 21-րդ տարին

[Կոստանդինուպոլսի Տարսիոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի կայսրերի բարեպաշտութեան դեմ նախանձով լցված սատանան նենգ մարդկանց միջոցով մոր ու որդու միջև թշնամութուն սերմանեցին: Նրանք մորը հավատացրին, թե իրենք իբր գուշակութեան միջոցով իմացել են, որ «Աստված որդուդ չի սահմանել թագավորության տիրանալ, այն բոնն է, աստվածուստ քեզ տրված»: Կինարմատը խաբվեց, բացի այդ լինելով իշխանատենչ, հավատաց, որ իսկապես այդպես է: Նա չհասկացավ, որ նրանք այդ քայլին դիմեցին, բանդի իրենք էին ցանկանում իշխանութեան տիրանալ: Կայսեր քսան տարին արդեն լրացել էր, նա թիկնեղ, շատ կարող մարդ էր, բայց տեսնում էր, որ իր ձեռքում ոչ մի իշխանություն չկա: Նա վշտանում էր տեսնելով, որ ամեն ինչ լողոթեա Ստավրակիոս պատրիկի ձեռքում է, որ բոլոր նրան են դիմում, իսկ կայսեր մոտ հաճախել ոչ ոք չի խիզախում: Խորհրդակցելով իր փոքրաթիվ մտերիմների, այդ թվում Պետրոս մագիստրոսի, Թեոդորոս Կամուլիանոս պատրիկի և Դամիանոս պատրիկի հետ, նա որոշեց ձեռքակալել [Ստավրակիոսին], արքայի Սիկիլիա և մոր հետ տիրել թագավորության: Ինդիկտիոնի 13-րդ տարվա փետրվար ամսի 9-ին զարհուրելի երկրաշարժ եղավ, ոմանք չէին համարձակվում տանը գիշերել, բոլորը պարտեղներում և բացօթյա տեղերում վրաններ խփելով, այնտեղ էին մնում: Կայսրուհին իր որդու հետ սուրբ Մամաս⁸⁷⁷ գնաց: Երբ այդ մասին Ստավրակիոսին տեղյակ պահեցին, նա Ավդուստային որդու դեմ դրդեց: Կայսրուհին ձեռքակալելով կայսեր մտերիմների, բոլորին գանահարեց ու խուզեց և նրա պայլ⁸⁷⁸ Հովհաննես պրոտոպաթարի հետ, մականունը Պիկրիդիոս, կատտակա⁸⁷⁹ շրջանները՝ մինչև Սիկիլիա արքայից, Պետրոս մագիստրոսին ծանակելուց հետո տնային կալանքի մեջ պահեց: Նմանապես և Թեոդորոս Կամուլիանոս պատրիկին: Իսկ Դամիանոս պատրիկին գանահարելուց ու խուզելուց հետո արքայից Ապոլլոնիաս⁸⁸⁰ բերդը: Նա բրածեծ արից նաև որդուն [Կոստանդինին], գլխին բազում լուսանքներ թափեց ու բազում օրեր թույլ շտվեց տեղից շարժվել: Նա զինվորներից երզում պահանջեց, թե

«Քանի դու կենդանի ես, մենք չենք ընդունի որդուդ իշխանությունը»: Բոլորն էլ այդպես երդվեցին, բանդի ոչ ոք չէր համարձակվում ընդհանրապես հակաձայնել: Արաբների նավատորմիդը շարժվեց Կիպրոսի վրա: Կայսրուհին այդ մասին նախօրոք տեղյակ, ինքը ևս ի մի հավաքեց հոսմեական բոլոր նավերը և նրանց դեմ ուղարկեց: Երկու զորավարներն էլ գալով մինչև Մյուրա, շրջանցեցին Խելիդոնիոնների թերակղզին և մտան Ատալիայի ծոցը: Արաբները շարժվելով Կիպրոսից, հանդիպեցին պարզ [անհողմ] եղանակի և բաց ծովում դեգերում էին: Երբ ցամաք ելան, զորավարները նկատեցին նրանց և ճակատ կազմելով մարտի պատրաստվեցին: Կիրիբոտոսների զորավար Թեոփիլոսը, մի աժդահա և շատ կարող մարդ, խիզախեց բոլորից առաջ դուրս գալ: Կովի բռնվելով, նա ընկավ [թշնամիների] ձեռքը, որոնք Ահարեի մոտ տարան: Վերջինս նրան առաջարկեց դավաճան լինել և արժանանալ անցողիկ պարգևների: Թեոփիլոսը մերժեց, նրան էլ ավելի ստիպեցին, բայց երբ նա դարձյալ տեղի շտվեց, սրի քաշվեց ու դարձավ փառապանծ նահատակ:

[A. M. 6283]

Աշխարհի արարչագործութեան 6283 թ.

Քրիստոսի մարդկայնության 783 թ.

Հոստանդինիների Կոստանդին կայսեր 7-ամյա թագավորության 1-ին տարին

Արաբների առաջնորդ Ահարեի 23-ամյա իշխանության 6-րդ տարին

Հոստանդինիների Կոստանդինուպոլսի 27-ամյա աթոռակալության 22-րդ տարին

Կոստանդինուպոլսի Տարսիոս պատրիարքի 21-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամսին երդվեցնողները հասան Արմենիակների բանակաթեմը, բայց այդ բանակաթեմի զորքերը մերժեցին երզում տալ և ասել. «Քանի դու կենդանի ես, քո որդին մեր վրա չի թագավորի», ոչ էլ «Իրենն անունն ենք հիշում Կոստանդինից առաջ», այլ ասում ենք այնպես, ինչպես սկզբից ընդունեցինք՝ «Կոստանդինի և Իրենեի»: Կայսրուհին ուղարկեց վիզլայի դրոնգար Ալեքսիոս սպաթարին՝ մականունը Մուսուլեմ⁸⁸¹, ձեռքակալելու նրանց, բայց [արմենիակները] նրան բռնեցին և առաջնորդ հռչակեցին, իսկ իրենց զորավար Նիկեփոր պատրիկին հսկողության տակ առնելով, կայսր ճանաչեցին միմիայն Կոստանդինին: Երբ այդ մասին իմացան մրկայսր ճանաչեցին միմիայն Կոստանդինին: Երբ այդ մասին իմացան մրկայսր ճանաչեցին միմիայն Կոստանդինին: Ո՛հ, նենգ սատանայի բանք ևս միակ կայսր հռչակեցին Կոստանդինին: Ո՛հ, նենգ սատանայի

նենզագործություն: Ինչպե՞ս է նա բազում հնարքներով ջանում կործանել մարդկությունը: Նրանք ովքեր 15 տարի առաջ զբաղվոր այդ սարսափելի երդումն էին տվել և այդ փաստաթուղթը զրհլ սուրբ սեղանին, թե Իրենեի կենդանության օրոք չեն ընդունի նրա որդու իշխանությունը, այժմ մոռանալով այդ մասին, Կոստանդին էին ինքնակալ հայտարարում, չհասկանալով թշվառականները, որ չպետք է երդումը փոխել, քանզի որպես կանոն երզմնափոխությունից երզմնազանցությունն է հետևում, իսկ երզմնազանցությունը ուրացումն է աստծու: Ինչիկտիոնի 14-րդ տարվա հոկտեմբեր ամսին բանակաթեմերի [զորքերը] հավաքվեցին Ատրոյալում⁸⁸² և միահամուռ կերպով պահանջեցին Կոստանդին կայսեր, որի քսան տարին էր ընթանում: Իրենեն ժողովրդի պոռթկումից սարսափած, արձակեց Կոստանդին, որին ինքնակալ հռչակեցին, իսկ նրա մորը՝ զահընկեց հայտարարեցին: Կայսրը Միքայել Լախանոզրակոնին և իր պալլ շուվհաննես պրոտոսպաթարին անհասպաղ ուղարկեց և Արմենիականների [զորքերին] երզվեցրեց իր մոր Իրենեին շճանաչել կայսրուհի: Նա [Արմենիականների] զորավարի պաշտոնում հաստատեց Ալեքսիոսին: Կայսրը ղեկավարեց ամսին քաղաք վերադառնալով, բրածեծ արեց ու խուզեց Ստավրակիոսին և նրան Արմենիականների բանակաթեմն աքսորեց՝ ի բավարարումն նրանց: Կայսրն աքսորեց նաև իր մոր մտերիմ ներքինի Աեախոս պրոտոսպաթարին, ինչպես և նրա բոլոր առանին ներքինիներին, իսկ զգայազուրկ մորը արգելափակեց իր, Իրենեի, կառուցած էլեֆթերիոսի պալատում, որտեղ նա թաքցրած ուներ բազում դրամ: Նույն ամսին հրդեհ ծագեց և պատրիարքարանի Ռոմայիտես կոչվող տրիկլինը, Քվեստորիոնը և բազում այլ շենքեր՝ մինչև Միլիոն հրո ճարակ դարձան: Ապրիլ ամսին Կոստանդինը բուլղարների դեմ արշավեց, եկավ Պրոբատոն⁸⁸³ կոչվող բերդը, սուրբ Գեորգի առվակը և հանդիպելով Բուլղարիայի տեր Կարդամին⁸⁸⁴, երեկոյան մոտ փոքր ճակատամարտ տեղի ունեցավ, հոռմայեցիները վեհերոտեցին, գիշերով փախուստի դիմեցին և անփառունակ վերադարձան: Բուլղարներն էլ վախեցած վերադարձան:

Այդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը արաբների դեմ արշավեց, Ամորիոնից ելավ գնաց Կիլիկիայի Տարսոն [քաղաքը]: Հասնելով Ջրագուրկ աշտարակները⁸⁸⁵, դարձյալ ձեռնունայն վերադարձավ ինչիկտիոնի 15-րդ տարվա հոկտեմբեր ամսին: Հունվար ամսի 15-ին կայսրը իր մոր և պաշտոնավոր բազում մարդկանց խնդրանքով [Իրենեին] կայսրուհի հռչակեց և նրա անունը հիշեց իր անվան հետ միասին, ինչպես անցյալում՝ «Կոստանդին և Իրենեի»: Բուլղոր ենթարկվեցին, բացի Արմենիականների բանակաթեմի զորքերից, որոնք հակառակվելով ապստամբում են, պահանջում Ալեքսիոսին, որը մի փոքր առաջ իրենց զորավարն էր դարձել: Տվյալ պահին կայսրը նրան խոսք տալով իր մոտ էր կանչել, պատրիկի պատվաստիճանը շնորհել, բայց և իր մոտ պահել: Կայսրը նկատի ունենալով այդպիսի համառ պահանջը, ինչպես և Ալեքսիոսի մասին տարածված որոշ ասեկոսներ, թե նա կայսր կղանա, բրածեծ անելով և մազերը խուզելով, Պրետորիոն նետեց: Հուլիս ամսին նա բուլղարների դեմ արշավեց, կառուցեց Մարկելլոն բերդը⁸⁸⁶: Հուլիս ամսի քսանին Բուլղարիայի տեր Կարդամը հավաքեց իր համայն զորքը և եկավ ամրությունները: Կայսրը եռանդով լցված և սուտ գուշակների խոսքին հավատացած, թե ինքը կհաղթի, հախուռն ու անկանոն կերպով կովի բռնվեց, զլխովին տանուլ տվեց և փախուստի դիմելով քաղաք վերադարձավ: Նա շատերին կորցրեց, ոչ միայն շարքային զինվորների, այլև հրամանատարական կազմից, այդ թվում մագիստրոս Միքայել Լախանոզրակոնին, Վարդաս պատրիկին, Ստեփանոս Խամեաս պրոտոսպաթարին, նաև զորավարներ Նիկետասին և Քեոզնոստոսին, բազում վասիլիկոսների և սուտ գուշակ ու աստղաբաշխ Բադարատին⁸⁸⁷: Հենց սա էր գուշակել, թե նա կհաղթի: Բուլղարները ձեռք գցեցին նաև նրանց տուլղոնը, դրամն ու ձիերին, ինչպես և կայսեր վրանները՝ կայսերական ողջ սպասավորությամբ հանդերձ: Տագմանեբը հավաքվելով քաղաքում, որոշեցին կայսր հռչակել նախկին կեսար Նիկեփորին: Կոստանդինը, իմանալով այդ մասին, իր պապ Կոստանդին երկու որդիներին էլ սուրբ Մամաս բերեց, Նիկեփորին կուրացրեց, իսկ Խրիստոֆորի, Նիկետասի, Անթիմոսի և Եվդոկիմոսի լեզուն կտրեց: Նա կուրացրեց նաև վերասացյալ Ալեքսիոս⁸⁸⁸ պատրիկին, հավատ ընծայելով մոր, ինչպես և վերոնշյալ Ստավրակիոս պատրիկի խորհուրդներին, որ եթե չկուրացնեն, նրան կայսր կհռչակեն: Դատավճիռը կայացավ ինչիկտիոնի 15-րդ տարվա օգոստոս ամսին, շաբաթ օրը, 9-րդ ժամին: Բայց աստծո դատաստանը անպատիժ լիողեց այդ անիրավ արարքը:

[A. M. 6284]

[Հոռմայեցիների Կոստանդինի 4-րդ տարին 2-րդ տարին
[Արարների] 7-րդ տարին

[Հոռմի Ազրիանոս պապի] 23-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Տարսիոս պատրիարքի] 8-րդ տարին

Հինգ տարի անց, նույն ամսին, նույն շաբաթ օրը, նույն այդ Կոստանդինը կուրացվում է իր հարազատ մոր կողմից:

[A. M. 6285]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 3-րդ [Արարների առաջնորդ Ահարոնի] 8-րդ տարին

[Հռոմի Ագրիանոս պապի] 24-րդ տարին [Կոստանդնուպոլսի Տաբասիոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի արմենիակները⁸⁸⁹, լսելով Ալեքսիոս պատրիկի կուրացվելու մասին, իրենց զորավար Թեոդորոս Կամուլիանոս պատրիկին բանտ նետեցին: Կայսրը, իմանալով դա, Կոստանդին Արտաշիր պրոտոսպաթարին, ինչպես և Բուկելլարների զորավար Նրիստիսերին մյուս բանակաթեմերի զորքերով ուղարկեց նրանց հնազանդեցնելու: Արմենիակները մարտ տվեցին և բռնելով նրանց երկուսին էլ կուրացրին: Երկու կողմից էլ շատերն սպանվեցին: Դա տեղի ունեցավ ինդիկտիոնի 1-ին տարվա նոյեմբեր ամսին, իսկ ղեկաւեմբեր ամսի 25-ին, զիշերվա երկրորդ ժամին երկինքը որոտաց, կայծակ բնկավ ու հրդեհեց ոսկեասեղնագործների կայսերական արհեստանոցը: Սուրբ Զատիկից հետո կայսրը մյուս բոլոր բանակաթեմերի զորքերով արշավեց արմենիակների դեմ: Ինդիկտիոնի 1-ին տարվա մայիս ամսի 26-ին, Հոգեգալստյան կիրակի օրը, նա մարտ տվեց: [Արմենիակների] հետ եղած հայերի⁸⁹⁰ դավաճանության պատճառով կայսրը հաղթանակ տարավ, ձերբակալեց նրանց, մահապատժի ենթարկեց նրանց տուրմարի Անդրոնիկոս սպաթարին, տուրմարի Թեոփիլոսին և Սինոպի եպիսկոպոս Գրիգորին, իսկ մնացածներին տարբեր պատիմների ենթարկեց ու զույրբ բռնագրավեց: Հուլիս ամսի 24-ին, երկուշաբթի օրը նրանց բերդից շղթայակապ բերված հազար հոգու վախեռնայի դարբասով քաղաք մտցրեց և նրանց ղեմքին թանաքով «նենդ արմենիակոս» բառերը դաշեղով, ցրիվ տվեց Սիկիլիա և մյուս կղզիները: Արմենիակներին դավաճանած հայերը, չարժանանալով կայսեր որևէ շնորհքին, Կամախ բերդը արաբներին հանձնեցին:

[A. M. 6286]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 4-րդ [Արարների առաջնորդ Ահարոնի] 9-րդ տարին

[Հռոմի Ագրիանոս պապի] 25-րդ տարին [Կոստանդնուպոլսի Տաբասիոս պատրիարքի] 10-րդ տարին

Այս՝ ինդիկտիոնի 2-րդ տարվա հոկտեմբեր ամսին արաբները երաշխիքներով առան Թեբասա բերդը⁸⁹¹ և ըստ իրենց խոստման թույլ տվեցին նրա հրամանատարներին իրենց երկիրը գնալ:

[A. M. 6287]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 5-րդ [Արարների առաջնորդ Ահարոնի] 10-րդ տարին

[Հռոմի Ագրիանոս պապի] 26-րդ տարին [Կոստանդնուպոլսի Տաբասիոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարի կայսեր իշխանության ձգտող մայրը կայսրին ժողովրդի աչքից զցելու համար նրան իր կնոջ ղեմ լարեց, և ինդիկտիոնի 3-րդ տարվա հունվար ամսին նա նրան բռնի միանձնուհի դարձրեց: Ապրիլ ամսին կայսրը արաբների ղեմ արշավեց, իսկ մայիս ամսի 8-ին Անուսան կոչվող վայրում նրանց մի զորամասի հետ կռվի բռնվեց, հաղթանակ տարավ և մինչև գետը հալածական արեց: Ապա իջավ Եփեսոս, աղոթեց [Հովհան] Աստվածաբանի [տաճարում], իսկ տարեկան տոնակատարության առթիվ հարյուր լիտր ոսկու շափով տաճարի վճարած կոմմերկիոնը⁸⁹² վերացրեց՝ սուրբ առաքյալ, ավետարանիչ Հովհաննեսի տաճարի կարիքները հոգալու համար: Օգոստոս ամսին կայսրը կուբիկուլարեա Թեոդոտեին ավզուստա թագադրեց և ապօրինի կերպով նշանվեց նրա հետ:

[A. M. 6288]

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 6-րդ [Արարների առաջնորդ Ահարոնի] 11-րդ տարին սարին

[Հոռոմի Աղրիանոս պապի] 27-րդ տարին [Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 12-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը սուրբ Մամասի պալատում ամուսնացավ Թեոդոտեի հետ: 40 օր հարսանիք արեցին: Իսկ նույն ինդիկտիոնի 4-րդ տարվա ապրիլ ամսին, շաբաթվա 7-րդ օրը, գիշեր ժամանակ Կրետե կղզում ամենասարսափելի երկրաշարժ եղավ: Մայիս ամսի 4-ին շատ սոսկալի երկրաշարժ եղավ նաև Կոստանդնուպոլսում: Բուղարիայի տեր Կարդամը կայսեր հայտնեց, թե «Ինձ պախտ վճարիր, թե չէ կգամ մինչև Սսկե դուռը և կամայացնեմ Թրակիան»: Կայսրը մի թաշկինակի մեջ ձիու աղբ լցրեց և նրան ուղարկեց, ասելով. «Ինչ պախտի որ դու արժանի ես, ուղարկեցի: Մեր մարդ ես, չեմ ուզում, որ նեղություն քաշես մինչև այստեղ գալու: Ես ինքս կգամ մինչև Մարկելլոն, դու դուրս արի, թող կատարվի այն, ինչ աստված է կամենում»: Կայսրը հրաման արձակեց և պերատիկա բանակաթեմերից հավաքելով իր զորքերը, եկավ մինչև Վերսինիկիա, իսկ Կարդամը՝ մինչև անտառավետ Աբրոլեբա⁸⁹³, բայց վեհերոտեց ու մնաց ծավալում: Կայսրը, գոտեպնդելով իր զինվորներին, զնաց մինչև անփայտ Աբրոլեբան և 17 օր Կարդամին էր կանչում: Բայց նա չհամարձակվեց գնալ և փախուստի դիմելով, վերադարձավ իր տեղը: Նույն տարին արարներն էլ եկան մինչև Ամորիոն, բայց ապարդյուն, միայն շրջակայքից գերիներ քշելով, վերադարձան:

Նույն տարին Սակկուդիոնի վանահայր Պլատոնը հրաժարվեց հաղորդել Տարասիոս պատրիարքի հետ, քանզի վերջինս կայսեր հազորություն էր տվել, թույլատրել էր վարդապետին կայսեր կնոջ՝ Մարիային միանձնուհի դարձնել, իսկ Կաթարոսների վանահայր արքա Հովսեփին կայսեր Թեոդոտեի հետ պսակել: Իմանալով դա, կայսրը, սխոլերի դոմեստիկոս Վարդան պատրիկի և Օպսիկիոնի կոմես Հովհաննեսի միջոցով Պլատոնին քաղաք բերեց ու պալատի հրեշտակապետի տաճարի խոցում արգելափակեց, իսկ մնացած վանականներին՝ նրա հղբորդիներով⁸⁹⁴ հանդերձ բրածեծ անելով, Թեսաղոնիկե արսորեց: Կայսեր

մայրը տուժածներին էր պաշտպանում, քանզի նրանք իր որդուն էին հակադրվում և նրան խայտառակում:

[A. M. 6289]

Հոռոմի Լևոն պապ⁸⁹⁵: Աթոռակալեց 8 տարի:

[Հոռոմայեցիների Կոստանդին կայսեր] 7-րդ [Արարների առաջնորդ Ահարոնի] 12-րդ տարին սարին

[Հոռոմի Լևոն պապի] 1-ին տարին [Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը իր մոր հետ զնաց Պրուսայի ջերմուկները բուժվելու: Ինդիկտիոնի 5-րդ տարվա հոկտեմբեր ամսի 7-ին կայսրը որդի ունեցավ, որին Լևոն կոչեց: Կայսրը [որդու ծննդյան] լուրն առածին պես, մորը ջերմուկներում թողնելով, կայսերական ամբողջ սպասավորությունը ու իշխանավորներով հապճեպ քաղաք վերադարձավ: Կայսեր մայրը հարմար առիթ ձեռք գցելով, բանակցությունների մեջ մտավ տաղամանքի զորահրամանատարների հետ, խոստումներով ու նվերներով կաշառեց նրանց՝ տապալելու համար իր որդուն, որպեսզի միահեծան ինքը թագավորի: Մի մասին անձամբ ինքը համոզեց, մյուս մասին՝ իր մարդիկ և այդպես բոլորին իր կողմը ձգելով, հարմար առիթի էր սպասում: Հոռոմում վախճանված Աղրիանոս պապի տեղ ձեռնադրվում է Լևոնը, շատ պատվական ու հարգարժան մի անձնավորություն: Մարտ ամսին կայսրը արաբների դեմ դուրս եկավ, իր հետ ունենալով Ստավրակիոս պատրիկին և իր մոր մնացած մտերիմներին, ինչպես նաև երկու բանակաթեմերից 20 հազար ընտիր թեթևազեն զինվորներ: Ստավրակիոսի մարդիկ, տեսնելով զորքի ու կայսեր եռանդը, վեհերոտեցին, քանզի պատերազմում հաղթելու դեպքում կայսեր դեմ նյութված դավադրությունը հօդս կցնդեր: Նրանք պահակատեղիի զինվորներին կաշառելով համոզեցին ստել ու ասել, որ իբր սարակինոսները հեռացել են: Կայսրը այդ առթիվ շատ տխրեց ու ձեռնունայն մտավ քաղաք: Մայիս ամսի 1-ին մեռավ նրա որդի Լևոնը, որին կայսրը շատ ողբաց: Ինդիկտիոնի 5-րդ տարվա հունիս ամսի 17-ին, իրեն կայսրը շատ ողբաց: Ինդիկտիոնի 5-րդ տարվա հունիս ամսի 17-ին, իրեն կայսրը շատ տաղամանքի վերոհիշյալ [հրամանատարները] կայսեր Մամասի մոտ տաղամանքի վերոհիշյալ [հրամանատարները] կայսեր վրա շարժվեցին՝ ձեռքակալելու համար: Կայսրը իմանալով այդ մա-

[A. M. 6290]

Հոռոմայեցիների Իրենե կայսրուհու երկրորդ թագավորություն⁸⁹⁰։
Թագավորեց 5 տարի։

[Հոռոմայեցիների կայսրուհու]	Իրենե 1-ին տարին	[Արաբների Ահարոնի]	առաջնորդ 13-րդ տարին
[Հոռոմի 2-րդ տարին]	Լեոն պապի]	[Կոստանդնուպոլսի Տա- րասիոս պատրիարքի]	14- րդ տարին

սին, մտավ իր խելանդիտնը, անցավ Պյուլե, նպատակ ունենալով ապաստանել Անատոլիկոն բանակաթեմում։ Իր հետ էին նաև մոր մտերիմները, որոնց սակայն [կայսրը] չգիտեր։ Կայսեր կինն էլ դուրս եկավ մինչև Տրիտոն։ Կայսեր մոտ գտնվող մոր մտերիմները խորհուրդ արեցին ու ասացին. «Եթե նրա շուրջը դորք հավաքվի, մենք չենք կարողանա նրան ձեռք գցել, իսկ մեզ էլ հնարավոր չի լինի նրանից թաքնվել և նա մեզ կոչնչացնի»։ Կայսեր մայրն իր հերթին էլեֆթերիոսի պալատում հավաքեց տաղմաների զորահրամանատարներին, որոնց հետ ինքը նախապես պայմանավորվել էր, ապա ինքն էլ եկավ պալատ։ Իմանալով դորքի՝ կայսեր սատար կանգնելու մասին, շատ վեհերոտեց, մինչև անգամ մտածեց որդու մոտ եպիսկոպոսներ ուղարկել և նրանից երաշխիքներ ստանալով, մի կողմ քաշվել⁸⁹⁶։ Նա ծածուկ նամակ էլ գրեց կայսեր մոտ գտնվող իր մտերիմներին, թե «Եթե դուք որևէ ձևով ինձ չհասնանք նրան, ապա ես ինձ հետ ունեցած ձեր պայմանավորվածություն մասին կայսեր կհայտնեմ»։ Նրանք վախեցած, աղոթելու պահին նրան բռնեցին, խելանդիտն նստեցնելով շարաթ առավոտյան, օգոստոս ամսի 15-ին քաղաք բերեցին և բանտարկեցին Միրանի դահլիճում⁸⁹⁷, որտեղ ծնվել էր նա։ Փամբ 9-ի մոտ իր մոր և վերջինիս խորհրդատուների վճռի համաձայն նրան սարսափելի ու անբուժելի ձևով կուրացրին, մեռցնելու միտումով։ 18 օր արևը խավարեց, շողացին նրա ճառագայթները, որի պատճառով նավերը մոլորված դես ու դեն էին դեգերում։ Բոլորն ասում էին ու խոստովանում, որ արեգակը չի լուսավորում՝ կայսեր լույսը խավարելու պատճառով։ Ահա այս ճանապարհով իշխանությունը ձեռք է գցում նրա մայր Իրենեն։

Նույն տարին Հոռոմում էլ երանելի Ազրիանոս պապի ազգականները ժողովրդին Լեոն պապի դեմ ոտքի հանեցին և բռնելով նրան՝ կուրացրին։ Բայց չկարողացան կատարելապես խավարեցնել նրա աչքի լույսը, քանզի կուրացնողները մարդասեր լինելով, խնայեցին նրան։ Լեոն պապն ապաստանեց Ֆրանկների ռեքս Կարուլոսի մոտ, որը դաժանորեն պատժեց նրա ոտխներին և վերականգնեց նրան իր աթոռին։ Այդ ժամանակվանից սկսած Հոռոմ անցավ Ֆրանկների գերիշխանության ներքո։ Իսկ պապը փոխհատուցելով Կարուլոսին, նրան Պետրոս առաքյալի տաճարում հոռոմայեցիների կայսր թագադրեց⁸⁹⁸, գլխից մինչև ոտքերը յուզով օծեց, թագավորական ծիրանին ու թագը հագցրեց՝ ինդիկատիոնի 9-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին։

[A. M. 6291]

[Հոռոմայեցիների կայսրուհու]	Իրենե 2-րդ տարին	[Արաբների Ահարոնի]	առաջնորդ 14-րդ տարին
[Հոռոմի 3-րդ տարին]	Լեոն պապի]	[Կոստանդնուպոլսի Տա- րասիոս պատրիարքի]	15- րդ տարին

Այդ տարի Արեմեիլեքը Ռոմանիայի վրա արշավեց, նա մի թեթևագեն ավազակախումբ ուղարկեց, որն իջավ մինչև Մալագինա⁹⁰² և ձեռք գցելով Ստավրակիոսի ախոռներում գտնվող ձիերը, կայսերական հանդերձանքը, անվնաս վերադարձավ։ Մնացած արաբները իջան մինչև դեկաբրը, և բազում գերիներ տարան։ Նրանց մի այլ ավազակախումբ էլ Լյուդիա և բազում գերիներ տարան։ Նրանց մի այլ ավազակախումբ էլ հարձակվեց Օպսիկիոնի կոմես Պավլոս պատրիկի, նրա համայն զորքի

ու օպտիմալներ⁹⁰³ վրա և մեծ ջարդ տվեց, վերջրեց նաև նրանց տուղ-
 գոնն ու վերադարձավ: Ինդիկտիոնի 7-րդ տարվա մարտ ամսին Բել-
 Վեախայի⁹⁰⁴ սկիավենների իշխան Ակամեբոսը, հելլադացիների դրոմամբ
 ուզեց ազատել Կոստանդինի որդիներին և նրանցից մեկն ու մեկին կայսր
 հռչակել: Երբ այդ մասին իմացավ Իրենն կայսրուհին, Կոստանդին Սա-
 րանտապետոս պատրիկի մոտ վերջինիս որդուն՝ Թեոփիլակտոս սպա-
 թարիոսին ուղարկեց (որը նաև իր, Իրենեի, եղբորորդին էր)⁹⁰⁵, նրա մի-
 ջոցով բռնորին կուրացրեց և խափանեց նրանց՝ իր դեմ նյութված դավա-
 դրությունը: Սուրբ Զատիկ երկրորդ օրը կայսրուհին շորս պատրիկների՝
 Թրակեսիոն [բանակաթեմի] զորավար Վարդանի, Թրակիայի զորավար
 Սիսինիոսի, սխուլերի դոմեստիկոս Նիկետասի և Կոստանդին Բոյիլա-
 սի⁹⁰⁶ ուղեկցությամբ շորս սպիտակ ձիերով լծված կառքի վրա բազմած
 սուրբ Առաքելոց տաճարից դուրս եկավ՝ առատ դրամ բաշխելով: Մայիս
 ամսին կայսրուհին շատ ծանր հիվանդացավ և ներքինիների գզվառոցն
 էլ ավելի սաստկացավ: Աետիոսը, դաշնակցելով սխուլերի դոմեստիկոս
 Նիկետաս պատրիկի հետ, ուժգին ընդդիմացավ Ստավրակիոսին, նրանք
 հավատացնում էին կայսրուհուն, թե Ստավրակիոսը իշխանության վրա
 աչք ունի: Կայսրուհին գազազած, Հիերիոսի պալատում սաստիկ պար-
 սավեց նրան, որակելով որպես խռովություններ ու ապստամբություն-
 ներ նյութող, որ շուտով իր, Ստավրակիոսի, գլխին փորձանք է բերելու:
 Ստավրակիոսը իրեն արդարացրեց և զլուխը փրկեց: Բայց վերոհիշյալ
 պատրիկների՝ Աետիոսի և Նիկետասի դեմ ռի կապեց:

[A. M. 6292]

[Հոռոմայեցիների Իրենե կայսրուհու] 3-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 15-րդ տարին
[Հոռոմի Լեոն պապի] 4-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տա-րասիոս պատրիարքի] 16-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 8-րդ տարվա փետրվար ամսին վերոհիշյալ Ստավ-
 րակիոսը մայրաքաղաքում գտնվող սխուլարիոսներին ու էքսկուրիտոր-
 ներին՝ հրամանատարներով հանդերձ դրամով ու նվերներով կաշառելով,
 խռովության ու ապստամբության դրոցեց: Բարեպաշտ Իրենեն Հուստի-
 նիանոսի տրիկլինում ժողով գումարեց և բոլոր զինվորականներին ար-
 գելեց մերձենալ Ստավրակիոսին: Այդպիսով նա փոքր մեղմեց իրավի-
 ճակը: Իսկ վերոհիշյալ Աետիոսն ու Նիկետասը ուրիշ մի քանի հոգու
 հետ պայքարում էին Ստավրակիոսի դեմ, որը սրտի կաթված ունեցավ:

Նա փրփրացող արյուն փսխեց՝ կրծքավանդակից ու թոքերից հոսած:
 Բժիշկները գտան, որ նա կմահանա: Բայց շողորթի ու տխմար մար-
 ղիկ, այդ թվում և բժիշկներ ու մի քանի վայ վանականներ ու բանդա-
 գառակներ, մինչև նրա վախճանի օրն անգամ (որը տեղի ունեցավ նույն
 ինդիկտիոնի 8-րդ տարվա հունիս ամսին, երեքշաբթի օր), երդումներով
 հավատացնում էին, թե կապրի ու կթագավորի: Ստավրակիոսը դրա
 հուռով տարված, Կապադովկիայում⁹⁰⁷ Աետիոսի դեմ ապստամբություն
 էլ կազմակերպեց, բայց որի բունկման մասին կենդանությանը արժա-
 նի չեղավ լսել: Այն բունկվեց իր մեռնելուց երկու օր հետո: Ապստամբ-
 ները ձերբակալվեցին և աքսորի ու այլ պատիժների ենթարկվեցին:

[A. M. 6293]

[Հոռոմայեցիների Իրենե կայսրուհու] 4-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 16-րդ տարին
[Հոռոմի Լեոն պապի] 5-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տա-րասիոս պատրիարքի] 17-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 9-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին Ֆրանկ-
 ների ռեքս Կարուլոսը թագադրվեց Լեոն պապի կողմից: Նա որոշել էր
 Սիկիլիայի դեմ նավատորմի ուղարկել, բայց այդ մտքից հրաժարվեց,
 քանզի գտավ, որ նախընտրելի է Իրենեի հետ աժուսանալ: Այդ հար-
 ցով նա հաջորդ ինդիկտիոնի 10-րդ տարին դեսպաններ ուղարկեց: Ին-
 դիկտիոնի 9-րդ տարվա մարտ ամսին Իրենե բարեպաշտը բյուզանդա-
 ցիներին բաշխեց քաղաքային հարկերը, թեթևացրեց Աբիդոսի և Հիե-
 րոնի⁹⁰⁸, այսպես կոչված, կոմմերկիոնները⁹⁰⁹, բազում այլ բարերարու-
 թյուններ կատարելու հաճույքն ունեցավ:

[A. M. 6294]

[Հոռոմայեցիների Իրենե կայսրուհու] 5-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 17-րդ տարին
[Հոռոմի Լեոն պապի] 6-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տա-րասիոս պատրիարքի] 18-րդ տարին

Այդ տարի Աետիոս պատրիկը ճողոպրելով Ստավրակիոսից և իրեն
 ապահով զգալով, ջանում էր իշխանությունն իր եղբոր ձեռքը տալ: Նա

նրան թրակիայի և Մակեդոնիայի մոնոստրատեզոս նշանակեց, իսկ ինքըն իր ղեկավարութեան տակ ունեւր պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը: Նա այն աստիճան մեծամտացավ, որ իշխանավորներին քամահրում էր, նրանց բանի տեղ չէր դնում: Վերջիններս շատ զայրացած, որոշեցին կայսրուհու դեմ ապստամբութիւն բարձրացնել և գործի անցան: Այդ միջոցին Իրեննի մոտ ժամանեցին Կարուսի և Լեոն պապի դեսպանները, խնդրելով նրան ամուսնանալ Կարուսի հետ և այդ ձևով միավորել Արևելքն ու Արևեմուտքը: Իրեննն մտադիր էր ընդունել այդ առաջարկը, եթէ դրան արգելք չկանգնեո բազմիցս հիշատակված Անտիոսը. նա Իրեննի պարագիծնաստեղծն⁹¹⁰ էր և ծրագրում էր իշխանութիւնն իր եղբոր հաջողացնել⁹¹¹:

[A. M. 6295]

Հոռոմայեցիների կայսր Նիկեփոր⁹¹², Թագավորեց 9 տարի:

[Հոռոմայեցիների Նիկեփոր կայսր] 1-ին տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 18-րդ տարին
[Հոռոմի Լեոն պապի] 7-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 19-րդ տարին

Այդ ինդիկտոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսի 31-ին, գիշերվա 4-րդ ժամին, լույս երկուշաբթի օր, գեներիկոնի լոգոթետ Նիկեփոր պատրիկը բռնակալեց ամենաբարեպաշտ Իրենն ավգուստայի դեմ: Այդ բանը աստված թույլատրեց մեր անասելի ու անթիվ մեղքերի համար: Նրան գործակցում էին սխոլերի դոմեստիկոս Նիկետաս պատրիկը, նրա եղբայր Սիսինիոս պատրիկը՝ նենգամիտ ու երդմնադրուծ Տրիֆիլիոսների ընտանիքից: Նրանց հետ էին նաև Լեոն Սերանտապետոս պատրիկը, Մուսուլակի որդի Գրիգոր պատրիկը, պատրիկ և քվեստոր Թեոկտիստոսը, Պետրոս պատրիկը, որոնք խարեութեամբ իրենց կողմը քաշեցին նաև տագմաների ղորահրամանատարներից ոմանց: Նրանք տիրեցին նալկե կոշվող դռան, պահակներին հեշտութեամբ խաբեցին ու հավատացրին, թէ իրենց կայսրուհին է ուղարկել հենց այդ Նիկեփորին կայսր հռչակելու, քանզի Անտիոս պատրիկը ճնշում էր գործում իր վրա իր՝ Անտիոսի, եղբայր Լեոնին կայսր հռչակելու: Պահակները հավատ ընծայեցին այդ ստին և իրենք էլ բռնակալին կայսր հռչակեցին: Գրանից հետո նույն այդ պատրիկները եկան Մեծ պալատ, մտան ներս և այնտեղից մի քանի աննշան մարդկանց ու ստրուկների ամբողջ քաղաքով մեկ

ուղարկեցին և կես գիշերից առաջ հռչակումը հրապարակեցին: Պատրիկները էլեֆթերիոսի պալատի վրա հսկողութիւն սահմանեցին, քանզի այդ պահին կայսրուհին այնտեղ էր գտնվում: Վաղ առավոտյան նրանք մարդ ուղարկեցին, կայսրուհուն բերեցին և Մեծ պալատում արգելափակեցին, որից հետո զնացին Մեծ եկեղեցի՝ ստահակին թագադրելու: Քաղաքի համայն բնակչութիւնը այնտեղ հավաքվեց, բոլորը կատարվածից դժգոհ էին, անիծում էին և՛ թագադրողին, և՛ թագադրվողին, և՛ այդ բանին հավանութիւն տվողներին: Բարեպաշտ, աստծո ճանապարհով ընթացող մարդիկ ապշել էին աստծո վճռի վրա, թէ ինչպես նա թույլ տվեց, որ ուղղափառութեան համար մաքառող ու մարտիրոսացած կնոջ գահընկեց անի ինչ որ խոզարած: Իրենց արծաթասիրութիւնից դրդված Նիկեփորին էին միացել իր՝ կայսրուհու ամենամտերիմ մարդիկ, խոսքը ներքինի պատրիկ Լեոն Սիսուպի սակելարիոսի, աստվածատյաց Տրիֆիլիոսների և վերևում հիշված պատրիկների մասին է, որոնք հենց Իրեննի տված առատ նվերներից անշափ հարստացել էին: Նրանք բաղում անգամներ կայսրուհու հետ ճաշի էին նստել, քծնել նրան, սարսափելի երգումներով հավաստիացրել, թէ իրենց համար աշխարհի ամենակարևոր բանը նրա նկատմամբ իրենց տածած սերն է: Ուրիշները կատարվածից ապշած, իրենց աչքերին չէին հավատում, կարծում էին, թէ երազի մեջ են: Իսկ իրազեկ մարդիկ երանի էին տալիս անցած լավ օրերին, ողբում բռնատիրութեան իրենց զլխին բերելիք փորձանքների համար, հատկապես նրանք, որոնք արդեն բռնակալի նենգամտութեան համը անցյալում մի քիչ առել էին: Մի խոսքով, բոլորին համակել էր տրտմութիւնն ու անմխիթարական վճատութիւնը: Չեմ ուզում տխուր բաներով խոսքս երկարացնել: Այդ միջոցին տարօրինակ կերպով փոխվեց և եղանակը, այն դարձավ մոռյլ ու խավար, աշուն ժամանակ սաստիկ ցուրտ արեց, որը պարզ վկայութիւնն էր Նիկեփորի ապագա բերրութեան, նրա պատճառելիք անտանելի տառապանքների, հատկապես իրեն օգնածների նկատմամբ: Հաջորդ օրը մի քանի պատրիկների հետ միասին նա զնաց կալանքի տակ առնված կայսրուհու մոտ, իրեն հատուկ կեղծավորութեամբ նրան հավաստիացրեց օգտակար լինելու իր պատրաստակամութիւնը (որով նա շատերին էր խաբել), բացատրեց, թէ իր կամքին հակառակ են իրեն գահ բարձրացրել, որ իբր ինքը ոչ մի ցանկութիւն չունեիր իշխանութեան տիրանալու: Նա անիծում էր իրեն թագավորեցնողներին, կայսրուհու դեմ դավադրութիւն կազմակերպողներին: Նրանց նա մատնիչ Հուդային էր նմանեցնում, որն ընթրիքից հետո դավաճանեց Տիրոջ, ցույց տալիս, որ նրանք ամեն ինչում Հուդա-

յին են նմանվել: Նա պնդում էր, թե սիրում է սև կոշիկներ հագնել, հակառակ կայսերական ընդունված կարգի⁹¹³, նա նենգորեն հավատացնում էր Իրենեին, երզվում, որ կատարելապես կապահովի նրա հանգիստը, ինչպես վայել է ստրկին տիրուհու հանդեպ, որ նրա գահընկեցությանը չի հաջորդելու որևէ փորձանք: Նա խորհուրդ էր տալիս կայսերական գանձերից ոչ մի բան իրենից չթաքցնի, դատապարտում էր արժաթասիրության ախտը, որն իբր ինքը տանել չի կարող: Բայց անհագր շատ էր տառապում այդ ախտից, իր ամբողջ հույսը հենց ոսկուն կապելով: Իմաստուն և աստվածասեր Իրենեն, հակառակ որ կին լինելով անակնկալ փոփոխությունից պետք է ազդված լիներ, այդուհանդերձ դիմելով երկվա երզմնազանց ստրկին և այսօրվա նենգ, խոտվարար ու լպիրջ բռնակալին, արիարար ու խոհեմարար ասաց. «Ես, ա՛յ մարդ, աստծուն եմ պաշտում, որ ինձ, որբիս, բարձրացրեց, անարժանիս գահի արժանացրեց: Իմ գահընկեցության պատճառը ես ինձ եմ համարում և իմ մեղքերը: Նա աղաղակում եմ, թող ամեն ինչում և ամեն ձևով օրհնյալ լինի Տիրոջ անունը, անունը միակ արքայից արքայի, տեարց տիրոջ, հենց նրան եմ ես վերագրում քո հաջողությունը, բանդի հավատացած եմ առանց նրան ոչինչ չի լինում: Ինչպես այժմ պարզվեց, քո դեմ եղած և ինձ հաճախ զեկուցված ամբաստանությունները քո մասին ճշմարիտ էին, դու այդ լավ դիտես, և եթե ես այդ առթիվ քո դեմ ատելությունը լցվեի, ինձ դժվար չէր քեզ սննդացնել: Բայց մի կողմից հավատարիմ քո երդումներին և մյուս կողմից քեզ խնայելով, իմ բազմաթիվ մտերիմների խոսքին ականջ չկատեցի, այն ժամանակ աստծուն ապավինեցի, աստծուն, որի միջոցով են թագավորում թագավորները և երկրի վրա տիրություն անում տերերը: Արդ, ես երկրպագում եմ քեզ որպես բարեպաշտի և աստծո ընտրյալի, որպես կայսեր և խնդրում խնայել անդորիս, հասկացնել ինձ իմ կառուցած էլեֆթերիոսի տունը՝ ի մըխիթարություն իմ անօրինակ դժբախտության»: Նա պատասխանեց. «Եթե ուզում ես կատարվի քո ցանկությունը, ապա երզվիր ինձ հանուն համայն աստվածային զորությունց, որ կայսերական գանձերից և ոչ մի բան չես թաքցնելու և ես կկատարեմ քո խնդրանքը, քեզ համար կապահովեմ լիակատար հոգատարություն և անդորր»: Նա երզվեց նվիրական ու կենարար խաչափայտի վրա ու ասաց. «Ես քեզանից չեմ թաքցնի մի օբոլոս⁹¹⁴ անգամ»: Նա այդպես էլ արեց: Նիկեիփորը հասնելով իր նպատակին, նրան իսկույն Իշխանաց կղզին աքսորեց. իր՝ Իրենեի կառուցած վանքը: Դա կատարվեց հենց այն ժամանակ, երբ քաղաքում էին գտնվում Կարուլոսի դեսպանները, նրանց աչքի առաջ: Այդ ամեն ինչ լպփո-

ղը իշխանության տիրանալով չկարողացավ մի քանի օր անգամ երկերեսանիորեն թաքցնել իր բնածին վատությունն ու արժաթասիրությունը: Իբրև թե անիրավության առաջն առնել ջանալով, Մագնավրայում նենգ ու անիրավ դատարան գումարեց: Բռնակալի նպատակը, ինչպես պարզվեց, ոչ թե աղքատներին արդարն հատուցելն էր, այլ այդ դատարանի միջոցով բոլոր իշխանավորներին պատվազրկելն ու ձերբակալելը, ամեն ինչ իր ձեռքում կենտրոնացնելը: Նա այդպես էլ արեց: Բայց տեսնելով, որ բոլորը իրենից դժգոհ են և երկյուղելով, որ նրանք հանկարծ հիշելով բարեպաշտ Իրենեի բարեգործությունները, իշխանությունը դարձյալ նրան կտան, անողորմը, նոյեմբեր ամսին, սաստիկ սառնամանիքի պայմաններում, անգթարար Լեսբոս կղզին աքսորեց, խիստ հսկողության տակ դրեց, կարգադրեց, որ ոչ ոքի թույլ չտան երբևիցե նրան տեսության գալու: Ապրիլ ամսի 30-ին վախճանվեց Նիկեոսոս Տրիֆիլիոսը. պատմում են, որ նրան Նիկեիփորը թունավորեց: Մայիս ամսի 4-ին, հինգշաբթի օրը, Նիկեիփորը գնաց Քաղկեդոնի արվարձանը, մի շատ հեզիկ ու հանգիստ ձի նստեց, բայց աստծո նախախնամությամբ ձին իր վրայից նրան ցած գլորեց և աչ ոտքը ջարդվեց: Հուլիս ամսի 19-ին, շրեքշաբթի օրը, ժամը 1-ին, Անատոլիկոնի զորավար Վարդան պատրիկը, մականունը Թուրք⁹¹⁵, պերատիկա բանակաթեմերի⁹¹⁶ կողմից կայսր հռչակվեց: Նա թեև կտրականապես հրաժարվում էր ծիրանին հագնել, բայց նրանց վրա ազդել չկարողացավ: Նա իջավ մինչև Խրիսուպոլիս⁹¹⁷, 8 օր շրջեց քաղաքի շուրջը⁹¹⁸, բայց քաղաքացիներից չընդունվելով, վերադարձավ Մալագինա: Աստծուց վախենալով և շուղենալով իր պատճառով քրիստոնյաների կոտորած լինի, նա դիմեց Նիկեիփորին և նրանից իր կյանքի անվտանգությունն ու գույքի ապահովության մասին զրավոր երաշխիքներ ստացավ, դրանց տակ ստորագրեցին նաև սրբազնագույն Տարասիոս պատրիարքը և բոլոր պատրիկները: Ահա դրանից հետո նա իր բոլոր մտերիմներից գաղտնի, սեպտեմբեր ամսի 8-ին, կեսգիշերին փախավ, իջավ Բյուլթանիայի Կիոս [քաղաքը], Հերակլիոսի վանքը և գտնելով կայսեր ուղարկած խելանդիոնը, մագերը խուղեց, հագավ վանականի սքեմը և նավ նստելով, գնաց Պրոտե կոչվող կղզին, որտեղ ինքը վանք էր կառուցել: Նա հավատացած էր, որ Նիկեիփորը, այդ ուխտադրուժը, չի խախտի իր տված սարսափելի երդումը, իրեն ոչ մի վնաս չի հասցնի: Սակայն կայսրը նախ գրավում է նրա ողջ ունեցվածքը, ապա պատրվակ գտնելով, ձերբակալում բանակաթեմերի բոլոր զորավարներին ու կալվածատերերին, ոմանց նաև մայրաքաղաքում, իսկ համայն բանակն էլ առանց ոռձկի թողնում: Ո՞վ կարող է ըստ արժանվույն պատմել մեր մեղքերի հա-

մար աստծո թույլտվութեամբ այդ օրերում նրա գործած արարքների մասին: Ինդիկադոնի 11-րդ տարվա օգոստոս ամսի 9-ին Լեսբոսում արարի մեջ վախճանվեց կայսրուհի Իրենեն, որի մարմինը փոխադրվեց Իշխանաց կղզին և ամփոփվեց նրա կառուցած վանքում:

[A. M. 6296]

[Հռոմայեցիների Նիկե-
փոք կայսեր] 2-րդ տարին

[Արարների առաջնորդ
Ահարոնի] 19-րդ տարին

[Հռոմի Լեոն պապի]
19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տա-
րասիոս պատրիարքի] 20-
րդ տարին

Այդ ինդիկադոնի 12-րդ տարվա ղեկտեմբեր ամսին Նիկեփորը իր որդի Ստավրակիոսին Մեծ եկեղեցում ձեռամբ սրբազնագույն պատրիարք Տարասիոսի կայսր թագազրեց, թեև նա ղեռն նման պատվի արժանի չէր ո՛չ իր արտաքինով, ո՛չ իր ֆիզիկական ու մտավոր կարողություններով: Ոչ մի ժամանակ և ոչ մի հարցում արդարությունը չհարգած Նիկեփորը իր համախոհ ու համախորհ մի քանի լիկաոնացիների՝ ավելի ճիշտ գալլ-մարդկանց⁹¹⁹ հրամայեց գիշերով Պրոտե կղզին գնալ և որպես թե առանց իր գիտություն, կուրացնեն Վարդանին, որից հետո ապաստանեն եկեղեցում⁹²⁰: Հրամանը գործադրվեց, և այդ արարքը պատրիարքին ու սենատին, աստվածավախ բոլոր մարդկանց մեծ ցավ պատճառեց: Իսկ անօրինագույն Նիկեփոր կայսրը ձեռնադրվեց, որ ուզում է [ոճրագործ] լիկաոնացիներից վրեժ լուծել, երդվեց սպանել նրանց, նա, ով ամեն ինչ և միշտ ցուցադրական էր անում, և ոչ ինչպես հաճելի է աստծուն: Բոլոր ապօրինություններով հանդերձ այդպիսի հատկութեամբ էլ էր օժտված, որով գահին տիրանալուց առաջ էլ շատերին խարդավանեց: Բայց ովքեր քաջ գիտակ էին նրա գործելու այդ եղանակին, նրանց համար նա շատ ծիծաղելի էր: Նա անչափ անամոթութեամբ հավիտյանս մոռալված ամենապիղծ մոռթր այդ ղեպքի առթիվ ամբողջ յոթ օր դուրս չհանեց կայսերական ննջասենյակից, ուր կեղծավորաբար լաց էր լինում, թեև արդարև կնոջ պես լացկան էր: Անպետք ու կեղծավոր մարդկանցից շատերը հենց այդպես լացկան են լինում: Բայց շատերն իմացան նրա ինչ լինելը: Օգոստոս ամսին նա արաբների դեմ արշավեց, նրանց Փոյուզիայի Կրասոսում⁹²¹ հանդիպեց և մարտ սալով, պարտվեց: Նա մեծ կորուստներ ունեցավ, քիչ էր մնացել, որ ինքն էլ գերի ընկներ, եթե մի քանի քաջ հրամանատարներ մի կերպ չփրկեին նրան դժվար կացությունից:

[A. M. 6297]

[Հռոմայեցիների Նիկե-
փոք կայսեր] 3-րդ տարին

[Արարների առաջնորդ
Ահարոնի] 20-րդ տարին

[Հռոմի Լեոն պապի]
9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տա-
րասիոս պատրիարքի] 21-
րդ տարին

Այդ տարի Պարսկաստանում ապստամբություն բռնկվեց և արաբների առաջնորդը գնաց ապստամբներին խաղաղեցնելու: Իսկ Նիկեփորը հարմար առիթ գտնելով, վերականգնեց Գալատիայի Անկյուրան, Թեբասան և Անդրասոսը⁹²², նա Ասորիք ավարառու զորք ուղարկեց, որը, սակայն, ոչինչ չկատարած վերադարձավ. ընդհակառակը, նա մեծ կորուստներ ունեցավ:

[A. M. 6298]

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփոր⁹²³, Աթոռակալից 9 տարի:

[Հռոմայեցիների Նիկե-
փոք կայսեր] 4-րդ տարին

[Արարների առաջնորդ
Ահարոնի] 21-րդ տարին

[Հռոմի Լեոն պապի]
10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նի-
կեփոր պատրիարքի] 1-ին
տարին

Այդ ինդիկադոնի 14-րդ տարվա փետրվար ամսի 18-ին Կոստանդնուպոլսի սրբազնագույն Տարասիոս պատրիարքը առոք փառք վախճանվեց: Նրա աճյունը փոխադրվեց Պոնտոսի Սահնոն և պասեբի առաջին շաբաթվա չորեքշաբթի օրը ամփոփվեց իր կողմից կառուցված վանքին շաբաթվա չորեքշաբթի օրը ամփոփվեց իր կողմից կառուցված վանքում: Այրիլ ամսի 12-ին, Զատիկի մեծ կիրակի օրը համայն ժողովրդի, կղերի, ապա և կայսրերի ընտրությամբ նախկին ասեկրետ Նիկեփորը կղերի, ապա և կայսրերի ընտրությամբ նախկին ասեկրետ Նիկեփորը սրբազնագույն պատրիարք ձեռնադրվեց: Ստուդիոսի վանքի⁹²³ վանապետը Պլատոնն ու Թեոդորոսը, սակայն, Նիկեփորի ձեռնադրության հավանություն չտվեցին, ղեռ ավելին, նրանք համառությամբ նրա ղեմ դուրս եկան, որոշելով պառակտում առաջացնել: Նրանք պատճառաբանում էին, թե աշխարհական իրավունք չունի իսկույն եպիսկոպոս դառնալ: Նիկեփոր կայսրն ուզեց նրանց քաղաքից արտաքսել, բայց որոշ մարդկանց խորհրդով հրաժարվեց այդ մտքից: Նրանք ասացին, թե պատրիարքի ձեռնադրությունը վերոհիշյալ մարդկանց կարգալուծության և Թեոդորոսին ենթակա շուրջ 700 վանականների վանքի լուծարքի գնով գովելի բան չէ: Բայց իրականում եկեղեցու համար այդ ձեռնադրությունը օտա-

րոտի շէր, ոչ էլ նորահնար, անցյալում շատ ուրիշ նախկին աշխարհա-
կաններ արժանավայել կերպով եպիսկոպոսի⁹²⁴ պաշտօնը վարեցին,
ծառայելով աստծուն:

Նույն տարին արաբների առաջնորդ Ահարոնը մավրոֆորներից, Ասո-
րիբից, Պաղեստինից և Լիբիայից հավաքագրված 300 հազարանոց մեծ
զորքով արշավեց Ռոմանիայի վրա: Գալով Տիանա, նա այնտեղ իր ամ-
բարշտության տունը՝ [մզկիթ] կառուցեց: Պաշարմամբ նա անառիկա-
զույն Հերակլեսի բերդը⁹²⁵ գրավեց, ինչպես և Թեբասան, Մալակոպեան⁹²⁶,
Սիդերոպալուսն⁹²⁷ ու Անդրասոսը: Նա 60 հազարանոց ավարառու զորք
ուղարկեց, որն իջնելով Անկյուրա, թալանեց⁹²⁸ այն ու վերադարձավ: Նի-
կեփոր կայսրը վախով ու տարակուսանքով համակված, իրեն կորցրած
արշավանքի դնաց՝ քաջագործություններ երկնելու նա բազում հաղթա-
նակներ տանելուց հետո, Ահարոնի մոտ [զեսպանություն] ուղարկեց՝
Սինագայի մետրոպոլիտին, Գուլեոնի վանահայր Պետրոսին և Ամաստրի-
սի [վանքի] տնտես Գրիգորին, հաշտություն առաջարկելով: Նրանք եր-
կար բանակցություններից հետո հաշտություն կնքեցին, որի համաձայն
[կայսրությունն արաբներին] տարեկան 30 հազար դահեկան է վճարե-
լու, զրան դումարած երեք դահեկան որպես գլխահարկ կայսեր համար և
երեք էլ՝ իր որդու: Ահարոնը, ստանալով դա, անշափ բերկրացավ ու
հրճվեց, ավելի քան եթե նա բյուր տաղանդ [ոսկի] ստացած լիներ, քան-
զի գտնում էր, որ նա այդ ձևով իրեն ենթարկեց Հռոմեական կայսրու-
թյունը: Նրանք համաձայնության եկան նաև չվերակառուցել իրենց գրա-
ված բերդերը: Բայց հենց որ արաբները վերադարձան, [Նիկեփորն]
անհապաղ վերակառուցեց այդ բերդերը և ամրացրեց: Ահարոնն իմանա-
լով դա, վերստին զորք ուղարկեց և գրավեց Թեբասան, Կիպրոս նավա-
տորմիդ ուղարկեց, քանդեց եկեղեցիները, կիպրացիներին էլ տեղահան
արեց, բազում ավարառություն կատարեց և վերացրեց խաղաղու-
թյունը:

[A. M. 6299]

[Հռոմայեցիների նիկե-
փոր կայսեր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ
Ահարոնի] 22-րդ տարին

[Հռոմի կեսն պապի]
11-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նի-
կեփոր պատրիարքի] 2-րդ
տարին

Այդ տարի Նիկեփորը բուղարների դեմ արշավեց, բայց հասնելով
Ադրիանուպոլիս, իմացավ, որ վասիլիկոսներն ու տագմաները իր դեմ

խռովություն են նյութում, զրա համար բան չարած վերադարձավ: Միայն
իբր ցեղակիցներին պատժած լինելու համար շատերին ծեծի ու քարոթի
ենթարկեց, նրանց զույթը բռնագրավեց: Նա ուղարկեց սպաթար Վարդա-
նին, մականունը Անեմաս, բռնել տվեց ամեն մի պրոսելիտի ու պարի-
կոսի⁹²⁹ և տարավ թրակիա բնակեցրեց, նրանցից զանձվելիք տարեկան
հարկերից բազում ոսկի ահնկալելով: Նա ամեն ինչի էր դիմում ոչ թե
Քրիստոսի սիրույն, այլ պաշտածը ոսկու⁹³⁰:

[A. M. 6300]

[Հռոմայեցիների նիկե-
փոր կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ
Ահարոնի] 23-րդ տարին

[Հռոմի կեսն պապի]
12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նի-
կեփոր պատրիարքի] 3-րդ
տարին

Այդ՝ ինդիկտիոնի 1-ին տարվա սեպտեմբեր ամսին արաբների ա-
ռաջնորդ Ահարոնը նավատորմիղով Հոողոս ուղարկեց Խումեյդին⁹³¹,
որն անհապաղ նավելով գրավեց Հոողոսը և մեծաթիվ գերիներ ձեռք
բերեց: Բայց [կղզու] բերդը մնաց անառիկ: Վերադարձին սակայն նա
բանահայտ կերպով տանուլ տվեց հրաշագործ սուրբ Նիկողայոսին⁹³². գա-
լով Մյուրա⁹³³, նա փորձեց նրա տապանը քարուքանդ անել, բայց [սխալ-
մամբ] մոտիկ գտնվող մի ուրիշը շարդեց: Հանկարծ նավատորմիղն էլ
փոթորկի ու ալեկոծության, կայծակ ու որոտի հանդիպեց, բազում նավեր
խորտակվեցին: Այդ բոլորը աստվածամարտ Խումեյդին ստիպեցին ճա-
նաչել սրբի զորությունը: Նա հեղակարծորեն խուսափեց վտանգից: Նի-
կեփորը իր որդի Ստավրակիոսին կնություն անելու համար համայն
տերություն սահմաններում աղջիկների ընտրություն կատարելով, կանգ
առավ աթենուհի Թեոփանոյի վրա, երանելի Իրենեի ազգականուհու, որ
նշանված էր արդեն և նշանածի հետ բազում անգամ կենակցել, նրա-
նից բաժանեց և ղեկսեմբերի քսանին թշվառական Ստավրակիոսի հետ
ամուսնացրեց: Եվ որպեսզի այստեղ ևս ցույց տա իր խայտառակ անօ-
րինությունը, [Թեոփանոյի] հետ երկու ավելի գեղեցիկ կույս էլ ընտրեց
և բացահայտորեն փշացրեց հարսանիքի այդ օրերին, բոլորի ծիծաղի
առարկան դարձած այդ պիղծը: Փետրվար ամսին բազում իշխանավորներ
նրա դեմ խռովություն նյութեցին, որոշելով կայսր հուշակել քվեստոր
Արշավիր պատրիկին, մի բարեպաշտ և գիտուն մարդու: Բայց վարպետ-
որդի Նիկեփորը իմանալով դա, նրան զանահարելով ու վանական խու-

զելով արտոբեց Բյութանիա, իսկ մնացածներին բրածեծ անելով, արտոբուղարկեց ու գուշը բռնագրավեց, ոչ միայն աշխարհական իշխանավորներին, այլ սրբազան եպիսկոպոսների ու վանականների, Մեծ եկեղեցու կղերից սինկելլոսին, սակելլարիոսին և խարտոֆիլաքսին՝ անվանի ու հարգարժան մարդկանց:

[A. M. 6301]

Արարների առաջնորդ Մոհամմեդ⁹³⁴, իշխեց 4 տարի:

[Հոռոմայեցիների նիկե-
փոր կայսեր] 7-րդ տարին

[Արարների առաջնորդ
Մոհամմեդի] 1-ին տարին

[Հոռոմի Լեոն պապի]
13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի նի-
կեփոր պատրիարքի] 4-րդ
տարին

Այդ ինդիկտիոնի 2-րդ տարվա մարտ ամսին խորին Պարսկաստանում, խորասան կոչվող երկրում մեռավ արաբների առաջնորդ Ահարոնը: Իշխանությունը ժառանգեց նրա որդի Մոհամմեդը, ամեն ինչում անընդունակ մի մարդ: Նրա դեմ նույն խորասանում, հոր զորքերի գլուխն անցած ապստամբություն բարձրացրեց եղբայրը՝ Աբդալան⁹³⁵, որը պատճառ դարձավ արաբների մեջ եղբայրասպան պատերազմի բռնընկման: Ասորիքը, Եգիպտոսը, Լիբիան տրոհվեցին առանձին իշխանությունների, պետական գործերը բար ու քանդ արվեցին, նրանք իրար ու իրենց ենթակա քրիստոնյաներին ջարդեցին, միմյանց ունեցվածք հափշտակեցին և ամեն տեսակի անպատշաճություններ գործեցին: Մեր աստծո Քրիստոսի սուրբ բաղաբում⁹³⁶ եկեղեցիներ ավերվեցին, այդ թըվում և երկու մեծ լավրաների⁹³⁷ վանքերը՝ սուրբ Խարիտոնի ու Կիրակոսի և սուրբ Սաբբայի, ինչպես նաև սուրբ Եվթիմիոսի և սուրբ Թեոդոսի վանքերը: Նման անիշխանությունն ու կոտորածը՝ ինչպես նրանց, այնպես էլ մեր, տեևց 5 տարի: Ստուդիոսի վանահայր Թեոդորոսը⁹³⁸ և նրա եղբայր՝ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոս Հովսեփը, ճգնավոր Պլատոնը և նրանց ենթակա մյուս վանականները հրաժարվեցին ընդունել սրբադնագույն պատրիարք նիկեփորի հաղորդությունը: Պատճառը տնտես Հովսեփին էր, որ ապօրինի կերպով պսակել էր Կոստանդնուին և Թեոդոսին: Նիկեփոր կայսրը առիթից օգտվելով, բազում եպիսկոպոսների ու վանահայրերի հրավիրեց և հրամայեց նրանց դեմ ժողով գումարեն, որի որոշմամբ հիշյալ մարդիկ արտաքսվեցին վանքից ու քաղաքից և քարոք ու զարկվեցին՝ ինդիկտիոնի 2-րդ տարվա հունվար ամսին:

Այդ նույն տարին Ստրիմոնում⁹³⁹ զորքին ոռճիկ վճարելու պահին բուլղարները վրա հասան և հափշտակեցին այն՝ 1100 լիտր ոսկի⁹⁴⁰ և բազում զինվորների, զորավարների ու հրամանատարների կոտորեցին: Այնտեղ մյուս բանակաթեմերից էլ բազմաթիվ տաքսատոսների հրամանատարներ կային, որոնք բոլորն էլ այնտեղ կորան: Բուլղարները ձեռք գցելով նաև նրանց ողջ սուլդոնը, վերադարձան: Նույն տարին, Զատիկի տոնից առաջ, բուլղարների առաջնորդ Կրոմը⁹⁴¹ հարձակվեց Սերգիկայի⁹⁴² վրա, նենգությամբ ու անձեռնմխելիության մասին խոսք տալով, զրավեց այն և հոռոմայեցի 6 հազար զինվորների սրի քաշեց, չհաշված հասարակ ժողովուրդը: Նիկեփորն իբրև թե նրա դեմ դուրս եկավ՝ ավաղ շարաթի երեքշարթի օրը, բայց խոսքի արժանի ոչինչ չարեց: Փախուստով փրկված հրամանատարներին, որոնք իրենից անձեռնմխելիության մասին երաշխեք խնդրեցին, կայսրը հրաժարվեց տալ, որի պատճառով նրանք ստիպված եղան թշնամու կողմն անցնելու: Նրանց թլում էր և հմուտ մեխանիկոս Եվմաթիոս սպաթարը: Նիկեփորն ի վերա ամենայնի մայրաքաղաքի բնակչությանը երդումով հաստատված սակրաներով ուզում էր հավատացնել, որ Զատիկի տոնը ինքը Կրոմի արքունիքում է նշել⁹⁴³: Ուղենալով վերստին զրավված Սերգիկայի [պարիսպները] վերակառուցել, բայց երկյուղելով դրան ընդդիմակալող զինվորներից, իր զորավարներին ու արխոնտներին կարգադրեց համոզեն նրանց, դիմեն կայսեր վերակառուցման մասին խնդրանքով, բայց զինվորները հասկանալով, որ դա [կայսեր] շարամիտ զրգմամբ է կատարվում, վեցերորդ ժամին ապստամբում են նրա և սեփական հրամանատարների դեմ և վրա տալով պատառոտում նրանց վրանները: Գալով կայսերական վրանի մոտ, նրանք բազում լուտանքներ ու անեծքներ թափեցին կայսեր գլխին, ասացին, որ այլևս ի վիճակի չեն տանելու նրա անսահման արծաթասիրությունն ու շարախոհությունը: Կայսրը անակնկալ խռովությունից սաստիկ վեհերոտեց: Նա սեղանից ելավ և նախ փորձեց նիկեփոր ու Պետրոս պատրիկների միջոցով զինվորներին երդամենք տալով ու համոզելով հանդարտեցնել: Նրանք մի փոքր խաղաղվեցին, բայց երիցս թշվառականները կարծես երկրաշարժ լինել կամ երաշտ, «Տեր ողորմյա՛» աղաղակելով մի բլուր բարձրացան, հարմար առիթը ձեռքից բաց թողնելով: Իսկ ամեն մի նենգագործության ընդունակ կայսրը գիշերով հրամանատարներից շատերին ծածուկ կաշառելով, հաջորդ օրը անձնապես հանդես եկավ զինվորների առջև, խոսեց ամենայն բարօրության մասին, ասածը սարսափելի երդամենքով հաստատեց և հավաստիացրեց, թե նրանց զավակի պես է գուրգուրում, որից հետո փութանակի իրեն մայրաքաղաք գցեց:

տեղում թողնելով պրոմոսկրինիոս⁹⁴⁴ Թեոդոսիոս պատրիկին, մականու-
նը Սալիբարաս, լրահեսելու և իմանալու ապստամբների [անունները]:
Երբ զինվորները վերադարձան, նրանց ոռճիկ տալու պատրվակի տակ
նա շատերին բռնեց և սուրբ Մամասում բրածեծ անելուց ու խուզելուց
հետո, աքսորեց, մնացածներին էլ նրիսուպոլիս անցկացրեց, զրժելով
իր տված սարսափելի երգումները: Իսկ նրանք այդ փորձանքի համար
Պերաման⁹⁴⁵ «Հրո գետ» անվանեցին:

[A. M. 6302]

[Հոռոմայեցիների Նիկե-
փոք կայսրի] 8-րդ տարին

[Արաբների առաջնորդ
Մոհամմեդի] 2-րդ տարին

[Հոռոմի Ասոն պապի]
14-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նի-
կեփոք պատրիարքի] 5-րդ
տարին

Այդ տարի, իր պատճառած այդ անաստված տվայտանքներից հետո,
Նիկեփոքն ուզենալով զինվորներին կատարելապես խեղճացնել, Յրաման
տվեց համայն բանակաթեմերից քրիստոնյաներ վերաբնակեցնել Սկլավի-
նիա, իսկ նրանց ունեցվածքը վաճառքի հանել⁹⁴⁶: Այդ բանը գերեվարու-
թյան հավասար մի բան էր, շատերը խելակորույս անարգում էին [սըր-
բությունները], ազալում, որ թշնամիների արշավանք լինի, ուրիշները
կոծում էին հայրական գերեզմանների վրա, երանի տալիս ննջեցյալնե-
րին: Եղան և այնպես, որոնք տառապանքներից խուսափելու համար
բռնեց գախեցին: Նրանք ի վիճակի չէին իրենց հետ տանել զժվարաշարժ
սեփականությունը, տեսնում էին, թե ինչպես է կործանվում հայրերի
բրտիներով ստեղծված կայքը, բոլորին համակել էր տարակուսանքը՝ չբա-
վորները ասված և դեռ ասվելիք տառապանքների պատճառով, իսկ ունե-
վորները՝ նրանց պես տառապելու և որևէ օգնություն ցուցաբերելու ան-
կարող լինելու պատճառով, ավելի ծանր փորձանքների ակնկալությամբ:
Այդ վիճակը սկիզբ առավ սեպտեմբեր ամսին և տևեց մինչև սուրբ Զա-
տիկը: Դրանից հետո նա զիմեց երկրորդ ոճրին, հրաման տվեց աղքատ-
ներին զինվորագրել, նրանց զինելու պարտականությունը զնելով համա-
զյուղացիների վրա, որոնք միաժամանակ պետք է պետությունը յուրա-
բանչյուրի համար վճարեին տասնութ ու կես դահեկան, իսկ պետական
հարկերը՝ համապարա՝ երաշխավորությամբ⁹⁴⁷: Նրա երրորդ շարամտու-
թյունն այն էր, որ նա հաշվառման ենթարկեց բոլորի ունեցվածքը, նրանց
վճարած հարկերը բարձրացրեց, նրանք պարտավոր էին նաև որպես

հարկացուցակներում արձանագրվելու հարկ վճարել 2-ական կեր-
պիս⁹⁴⁸: Զորորդ, նա հրամայեց բարձրացնել թեթևացված ամեն տե-
սակի հարկերը: Հինգերորդ, նա պահանջեց բարեգործական հաստատու-
թյունների՝ որբանոցի, հյուրանոցների և ծերանոցների, եկեղեցիների ու
կայսերական վանքերի պարիկոսների⁹⁴⁹ ծխահարկը⁹⁵⁰ գանձել իր բռնա-
կալության առաջին տարվանից հաշված, կայսերական կուրատորիային⁹⁵¹
հանձնել լավագույն կալվածները, որոնց վճարելիք հարկը բարդել նույն
հարեգործական հաստատությունների մնացած կալվածքների ու պարի-
կոսների վրա, այնպես որ շատերի հարկերը կրկնապատկվեցին, բանզի
նրանց շեներն ու կալվածները կրճատվեցին: Վեցերորդ, նա զորավարնե-
բին կարգադրություն արեց հետևել և մեկից հարստացած աղքատներից
չբամ պահանջել, համարելով, որ նրանք գանձ են հայտնարներել: Յոթե-
րորդ, նա վերջին 20 տարվա ընթացքում որևէ կարաս կամ այլ սպասք
հայտնաբերողներից փող պահանջեց: Ութերորդ, պապերից կամ հայրե-
րից նույն այդ անցած 20 տարվա ընթացքում բաժանված և նրանցից
ժառանգություն ստացած աղքատներին հարկել, իսկ բացառյալ Աբիդու-
սից [այլ վայրերում], հատկապես Դոդեկանեսում գնված ստրուկներին⁹⁵²
համար գանձել 2-ական դահեկան: Իններորդ, ծովափնյա շրջաններում,
հատկապես Փոքր Ասիայի, ապրող և երբեք հողամշակութայամբ չպարա-
պած նավատերերին ստիպեց իր հափշտակած կալվածքներից գնել իր
իսկ սահմանած գներով: Տասներորդ, նա հավաքեց Կոստանդնուպոլսի
իսկ երեկի նավատերերին և յուրաբանչյուրին տասներկուական լիտր ոսկի
[վարկ] տվեց, դահեկանից շորս կերատիոն տեղոսով, չհաշված և սովո-
րական կոմմերկիոնը⁹⁵³: Ես շատից մի շնչին մասը միայն մեջբերեցի,
որը վկայում է նրա բազմերանգ ազահությունը [հագեցնելու] ամեն
տեսակի մեքենայությունների զիմելու մասին: Ինչ վերաբերում է մայրա-
քաղաքի ժողովրդին, ապա անհնարին է շարադրել հարուստների, միջակ-
ների և չբավորների գլխին նրա բերած փորձանքի մասին: Նա լրահեսում
էր մի մասի անձնական կյանքը, դրուում այդ մարդկանց ստոր ծառանե-
րին զրպարտել իրենց տերերին: Սկզբում նա ձևացնում էր, թե չի հավա-
տում նրանց խոսքին, բայց վերջը ընդունում էր զրպարտությունը: Նա այդ
կերպ էր վարվում և՛ երեկի, և՛ աննշան մարդկանց նկատմամբ, լավ
զրպարտողներին պատիվների արժանացնում: Շատ անվանի բնակիչների
առաջին աստիճանի ազգականությունը դարձրեց երրորդ⁹⁵⁴, հուսալով, որ
նրանք շուտով հաշվից դուրս կընկնեն և ժառանգությունն ինքը կստանա:
Անհրաժեշտ է որպես համեմունք կամ նրա գործելակերպի օրինակ հիշա-
տակել և հետևյալ դեպքը: Յորումում ապրում էր մի ինչ-որ կերույա-

րիոս⁹⁵⁵, որ ճակատի քրտինքով բավականին ունեցվածք էր դիզել: Ամենակուլն ահա սրան իր մոտ կանչեց ու ասաց. «Ձեռքդ դիր գլխիս ու երգվիր, ինչքա՞ն ոսկի ունես»: Նա սկզբում պնդում էր, թե աննշան մարդ է, ոչինչ չունի, բայց երբ կայսրը նրան ստիպեց, խոստովանեց ու ասաց, թե ունեցածը 100 լիտր [ոսկի]⁹⁵⁶ է: Կայսրը հրամայեց անհապաղ բերել այն, որից հետո ասաց. «Ինչ՞ից է պետք այդ գլխացավանքը: Ճաշի՞ր ինձ հետ, վերցրո՛ւ 100 դահեկան, բավարարի՛ր դրանով ու գնա՛»:

[A. M. 6303]

[Հոտմայեցիների նիկեփոր կայսեր] 9-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 3-րդ տարին

[Հոտմի Ասոն պատի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի նիկեփոր պատրիարքի] 6-րդ տարին

Նիկեփորն այդ տարի է՛լ ավելի սաստկացրեց քրիստոնյաների կեղեքումը, դաժան հսկողություն սահմանելով ամեն տեսակի ձիերի, եղջյուրավոր անասունների ու բերքի գնման վրա՝ անիրավորեն բռնագրավելով հարուստների ունեցվածքը և տուգանելով նրանց: Նա, ով օրենք հրապարակեց՝ ընդդեմ վաշխառության, նավատերերից տոկոս էր պահանջում: Նա բազում այլ շարիքներ հորինեց, որոնց մասնակի շարադրումն անգամ տաղտկալի է նրանց, ովքեր ուզում են կատարվածի մասին համառոտ գաղափար կազմել: Հոկտեմբեր ամսի 1-ին, երեքշաբթի օր, վանականի սրբմ հազած մի անհայտ մարդ, դինվորներից մեկի սուրբ քաշելով, խուժեց պալատ՝ Նիկեփորին սպանելու մտադրությամբ: Այնտեղ կանգնած երկու հոգի նրա վրա նետվեցին, բայց նրանից ծանր վերքեր ստացան: Նրան բռնեցին, սոսկալի լիկանքների ենթարկեցին, բայց նա պատճառաբանելով, թե դիվահար է, ոչ որի շժատնեց: Կայսրը նրան գժանոց նետեց: Ժողովրդի մեծ մասն այդ բանը շատ վատ նշան համարեց և՛ իշխողների, և՛ հպատակների համար, ինչպես ամբարիշտ Նեստորիոսի դեպքում: Կայսրը մանիքեցիների (նրանց այժմ պավլիկյան են կոչում)⁹⁵⁷ ամենազերմ բարեկամն էր, նաև Փոքուզիայում և Լիկաոնիայում ապրող աթինգանների⁹⁵⁸ իր հարևանների, որոնց բանդագուշակություններից ու արարողություններից բերկրում էր: Ի դեպ, երբ Վարդան պատրիկը իր դեմ ապստամբություն բարձրացրեց, Նիկեփորը հենց սրբանց հրավիրեց և նրանց հմայություններով է, որ Վարդանին պարտության մատնեց: Կայսրը գլուխը խոնարհած մի ցլի եղջյուրներից մի փոսի

մեջ ձողին կապեց և նրա բառաշելու ու գալարվելու ժամանակ փողոտեց, նրա մորթին հակառակ ուղղությամբ պտտվող աղացում աղաց և հմայական խոսքեր արտասանելով, հազթանակ սարավ: Այդ բանն աստված թույլ տվեց մեք բազում մեղքերի համար: [Աղանդավորները] նրա իշխանության օրոք սկսեցին աներկյուղ գործել⁹⁵⁹ և թեթևամիտներից շատերը նրանց անօրեն վարդապետության զոհը դարձան⁹⁶⁰: Հեքսակիտնիոնում⁹⁶¹ մի ոմն նիկողայոս սուտանուն անապատական և նրա մարդիկ անարգում էին ուղղափառությունն ու սրբապատկերները, նրանց օժանդակում էր Նիկեփորը, վշտացնում պատրիարքին ու աստվածահաճ կյանք վարող բոլոր մարդկանց: Պատրիարքը բազում անգամ դիմեց կայսեր՝ միջոցներ ձեռք առնի [աղանդավորների] դեմ, բայց հանդիպեց նրա դալբույթին. նա, լինելով աստվածային պատգամների կործանող, իրար հանդեպ թշնամություն տածող մարդկանց առթիվ սաստիկ հրճվում էր, ծագր ու ծանակի ենթարկում բոլոր այն քրիստոնյաներին, որոնք սիրում էին մերձավորին⁹⁶²: Նա ջանք էր թափում տեղի անտեղի բոլոր քրիստոնյաներին Մագնավրայի պատժիչ ատյանից անցկացնել, որպեսզի ոչ ոք չփորձի իր ամբարիշտ գործերի դեմ հանդես գալ: Նրա կարգադրությամբ սպաներն իրավունք ունեին որպես ծառա օգտագործել եպիսկոպոսներին ու կղերականներին, եպիսկոպոսարաններում ու վանքերում պոսներին ու կղերականներին, եպիսկոպոսարաններում ու վանքերում էր ներքինց տեր զգալ ու լուրացնել նրանց ունեցվածքը: Նա ծանակում էր ներքանց, ովքեր հնուց սկսած աստծուն ոսկե կամ արծաթե սպասք էին նվիրաբերել, ասում, որ եկեղեցու սպասքը պետք է հասարակաց սեփականությունը դարձնել, ինչպես Հուդան՝ մյուռոնը տերունական: Իրենից առաջ թագավորած բոլոր կայսրերին ապիկար էր համարում, ամբողջապես մերժում [աստծո] նախախնամությունը, պնդում, թե կայսրից ավելի հզորը չկա, եթե նա իշխում է խոհեմաբար: Բայց նա, աստված նրան կործանի, իր հաշիվների մեջ սխալվեց: Նույն՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա փետրվար ամսին սուրբ պասեքի 1-ին շաբաթ օրը սարակինոսները Եվխախտա⁹⁶³ [վաչրում] դիմադրության հանդիպեցին արմենիակների զորավար Լեոնի կողմից, բայց պարտության մատնելով նրան, խլեցին զորքի ոտձիկը, բազում մարդկանց էլ գերի բռնեցին: Դա 13 տաղանդ [ոսկի] էր, այսինքն 1300 լիտր: Հակառակ այդ բոլորին, Նիկեփորն իր ազահուության վերջ չտվեց: Այդ նոր Աքաբբը, Յալարիսից ու Միդասից ավելի ընշաբաղջը⁹⁶⁴, բյուր այդ նշաններից էլ խելք չդրած, իր որդի Ստավավելի ընշաբաղջը⁹⁶⁵, բյուր այդ նշաններից էլ խելք չդրած, իր որդի Ստավավելի ընշաբաղջը⁹⁶⁵, նախապես կարգադրելով գեներալնի լոգոթետ Նիկետաս պատրիկին բարձրացնել եկեղեցիների ու վանքերի պետության

նր վճարած հարկերը, իսկ մեծատուններից գանձել անցած ութ տարիների համար հարկ⁹⁶⁶, որի առթիվ մեծ վայնասուն բարձրացավ: Իր մտերիմ դրանիկներից մեկի՝ պատրիկ Քեոդոսիոս Սալիբարասի հանդիմանության, թե «Տե՛ր, բոլորը բարձրագույն բողոքում են մեր դեմ և փորձության ժամանակ ամենը պիտի խնդան մեր անկման առթիվ», նա պատասխանեց. «Եթե աստված կարծրացրել է իմ սիրտը, ինչպես փարավոնի⁹⁶⁷, էլ ի՞նչ լավ բան են ակնկալում իմ հպատակները: Նիկեփորից, ո՞վ Քեոդոսիոս, տեսածիցդ տարբեր բան մի՛ սպասիր»: Տերը վկա, Քեոդոսիոսն ինքն է ինձ պատմել այդ մասին: Կայսրը ոչ միայն թրակիալից, այլև պերատիկա բանակաթեմերից զորքեր հավաքագրելով, նաև բազում չքավորների, որոնք անձնապես իրենք էին իրենց պարենը, պարսատիկներին ու գուրգերը ապահովել, և հակառակ այն բանի, որ նրանք հայհոյում էին [իրեն], զինվորներով հանդերձ բուլղարների դեմ տարավ: Կրումը հակառակորդի մեծաբանակությունից վեհերտած (նրանք արդեն Մարկելլոսում էին գտնվում) խաղաղություն խնդրեց, սակայն կայսրն իր շարամտությամբ և իրեն միաբան խորհրդականների խորհրդով մերժեց: Եվ ահա բազում շրջանցիկ դժվարանցանիլի, վտանգներիով լի ճանապարհներով հոստոտախոսը հուլիս ամսի 20-ին (այն ժամանակ ամեն ինչի ավերում գուշակող շնաստղը ծագեց) Բուլղարիա մտավ, հաճախակի կրկնելով «Ո՞ր պատրեաց է զԱբարաբ»⁹⁶⁸ դարձվածքը, թե «Աստված է, թե սատանան մեկ է, նա քար է տալիս մարդուն նրա կամքից անկախ»: Նրա նախքան [Բուլղարիա] ոտք դնելը, իր մտերիմ ծառա Բյուզանդիոսը, հափշտակելով կայսերական հանդերձանքը և 100 լիտր ոսկի, Մարկելլոսից Կրումի մոտ է փախչում: Ետերը նրա փախուստը Նիկեփորի համար վատ նշան համարեցին: Առաջին երեք օրվա ընդհարումների արդյունքները նա իր համար հաջող համարեց, բայց դրանց պատճառը նա վերագրում էր ոչ թե աստծուն, այլ Ստավրակիոսի բախտին ու խելքին: Նա սպանոնաց այն հրամանատարներին, որոնք դեմ էին [Բուլղարիա] ներխուժելուն: Նա հրամայեց անգթորեն կոտորել անասուններին, երեսաններին, անխտիր բոլորին, սպանված յուրալինների մարմինները թողեց անթաղ, նրա միակ մտահոգությունը դիակապուտությունն էր, նա կողպեց ու կնքեց Կրումի գանձատունը՝ սեփականը համարելով: Նա կտրեց ականջներն ու մարմնի այլ մասերը այն քրիստոնյաների, որոնք ձեռք էին տվել կապուտին, կրակի տվեց Կրումի, այսպես կոչված, ապարանքը⁹⁶⁹ և նա սաստիկ խեղճացած ասաց. «Ահա, հաղթեցիր, ցանկացածդ վերցրու և հեռացիր խաղաղությամբ»: Բայց խաղաղության թշնամին չընդունեց զա, որի վրա Կրումը դայրա-

ցած փայտյա ամրություններով փակած երկրի մուտքերն ու ելքերը ամրացրեց: Նիկեփորը տեղեկանալով այդ մասին, ապշահար եղավ, շփտեր ինչ քայլի դիմի: Իր մտերիմներին նա ասում էր կորստյան մասին, որ «Եթե անգամ թևավոր դառնանք, ոչ ոք հույս չունենա, թե կարծի կործանումից»: Այդպիսին էր վիճակը երկու օր՝ հինգշաբթի և ուրբաթ: Ետքա՞ գրչեր իրարանցումները և Նիկեփորին ու նրա մարդկանց շրջապատած զինված ամբոխի մասին տարածված լուրերը բոլորին հավասարակշռությունից հանեցին և երբ նախքան լուսանալը բարբարոսները խուժեցին Նիկեփորի և նրա մտերիմ մեծամեծների վրանների վրա, շարաշար խողխողեցին նրան⁹⁷⁰, ինչպես և Աետիոս պատրիկին, Պետրոս պատրիկին, Միսիննիոս Տրիֆիլլիոս պատրիկին, Քեոդոսիոս Սալիբարաս պատրիկին, ով շատ տանջեց ու վատություններ գործեց երանելի Իրենեին, էպարքոս պատրիկին⁹⁷¹, Անատոլիկոն [բանակաթեմի] զորավար Ռոմանոս պատրիկին և բազում այլ պրոտոսպարաների ու սպաթարների, տագմաների հրամանատարների, էքսկուրիտորների գոմեստիկոսին, կայսերական վիզլալի դրոնգարին, Թրակիալի [բանակաթեմի] զորավարին, բանակաթեմերի բազում զորավարների, անթիվ զինվորների: Քրիստոնյաների ողջ ծաղիկը կոտորվեց, բոլոր զենքերը, կայսեր նշանակները կորան: Քրիստոնյաները թող մի անգամ էլ շտեմենն այդ օրվա ավելի քան ողբալի խայտառակությունը: Այդ բանը տեղի ունեցավ ինդիկտինի 4-րդ տարվա հուլիս ամսի 26-ին⁹⁷², Կրումը Նիկեփորի զուլսը կտրեց և փայտի ծայրին բազում օրեր կախած պահեց՝ ի տես իր մոտ ժամանող այլազգիների և համոթ մեք⁹⁷³: Այնուհետև զլխի ոսկրե մասը թողնելով և դրսից արծաթապատելով, պարծանքով նրանով զինի էր հյուրասիրում [իր մոտ ժամանած] սկլավենների մեծամեծներին: Բազում [հոռմայեցիներ] մեկ օրում որբացան ու այրիացան, անդադրում ողբ տիրեց, միայն Նիկեփորի սպանությունը շատերի համար միախառնություն դարձավ: Փրկվածներից և ոչ ոք չկարողացավ ճշգրիտ պատմել նրա սպանության մանրամասնությունները: Ոմանք պատմում են, որ երբ նա ընկավ, քրիստոնյաներն անգամ նրան հարվածեցին: Իսկ նրա կնաբար ծառաները, որոնց հետ նա կենակցում էր, մի մասը ցանկապատի կրակի, իսկ մյուսը նրա հետ սրի զոհ դարձան: Քրիստոնյաները դժբախտություն չեն ունեցել նրա թագավորությունից ավելի դաժանը ճաշակելու: Իրենից առաջ թագավորած ագահ, անառակ. բարբարոսների պես դաժան բոլոր թագավորներին նա գերազանցեց: Այդ մասին փոքրիշատե գրելն անգամ մեզ համար շատ դժվար է, ապագա սերունդներին դա անհավատալի կթվա:

Մի խոսքով, ինչպես առածն է ասում, «կերպասի որակը ծայրից է երեւում»: Ողի աչ կողմում ծանր վերք ստացավ և Ստավրակիոսը՝ նրա որդին և մի կերպ մարտից ողջ դուրս գալով, ցավատանջ Ադրիանուպոլիս հասավ: Սխուրիի դոմեստիկոս Ստեփանոս պատրիկը Թեոկտիստոս մագիստրոսի մասնակցութեամբ Ստավրակիոսին կայսր հռչակեցին, որը դիմելով վերապրած զինվորներին, հոր գեմ խոսեց, մի բան, որ նրանց շատ դուր եկավ: Անվնաս փրկվեց և Միքայել կուրապաղատը, որ հակառակ իր մտերիմների կաթոգին խնդրանքին իրեն կայսր հռչակեմ, մերժեց՝ նիկեփորին և Ստավրակիոսին տված երդումների պատճառով: Ստեփանոս դոմեստիկոսը հակազդվեց նրան՝ Ստավրակիոսի վերապրելու մասին կասկած հայտնելով: Թեոկտիստոս մագիստրոսը կողմնակից էր Միքայելի թագավորելուն: Ստավրակիոսը առատ արյունամիզություն ունեցավ, նրա ազդերն ու ոտքերը փայտացան և նրան Բյուզանդիոն բերեցին պատգարակով: Նիկեփոր պատրիարքը, որ շատ լավ էր տրամադրված դեպի նա, նրան խորհուրդ էր տալիս իջեցնել աստծո բարկությունը՝ ամոքելով իր հոր կողմից տուժածներին, բայց հոր խելքի հարազատ ժառանգը պատասխանեց, թե երեք տաղանգ[ոսկուց]⁷⁷⁴ ավելի տալ չի կարող: Այդ գումարը նրա հոր ապօրինության մի շնչին մասնակին էր միայն: Հակառակ դրան, նա խոստացածն էլ չէր ուղղում կատարել, հուսալով, թե կապրի: Իր մեջ կրելով հոր անհաշտ ոգին, նա ավելի հաճախակի էր անարդում Թեոկտիստոս մագիստրոսին, Ստեփանոս դոմեստիկոսին, Միքայել կուրապաղատին: Նա միանգամայն խորշում էր Պրոկոպիայից՝ հարազատ քրոջից, ավզուտա Թեոփանոյի զրգամամբ իր դեմ ոտնձգություններ կատարած լինելու համար: Այդ թշվառական [Պրոկոպիան] լինելով անզավակ, հույս ուներ սուրբ Իրենեի նման իշխանության սանձերը ձեռք գցել: Իսկ Ստավրակիոսը ապաքինվելու հույսը կտրած, ջանում էր թագավորություն իր կնոջ տալ, կամ էլ քրիստոնյաների արդեն ճաշկած շարիքների վրա մի նորը բարդել, իշխանությունը տալով դեմոսի ձեռքը: Դրանից սարսափահար նիկեփոր պատրիարքը, Թեոկտիստոս մագիստրոսը, Ստեփանոս դոմեստիկոսը, Միքայել կուրապաղատը, իրենց մեծ թշնամանքին վերջ տալով, ինդիկտիոնի 5-րդ տարվա սեպտեմբեր ամսի վերջին բարեկամացան: Հոկտեմբեր ամսի 1-ին երեկոյան Ստավրակիոսը Ստեփանոս դոմեստիկոսին կանչեց և հարցրեց, ինչպես անել, որ կարողանան իր փեսա Միքայելին տնից բերեն ու կուրացնեն: Ստեփանոսի պատասխանին, թե այս պահին դա անհնարին է՝ նրան պահպանող զորքի, ինչպես և նրա տունը ապահով վայրում գտնվելու պատճառով, Ստավրակիոսը

խնդրեց այդ խոսակցության մասին ոչ ոք չիմանա: Իսկ [Ստեփանոսը] հշմարտանման խոսքերով նրան օրորելով, ամբողջ զիշերվա ընթացքում ծածկած ձիարշավարանում կենտրոնացրեց տազմանների վերապրած զինվորներին՝ իրենց հրամանատարներով հանդերձ, հենց այդ Միքայելին կայսր հռչակելու համար: Վաղ առավոտյան ողջ սենատը պալատ ժամանեց և նրան կայսր հռչակեց, ինչպես այդ մասին ստորև կասվի: Նիկեփոր պատրիարքը Միքայելից պահանջեց [իր] ուղղափառ հավատքի, ձեռքերը քրիստոնյաների արյամբ շներկելու, նաև հոգևորականությունն ու վանականությունը, մի խոսքով կղերը հալածանքի շենթարկելու մասին սեփական ձեռքով զրված փաստաթուղթ:

[A. M. 6304]

Աշխարհի արարչագործության 6304 թ.	Քրիստոսի մարդեղության 804 թ.	Հոռոմայեցիների Միքայել կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին
Ներքևների առաջնորդ Մահամեկի 4-ամյա իշխանության 4-րդ տարին	Հոռոմի Լեոն պապի 16-ամյա աթոռակալության 16-րդ տարին	Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի 9-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ ինդիկտիոնի 5-րդ տարվա հոկտեմբեր ամսի 2-ին, հինգշաբթի օրը, 1-ին ժամին, ամենաբարեպաշտ Միքայել կուրապաղատը ձիարշավարանում ամբողջ սենատի և տազմանների կողմից հոռոմայեցիների կայսր հռչակվեց⁷⁷⁵: Ստավրակիոսը, լսելով նրա հռչակման մասին, աչքափ պարսավեց պատրիարքին, ապա իր ազգական Սիմեոն վանականի ձեռքով տեղնուտեղը մազերը խուզեց և վանականի սքեմ հագավ: Պատրիարքը Միքայել կայսեր և վերջինիս քրոջ հետ պալատ գալով, Ստավրակիոսին պաղատում էին եղածի վրա շտիքի, քանզի իրենք այդ քայլին զիմեցին ոչ թե դավադրաբար, այլ նրա վերապրելու մասին հուսաբեկ եղած: Իսկ նա իր հորենական վատությունը գաղազած, շքեղությունեց դա, ասելով նրան. «Նրանից լավ ընկեր դու չես գտնի»: Յերեկվա 4-րդ ժամին Մեծ եկեղեցու բեմում ձեռամբ նիկեփոր պատրիարքի Միքայելը թագադրվեց և այդ առթիվ ընդհանուր բերկություն եղավ: [Միքայելը] պատրիարքին 50 լիտր ոսկի նվիրեց, իսկ կղերին⁷⁷⁶ 25: Կենելով մեծահոգի և անարծաթասեր մարդ, նիկեփորի ընչաքաղցությունից աուժած բոլորի սիրտն առավ, նվերներով սիրաշահեց սենատն ու զինվորներին: Նույն ամսի 12-ին Պրոկոպիան Ավզուստեոնի տրիկլինում

ավգուստա թագադրվեց: Նա սենատին բազում նվերներ շնորհեց: Բանակաթեմերի Բուլղարիայում զոհված զինվորների այրիներին 5 տաղանդ ոսկի նվիրեց, Թեոփանոյին, Ստավրակիոսի միանձնուհի դարձած կնոջ, Նիկեփորի օրոք ողբալի վիճակում գտնվող նրա ազգականներին մեծ հարստություն նվիրաբերեց, վանքի վերածելու համար նրան մի գեղեցիկ տուն շնորհեց՝ «Հրեական» կոչվողը, ուր թաղվեց Ստավրակիոսը: Նա հարստացրեց բոլոր պատրիկներին ու սենատորներին, քահանայապետերին, քահանաներին ու վանականներին, զինվորներին ու ազգատներին՝ և՛ մայրաքաղաքում, և՛ բանակաթեմերում, մի քանի օրվա ընթացքում մեջտեղից վերացավ Նիկեփորի անափ արծաթասիրությունը, որը և նրա [Նիկեփորի] շարաչար կործանման պատճառ դարձավ: Միքայելն իր այդ լավագույն գծերի հետ միասին, նաև բարեպաշտ և ուղղափառագույն լինելով, տխրում էր, երբ որևէ հիմնավոր կամ անհիմն պատճառով բաժանվում էին սուրբ եկեղեցուց: Նա անդադար խնդրում էր սրբազնագույն պատրիարքին և կարող մարդկանց աջակցել հասարակաց անդորրն ապահովելու, այդ թվում և դժնդակ բանտերում արգելափակված Ստուդիոսի վանահայր Թեոդորոսին, Պլատոնին և Թնասաղոնիկեի արքեպիսկոպոս Հովսեփին՝ Թեոդորոսի եղբոր: Նա ջանաց կապ հաստատել նրանց վանքի ռեկավարների հետ, ինչ որ արեց: Բացի այդ, նա ֆրանկների թագավոր Կարոլոսի մոտ դեսպանություն ուղարկեց՝ խաղաղության և իր օրդի Թեոփիլակտոսի հետ խնամիանալու համար, իսկ սրբազնագույն պատրիարք Նիկեփորը Հռոմի սրբազնագույն Լեոն պապին⁹⁷⁷ ժողովական թղթեր հղեց: Նախկինում Նիկեփոր կայսրը թույլ չէր տալիս նրան այդ բանն անել: Ինդիկտիոնի 5-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին, հինգշաբթի օր, ամենախաղաղասեր Միքայել կայսրն իր օրդի Թեոփիլակտոսին, ձեռամբ Նիկեփոր պատրիարքի, Մեծ եկեղեցու բեմում կայսր թագադրեց, սուրբ սեղանին ընծայարբերեց թանկագին զարդեր՝ ոսկե, թանկագին քարերով ազուցված սկիհներ, նաև հին՝ ոսկով և ծիրանիով, փայլուն գործված, հրաշալի սրբապատկերներով զարդարված տետրավելներ⁹⁷⁸: Իսկ պատրիարքին նվիրեց 25 լիտր ոսկի, սրբազան կղերին՝ 100 լիտր, դրանով ձոխացրեց սուրբ տոնն⁹⁷⁹ ու որդու հուշակումը: Ամենաբարեպաշտ կայսրը աստվածային մեծ ջերմեռանդությամբ ու սրբազնագույն պատրիարքի և ուրիշ բարեպաշտների խորհրդով⁹⁸⁰ մղված, այժմ պավլիկյան կոչվող մանիքեցիներին, Փյուզգիայում և Լիկանոնիայում ապրող աթինգաններին մահապատիժ սահմանեց, բայց շարամիտ խորհրդականների միջամտությամբ, թե իբր նրանք կղզյան, իր որոշումն իրականացնելուց

ետ կանգնեց, թեպետև այդ մոլորությունները գերված մարդկանց համար անհնարին բան է ապաշխարելը: Խորհրդականները տգիտորեն քարոզում էին, թե հոգևորականի համար անթույլատրելի է մահապատիժ առաջարկել ամբարիշտների համար, այդ հարցում նրանք իբր ամեն տեսակետից ոտնահարած են լինում սուրբ գիրքը: Բայց չէ՞ որ ծայրագույն առաքյալ Պետրոսը մի ստի համար սպանեց Անանիային ու Սապփիրային⁹⁸¹, չէ՞ որ մեծ Պավլոսն աղաղակում է, թե «նման արարքներ գործողները մահվան են արժանի»⁹⁸², և այն էլ լուկ մարմնական մեղքի համար, էլ ինչպե՞ս հակադիր են սուրբ դրոց նրանք, ովքեր սրով փրկվում են հոգեկան ու մարմնական ամենայն աղտեղությունից լի, դիվապաշտ մարդկանց: Հակառակ բոլորին բարեպաշտ Միքայել կայսրն այնուամենայնիվ նրանցից շատերին կոտորեց⁹⁸³: Ստացած ծանր վերքից Ստավրակիոսի մեջքը թարախակալեց, սաստիկ զարշահոտության պատճառով ոչ ոք չէր կարողանում նրան մոտենալ: Ինդիկտիոնի 5-րդ տարվա հունվար ամսի 11-ին նա վախճանվեց, իբրև թե թագավորելով 2 ամիս ու 6 օր: Մայիս ամսի 14-ին, շաբաթվա 6-րդ օրը արևի մեծ խաճարում եղավ, որ երեքուկես ժամ տևեց, ժամը 8-ից մինչև ժամը 11-ը: Հունիս ամսի 7-ին Միքայելը բուլղարների դեմ արշավեց: Պրոկոպիան ուղեկցեց նրան մինչև Ցուրուլու⁹⁸⁴: Բուլղարների առաջնորդ Կրումը պաշարմամբ գրավեց Դեբելտոսը⁹⁸⁵, որի [բնակչությունն] իր եպիսկոպոսի հետ միասին նրա կողմն անցան, նրանց նա վերաբնակեցրեց: Կայսեր խորհրդականների բազում շարամտության պատճառով [զորքերը], հատկապես Օպսիկիոնի և Թրակիսիոնի, որոշեցին խռովության և անկարգությունների դիմել: Միքայելը նվերներով ու հորդորներով հանգըստացրեց ու հանդարտեցրեց նրանց: Բուլղարները, իմանալով զորքերի խռովության, նրանց պատերազմից վախենալու, տաքսատիոնին⁹⁸⁶ շնազանդվելու մասին, է՛լ ավելի ընդարձակեցին իրենց տիրապետությունը Թրակիայի և Մակեդոնիայի վրա: Այն ժամանակ էր, որ քրիստոնյաները Անքիալոսն ու Բերիան թողեցին ու փախան, երբ իրենց ոչ ոք չէր հալածում, ապա և Նիկեան⁹⁸⁷ ու Պրոբատոն բերդը և մի քանի այլ ամրություններ, նմանապես Ֆիլիպպոպոլիսն ու Ֆիլիպպին⁹⁸⁸: Ստրիմոնում հաստատված վերաբնակներն առթից օգտվելով փախան, Ստրիմոնում հաստատված վերաբնակներն առթից օգտվելով փախան, վերադարձան իրենց տեղերը: Այդ բոլորը Նիկեփորի խելացնորությունը խարազանող աստծո ցասումն էր, որի պատճառով իր երևակայական հաջողությունները, որոնցով նա պարծենում էր, արագորեն փուլ եկան: Մի կողմ թողած շատերի շարափառությունը, պավլիկյանների, աթինգանների, պատկերամարտների և տետրադիտների⁹⁸⁹ վխտացող աղանդ-

գիմադրութեան, առաջ ալն: Կայսրը նոյնմբեր ամսի 1-ին ստիպված իր մոտ հրավիրեց պատրիարքին՝ խաղաղութեան շուրջ խորհրդակցելու: Ներկա էին նաև Նիկիայի, Կյուզիկոսի մետրոպոլիտները, ինչպես և խորհրդակցականները՝ Ստուդիոսի վանահայր Թեոդորոսի հետ: Պատրիարքը, մետրոպոլիտներն ու կայսրը կողմնակից էին հաշտութեան, բայց վատ խորհրդակցականները, Ստուդիոսի վանահայր Թեոդորոսի հետ գեմ էին դրան: Նրանք պնդում էին, թէ «չպետք է հաշտութիւն կնքել աստվածային պատգամի վերացման գնով, չէ՞ որ Տերն ասաց. «Որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս»: Նրանք շփոթեին ոչ իրենց ասածը, ոչ էլ թե իրենց պնդումներն ինչին են վերաբերում: Նախ և առաջ նրանցից և ոչ ոք մեր կողմը չի անցնում, իսկ իրենց արքունիքում եղած մեր մարդկանց մենք ենք, որ մատնեցինք: Եթէ [բուլղարների] հետ մենք խաղաղութեան մեջ ապրեինք, ապա կփրկեինք նրանց: Երկրորդ, թեկուզ և մի քանի հոգի էլ անցել են մեր կողմը, մենք պետք էր ավելի շուտ շատերի ու հայրենակիցների փրկութեան մասին մտածենք, քան թե անորոշ ու վերացական բաներով օրորվենք: Աստուծոն ավելի հաճելի է շատերի փրկութիւնը, քան թե քչերի, փոքր օգուտի համար մեծ վնաս կրելը ամենամեծ տխմարութիւնն է: Եսկ եթէ որ իւրոց և մանաւանդ քնտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է և շար ևս քան զանհաւատսն է»⁹⁹⁸ ասում է Պողոս առաքյալը, էլ ո՛ւր մնաց ասույթը, թե «Ծս խաղաղարար էի խաղաղութիւնն ատեցողների հետ»⁹⁹⁹: Բայց զուցե նրանք Պողոսից ու Գավթից էլ ավելի իմաստուն են: Այժմ ո՞վ է երիցս երանելի Գերմանոսից ավելի իմաստուն: Գուցե ավերիչ մտայնութեամբ խաղաղութեան գործը տապալող շար խորհրդակցանները: Ինչպես ասվեց, այդ բանը տեղի ունեցավ նոյնմբեր ամսի 1-ին, իսկ նույն ամսի 4-ին գիսավոր աստղ երևաց, երկու, իրար միացած մահիկների ձևով, որոնք այնուհետև բաժանվեցին իրարից և տարբեր ձևեր ընդունեցին, մինչև իսկ անգլուխ մարդու: Հաջորդ օրը տեղ հասավ Մեսեմբրիայի առման մասին ողբալի լուրը: Բուլղրին երկյուղ պատեց՝ ավելի մեծ փորձանքներ ակնկալելով: Թշնամիները Մեսեմբրիան գտնելով մարդկանց ապրելու համար անհրաժեշտ բոլոր պարագաներով լի, Գերելտոսի հետ տիրացան նրան: Նրանք քաղաքում գտան պղնձե 36 սիֆոն¹⁰⁰⁰, նրանցով արձակվող բազում հեղուկ կրակ, շատ ոսկի և արծաթ: Նույն տարին Պաղեստինի ու Ասորիքի բազմաթիվ բրիստոնյաներ, վանականներ ու աշխարհականներ, արաբների սաստիկ հալածանքներից խուսափելով, փախան ու ապաստանեցին Կիպրոսում: Ասորիքում, Եգիպտոսում և Աֆրիկայում, արաբների հա-

մայն տիրապետութեան մեջ համընդհանուր անիշխանութիւն էր տիրում, գյուղերում ու քաղաքներում նրանց աստվածակործան ժողովրդի կողմից սպանութիւններ, հափշտակութիւններ, շնութիւններ, զազրագործութիւններ, ամեն տեսակի աստվածատյաց արարքներ էին կատարվում: Պղծվեցին մեր աստծո սուրբ քաղաքի¹⁰⁰¹ նվիրական վայրերը՝ սուրբ հարութեան, կառափելու վայրը¹⁰⁰² և այլն, ավերակ դարձան սուրբ խարիտոնի և սուրբ Սաբայի անապատում գտնվող հռչակավոր լավրաները, մնացած վանքերն ու եկեղեցիները, [բրիստոնյաների] մի մասը նահատակվեց, մյուսը՝ Կիպրոս գնաց, այնտեղից էլ Բյուզանդիոն: Բարեպաշտ Միքայել կայսրը և սրբազնագույն Նիկեփոր պատրիարքը սիրալիք հյուրընկալութիւն ցույց տվեցին, քաղաք եկածներին մի երեւելի վանք նվիրեցին, իսկ Կիպրոս մնացած վանականներին ու աշխարհականներին մեկ տաղանդ ոսկի ուղարկեցին և ամեն օժանդակութիւն ցուցաբերեցին: Թեև Միքայելը բոլորի հանդեպ բարյացակամ էր ու սիրելի, պետական գործերում անընդունակ էր, նրան իրենց ափի մեջ էին առել Թեոկտիստոս մագիստրոսը և մնացած իշխանավորները: Փետրվար ամսին Բուլղարիայից փախած երկու բրիստոնյաներ կայսեր փետրվար ամսին Բուլղարիայից փախած երկու բրիստոնյաներ կայսեր հայտնեցին, թե Կրումը որոշել է հանկարծակի Թրակիայում գտնվող [զորքերի] վրա հարձակվել: Կայսրը ամսի 15-ին քաղաքից դուրս եկավ, իսկ Կրումը աստծո նախախնամութեամբ մեծ զոհեր տալով ձեռնունայն վերադարձավ: Կայսրը, հասնելով Ադրիանուպոլիս և կարգավորելով քաղաքի գործերը, բերկրալից վերադարձավ: Նա բարձրացավ սուրբ Տարասիոս պատրիարքի վանքը և ավզուստա Պրոկոպիայի հետ նրա հոգեհանգիստը կատարեց, նրա սուրբ դամբարանը 95 լիտր¹⁰⁰³ արժողութեամբ արծաթե տախտակով¹⁰⁰⁴ փառավորեց: Մեսեմբրիայի անկումից հետո կայսրը Կրումի հետ հաշտութիւն կնքելու հույսը կրտրած, բոլոր բանակաթեմերից զորք հավաքելով, հրամայեց զարուհը շարժելով քաղաքից դուրս եկավ, ավզուստա Պրոկոպիան նրան դարձյալ ուղեկցեց՝ մինչև Հերակլիայի մոտ գտնվող Ակվեդուկը: Զորքերը դրանից դժգոհ, սկսեցին վատաբանել ու ծանակել Միքայելին: Մայիս ամսի 4-ին Յլի համաստեղութեան 12-րդ մասում, երբ արեղակը ծագում էր ժամադետում, խավարում եղավ, ամբոխներին մեծ սարսափ համակեց: Իսկ կայսրը զորավարներով ու զինվորներով շրջում էր Թրակիայով մեկ, ո՛չ Մեսեմբրիայի դեմ էր գնում, ո՛չ էլ թշնամիներին վնասելու որևէ անհրաժեշտ քայլի դիմում: Նա սոսկ ականջ էր կախում պատե-

րազմի փորձ շունեցող իր խորհրդականների դատարկ խոսքերին, թե թշնամին չի հանդգնի հարձակվել սեփական երկրում գտնվող կայսեր վրա: Պարենի պակաս զգացող և հարձակումներով ու հափշտակությամբ պարապող ազգակից զինվորները տեղացիներին համար ավելի մեծ փորձանք էին, քան բարբարոսների արշավանքները: Հունիս ամսի սկիզբներին բուլղարների առաջնորդ կրումը, ենթադրելով, որ քրիստոնյաները շատ շատ են, իր զորքերով ոտքի ելավ: Նա բանակեց Վերսինիկիայում, կայսերական զորքից 30 մղոն հեռավորության վրա: Անատոլիկոնի զորավար Լեոն պատրիկը, Մակեդոնիայի զորավար Հովհաննես պատրիկը՝ մականունը Ապլակես, նրանց դեմ կռվի դուրս գալու մեծ եռանդ հանգես բերեցին, բայց շարամիտ խորհրդականների զորամբ կայսրը թույլ չտվեց: Իսկ [Կոստանդնուպոլսում] այն պահին, երբ քաղաքի բնակչությունը պատրիարքի զխավորությամբ սուրբ Առաքելոց եկեղեցում պատարագ էր մատուցում, ամբոխի խռնված լինելու պատճառով աչքից հեռու մնացած աստվածատյաց Կոստանդնի¹⁰⁰⁵ հերձվածի կողմնակիցներից ամբարիշտ ոմանք շարդում են կայսերական գերեզմանատան դարբասը և ինչ-որ զորդուն անելով, բացում այն, իբրև թե աստվածային հրաշքով: Մտնելով ներս, նրանք այդ ստահակի դամբանի վրա ծնկաչոք կոչում են հասնի օգնության, նրան, և ոչ աստծուն, ասելով. «Նչի՛ր, փրկի՛ր կործանվող պետությունը»: Նրանք լուր տարածեցին, որ նա, դեերի հետ տարտարոսում բնակվողը, իբր ձի հեծած վեր է կացել և գնում է բուլղարների դեմ պատերազմի¹⁰⁰⁶: Քաղաքի էպարքոսը ձերբակալեց նրանց, նրանք սկզբում ստախոսեցին, թե իբր գերեզմանատան դարբասը աստվածուստ, ինքնարերարար բացվեց, բայց երբ կանգնեցին էպարքոսի առջև և տալանի առջև վկայություն տալու, պատուհասվելու վախի տակ հայտնեցին դարբասը շարդելու մասին: էպարքոսը նրանց ըստ արժանվույն բրածեծ անելուց հետո, քաղաքով մեկ ծանակեց, պարտադրելով բարձրաձայն ասել իրենց պատժելու պատճառը: Ամենայն շարյաց գտիչ սատանան զինվորներին այնպես էր դայեկել, որ նրանք փորձության պատճառը ոչ թե իրենց մեղքերը համարեն, այլ ուղղափառ ու հայրենավանը դավանանքը, վանականների սուրբ սքեմը, աստվածային իմաստասիրության ուսուցանումը: Հայհոյիչներից շատերը անունով էին քրիստոնյա, իրականում նրանք պավլիկյաններ էին, որոնք ի վիճակի չլինելով իրենց պիղծ հայացքները հրապարակ հանել, նման քայլերի էին դիմում՝ տխմարներին խաբելու համար: Նրանք երանի էին տալիս հրեամիտ Կոստանդնին, համարելով մարգարե և հաղթող, ընդունում նրա շարափառությունը՝ ի տապալումն

մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի մարմնացյալ տնօրինության: Հունիս ամսի 22-ին հոռոմայեցիներն ու բուլղարները Աղրիանուպոլսից ոչ հեռու քախվում են միմյանց: Քրիստոնյաները ռազմավարական կոպիտ սխալ թույլ տալու պատճառով թշնամիներն այնքան գերազանցեցին, որ հոռոմայեցիները դեռ առաջին ընդհարման շմասնակցած, գլխովին փախուստի դիմեցին, այն աստիճան, որ Կրումն ապշահար կարծեց, թե կատարվածը ռազմագիտական խորամանկություն է և միառժամանակ թույլ չէր տալիս իր զինվորներին փախստականներին հետապնդել: Բայց երբ տեսավ, որ նրանք սանձակոտոր փախուստի են դիմում, հետապնդեց և մեծաթիվ զորք կոտորեց: Բուլղարները ձեռք գցեցին նաև հոռոմայեցիների տուլոզներ: Կայսրը, փախչելով քաղաք, անիծելով զինվորներին ու նրանց հրամանատարներին, երդվեց հրաժարվել դահից: Նա դիմեց Անատոլիկոնի զորավար Լեոն պատրիկին, որին համարում էր բարեպաշտ, քաջ և կայսերական իշխանությանը տիրելու միանգամայն արժանի մարդ: Երբ Լեոնը կտրականապես հրաժարվեց, կայսրը նրան հանձնելով բանակաթեմային զորքերի հրամանատարությունը, հունիս ամսի 24-ին եկավ մայրաքաղաք, որոշած լինելով հրաժարվել իշխանությունից և մի ուրիշին կայսր հռչակել, մի բան, որին դեմ էին զուրս գալիս իր կինն ու իշխանության մոտիկ կանգնած մարդիկ: Սըրբազնագույն Նիկեփոր պատրիարքը այնպիսի ելք էր որոնում, որպեսզի ով էլ զահ բարձրանար, Միքայելի և նրա երեխաների կյանքին վտանգ չսպառնար: Զորավարներն ու զորքերը, իմանալով, որ կայսրը քաղաք է փախել, նրա թագավորելուց հույսը կտրած, խորհուրդ արեցին ու Անատոլիկոնի զորավար Լեոն պատրիկին դիմեցին, խնդրելով սատար կանգնի ժողովրդին և պաշտպան՝ քրիստոնյաների պետության: Սկզբում նա կտրականապես մերժեց, զիտակեցելով բեռի ծանրությունը, նաև աչքի առաջ ունենալով բարբարոսների հարձակումների անտանելիությունը, բացի այդ, նա չէր ուզում խախտած լինել կայսրերի հանդեպ ունեցած իր հավատարմությունն ու աննենգությունը: Բայց երբ տեսավ, որ թըշնամին սլանում է դեպի քաղաք, Նիկեփոր պատրիարքին իր ուղղափառությունը հաստատող զրավոր վկայություն ներկայացնելով, խնդրեց նրա օրհնությունն ու համաձայնությունը՝ իշխանությունն ստանալու համար: Հասնելով քաղաքի առջև գտնվող տրիբունալիոնը, նա զորավարների ու զորքերի կողմից հոռոմայեցիների օրինական կայսր հռչակվեց: Կեսօրին խարսիոսի ղոնից նա ոտք դրեց Կոստանդնուպոլիս, ապա մուտք գործեց պալատ: Միքայելը, լսելով նրա կայսր հռչակվելու մասին, Պրոկոպիայի և իրենց երեխաների հետ շտապեց Փարոսի աղոթա-

րանը: Խուզելով իրենց մագերը, նրանք վանականի սքեմ հագան՝ ինգիկաիոնի 6-րդ տարվա հուլիս ամսի 11-ին, երկուշաբթի օր: Հաջորդ օրը Լևոնը Մեծ եկեղեցու բեմում նիկեփոս պատրիարքի կողմից թաղադրվելուց հետո, հրաման տվեց օր ու գիշեր հակողության մեջ պահել քաղաքի պարիսպները, իսկ ինքն անձամբ շրջում էր քաղաքով մեկ, բոլորին ոտքի հանում, հուսադրում, ասելով, որ աստված ամենաանբիծ աստվածածնի և բոլոր սրբերի միջնորդությամբ, շուտով հրաշք է գործելու, հակառակ մեր բազում մեղքերի ամենեկին չի թողնելու ծաղր ու ծանակ լինենք: Իսկ այն նոր Սենեքերիմ¹⁰⁰⁷ կրոնքը, տարած հաղթանակից փրված, թողնելով եղբոր սեփական զորքով պաշարելու Ադրիանուպոլիսը, ինքը Լևոնի ինքնակալության 6-րդ օրը հետևակազորով ու հեծելազորով մայրաքաղաքի վրա շարժվեց: Նա պարիսպների առաջով շրջում էր Վլախեոնայից մինչև Ոսկե դուռը, ցուցադրելով իր ուժը: Ոսկե դռան ծովահայաց մարզագետնում նա պիղծ ու դիվային զոհարերություններ կատարեց, կայսրից պահանջեց իր նիզակը իրի Ոսկե դռան վրա, բայց մերժում ստանալով, իր վրանը վերադարձավ: Նա ապշեց քաղաքի պարիսպների վեհության, կայսեր զորքի կարգապահության վրա, և համոզվելով, որ պաշարմամբ հաջողության չի հասնի, որոշեց հաշտություն կնքել և փորձեց բանակցություններ իր դիմել: Կայսրը հարմար առիթից օգտվելով, ուզեց նրա դեմ որոգայթ լարել, բայց մեր բազում մեղքերի, ինչպես և իր սպասավորների ապիկարության պատճառով չկարողացավ այդ հաղթանաչանք ձեռք գցել: Ծիշա է, Կրոնի հարված հասցրին, բայց ոչ մահացու, որի վրա ոճրագործը զազազած, սուրբ Մամաս ապատակիչ հրոսակներ ուղարկեց, կրակի տվեց այնտեղի ապարանքը, սայլերի վրա բարձեց ձիարշավարանի պղնձե առյուծը, հիդրիոնի արջն ու վիշապը, ընտիր մարմարիոններ ու հեռացավ, [ճանապարհին] պաշարմամբ գրավելով Ադրիանուպոլիսը:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1. Ագրոսի վանքի մասին տե՛ս Առաջաբանում, էջ VII:
2. Հոռոմայեցիների կայսր Գրիգորիանոս (284—305):
3. Միքայել I Ռանդարե (811—813):
4. Քեոփանեսի օգտագործած ժամանակագրության (խրոնոլոգիայի) մասին տե՛ս Առաջաբանում, էջ XII—XIII:
5. Գեորգիոս Սինկելլոսը, VIII դ. վերջի և IX դ. սկզբի բյուզանդական մատենագիր: Գրել է «Ժամանակագրություն» աշխարհի արարչագործությունից մինչև Գրիգորիանոս կայսրը (284): Նրա երկը պահպանվել է: Տե՛ս *Georgius Syncellus et Nicephorus CP. Ex recensione Guillelmi Dindorfii*, vol. I—II, Bonnae, 1829.
6. Տարասիոս պատրիարք Կոստանդնուպոլիսի (784—806):
7. «Սինկելլոս» բառացի նշանակում է «խցակից», նույն խցում ապրող: Նա պատրիարքից հետո եկեղեցական առաջին անձնավորությունն էր: Նրա հիմնական պարտականությունն էր պատրիարքի և կայսեր միջև կապ պահպանելը:
8. Քեոփանեսի Առաջաբանի մասին հատուկ տե՛ս Կարգոթ, К проблеме, էջ 206 և հա.:
9. Փոկաս կայսր (602—610): Մագրումով կապագործվացի էր:
10. Խոսրով II Ապրվեզ (590—628):
11. Կիրիակոս պատրիարք (595—606):
12. Իոհանն (կամ Հեսիբիոս) պատրիարք (601—609):
13. Եվլոգիոս պատրիարք (581—608):
14. Անատասիոս Բ պատրիարք (599—609):
15. Ինդիկաիոնի՝ 15-ամյա շրջանի մասին տե՛ս «Կոստանդին Սիրանածին», էջ 230:
16. Այսինքն՝ Քեոփանեսի «Ժամանակագրության» մեր չընդգրկած մասում:
17. Մավրիկիոս (հայկական աղբյուրներում՝ Մորիկ, Մուրիկ) կայսրը (582—602), որին որոշ հեղինակներ (Վ. Տեր Մահկյան, Հայ կայսրեր Բյուզանդիոնի, հտ. Ա, էջ 25—125: Adontz, Les legendes, p. 123—133: Grégoire, Maurice le Marcioniste, p. 395—396: Grousset, Histoire, p. 247) համարում են հայազգի: Հայկական աղբյուրներից Մավրիկիոսի ծագումով հայ լինելու ավանդությունները հիշատակում են Կեղծ Շապուհ Բագրատունին (*Մեթո-Մանյա Բագրատյան*, ԵՊ. 47—49), որը նրան անեցի է համարում, Մտեփանոս Տարոնեցի Ասողիկը (էջ 141), որի համաձայն նա օջականցի էր, և Կիրակոս Գանձակեցին («Պատմություն հայոց», էջ 46), որի ասելով կայսրն էր «Ի Հայոց, լծական գեղջէ, և այլք՝ թէ ի Տարօնոյ», մի այլ տեղում՝ «Կէսք ասեն զնա լԱրփսուս գեղջէ Կապաղովկացոց» (էջ 50): Ինչպես տեսնում ենք, միայն Գանձակեցին է ճիշտ նշում նրա ծննդավայրը՝ Կապաղովկայի Արաբխոս քաղաքը (աղբյուր ունենալով Միքայել Ասորու «Ժամանակագրությունը»): Այս ավանդությունները ուշ շրջանից են գալիս:

ժամանակագրական տեսակետից ամենամտիկ Սերբոսը ոչ մի խոսք չի ասում Մավրիկիոսի հայկական ծագման մասին: Ժամանակակից ասորի պատմիչ Հովհան Եփեսացին, Քեոփիլախոս Սիմոկատոսն նույնպես գաղափար չունեն Մավրիկիոսի հայկական ծագման մասին: Մավրիկիոսին անձնպես ծանոթ եմագրիոսը (Eusagril Historia, col. 2332) նրան համարում է հռոմայեցի, ծննդավայր նշելով Կապադովկիայի Արարիոս քաղաքը, իսկ լատին պատմիչ Պողոս Սարգավազը՝ հույն, առաջին հույն կայսրը բյուզանդական դահի վրա (Pauli Diaconi Historia, p. 100): Այսպիսով Մավրիկիոսին ժամանակակից և ոչ մի պատմիչ նրան հայ չի համարում: Այդ վարկածը հանդես է գալիս ավելի ուշ: IX դ. բյուզանդական պատմիչ Գեորգ Վանկանը նրան հայ է համարում (Georgii Monachi Chronicon, t. II, p. 656, 662): Նույն բանն է ասում նաև XIII դ. հեղինակ Յոհյը (Μετα Τιβέριον ἑβασίλευσε Μαυρικίος, Ἀρμένιος: Ioelii Chronographia, p. 45):

Նշենք այստեղ, որ Մավրիկիոսի ընտանիքի բազմաթիվ անդամներից և ոչ մեկը չէր կրում հայկական անուն: Այսպիսով միակ հավանականը Պ. Գուբերի աված բացատրությունն է: Արարիոս քաղաքը գտնվում էր Կապադովկիայում, որն աշխարհագրական առումով Հայաստան էր կոչվում: Հիերոկլիոսի Սինեկլիմոսում (IX դ.) ցույց է տրված, որ Երկրորդ Հայքում են գտնվում հետևյալ քաղաքները. Մեխիտիսե, Արհա, Աօարիսոս, Կոկիլոսոս, Կոմանա և Արիարաթիա: (Hieroclii Synecdemus, p. 38: Հմմտ. Նեղոսի Գրոսագրաֆի Կարգագրություն, էջ 30: Տե՛ս նաև Հովհաննես Գրասխանկերցի, էջ 69. «Բազ զԿապադովկիայի, յորում մայրաքաղաքն է Կեսարիա» և Երկրորդ Հայք նախ անուանիր»): Աղբյուրներում սովորական բան է, երբ մի երկրի վարչական-աշխարհագրական անունը տարածվում է նաև այդ տարածքի վրա բնակվող բնակչության վրա: Մավրիկիոսը, ամենայն հավանականությամբ, ծագումով հռոմայեցի էր, բայց ծնվել էր Կապադովկիայում հաստատված և հունարեն դարձած ընտանիքում (Goubert, Maurice, Նույնի, Byzance, t. I):

18. Տրիբունալիոնի Կամպոսը (Campus tribunalis), այսինքն զորքերի հավաքատեղի: Գտնվում էր Հերզոմոնում, ժամանակակից Բաբրբայի (հնում՝ Մաբրիջայ) արևելքում: Կայսրերի հուշահամալիրն էր (Janin, Const. byz., p. 412): Հետաքրքրական է նշել, որ Մավրիկիոսը, թեև իր իշխանության օրոք ատելի էր և՛ «սուղափառներին», և՛ միաբնակների շրջանում, իր նահատակությունից հետո «սուղափառ և հախտիկ եկեղեցիների կողմից սքրայվեց (հիշատակը նշվում է նոյեմբերի 28-ին» (Στρατός, Τὸ Βυζάντιον. Α', σελ. 44, 133): Մավրիկիոսն ուներ ինն հրեյա՝ վեց տղա և երեք աղջիկ: Նրանց անուններն էին՝ Քեոզոսիոս, Տրիբրիոս, Պեարսոս, Պավղոս, Հուստինոս, Հուստինիանոս, Անաստասիա, Քեոկտիստե և Կլեոպատրա (Chronicon Paschale, vol. I, p. 693): Մահապատժի ենթարկվեցին Տրիբրիոսը, Պեարոսը, Հուստինոսը և Հուստինիանոսը (նույն տեղում, էջ 694):

19. Քեոսիանեք և՛ բյուզանդական կայսեր, և՛ պարսից արքային կոչում էր թասիլեոս — թագավոր: Ենեիով հայկական ավանդությունից, մենք «կայսր» ենք կոչելու բյուզանդական թասիլեոս-ին, իսկ պարսից թագավորին՝ արքա: Նշենք, որ բյուզանդական վեհապետները պաշտոնապես թասիլեոս տիտղոսը ստացան 629 թ.: Տե՛ս Ostrogorsky, Autokrator, S. 98—99 (apud DAI, II, p. 9):

20. Այդ մասին գիտեք և Սերբոսը. «Եւ էր որդի մի կայսերն Մարիայ, անուն նորա Քեոզոս: Լուր համբաղեց ելելալ տարածանէր ընդ ամենայն երկիր, եթէ գերծառ Քեոզոս և գնաց առ թագաւորն Պարսից» (Սերբոս, էջ 106): Երբ Փոկասի դեմ ապստ

տամբեց Նշանավոր զորավար Ներսեսը, ապա նա պարսից արքա Խոսրովի մոտ մի երիտասարդ ուղարկեց՝ «զարդարեալ թագաւորական հանդերձի...» ասելով. «Դա է որդի թագաւորին Մարիայ, Քեոզոս, և արասցես ի վերայ դորա ողորմութիւն, որպէս և հայր դորա ի վերայ քոյ» (նույն տեղում էջ 107): Խոսրովը հիշյալ անձնավորութունն օգտագործեց հետագայում: Նա Հերակլիոսի թագավորության սկզբում, զիմելով բյուզանդական կայսեր ասաց. «Եւ զՔեոզոս զորդին Մարիայ նստուցի թագաւոր» (Սերբոս, էջ 113): Երբ 608 թ. պարսիկները պաշարեցին Կարինը, հիշյալ Քեոզոսը զիմելով քաղաքի բնակիչներին, ասաց. «Եւ եմ... թագաւորն ձեր», որի վրա Կարին բնակիչները նրա առջև բացեցին քաղաքի դռները (Սերբոս, էջ 111):

21. Բյուզանդական կայսրերը պաշտոնապես իրենց կոչեցին «Հռոմայեցիներ թագավոր» (βασιλεύς Ῥωμαίων), իսկ պետությունը՝ «Հռոմայեցիների թագավորություն» (Ῥωμαίων βασιλεία) 812 թ. ընդգծելու համար բյուզանդական կայսեր գերազանցությունը՝ Ֆրանկների թագավորի հանդեպ, որի «Ֆրանկների թագավոր» (βασιλεύς τῶν Φράγγων) տիտղոսը բյուզանդիան ճանաչեց հենց այդ թվականին: Տե՛ս DAI, II, p. 9—10:

22. Այլ աղբյուրների համաձայն, այս դեսպանը կոչվում էր Լիլիոս: Նա էր Մավրիկիոսին և նրա որդիներին ձերբակալող ու մահապատժի ենթարկողը:

23. Այսինքն՝ Մավրիկիոսի կնոջ:

24. Երրորդ դարից սկսած Ավգուստալիոս (praefectus Augustalis) էր կոչվում Եղիպտոսի փոխարքան:

25. Չլիոթեյ Հուստինիանոս I-ի ժամանակ անուն հանձն Նարսես ներքինու հետ: Զինվորական ասպարեզ իջավ դեռևս Հուստինոս II-ի ժամանակ: Տրեբրիոս կայսեր օրոք ապագա կայսր Մավրիկիոսի փոխզորավարն էր և դեռ այն ժամանակ աչքի էր ընկել պարսիկների դեմ մղվող պատերազմում: Հավանաբար Հայաստանում կարևոր պաշտոն էր վարում, բանդի 595 թ. Մավրիկիոսի ժամանակ, զորավար Ֆրիդպոլիոսը նամակ է գրում Հերակլիոսին (ապագա նույնանուն կայսեր հոր) իր զորքերով «գնա Հայաստան, նարսեսի մոտ» (εις Ἀρμενίαν παραγενέσθαι πρὸς Ναρσῆν. Theoph. Chron., I, p. 279): Վահրամ Չուրինի ապստամբության ճնշման էլ (591) Նարսեսը, ստրատելիտ Հովհաննես Մուստակոնի հետ մեծ դեր է խաղացել Նարսեսը 6000 ապստամբների հանձնել է Խոսրով արքային և նրան գահի վրա հաստատելուց հետո ասել է. «Հիշի՛ր, Խոսրով, այս օրը, հռոմայեցիներն են բեզ շեռոհել թագավորությունը» (նույն տեղում, էջ 267):

Նարսես զորավարի ապստամբության մասին տե՛ս և Սերբոսի երկում. «Եւ յԱսորոց կողմանէ ապստամբեալ Ներսէս զաւրաւար ի Միջագիտոս Ասորոց, և հանդերձ զաւրու իւրով մտնելալ բոնանայ յԱւրհայ քաղաքի» (Սերբոս, էջ 106): Պատմիչը տալիս է բազում կարևոր մանրամասնություններ: Նրա ասելով Խոսրովը Դարայից գալիս է Եղեթիմ ներսեսին պաշարած Փոկասի բյուզանդական զորքերի, ջարդում ու փախուստի մատնում նրանց: Պաշարյալները բացում են քաղաքի դարբասները պարսից արքայի առջև: Ահա սրանից հետո Խոսրովը երկրորդ անգամ գնում է Դարա, տարի ու կես պաշարում այն և գրավում: Մակայն այդ միջոցին բյուզանդական մի այլ զորք հարձակվում է Եղեթիայի վրա, գրավում քաղաքը և ըստ հայ պատմիչի «կալեալ զներսէս սպանին և արին հեղին» (Սերբոս,

- էջ 107): Քեոփանեսի ասելով Նարսեսը փախավ Հիերապոլիս, ապա խաղվելով եկավ Կոստանդնուպոլիս, ուր և մահապատժի ենթարկվեց (տե՛ս և ծանոթ. 39): Ավելորդ չէ նշել, որ ըստ Ղ. Ալիշանի, Ներսեսը ծագումով Կասաբական էր (Ալիշան, Երբակ, էջ 5):
- 26. «Մագիստրոս» պատվաստիճանի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաձին» էջ 217: Այստեղ Քեոփանեսը Դոմենցիոլոսին համարում է Փոկասի եղբայր, մի բիշ հետ խոսում է սղարմբի» Դոմենցիոլոսի մասին: Հավանաբար սարբեր անձնավորություններ են:
- 27. «Էրզուրմիտրոնների կոմիս»-ի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաձին» էջ 299—300, 310:
- 28. Կայսրերը սովորություն ունեին նշանավոր զեպեթի առիթով ժողովրդին դրամ բաշխել: Այդ բանը կոչվում էր *δρακμα*, հյուպատոսություն, քանզի հին Հռոմում հյուպատոս (կոնսուլ) հռչակվելու առթիվ նրանք ժողովրդին դրամ էին պետք: Այդ սովորությունն անցավ Բյուզանդիա և կայսրերը դա՛հ բարձրացնելու կամ այլ երեւելի մարդիկ տիրոջ ստանալու առթիվ նույն բանն էին անում:
- 29. Կոստանախին (Բելլա զե Մաուզելիս): Հին քաղաք Միջագետքում, Գարալից 75 կմ արևմուտք: Նրա ավերակ դարձած պարիսպները վերականգնել էր Հուստինիանոս I-ը: Տե՛ս «Պոկոպիոս Կեսարացի», էջ 176—177:
- 30. Բնագրում՝ *χαλκονος*: Խոսքը ավարների ցեղապետի մասին է: Բյուզանդական կառավարությունը երկիրն այդ բարբարոսների հարձակումներից զերծ պահելու համար սարեհյան որոշակի դուժար էր վճարում նրանց: Սերեոսը նրան անվանում է *αίλιος* խաբան», «արթալ կողմանցն հիւսիսոյ» (Սերեոս, էջ 104):
- 31. Բնագրում՝ *παλατι*: Բառը չենք թարգմանում, քանզի հանդիպում է և հայկական աղբյուրներում (տե՛ս Գիվան հայ վիճաբանության, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Սորբի, Երևան, 1966, էջ 38): Այն ունի լատինական ծագում (palacium) և նշանակում է պալատնազիր, պալատն, կարգադրություն, նաև հարկ: Պակտի մասին տե՛ս Ռարիկյան, Հարկերի մասին, էջ 168—173:
- 32. Մահմանամերձ նշանավոր քաղաք-ամրոց: Գտնվում էր պարսից սահմանամերձ Մծքին քաղաքի դեմաց և կառուցվել էր Անաստասիոս կայսեր կողմից: Բյուզանդիայի համար ստրատեգիական խոշոր նշանակություն ունեւր Պրոկոպիոս Կեսարացու ասելով «եթե որևէ փորձանք պատահի Դարա քաղաքին, որը հոմանական պետության պատվարն է և բացեիքաց կանգնած է թշնամու երկրին դեմ հանդիման, ապա աղետը այդքանով չի վերջանալու, դրա հետ միասին ստանվելու է ամբողջ պետությունը»: «Պոկոպիոս Կեսարացի», էջ 167—168:
- 33. Կոչվում էր նաև Մենբիջ (Մամբիջ): Հնագույն քաղաք Ասորիքի հյուսիսարևելյան՝ Եփրատից մինչև Ամանոս լեռը ձգվող և հնում Կյուրեստիկե կոչվող մասում, Եփրատի աջ ափից ոչ հեռու Անտիոքից Եդեսիա տանող ճանապարհի վրա: Սկզբնական շրջանում կոչվում էր Ռամբյուլե, Հիերապոլիս կոչվեց Սելևկոս թագավորի կողմից: III դարում դարձավ հոմանական Եփրատ պրովինցիայի կենտրոնը և Ասորիքի խոշորագույն քաղաքներից մեկը: Հիերապոլիս ավերակները գտնվում են Հալեպի մոտ, ժամանակակից Մանբիջ գյուղում:
- 34. Բնագրում՝ *Αρζαροδον*, ասորերեն Խարզամ, այժմ՝ Թեյլ Խարզամ՝ Մերզրիցի հարավ-արևմուտք:
- 35. Զոնգոնես (պրակ. Zengōi):

- 36. Կուրապաղատ պատվաստիճանի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաձին», էջ 214: Մահերմասն՝ *Guilland, Le Curopalate*, p. 187—229: Այս հոդվածի մասին տե՛ս Բարիկյան, Հայադիտական նյութեր, էջ 101—102: VII դ. կուրապաղատների մասին (հայկական աղբյուրների տվյալների լայն օգտագործմամբ) և Գիլյանի վերջնական հոդվածում թույլ տված սխալների ուղղմամբ, տե՛ս Σ τ ρ á τ ο ς, Οί «Κουροπαλάται», σελ. 51—56:
- 37. Կարգարիգանը անուն չէ, այլ տիրոջ (Justi, Iranische Namenbuch, S. 156): Ինքը՝ Քեոփանեսը գրում է, թե «Կարգարիգան հատուկ անուն չէ, այլ բարձրագույն աստիճան պարսիկների մոտ» (*Theoph. Chron.*, I, p. 253): Հնդուհնված էր բարձրաստիճան անձնավորության աստիճանը հիշատակել, քան անունը: Ավելի ուշ շրջանում նույն բանը հանդիպում է և հայկական աղբյուրներում, որտեղ որպես հատուկ անուններ են հիշատակվում «Գեմեսիկոսը», «Պարակամանոսը», «Տեկիարես» (գոմեստիկոս, պարակիմոմենոս, էտերիարի): Մուլսես Կաղանկատվցին նրան հիշատակում է Քրտակարին ձևով (էջ 152): Անունը, հավանաբար, նույնանուն է ու ժիջնագրում մեկ անգամ հանդիպող «Քրտիկեարոսի» անվան հետ: Տե՛ս *Бармукиян, Об армянской памятной записи. Հառ Ստրատոսի* (Σ τ ρ á τ ο ς, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 156) տվյալ *Կարգարիգանը նույնանուն է Սերեսի «Աշտատ Յեգտայր» զորավարի հետ* (Սերես, էջ 111):
- 38. Բնագրում *Πουσαζαν*, որ համապատասխանում է Սերեսի «Խոռեամ, որ Ըազմանն անուանեալ, զաբազուխ»-ին (Սերես, էջ 110): Մի այլ տեղում՝ «զարավարն նոցա անուանեալ Թազմիզան, որ է Խոռեամ» (նույն տեղում, էջ 115): Տարբեր նրան անվանում է Ցարսիսան (Σ τ ρ á τ ο ς, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 152): Նա նույնանուն է մի փոքր հետո հիշատակվող պարսիկ զորավար Շահրվարազի հետ, որ անուն չէ, այլ տիրոջ՝ «Կայսրության վարազը» (Σ τ ρ á τ ο ς, նույն տեղում): Տե՛ս և ծանոթ. 134:
- 39. Նարսեսին Դոմենցիոլոսն ուղարկեց Կոստանդնուպոլիս, ուր և Փոկասի կողմից ուխտագրոթորեն ողջակիզվեց Չիարազվարանում ժողովրդի աչքի առջև: Այս զեպքը տեղի ունեցավ 605 թ. վերջին կամ 606 թ. սկզբներին: Սերեսի համաձայն բյուզանդական գրքերը գրավեցին Ռուհան, որտեղ «կալեալ զնեբսէս սպանին և արին հեղին» (Սերես, էջ 107): Տե՛ս ծանոթ. 25:
- 40. Պատրիարք Թովմաս Ա (607—610 թթ.):
- 41. Սկզբնական շրջանում սրբապատիկոս (σχιολαστικος) էին կոչվում 7 ազատ արվեստների ուսուցիչները, հետագայում՝ փիլիսոփայությանը ու աստվածաբանությանը դրաժվող, ընդհանրապես ուսումնական, եկեղեցու հայրերի փիլիսոփայությունն ուսումնասիրող մարդիկ:
- 42. Այս շրջանի պատրիկների մասին տե՛ս *Guilland, Les patrices du VII^e siècle*, p. 11—24: Իսկ առանձնապես կոն III Իսաւրացուց սկսած մինչև Միքայել II-ի թագավորությունն ընկած ժամանակաշրջանում աղբյուրներից հայտնի պատրիկների մասին՝ *Guilland, Les patrices. Du règne de Léon III l'Isaurien au règne de Michel II*, p. 317—360): Պատրիկների մասին ընդհանրապես՝ «Կոստանդին Միրանաձին», էջ 212—213: *Yannopoulos. La société*, p. 48—50: Ամենահաճախ հիշվող տիրոջն է աղբյուրներում: Այն կրում էին բարձրագույն պաշտոնյաները, փաստ, որ վկայում է տիրոջն շատ պատվաբեր լինելը: Կար և պրոտոպատրիկ տիրոջն, որը կրում էր

- Օպիհիոն բանակաթեմի զորավար հայազգի Վարադ-Քակուրը (տե՛ս վերը, էջ 93): Այդ տիտղոսի էպիտոնը դեռևս պարզված չէ: Ամբողջ հարցն այն է, որ այդ տիտղոսը Ասոն II կայսեր կողմից շնորհվել է և սահմանակից մի արար ցեղապետի:
43. Սր. Սոֆիա տաճարը:
44. Կոստանդնուպոլսի բնակչությունը կազմակերպված էր միությունների մեջ, որոնք դեմոսներ էին կոչվում (δημοί): Արանք իրենց հերթին բաժանվում էին «կղզիների» (μείρη), որոնք առաջացան որպես սպորտային միություններ՝ Զիարչավարանում: Բյուզանդիայում կային յոթ «կղզիներ»՝ կապույտների, կանաչների, սպիտակների և կարմիրների: Ապիտակները հանդես էին գալիս կապույտների հետ, իսկ կարմիրները՝ կանաչների, Ժամանակի ընթացքում այս կողմերը վերածվեցին քաղաքական կուսակցությունների, ընդ որում կապույտները պաշտպանում էին բնակչության առավել բարձր խավերը՝ շահերը, իսկ կանաչները՝ ցածր, գլխավորապես առևտրատրճառավորական խավը: Գեմոսների ռազմական պարագլխին նշանակում էր կայսրը: Սովորաբար նա սխուրթի դեմոստիկոսն էր կամ էրպուրիտորների կոմեսը (Στρατός, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 38): Փաղաքացիները՝ զեմոսները արձանագրված էին ցուցակում (կատալոգում): Մավրիկիոսի ժամանակ արձանագրված պրասինոսները 1500 հոգի էին, իսկ կապույտները՝ 900 (Στρατός, նույն տեղում, էջ 40, 110): Գեմոսներին ուժեղ հարված հասցրեց Հուստինիանոս I-ը՝ 532 թ. «Նիկիայի» ապստամբության ճնշումից հետո, VII դ. կեսերից «կղզիները» զաղարում են զգալի դեր խաղալուց:
45. Զիարչավարանի մուտքի ոլորապատկառ աստիճաններից մեկն էր, որը ձիարչավարանը հաղորդակցում էր կայսերական պալատի հետ:
46. Գեմոսի, երկու հիմնական կազմակերպությունների ղեկավարները՝ Կային վենետների (կապույտների) և պրասինոսների (կանաչների) ղեմաբոսները (Bury, IAS, p. 138):
47. Բնագրում՝ τάλαντον: Կոչվում էր նաև կենտինար: Հավասար էր 160 լիտրի (մեկ լիտրը՝ 72 ոսկեդրամ) ոսկու, հետևաբար՝ 7200 ոսկեդրամի (դահեկանի):
48. Բոնի հոգևորական, վանական «խուզելը» Բյուզանդիայում պատիժ էր, քաղաքական հակառակորդին հրապարակից վերացնելու միջոց:
49. Սերնոսի ասելով «էր լեալ Փիլիպիկոսս այս փեսայ կայսերն Մարիայ, և բազում ժամանակաւ արարեալ զարավարութիւն զործէր զմարտից յաղթութիւն: Եւ ապա յանկարծաբարն արեալալ ի միտս իւր անդրէն յաւուրս Մարիայ Թագատրութեանն, կտրեալ զհերս զլիտոյ իւրոյ և զզեցեալ զքահանայութիւն»՝ զինուորացու յուխտ եկեղեցույ (Սերնոս, էջ 114): Բայց հետագայում զգաս բանադատեալ շերտակի, կարգէ զարավար և արձակէ ի կողմանս արեւելից զարու մեծաւ» (նույն տեղում): Թեոփանեսը այդ մասին ոչինչ չգիտէ, ոչ էլ այն, որ նա բանակի գլխին անցած եկամ Այրարատ գավառը և բանակից Վաղարշապատի դաշտում, ապա շարժվեց դեպի Շիրակ և Վանանդ, որտեղից էլ՝ Կարին:
50. Հնում Քաղկեդոնի մաս էր կազմում, XII դ. սկսեց կոչվել Սկուտարիոն, այժմ՝ Կոստանդնուպոլսի Ուսկյուդար թաղամասը:
51. Կայսեր գանձապետը: Կոչվում էր նաև ταμίης τῶν βασιλικῶν χρημάτων (կայսերական գրամոսների գանձապետ): Աղաթիսը պարզ դրում է, թե նա զործ ունեք ոչ թե հարկերից հավաքված դրամի հետ, այլ կայսերական գանձարանի

- Agathias, III, 2): Սակելարիոսը մտնում էր σεκρετικὸς կոչվող դասի մեջ, որը հիմնականում ֆինանսներով էր զբաղված (Bury, IAS, p. 84—86):
52. Քեոզորոս Սկրիբոն (608—609):
53. Պալատն իր անունը պարտական է Արկադիոս կայսեր դուստր Մարինին: Գտնվում էր Կոստանդնուպոլսի Ակրոպոլսի մոտակայքում:
54. Տե՛ս ծանոթ. 44:
55. Քարգմանաբար նշանակում է «չորս սյուն»: Չորս սյուններով խորան կամ սրբարան:
56. Բնագրում՝ λαυράτων (ἀρίστου λαυραῖτου, լատ. laureatus): Դափնիներով հյուսված կայսեր պատկերը կամ արձանը (Στρατός, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 184):
57. Ստաման (կոչվում էր և «Պի» հունարեն «Π» տառի ձևից) Զիարչավարանի այն տեղն էր, որտեղ կանգ էր առնում Թափոսը՝ կայսեր ողջունելու համար (Guilland, Etudes sur l'Hippodrome, p. 37—44): Քառը ծագում է «ιστορία» «կանգնել» բայից:
58. Պրոտոկուրսոր (πρωτοκούρσορ, princeps cursorum): Պալատական պաշտոն, կուրսորների (կայսերական սուրճանդակների) առաջինը: Հետ Շլյուսերթեի պրոտոկուրսորը և պրոտոմանգատորը (սրա մասին տե՛ս «Կոստանդին Միքանածին», էջ 309) նույն պաշտոնյայի տարբեր անվանումներն են, թեև ոչ մի աղբյուր չի հաստատում այս կարծիքը: Տե՛ս Yannopoulos, La société, p. 60. Ծանոթ. 355:
59. Գրամմոստե՛ս՝ սրբապատկերների նկարիչ (Lampe, Lexicon, p. 322):
60. Էպարքոսի (քաղաքապետի) մասին տե՛ս «Կոստանդին Միքանածին», էջ 298:
61. Արևելքի էպարքոսը: Այստեղ, հավանաբար, խոսքը Praefectus Praetorio Orientis-ի մասին է:
62. Մի թի՛ւ հետո (A. M. 610) Թեոփանեսը գրում է, որ Փոկասը այդ թվին հրամայեց գլխատել էլլիդիոսին, մոտանալով, որ 609 թ. նա արդեն սպանված էր: Թեոփանեսը երկու զավագրություն է հիշում Փոկասի դեմ՝ 607-ին և 609-ին, այնինչ Ջատկական ժամանակագրությունը՝ մեկ և ցույց է տալիս, որ մահապատիժները ի կատար ածվեցին 605 թ. հունիսի 7-ին (Στρατός, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 174):
63. Եվտրոպիոսի մուրսը (նավահանգիստը) Քաղկեդոնի երրորդ նավահանգիստն էր: Անունը ըստ մի աղբյուրի պարտական է Կոստանդին Մեծի ժամանակ գործած պրոտոսպաթար և բվեստոր Եվտրոպիոսին, թեև հայտնի է, որ նավահանգիստը կառուցել է Հուստինիանոս I-ը:
64. Նախնական անունն էր Ակոնե կամ Ակոնիտիս: Թուրքերն այն այժմ կոչում են Կենալիազա (կարմիր կղզի) իր հողի գույնի պատճառով:
65. Ինչպես անունն է վկայում, պիտի որ ազգակցական կապ ունենա Հուստինիանոս I կայսեր ժամանակ անուն հանած հայազգի Սիտտաս զորավարի հետ, որին 528—529 թթ. կայսրը նշանակել էր magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes: Նրա մասին տե՛ս Adomak, Armenia, стр. 133—139:
66. Սուրաղիուրա (լատ. subadjuva) նշանակում է օգնական, ծառա, Թեփնապահ: Հետ Կոստանդին Միքանածինի մագիստրոսը նրա միջոցով կապ էր պահպանում օտար ղեկավարների հետ (De Cer., I, p. 403):
67. Բնագրում՝ χαρτογράφος (խարտոգրիաբոս): Եկեղեցական պաշտոն, որ արվում էր երեցների կամ սարկավագների կողմում էր սեպիսկոպոսի բերանը և աջքո: Վարում էր եպիսկոպոսի քարտուղարի պաշտոնը և եպիսկոպոսի մնայուն ներկայացուցիչն էր:

- 68. Նիկեիոս պատրիարքը գրում է, թե ժողովուրդը երգ էր հորինել, որի բովանդակությունն այն էր, թե պարսիկները հոռոմայեցիների պետությունը դրսից են ավերում, իսկ Փոկայա՝ ավելի վատթարը ներսում է անում (Nicephori Breviarium, p. 3):
- 69. Նիկեիոս պատրիարքի համաձայն նրա անունը Գրիգոր էր և ոչ Գրիգորաս (Nicephori Breviarium, p. 4):
- 70. Խոսքը հացահատիկով բեռնված նավերը կոստանդնուպոլիս ասարելու մասին է: Կոստանդնուպոլիսը հացահատիկ էր ստանում եգիպտոսից:
- 71. Թեոփանեսը բյուզանդապարսկական պատերազմը Փոկասի թագավորության ժամանակ շատ համառոտ է նկարագրում: Նա գրեթե ոչինչ չի ասում Հայաստանի մասին, որը փաստորեն կորվների թատերաբեմն էր: Գարայի կորվներին նախորդող տարում մեծ ճակատամարտ տեղի ունեցավ Ճղվարդում, որտեղ սպանվեց պարսից զորավար Զուան Վեհր և պարսիկները պարտություն կրեցին (Սերետս, էջ 108): Իսկ Գարայի մարտերի տարում պարսիկները Դատոյան զորավարի գլխավորությամբ ճակատամարտ ավելցին Գեաթիկ գյուղում և հաղթեցին: Ծակատամարտ է տեղի ունեցել նաև Ծաղկոտն գավառի Անզղ գյուղում, Արածանի գետի ափին, ինչպես և Բասենում (Սերետս, գլ. ԼԲ. Հմմտ. Հովհաննես Գրատսանակեբոցի, էջ 73):
- 72. Սերգիոս Ա պատրիարք (610—638):
- 73. Զաքարիա պատրիարք (609—631):
- 74. Հովհաննես Գ պատրիարք (610—619):
- 75. Անտիոքի հրեաների խռովության մասին առանձին հոդված է գրել Յու. Կուլակովսկին, որը, սակայն, դոտում է, որ դրա ճնշումն ու հրեաների հայածանքները տեղի ունեցրան ոչ թե Փոկասի ժամանակ, ինչպես գրում է Թեոփանեսը: Հենվելով Զատակահան ժամանակաշրջանի վրա, ինչպես և Միքայել Աստուր պատմական երկի, նա ցույց է տալիս, որ խռովությունը բռնկվեց և Անաստասիոս պատրիարքը նահատակվեց 610 թ. սեպտեմբերին, երբ Փոկասն արդեն ի վիճակի չէր պատժել արշավախումբ ուղարկել Անտիոք: Ինչ վերաբերում է Բանաստի պատմիչ արշավախումբ ուղարկել Անտիոք: Ինչ վերաբերում է Բանաստի պատմիչ արշավախումբին, ապա Կուլակովսկին Հովհաննես Նիկեոսցու տվյալների հիման վրա ցույց է տալիս, որ այն ուղղված էր ոչ թե հրեաների, այլ Անտիոքի միաբնակ հոգևորականության դեմ: (Որ Բանաստի բանությունները քրիստոնյաների դեմ էին ուղղված վերկայում է և Անտիոքու Զորավարը: *St'us Mapp, Антиох Страиг, стр. 6—7*): Կուլակովսկին ցույց է տալիս, որ Թեոփանեսը Փոկասի թագավորության վերջին տարվա մասին խոսելիս ի մի է կցում տարբեր ժամանակների զեպեբերը: Բանաստի պատմիչ արշավախումբը Աստրիք մտավ 608 թ., իսկ Անաստասիոս պատրիարքը սպանվեց 610 թ. սեպտեմբերին (Кулаковскии, К критике, стр. 1—14):
- 76. Ստրատելատի աստիճանը նախապես հավասարազոր էր magister militum-ի, այսինքն՝ դիոցեզի ռազմական ղեկավարի, որին էին ենթարկվում նահանգների զորավարները՝ դուքսերը: Հետագայում (IX դ.) ստրատելատ կոչվեցին տուրմարիները: Պատմիչ Գենեսիոսը, օրինակ, զորավարի՝ ստրատելատի համար օգտագործում է ստրատելատես բառը, իսկ տուրմարիի փոխարեն՝ ստրատելատ: Թեոփանեսը մինչև Մավրիկիոսի և Փոկասի ժամանակները ստրատելատ բառը օգտագործում է իր հին իմաստով՝ magister militum-ի: Նա 589 թ. հիշում է որպես Հայաստանի ստրատելատ Հովհաննես Միստակունին (Theoph. Chron. I, p. 266): Բայց Հերակլիոսի ժամանակ բառը արդեն այլ իմաստ էր ստացել: Թեոփանեսը հիշում է Վահան ստրատելատին, որը սովորական տուրմարի հրամանատար է, և ոչ հին

- ստրատելատ: Այդ բանը ավելի հստակ երևում է 667 թ. զեպեբերի անուկությամբ: Երբ Արմենիակների զուգավոր Սարորիոսը, ապառմբելով Կոստաս II-ի դեմ, Մուսվաթի մուռ ուղարկեց իր ստրատելատ Սերգիոսին բանակցություններ վարելու: Այսպիսով պարզ երևում է, որ զորավարին (ստրատելատին) ենթակա անձնավորություն է ստրատելատը: Ստրատելատի աստիճանն այդ իմաստով Թեոփանեսը 667-ից հետո այլևս չի հիշատակում, այն վերստին է հանդես գալիս X դ. երբ արդեն Հովհաննես Զախլիկի ժամանակ ստանում է Արևելքի կամ Արևմտքի զոմեստիկոսի (սպարապետի) նշանակությունը: Այդ աստիճանը հայտնաբեր առաջինն ստացավ Վարդաս Սկլերոսը, երբ զնաց ճնշելու Վարդաս Փոկասի ապստամբությունը: Հովհաննես Սկլիքեոսը Արևելքի ստրատելատ է անվանում (այսինքն՝ Արևելքի զոմեստիկոս) Կասակուն Կեղավժենոսին (Κυριακὸς ἰδου, Παπατηρόπουλος, σελ. 553—557):
- 77. Ֆիարշավարանի հարավ-արևմուտքում էր գտնվում և իրենից ներկայացնում էր 37 սյուներից բաղկացած կիսաշրջանակաձև մի շինություն, որի սյուներն հետագայում օգտագործվեցին սուլթան Սուլեյմանի իմարեթի կառուցմանը:
- 78. Բանա էր, գտնվում էր քաղաքի հյուսիսարևմտյան մասում, Ավգուտոսենի և Կոստանգեի հրապարակի (Ֆորումի) միջև:
- 79. Գրասնյակի, ժամանակակից տերմինով՝ մինիստրություն: Սկզբնական շրջանում նշանակում էր կայսերական կոնսիստորիոնը կամ խորհուրդը: Պաշտոնյաները կոչվում էին սեկրետիկոսներ: Նրանց մեջ էին մտնում սակելարիոսը, գենիկոնի լոգոթեսը, ստրատիկոսիոնի լոգոթեսը, զորմոսի լոգոթեսը, սակելլիոնի խարտուլարը, վեստիարիոնի խարտուլարը, պրոտոսակեթեսը, իդիկոնիքը, Մեծ և Մանգանտների կուրատորը և Օրֆանատրոֆոսը (Bury, IAS, p. 78—105):
- 80. Սկրինիա էին կոչվում թանկարժեք առարկաներ պահելու դարանները, որ հետագայում պետական գրասենյակների իմաստ ստացան (բյուրո): Այնտեղ ծառայողները կոչվում էին սկրինիար, խարտոֆիլարս, խարտուլար, նոտար:
- 81. Հերակլիոս զորավարը ծնվել է շուրջ 540 թ. և ծագում էր Կապադովկիայի արիստոկրատական ընտանիքից: Մավրիկիոս կայսեր լավառյուն զորավարներից էր, Մավրիկիոսի՝ պարսիկների դեմ մղած բոլոր պատերազմների մասնակից: Մավրիկիոսն էր, որ 599—600 թ. նրան նշանակեց Աֆրիկայի էքսարքոս: Նրա տեղակալ Գրիգորոսը (կամ Գրիգորիոսը) իր Հերակլիոս զորավարի եղբայրն էր (Στράτου, Τὸ Βοζάντιου, Α', σελ. 194—195): Գիսուսթյան մեջ կարծիք է տարածված, որ ծագումով հայ էր (տե՛ս Grousset, Histoire, p. 273: Diehl, L'Afrique Byzantine: Pernice, L'empereur Eraclio, p. 25. apud Στράτου, Τὸ Βοζάντιου, Α', σελ. 227):
- 82. Խարանիքը, խոսելով հիշյալ Հերակլիոսի որդու, ապագա կայսր Հերակլիոսի մասին, գրում է, որ նա հայկական ծագում ուներ (տե՛ս Խարանիք, Հայերը, էջ 27): Այս կարծիքը հենված է Թեոփիլակոսու Սիմոկատոսի մի տվյալի վրա, որի համաձայն Հերակլիոս կայսեր հայրը ծնվել է Հայաստանի քաղաքներից մեկում (տե՛ս Theophyl. Simoc., Գլքը Գ, 1. Θεοφιλάκτ Συμοκάττα, στρ. 71): Հովհաննես Նիկիոսցու համաձայն նա կապադովկացի էր (Jean de Nikiou, Chronique, p. 431): Նշենք նաև, որ Գ. Տեր Սահակյանը (Հայ կայսերք Բյուզանդիոնի) հայագրի կայսրերի ցուցակում Հերակլիոսին չի հիշատակում:
- 83. Ստրատոսը այս սպայաճամբով ղեկավարվածությունը հերիաթ է համարում: Նիկեստար այդպիսի ճանապարհով զնալիս հաղիվ 1—2 տարուց հասնել Կոստանդնուպոլիս, այնինչ

- Հերակլիտը ծովով կհասնեն 1—2 ամսում: Բացի այդ հազիվ թե էքսարքոս Հերակլիտոսը համաձայնվեր, որ կայսր դառնար իր եղբորորդին և ոչ հարազատ որդին: Հովհաննես Նիկիտացին պարզ վկայում է, որ Նիկիտասի պարտականությունը լուրջ ծգիպատուի գրավումն էր (Σ τ ρ ά τ ο υ, Το Βυζάντιον, Α', σελ. 201—202):
83. Բնագրում՝ σαρβων: Սկզբնական շրջանում կայսեր թիկնապահներն էին և եմթարիվում էին էքսկուրսորների գոմեստիկոսին: Հետագայում բոլիչ ու բուժականներ դարձան, որոնք ազգի դաշտից դուրս էին բերում վիրավորներին, իսկ ճակատամարտից հետո հավաքում և հանձնում կապուտը:
84. Կոստանդնուպոլսի թագաձառ: Թարգմանաբար նշանակում է Յոթերորդ (մղոն): Գտնվում էր Թեոդոսիոսի պարսպից դուրս, Պրոպոնտիսի ափի մաս: Այստեղից դեպի Կոստանդնուպոլս ձգվում էր նշանավոր էգնատիա ճանապարհը, որ Ոսկե դռների միջով ուղղվում էր դեպի քաղաք: Բոլոր ռազմական շքերթները սկսվում էին Հերոսմոնում: Այժմ այս վայրում գտնվում է Բաբբրբյուր (հնում՝ Մաբբրբյուր):
85. Հավանաբար նկատի ունի Թեոդոսիոսի պարսպը կամ աշտարակը պարսպի, որ իսկապես Հերոսմոնից էր սկիզբ առնում:
86. Այդպես էին կոչվում նորակոչիկները (լատ. novo), որոնք մարզումներ անցնելուց հետո դառնում էին զինվորների (miles) շարքը:
87. Քաղաքագետ: «Աստիլիկա»-յի, Մակեդոնական հարստության օրենսգրքի համաձայն, Կոստանդնուպոլսի բոլոր համարությունները (σοματεια), բոլոր քաղաքացիներն ու զինուոր ենթարկվում էին էպարքոսին: Էպարքոսի գրասենյակը կոչվում էր էպարչաչոն սեքրետոն: Նրա ենթակայություն մեջ գտնվող պաշտոնյաներից ամենակարևորներն էին սիմպոնն ու պրետորյան լոգոթետոն: Էպարքոսի մասին տե՛ս Καждан, Деревня и город, стр. 326—330: „Византийская книга эпарха“, նաև՝ «Հովհաննես Սկիլիցես», էջ 291:
88. Այդպես էին կոչվում հնում՝ comes [sacrorum] largitionum, հունարեն՝ κόμης τῶν θείων θησαυρῶν, պետական դանձապահները: VII դարից հետո նրա պարտականությունն անցավ դենիկոնի լոգոթետին: Նա հսկում էր և հավաքում կայսրության հարկերը: Տե՛ս Bury, IAS, p. 86—90: Karayannopulos, Über die Reformtatigkeit, S. 68, ծանոթ. 95.
89. Հերակլիտոս (610—641), հիմնադիրը Հերակլիանների հարստության, որ իշխեց մինչև 711 թ.:
90. Տե՛ս հարցող ծանոթ.:
91. Բնագրում՝ πλοία κατελλωμέναι: Ստրատոսը այդ բառը բացատրում է հետևյալ կերպ, որ այդ նավերն ունեին աշտարակաձև ամրացված կամբջակ, ինչ վերաբերում է εχροντα εις τα κατάρτια καβώτια, ապա դրանք փոքր աշտարակներ էին կայսերի վրա՝ նետաձիգների համար նախատեսված (Σ τ ρ ά τ ο υ, Το Βυζάντιον, Α', σελ. 216):
92. Սր. Սոֆիայի տաճարի սարկավագ, դեպքերին ժամանակակից բյուզանդական բանաստեղծ, որ շափածո ձևով գրեց Հերակլիտոս կայսեր ողջ գործունեությունը: Թեոփանեսը լայնորեն օգտագործել է նրա «Հերակլիտոս» խորագրեր կրող գործը:
93. Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում, ժամանակակից Մարոկկոյի և Ալժիրի տարածքում գտնվող Կրկիր: 534 թ. անցավ Բյուզանդիայի դերիշյանությունից ներքո, որը տևեց մինչև արաբական նվաճումները VII դ. վերջում:

94. Պենտապոլիս (Նեգաքաղաք) անունով բազմաթիվ քաղաքներ են հիշվում: Տվյալ դեպքում նկատի ունի Կիրենայիկայի Պենտապոլիսը, որ կիրիայում էր գտնվում և որի կազմում էին հետևյալ հինգ քաղաքները. Կյուրենե, Վերինիկե, Արսիոնե, Պտղոմայիս և Ապոլլոնիա: Հիմնադրվել էր Պտղոմյանների ժամանակ:
95. Բնագրում՝ Νέας μετανοίας μοναστήριον:
96. Հելլեսպոնտոսի (Գարդանեի) ափին, նրա ամենանեղ մասում, ժամանակակից Բյուրբուրական Բովալը կալեսի գյուղի տեղում: Հիշվում էր դեռևս Հռոմեոսի կողմից: Բյուրբուրական ժամանակաշրջանում մտնում էր Օպիդիոն բանակաթևի կազմում և նախաճառարանային ժամանակներում կառավարվում էր «Աբիդոսի կոմես»-ի կողմից, որի հիմնական պարտականությունն էր մաքսի գանձումը, Հելլեսպոնտոսի նեղուցով նավերի կանոնավոր նավարկության հետևելը (տե՛ս Ahrweiler, Fonctionnaires maritimes, p. 239—243):
97. Այդ անունով բազմաթիվ քաղաքներ են հիշվում: Ինչպես երևում է կոնսեքստից, Կյուզիկոսի մաս պիտի լինի:
98. Արտակը Փոքր Ասիայի քաղաք էր, Պրոպոնտիսում (Մարմարայի ծով), Կյուզիկոսի արվարձան: Այժմ թուրքերեն կոչվում է Էրդեթ, որի մեջ զովար չէ տեսնել հունական Արտակը:
99. Բնագրում՝ Σοφίας, պիտի լինի τῶν Σοφῶν (տե՛ս Σ τ ρ ά τ ο υ, Το Βυζάντιον Α', σελ. 220): Այն համապատասխանում է ժամանակակից Կաղբիզա լիճանին: Անունը պարսկերենում՝ Bōis άγορά, Forum Bovis, համարվում էր մեջ հակառակ բրոնզե մի սակայն է Պերգամոսից բերված և այդտեղ գրված ցիլ հակառակ բրոնզե մի գլխին: Գտնվում էր ժամանակակից Արտաբայի տեղում: Նիկեփոր պատրիարքի ասելով, Փոկասին պալատում ձերբակալեց Փոտ անունով մի իշխանավոր և շղթայակալ լող, Փոկասին պալատում ձերբակալեց Փոտ անունով մի իշխանավոր և շղթայակալ բերեց Հերակլիտոսի մոտ: Վերջինիս հարցին, թե «Թշվառական, այդպե՛ս կկառավարեն պետությունը», Փոկասը պատասխանեց. «Ե՛րբ դրանից լա՛վ պիտի կառավարես» (Nicephori Breviarium, p. 5): Հերակլիտոս հրամայեց նրան թրատնե, որից հետո դին տարան Ցիլ հրապարակը և այրեցին: Նույն բախտին արժանացան Փոկասի եղբայր Դոմենիտոսը, Բոնուսոսը և պետական դանձապահ Լեոնտիոսը (նույն տեղում):
101. Թագադրությունը տեղի ունեցավ 610 թ. հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի օր:
102. Այսինքն՝ կայսրուհի:
103. Խոսքը, հավանաբար, ոչ թե եղեսիայի մասին է, այլ Եմեսայի (Հոմս): Մի ժամանակակից աղբյուր գրում է Եմեսա, որ գրիչները շատ հեշտություններ կարող էին շփոթել Եղեսիայի հետ (Σ τ ρ ά τ ο υ, Το Βυζάντιον, Α', σελ. 252): Ալվամիան և Եմեսան իրար մոտիկ էին գտնվում, Եղեսիան Ալվամիայից շատ հեռու է ընկած, Եմեսայից այդ Եղեսիան գրավվեց 609 թ.: Թեոփանեսը դեպքերը գիտում է 610 թ. մարտից այդ Եղեսիան գրավվեց 609 թ.: Թեոփանեսը դեպքերը գիտում է 610 թ. մարտին, բայց Հերակլիտոսի օրոք, որը սակայն իրականում գահ բարձրացավ 610 թ. հոկտեմբերին: Ստրատոսի համոզմամբ Թեոփանեսի այս շրջանի վերաբերյալ բոլոր թվական տվյալները սխալ են (նույն տեղում, էջ 153):
104. Գնալեբը տեղի ունեցան 606—607 թթ.: Հետաքրքրական է նշել, որ Շահրվարազի կողմից Անտիոքի գրավման ժամանակ վիրավորվեց և Անանիա Երբակացու ապակողմից Անտիոքի գրավման ժամանակ վիրավորվեց և Անանիան իր ինքնակենսագրությունից նշանավոր Տյուրիկոսը: Այդ մասին գրում է Անանիան իր ինքնակենսագրության մեջ. «Եսկ ի ժամանակի յարձակման զարացն Պարսից ի վերայ դուրացն Յոնաց, որ եղև մերձ յԱնտիոք, պատահեցաւ և սա վիրատրեալ ի պատերազ-

մին փախստեալ անկանի յմետիր, և ամենայն ինչը իւր առան յաւարի» (Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 208): *St' u* նաև *Lemerle, Notes, p. 195—202*: Այս հոդվածը վերահրատարակվել է հեղինակի աշխատությունների միհատորյակում, որ կրում է *«Le monde de Byzance: Histoire et Institutions»* վերնագիրը, Փարիզ, 1978 (հոդված երկրորդ):

105. Կոստանդնուպոլսի մի թաղամաս էր, քաղաքի հյուսիսային ծայրամասում: Այնտեղ էին գտնվում կայսերական մի պալատ, բաղնիք, Աստվածածնի, Սրբոց Անարծաթից, սբ. Թեղեթի, սբ. Պետրոսի և սբ. Մարկոսի եկեղեցիները:

106. Բնագրում՝ *Θέμα, բայց տվյալ ղեկըրում՝ 611/612 թթ. առնչությունը այդ բառը չէր կարող բանակաթեմ (վարչական շրջան) նշանակել (տես *Cikonomidès, Les mentions des thèmes, p. 1—8*): «Թեմա» սկզբնական շրջանում նշանակում էր զորամաս: Այդպիսին է նա հանդես գալիս Հերակլիոսի ժամանակ գրված կամ խմբագրված «Մավրիկիոսի» «Ստրատեգիկոն»-ում: Ենթադրում են, որ դրանից առաջ նշանակել է գրաբնական և հետագայում տարածվել է այնտեղ կանգ առած զորամասի վրա: Պերտուսի կարծիքով, քանի որ բառը հուներեն է, այս այն կարող էր հանդես գալ բյուզանդական ուղղական տերմինոլոգիայի հունացման ժամանակ, այսինքն Կոստանդին IV-ի ժամանակ, կարծիք, որի դեմ հանդես եկան Դյուգենը և Կարայաննուպուրը, առաջ քաշելով տերմինի առկայությունը «Մավրիկիոսի ստրատեգիկոնում»:*

Ժամանակի ընթացքում «թեման» ստանում է «բանակաթեմ» նշանակություն, այն տարածքի, որի վրա հաստատված է այդ զորամասը կամ զորարանակը: Բաղամթիվ են և «թեմաների» (բանակաթեմների) հանդես գալու ժամանակի շուրջ եղած վեճերը: Առաջին բանակաթեմները ըստ ոմանց, կաղմակերպից Հերակլիոսը՝ պարսիկների, արաբների, ավարների և սլավոնների վտանգի առաջն առնելու համար: Բանակաթեմի գլխին կանգնած էր զորավարը (ստրատեգոս), որն սկզբում քաղաքական լիազորություններ չուներ, դրանք նա ձեռք բերեց հետագայում: Առաջինն է համարվում Արմենիականների բանակաթեմը, որը երևի հիմնադրվեց 622/623 թթ. (*Σ τράτος, Τὸ Βουλαντιον, Α', σελ. 720*): Ասենք այստեղ, որ Պերտուզին մերժում է բանակաթեմների՝ Հերակլիոսի ժամանակ ստեղծված լինելու միտքը և պնդում է, որ 667—680 թթ. առաջ չի կարող խոսք լինել բանակաթեմների մասին այն իմաստով, ինչ հասկանում է այդ բառի տակ Կոստանդին Միրանածինը: Թեոփանեսի գրածն այն մասին, թե 627 թ. կար Արմենիականների տուրմարխ, ամենեին էլ չի նշանակում, որ կար Արմենիականների բանակաթեմ: Խոսքը պարզապես հայերից բաղկացած զորամասի՝ տուրմարխի մասին է: Նրա կարծիքով փոքրասիական առաջին բանակաթեմներն առաջացան արաբական արշավանքներից հետո, իսկ հյուսիսում՝ բուլղարների ներխուժումից (679) հետո: Բանակաթեմների մասին եղած բազմաթիվ ու իրարամերձ կարծիքների վրա հնարավոր չէ մանրամասն կանգ առնել: Հետաքրքրվողի համար նշենք համեմատաբար նոր աշխատությունները: *Karayannopoulos, Contribution*; *Կուլյնի՝ Die Entstehung*; *Κορυαζίδου, Πώς ἡ λέξις Θέμα; Dölger, «Θέμα»*; *Pertusi, La Formation des Thèmes*; *Esslin, Die Themenverfassung*; *Lemerle, Quelques remarques*; *Ostrogorsky, Sur la date*; *Σ τράτος, Τὸ Βουλαντιον, Β', σελ. 702—726*:

107. Եվրոպիան ընկնավոր էր (*Nicéphori Breviarium, p. 8*):

108. Բնագրում՝ *Νέος (Նոր)*:

109. Հերակլիոսն իր որդուն կայսերակից հուշակելով, ցանկանում էր ամրապնդել իր զինատեսակը: Այս կայսերակցության մասին գիտե և Սերբոսը. «Ճանա՞մ ժամանակի թագաւորիցոյց Հերակլոսս զորդի իւր զԿոստանդին, ետ զնա ի ձեռն սրկկղիտոսին, և յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ» (Սերբոս, էջ 114):

110. *Տե՛ս ծանոթ. 31*:

111. Մարտինան Հերակլիոսի քրոջ՝ Մարիայի զուտրն էր, առաջին ամուսնությունից ծնված: Այս ամուսնությունը, որ ապօրինի համարվեց ժամանակակիցների կողմից, երկար վեճերի տեղիք տվեց:

112. *Αὐχουστέως-ը* կամ *Օգոստոսի տրիկլինը* Դաֆնեի պալատի հանդիսավոր մեծ սրահն էր: Բյուզանդական հեղինակները հաճախ շփոթում են Ավգուստոսի հրապարակի հետ և հակառակը՝ վերջինս շփոթում են Ավգուստոսի հետ: Մանրամասն տե՛ս *Guiland, L'Augusteus, p. 167—169*:

113. Այսինքն՝ Երուսաղեմը Քաղաքի գրավումը պարսիկների կողմից մեծ տպավորություն գործեց ժամանակակիցների վրա: Արժեքավոր է ղեկարգին ականատես սբ. Սաբբայի վանքի վանական Անտիոքոս Ստրատեգոսի՝ դրան նվիրված երկը, որի հունարեն բնագրի հատվածներ են միայն պահպանվել: Այն հուում թարգմանվել է արաբերեն, իսկ X դարում արդեն կար արաբերեն թարգմանություն վրացերեն թարգմանությունը: Արաբերեն թարգմանությունը ուսուսերեն է թարգմանել *Μεθουκουσ-ը. Завоевание Иерусалима, стр. 598—614*: *Վրացերեն թարգմանությունը* բնագիրը և ուսուսերեն թարգմանությունը տե՛ս *Март, Антиох Стратиг: Գեպրի մասին վկայում են և հայկական աղբյուրները, հատկապես Սերբոսը, ապա Մովսես Կաղանկատվացին և Թովմա Արծրունին*:

114. Պարսիկները Երուսաղեմը գրավեցին 614 թ.: Այդ մասին բացի Նախորդ ծանոթագրությունյան մեջ հիշված գործերից տե՛ս և *Peeters, La prise, p. 78—116*: Սերբոսի տարբեր ձեռագրեր զոհվածների թիվը հասցնում են 17 կամ 57 հազարի: Գերիների թիվը ըստ նույն պատմիչի 35 հազար էր: Ինչ վերաբերում է Քրիստոսի խաչափայտին, ապա այդ մասին գրում է և Հովհան Մամիկոնյանը. «Ընդ ժամանակս թագաւորութեանն Հերակլեայ,— գրում է նա,— զաւրացաւ Խոսրով պարսից արքայն. և զնաց մինչ յԵրուսաղեմ՝ և քաղաքն անրեաց, և զԿոստանդնուսն այրեաց և զուրբ խաչն գերեաց, և առեալ զնաց ի Պարսիկս՝ եղեալ ի պահեստի զուրբ խաչն հանդերձ սպասուքն մինչև յեթն և ի տասն ամի թագաւորութեանն իւրում» (Հովնան Մամիկոնյան, էջ 279): Հետաքրքրական է նշել, որ ճանապարհորդ Շարդեյը թավրիզում տեսել է ավերակները մի աշտարակի, որտեղ, ըստ ավանդության, Խոսրով արքան պահում էր սուրբ խաչափայտը (*Chardin, Voyages, t. II, p. 326*: *Հմտ. Σ τράτος, Τὸ Βουλαντιον, Α', σελ. 270*):

Քրիստոսի խաչի գերման, ինչպես և Հերակլիոսի պարսկական պատերազմի մասին հայկական աղբյուրների տվյալների լայն օգտագործմամբ հոդված է գրել *Ֆրոլովը*: *Տե՛ս Frolov, La vraie croix, p. 88—105*:

115. Թեոփանեսը գրում է *Καρχηδών*: Չլիոթեի Աֆրիկայի Կարթեգոնի հետ, այստեղ խոսքը Քաղկեդոնի (այժմ՝ Քաղք քոյ) մասին է, որ աղբյուրներում կոչվում է նաև *Καρχηδών (Καρχηδών)*:

116. Թեոփանեսը սաստիկ կրճատել է իր աղբյուրի շարադրանքը: Նիկիոսի պատրիարքը շատ հետաքրքրական մանրամասնություններ է տալիս, նշում Քաղկեդոնը գրա-

- վողի անունը՝ Շահեն (Σαΐτος), նրա ենթադրյալ խոսակցութիւնը Հերակլիոս կայսեր հետ, խորով արքայի բարեկեցութեան Շահենի դեմ և վերջինիս մահապատիժը արքայից արքայի կողմից: Նիկիեի որի սուլթանների համաձայն, մինչ այդ Հերակլիոսը Շահենի հետ Պարսկաստան էր ուղարկել բանակցութիւններ վարելու համար պրե-տորյան պրեֆեկտ Օլիմպիոսին, Կոստանդնուպոլսի էպարքոս Լեոնտիոսին և սր. Սոֆիայի տնտես Անաստասիոսին, որոնք Տիգրանում բանտ նեղակցելն (Nicephori Breviarium, p. 10—13):
117. Բնագրում՝ ὄπατος, այսինքն հյուպատոս դարձավ:
118. Կեսարի մասին տե՛ս Կոստանդին Յիրակամին, էջ 256, ժանոթ. 291, «Հովհաննէս Սկլիցիցես», էջ 285, ժանոթ. 83: Նաև Yannopoulos, La société, p. 39—40: Մեզ հետաքրքրող շրջանում տիտղոսը հազվադէպ է հանդիպում: Ենթադրում էր նաև ստարեկրացիներին: Համաձայն Նիկիեի որ պատրիարքի (Nicephori opuscula, p. 42) Հուստինիանոս II-ը այդ տիտղոսը շնորհեց բուլղարների խանին:
119. Իմա Քրիստոսին:
120. «Սաքան» թուրքերն նշանակում է անը, թագավոր: Սրա արխայի իրական է «Բաթուն», որ թաղուէի է նշանակում (տե՛ս Benveniste, Titres, p. 32—33): «Սաքան» տիտղոսը կոպտաշտ թուրքերը, միջնադարյան աշխարհագիրներն ու պատմիչները ապիս են ոչ միայն թուրք մեհակներին, այլև ոչ մտաուլման ան-բերի, ինչպես, օրինակ, Չինաստանի կայսրին: «Սաքան» տիտղոսը հետագայում ստացավ նաև «խան» ձևը:
121. Ավարների հարձակումը Կոստանդնուպոլսի վրա ռաումնասիրողները Թեոփանեսի սուլթաններով թվագրում էին 619 թ.: Գերլանդը (Die Feldzüge, S. 330 և հտ.) հենվելով Զատիկյան ժամանակագրության վրա որոշեց 623 թ. հունիսի 5-ը, իսկ Ն. Հ. Բեյնըրը գտավ, որ Տիշտ թվականը 617 թ. է (Baynes, The Date, p. 110—128):
122. Ալեքսանդրիայի մելիթոս Գեորգ պատրիարքը: Ենթադրաբար աթոռակալել է 620—630 թթ.:
123. Զատիկի տանը այդ տարի իսկապես ապրիլի 4-ին էր (Grumel, La Chronologie, p. 271): Հերակլիոսը այդ օրը սր. Սոֆիայի տանարը մտավ սև կոշիկներ հագած: Ներկա գտնվող Գեորգ Պիսիդացին դիմելով նրան ասաց. «Սև կոշիկներ են հագել ոտքերիդ, թող պարսից արյամբ կարմիր ներկվեն»:
124. Թեոդոսիոս կայսրից հետո մինչև Հերակլիոսը բյուզանդական և ոչ մի կայսր ան-ձամբ չէր զլխավորել բանակը պատերազմի: Մավրիկիոսը, որ դիմվորական էր, և նախքան կայսր դառնալը Արևելից սպարապետն էր, դա՛հ բարձրանալուց հետո այլևս պատերազմ չգնաց: Միայն Հերակլիոսն էր, որ դեռևս 613 թ. զլխավորեց զորքը:
125. Նիկիեի որ պատրիարքը սուլթանների խաբանին անվանում է նաև «Թուրքերի տեր» (τὸν Τούρκων χόρον): Հերակլիոսը օղնութիւն տալու դեպքում խոստացավ նրան կնուխյան տալ իր Եվդոկիա դստեր: Խաբանն իսկապես տվեց այդ օգնութիւնը (Nicephori Breviarium, p. 17—19): Այդուհանդերձ խնամխանական կապերը չհաս-տատվեցին, քանզի խաբանը սպանվեց նախքան Եվդոկիայի իր մոտ ժամանելը (Նույն տեղում, էջ 25): Նույն հեղինակի ասելով, Հերակլիոսը Պարսկաստան շարժվեց Եվդոկիայի (Սև) ծովով և Լազիկայի վրայով (էջ 17):
126. Սիսամամբ նույնացվում էր Կիլիկիայի Իսսոսի ծոցում գտնվողի հետ: Այժմ պարզ-ված է, որ այն գտնվում էր Պոպոնտիսի Աստակենի (Իզմիտ) ծովածոցի ափին,

նիկոմեդիայի հարավում: Սիսյան առաջին անգամ ուղղեց Գ. Տաֆելը (Tafel, Theo-phanis Chronographia. Տե՛ս Մանեհյան, Հնթագրողները, էջ 143):

127. Այս կարճ նախադասութիւնը՝ ἐντεῦθεν δὲ ἐπὶ τὰς τῶν θειμάτων χρόας ἀφικόμενος συνέλαβε τὰ στρατόπεδα καὶ προσετίθει αὐτοῖς νέαν στρατείαν, որ Թեոփանեսը գրել է 810 և 815 թթ. արանքում, ուսումնասիրողների համար գալիսկողութիւն վե՛մ է դարձել: Օստրոգորսկին միանգամայն վստահ գրում է, որ Թեոփանեսն այս սուլթանը բողբ է դեպքերին ժամանակակից աղբյուրից, թե այս փաստը վկայում է այն մասին, որ 622 թ. արդեն սկսվել էր բանակ-ներին (թեմաների) հաստատումը Փոքր Ասիայի որոշակի շրջաններում: Այդ առթիվ նա նշում է Զատիկյան ժամանակագրության մեջ 626 թ. տակ հիշվող Օպ-սիկիոնի (ընագրում աղավաղված՝ Ὀψιρῖου) կոմեսին, Թեոփանեսի ժամա-նակագրության մեջ 627 թ. տակ հիշվող Արմենիակների սուրմարիսին: Օստրոգորս-կին հանգում է այն եզրակացութիւն, որ բանակաթեմների սիստեմը ստեղծվեց ոչ թե Հերակլիոսի հաղթանակներից հետո, ինչպես ենթադրում են Ստեյնն ու Էնսայիցը (տե՛ս Ostrogorsky, 'Ιστορία, Α', σελ. 167 καὶ 252—253: Հմմտ. նույնի Histoire p. 129: Տե՛ս նաև Toumanoff, Caucasia, p. 140, ժանոթ. 113),

Պ. Լըմերլի կարծիքով այստեղ երկու հարց կարող է ծագել: Կամ Թեոփանեսը թեմա (այսինքն՝ բանակաթեմ) բառը օգտագործում է որպես անսխրոնիզմ՝ օգտա-գործում է իր սպորած ժամանակաշրջանի տերմինը, կամ այդ բառը վկայում է, որ 622-ին արդեն Փոքր Ասիայում կազմակերպված էին բանակաթեմները: Թեոփանեսի աղբյուրը, Գեորգ Պիսիդացին, որ մասնակից է եղել այդ արշավանքին, «թեմա» բառը չի օգտագործում: Լըմերլը հանգում է այն եզրակացութիւն, որ Թեոփանեսը «թեմա» ասելով այստեղ նկատի չունի վարչական կամ ռազմական ուժեր, այլ պարզապես զորամասեր, որ Հերակլիոսը հասավ «զորամասերի կենտրոնացման ավանդական շրջանները» (տե՛ս Lemerle, Quelques remarques, p. 359: Այս հոդվածը վերահաստատակվել է հեղինակի աշխատութիւնների միջատորակում, որ կրում է «Le monde de Byzance: Histoire et Institutions» վերնագիրը: Փաբլիզ, 1978, հոդված երրորդ): Մտաւորապես նույն կարծիքին է և Ստրաստուր: Նա գրում է, որ սուլթանը գե՛րազ օգտագործված է «զորամասեր» իմաստով, որ Հերակլիոսը գնաց այն շրջանները որտեղ գտնվում էին թեմաները, բանակած զորամասերը (Στρατός, Τὸ Βυζάντιον, Α' σελ. 332): Հարցի մասին տե՛ս նաև Oikonomidès, Les premiers mentions:

Վե՛ների տեղիք է տվել նաև «Նոր զորքերով» (νέαν στρατείαν) բառերը: Գրե-նում են, որ նկատի ունի Հերակլիոսի իրականացրած զինվորական մի ուժեր, բա-նակի վերակառուցում: Ասենք այստեղ, որ ուսումնասիրողների մի այլ խումբ գտնում է, որ Հերակլիոսին վերագրվող բազում ուժերում ներկայանում տեղի են ունեցել նրա հաջորդների օրոք: Բանակաթեմների կազմակերպման հարցում, օրինակ, հույն բյուզանդագետ Զակիթիոսը տալիս է հետևյալ ժամանակագրութիւնը (ոչ թե ստեղծման, այլ աղբյուրներում առաջին անգամ հիշատակման): Արմենիակների բանակաթեմը (և ոչ սուրմարիսութիւնը) 667 թ., Անատոլիկոն բանակաթեմը՝ 669 թ., Օպսիկիոն՝ 680 թ., Կարավիսիանների (հետագայում՝ Կիրիթեոսների) շուրջ 680 թ., Թրակիայի՝ 680/85 թթ. միջև, Հելլադայի՝ 695 թ. (Ζαχαρίας ἄθροισμα, Η Βυζαντινὴ αὐτοκρατορία, σελ. 120):

128. Պարսիկների դեմ պատերազմի դուրս եկած բյուզանդական բանակի բանակի մասին միակ տեղեկությունը հաղորդում է Սերեոսը՝ 120 հազար (Սերեոս, էջ 124)։ Այդ թիվն ուսումնասիրողներն անհավանական են համարում, եղելով, որ լատինացիները (Lemertle, Quelques remarques: apud Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 320, 337)։ Գալով Հերակլիոսի ղերքի կազմին աղաչյին պատկանելութան հարցին, ապա ըստ Նարանիսի այն բաղաձայն էր վարձկան հայերից, լազերից, արխազներից, իբերներից, խաղարներից (Charants, Ethnic Changes)։ Հրահրել գտնում է, որ Հերակլիոսը վարձկան բանակը չհեռավորեց աղաչյին բանակով (Lemertle, Quelques remarques: apud Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 321)։

129. Խոսքը նրանից Սերեոս թագավորին Քրիստոսի ուղարկած ավանդական վարչա-մանի մասին է, որի վրա պատկերված էր տերունական կերպարը։

130. Խոսքը եկեղեցիների սուրբ սեղաններին է վերաբերում, որոնց վրա է կատարվում հաղորդության խորհուրդը։

131. Այս շրջանում արարների մի մասը ենթարկվում էր Բյուզանդիային, մյուսը՝ պարսիկներին։ Գեոնու Հուստինիանոս 1-ի ժամանակ նրանց Հիմնար մասամբ քրիստոնեյացիները աղիկի հակված էր զեպի առանձնաները, իսկ մյուս մեծ ջեղը՝ դասանիդները, որ միաբանակ քրիստոնյաներ էին, ենթարկվում էին Բյուզանդիային Ավելի մանրամասն տե՛ս Պոպուլիս Կեսարացի, էջ 326, 327 (ժանոթ. 148 և 158)։ Նաև ստորև, ծանոթ. 274։

132. Բնագրում՝ κλίμα, հայերեն՝ կղիմա կամ կլիմա, արաբ. իկլիմ։ Նշանակում է զովառ, նահանգ, շրջան։ Իմաստների մասին մանրամասն տե՛ս Βασικεβεσκուս, Записки, стр. 195։

133. Բնագրում՝ εις την Πεοσιδα ειςβαλλει։ Ծրամարանական չէ, քանի որ մի քիչ հետո Թեոփանեսը զրում է, որ Շահր վարազը վախենում էր, որ կայսրը «Հայաստանի վրայով կներխուժի Պարսկաստան»։ Մորատոսը առաջարկում է «Πεοσιδα»-ի փոխարեն կարգալ «Αρμενία», այսինքն՝ Հերակլիոսը ներխուժեց Հայաստան, որով ամբողջ նախադասության միտքը պարզ կլինի (Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 344)։

134. Բնագրում՝ Σαρβαραζιας (var. Σαρβαρος)։ Նա Ֆարսիսանի (Ֆերուսիան), որ կոչվում էր նաև Թեոփան, տեղում էր, նշանակում է «թագավորական վարազ»։ Այդ անունով արժեքավոր են Մովսես Կաղանկատվացու տվյալները. «...րուն անուն իր Խոսրիան կոչէր. և վասն մղելոյ նորա և յորինելոյ ղեկավան պատերազմաց և զյաղթութիւնս կատարելոյ՝ ըստ խորագիրտութեան Պարսից այլ և այլ պճնող անուամբ յորջորջէ զնա՝ երբեմն Թագմիդական, և երբեմն Շահվարազ» (Մովսես Կաղանկատվացի, էջ 145—146)։ Թովմա Արծրունիին նրան կոչում է «Թագմայուզան որ է Խոսրիան» կամ «Խոսրի Եռազմայուզան» (Թովմա Արծրունի, էջ 89)։ Տե՛ս և ծանոթ. 38։

Ֆերուսիան Շահր Վարազը 605 թ. գրավեց Եղեռիան, 614-ին՝ Գամասկոսը, Երուսաղեմը, Հերակլիոսից պարտություններ կրեց 622-ին և 624-ին, իսկ 630-ի ապրիլի 27-ից մինչև հունիսի 9-ը հափշտակեց արքայից արքայի գահը։

135. κλίψαι τόν πόλεμον։ Հունարենում այդ դարձվածքը նշանակում է հաղթանակ տանել ոչ ըստ մարտում, այլ խորամանկությամբ։

136. Բեյնզն ու Պերիլեն գտնում են, որ լուսնի խավարումը տեղի ունեցավ 623 թ. հունվարի 23-ին (Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 346—347)։

137. Ոչ մի ժամանակագիր չի տալիս ո՛չ ճակատամարտի վայրի անունը, ո՛չ ժամանակը։ Ստրատոսի ենթադրությամբ տեղի ունեցավ Երկրորդ Հայբում, Սատաղի մոտ, Սատաղ-Քեոդոսուպոլիս մայրուղուց հարավ և հիսն այն տեղի ունեցավ լուսնի խավարումից 15—20 օր հետո (տե՛ս նախորդ ծանոթ.) ապա հավանաբար 623 թ. փետրվարի 7—12-ը (Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 348)։

138. Զրադաշտականության պանթեոնում արեգակը (Hvar կամ Hvaræ- Xšaëta-, տեղ արեգակ) գերագույն աստվածությունն է։ Հազկերտ II-ը հայերին ուղղված իր ուղերձը սկսում է այսպես. «Երգուեալ եմ յարեգակն ի մեծն աստուած, որ ճառագայթիւքն իւրով լուսատըլ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ կենդանածէ զամենայն զոյացեալսն» (Եղիշե, էջ 44—45)։ Եղիշեի ասելով, Հազկերտը այդ երգումը «երեքկնէր և չորեքկնէր զանստ երգումն յարեգակն» (նույն տեղում, էջ 47)։ Սասանյան շրջանում արեգակը այլևս Hvar-ը չէր, այլ Միհրը (Միթրան)։ Մովան արդիքապետը դիմելով հայերին արեգակի մասին ասում էր, թե նա «ճառագայթիւքն իւրով լուսատըլ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անասնոց, և վասն հասարակարաշխ աստութեանն և անաշառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած...» (Եղիշե, էջ 165)։ Հմմտ. Christensen, L'Iran, p. 143 sqq.

139. Ո՛չ Թեոփանեսը, ո՛չ էլ Պիսիդացին չեն նշում այս դարավարի անունը։ Ստրատոսը ենթադրում է, որ կարող է Հերակլիոսի եղբայր Քեոդոսոսը եղած լինի (Ստրատոս, Թո Յոզանտուս, Ա՛, թև. 353)։

140. Այսինքն՝ Կոստանդնուպոլիս։

141. Բնագրում՝ Σαγν։ Շահեն Վանմանդազան, Արեմուտքի պատգոսպանը։ Սերեոսը նրան անվանում է «Շահեն պատգոսպան» (Սերեոս, էջ 124)։ Նա 609 թ. «Շահեդպէր զաւրացն Յոճաց ի Կարին գաւառի։ Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր զնոսա սրով սուերի և փախտական արարեալ հալածական անէր յաշխարհէն» (նույն տեղում)։ 610 թ. նա մուտք գործեց նաև Կեսարիա։ Հատկական ժամանակագրության մեջ հիշված է որպես Σαγν Βαβρανζαδαγώ (Chronicon Paschale, p. 708)։ Ք. Պատկանյանը (տե՛ս Իστοրիա императора Иракля, стр. 205, прим. 173) կարծում է, որ Βαβρανζαδαγώ-ն Սերեոսի հիշատակած «պատգոսպան»-ի աղավաղումն է (տե՛ս Սերեոս, էջ 287, ծանոթ. 359), այսինչ զա «Վանմանդազակ» անունն է։ «Վանմանդազան» նշանակում է Վանմանդազակի (Վոնու-մանանի) որդի (տե՛ս Justi, Iranisches Namenbuch, S. 274, 374)։

142. Հունարեն ընագրում՝ φόρων φονεούτων (պատկանություններ սպանող), որ անիմաստ է։ Կ. Ամանտոսը ուղղում է φόρων φονεούτων «վախերն սպանող» (վախը փարատող), այսինքն հավատքը մարդուն արիությունում է լցնում (տե՛ս Ἁμάντος, Ἱστορία, Α՛, թև. 284, ծանոթ. 4)։

143. Այսինքն՝ հանուն քրիստոնեությունից զոհվելը հավիտենական կյանք է շնորհում՝ երկնային թագավորության մեջ։

144. Պորին Պարսկաստան (ἐνδοτέρα Περσικ)։ Այս արշավանքի (624) ընթացողու մասին, ինչպես և արշավանքի մասին ընդհանրապես, Թեոփանեսի և բյուզանդական մյուս հեղինակների տեղեկությունները շատ աղբյուրիկ են։ Հարուստ են հայկական աղբյուրների, առաջին հերթին Սերեոսի, Մովսես Կաղանկատվացու և Թովմա Արծրունու տվյալները։ 2. Մանանդյանը հետևյալ կերպ է գծում Հերակլիոսի այս արշավանքի ընթացությունը. Պոնտոսից և Փոքր Հայքից դեպի Կարին, այնտեղից

այժմյան Սարիզամիշի վրայով և Վանանդ ու Շիրակի գավառներով դեպի Դվին քաղաքը և ապա նախկինների վրայով դեպի Գանձակ (Մանանդյան, Հեթանոսությունները, էջ 145)։ Նշենք, որ Դվինը հավանաբար դիմադրություն ցուցաբերեց, այդ պատճառով Հերակլիոսը թույլ տվեց իր զինվորներին թալանել ու կրակի տալ այն։ Գեորգ Պրեզյուցին իր «Հերակլիոս» պոեմում, ջանալով արդարացնել Հերակլիոսին՝ քրիստոնեական քաղաք ավերած լինելու համար նշում է, որ ավելի լավ է բարեպաշտ կայսեր կողմից կործանվի մի քրիստոնեական քաղաք, քան թե անվնաս մնա ամբարիշտ հոստոսի ձեռքում («Հերակլիոս», Բ, տող 163—166. apud Տ τ ρ ά τ ο υ, Τὸ Βούζαντιον, Α', σελ. 390)։

145. **Բնագրում՝** Γαζαζα: Խոսքը Ատրպատականի Գանձակի (Շիր, Գ. Աբգարյանը սխալմամբ նուշնացնում է Քաղթիգի հետ, տե՛ս Սերբուս, էջ 291, ծանոթ. 427) մասին է։ Այստեղ էր գտնվում զրազաշտականների խոշորագույն սրբություններից մեկը՝ Ատրվշտապար Քաղաքի լրիվ անվանումն էր Գանձ ի Շիրգազան կամ Գանձ ի Շիրգազան։ Հերակլիոսի ընթացողին Անրեսը գտավ է հետևյալ կերպ. Կոստանդնուպոլսից Քաղկեդոնի ու Կեսարիայի վրայով Կարին, այնտեղից Դվին, նախնաժամ և վերջապես քի Գանձակ Ատրպատականի, որտեղ նա «կործանել և զբաղինս Հրատին մեծի, որում Վշնասպն կոչլին» (Սերբուս, էջ 124)։

Ուրմիայի շրջանում տեղի ունեցած պատերազմական գործողությունների և Գանձակի զրավունների վերաբերյալ կա հատուկ ուսումնասիրություն (ինձ անմատչելի) N. H. Baynes. The military operations of the emperor Heraclius. The United Services Magazine, 1913, vol. XLVI և XLVII (apud *Minorsky*, Campaigns in Atropatene, p. 109)։

146. **Տե՛ս ծանոթ. 131:**

147. **Ինչպես պարզվում է** Զատիկյան ժամանակագրությունից, Հերակլիոսը Գանձակում մնաց 27 օր, այնտեղից Կոստանդնուպոլսի ուղարկած նամակում նա Գանձակի մասին գրում էր, թե այն կատարյալ քաղաք է (τελεια), բազմամարդ, անասուններով հարուստ, ունի շուրջ 3000 տուն։ Քաղաքագետին կայսրն անվանում է Բարեսմանաս, որն իմանալով հոռոմայեցիների Զարա (Ζάρα) լեռն անցնելու մասին, հեռացավ դեպի լեռներն ու ամուր բերդերը (Ch ronicon Paschale, p. 732) Հերակլիոսը Գանձակից հեռացավ ապրիլի 8-ին, նպատակ ունենալով շարժվել Հայաստանի վրայով (նույն տեղում, էջ 734)։

148. **Բնագրում՝** Θηβαρχαίς (հանդիպում է և Βιβαρχαίς ևեր)։ Արշակունչաց մի բերդ էր՝ Beth Aramaje (այժմ՝ Թախտ-ի Սուլայման)։ Սրբազան հուրը Ատրպատականի Գանձակից այդտեղ էր տեղափոխվել (տե՛ս *Minorsky*, Campaigns in Atropatene, p. 92)։ Թեև արամայի վաղադույն հիշատակությունը հանդիպում է Մենանդրոս Պրոտեկտորի երկում (*Menandri Excerpta*, p. 365), որտեղ ասված է, որ բյուզանդացի զենսպան Պետրոս Պատրիկիոսը 562 թ. այցելել է պարսից արքային Βιβαρχαίς կողմից վայրում։ Այլ հիշատակությունների մասին տե՛ս *Minorsky*, Campaigns in Atropatene, p. 93: Թախտ-ի Սուլայմանի մասին տե՛ս *Van der Osten, Naumant*, Takht-i Suleiman:

149. **Բնագրում՝** ή πλάνη των ἀνδράκων: Հավանաբար նկատի ունի ատրուշանը։

150. **Բնագրում՝** Δασταγέρθη, պարս. Դաստագարդ-Պուսեր, արաբական աղբյուրների էլ Դասկարան կամ Դասկարար-լ-Մալիքը։ Գտնվում էր Տիգրանից Համարան տանող ռազմական մեծ ճանապարհի վրա, մայրաքաղաքից 107 կմ

Հյուսիս-արևելք, հին Արտամիտա քաղաքի մոտ։ Քաղաքի ավերակներն այժմ կոչվում են Զեհդան (զեղան-բանա)։ Մանրամասն տե՛ս *Christensen*, L'Iran, p. 454—455:

151. Նիկիֆոր պատրիարքը ցույց է տալիս, որ հոստոսը Հրո տաճարներից մեկում իրեն աստվածացրել էր։ Նա իր գահը տեղադրել էր տաճարի գմբեթի տակ, կարծես երկնքում, շուրջը նկարել տվել կայծակներ, արեգակ ու լուսին, հրեշտակներ և այլն։ Հատուկ հարմարանքով նա ցանկացած ժամանակ որոտ էր բարձրացնում ու անձրև թափում։ Հենց այդ գահը գետին տապալեց ու ոչնչացրեց Հերակլիոսը (*Nicephori Breviarium*, p. 19)։

152. Թովմա Արծրունին որոշակի գրում է, թե Հերակլիոսը բացի Դվինից, ավերել է «զնախնաան և զՈրմի (Ուրմիա), և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ գնա, աւերէ զԱհմատան և զՄայ, կործանէ զբաղին Հրատին մեծի, որում Վշնասպն կոչլին, և լնուն գծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբբ. զխօսուն և զանասուն, զայր և զհին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի» (Թովմա Արծրունի, էջ 92—93)։

153. Աղվանքում։ Հերակլի Գանձակից Աղվանք վերադարձի ընթացողին տալիս է Սերեսը. «առ ամուր աշխարհամ Մարաց» (Ղարազդի լեռներով) Փայտակարան, այն է Գանձակից, այժմյան Միանի և Արդարիլի վրայով դեպի Արարսի ներքին հոսանքի շրջանը, որտեղ գտնվում էր Փայտակարանը, որտեղից էլ, Մովսես Կաղանկատվացու տվյալներով, ուղևորվեց դեպի Ուտի և այնտեղ գրավեց Աղվանքի մայրաքաղաք Պարտավը։ Ըստ Մանանդյանի կայսրն այնտեղ անցկացրեց 623—624 թթ. ձմեռը (Մանանդյան, Հեթանոսությունները, էջ 149—150), իսկ ըստ Ստրատոնի՝ 624—625 թթ. ձմեռը (Տ τ ρ ά τ ο υ, Τὸ Βούζαντιον, Α', σελ. 402)։

154. **Բնագրում՝** ἀγυίεσθαι: «Սըրմիլ» այսինքն՝ մաքրվել, այդ բառի և՛ ուղղակի և՛ անուղղակի իմաստով։ Ստրատոսը րացատրում է «ծո՞ծ պահել» (Տ τ ρ ά τ ο υ, Τὸ Βούζαντιον, Α', σελ. 399)։

155. **Բնագրում՝** Σαραβλαχάν: Սերեսը նրան անվանում է Շահրապղական (Սերբուս, էջ 113)։ Հայ պատմիչի ասելով, Շահրապղականը պարսից մարդպանն էր և նրստում էր Դվին ոստանում։ «Մա արար կուի մի ի Պարս և յաղթեաց» (նույն տեղում)։ Հմմ. Մովսես Կաղանկատվացի, էջ 150. «Ապա եկեալ... զօր պարսից, զորս նոր զօր անուանեն, և էր զօրադուխ նոցա Շահրապղական». «զյօժարն և զբայ պատերազմող զօրադուխն իւր զՇահրապղայ» (Մովսես Կաղանկատվացի, էջ 156)։

Շահրապղական թարգմանաբար նշանակում է «թագավորական հովազ»։

156. «Պերոզական» կոչվող գնդի մասին հիշատակություն ունի Սերեսը (էջ 96)։ Քասեանյանը թեև գրում է «զգիտեն ինչ է նշանակում Պերոզական գունդ», բացատրում է «հաղթական» ըսկատ, որովհետև Պերոզ նշանակում է «հաղթող» (История императора Иракла, стр. 200, прим. 271)։ Այլ (անընդունելի) կարծիքների մասին տե՛ս Սերբուս, էջ 257, ծանոթ. 271: Այն փաստը, որ Թեոփանեսը կողք կողքի նշում է «հոստովական» և «Պերոզական» զորագնդերը, նշանակում է, որ զորագնդերը կրում էին արքայից արքաների անունները և «Պերոզական» նշանակում է Պերոզ արքայի անունը կրող, ինչպես որ «հոստովական» նշանակում է հոստով արքայի անունը կրող։ Միտքը հաստատում է Մովսես Կաղանկատվացին. «Ապա և բազումք ի գնդից գնդից՝ ի դոնապահաց և

- ի թիկնապահաց, և յանուակաց դրանն հոսրութու...» (էջ 167): Ք. Պատկանյանը «յանուակաց»-ը թարգմանում է «КОЛЕСНИЧИХ» երևի «անիւ» բառից բխեցնելով (տե՛ս Моисей Казанкаваца, стр. 115) «անիւ կրող», բայց ավելի հավանական է «անուրը (հոսրութի) կրող» «եսորովական»: «Յանուակաց»-ը պետք է ուղղել «յանուլանլակաց»: Այս զորագեղերը Ստրաբոնի ենթադրությամբ զըլխավորում էր Մովսէս Կաղանկատվացու հիշատակած (էջ 150) Գրանիկ Սազարը:
- 157. Այսինքն՝ Շահր Վարազին և Շահրապահանին:
- 158. Բնագրում՝ τοδλδον: Այս բառի տակ ենթադրվում են զինվորների հանգերձանքը և նրանց սպասարկող անձնակազմը՝ ծառաները, գրաստը և այլն, ինչ նախատեսված է բանակի կերակրման համար, այդ թվում և բանակի անհրաժեշտ իրերը (տե՛ս Dait, „Touldos“, p. 161—169: նաև Липшиц, Очерки, стр. 246—247):
- 159. Աղվանքում տեղի ունեցած զեպրերի մասին ավելի հստակ և բովանդակալից տեղեկություններ է պահպանել Սերնոսը՝ նա վկայում է, որ Հերակլիոսը, իմանալով հոռւամի (Շահր Վարազի) կոստանդնուպոլսի պաշարումից հրամարվելու և հոսրութի օգնության շտապելու մասին, «աճուս զգարս իր և զերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհան Մարաց, գայ հասանէ ի Փայտակարան»: հոսրութը տեղեկանալով այն մասին, որ Հերակլիոսը, «եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անջանել ի Վիրս», հրամայում է իր զորավար Շահր Վարազին կտրել նրա ճանապարհը: Շահր Վարազը Այրարատի վրայով մտնում է Գարզման և Տիգրանակերտ ավանի մոտ իր Շահն զորավարի ՅՏ նազարանոց բանակով օղակում կայսերի Հերակլիոսը կարողանում է նրանց պարտութիւն մատենել, անցնել վըրճոնիս ավանը, այնտեղից էլ Բազրեանը և Ապահունի (Սերնոս, դ. ՂԷ: Տե՛ս և Մանանդյան, Ընթացողիները, էջ 151 և հտ.): Տիգրանակերտի ավերակները, ըստ Մանանդյանի, գտնվում են Տարնատու գյուղի Շահրուպը բերդի մոտ, Աղղամից 8—10 կմ հյուսիս-արևմուտք, Եվլախ-Շուշի ճակատարհի վրա:
- 160. Հունարենն քննարկը տալիս է Οὐννων χῶρα «ունների երկիր» ընթերցումը: Անաստասիոս բիբլիոթեկարիոսի լատիներեն թարգմանութիւնը՝ in regione Hunnorum, որը, սակայն պիտի ուղղել Οὐννων χῶρα, որ, անկասկած, Սյուսերին է: Հայկական աղբյուրներում պարզ ցույց է տրված ուղղման գործողությունների Սյունիքում տեղի ունեցած լինելու մասին: Տե՛ս Մովսէս Կաղանկատվացի, էջ 150: Մանանդյանն այդ ընթացողին գծում է հետևյալ կերպ. «Տարնատուի շրջանից Եվլախ-Շուշի ճանապարհով, Շուշիի և Գորիսի վրայով զեպի Սյունիքի Սղուկ տեղը և այնտեղից Անգեղակոթի և Բիշնեադի լեռանցքով զեպի Նախիջան: Մանանդյան, Ընթացողիները, էջ 153:
- 161. Բնագրում՝ Περσαρμενια, այսինքն պարսից տիրապետութիւնի տակ գտնվող Հայաստան:
- 162. Տե՛ս ծանոթ. 135:
- 163. Բնագրում՝ χωρίον Σαλβανών: Ամենայն հավանականութամբ խոսքը Աղիոպիտ գավառի Աղի ավանի մասին է, քանզի խնդրու առարկա ճակատամարտը, ըստ Սերնոսի, այնտեղ է տեղի ունեցել (Սերնոս, էջ 125: Մանանդյան, Ընթացողիները, էջ 157):
- 164. Հմմտ. Սերնոս, էջ 126. «Բայց Շահր Վարազ զերծաւ՝ նստեալ ի վերայ նուսաս երկվարի... իսկ Երակլոս առ զաւար և զկապուտ բանակի նոցա, դարձաւ յաղթութեամբ մեծաւ»: Սերնոսի համաձայնությամբ Սերնոսը զարգացրել էր Սերնոսի անվանումը, որը համաձայն էր Սերնոսի համաձայնությանը (Սերնոս, էջ 125): Սերնոսը զարգացրել էր Սերնոսի անվանումը, որը համաձայն էր Սերնոսի համաձայնությանը (Սերնոս, էջ 125):

- 165. Այժմ՝ Գերենդե: Գտնվում էր Երկրորդ Հայքում: Սակայն ըստ Մանանդյանի, Թեոփանեսի ընդգրում աղավաղում կա, նրա կարծիքով խոսքը ավելի շուտ Կարինի շրջանի մասին է:
- 166. Բնագրում՝ Σύρων γῆν: Բայց ըստ Ստրաբոնի ոչ մի կապ չունի Ասորիքի հետ, այլ Բիթլիս տանող ճանապարհն է (Στράβου, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 440):
- 167. Հայկական աղբյուրների Քաղիթթը, այժմ՝ Բաթման-սու:
- 168. Այժմ՝ Մարաշ:
- 169. Ելնելով այս ընթացողու անտրամարանությունից, Թամզիք Աղանյի փոխարեն ուղում է կարգալ Ադատա (Ramsey, HGAM, p. 311: apud: (Στράβου, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 448): Բոլոր զեպրերում Թեոփանեսի գծած ընթացողին այստեղ համարվում է սխալաշատ ու անտրամարանական (Στράβου, նույն տեղում, էջ 449):
- 170. Այժմ կոչվում է Սյունն կամ Սայունն:
- 171. Բնագրում՝ μαχαρίτης: Տե՛ս նաև էջ 53 և 148: Թեոփանեսն այդ գոյականից բայ էլ է ստեղծում՝ μαχαρίζω: Տեքստի մասին տե՛ս Ερημισθῆ, ΕΤΙΜΟΛΟΓΙΑ γλαγολα μαχαρίζω, стр. 120—121:
- 172. Բնագրում՝ Καῖσαρ: Այգյուս էին կոչում բյուզանդական կայսեր և հայերը:
- 173. Նեստորականությունն իր անունը պարտական է Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորին (428—431), որի վարդապետութիւնն էր կայանում էր նրանում, որ նա Քրիստոսի երկու բնությունները՝ աստվածային և մարդկային իրարից բաժան էր ընդունում, որով Մարիամին Քրիստոսածին էր համարում, և ոչ Աստվածածին: Նրա վարդապետությունը սկզբում տարածվեց Ալեքսանդրիայում, որի դեմ հանդես եկավ Կյուրեղ Ալեքսանդրացին և Հռոմի պապ Կելեստինոսը: Երբ վեճերը լայն ծավալ ստացան, Թեոդոսիոս II կայսրը 431 թ. գումարեց Եփեսոսի III Տիեզերական ժողովը և դատապարտեց Նեստորին ու պաշտոնակ հայտարարեց: Նրա հետևորդները հալածանքների ենթարկվելով ապաստարան գտան Պարսկաստանում: Այնտեղ լայն դործունեություն ծավալեց 435 թ. Մծրինի եպիսկոպոս ձեռնադրված Թովմա Բարսուսան: 489 թ. Ջենոն կայսրը փակեց Եփեսոսի դպրոցը, իսկ նրա ուսուցիչներն ու աշակերտները փախան Պարսկաստան և հիմնադրեցին Մծրինի դպրոցը: 496 թ. Սելևկիայի նեստորական արքեպիսկոպոս ընտրված Բաբոսը 498 թ. ժողով գումարեց և Պարսկաստանի նեստորական եկեղեցին անջատեց ուղղափառ եկեղեցուց: Նեստորականներին հետագայում հովանավորեցին Ա պարսիկները, և՛ արաբները: Նեստորականությունը տարածվեց նաև Հայաստանում, թեև եկեղեցու կողմից միշտ էլ հալածվեց: 554 թ. ներսես Ի Բազրեանցի կաթողիկոսը Գլինի ժողովում դատապարտեց նրանց: Այդ մասին մանրամասն տե՛ս Տեր-Մինասյան, Նեստորականությունը Հայաստանում, էջ 330—393:
- 174. Թեոփանեսը բուզարներին առաջին անգամ հիշատակում է աշխարհի արարչագործության 5994 (502) թվականի տակ, Անաստասիոս կայսեր թագավորության 11-րդ տարում, ցույց տալով, որ նրանք ավարարել են Իլլիրիկոնն ու Թրակիան: Նրանք 6006 (514) Անաստասիոս կայսեր դեմ ապստամբած ֆեդերատների կոմես Պատրիկիոսի որդի Վիտալիանոսի բանակում էին ծառայում և նրա զլխավորությունում գրավում են Անեթիանոս ու Օրիսոսպոլիսը (Վառնան): 6031 (539) թվականին հիշվում են բուզարներ, որոնք իրենց ցեղապետների (բնագրում՝ ռեքս) զըլխավորությամբ ավարարում են Սկյութիան, Մեդիան և Թրակիան: Հուստինիանոս I

- կայսրը զերի ընկած բուլղարներին ուղարկում է Հայաստան և Լազիկա գրեմիորական ծառայութեան (ἐπεμψεν ὁ βασιλεὺς εἰς Ἀρμενίαν καὶ εἰς Λαζικήν, καὶ κατετίθησαν ἐν τοῖς νοσημερίαις ἀριθμοῖς. Theoph. Chron, I, p. 219): **Վերջապես** նրանք հիշատակվում են և Մավրիկիոս կայսեր թագավորութեան 15-րդ տարում, աշխարհի արարչագործութեան 6089 (597) թ.:
175. ենթադրվում են սլավոնները: Նրկեփոր պատրիարքը ցույց է տալիս, որ պատերազմական գործողություններին մասնակցում էին նաև սլավոն կանայք (Nicephori Breviarium, p. 21):
176. Հունական աղբյուրներում Γήπειος են կոչվել գոթերին ազգակից և Արևմուտքում զնվիրված կոչվող ցեղը: Մկրենական շրջանում բնակվում էին Կարպատների մոտ և վերստին հանդես եկան 111 դ. վերջում: Մասնակցություն ունեցան Աստիլայի ներխուժումին, ապա գրավեցին Գալիան և բավական նեղություն պատճառեցին կայսրության:
177. Քաղաքի պաշտպանության ուղարկված զորքերի մեջ կային և հայեր, Ինչպես գրված է «Ջառական ժամանակագրության» մեջ, հայերը Վլախեանայի պարսպից դուրս եկան և սբ. Նիկողայոսի նկնղնցու մոտ զտնվող սյունաշարքը կրակի ափեցին: Մավրիկիոսը, ենթադրելով, որ ժողի ափին կանդնածները ափարներ են, ափ դուրս եկան, բայց ընկնելով հայերի ձեռքը, սբի քաղեցին (տե՛ս Chronicon Paschale, p. 724):
178. «Արևելքի թուրք» է կոչում, որպեսզի չշփոթվեն «Արևմուտքի (Պանոնիայի) թուրքերի» հետ, որոնց տակ ենթադրվում են հուլաքացիները: Խաղարների թուրք են կոչում նաև արաբները (տե՛ս Артамонов, История хазар, стр. 114), որոնք, իմիջի այլոց ալ-Խուտաճրին և իրեն Հաուկայը, գրում են, թե խաղարների լեզուն նման է բուլղարների լեզվին (նույն տեղում, էջ 115): Իրենք խաղարները իրենց ազգակից են համարում ուզրերի, ափարների, գուգերի, բարսիլների, օնգուրների, բուլղարների և սավիրների (նույն տեղում):
179. Խաղարները (էթնոնիմը ծագում է թյուրքական «կազ» (բռչել) բառահիմքից) թրքախոս հունական ցեղեր էին, որոնք հաստատվեցին արևելյան Եվրոպայի հարավային մասում: Նրանց առաջին հիշատակությունը իրենց սեփական անվամբ տալիս է Մովսես Խորենացին (Αρταμονος, История хазар, стр. 17): Հայ պատմիչը գրում է. «միարանեալ ամբոխութիւն ի հեախսականացն, զեսաղաց ասեմ և զբաւաց, արտաքս քան զդուռն ձորայ եյանեի...» (Գիրք Ա, գլ. 45): Խաղարների մասին շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում «Աշխարհացոյցը»: Եղիշեն նրանց հոններ է անվանում: Հարուստ են Մովսես Կաղանկատացու, մասամբ՝ Ստեփանոս Տարննցու աշխատքերը: Բյուզանդական հեղինակներից առաջինը Թեոփանես է նրանց հիշատակում՝ հիշյալ տեղում:
180. Հմմտ. «Եւ թագաւորն հրախոյն է հականն՝ որ է տէր Խաղրաց, և զչխոյն թագուհի է, խաթունն, որ է կին հականայ...»: «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 348: Տե՛ս վերը, ծանոթ. 120:
181. Բնագրում՝ Ζεβγίλ: Նույնանում է Մովսես Կաղանկատացու հիշատակած Ջերու խաբանի հետ, որ «էր երկրորդ թագաւորութեանն նորա» (իմա խաբանի: Մովսես Կաղանկատացի, էջ 160: «Առաջինը» Ջերույի եղբայր Թուն-Շխուն էր): Նշենք այստեղ, որ «Ջերու» անուն չէ, այլ տիտղոս («Ջարդու», այդպես էին կոչվում արևմտյան թուրքերի զեգեմոնները: Տե՛ս Marquart, Streifzüge, S. 394 և

- 496—498. apud: Σ τράτου, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 556: Հմմտ. Артамонов, История хазар, стр. 145, 146): **Ջերու խաբանի անունը Մոխո-շաղ էր** (նույն տեղում, էջ 146). **Ջերու խաբանի մասին տես նաև Golden, Khazar Studies, էջ 51.**
182. Բնագրում՝ Ἀδραγγάν (var. Ἀδραγγόν): **Նրկեփոր պատրիարքը գրում է** Ἀδρασαγγάν, **ափելի հին աղբյուրներում՝** Ἀδραπατηγή: Բյուզանդական աղբյուրներում հանդիպում է նաև Ἀδραβιγγάνων ձևը: Հայկական Ասորպատականը, ասորերեն՝ Ադրբայզան: Այստեղ խոսքը պարսկական Ասորպատականի մասին է: Մասնայանների ժամանակ կոչվում էր Ադրբայջան և կառավարվում էր մարզպանի կողմից, որ պատկանում էր Յարուք-Որմիզզ ընտանիքին: Կենտրոնը Շիզ (կամ Գանձակ) քաղաքն էր, ժամանակակից Հայլանի տեղում՝ Ուրմիայի լճից հարավարևելք: Այստեղ կար կրակի մի նշանավոր տաճար, որն այցելում էին սասանյան արքաներն իրենց գահ՝ բարձրանալու առթիվ: Ափելի ուշ սրբազան կրակը տեղափոխվեց Արշակունիների Բիթարմայա կամ Թնարմայա (այժմ՝ Թախտ-ի Սուլայման) վայրը: Մանրամասն տե՛ս J. Hell-ի հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. Ա, էջ 194 և հտ.:
183. Բնագրում՝ Τριλις: Անե՛ք այստեղ, որ Մովսես Կաղանկատացու տվյալներով քաղաքը պաշտպանում էր պարսիկ զորավար «թաջ պատերազմող» Շարհապաղան (Մովսես Կաղանկատացի, էջ 156): Բայց, ինչպես Թեոփանեսից գիտենք, նա 6115 թ. սպանվել էր (բնագրում՝ օրնկալ թիվունից սրի հարված ստանալով): Ստրատոսը գտնում է, որ «ընկալ» զեռ չի նշանակում սպանվեց, այլ հնարավոր է, որ նա վիրավորվեց: Σ τράτου, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 561):
184. Արտամանովի կարծիքով, նա Ջերու խաբան Մոխո-շաղի կրտսեր որդի Բուլի-շաղն էր (Arta Monos, История хазар, стр. 147):
185. Իմա՝ Կոստանդնուպոլիսի Սերբոսը Քաղկեդոնը գրավողի և Կոստանդնուպոլիսը պաշարողի անունն է տալիս՝ Խոսրյամ, և ոչ տիտղոսը՝ Շահր Վարադ:
186. Իմա՝ Գանուր:
187. Աղբյուրներում այդ նավերը (այստեղ՝ σκάφη γλυπτά) կոչվում են նաև μονόξυλα այսինքն միակտոր ծառի բնից պատրաստված նավեր:
188. Ոսկեղջյուր կոչվածի՝ Κεράτιος κάπρος:
189. «Պերսասիկաց» շրջանների տակ ենթադրվում են Անատոլիոսն ու Օսսիկիոնը: Տե՛ս ծանոթ. 517:
190. Իմա՝ խաղարների: Տե՛ս ծանոթ. 178:
191. Բնագրում՝ Παζάτης: Սերբոսի Ռոճ վեհան (var. Ռոճիկ վեհան) զորավարը, որ իսկապես սպանվեց Նինվեի ճակատամարտում (Սերբոս, էջ 126): Մովսես Կաղանկատացին նրան անվանում է Ռոճիկ (էջ 163), Նրկեփոր պատրիարքը՝ Παζάτης (էջ 21):
192. Բնագրում՝ Χαμαγηθᾶ: Անձանոթ շրջան, որ նույնացնում են Թեոփիլակոսու Միմոկատտասի հիշատակած Խնայթա վայրի հետ, Արբելից հյուսիս:
193. Սիրիցենն այն կոչում է Սորազան: Հայկական աղբյուրներում հիշվում է Մեծ Զալ, ձևով՝ Այժմ էլ այդպես է կոչվում (տե՛ս Նոնմյան, Հայաստանը, էջ 66): Տիգրիս գետի արևելյան վտակը, Մոսուլից (Նինվե) 40 կմ հարավ: Հերակլիոսը Մեծ Զարն անցավ 626 թ. դեկտեմբերի 1-ին: Փոքր Զարը գտնվում է Մեծ Զարից 95 կմ հարավ:

- 194. Երևանի տեղում այժմ գտնվում է Մոսուլ քաղաքի ձախտամարտը տեղի ունեցավ 626 թ. դեկտեմբերի 12-ին:
- 195. Բնագրում՝ Βιαννης ὁ στρατάρχης: Հնապաշտում նա մասնակցեց Ծարձակի նշանավոր ճակատամարտին (20 օգոստոս 636 թ.):
- 196. Երևանի որպիսիք քրում է, որ կայսեր շրթունքը վերավորվեց՝ ճեղքաձուլվելու մեջ վարպետ շիրազանի արձակած նետից: Հերակլիտոսը վերավորվեց նաև ստրիգ՝ նույն շիրազանի անձամբ նետից (Nicephori Breviarium, p. 21—22):
- 197. Պարսից բանակում, հասկանալի է, բյուզանդական տերմինաբանությունը չէր բնորոշված: Քեթիանեսը նրանց ստորմարի է անվանում բյուզանդական ձևով: Տարմարիսը գլխավորում էր 500 նետամիր, 300 վահանակիր և 100 նիզակակիր (տե՛ս Կոստանդին Սիրանաթին, էջ 233):
- 198. Ժամը 11-ը չի համապատասխանում մեր այդ ժամին: Բյուզանդացիների առաջին ժամը արեծաղն է, 6-րդ ժամը՝ կեսօրը:
- 199. Գիշերվա առաջին ժամը համապատասխանում է արևմտալի առաջին ժամին:
- 200. Ահարամագիտները զգեստի անվանում է, մի տեսակ քաֆիան: Տե՛ս Կոստանդին Սիրանաթին, էջ 300:
- 201. Կարէի է կարգու նաև Վարսամուսու: Ըստ Մարկվարտի (Streifzüge, S. 401), նա Վահրամ Աշուշան է, Գուգարբի իշխանը (apud: Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 911):
- 202. Բնագրում՝ ἐκ τοῦ Βυζαντίου, Բյուզանդիոնից: Քանի որ Շահր Վարազը Բյուզանդիոնը չէր գրավել, Տաֆիր Օբյուզանդիոնի կողմից գրում է τῆς Χαλκηδόνος քաղաքից, որ թեև չկա ո՛չ Քեթիանեսի բնագրում, ո՛չ էլ Անատոսիոսի լատիներեն թարգմանության մեջ, համարվում է ճիշտ: Ստրատոսը ἐκ Βυζαντίου մեկնաբանում է բյուզանդական հողերից (Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 592), որ անհավանական է, քանի որ այն ժամանակ բյուզանդականը չունեի այն նշանակությունը, ինչ այսօր:
- 203. Փոքր Զարի մասին տե՛ս ծանոթ. 193:
- 204. Դեսթիլ (Ծաղղեն): Ծագումով լաոսի քրիստոնյա էր և սասանյանների տերության ֆինանսների վարչության խոշորագույն գործիչներից մեկը: Տե՛ս Christensen, L'Iran, p. 123. 451 sqq.: Այդ պաշտոնը կրողը կոչվում էր västryöshān-sāiār կամ västryöshbadh:
- 205. Գեկանեբերի 25-ին:
- 206. Բնագրում՝ Δεζερβάν:
- 207. Ուսումնասիրողներից ոմանք նույնացնում են Քանեխոնի հիշատակած Փյուսկոս գետի հետ («Անարափոս», Թ, 25): Բխում է Կորդվաց լեռներից և թափվում է Տիրիսի ձախ ափին: Հետագայում արարներն անվանեցին Սորանեհ, իսկ թուրքերը՝ Կատրիսու: Այժմ կոչվում է Ազեմ: Ըստ Ռուսլինսոնի Տորնան պարսկերեն Tur Nahr-ն է, կամ Kan-Tur-ը, արաբ. Katur, որ նշանակում է Տուրի ջրանցք: Այդպես է կոչվում Nahr-Wan ջրանցքի հյուսիսային բազուկը (Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 912):
- 208. Ըստ Ռուսլինսոնի, տաների տեղափոխություն է տեղի ունեցել և ճիշտ ընթերցումը Սուրա է: Ենթադրաբար նույնացվում է ասորիների Սորի կամ Բեթ Սորիի հետ (Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 950):

- 209. Վայրը Բեկղազ ձևով հիշատակում է Մովսես Կաղանկատվացին (էջ 201): Ըստ Ռուսլինսոնի (Rawlinson, Memoir p. 94: Apud: Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 936) Beit Germa-յի ազգագրումն է, ժամանակակից Քիրքուքը:
- 210. Հմմտ. ծանոթ. 150: «Դաստակերտ» բառի նշանակությունների մասին տե՛ս Կարկեսյա, Даггарет, стр. 97—101:
- 211. Բնագրում՝ Βαρταρῶν (Վարադ-անդ, «վարազների գետ»): Այժմ կոչվում է Beled-Ruz: Քեթիանեսի գրածը հավանաբար վերաբերում է գետի անունը կրող մի ավանի (Σ τ ρ ἄ τ ο ο, Τὸ Βυζάντιον, Β', թ. 936):
- 212. Այն է՝ Տիրոն:
- 213. Բնագրում՝ Βαζδάρχ: Ռուսլինսոնի ենթադրությամբ գտնվում էր Դաստակերտի մոտ:
- 214. Բնագրում՝ ἄλοχ (հայերեն՝ «նալու», երբ. «սահլու» և «սահլոթ»): Քուփ, նաև անուշահոտ յուղային փայտ: Սուրբ գրքում համախ է հանդիպում, որի տակ ենթադրվում է aquilaria agallocha-ն: Նրանից ստացվում է անուշահոտ յուղ, որով, ըստ նոր կտակարանի (Յովհ. ԺԺ, 39), թաղելու ժամանակ օծեցին Քրիստոսի մարմինը:
- 215. Կիսրը (12 ունկ) նաև ծանրություն չափ է: Կշռում է 336,4 գրամ: Մանանդյան, Կշիռները, էջ 29 և 129:
- 216. Բնագրում՝ χαρβάσι: Հուճարե՞ս յառաաններում բարդ բացակայում է: Ամենայն հավանականությամբ պարսկերեն բարձրաս (կերպաս) բառն է:
- 217. Հուճվարի 6-ին:
- 218. Երևի Խոսրովի թիկնեղությունը վրա:
- 219. Սելևկիա (Վե՛ Արտաշիր) քաղաքը: Հիմնադրել էր Արտաշիր Պապականը հռոմեական զորավար Ավիդիոս Կասիոսի կողմից 165 թ. անկրակ դարձված հին Սելևկիայի տեղում: Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 166. «սախելս կամըջին Տիրիս գետոյ՝ ընդ Վե՛: Արտաշիր քաղաքի յանդիման դրանն Տիրոնի»:
- 220. Քեթիանեսի Սիմոկատոսը Տիրիսին համարում է հոսմանցի և քրիստոնյա (Theophyl. Simocat., p. 231—232): Քասիլիին նրան անվանում է «զեղեցկություն պարտեզ, տիրոյանը լիալուսնի», (Christensen, L'Iran, p. 475): Այն պատճառով, որ նա քրիստոնյա էր, և՛ արևմտյան, և՛ արևելյան բաղում աղբյուրներ նրան հույն են համարում, սակայն անունը, որ նշանակում է «քաղցր», իրանական է: Սերենսը (էջ 85) ցույց է տալիս, որ նա ծագումով Խոսրոսանից էր (սեհին սորա (Խոսրոս) բաղում ըստ արևի մագոթեան իրանաց, բայց առ սա և կանայս քրիստոնեայս, և սորա կին քրիստոնեայ յոյժ զեղեցիկ ի Խոսրոստան աշխարհէ, անունն Տիրին: Սա է բամբիշն, տիկնաց տիկին...): Խոսրովը ամուսնացել էր նրա հետ իր իշխանության սկզբում: Տիրինը ստորագրվում էր բյուզանդացի իշխանուհի Մարիային, որին Խոսրովը կնության առավ զլիապարապես քաղաքական նկատառումներով: Հիշյալ Մարիան Տարսիի ասելով իբրև թե Մավրիկիոս կայսեր դուստրն էր (Christensen, L'Iran, p. 475—476):
- 221. Մեղադրանքն անհիմն չէր: Ըստ Սերենսի, Հերակլիտոս «ակամայ բարեկամանայ և մեծարկ զնոսա իբրև զվաստակարոս և զսիրիկ հերս. ել ընդ առաջ նորա (Կոստանդինուպոլիսը պաշարող Շահր Վարազի)՝ պատարագաբ, և տայր զարավարին և իշխանացն մեծամեծ ընծայալ Եւ բաշխեր զարացն հոռոս, և ճաշ և ընթրիս ամենայն զարացն մինչև ցեղին ար» (էջ 122):

- 222. Խոսքը այդ անունով գետի մասին չէ, այլ Nahr-Wan ջրանցքի, որ կապում է Տիգրիսը Գիլգամի հետ, Տիգրոսից 12 մղոն առաջ:
- 223. Արմենիականների բանակաթեմի մասին տե՛ս Կոստանդին Միրանձին, էջ 167—169, 231, 318—319:
- 224. Պարսիկերեն՝ Shahrazūr, ըստ Զատիկական ժամանակագրության Տարածարչ Հերակլիտոսն այստեղ հասավ 628 թ. փետրվարին: Ումանց ենթագրությունը գրտնրվում էր Զագրոս լեռան և Sīrvan գետի միջև: Մանանդյանը տեղագրում է ժամանակակից Մուլայմանիս քաղաքից հարավ-արևելք:
- 225. Բնագրում՝ Μελέτων: Համապատասխանում է Սերեոսի «զարավարն Յունաց Մեծի Գնունին» անձնավորության (էջ 131):
- 226. Բնագրում՝ Γουδαβουζαα (Գուճնասպ < Վճնասպ Ասպպ): Գուցն նույնանուն է Մովսես Կաղանկատվացու Գաղ Վճնասպի հետ, որ «էր այդ յաղթանդամ և զորեղ ի սոճմէ զնգապետութեան ազգին իւրոյ» (էջ 178): Ըստ երևույթին անվան ավելի ճիշտ ձևը պահպանվել է Հերակլիտոսի Կոստանդնուպոլիս ուղարկած նամակում՝ Χρονικόν Πασχάλε (Chronicon Paschale, p. 728): Թեոփանեսը նրան անվանում է χιλιαρχος, որ թարգմանաբար հազարապետ է նշանակում: Ստրատոսը կասկածում է, ինչպես կարող է հասարակ հազարապետը ողջ պարսկական բանակի սպարապետը լինել, չէ՞ որ սպարապետությունը ազնվականական հայտնի բնականիքների մենաշնորհն էր (Στρατόν, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 625): Սերևի հակասությունը չկա այստեղ, Թեոփանեսը լսելով պարսիկերեն «հազարապետ», թարգմանել է χιλιαρχος, այնինչ «հազարապետ» պարսկական (և հայկական) բարձր տիտղոս էր, պ՛չ. hazārapat հին պարսկ. hazahrapati, պարսկ. hazārbād (Անադյան, Արմատական բառարան, հատ. III, էջ 6): Եղիշեից պարզվում է, որ «հազարապետ»-ի հոմանիշն է «հրամատարը», որ հասկանալի է, հազար զինվորից բաղկացած զորամասի հրամանատարը չէր: Ինչպես ցույց է տալիս Բենվինիստը հունարեն Աստվածաշնչի χιλιαρχος-ը և հայկական աղբյուրների հազարապետը տարբեր նշանակություն ունեն (տե՛րիմին մասին տե՛ս Βενβενιστε, Titres, p. 67—71): Ընդ որում Թեոփանեսի «հազարապետ»-ը պիտի հասկանալ ոչ որպես որոշակի բանակությանը զորքի հրամանատար, այլ հազարապետ պ՛չ. hazārapat իմաստով:
- 227. Բնագրում՝ Μερδαշα (Մարդանշահ): Ես բրիտանոսյա Շիրեհի որդին էր:
- 228. Բնագրում՝ Σαλιαρός:
- 229. Կետի ունի խաղաբերին: Տե՛ս ծանոթ. 178:
- 230. Մեր համոզմամբ Թեոփանեսի բնագիրն այստեղ թերի է: Հետևող նախադասությունները ամենևին էլ Շերոյի և Վճնասպ Ասպպի միջև գնացող բանակցություններին չեն վերաբերում, այլ, ամենայն հավանականությամբ, բյուզանդական կայսեր մոտ Վճնասպ Ասպպի ղեկավարի, որը տեղյակ է պահում կայսեր Վճնասպի և Շերոյի միջև գնացած բանակցությունների մասին:
- 231. Տարատարներ (նաև տարատոս, տարսնոտոս) գորավարի հրամանատարության ներքո գտնվող և ոստիկանական պարտականություններ վարող անձնավորություն էր և սովորական զինվորներից բարձր էր դասվում: Մեկ անգամ հանդիպում է և հայկական աղբյուրներում. «Սատակեաց կորոյս զտարստոս զորաց նորա վասն անարգանաց նորա» (հմտ. Անադյան, Արմատական բառարան, հատ. IV, էջ 391):

- 232. Յազգեմի որդու անունը Շամթա էր (Christensen, L'Iran, p. 493—494):
- 233. Արարական մի աղբյուրի՝ Guidi-ի Անանունի տվյալներով Խոսրովին սպանեցին Շամթան, Յազգեմի որդին և նեվ-Որմիզը՝ նեմրոզի պատգոսպան Մարդանշահի որդին: Հայտնի է, որ և՛ Յազգեմին, և՛ Մարդանշահին ժամանակին մահապատժի էր ենթարկել Խոսրով արքան: Խոսրովը սպանվեց 628 թ. փետրվարի 28-ին: Դրա վերաբերյալ մանրամասն գրում են Սերեոսը (զլ. ԼՔ) և Մովսես Կաղանկատվացին (էջ 165—170): Տե՛ս նաև՝ Chronicon Paschale, p. 729 sqq.:
- 234. Հերակլիտոսի և Կավատ-Շերոյի միջև տեղի ունեցած նամակագրության մասին (628), որ պահպանվել է Զատիկական ժամանակագրության մեջ (էջ 727 և հտ.) հատուկ տե՛ս Oikonomidès, Correspondence, p. 269—281: Զատիկական ժամանակագրության մեջ պահպանվել է և Հերակլիտոսի նամակը՝ ուղղված Կավատ-Շերոյին, որն ընթերցվեց սր. Սոֆիայում, 628 թ. մայիսի 15-ին: Այն գրվել է Ատրպատականի Գանձակում ապրիլի 8-ին: Մինչ այդ մարտի 24-ին Գանձակ էին ժամանել Կավատ արքայի ղեկավարի երկու ներկայացուցիչները, մեկը պարսիկ, մյուսը՝ հայ, իսկ ապրիլի 5-ին՝ ինքը՝ ղեկավար, անունը Խոսրոս, աստիճանը՝ Ռասնան (ὄνομα Χροσθη και ἀξίωμα Բասնάν), որը արքայի անունից տեղեկացրել էր Հերակլիտոսին իր զահակալման մասին: Ապրիլի 8-ին ղեկավարի տարուարիս եվտաթիտի ուղեկցությամբ գնաց արքայից արքայի մոտ: Ահա այս դեպքերի մասին Հերակլիտոսը նամակ գրեց Կոստանդնուպոլիս:
- 235. Այդ մասին տեղեկություններ է պահպանել և Սերեոսը (էջ 128), որը ևս նշում է պարսիկ ղեկավարի «անունը»՝ Ռաշնան (Զատիկական ժամանակագրության մեջ՝ Բասնան), ինչպես և Հերակլիտոսի ղեկավարի՝ Յուստաթ (Զատիկական ժամանակագրության մեջ՝ եվտաթիտոս): Հայ պատմիչը գրում է. «արձակ է գիշանան ոմն իշխան», իսկ Հերակլիտոսը իր հերթին արքայից արքայի մոտ ուղարկեց «զոմն իւրոց զխաւոր նախարարացն, որում անունն էր Յուստաթ»:
- 236. Շերոյն (Կավատ II, 25 փետրվար-սեպտեմբեր 628 թ.): Նա Խոսրով II-ի և բյուզանդացի Մարիայի որդին էր, արքայազներից հավանաբար ավագը: Նրա մասին Մովսես Կաղանկատվացին ասում է. «Եւ էր բարեխորհ, ողորմած առ ամենայն աշխարհն և առ ծառայս իւր. արձակեալ իւրաքանչիւր տեղիս զամենայն կալանաւորս, որք էին ի զիպահոջ զրան հօր իւրոյ... Եւ զամենայն հարկս և մարս արքունի երեքամեայ ժամանակաւ ընդ ամենայն տեղիս իւրոյ տերութեան շնորհեալ ամենեցուն...» (էջ 169): Ըստ պատմիչի, նա թաղավորեց 7 միլիոն:
- 237. Նախքան Կոստանդնուպոլիս գալը, Հերակլիտոսը մայրաքաղաք ուղարկեց իր հաղթանակն ավետող նամակը (տե՛ս ծանոթ. 234), որից պարզվում է, որ կայսրը մարտի 15-ին «Գանձակի մոտ գտնվող իր՝ Հերակլիտոսի ամրությունից» մի նամակ էլ է ուղարկել Կոստանդնուպոլիս, որը բովանդակում էր իր արշավանքի նկարագրությունը՝ 627 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 628 թ. մարտի 15-ը, պատմվում Խոսրովի փախուստի մասին՝ Կաստակերտից Տիգրոս և այլն (Chronicon Paschale, p. 729):
- 238. Իմա՛ կայսերակից:
- 239. Հիբրիան ժամանակակից Յեներ բախն է, Կաղբջյուցից (Քաղկեդոն) հարավ, Կոստանդնուպոլիս ասիական ափին: Կար նույնանուն պալատ, կառուցված Հուստինիանոս I-ի կին Քեոզորայի կողմից:
- 240. Արաաշիր III արքա: Իշխեց 628 թ. սեպտեմբերից մինչև 630 թ. ապրիլի 27-ը:

- 241. Հրեաների մասին Բյուզանդիոնում հիշյալ ժամանակներում տե՛ս *Beneshesuy* K истории евреев, стр. 197—224. 305—318:
- 242. Ինչպես տեսնում ենք, Քեոփանեսի տվյալներով Արտաշէրին սպանողը Շահր Վարզե էր: Արտաշէրի սպանութեան գործում, անկասկած, մատ ունի Բյուզանդիան: Սեբեոսի տվյալներով, Հերակլիոսը զինեց պարսից զորավար Խոսրովին (Շահր Վարզեի), առաջարկելով նրան ղեկավար օգնություն և պարսից զորք՝ ծառայողարար: Կայսրը անգամ անձնական տեսակցություն ունեցավ այդ զորավարի հետ: Ենկ Խոսրովան առեալ գրազմութիւն դարաց իրոց՝ զնաց ի Տիրզոն, և հրաման տուեալ ունաց՝ սպանին դողայ թագաւորն զԱրտաշիր, և ինքն երթեալ նստաւ յաթոս թագաւորութեանն» (էջ 130): Ընթա. Լավիանենա Կրայսանակերացի, էջ 76:
- 243. Մերոսը նրան անվանում է Քրոր բամբիշ (էջ 63, 130): «զՔրորն, զուստր Խոսրովայ, որ էր կին նորին» (իմա՝ Խոսրովի): Ընթա. Փովմա Արճունի, էջ 97: «Բամբիշ»-ը համապատասխանում է հայոց «տիկին» կամ «թագուհի» բառերին: Տե՛ս *Justi*, Iranisches Namenbuch, S. 62: Տե՛ս և Լավիանենա Կրայսանակերացի, էջ 76: «Քրոր՝ զուստր Խոսրովայ, որ էր կին Խոսրովայ»:
- 244. Խոսրը, հավանաբար, Սրմիզ Ծ-ի մասին է, որ թագավորել է 630—632 թթ. միջև, բայց սա վերջին սասանյան արքայից արքան չէր, ինչպես ցույց է տալիս Քեոփանեսը, այլ Հազկերտ Գ-ը (632—651): Սասանյան վերջին արքաների մասին տե՛ս և Լավիանենա Կրայսանակերացու երկուս: Վահանանի Կուսա Փարսից արքայ՝ թողով զթագաւորութիւնս Արտաշիր տղայազդեալ որդւոյ իրոց: Իսկ ապա Հերակլ... թագաւորեցուցանէ Փարսից զԽոսրն... ապա զօրքն Խոսրովայ սպանանեն զՔրորն... կառուցեալ թագաւոր զՔրոր՝ զուստր Խոսրովի, որ էր կին Խոսրովայ, որ յետ մահու նորա զԽոսրովայ ոմն յազգէ Սասանայ. իսկ յետ նորա զԱրճունի զուստր Խոսրովայ և յետ նորա զՍրմիզը՝ թոռն Խոսրովայ, զոր խնդրամահ արարին. և զկին նորա թագաւորէ Յազկերտ՝ թոռն Խոսրովայ» (էջ 76—77):
Խոսրով II-ից հետո թագավորած արքայից արքաների, ինչպես և բյուզանդապարսկական պատերազմների մասին Փոփոսի և Հերակլիոսի ժամանակ հատուկ տե՛ս *Колесников*, Иран:
- 245. Ասորիքի միաբանակները Հակոբիկ կողմնակից Հակոբոս Բարադեսի անունով, որ VI դ. կազմակերպեց Ասորիքի միաբանակ եկեղեցին: VII դարից Հակոբիկները փոխնիփոխ ընկնում են Բյուզանդիայի և արաբական խալիֆայության գերիշխանության ներքո: Կայսրությունը, հետագայում նաև Հռոմի պապը եռանդուն աշխատանք տարան նրանց իրենց կողմը գրավելու համար՝ բայց առանց հաջողության: XI դ. բազմաթիվ հակոբիկներ կային Ֆրիլպոլիտոսում, որոնք բնակվում էին միաբանակ հայերի և պավլիկյան աղանդավորների հետ և հաճախ նրանց միանում՝ հակապետական ելույթների ժամանակ (տե՛ս *Anne Comnene*, Alexias, t. III, p. 180—181): Հակոբիկները մերժում էին 451 թ. Քաղկեդոնի ժողովը և ընդունում 449 թ. Նիսեսի «ավագայային» հորդորվածը, մերժում էին Եվտիմոսին, բայց սրբացնում Սևերոսին, ընդունելով նրա վարդապետությունը: Հակոբիկյան համայնքներ գոյություն ունեն մինչև օրս: Հակոբիկները ավել են բազմաթիվ գիտական դեմքեր, որոնցից հիշատակելի է նշանավոր Գրիգոր Արուս-Յարազը (Բար Հերրոս), վախճանված 1286 թ.:
- 246. Նկատելի է, որ այն ժամանակ (629) դեռևս «միակամություն» հարց չկար: Միակամություն վարդապետությունն առաջին անգամ հանդես եկավ 638 թ. Հերակլ-

- իոսի հրապարակած «Էկեթեսիս»-ում (նրա մասին տե՛ս ստորև, ծանոթ. 251): Տե՛ս *Στράτων*, (I) πατριάρχης Πύργου, σελ. 13):
- 247. Լավիանենա Գ պապ (640—642):
- 248. Փարանի եպիսկոպոս Քեոզորոսը, որ միակամական էր, դատապարտվեց VI Տիեզերական ժողովի կողմից (680): Այդ ժողովում լուծարքի ենթարկվեց Փարանի եպիսկոպոսությունը: Փարան վայրը գտնվում էր Ապատամ Արարիայում, Սինաթոն հյուսիսային լանջերին, և ենթարկվում էր Պետրայի մետրոպոլիտոսության:
- 249. Նկատի ունի Մարկիանոս կայսեր օրոք Կոստանդնուպոլիսի Քաղկեդոն արվարձանում գումարված IV Տիեզերական ժողովը (451 թ. հոկտեմբերի 8-ից նոյեմբերի 1-ը), ուղղված աղանդազուտ Եվտիմոսի վարդապետության դեմ: Մասնակցում էին եկեղեցու 630 հայր, այդ թվում և Հռոմի եկեղեցու հինգ ներկայացուցիչներ: Նիսեսից զլիսավորում էր Կոստանդնուպոլիսի պատրիարք Անատոլիոսը, Անտիոքի՝ Մաքսիմոսը, Երուսաղեմի՝ Յորեղիոսը և Հռոմի երկու ներկայացուցիչներ՝ Պասթալիոս և Լուկենտիոս: Ժողովը դատապարտեց Եվտիմոսին և Գիոսկորոսին, արդարացրեց Փլավիանոսին, հաշտեցման եզրեր գտնելու համար ուղղափառ համադրեց Կյուրեղին, Երեսայի եպիսկոպոս Իրասին և Կյուրեղի Քեոզորոսին: Որպես հիմք ընդունվեց Հռոմի Առն պապի «ստոմարը» Քրիստոսի երկու՝ մի անձի մեջ միավորված բնությունների մասին: Ժողովը ընդունեց 30 կանոն: Ժողովին հայերը շտապակցեցին, բանդի զբաղված էին սասանյանների դեմ պայքարով՝ վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ: Նրանք հետագայում դատապարտեցին այդ ժողովը և վերջնականապես բաժանվեցին հունական եկեղեցուց: Քաղկեդոնի ժողովի արձանագրությունները պահպանվել են: Տե՛ս *Mansi*, Collectio, t. VI—VII:
- 250. Կրուսոզեմի կատաղի հակամիակամական պատրիարք Սոփրոնիոսը (633—638): Տե՛ս և նախորդ ծանոթագրությունը:
- 251. Միակամությունը (*Μονοθελητισμός*) Տիեզերական եկեղեցու կողմից որակված է որպես հերձված: Հերակլիոսը, առաջ քաշելով այդ ուսմունքը, նպատակ ուներ կամրջել միաբանակների (մոնոֆիզիտների) և երկարնակների (դիմոֆիզիտների) կամ քաղկեդոնականների) միջև բացված խոր անդունդը: Միակամականները առաջ քաշեցին Քրիստոսի երկու բնության, բայց մեկ ներդրություն և կամքի մասին վարդապետությունը: Հարցը առաջ քաշեց Հերակլիոս կայսրը և Կոստանդնուպոլիսի պատրիարք Սերգիոս Ա-ը (610—639), որոնք համաձայնության եկան միաբանակ պատրիարքներ՝ Անտիոքի Աթանասիոսի և Ալեքսանդրիայի Կյուրոսի հետ: Բայց երկու վանականներ՝ Սոփրոնիոսը (հետագայում Երուսաղեմի պատրիարք) և Մաքսիմոսը եռանդազին նրա դեմ հանդես եկան: Հերակլիոսը հրապարակեց «Էկեթեսիս»-ը ի պաշտպանություն միակամություն: Վե՛նը սրվեց, և Կոստանդ II կայսրը հրապարակեց «Τύπος»-ը արգելելով այդ հարցերի շուրջ վեճերը: Հռոմի պապ Մարտինոսը Լատերանում 649 թ. ժողով գումարեց և դատապարտեց և՛ «Էկեթեսիս»-ը, և՛ «Τύπος»-ը: Կոստանդ կայսրը պապին ետրոսն արտոնեց, իսկ Մաքսիմոսը մարմնական պատիժներ ստանալով, քարոզեց Լազիկա: Կոստանդնուպոլիսի V Տիեզերական ժողովը դատապարտեց միակամությունը: Գտնում են, որ միակամականների բեկորները հետագայում հանդես եկան մարոնիտների անվան տակ:
- 252. Խոսրը Գարազու եպիսկոպոս Անեթանոսի մասին է, IV դ. եկեղեցական նշանավոր գործիչ, Լավիան Ոսկեբերանի խոշորագույն հակաաղորդներից մեկի: Մեծ հոստոս էր, գրել է բազմաթիվ Մեկնություններ և Ճառեր, որոնց մեծ մասի հունա-

- րեն ընդարձակ կորել են, պահպանվել են նրանց լատիներեն և հայերեն թարգմանությունները:
253. Կոստանդնուպոլսի պատրիարք, ծնված IV դ. վերջին: Մովսեսը է Անտիոքում, հավանաբար աշակերտել է Քեոզորոս Մոպսուստացուն: 428 թ. Քեոզորոս II կայսրը նրան նշանակեց Կոստանդնուպոլսի պատրիարք: Կատալի պայքար մղեց արիստոկրատների, մակեդոնիստականների և նովատյանների դեմ: Առաջ էր քաշում այն միտքը, որի համաձայն Քրիստոսի երկու ընկալումները իրարից բաժանված են, Մարիամին անվանում էր ոչ թե Աստվածածին, այլ Քրիստոսածին: Նեստորի վարդապետությունը դատապարտեց Հռոմի պապ Կելեստինոսը (430) և Եփեսոսի III Տիեզերական ժողովը (431): Նեստորը արքայվեց Եգիպտոս, ուր և մեռավ 450 թ.: Նեստորի բաղձաթիվ երկերը կորել են կամ ոչնչացվել: Պահպանվել են առանձին ընկերներ, այդ թվում և թարգմանություններ՝ լատիներեն, ասորերեն և հայերեն, Տե՛ս և ծանոթ. 173:
254. Կոստանդնուպոլսի պատրիարք Պյուրոսը (20 դեկտ. 638—641, 654 թ. հունվարից հունիս), նրա մասին հատուկ տե՛ս Տ ք ի ռ յ ս, Ս πατριάρχης Πύρρος, ժ. 11—19):
255. Մարտինեն Հերակլիոսի երկրորդ կինն էր, թունավորվող Կոստանդինը՝ Հերակլիոսի որդին առաջին կին Նվդոկիայից և կոչվում էր նաև Հերակլիոս Նոր Կոստանդին: Նա Հերակլիոսի կողմից կայսերակից էր հռչակվել դեռևս 613 թ. հունվարի 22-ին: Միահեծան թագավորից 641 թ. փետրվարի 11-ից մինչև նույն տարվա մայիսի 24-ը:
256. Հերակլիոնոսը Հրակլիոսի որդին էր Մարտինից ծնված: Թագավորից 641 թ. մայիսի 25-ից մինչև նույն տարվա սեպտեմբերը:
257. Կոստասը (Կոստանդին III Պոզոնատոս, 641՝ ըստ Սարատոսի՝ 642—668 թթ.) Հերակլիոսի թոռն էր: Բյուզանդագետների մեջ տարածված էր այն թյուր կարծիքը, որ Պոզոնատոս (մորտաբալոս) էր կոչվում Կոստանդին IV-ը (668—686): Այժմ ապացուցված է, որ Պոզոնատոսը իրականում Կոստանդին III-ն էր:
258. Կոստանդնուպոլսի պատրիարք Պավղոս Բ-ը (641—653): Որակված է հերձվածող, քանզի շարունակում էր պաշտպանել միակամությունը:
259. Քեոզորոս Ա պապը (642—649):
260. Ավետարանական դարձվածք է. «շուն դառնայ անդրէն ի փսխած իր» (Բ թուղթ Պետրոսի, Բ, 20—22):
261. Այսինքն՝ հաղորդության դիսուց:
262. Հռոմի պապ Մարտինոս Ա-ը (649—655):
263. Հռոմի պապ Ագաթոնը (678—681):
264. Բնագրում՝ Ἱερμοῦζαν: Հիշելով հակասամարտը (աշխարհի արարչագործություն 6126 թ. տակ) նա այս անգամ գրում է Ἱερμοῦζαν ποταμῶν: Յարմուկ գետի ափին տեղի ունեցած հակասամարտը (636 թ. օգոստոսի 20-ին):
265. Բնագրում՝ Παλαιστινῶν καὶ Καταρῶν: Հավանաբար καὶ-ն կրկնված է (Կեսարիան էլ Καί-ով է սկսվում), չէ՞ որ խոսքը Պաղեստինի Կեսարիայի մասին է:
266. Նկատի ունի Կոստաս II-ի սպանությունը Սիկիլիայում: Տե՛ս վերը, էջ 63:
267. Աբու Բաբր, Արզալահ Ատիբ աշ-Շիդդիբ ոաշիդուն, «ուղղափառ» առաջին խալիֆան (632—634): Նրան հաջորդած մյուս երեք «ուղղափառ» խալիֆաներն են Օմարը, Օսմանը և Ալին: Մովսես Կաղանկատվացին նրան անվանում է «Աբուբեքր՝

- Աբուհափայ որդին» կամ «Աբուբեքր Աբի Կահիլան»: Մոհամեդի մահվան մասին նույն հեղինակը գրում է. «...ինն տարի էր Մահմետայ իշխանութեանն: Ի տասներորդ ամին մեռա յաւոր երկուշաբթի յամսեանն շահաբի՝ աղաազի յերկուցն, կալեալ զիշխանութիւնն ամս տասն: Եւ երեքտասան ամ զքարոզութիւն իւր հաստատեաց: Քառասուն ամ ունէր, մինչ երեքցան և ի վաթսուն և յերրորդ ամին մեռաւ (էջ 332):
268. Իմա՝ Նիզար, արարների հյուսիսային ցեղերի նախահայրը:
269. Մուզար և Ռարիայ:
270. Իմա՝ Կուրայշ, Քայիս, Թամիմ և Ասադ, արարական հյուսիսային ամենահայտնի ցեղերը:
271. Հավանաբար նկատի ունի Մադիամ երկիրը, որտեղ Հին կտակարանի համաձայն փախավ Մովսես մարգարեն եգիպտացու սպանությունից հետո: Կար և Մադիանն թաղաք Արաբիայի հյուսիս-արևմուտքում, Կարմիր ծովի մոտ:
272. Բնագրում՝ ἐνδότεροι:
273. Ինկաանի (Yakzan) տակ ենթադրվում է Քահիանը, որը մահմեդական ավանդույթյան համաձայն հանդիսանում է հարավային արաբական (կամ ամենական, թեոփանեսի երկում՝ Ամանիտ) ցեղերի նախահայրը, այդ թվում և հիմյարների, որոնց թեոփանեսը և բյուզանդական այլ հեղինակներ Հռոմեիսներ են անվանում: Ինկաան-Քահիան անունը երբայական Յոկտան անվան (Հին կտակարանի Յոթանանից թարգմանության մեջ Ἰεχτάν) արաբացված ձևն է, որին նման զեր է արված Մննդոց գրքում (Ժ, 25: Հմմտ. DA1, II, p. 70):
274. Հռոմեիսները (Հիմյար) Արաբիայի հարավում բնակվող արաբական ցեղ: Անաստասիոս կայսեր ժամանակ մասամբ քրիստոնյա էր դարձել: Բյուզանդիան սերտ կապեր էր հաստատել նրանց հետ դեռևս VI դ.՝ իր առևտրական շահերից ելնելով և իր սահմանները սասանյաններից ապահովելու համար: Նրանց մասին տե՛ս «Պոռոպոսիոս Կեսարացի», էջ 53—55, 57, 58, 78, նաև Πυζυλευσκα, Эфиопия и Химфар, стр. 87—97; Vasiliev, Notes, p. 306—316:
275. Կամ՝ հաղիչա: Մոհամեդի առաջին կինն էր, դուստրը Խուվայիդի, Մեքքայի Կուրայշ ցեղից: Մինչև Մոհամեդի հետ ամուսնանալը երկու անգամ ամուսնացած է եղել: Աղբյուրների տվյալների համաձայն Մոհամեդը այս ժամանակ 25 (կամ 23 և կամ 21) տարեկան էր, իսկ Խաղիչան՝ 40 (կամ 28): Մոհամեդը Խաղիչայից ունեցավ 5 երեխա, 4 դուստր (Ջայնար, Ումմ Կուլթում, Յաթիմա և Ռուբայա) և մեկ (հնարավոր է երկու) որդի (ալ-Կասիմ և Աբդ Ալլահ, որոնք չի բացառված նույն մարդու երկու անունները լինեն):
- Մոհամեդի հանգնա գալու մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել վարդան Արևելցին. «...այր մի ի յորդոցն Իսմայիլի, որուն անուն էր Մահամթ (sic) Թանգար, որ էր ծնեալ ի քաղաքին Մադինա, մերձ ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ որդի Արդայ, որ մեռա որ թողեալ զնա. որ և յարեցաւ ի վաճառական մի, և եղև ի տան նորա յառաջաղէմ. մեռա վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ, առեալ զկին նորա. և երթայր ուղտօք յեգիպտոս ...» (Muyldermans, La domination arabe, p. 41):
276. Թեոփանեսը առաջին հեղինակն է, որ վկայում է Մոհամեդի ընկալությունների մասին:

- 277. Այս վանականին Կոստանդին Միրանաժներ արիանոս է համարում: Գա հաստատվում է Հովհան Գամակացու տվյալներով: Նրա ասելով (de Haeresibus, 101, Migne, Patrologia graeca, t. XCIV, col. 764—765) Մոհամմեդին էր օգնում մի արիանոս վանական Հին և նոր կապարանները ուսումնասիրելու: Թեոփանեսն այստեղ ըստ երևույթին իրար է միացրել երկու տարբեր մուսուլմանական ավանդություններ, որոնցից մեկի համաձայն մի ոմն Վարաբա ինն նազիալ, իսպիշայի տարից մի կուզներ իսպիշային վկայում էր Մոհամմեդի տեսիլքների իսկությունը: Մյուս ավանդությունը հիշում է Քահիրայի կամ Բուհայրայի, ասորի մի վանականի մասին, որ ձանաչել է Մոհամմեդին, երբ նա առևտրական քարավանի նա Ասորիք էր եկել, որպես ապագա մարգարե (տե՛ս DAL, II, p. 71):
- 278. Արար. Յաթրիք (Պտղոմեոսի Լաթրիպպան, Մտեփանոս Բյուզանդացու՝ Իսթրիպպան), այն է Մեզդեա: Միքայել Ասորու ժամանակագրության մեջ տվյալ շրջանը կոչվում է «Աթրապալ» («Յայամ ժամանակի երեցալ Մամէլա որդի Արգալայի յԱթրապալ Արարիայ»: Միխայել Ասորի, 1871, էջ 293—294):
- 279. Խոսքը շիհայի՝ սրբազան պատերազմի մասին է:
- 280. Թեոփանեսը հավանաբար հղում է Ղուրանի 56-րդ սուրային (տե՛ս DAL, II, p. 71):
- 281. Երուսաղեմի Մոզեստոս պատրիարքը (632—634), Երականում նա տեղապահ էր: Պահպանվել է այս Մոզեստոսի մի նամակը, ուղղված հայոց Կոմիտաս կաթողիկոսին և վերջինիս պատասխանը նրան (տե՛ս Սեբեոս, զլ. 15):
- 282. Քրիստոնեյա արարներ կային և նախքան մահմեդականությունը հանդես գալը: Հիմնարկը ցեղի արարները, օրինակ, մասամբ քրիստոնեյա էին դարձել զեոնս Անաստասիոս I կայսեր ժամանակ: Տե՛ս ծանոթ. 274:
- 283. Արևմտյան եկեղեցում վիկարիոս (vicarius) է կոչվում եպիսկոպոսի կողմից նշանակվող և նրա թույլտվությամբ եպիսկոպոսի իրավասության մեջ մտնող պարտականությունները վարող անձնավորությունը:
- 284. Արարական կուրալը ցեղին պատկանող, որից էր ծագում և ինքը, Մոհամմեդը: Տե՛ս ծանոթ. 270:
- 285. Ճիշտը՝ Կոտայք:
- 286. Տալիս է «Սայֆուլա»-ի թարգմանությունը:
- 287. Իմա՛ կայսրը:
- 288. Արարները Գալային տիրացան 633 թ.: Սրան հաջորդեց Աջնաղայի հաղթանակը (634 թ. հուլիսի 30), որով արարները տիրացան Պաղեստինի մեծ մասին:
- 289. Թեոփանեսը գրում է՝ «Սբա. բայց Բալազուրիի տվյալներից պարզվում է, որ խոսքը Հիրաչի մասին է: Լեռ էր Մեքքայից հյուսիս-արևելք: Այդ անունն էր կրում նաև արարական Լաիմիդ ցեղի նշանավոր մայրաքաղաքը, ժամանակակից Նաջաֆից (Իրաք) հարավ-արևելք: Այնտեղ կար նեստորական եպիսկոպոսություն: Հետագայում նրա տեղում կառուցվեց մուսուլմանական Ալ-Քուֆա քաղաքը: Մանրամասն տե՛ս I. Shahid-ի al-Hira հոդվածը Encyclopédie de l'Islam-ի երրորդ հատորի 478—479 էջերում:
- 290. Գալայի շրջանը, բայց ոչ քաղաքը: Թեոփանեսը շրջանի նվաճումը թվագրում է 633 թ., Բելազուրին՝ 634: Բայց Գալա քաղաքը գրավեց միայն 637 թ.: Տե՛ս Guillou, La prise de Gaza, p. 400. Apud: Bpaxvobc, Byzantinoarabica, ռե՛լ. 14:
- 291. Գրավոր աստղի մի տեսակ: Կոչվում էր նաև ծռռն և ծռռոս:

- 292. Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարք (633—638):
- 293. Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարք (630—643):
- 294. Օմար իբն ալ-Խաթթաբ ալ-Ֆարուք, իշխեց 634—644 թթ.: Մովսես Կաղանկատվացին նրան անվանում է «Օմար ի Խատաբան» (Խատաբի որդի) և գտնում, որ նա իշխեց 7 տարի (էջ 333):
- 295. «Արարիա զորք ուղարկելով», բառերը Թեոփանեսի ժամանակագրության հունարեն բնագրում բացակայում են: Ամենայն հավանականությամբ կրճատել է գրիչը՝ չկարողանալով բացատրել «արարների հարձակումը Արարիայի վրա»: Սակայն հիշյալ բառերը կան Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանությունում (qui destinavit exercitum adversus Arabiam), որտեղից հրատարակիչը վերականգնել է հունարեն բնագրում, Եթե այդ բառերը չլինեին, նախադասության իմաստը կատարելապես փոխվում է: Թեոփանեսը գրելով «Արարիա» նկատի չունի արարական թերակղզին, այլ բյուզանդական «Արարիա» նահանգը: Գեորգ Կիպրացու տվյալներով Արարիա նահանգը գտնվում էր Երուսաղեմից արևելք, Պաղեստին II և Պաղեստին III պրովինցիաների միջև: Արարիա նահանգում էին գտնվում Բոստրա, Գերասա, Ֆիլադելֆիա, Հիրապոլիս և այլ քաղաքներ: Դրա օգտին է վկայում և Սերեոսը, որը գրում է, թե արարները հասանալ յԸնաբովթ Մովսեսու ի սահմանս Թուրէնի. զի բանակն Յունաց բանակեալ էին յԱրարիա» (էջ 135): Մանրամասն տե՛ս Bpaxvobc, Byzantinoarabica, ռե՛լ. 15—16:
- 296. Բոստրա քաղաքը գտնվում էր բյուզանդական Արարիա նահանգում, Հիրապոլիս քաղաքից մի փոքր հարավ:
- 297. Գարիթա քաղաքը նույնացվում է Ղասասնիների մայրաքաղաք Ջարիլայի հետ, Գամասկոսից 80 կմ հարավ:
- 298. Դեռևս զե Գունե ցույց էր տվել, որ «Եզեսիան պետք է ուղղել «Եմեսա» (այժմ՝ Հոմս): Ճիշտ ընթերցումը հանդիպում է Թեոփանեսի ժամանակագրության մի շարք ձեռագրերում, թեև Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի թարգմանության մեջ սխալ Edessa ընթերցումն է հանդես գալիս (Bpaxvobc, Byzantinoarabica, ռե՛լ. 11 ծանոթ. 5):
- 299. Այժմ Հոմս, Պամիրայից արևմուտք, Լավոդեկիայից փոքր հյուսիս: Տե՛ս նախորդ ծանոթ. 1:
- 300. Ենթադրվում է, որ խոսքը Մարջ ալ Սուֆֆար-ի ճակատամարտի մասին է, որտեղ, ըստ Բալազուրիի և ավելի վաղ արարական բանաբանների, սպանվեց իր բազուկով անուն հանած Խալիդ իբն Սայիդը: Արտահայտվել է կարծիք, որ ամիրան կարող է լինել Իբրիմա՛ս իբն արի Ջահլը (տե՛ս Bpaxvobc, Byzantinoarabica, ռե՛լ. 17—18):
- 301. Խոսքը Արարիա նահանգի մասին է (տե՛ս ծանոթ. 295), որի կազմում, ըստ Հիրեոկլեսի Սինեկղեմոսի, կար 17 քաղաք (Hieroclis Synecdemus, p. 42):
- 302. Բուննի հրատարակության մեջ՝ հուլիսի 23-ին: Քննական բնագրում նշված է անտիոքացոց Լոոս ամիր, որ նույն հուլիսն է:
- 303. Տե՛ս ծանոթ. 264:
- 304. Արարները եգիպտոսը վերջնականապես նվաճեցին 642 թ., որից հետո սկսեցին Տրիպոլիտանիայի նվաճումը (Чураков, Завоевание Северной Африки, стр. 107—126):

- 305. Հստ մուսուլմանական ավանդության Օմար խալիֆան համարվում է Իսլամի խոշոր օրհնագիր, խալիֆայի տիրար: Նա առաջինն էր, որ ստացավ Ամիր ալ-մուամինինի («Տավատացյալների իշխան») տիտղոսը (տե՛ս Gaudfroy-Demombynes, Le monde musulman, p. 155):
- 306. Օմարի և Սուրբուհուս պատրիարքի միջև կնքված հաշտության մասին հիշատակում են նաև արևելյան քրիստոնեյա հեղինակները (Միրբակի Ասորի, Բար Հերբոս, Աղապիոս Մալբրիչաթի), ինչպես և արաբ տարեգրիչները (DAI. II, p. 74):
- 307. Մարգարեություն Գալիլեի, ՓԲ, 10—11. «Եւ անօրինացին անօրէնք, և ոչ անուցուն ի միտ ամպօրիշտք, և իմաստանք իմացին: Ի ժամանակ փոփոխմանն յախախտեան, և տացի պղծութիւն անբաժին ատուրս երկերիւր երեսուն և հինգ»: 308. Օմարի գերազար Բյազ իբն Ղանձը սկիզբ դրեց Մեծ Հայքի նվաճմանը, նրան ենթարկվեցին Կորճայքի Կորդուր և Տմորիք գավառները, իսկ Անձևացոյց իշխանը (Սահր ալ-Ջաուզան) նրան նահանգություն հայտնեց: Բյազը 640 թ. մտավ Հայաստան և սուլթանակեց Գլիկի (Տեր-Աննդյան, Ամիրայությունները, էջ 51—52):
- 309. Բնագրում՝ ἐπιτροποι:
- 310. Իմա՛ Քիննասրին: Պաղար հյուսիսային Արաբիայում: Հիշատակված է «Աշխարհացոյց»-ում. «[Քա]ղկեդիկէ, չորում քաղար Քալիսա, որ է Նիկորիա» (Յրեմյան, Հայաստանը, 112):
- 311. Օմայանների Հարսուսթյան ապագա հիմնադիր խալիֆա Մուավիա I-ը, կուրաշք ցեղից, Արուսուֆիանի որդին: Մուհամեդ մարգարիի գրազիրն էր: Երբ խալիֆա Աբուբարքը Ասորիքի նվաճման համար բանակ ուղարկեց, Մուավիան իր եղբայր Սադիկ հետ գլխավորեց այն: Օմար խալիֆայի կողմից նշանակվեց Դամասկոսի և Պաղեստինի կառավարիչ: Գլխավորեց արաբների պայքարը Բյուզանդիայի դեմ, Իսլամիան ու Հայաստանը նվաճելու փորձեր կատարեց: Մուավիան 660 թ. Ծրուսաղեմում իրեն խալիֆա հռչակեց և մայրաքաղաքը Դամասկոս փոխադրեց:
- 312. Կամ Կոստանդինի (Թելլա դե-Մուդելաթ): Հին քաղաք Միջագետքում, Գարալից 75 կմ արևմուտք: Աշտուկ մեծ բերդաշինություն էր կազմակերպել Հուստինիանոս I կայսրը (տե՛ս «Պոսկոպիոս Կեսարացի», էջ 176—177):
- 313. Կոստանդին Միրանաժինը ցույց է տալիս, որ Ստեփանոս Մաթեմատիկոսը իբր գուշակ էր, թե կայսր մահվան պատճառը չուրն է լինելու և կայսրը դրանից վախենալով, Կոստանդնուպոլսի Հիերիա պալատի չրավագանը հողով լցրեց (Կոստանդին Միրանաժին, էջ 111—112):
- 314. Աշխարհի թվականը սխալ է: Ինչպես Առաջարանում ցույց տրվեց, 607 և 714 թվականների միջև Թեոփանեսն ունի մեկ տարվա սխալ: Ինդիկտոնը սակայն ճիշտ է: Ստացվում է՝ 30 տարի և 10 ամիս՝ 641 թ. օգոստոս, մի անձարին բան, նրկատի ունենալով, որ նա գրում է «մարտ ամին»: Ենթադրվում է գրչի սխալ, որ Ե՛ (5) ամիսը արտագրել է (10) ամիս: Դրանով ստացվում է 641-ի մարտ (Σ τ ρ ἄ τ ο υ, Πότε ἐξεδροניתη ὁ Ἡράκλειος Β΄, σελ. 181):
- 315. Կոստանդնուպոլսի Պավղոս II պատրիարքը (641—653):
- 316. Վալենտինոսը, որն, ըստ Սեբեոսի, հայ Արշալուծի էր (էջ 140), իրականում նշանակվելով էքսպուրիտորների կոմես, 642 թ. սկզբում ուղարկվեց արաբների դեմ: Գրեթե ժամանակակից Սեբեոսի տվյալներով Հերակլեոնասին և Մարտինին տապալելու և Կոստասին զահ բարձրացնելու գործում գլխավոր դերակատարը իրականում Վալենտինոսն էր: Նրա ասելով Վալենտինոսը «գնայ ի վերայ նորա (Հերակլեոնասի) զարու իրով ի Կոստանդնուպոլս: Եւ կալեալ զՄարտինն՝ կարլ զրեզու նորա և ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդովք նորա: Եւ նստացանէ Թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի, և անուանէ յանուն հարն իրոյ Կոստանդին: Եւ ինքն զուձարէ զգարուն, և գնայ ընդ արևելս» (նույն տեղում): Հովհաննես Նիկիտացու ասելով, Վալենտինոսը իր զատեթ կնուսթյան էր ավել Կոստանդին III կայսրը (Կոստասին): Տե՛ս Σ τ ρ ἄ τ ο υ, Τὸ Βυζάντιον, Δ΄, σελ. 18, ծանոթ. 45):

- 317. Կոստաս II (Կոստանդին III Պողոնասոս, 641 (ըստ Ստրատոսի՝ 642)—668 թթ.: Իսկական անունը Փլավիոս Հերակլիոս էր: Երբ 641 թ. սեպտեմբերի վերջին կայսերակից հռչակվեց, բանի որ կայսր էր հորեղբայր Հերակլիոս II-ը, վերանվանվեց Կոստանդին, ի պատիվ իր հոր, հասկապես, իր հորեղբոր հետ շփոթվելու համար: Կոստաս նշանակում է փոքր (փոքրահասակ) Կոստանդին: Գահ բարձրացավ 11 տարեկան հասակում: Գահաժառանգությունը Բյուզանդիայում երբեք ժառանգական չէր: Կայսրը ընտրվում է անգամ եթե դա ձևական բնույթ էր կրում և խոսքը որդու՝ հորը ժառանգելու մասին է: Միշտ պահանջվում էր ընտրություն, թեև ոչ ձևական: Թեոդոսիոսի հարստությունից հետո (450-ից հետո) կայսեր հռչակման իրավունքը բանակից անցել էր սենատին: Անաստասիոս I-ից թագադրությունը կատարում է պատրիարքը և դա եկեղեցական խորհուրդ չէր: Թագադրությունը տեղի էր ունենում ոչ էկկլեզիոսում (Σ τ ρ ἄ τ ο υ, Τὸ Βυζάντιον, Δ΄, σελ. 117) Առաջին բյուզանդական կայսրը, որը թագադրվեց եկեղեցու կողմից, եկեղեցու մեջ՝ Փոկասն էր, և այդ ժամանակակից է, որ թագադրության արարողությունը ստացավ կրոնական բնույթ (նույն տեղում, էջ 120): Կոստաս II-ի կայսերակիցներն էին Կոստանդին IV-ը՝ 654-ից, Հերակլիոսն ու Տիրերիոսը՝ 659-ից: Բյուզանդական աղյուսներն այս կայսր Հայաստանում ունեցած գործունեության մասին քիչ բան են ասում: Հայկական աղյուսները տալիս են արժեքավոր տեղեկություններ: Մովսես Կաղանկատվացու ասելով, հայոց կաթողիկոս Ներսես Գ-ը (641—661) կայսեր «հայրագիրն» էր և «գանձիւք նորա շինեաց զբարձրագոյնս յարարին բանաւոր հօտից ի Քաղաքուղաշտի ի սուրբն Գրիգոր» (էջ 363): Խոսքը Զվարթնոց եկեղեցու մասին է: Այդ եկեղեցու նավակատարին կաթողիկոսը հրավիրեց Կոստաս կայսրը, որ «յաւով հիացեալ ընդ շինուածն՝ նո հրաման շինողացն գեալ զկնի իւր, զի նոյնաձևն յարմարեցէ ի պալատանն» (նույն տեղում, էջ 364): Զվարթնոցի կառուցման մասին տե՛ս նաև Հովհաննես Իրաքլանեակեոցի, էջ 83—84: Վարդան Արեւելցու տվյալներով կայսրը լինում է նաև Գլիկի կաթողիկոսարանում և նրա ճնշման տակ Ներսես Գ-ը բարդում է Քաղկեդոնի ուսմունքը (տե՛ս Muyldermans, La domination, p. 47):
- 318. Բյուզանդիայի VII դարի պատմության հմուտ մասնագետ Ա. Ստրատոսը Թեոփանեսի 6133 թ. տակ բերած տվյալները անձեղտ է համարում: Նրա ուսումնասիրության արդյունքը հետևյալն է. Հերակլեոնասին (Հերակլիոս II) և Գավթի-Տիրերիոսին զահրկեց արեցին 642 թ. հունվարին: Մարտինեն զահրկեց չարվեց, բանի կայսրուհի (ավզուստա) չէր, այլ պարզապես կայսերամայր: Պյուրթոսին կարգալուծ չարեցին, նա պարզապես հնոացավ: Վալենտինոսը չհնոացվեց, այլ նշանակվելով էքսպուրիտորների կոմես և ուղարկվեց ընդդեմ արաբների: Կոստանդինը (Կոստաս) սենատի կողմից կայսր հռչակվեց, բանի որ արդեն կայսր էր թագադրվել 641 թ. սեպտեմբերին, իր հորեղբայր Հերակլիոս II-ի (Հերակլեոնասի) կողմից: Ստրատոսի եզրակացությունները հիմնված են զեպրեթին ժամանակակից

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հեղինակների՝ այդ թվում և Սեբեոսի տվյալների վրա (տե՛ս (Σ τ ρ α τ ο υ, Ποτε έζεθ-
ρονισθη ó Ηράκλειος Η', σελ. 191: Տե՛ս նաև նույնի՝ Ο πατριάρχης Ηόρρος, σελ. 13):
319. Արքեպիսկոպոսի Պետրոս III պատրիարքը (643/644—651 թթ.):
320. Նույնանուն է 6133 թ. տակ հիշված Վարենտինոսի հետ, որ ըստ Սեբեոսի հայ Արշակունի էր և կայսեր աները՝ ըստ Հովհաննես Նիկիտացուսի նրա պատմաբանության զրգապատճառների մասին խոսում է Սեբեոսը. «Եւ եղև յերկրորդում ամի Կոստանդին, Թոսին երանելոյն երակիի՝ խորհէր Վաղենտին ի միտս իր՝ ճարտարությամբ խա-
րէլ զսինկդիտոսն, և համբառնալ զինքն ի պատիւ Թագաւորութեանն» (էջ 142): Մի շարք ծանրակշիռ ազդեցություններ եղած են, որ Վարենտինոսը նույնիսկ հազավ կայս-
երական ծիրանին (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 19): Սեբեոսը վկայում է և նրա մահապատժի մասին. «չեղաւ ամբոյն ի վերայ նորա, և բարձրալ արտաքոյ տանցն՝ զլիատեցին. և տարեալ... այրեցին... զնա» (նույն տեղում): Հետաքրքրա-
կան է նշել, որ կայսրը հայազգի Վարենտինոսի սխիստոսն զորավար նշանակեց «զԹէո-
դորոս զրմն հուստարմի իբրխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յոնեաց կոչ-
մանէ» (նույն տեղում):
321. Գրոս ամիրը համապատասխանում է նույններին:
322. Օթմանը (Օսման)—Ուլմանզի իբն Աֆֆան, Գու-ն-Նուրային (644—656 թթ.):
323. Բնագրում՝ Δφρων: Թեոփանեսը այդ բարը հաճախ է օգտագործում Աֆրիկա-
յի բնիկներին նկատի ունենալով և ոչ Աֆրիկայի հռոմայեցի բնակիչներին (Σ τ ρ α-
τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 72, ծանոթ, 220):
324. Արարական արշավանքները Կիպրոսի վրա Օթմանի իշխանության օրոք տեղի ունեցան հիշրայի 28-րդ և 33-րդ տարիներին (648/9, 653/4 թթ.):
325. Հնում կոչվում էր Սալամիս, երկրաշարժերից ավերվել էր և վերականգնվել 345 թ., Կոստանդինոս I կայսեր կողմից, որի պատվին էլ կոչվեց Կոստանդիա:
326. Սենեկապետ կամ սենեկապետ Վարում էր պարակիմոնենոսի պաշտոնը (Υαποπο-
ουίος, La société, p. 72—73):
327. Բնագրում՝ παντοιας πηχαναίς γρόφρονος: Կարելի է թարգմանել նաև շամեն տե-
սակի մեքենաներ գործի զենվով:
328. Արագոս անունով մի բանի կղզի է հայտնի: Այստեղ խոսքը, հավանաբար, Ատորի-
բի Արաղոսի մասին է: Արաբները կղզին գրավեցին հիշրայի 29 (650) թ.:
329. Մարտինոս պապի, նրա՝ միակամականների դեմ դումարած ժողովի և Կոստաս կայսեր՝ նրա հանդեպ դրաված դիրքի մասին տե՛ս նաև Անանիա Երևակացուն սխալ-
մամբ վերագրված ժամանակագրության մեջ. «Ի սորա (Կոստաս կայսեր) աուրս եղև ժողով ի Հռովմ քաղաքի՝ հարևր տասն եպիսկոպոսաց, և մոնագոնաց բազմաց, զոր արար Հռովմայ հայրապետն, որ ասէր ի վերայ Քրիստոսի երկու կամս և երկու: Ենդգործութիւնս՝ ըստ երկուց բնութեանց. և գրեցին անափոքայ առ Թագաւորն, կոչեցնալ ի միաւորութիւն ինքեանց: Իսկ Թագաւորն ոչ հաւանեցաւ Կոստանդինու-
պողոսացւոյն և Աղեքսանդրացւոյն և Փարանացւոյն՝ Հռովմայեցոցն... եւ յետ սա-
կաւ աուրց ասաբեցին Կոստանդինուպոլսեցիքն ի Հռովմ, և ետուն ածել կապանաբ զՄարտինոս Հռովմայ և Կոստանդնուպոլսիս. և ձաղեալ բաղում թշնամանաբ արտ-
րեցին ի Բոսփորայ...» (Անանիա Երևակացու Մատենագրությունը, էջ 398):
330. Եստճը: Հայկական աղբյուրներում արարական հիշյալ անունը բերվում է Բշր ձևով: Այստեղ խոսքը Բիշր իբն Աբի Արթատի մասին է (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 41, ծանոթ. 141):

331. Իսավրիան մարզ էր Փոքր Ասիայում: Ըստ Պաղմենոսի «Աշխարհագրության» գտնվել է Տավրոսի հյուսիսային ստորոտում: Հյուսիսում սահմանակից էր Լիկաո-
նիային, արևմուտքում՝ Պիսիդիային, հարավում՝ Լոնուսյին Կիլիկիային: Գլխավոր քաղաքն էր Իսավրան (այժմ՝ Զենդիմար կայն): Կոստանդին Մեծի ժամանակ ստեղծվեց Իսավրիա նահանգը, որի կենտրոնը Սելևկիա քաղաքն էր: Կոստանդին Միրանաժիքը Անատոլիդոն բանակաթեմի սահմանները նշելիս սահմանակից է հիշատակում նաև Իսավրիան:
332. Պատագնաթես պատրիկի անունը աղավաղված ձևով հիշված է նաև Ազագիոսի Տիգրեբական պատմության մեջ: Ա. Վասիլյե (Patrologia Orientalis, vol. VIII, fasc. 3, p. 482) կարդում է հետևյալով Թեոփանեսին (Պատագնաթես), իսկ P. L. Cheikho-ն (Ազագիոսի բնագրի հրատարակիչը, Բեյրութ, 1907, էջ 347, ծանոթ. 2) կարդում է Մմբատ: «Հայոց պատրիկ Պատագնաթես»-ի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց դեռևս Մ. Չամչյանը (Հայոց պատմություն, հտ. Բ, էջ 354): Նա հիշյալ անունը համարեց հայկական Վասաղը, ենթադրելով, որ հա-
չորդի է Մծեծ Գնունուն՝ կայսր Կոստանդին հրամանով: Հ. Աճառյանը կրկնում է Չամչյանին («Հայոց անձնանունների բառարան», հտ. Ե, էջ 45—46): Բյուզանդա-
կա Պ. Պետերսը (տե՛ս նրա „Πασαγνάθης Περιστολής“ հոդվածը, էջ 405—423) ենթադրում է, որ Πασαγνάθης մականունը նույնանուն է Թեոփանեսի հիշատակած մի այլ զորավարի՝ Շապուհի մականվան՝ Περιστολής (Պարսկաժին), քանի Միլթայել Ասորու ժամանակագրությունը Περιστολής-ի փոխարեն տալիս է Aprasit'gan, որը, ըստ Պետերսի, վրացերեն «սպարստղան»-ն է («պարսկաստանցիներից»): «Պատագնաթես»-ը համարելով նույն «պարսկաժին»-ի թարգմանությունը, նա ցույց է տալիս, որ Պատագնաթեսը վրացերեն «սպարստղան»-ի թարգմանությունն է: Նա եզրակացնում է, որ Պատագնաթեսի տակ թարգմանված է Թեոդորոս Ռշտունին:
- Գ. Արզարյանը, համաձայնելով Պ. Պետերսի այս եզրակացության, առաջ է բաշում այն վարկածը, որ իր «Պատագնաթես»-ը հունարեն «παρζάτση» (ուրացող) բառի աղավաղումն է, որ Թեոփանեսը Թեոդորոս Ռշտունուն համարում է ուրա-
ցող, զավաճան («Սեբեոսի» Պատմությունը», էջ 195, ծանոթ. 19: Հմմտ. Սե-
բեոս, էջ 344—345): Առաջ անցնելով, նա ցույց է տալիս, որ «Երևականությունն այն է (!), որ գրիչն իր առջև ունեցել է մաշված ու աննահաշելի παρζάτσης բառը (ն՞րտեղից գիտե այդ «Երևականությունը»), որը նրան՝ գրիչին, ոչ մի հունա-
րեն բառի իմաստ չի հուշել և թվացել է օտար մի անուն: Եվ իսկապես, շարու-
նակում է նա, հայի անունը հույն գրիչ համար օտար էր, զրա համար էլ նա ստացել է Πασαγνάτσης անվանանքը, չիմանալով, որ նման անուն հայերենում չկա» (Սեբեոս, էջ 345): Նշենք այստեղ, որ Թեոփանեսի ժամանակագրու-
թյան Անաստասիոս Բիրիլոսիկարիոսի լատիներեն թարգմանության մեջ մեղ հե-
տաքրքրող նախադասությունը թարգմանված է այսպես. „Anno imperii Constantis decimo simultatem excitavit imperatori Pasagnathes, Armeniorum patricius“, Theoph. Chron., II, p. 216: Ուրեմն παρζάτσης չի եղել դեռևս այն ժամանակ: Անաստասիոսի ձևերում եղած օրինակը, որ Թեոփանեսի ինքնագիրն էր, կամ Երանից անմիջապես կատարված արտագրությունը, չէր կարող «մաշված և անճանա-
չելի» դարձած տեղեր ունենար: Չէր էլ կարող լինել, քանզի հակառակը հնարա-
վոր է (անհասկանալի հատուկ անունը դառնար հասկանալի հունարեն παρζάτσης-ը),

- էին բյուզանդական բանակում: նրանց Մարզապետան գավառը կոչվում էր նաև Մարզուցայք կամ Մարզուցեր: Այդ տեսանկյունից շատ կարևոր է ն. Ազոնցի դիստոլոթյունը, որի համաձայն «էք» և «եայք» մասնիկները ցույց են տալիս «բնակիչներ» հասկացությունը, այնպես էլ Մարզոցէք կամ Մարզուցայք, կազմված լինելով այդ մասնիկներով, նշանակում են «Մարզոցի բնակիչներ», այսինքն «մարզեր» (տե՛ս АДОМІ, Армения, էջ 817, նաև ծանոթ. 5): Հետևաբար սխալած չենք լինի եթև ընդունենք, որ «մարզուցայք» մարզայիտներ է նշանակում: Անբնութ 653 թ. դեպքերի առնչությամբ գրում է, «Վասն հարուածոց՝ որ եղևն ի Մարզուցէսն»: Այստեղ «Մարզուցէսն» ամենայն հավանականությամբ մարզայիտներ է նշանակում և ոչ Մարզուցայք երկրամաս: Չմոռանանք ասել, որ մարզայիտների գոնեք 687 թ. լուծարքի ենթարկելուց հետո, բերվեց Հայաստան, որտեղից պիտի դեացած լիներ: «Մարզուցայք»-ը հիշատակում է Ղևոնդը Քեոզորու Ռշտունու հետ կապված դեպքերի առնչությամբ: Բյուզանդացի զորավար Պրոկոպը, պատմիչի ասելով «...էր բանակեալ ի զաւառին Կոզովտի ի սահմանս Բաղուծորոյ և Մարդուացայից» (էջ ?):
- 381. Բնագրում՝ ἄρχατογεινή «հին ընտանիքը» կամ «հին տոհմը» հավասարազոր էր աղիվախանի: Γαλαροουλος, La societé, p. 17—18:
 - 382. Կարաննները (կուրայք) արարական ցեղ էր, որին էին պատկանում Մոհամմեդը և Մուսլիման: նրանց դիտե և Մովսես Կազանկատվացին («կուրեշիկ»): Մովսես Կազանկատվացի, էջ 333:
 - 383. Այսինքն՝ Հովհաննես Պրիգազովիցը: Բայց նրան Քեոփանեսը ընդամենը մեկ անգամ է հիշատակում:
 - 384. Բյուզանդիայում ռեքս (rex) էին կոչում արևմտյան պետությունների թագավորներին, քանզի βασιλεύς-ը որպես կանոն իրենց վեհապետներին էին վերապահում: Կարոլոս Մեծին Քեոփանեսը կոչում է ռեքս և միայն 812 թ. առաջին անգամ նրան βασιλεύς է անվանում:
 - 385. Բյուզանդիայում IV դ. զորամասի հրամանատար էր, VI դարից այդպես էին կոչվում բարձրաստիճան զինվորականներ, որոնք ղյխավորում էին Իտալիայի և Հյուսիսային Աֆրիկայի էքսարխատները: էքսարխոսները դարձել էին կայսեր տեղակալներ, նրանց իշխանությունը տարածվում էր Ֆինանսների, արդարադատության, հանրային գործերի, սահմանների պաշտպանության բնազավանների վրա, նրանք հրապարակում էին և ի կատար ածում կայսերական հրովարտակները, նշանակում քաղաքացիական, զինվորական և եկեղեցական պաշտոնյաներին: Ռավեննայի էքսարքոսը մասնակցում էր Հոսմի պապի ընտրությանը և հաստատում այն:
 - 386. Կաստալը (castaldi, gastaldi) էին կոչվում լանզոարքների ղուլսներն ու իշխանները, որոնք օժտված էին զինվորական և քաղաքացիական իրավունքներով:
 - 387. Կոստանդնուպոլսի պատրիարք Գեորգ I-ը (679—686):
 - 388. Անաստասիոս Բերլինսեկարիոսը ավյալ տեղը թարգմանել է. «... quo ruit Hedesene ascensus et trullus ecclesiae»:
 - 389. Անտիոքացի Արտեմիսիոս ամիրը համապատասխանում է մայրին:
 - 390. Բոննի հրատարակության մեջ՝ «սարակիստների առաջին թագավորը», բնական ընթացում՝ «πρωτοσουλτανος» «առաջին խորհրդակալ»:
 - 391. Եղիղ I իրն Մուավիա (680—683):

- 392. Գեպրեքը տեղի ունեցան 680 թ.: Բուլղարները, ալիի հիշա՝ պրոտորուլղարներն առաջին անգամ ներխուժեցին Քրակիա 538 թ. և շարք տուլով բյուզանդական զորքերին, վերադարձան: Երկրորդ անգամ նրանք ներխուժեցին 540 թ.: Անցնելով Կանուր գետը, նրանք սպառապեցին բալկանյան հողերը Ազրիատիկ ծովից մինչև Կոստանդնուպոլիս (Тышкова-Заимова, Нападения „варваров“, стр. 4):
- 393. Քեոփանեսի τὸν Οὐνογουνοδούρων Βουλιγάρων καὶ Κοσμάτων-ի տեղ նիկեփոր պատրիարքը գրում է Οὐνοων καὶ Βουλγάρων (հոնք և բուլղարներ — Nicephori Breviarium, p. 38): Ուսումնասիրողները գտնում են, որ երկու հեղինակներն էլ օգտագործել են միևնույն, այժմ կորած մի աղբյուր (Moravcsik, Byzantinoturcica, I, S. 535): «Աշխարհացոյց»-ում հիշվում են «Ունոյղիտանսոր Բ[ու]լղար եկեղ» (Երեմյան, Հայաստանը, էջ 101), որոնց նույնացնում են Քեոփանեսի Ունոգունդուրների հետ (Артамонов, История хазар, стр. 168): Արտամոնովը կործանեց (Ա, 6) Վրչնզոր բուլղարին էլ նույնացնում է մեր աղբյուրի ունոգունդուրների հետ (նույն տեղում, էջ 168): Կոստանդին Միրանածինը իր «Բանակալքիմեթի մասին» աշխատություն մեջ (էջ 85), խոսելով Քրակիայի մասին, ցույց է տալիս, որ բուլղարները Կոստանդին Պոպուստոս կայսեր թագավորության վերջում անցել են Իստրուս (Դանուբ) գետը և հաստատվել Քրակիայում: նրանք նախապես կոչվել են Օնոգունդուրներ:
- Ունոգունդուրներն ու կտորագները թուրքական ծագում ունեցող ցեղեր են, պրոտորուլղարներին ազգակից: նրանց մասին տե՛ս Златарски, История I, ч. I, стр. 72—97: Бурмов, Към въпроса, с. 298—302.
- 394. Ազովի ծովը:
- 395. Ասել գետը նույնանում է Վոլգայի հետ:
- 396. Այժմ՝ Գոն:
- 397. Ենթադրաբար Կուրան գետը (Извори, VI, стр. 261, ծանոթ. 6): Ըստ Մարիվարի (Streifzüge, S. 32, An. 1) կամա գետը: Ըստ Արտամոնովի՝ Բուլղ գետը (История хазар, стр. 166): «Աշխարհացոյց»-ի «Կուփի-Բուլղար»-ի տակ (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 101) Ք. Պատկանյանը հենց Կուփի գետն է տեսնում (Патканов, Из нового списка, стр. 29):
- 398. Նեկրոպելեն հիշատակում է և Կոստանդին Միրանածինը (DAI, I, p. 182): նույնացվում է հին շրջանի Կարկինիտական ծոցի հետ (այժմ Պերեկոպ): Ուրիշների վում է հին շրջանի գետարեհանի մոտ էր գտնվում (Извори, VI, стр. 261, прим. 7): կարծիքով Դանուբի գետարեհանի մոտ էր գտնվում (Извори, VI, стр. 261, прим. 7):
- 399. Բնագրում՝ Κρισὸν πρὸς τὸν: Թամանյան թերակղզին, Կերչի նեղուցի արևելյան ափին (Извори, VI, стр. 261, прим. 8):
- 400. Բուպորոս երկիրը (Կիմերյան Բուպորոս) նույնանում է Կերչի հետ:
- 400ա. Ղրիմի հրեական հնագույն դադութը դոյություն ուներ մ.թ. առաջին դարից: Քեոփանեսից բացի, այն հիշատակում է և Իրն ալ-Ֆակիհը և կոչում Սամկը ալ-Յահուզ: Տե՛ս Golden, Khazar Studies, էջ 20: Հենց այս հրեաների առկայությունը կարելի է բացատրել խազարների հրեազավանությունը (նույն տեղում):
- 401. Խոսքը բուլղարների խան Կուրբատի մասին է (մեռ. 642-ից հետո): նիկեփոր պատրիարքը նրան անվանում է «Ունոգունդուրների տեր» (Nicephori Breviarium, p. 27): նույն հեղինակի ասելով Կուրբատը Հերակլիոս կայսեր հետ հաշտություն էր կնքել և վերջինից ստացել պատրիկի պատվաստիճան: Կարծիք է հայտնվել, թե «Աշխարհացոյց»-ի կուրբատը հենց Կուրբատն է (Артамонов, История хазар, стр. 169):

- Այստեղ ասենք, որ նա աղբյուրներում կոչվում է և հուրբաաա (նույն տեղում): Բյուզանդական հեղինակները բուլղար խաներին «սեթ» (κύριος) են անվանում: Այդ մասին տե՛ս Beševliev, Κύριος Βουλγαρίας, 289—298:
402. Բաթրայանին նիկեոսը պատրիարքը անվանում է Բալանոս (Βαλανός), իմա՝ Բոյան:
403. Համարվում է բուլղարական պետության հիմնադիրը (681—701): Հին բուլղարական թագավորական ցուցակներում կոչված է Իսպիրիս: Նրա կենսագրական տվյալները շատ կցկտուր են, անգամ նրա անվան ծագումն է անորոշ: Վրաց գիտնական Գ. Վ. Ծերեթելին Արմազիի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերել է մի գեմմա, որի վրա նկարված էր տղամարդու ֆիգուր հունարեն արձանագրությամբ՝ Ἀσπαυρούχος πιστάτης (Церетели, Эпиграфические находки, стр. 50): Գեմմաների հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Ասպալուսի» անունը միջին իրանական է, որով այդպիսին է համարվում և բուլղար խան Ասպարուխի անունը (տե՛ս Dujčev, Queliques notes, p. 76): Անունը իրանական-այրանական է համարում Բ. Սիմոնովը և մեկնաբանում «Ապիտակ ձի» (Симеонов, Происход на личното име, стр. 41—46): Բացառված չէ, որ Ասպարուխ անունը հայերի մեջ տարածված իրանական Ասպուրակ[խ] անունն է, որ Յուստին ծագեցնում է պարսկ. suwār (հեծյալ, ձիավոր) բառից (Justi, Iranisches Namenbuch, S. 47):
404. Գանապրիսը Գնեպրն է՝ Գանաստրիսը՝ Գեեստրը:
405. Թեոփանեսը Օղոսը դեռ է համարում՝ Գանուրից հյուսիս գտնվող: Մի փոքր հետո նա Օղոսը հիշում է որպես վայր: Բուլղար պատմական Գրինովը գտնում է, թե դա այն փոքր տարածությունն է, որ ընկած է Պրուտի, Գանուրի և Սև Սովի միջև: Նա բուլղանդական նորոգողների Օղոսը կապում է սլավոնների «УГОЛЬ»-ի (ածուխ) բառի հետ, որից էլ ծագում սլավոնական «ուգիլ» ցեղը: Հետագայում այդ վայրը թաթարներն անվանեցին «բուսակ», որ դարձյալ «ածուխ» է նշանակում (տե՛ս Съчинения на М. С. Дринова, том I, София, 1909, стр. 45, 46: М. Н. Тухомиров, Исторические связи России со славянскими странами и Византией, М., 1969, стр. 103): Այժմ ուսումնասիրողների մեծ մասը Օղոս է համարում Գանուրի գեղատյուտ գտնվող ամրությունը: Հարցի մասին տե՛ս և Bănescu, "Oglos-Oglu; Σ τ ρ ά τ ο σ, Τὸ Βυζάντιον, Ε', σελ. 102—107:
406. Նիկեոսը պատրիարքը գրում է Βερουιλιας, Βερυιλιας: Աղբյուրները երկու տարբեր տեղեր են նշում այս տեղանվան վերաբերյալ, ավելի վաղ աղբյուրը տեղադրում է հյուսիսային Կովկասում, ավելի ուշը՝ Վոլգայի շրջանում: Ուսումնասիրողներից ոմանք Բերդիլիան նույնացնում են հայկական աղբյուրների Բասիղը-Բարսիղը տեղանվան հետ՝ հյուսիսային Կովկասում: Տե՛ս Golden, Khazar Studies, էջ 143—147:
407. Այժմ՝ նեսերը բաղաբը Բուլղարիայում, Սև ծովի ափին:
408. Կարծում են, թե Օղոսուսից (տե՛ս հարցի ծանոթ.) հարավ-արևմուտք գտնվող վայր էր (Извори, VI, стр. 263, ծանոթ. 3):
409. Թեոփանեսը Օղոսուսը տեղադրում է Վառնայի մոտ: Գ. Անգելովը, Պ. Լըմբլը և ուրիշներ Օղոսուսն ու Վառնան նույնացնում են: Կոչվում էր նաև Օղոսուսպոլիս «Վերանվանումների» բյուզանդական ցուցակում Օղոսուսպոլիսի դիմաց գրված է. «որ այժմ Վառնա է կոչվում» (տե՛ս Diller, Byzantine Lists, p. 30):

410. Մասնագետների մեջ որոշակի կարծիք չկա այս «Յոթ տոհմերի» վերաբերյալ: Նրանք այստեղ, որ թուրքերի խաբանի՝ Մավրիկիոս էլյասը ուղարկած նամակում, խաբանն իրեն անվանում է «մեծ տեր յոթը տոհմերի, աշխարհի յոթ կղիմանների հրամանատար»: Հմմտ. Феодилакт Симокатта, стр. 159: Լ. Ն. Գումիլը գրում է, որ տվյալ դեպքում յոթ թիվը ինչ-որ մտգական նշանակություն ունի: Այն հանդիպում է Կյուլ-տեգրեի և Տոնյո-կուկի արձանագրություններում (Гумилев, Биография тюркского хана, стр. 69): Հարցի մասին հատուկ տե՛ս Dujčev, Les sept tribus, p. 55—65): Ավելացնենք այստեղ, որ Կոստանդին Սիրանաթիսի համաձայն հունգարացիներն էլ յոթ ցեղ են: Տե՛ս DAI, էջ 170:
411. Սեբերները բնակվում էին Գնեպրից արևելք: Նրանց մասին տե՛ս Dujčev, Les sept tribus, p. 55 sqq.:
412. Միասնական կարծիք չկա Բերեգար անունը կրող լեռնանցքի տեղադրման շուրջ: Նույնացվում է ժամանակակից Զարլոկավաշ կամ էլ Բայրամդերե լեռնանցքների հետ (Цанкова-Петкова, О территории, стр. 124, прим. 1, 127: Տե՛ս Извори, VI, стр. 264, ծանոթ. 2):
413. Նորաստեղծ բուլղարական պետության հառաջ-արևմուտքում ընկած Ավարիան կապ չունի ժամանակակից Հունգարիայի տարածքում գոյություն ունեցած Ավարական խաբանության հետ: Խոսքը ավար գաղթականների մասին է, որոնք հաստատված էին Բալկանյան լեռների կենտրոնական մասի հյուսիսային փեշերին: Հենց այս ավարների օգնության դիմեց Կրումը (Цанкова-Петкова, О территории, стр. 139—140):
414. Կոստանդնուպոլիսի Տիեզերական VI ժողովը գումարվեց Տրուսոս (գմբեթակիր) կոչվող պալատում, 680 թ. նոյեմբերի 7-ից 681 թ. սեպտեմբերի 16-ը: Ժողովը գլխավորում էր Կոստանդնուպոլիսի պատրիարք Դեոբադը: Մասնակցեցին Անտիոքի Մակուրիոս պատրիարքը, Հոռմի պապի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքների ներկայացուցիչները: Ժողովի մասին մանրամասն վկայում է և սխալմամբ Անանիա Շիրակացուն վերադրվող «Ժամանակագրություն»-ը (էջ 398—399). «Եւ հիմնադրեալ զհայհոյութիւն պղծոյն Ղեւոնի շինեցին ի վերայ զաւելարեալ ուրացութիւն Մարտինոսի և Մարսիմոսի, երկու բնութիւնս, եւ երկու կերպարանս, եւ երկու ներգործութիւնս և երկու կամս ի վերայ Քրիստոսի սակովոյ»:
415. Մուսուրս իրն Աբու Օրեյդ ալ-Բաբաֆի: Միքայել Ասորու տվյալներով ապստամբություն բարձրացրեց Աբուլայում՝ այն է Բաբելոնում (Michel le Syrien, t. II, p. 468—469): Նախապես հարել էր իրն Զուրեյիին:
416. Մրվան I իրն ալ-Խաբամ (683—685):
417. Արաբական աղբյուրների Աբդ Ալլահ իրն ալ-Զուբայրը, որ Արզամեղիքի ժամանակ, հիշրայի 66 թ. (685/686 թթ.) ապստամբություն բարձրացրեց և իրեն խալիֆա հռչակեց: Պատկանում էր կուրայշ ցեղին: Սպանվեց 692 թ. հոկտ. նոյ. ամսին: Էթրիի արարների ղեկավարն էր՝ Իսլամի երկրորդ քաղաքացիական կռիվների ժամանակ (680—692): Տե՛ս նաև Տեք-Ղանդյան, Ամիրայությունները, էջ 43:
418. Հասան իրն Մալեք իրն Բահդուլ, Եգիպտոսի I-ի քեռին:
419. Աբդ ալ-Մելիք (685—705 թթ.), Օմմայան հարստության 5-րդ խալիֆան: Նրան բազմիցս հիշատակում է Մովսես Կաղանկատվացին:
420. Կոստանդնուպոլիսի Թեոդորոս պատրիարքը երկրորդ անգամ աթոռակալեց 686—687 թթ.:

- 421. Հուստինիանոս II (685—695, 705—711):
- 422. Պալմանդիերը նախագիս կնքված էր 678 թ., 688 թ. այն վերանորոգվեց (տե՛ս M. Canard, Bull. d'Et. orient. de l'Inst. fr. de Damas, 13 (1949—1951), էջ 62—69): Կիպրոսը առաջին անգամ արարների հարձակման զոհ դարձավ 648/649-ին, ապա 653/654 թթ: Մի շարք ուսումնասիրողներ ենթադրում են, որ condominium-ը (Ostrogozsky, Histoire, p. 100) տեղեց մինչև 965 թ., երբ այն վերջնականապես ազատագրվեց արարների ձեռքից (տե՛ս Jenkins, Cyprus, p. 1006 և հտ.։ Χριστιανική ἱστορία. Ἡ Κύπρος: Apud: Ζαχαρίας, Ἡ Βυζαντινὴ Ἀρχαιότητα, σελ. 104, δանսթ. 3): Հետաքրքրական է նշել, Միջայնի Ասորաց տվյալներով բյուզանդացիները և արաբները կիսում էին Կիպրոսի հարկերը միայն, որ Կիպրոսն էր երկուսին ենթակա ու հպատակ, Հայաստանը, Վրաստանը (Չուրգան) և Ասանը (Արդոն) և Մեդիայի հյուսիսային մասը, այն է Ասորյապահանը (Աղարբիզան) պիտի ենթարկվեին միայն Բյուզանդիային (Michel le Syrien, t. II, p. 469): Ենթադրում են, որ այս պալմանդիոզ Արդալուկիցը ձանձուցեց Բյուզանդիայի տիրապետությունը ամբողջ Հայաստանի վրա (կամ նրա մի մասի): Տե՛ս Στρατσου, Τὸ Βυζάντιον, ΣΤ', σελ. 33: Հմմտ. նույն տեղում, էջ 36, որտեղ գտած խոսք է լինում Հայաստանի մի մասի Բյուզանդիային ենթարկվելու մասին: Հարցի մասին տե՛ս Τωμαζάκης, Κυπριαρχία, σελ. 27: Costantino Porfirogenito de Thematisbus, p. 26—27: Οπίσκοπος Αχαιῶν, Ἡ ἐν Κύπρῳ Ἀραβικρατία, σελ. 193—200: Այս աշխատություններում հեղինակները ցույց են տալիս, որ 648—695 թթ. միջև Կիպրոսում կատարվող արարական տիրապետություն լի եղև նշենք այստեղ, որ Կիպրոսում այս ժամանակ կար հայկական բազմաթիվ գաղութ, որ հայերը գաղ-թեղվել էին այստեղ դեռևս 578 թ. Աղաներից (Kyrris, Military colonies, p. 157):
- 423. Այս տիտղոսը կրողները զբաղվում էին զիվանագիտությամբ և ներքին անվտանգություն: Ենթարկվում էին magister officiorum-ին և կոչվում էին agentes in rebus: Պաշտոնը հարստեց մինչև VIII դ., որից հետո նրանց պարտականությունները կատարող մարդիկ կոչվում էին «վասիրիկոս» (DAI, II, p. 79):
- 424. Մ. Յա. Սյուլյանովը մարդաչիտների, ինչպես և առանձին արարական ցեղերի անցումը Բյուզանդիա բացատրում է բյուզանդական կառավարության՝ զլուզական համայնքների պաշտպանություն ուղղությամբ տարած քաղաքականություն (СЮЗЮ.МОС, О характере, стр. 45): Ազնվի ուղ աղբյուրներում, նախ և առաջ Կոստանդին Միլանաժին կայսեր երկերում, մարդաչիտներ են հիշվում Բյուզանդական կայսրության ալլևալլ շրջաններում՝ Պելոպոնեսում, Կեֆալոնիայում, Էպիրոսի նիկոպոլիս քաղաքում, Ատտալիայում, սակայն նրանք VII դ. մարդաչիտների հետ որևէ առնչություն չունեն, պարզապես նրանց անունը կրողներ են:
- 425. Ուրեչուլլահ իբն Ջիլազը: Մուսվիան սրա հորն էր հայտարարել իր եղբայրը և ու Ջիլազին, ինչպես գրում է Քեոփանեսը (Στρατσου, Τὸ Βυζάντιον, ΣΤ', σελ. 38, ծանոթ. 118):
- 426. Բնագրում՝ Βυζαντιαν:
- 427. Միջագետքի հին քաղաք Եփրատի ձախ ափին, այս գետի Աբրուս (հարուր) վտակի խառնման տեղում: Գտնվում էր Հոռմեական կայսրության ժայռամասում և պարսպապատվել էր Դիոկղետիանոսի և Հուստինիանոս I-ի կողմից: Զորավարի աթոռանիստ էր: Վահրամ Զուրինի ապստամբության ժամանակ պարսից արքա իսպրովն այստեղ ապաստանեց:

- 428. Հուստինիանոս I-ի կողմից Ասորիքի հին մայրաքաղաք Անտիոքին տրված նոր անունը, որ «Աստվածալիև» (աստոն) քաղաք է նշանակում: Նիկեիոսը Փոկասի գրավումից հետո Անտիոքը պաշտանական փաստաթղթերում Անտիոք-Քեոպոլիս է կոչվում:
- 429. Կոստանդինուպոլիսի Պալլադոս III պատրիարքը (688—694):
- 430. Քեոփանեսն այստեղ տեղանվան հոգնակի ձևն է օգտագործում, երկու տող հետո՝ եղակի: 6250 թ. տակ նա հիշում է Մակեդոնիայի Ալավանիաները: Տե՛ս էջ 142:
- 431. Օպտիկոն բանակաբեմը գտնվում էր Փորբասիական թերակղզու հյուսիս-արևմուտյան ծայրամասում: Նրա մեջ էին մտնում Նիկիա, Պրուսա, Կոստինոն, Գորիդոն, Միդեոն, Ապամիա, Կյուպիդոս, Աբիդոս և այլ քաղաքներ:
- 432. Բնագրում՝ Ἀβελῆς ὁ Ζουβέρ: Չպեար է նույնանա 6175 թ. տակ հիշված Ἀβελῆς οὗτος Ζουβέρ-ին, բանի նրան արդեն սպանել էր Արդալուկիցը, թեպետ այստեղ հնարավոր է, որ խոսք է լինում հետագա դեպքերի մասին:
- 433. Ոչ թե Զուբերի (բնագրում՝ Ζουβέρ), այլ Զուբերի որդի Արդալայի (Արդալահ իբն Զաբար): Գեոլոգ տեղի ունեցավ 692 թ.: Հմմտ. ծանոթ. 432:
- 434. Բնագրում՝ Χαΐται: Ծարուն առաջարկում է ուղղել Χαΐται (խալալ): Միջայնի Ասորին տալիս է Հաջաջ ընթերցումը: Խոսք էլ-Հաջալ իբն Յուսուֆի մասին է (Michel le Syrien, t. II, p. 470):
- 435. Քեոփանեսը ճիշտ չէ Կիպրացիները 690/691 թթ. հաստատվեցին Կյուպիդոսում, որ և քաղաք հիմնադրեցին՝ նոր Հուստինիանուպոլիսը (Στρατσου, Τὸ Βυζάντιον, ΣΤ', σελ. 69):
- 436. Բնագրում՝ Λογίται:
- 437. Գեթեմանիի տաճարը Քրիստոսի գերեզմանից հետո քրիստոնյաների գլխավոր սրբավայրն է երուսաղեմում, քանզի նրա մեջ էր Աստվածածնի գերեզմանը: Գրանցվում էր Ջիթենյաց լեռան արևմտյան փեղհիկին: Տաճարում բացի հույներից, մաս ունեն նաև զպոսիները, հայերը և ասորիները: Կառուցվել է Կոստանդին Մեծի և նրա մայր Հելենեի կողմից, բայց հետագայում բազմիցս վերանորոգվել ու վերակառուցվել:
- 438. Ռ. Գիլյանը կարծում է, որ Մանսուրը հնարավոր է հայրն է Հովհաննես Մանսուրի՝ մականունը Ռսկեհոս (Հովհան Դամասկոսի), որն աչքի ընկավ սրբապատկերների պաշտպանության գիրքերում՝ Կոստանդին V-ի օրոք (Guiland, Les logothètes p. 12):
- 439. Սլավոնների բյուզանդական բանակում ծառայության ընդունվելը ցույց է տալիս, որ նրանք օգտվում էին աղաների իրավունքներից: Բանակում ծառայելը ազատ քաղաքացիների իրավունքն էր: Այս հանգամանքը, որ Քեոփանեսի ասելով Կոստանդնուպոլիսի պատրիարք Նիկեասար (766—780) ծագումով սլավոն էր, նույն բանն է հաստատում (Yannopoulos, La société, p. 253):
- 440. Բնագրում՝ λαὸν περιούσιον:
- 441. Նիկեիոսը պատրիարքը նրան անվանում է Γεβούλον (Nicephori Breviarium, p. 41): Բուլղար պատմաբանները գտնում են, որ բուլղարական Իսիդո անունն է: Այն հանդիպում է IX դ. արձանագրություններում (Извори, т. VI, стр. 266, прим. 3):

- 442. Ոմանք կարծում են, որ խոսքը Կիլիկիայի ծովափնյա Սերաստիա քաղաքի մասին է, Հետադայի Այաս նավահանգստի: Գարծիր կա նաև, որ Առաջին Հայքի Սերաստուպոլիսն է, այն՝ Սուլու սարայ (Չիֆթլիկ) (Maricq, Notes sur les Slaves, p. 350 և հաւ. Հմմտ. Ostrogorsky, Histoire, p. 162: Извори, т. VI, стр. 266, ծանոթ. 4): Առաջին Հայքի Սերաստուպոլիսի մասին է կարծում նաև Զակիթիոսը: (Ζαχαρίας, «H Βυζαντινὴ Ἀποστολία», σελ. 105): Բայց Առաջին Հայքի Սերաստուպոլիսը ծովափնյա՞ էր: Տարրիանկ կարծիք է հայտնել Քեոպանիսի ժամանակագրության հրատարակիչը: Ցանկերում Սերաստուպոլիսի մասին նա գրում է. Urbs maritima (Colchidis), vol. II, p. 700, այսինքն նույնացնում է ժամանակակից Սուխումիի հետ: Հարցի մասին տես Στρωγγος, Το Βυζάντιον, ΣΤ', σελ. 44—45, որտեղ ազված է նաև, որ «ծովափնյա» բառը Քեոպանեսի սխալն է:
- 443. Նույնանում է հայկական աղբյուրներում հիշված «Մամեա իշխան զորուն իմայրիս» անձնավորության հետ, որ ճնշեց հայոց 703 թ. ապստամբությունը: Հենց «ա» էր նախնավանի և երամի եկեղեցիներում հայ նախարարների ողջակեղ անուրը (Ղևոնդ, էջ 32—33; Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 366—367): Քեոպանեսը մի բիշ ճետ աչդ բանը հաստատում է:
- 444. Քեոպանեսն այստեղ վկայում է Փոքր Ասիայում (Օպսիդիոն բանակաթեմում) զաղթեցված սլավոնների բնաջնջման մասին: Բայց հետադայում (762) Կոստանդին V-ը դարձյալ սլավոններ զաղթեցրեց Արամնա (Ռյոթանիայում): Նիկեոսը պատարբի տվյալներով նրանք 208 հազար հոգի էին: Կոստանդին Սիրանածինի վկայությամբ 949 թ. Գոնզվեսի Կրետեի արշավանքին մասնակցեցին Օպսիդիոնի սլավոններն իրենց երեք հրամանատարներով (տես Կոստանդին Սիրանածին, էջ 148—149):
- 445. Այս Սմբատին Ղևոնդը համարում է Վարազդիտի որդի և մանրամասն խոսում նրա պայքարի մասին ընդդեմ կայսրության (էջ 19):
- 446. Կոստանդնուպոլիսի պատրիարք Կալիսիկոս 1-ը (694—706):
- 447. Անտիոքացոց հյուպերբերբետայոս ամիսը համապատասխանում է հսկոնմբերին:
- 448. Հուստինիանոս II-ի տրիկլինոնը կամ Ոսկե տրիկլինոնը (խրիստոտրիկլինոն) շքազարդ շքեղ շենքերից մեկն էր, կոտուցվել է 694 թ.: Տոնախմբությունների դահլիճ էր:
- 449. Բնագրում՝ էպիկոսես նշանակում է որևէ գործի վերակացու: Այդ պաշտոնի անվանումը հետագայում ընդունվում է որպես հատուկ անուն: Մատթեոս Ուոհայեցին հիշատակում է Անտիոքի կառավարիչ հայազգի էպիստան:
- 450. Սա զննիկոնի լոգոթետի ասաջին հիշատակություններից մեկն է բյուզանդական արքայրներում (Guiland, Les logothètes, p. 12): Ընդհանրապես լոգոթետների մասին նույն տեղում, էջ 5—115: նաև՝ Կոստանդին Սիրանածին, էջ 291—292:
- 451. Բուֆորը նկատի ունի:
- 452. Բնագրում՝ βάσις: Անաստասիոս Բիրիլիոթեկարիսը թարգմանել է bases:
- 453. Կոստանդնուպոլիսի թաղամաս Ոսկեղջյուրում: Այստեղ կային պալատ, բաղանիք, տաճարներ և վանքեր, այդ թվում և սբ. Եվփեմիայի վանքը:

- 454. Հավանաբար հենց այս արշավանքը ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Ղևոնդի կողմից: Պատմիչը գտնում է, որ զեպրերը տեղի ունեցան Արզամիսիքի իշխանության 16-րդ տարում (բառ Քեոպանեսի՝ 12-րդ) և զորավար Մամեա Մուսար գործեց Ջերմածոր զավարը (Մոկաց զավառ): Սա «սուր ի գործ արքեալ կոտորելը» զարսն և զկանայո, և զմանկունսն վարէր ի գերութիւն. և տաղնապ հասուցանէր շախարհիս» (էջ 20): Ղևոնդը ցույց է տալիս, որ զորավար Մամեա երկրորդ անգամ արշավեց Հայաստան՝ Արզամիսիքի 18-րդ տարում:
- 455. Բրուսը կարծում է, որ այստեղ խոսքը ոչ թե Կոստանդնուպոլիսի ամրոցը զննոսի մասին է խոսքը, այլ վենետիկների (կապույանների) արխեոպրատական կուսակցության պատկանող զննոսի (Cambridge Medieval History, II, 1913, էջ 409): Այդ միտքը Գեորգ Վանակյանի և այլ աղբյուրների, այդ թվում և Կիրակոս Գանձակեցու ավյալներով հաստատում է Մ. Վ. Լեյնեկոն (Левченко, Венеция и православие, стр. 182):
- 456. Ըստ Կոստանդին Սիրանածինի արևմտյան 5-րդ բանակաթեմն էր Հիերոկլեսի Սիսեկլեմոսի համաձայն նույնանում է Աքայայի հետ: Ընդգրկում էր հյուսիսային և կենտրոնական Հունաստանը՝ մինչև Պելոպոնես: Բանակաթեմը ստեղծվեց VII դ. վերջում: Կենտրոնը Լարիսա քաղաքն էր: Տարրեր ժամանակներում Պելոպոնեսը մտնում էր Հելլադոս բանակաթեմի կազմի մեջ:
- 457. Իրականում Սոֆիեի (կամ Սոֆիկների) նավահանգիստը լրիվ չի համընկնում Հուլիանոսի նավահանգիստին: Սոֆիեի նավահանգիստը թուրքերն անվանում են Կադրը-ղալիմանը: Գտնվում էր Կոստանդնուպոլիսի եվրոպական մասի հարավարևելյան ափին:
- 458. Գտնվում էր Սոֆիանե նավահանգստից արևմուտք:
- 459. Տե՛ս ծանոթ. 78: նաև Կոստանդին Սիրանածին, էջ 283, ծանոթ. 193:
- 460. 'Υπαρχος του στρατοπέδου: Այսպես էր կոչվում արշավանքի զուրս եկած բյուզանդական զորարանակի մատակարարման պետը: Կոչվում էր նաև Մեծ սարատուպարքը: Սակայն բացառված չէ, որ այստեղ խոսքը Կոստանդնուպոլիսի բազապետի՝ էպարքոսի մասին է:
- 461. Բնագրում՝ φόρος հրապարակ, բայց ավելի որոշակի՝ Կոստանդին հրապարակը: Գտնվում էր սբ. Սոֆիայից արևմուտք, ձիարշավարանից հյուսիս-արևմուտք:
- 462. Կոստանդնուպոլիսը բաժանված էր 14 սեզիոնների (regiones, περιοχές, շևի-բատ), շրջանների (տե՛ս Janin, Cons. byz., p. 49—64), որոնցից 13-ը գտնվում էին քաղաքի եվրոպական մասում, 1-ը՝ Սիկե կոչվածը՝ ասիական:
- 463. Անեծք է, մոտավորապես՝ «չլուրս-գլուր լինես»:
- 464. Աֆենդոնի մասին տե՛ս ծանոթ. 77:
- 465. Հնում՝ իերսոնես, բյուզանդական իերսոն բանակաթեմի կենտրոնը: Կոստանդին Սիրանածինի օրոք կայսրության եվրոպական 12-րդ բանակաթեմն էր, իերսոնը Կորսոն քաղաքն է Սև ծովի ափին՝ Ղրիմում, Սևաստոպոլից արևմուտք:
- 466. Տե՛ս ծանոթ. 100:
- 467. Կոստանդնուպոլիս (695—698):
- 468. Բնագրում՝ 'Αλιόσι, հայկական աղբյուրների վիթթը (Վալիդ իրն Արզամիսիքի):
- 469. Հյուսիսային Աֆրիկայի նվաճումը, որը սկսեց նշանավոր Ուրբան, շարունակեց 697 թ. Հասան իբն ան-Նումանը: Հաջող տարին նա գրավեց Կարթագենը: Արար-

- ներ Աֆրիկան վերջնականապես նվաճեցին 711 թ., Մուսա իրն նուսայրի գլխավորութիւնը:
470. Բնագրում՝ πρωτοσάββαλος:
471. Կիրյուրեոսների բանակաթեմը գտնվում էր Փորրասիական թերակղզու հարավ-արևմուտքում: Կրնելով ծովալիք բանակաթեմ, այն կառավարում էր ոչ թե զորավար, այլ ծովակալը՝ ավլայ դուպրում գրունդար:
472. Ոսկեգլխուրի նավահանգիստներից մեկը, համանարար նույնանում է ներթոնի հետ:
473. Դելմասուսի (կամ Գալմասոսի) վանքը, որի անունով էր կոչված Կոստանդնուպոլսի մի թաղամաս, գտնվում էր Կոստանդնի պարսպի հարավային մասում, ժամանակակից Սամաթիայից արևելք:
474. Ապոստոլոս (Տրեբերնո 111): Քաղաքներից 598—705 թթ.:
475. Տե՛ս վերը, ծանոթ. 434:
476. Համանարար Աբգարա՛ս իրն Աբգարմալիք իրն Մրվանը, խալիֆա Աբդալմալիքի որդին, քանզի հիշվում է, որ 701—702 թթ. նա Բյուզանդիայի վրա արշավանք է կատարել: Հետագայում նա դարձավ նիսպոսի կառավարիչ:
477. Հնգապղնձոն թարգմանարար նշանակում է յոթղնչյան:
478. Բնագրում՝ ἀργοντες:
479. Խոսքը հայոց իշխան Ամրատ Բաղրատունու գլխավորութիւնը հաշիւի 703 թ. ապրատմութիւնի մասին է: Հայ նախարարները սղջակեղ արվեցին Խրամի և Նախճավանի եկեղեցիներում: Այդ մասին մանրամասն տե՛ս Առնոզ պատմիչի երկում (էջ 32—33): Մոսիսն Կաղանկավազցին (366—367), Հովհաննէս Գրատանակերտցին (էջ 97—98), Վարդան Արեւելցին (Muyldermans, La domination, p. 51), Միքայել Ասորին (Michel le Syrien, t. II, p. 474), նույնպես անդրադարձել են այդ դեպքերին: Ուսումնասիրություններից տե՛ս Առաքելյան, Հայերի ապստամբությունը, էջ 55—62, Тер-Гевондян, Армения, стр. 75—78:
480. Բնագրում՝ Σίσυον χαστρον: Միքայել Ասորին գրում է Տիզե (Michel le Syrien, t. II, p. 489): Նույնպես է և հայերեն թարգմանություն մեջ. «զանապիլ բերդն յերկրին Կիրիկոյ, որ կոչի Շիզե» (Միխայել Ասորի, 1871, էջ 338):
481. Այս Գորաս բերդը նիկեիոս պատրիարքը անվանում է Գորոս և տեղադրում Գոթայ աշխարհում (Nichepori Breviarium, p. 46): Ավելի ուշ աղբյուրներում Գորոսի փոխարեն հանդիպում է Քեոզորոս ձևը: Վասիլևսկու կարծիքով նույնանում է Մանգուսի հետ: Տե՛ս Васильевский, Житие Иоанна Готского, стр. 417—418: Գեպրեքի մասին՝ նույն տեղում, էջ 388—390:
482. Բյուզանդական աղբյուրները խաբանին անվանում են Իրուզիր Գլավան (Αρταμονος, История хазар, стр. 196):
483. Ըստ Առնոզի՝ խաբանի դասեր, և ոչ բրոջ. «Յուստրանոս գնացեալ յաշխարհն Խաբաց՝ անոնք իւր կնութեան զղուստրն Խաբանայ արքային Խազրաց» (էջ 17): Հասկանալի է, նա Քեոզորոս կոչվեց ամուսնանալուց և մկրտվելուց հետո: Մեզ հայտնի չէ նրա իսկական անունը:
484. Հին հունական գաղութ էր և գտնվում էր ժամանակակից Քամանյան ծովածոցի տեղում: Նրա ավերակները գտնվում են Կրասնոդարի երկրամասի Տեմբուլի բլրանի Սեննայա կայարանից 3 կմ արևմուտք, որտեղ այժմ հնագիտական պեղումներ են կատարվում:

- 484a. Հայտնի չէ, Պապացիսը անուն է, թե տիտղոս: Ինչ վերաբերում է Բալգիցիսին, ապա այդ մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Գուղենը կարծում է, թե Belgidi/Balgidi-ն է և նշանակում է «կիրիի պահապան» և համապատասխանում է կենտրոնական Ասիայի թուրքերի «սամղալի»-ին, Օսմանցիների «նիշանլի»-ին: Գուղենից առաջ Կոկովցովը բացատրել էր Balgidi, բաղաբառն, որ ավելի է հարմարվում Քեոզանեսի Բալգիցիսի էությունը: Տե՛ս Golden, Khazar Studies, էջ 165—167, 204—205:
485. Ժամանակակից Կոստանցա նավահանգիստը Ռումինիայում: Հին հունական գաղութ էր: Մ. թ. 8—17 թթ. այստեղ էր ապրում արտորական Օվիդիոսը: Կոստանդին Մեծը Տոմիսը վերանվանեց Կոստանդինիանա, Քոստրական տիրապետության ժամանակ կոչվում էր Քյուստանչե:
486. Տեղն անորոշ: Բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել, որոնցից մեկի համաձայն Դրիմի թերակղզու արևելյան ծայրն է, որ կոչվում էր Ասպերա թերակղզի (տե՛ս Γεωργόπουλος, Βασιζακούριος, σελ. 293):
487. Հունարեն բնագրում՝ Βασιζακούριος, Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ՝ Barisbacurius: նիկեիոս պատրիարքը տալիս է ճիշտ ընթերցումը. Βασιζακούριος (Nichepori Breviarium, p. 47, 54): Հույն բյուզանդական Ցաննուպուր, որ հատուկ հոգիված է նվիրել այս անձնավորության (Γεωργόπουλος, Βασιζακούριος, σελ. 294), ընդգծելով նրա անվան ոչ հունարեն, հետևաբար և այն կողմի ոչ հույն լինելը, նրան խերսոնցի է համարում: Բայց նա, անկասկած, հաշիվական Վարազ անունն է՝ բարդված Բակուր անվամբ: Գտնված են նրա արձև կնիքները. Մեկի վրա նա պատրիկ տիտղոսն է կրում (Schlumberger, Sigillographie, p. 3, 249: Տե՛ս նաև Zacos et Vegtery, Byzantine Lead Seals, I, 1730—1731: Apud: Yannopoulos): Վարազարևուրի արձև կնիքներ պահվում են նաև Լեհնիզդրադի երմիտաժի հարուստ հավաքածուում (Шандровская, Памятники, стр. 247): Նշենք, որ կնիքների վրա դրված է Βασιζακούριος: Վարազարևուրի Օպսիկոն բանակաթեմի զորավար լինելու հանգամանքը վկայում է նրա հանդեպ բյուզանդական կայսրերի ունեցած հսկայական վստահությունը, քանզի Կոստանդնուպոլսին ամենամոտիկ այդ բանակաթեմի զորքերը միակ ամենավստահելի ուժն էին, որոնց վրա անմիջականորեն հենվում էին նրանք: (Տե՛ս Γεωργόπουλος, նույն տեղում, էջ 294): Մի այլ տեղում Քեոզանեսը նրան «պրոտոպատրիկ» է անվանում, դեռևս անձանթ բովանդակությամբ տիտղոս: Ոմանք «պատրիկների դասի դիտավոր» են բացատրում (Bury, IAS, p. 28): Ցաննուպուրը մերժելով այդ մեկնաբանությունը, Վարազարևուրին պատրիկ է անվանում, ելնելով նրա կնիքների վրա կարգացվող «պատրիկ» գրությունից: Բայց պատրիկը չէ՞ր կարող հետագայում պրոտոպատրիկ դառնալ: «Պրոտոպատրիկ» տիտղոսը հանդիպում է նաև հայկական աղբյուրներում՝ պրոտոնպատրիկ, «պատանոպատրիկ» ձևով: Բյուզանդական Կոստանդին կայսրը Աղվանից իշխան Զիվանչիին «առե՛լ... պոտոն պատրիկ» (Մովսես Կաղանկավազցի, էջ 208): Տե՛ս և Գրիգոր Մագիստրոս, էջ 225: Հմմտ. Անտոյան, Հայերեն նոր բառեր, Բ, էջ 203:
488. Պերեկոպի ծովածոցը: Ուշ շրջանում խալացիները կոչում էին նիգրոպոլի (Βασιλευσκαι, Записка греческого топарха, стр. 193—194): Տե՛ս և ծանոթ. 398:

- 489. Բնագրում՝ Μοάαης: Մի թիշ հետս (6205 թ.) երևում է, որ Միակիսը նրա ազգանունն է, բանդի անունը Քեոզարոս է: Բուժանովը Միակիսը համարում է հայկական Հմայակ անունը (Toumanoff, Caucasia, p. 149):
- 490. Նրան հիշում է նաև Ղևոնդը Տրուլդ ձևով, որը սխալմամբ գրում է, թե Հուստինիանոսին գա՛ բարձրացրեց իսպարանը, նրան տալով գորթ «Տրուլդ»-ի զվազորությունը, որն, իբրև թե «մեռաներ ի պատերազմին» (Ղևոնդ, էջ 17):
- 491. Այս անունը Քեոփանեսը բերում է 'Αλιός (6189 թ.) և Ουαλις (6197 թ.) ձևով: Աշար խալիֆա Վալիդ I-ը (705—715): Հայկական աղբյուրներում կոչվում է Վլիթ:
- 492. Կոստանդնուպոլսի խարսիտ կամ խարսիտ դարբասը գտնվում էր դեպի սբ. Առաքելոց եկեղեցին տանող մեծ ճանապարհի վրա և համապատասխանում է ժամանակակից էգիրենկապրին (Աղբիանուպոլսի դոսե): Անունը պարսեական է «կապույտների» կուսակցության ղեկավար խարսիտսին (Պարսիստին):
- 493. Տեսց 705—711, Հուստինիանոս II-ի երկրորդ թագավորության մասին կա հատուկ ուսումնասիրություն: Տե՛ս Head, The second reign of Justinian II, p. 14—32:
- 494. Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարք (708—712):
- 495. Նիկեոփոր պատրիարքի անելով, Հուստինիանոսը Տերվելիսին կեսարի պատվաստե՛հան էլ շնորհեց (Nicephori Breviarium, p. 48), որի կրողը կայսրից հետո երկրորդ մարզն էր պետության մեջ, թեև տվյալ ժամանակ կորցրել էր իր սկզբնական նշանակությունը: Տերվելիսը առաջին օտարազգի անձնավորությունն էր, որ արժանանում էր այդ տիտղոսին (Ostrogorsky, Histoire, p. 172): Հուստինիանոս II-ի Տերվելիսին տված «նվերներ» մասին գրում է և բարբառնագիր Սուրդասը (Սուրդա), ելնելով նրա ալլալեկերից, բուլղար պատմաբանները գտնում են, որ խոսքը սուկ «նվերներ» մասին չէ, այլ ըստ էության հարկի, վերականգնումը տարեկան հարկի, որ Բյուզանդիան վճարում էր Կոստանդին IV-ի ժամանակ: Վ. Չլատարսկու համաձայն, Հուստինիանոս II-ի Տերվելիսի հետ կնքած պայմանագրի պայմաններն էին. 1) տարեկան հարկի վճարում, 2) Տերվելիսի ճանաչում Բուլղարիայի օրինավոր կառավարիչ, իսկ Բուլղարիայի՝ անկախ պետության, ընդ որում, նկատի առնելով Գեորգ Վանականի տեղեկությունները, Հուստինիանոս II-ը Տերվելիսին զիջեց և «այժմ Չագրա կոչված» շրջանները: Հարցի մասին տե՛ս Баласчев, Българският господар Тервел, стр. 55 и сл.; Златарски, История на българската държава, т. I. Бешевилие, К вопросу о награде, стр. 8—13; Дуйчев, Юстиниан II РИНОТМНТ:
- 496. Ապոլոնիոս անունով բաղամթիվ բաղաբներ են եղել, որոնք իրենց անունը պարտական են սեղանով պաշտվող Ապոլլոն աստծուն: Տվյալ դեպքում համանաբար նկատի ունի Քրակիայի Ադոլլոնիաններից մեկը:
- 497. Միջերկրյայր (հունարենում՝ Μεσόγεια) անելով բյուզանդական հեղինակները նկատի ունեն Փոքրասիական թերակղզու մեջտեղում գտնվող տարածքը: «Աշխարհացոյց»-ում վկայված է այն. «Եւ ունի Ասիա կողմունս կողմունս: Եւ նախ զկողմն Մէջերկրեայս» (Անանիա Շիրակացու Մատենադրությունը, էջ 345): Ղևոնդ պատմիչը ավելի հստակ է գրում. աշխարհն Միակիֆոն, որ թարգմանի Միջերկրեայր» (էջ 103):
- 498. Հմմտ. Սաղմոս ՂԱ, 1—3. «Ի վերայ ի ծից և բարբից գնացես դու, առ ոտն կոխեսցես զառեւծն և զվիշապն»:

- 499. Կյունեզիոնը գտնվում էր Մանգանայի պալատի մոտ, ժամանակակից Սերուլլի վերջավորությունում, Կոստանդնուպոլսի եկրոպական մասի արևելյան ծայրամասում և որպես կանոն մասնապատիժն ի կատար ածելու վայր էր: Այն հիշատակում է և Սեբևոսը: Մավրիկիոս կայսրը հրամայեց իշխան Սմբատ Բաղրատունուն և այլ հայ նախարարներին՝ «մերկացուցանել և բեկէնուլ ի կրեկիկն» (Պիլիսոս, էջ 92, 93):
- 500. Խոսքը նմաստրիզայի մասին է: Քեոփանեսն այն կզգի է անվանում, բայց իրականում Փոքր Ասիայի թերակղզու վրա գտնվող ժովափնյա քաղաք է՝ Պափլագոնիանում, Պանդերակլիայի և Սինոպի միջև: Մանրամասն հիշատակվում է Ստրաբոնի կողմից (Βασιλευσκειν, Жития, стр. XXI—XXVII):
- 501. Երուսաղեմի Հովհաննես V պատրիարքը (705—735):
- 502. Բնագրում՝ γλωσσῆ (լեզվով):
- 503. Քաղաք Եվբսինյան Պոնտոսի թրակական ափին, այժմ՝ Պոմոքիե քաղաքը Բուլղարիայում:
- 504. Մալամա իրն Աբդ ալ-Մալիք, Վալիդ I իրն Աբդ ալ-Մալիքի եղբայրը: Նա Մովսես I-ի թոռն էր և ոչ Մուավիայի, ինչպես ասվում է այլ աղբյուրներում: Վալիդ I-ի իշխանության սկզբում գրավեց այն-Քուվանա, Կապպադոկիայի ամենակարևոր բերքը ըստ արաբական աղբյուրների՝ 707 թ. մայիսին, ըստ բյուզանդական՝ 709 թ.: Բերքը Քեոփանեսը կոչում է Տիանա: 712-ին նա գրավեց Պոնտոսի Ամասիա քաղաքը: Նրան հիշում է և Ղևոնդը, համարելով խալիֆայի եղբայր (Ղևոնդ, էջ 102): Հավանաբար նրան նկատի ունի Մովսես Կաղանկատվացին «Մալիման»-ի տակ (էջ 368):
- 505. Ալ-Աբբաս իբն Ալ-Վալիդ, Վալիդ I խալիֆայի որդին, նշանավոր Օմմայան զորահրամանատար, նախորդի՝ Մալամայի եղբորորդին 712 թ. Աբբասը գրավեց Կիլիկիայի Սեբաստուպոլիս քաղաքը, իսկ հաջորդ տարին՝ Պիսիդիայի Անտիոքը: 720 թ. խալիֆա Օմար II-ի մահից հետո, երբ Իրաքի կառավարիչ Եզիդ իբն Ալ-Մուսալլաբը Բասրայում խոռոկություն բարձրացրեց, նրա զեմ ուղարկվեցին Աբբասն ու Մասնան: Նիկեոփոր պատրիարքը Աբբասի փոխարեն գրում է Սուլեյման (Σουλμαν, Nicephori Breviatium, p. 49):
- 506. Մալամայի ինքնությունը պարզում են արաբական աղբյուրները: Նա Մուավիայի բրոջ ստրուկն էր և բարձր աստիճանի արժանացավ խալիֆայի եղբայր Մալամա իբն Աբդ ալ-Մալիքի կողմից (Στρατασο, Το Βυζάντιον, ΣΤ', σελ. 155—156):
- 507. Աբարական աղբյուրների ալ-Քուվանան, Կապպադոկիայի կարևորագույն բերքը, որ փակում էր Տավրոսի անցումները:
- 508. Բնագրում՝ Καρπερούνας, որ կարելի է կարդալ նաև Βαρπερούνας (K-ի և B-ի գրությունն ձևը այս շրջանում նույնն է, համեմատիք Քեոփանեսի Καρπερούνας (Կարխատերոցես-Վարալտիրոց): Այդ դեպքում կարելի է կապել Վարդ (Վարդիկ) անվան հետ: Բյուզանդական աղբյուրներում հայկական—օսյան վերջավորությունը անուններին (Ιαχυόνας, Ταυτόνας, Παχυρατόνας) մասին տե՛ս Schmitt, Armenische Kosenamen, S. 179—183:
- 509. «Մալիք» արաբերեն նշանակում է «խաչ»: Հնարավոր է, որ նա քրիստոնյա արաբ էր:
- 510. Գարիսն այստեղ քաղաքի տպավորություն է թողնում: Հետագայում Քեոփանեսը հիշում է «Գարիս կոչվող դաշտը»:
- 511. Իժա՛ Մավրոս և Ստեփանոս պատրիկներին:

- 512. Տուրուսուր անուն է, այլ պաշտան: Քուրբերը «Տուրուսու» են անվանում տեղապահներին: Տե՛ս Theoph. Chron. t. II, p. 716: Հմմտ. Артамонос, История хазар, стр. 198; Մովսես Կաղանկատվացու համաձայն խաբանը Հերակլին ուղմական օգնություն էր ուզարկել իր եղբորորդու՝ Շաթի գլխավորությամբ: Սա էր Տիգրիսը գրավողը: Շաթի մոտ ծառայում էին անվանի մարդիկ, որոնց, Կաղանկատվացու ասելով, խաղարները կոչում են «Քնդաներ»: Գուղենը կարծում է, որ այս բարեխոսանում է Քնդանների «Տուրուսուսի» հետ: Golden, Khazar Studies, էջ 215—216:
- 513. Քնդարում՝ էջ քրքսան:
- 514. Հավանաբար կենդանակերպի (զոդիակի) Ցլի համաստեղությունը (Տավրոս) նկատի ունի:
- 515. Հմմտ. Քազաուրուբեանց Ք., 8:
- 516. Փիլիպպիկոս-Վարդանը, որ մի քիչ հետո կայսր հռչակվեց (711—713), նրկեփոք պատրիարքը գրում է Βερδάντης Ἀρχιεπίσκοπος τῶ γένου (Nicephori Breviarium, p. 50):
- 517. Պերատիկա կողմեր ասելով բյուզանդացիները նկատի ունեին Պերատիկա բանակաթևները՝ Անատոլիոսն ու Օպսիդիոսը, Գա պարզվում է հենց Քնդանների այլաներից: Անտիոս գործակարգը «իր ձեռքում ուներ Պերատիկա բանակաթևները՝ Անատոլիոսն ու Օպսիդիոսը» (տե՛ս վերը, էջ 188):
- 518. Գամատրիսը բառ մասնց Չամըլըան՝ Ոսկուղարում կամ Սամանդրա դուղը Քայրղաղի և Պենդեկի մոտ՝ Կոստանդնուպոլսի ասիական ափին: Այստեղ կային կայսերական պալատ և Սպիրայի վանքը:
- 519. Հուստինիանոս II-ի կրտսեր որդի և դահաժառանգ Տիրերիոսի սպանությունը սպառվեց Հերակլիոսների հարստությունը (610—711), որ համարվում է առաջին իսկական «բյուզանդական» հարստությունը (Ostrogorsky, Histoire, p. 173): Սրա օրոք Բյուզանդիան վերածվում է միջնադարյան հունական մի պետության (Ostrogorsky, Ιστορία, σελ. 217):
- 520. Վեցերորդ Տիեզերական ժողովը գումարվեց 680 թ. Կոստանդնուպոլսում և ուղղված էր միակամականների դեմ: Ավելի հանգամանորեն տե՛ս ծանոթ. 414:
- 521. Փիլիպպիկոս-Վարդանի կենսագրությունը տե՛ս Ալիշան, Երազ Վարդան կայսր, էջ 294—309; նաև Տեր-Սահակյան, Հայ կայսեր, հտ. Ա, էջ 129—151:
- 522. Կոստանդնուպոլսի Հովհաննես VI պատրիարքը (712—715 թթ.):
- 523. Այս դեպքերի մասին հետաքրքիր մանրամասնություններ է տալիս Միքայել Ասորին: «Այն ժամանակ (1025 թ. ասորաց),— գրում է նա,— հռոմայեցիների կայսր Փիլիպպիկոսը իր երկրից վտարեց հայերին: Նրանք դուրս գալով փախչում են տաճիկների (իմա՝ արաբների) մոտ, որոնք նրանց բնակեցրել են Մելիտենեում և նրա շրջակայքում, ինչպես և Չորրորդ Հայքում: Հայերը շատ բազմանալով, ամրանում են այս վայրերում, դառնալով տաճիկների թաղավորության օգնականները և հռոմայեցիների կայսրության հակառակորդները» (Michel le Syrien, t. II, p. 482): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մի քանի տասնամյակ անց Մելիտենեի հայերին Կոստանդին V-ը զաղթեցրեց Քրակիա (տե՛ս վերը էջ 140), որտեղ նրանք տարածեցին պավլիկյան աղանդը, ապա պարզ է դառնում, որ Փիլիպպիկոսը ոչ թե ընդհանրապես հայերին էր արտաքսել երկրից, այլ, ավելի որոշակի, պավլիկյան հայերին: Ավելացնենք այստեղ,

- որ Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ դեպքերը վերագրվում են Հուստինիանոս II-ին, բայց գործողությունները կատարված են Ֆիլիպպիկոսի ձեռքով. «Յայն ժամանակի հալածեաց Յուստինանոս զազգս Հայոց յիշխանութիւնէն իր ի ձեռն Փիլիպպիկոսի, և ինքուրեմամբ ընկալան զնոսա Տաճիկք ի Մելիտի և ի Միջագետս: Եւ եղև մեծ ամբոթիւն ուղղափառաց Ասորաց՝ կալով ընդդէմ երկարեակացն, և շինեցին վանորայք և անապատք և զիւրօրէք Հայաստանեայց, և կան միևչև ցայսօր» (Միխայել Ասորի, 1871, էջ 332):
- 524. Ակզնական շրջանում սովորական աղոթարան էր: Նրա տեղում այժմ գտնվում է XII դարում կառուցված նշանավոր մի եկեղեցի, որ Կոստանդնուպոլսի առումից հետո մղկիթի վերածվելով կոչվեց Քահրին ջամի:
- 525. «Կավկոզիական» բառի իմաստը Սոֆոկլեսի բառարանում անհայտ է համարվում: Բռտի երկրորդ կեսը՝ «զիական», բացի սարկավագից, նշանակում է նաև ծառայող, սպասավոր:
- 526. Քաղաք (և թերակղզի) Քրակիայում, Աե ծովի արևմտյան ափին: Ժամանակակից Կարաբուռնու թերակղզին:
- 527. Անտիոքացոց Պիրտիոս (Պերտիոս) ամիսը համապատասխանում է փետրվարին:
- 528. Պրասինոսների օրնատորոնը, այսինքն Կոստանդնուպոլսի կրկեսային պրասինոսների (կանաների) կուսակցության ղինանոցը:
- 529. Արտեմիոս (Անաստասիոս II) կայսրը (713—715):
- 530. Մի փոքր վերևում նա կոչվել էր Քորաֆոս:
- 531. Օմմայան խալիֆա Սուլեյման իրն Արղամեկիթը (715—717): Գննողը մանրամասն նկարագրում է այս ամիրայետի Մսլիմ զորավարի գլխավորությամբ Գերբենդում հոների դեմ մղած պատերազմների մասին (Ղևնդ, էջ 40—42: նաև Մովսես Կաղանկատվացի, էջ 368): Սուլեյմանը բառ Կաղանկատվացու Վալդիի եղբայրն էր. «յետ վլիթայ՝ Սղիման եղբայր նորուն սակաւակեցութայմբ» (էջ 98—99):
- 532. Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոս I-ը (715—730): նա սերտ նամակագրություն ուներ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի հետ՝ զավանաբանական հարցերի շուրջ: Պահպանվել է հիշյալ Ստեփանոսի պատասխան թուղթը Գերմանոսին: Տե՛ս Մատենադարանի № 8194 ձեռագիր, էջ 136 ա-164 ա:
- 533. Ապոկրիսիարիոս (լատ. ad responsum, միջնորդ, ներկայացուցիչ, պատգամավոր): Հանդես եկան Քնդոսիոս I-ի հարստության ժամանակ:
- 534. Քուրբերեն էգրեմիտ: Մովսիսյա թաղաք Փոքր Ասիայի արևմտյան ափին, Լեսբոս կղզու գիմաց:
- 535. Թնոփանեք նկատի ունի 379 թվականից Փոքր Ասիայում (Օպսիդիոն) հաստատված օստոթիերին, որոնք իր ժամանակ արդեն հունացած էին:
- 536. Կոստանդնուպոլսի եվրոպական մասում գոյություն ուներ երկու կարևոր նավահանգիստ: Սր. Մամասի նավահանգիստը գտնվում էր այժմյան Բեշիկթաշում: Կառուցել էր Լևոն I կայսրը:
- 537. Նավահանգստի մասին տե՛ս և ծանոթ. 472:
- 538. Ապագա կայսր Լևոն III Իսավրացին, Իսավրական (Ասորական) հարստության հիմնադիրը:

- 539. Սա Առն III-ի փեսան էր, որ հետագայում, Առն III-ի մահից հետո Կոստանդին V-ի գեմ ապստամբություն բարձրացրեց և իրեն կայսր հռչակեց:
- 540. Մասլամայի կողմից Կոստանդնուպոլսի պաշարման մասին աղբյուրների տվյալների ամբողջ կոմպլեքսի հիման վրա տե՛ս Guiland, L'expédition de Maslama, p. 109 sqq:
- 541. Զրիոթել Սուլեյման խալիֆայի հետ (715—717), խալիֆան պաշարմանը չի մասնակցել և իրականում նա վախճանվել էր պաշարման սկզբից մի փոքր հետո (տե՛ս DAI, II, p. 78):
- 542. Ստրատորների (և նրանց պարազուխ պրոտոստրատորի) մասին տե՛ս «Կոստանդին Սիրակածին», էջ 257, 258: Աղբյուրներում կոչվում են «ստրատոր» և «կայսերական ստրատոր»: Սբ. Թեոփանեսի վարքում նրանք մասին գրված է. «Կայսերական զարդարված ձիերի սպասավոր, որոնք սովորաբար ստրատոր են կոչվում»: 899 թ. կազմված Ֆրյոթեսի «Գլխորդողինում» (Գահնամակում) սակայն ասված է, թե ստրատորը որևէ պաշտոնից անկախ պատվաստիճան է: Հարցը շատ է խճճված, բանզի հիշատակություն կա, որ բյուզանդական պրեֆեկտներն ունեին «schola strategorum» (ստրատորների զորամաս), որին ղեկավարում էր ստրատորների գոմեստիկոսը, այլ կերպ ասած՝ պրոստոստրատորը. (տե՛ս Yannopoulos, La société, p. 57—58):
- 543. Ըստ Թեոփանեսի Մասսալեոնը գտնվում էր Անատոլիկոն բանակաթեմում: Ռամդելը գտնում է, որ այն ընկած էր Լիկանոնիայում, Կիլիկիայից Ակրոյինոն տանող ճանապարհի վրա (Ramsey, HGAM, p. 356):
- 544. Բնագրում՝ ὄπισθος (լատ. consul): Բարձր պատվաստիճան, սակզված Հուսում 500 թ. մ. թ. ա.: Պատմողական աղբյուրներում հազվադեպ է հանդիպում, բայց բավականին հաճախ՝ կնիքների մակագրություններում: Մանրամասն տե՛ս Guiland, Le consul, ὁ ὄπισθος, p. 545—578: Yannopoulos, La société, p. 55—56: Հյուպատոսը մի բանի անգամ հանդիպում է հայկական աղբյուրներում, ամենատարբեր իմաստներով: Տե՛ս Անտոյան, Արմատական բառարան հտ. III, էջ 100:
- 545. Ընթացում են, որ Թեոփանեսուպոլիս քաղաքն է Պակատյան Փոլուզիայում: Հիշատակվում է Քաղկեդոնի և Կոստանդնուպոլսի V Տիեզերական ժողովների արձանագրություններում: Ռամսեյը տեղագրում է Ակրոյինոնի մոտ, Կիլիկիայից Ակրոյինոն տանող ճանապարհի վրա (Ramsey, HGAM, p. 356):
- 546. Քաղաք Բյուսանիայում: Այստեղ 740 թ. Առն III-ը իր որդու՝ Կոստանդին V-ի հետ զլխովին պարտության մատնեց Հիշամ խալիֆայի որդի Սուլեյմանին:
- 547. Այսինքն երաշխիք այն մասին, որ 680 թ. VI Տիեզերական ժողովի ընդունած որոշումները պիտի պաշտպանի:
- 548. Առն III Իսավրացի, ավելի ճիշտ՝ Սիրիացի, Իսավրական (ճիշտը՝ Սիրիական) հարստության հիմնադիրը (717—741): Այդ մասին տե՛ս Առաջաբանում, էջ XLI:
- 549. Այժմ՝ Մարաշ:
- 550. Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ բացակայում են «բայց իրականում՝ Իսավրիայից» բառերը: Նրա թարգմանության մեջ Առնի մասին գրված է, թե նա ծագումով ասորի էր (genere Syrus): Նկատի ունենալով այս հանգամանքը, և այն, որ Թեոփանեսի հունարեն ընթացում Առնը ոչ մի տեղ իսավրացի չի կոչված, այլ միայն ասորի, Կ. Ն. Ուսպենսկին «բայց իրականում Իսավրիայից» բառերը համարում է հետագա շրջանի ընդմիջարկություն:

- Այդ բանը ցույց էր տվել Ուսպենսկուց առաջ և Շենկը: Տե՛ս Успенский, Очерки, III, стр. 401—402:
- 551. Առն սպաթարի, ապագա Առն III կայսեր Կովկասյան գործունեության մասին հատուկ տե՛ս Canard, L'aventure caucasienne, p. 353—357, որտեղ և հարցին նվիրված աշխատությունների մատենագիտություն:
- 552. Ժամանակակից Փոթի քաղաքը Վրաստանում:
- 553. Երկիր Ափսաղիային հարևան: Այն հիշատակում է նաև Պրոկոպիոս Կեսարացին («Պրոկոպիոս Կեսարացի», էջ 255—258):
- 554. Վրաց Ցիլե-Գոռի քաղաքը, այժմ Նաբալաբի գյուղը: Կաղիկայի թագավորության մայրաքաղաքն էր: Տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 41:
- 555. Երկաթե բերդի (καστρόν Σιδηρόν) մասին տե՛ս Ժանոթ. 635:
- 556. Բյուզանդական բարձրագույն տիտղոսներից: Ըստ Ֆրյոթեսի «Կլետորդոլոնի» և Ուսպենսկու «Տակաիկոնի» հիերարխիայի երրորդ աստիճանը: Աղբյուրների տրվյալներով կուրապոլատի տիտղոսը VII դարից մինչև Մակեդոնական հարստության հիմնադրումը (867) կրել են վեց հոգի, դրանցից չորսը հայեր էին՝ Հասթան Մամիկոնյանը (տե՛ս Սեբեոս, էջ 175), զորավար Թեոդորոսը («զոմն հաստարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յունաց կողմանէն» Սեբեոս, էջ 144), Առն III կայսեր փեսա Արտավազդը և Միբայել III կայսեր մորեղբայր Վարդապը՝ Նախքան կեսար դառնալը: Դա վկայում է այն մասին, որ Ռանսիմենի և Գրյանի կարծիքը, որ իբր տիտղոսը արվում էր կայսերական ընտանիքի անդամներին միայն, ճիշտ չէ: Կուրապոլատի մասին տե՛ս Guiland, Le curtopalate, p. 185—249, Oikonomidès, Lists, p. 293, Σ τράτου, Οι «Κουροπαλάται» 49—56, Yannopoulos, La société, p. 41—42:
- 557. Հավանաբար նկատի ունի հոռոմեական Ասիա պրովինցիան, Փոքրասիական թերակղզու արևմտյան մասում, Կյուրիայի և Կարիայի շրջանում:
- 558. Առն III-ը իր թագավորության սկզբում, երևի քաղաքական նպատակներով, արաբների հետ հաշտություն կնքեց, որը, սակայն, կյանք չունեցավ: Այդ հաշտության մասին վկայում է VIII դ. երկրորդ բառարկին ասորերեն գրված, իսկ հետո հույարեն թարգմանված Երուսաղեմի 60 սրբերի վարքաբանությունը: Այնտեղ գրված է, որ Առն III-ը 717 թ. արաբների հետ յոթամյա զինադադար կնքեց, որի համաձայն «երկու պետությունների վաճառականներին թույլատրվում էր առանց խոչընդոտների միմյանց հետ շփման մեջ մտնել (տե՛ս Λυσίου, Ο ποροδε, стр. 114):
- 559. Բնագրում՝ πρωτοσπύβουλος (հմտ. և էջ 68): Թեոփանեսն այստեղ, ինչպես և այլ հեղինակներ (Միբայել Ասորի) Սուլայման զորավարին շփոթում է Սուլայման խալիֆայի հետ: Տե՛ս Michel le Syrien, t. II, p. 483—484; Տե՛ս և վերը, Ժանոթ, 541:
- 560. Իմա՝ Կոստանդնուպոլիսը, Եփես չի նշված ո՛ր քաղաքի մասին է խոսքը, ապա նկատի ունի Կոստանդնուպոլիսը:
- 561. Կատենան նավի տեսակ է: Անաստասիոս Բիրլիոթեկարիոսը թարգմանել է «մեծ նավեր»:
- 562. Մագնավրա էր կոչվում բացի հայտնի պալատից, որտեղ ընդունում էին օտարերկրացի ղեսպաններին և որտեղ IX դ. բացվեց համալսարան, նաև Հեղոմոնի արևմտյան ափամերձ ծայրամասը:

- 563. Անունը պարսական է շրջանակն բերդին: Գտնվում էր Հերդոտոսից արևելք, ժամանակակից Չելիֆին-բուլուն՝ Պրոպոնտիսի ափին:
- 564. Ժամանակակից Կալամիշը, Ֆեներ-բախչեից հյուսիս գտնվող մի փոքրիկ վայր, որտեղ 602 թ. մահապատժի ենթարկվեցին Մավրիկիոսն ու նրա որդիները:
- 565. Անթեմիոսի թաղամասը գտնվում էր Կոստանդնի պարիսպներից զուրս, սբ. Մակիմոսի ջրամբարից փոքր հյուսիս: Այդտեղ էին գտնվում սբ. Թովմասի եկեղեցին, բաղանիք և ծերանոցը:
- 566. Գալատների (կամ Գալատի) բերդը գտնվում էր Գալատայում (այժմ՝ Ղալաթիա): Արևմտյան հեղինակներն այն անվանում են Պերա (Janin, Cons. byz., p. 418): Գալատի բերդի տեղում այժմ գտնվում է Յերալուր ջամիլ:
- 567. Քնազորում՝ Κλαδόν: Տեղադրվում է ժամանակակից Դեֆտերբուլուն վայրում, Բոսֆորի եվրոպական ափին, Օրթաբյույից (Միջագյուղ) փոքր հյուսիս:
- 568. Օրսիան այժմ թուրքերն անվանում են Սիվրիազա, որ Օրսիա (Սուր) կղզու բնակիցի թարգմանությունն է, իսկ Պլատիան՝ Յասըազա (Լայն կղզի), որ զարծյալ հուհարենի բառացի թարգմանությունն է: Օրսիա կղզին գտնվում էր Պլատիայից 2 կմ հյուսիս-արևմուտք: Եշիանաց կղզիների թվին են պատկանում:
- 569. Տե՛ս ծանոթ. 366: Գալատի բերդից շղթան երկարում էր զեպի արևմտյան ափը՝ ժամանակակից Աերայի ցամաքակղզվակը և փակում Ոսկեղջյուրի ճանապարհը:
- 570. Անթեմիոսի ծոցը, ժամանակակից Ատենիան, թուրքերեն՝ Իստինյե, Բոսֆորի եվրոպական ափին:
- 571. Օմար II իրն Աբգալ Ազիզ (717—720):
- 572. Կալոս ազրոս (Գեղեցիկ ագարակ) նավահանգիստը գտնվում էր Բոսֆորի եվրոպական ափում, Անթեմիոսից հյուսիս: Համապատասխանում է ժամանակակից Բույուկդերեին:
- 573. Սասյուրոսը տեղադրվում է Քյուչուկյալըում, Բոստանչիից 2 կմ արևելք, Բրիան ժամանակակից Մալմեֆեից այն կողմ, իսկ Կարտախանը՝ ժամանակակից Կարտալի տեղում: Բուրն էլ Կոստանդնուպոլսի ասիական ծովածոցին՝ Քաղկեդոնից (Քաղբյույ) հարավ:
- 574. Պիտի հասկանալ՝ Եգիպտոսի հույներ:
- 575. Սոֆոնը լեռ է Բյութանիայում, նիկոմեդիայից արևելք, ժամանակակից Սարանչա գաղի լճի հարավային մասում: Լեռը այժմ էլ կոչվում է Սաբանչա գաղի: Կիփոսն էլ, հավանաբար, նույն շրջանում էր գտնվում (տե՛ս Ramsey, HGAM, . 83)
- 576. Պյուլեն ծովափնյա քաղաք էր Բյութանիայում, Հելենոպոլսից փոքր արևմուտք: Կոստանդին Միրանոմիի համաձայն (De Cer., I, p. 474) Պյուլեն կայսերական զորակայան էր, երբ կայսրը պատրաստվում էր արշավանքի դուրս գալ դեպի արևելք: Տե՛ս և ծանոթ. 126:
- 577. Բուլղարների մասնակցությունը՝ արաբների դեմ մղվող պայքարում նվիրված է Վ. Գյուլելիի հատուկ հոդվածը (Гюзелев, Участието на българите, стр. 28—47): Հեղինակը բուլղարների նպաստը վճռական է համարում, մի բան, որ մերժում են հույն և եվրոպացի ուսումնասիրողները:
- 578. Այսինքն այս Աերդիոսը, լինելով Սիկիլիայի զորավար (բանակաթեմի զորավար), ուներ պրոտոսպաթարի աստժանը (Υανπορούτος, La société, p. 50—51): Նման պատկերի հանդիպում ենք Չմշկիկի ժամանակ Տարոնի կառավարիչ Լեոնի առևու-

- թյամբ: Ըստ Մատթեոս Ուռհայեցու Չմշկիկի նամակն ուղղված էր «պոստոսպաթրին Դերբնայ, Լեոնի և Տարոնի զորավարին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 27: Հավանաբար ուղղելի՝ «Պոստոսպաթրին Լեոնի, Դերբնայ և Տարոնի զորավարին»):
- 579. «Կարգադրություն» և «հրովարտակ» ենթ թարգմանում բնագրի չեղծույթ է չափաբանքը, որոնք որոշակի տեղիներն են: Թեոփանեսը գրում էր մի ժամանակ բանքը, որոնք որոշակի տեղիներն են: Թեոփանեսը գրում էր մի ժամանակ (813-ից հետո), երբ սակրաս-ն կայսեր կողմից ուղարկվում էր խոստագույնս երկրի ներսը, իսկ չեղծույթը (հրամանը)՝ արտասահման: Բայց իր նկարագրած դեպքերի ժամանակ՝ (Լեոն III-ի), վիճակը հակառակն էր, այդ իսկ պատճառով նա այնտեղ, որտեղ պետք է սակրա գրի, գրում է չեղծույթ, իսկ որտեղ չեղծույթ էր գրում է սակրա (տե՛ս Α ο υ γ γ η, Διπλωματια και διπλωματικη, σελ 71—72): Թեոփանեսը (հտ. I, էջ 244—245) ցույց է տալիս, որ սակրան ունենում էր կայսեր կնիքը: Հարցի մասին տե՛ս և Beševliev, Die Botschaften, S. 75—76: Նշենք այստեղ, որ սակրան հանդիպում է և հալկական աղբյուրներում: Տե՛ս Աճառյան, Արմատական բառարան, հտ. IV, էջ 161:
- 580. Մոնոստրատեկոս (μονοστράτηγος) էր կոչվում, ինչպես պարզվում է Թեոփանեսի մի այլ շարադրանքից, մեկից ավելի բանակաթեմների զորավարը: Աետիոս պատրիկն իր ներքո նշանակեց «Թրակիայի և Մակեդոնիայի մոնոստրատեկոս» (տե՛ս վերը, էջ 188):
- 581. Կղզի Պրոպոնտիսում (Մարմարայի ծովում): Ունի մարմարի հանքեր, որի պատճառով այժմ հույներն անվանում են Մարմարա, իսկ թուրքերը՝ Մերմեր աղաբուր: Հենց այս կղզուց ամբողջ ծովը կոչվում է Մարմարայի ծով:
- 582. Խնդրո առարկա նամակի բնագիրը չի պահպանվել: Այն կրճատ («համառոտ ի ներքոյ զորոմեցից»՝ Ղևոնդ, էջ 42) պահպանել է Ղևոնդ պատմիչը իր «Պատմութիան» մեջ և նրա անելով թարգմանված է հունարենից (էջ 43—45): Պահպանվել է նաև Լեոն կայսեր ընդարձակ պատասխանը նույն պատմիչի երկում (էջ 45—98): Մարակինոսների առաջնորդ Օմարին ուղղված Լեոն կայսեր նամակը պահպանվել է երկու տարբերակներով: Ուաշինը լատիներեն թարգմանությունն է և հրատարակվել է Լիոնում 1501 թ. Symphorien Champère-ի կողմից: Վերջին անգամ արտատպվել է Migne-ի Patrologia graeca-ում (հտ. 107, սյունակ 315—324): Այստեղ բնագիրը վերագրվում է Լեոն VI կայսեր (886—912) և վերնագրված է Leonis Imperatoris Augusti, cognomento Philosophi, ad Omarum Saracenorum regem, De fidei Christianae veritate et mysteriis, et de variis Saracenorum haeresibus et blasphemias Epistola: Երկրորդ տարբերակը, ինչպես ասացինք, պահպանվել է Ղևոնդի Պատմության մեջ և վերագրվում է Լեոն III-ին: Նրանց մանրամասն հետազոտությունը տե՛ս Khoury, Les théologiens byzantines, p. 200—218: Նշենք այստեղ, որ առանձին հեղինակներով, ելնելով բովանդակությունից և լեզվից (!) Ղևոնդի երկում պահպանված Լեոն III-ի նամակը՝ Օմար խալիֆային համարում են XI—XIII դդ. «հալկական», «օրիգինալ» գործ, մտցված Ղևոնդի երկի մեջ, և ոչ թե VIII դ. սկզբի բյուզանդական փաստաթղթի թարգմանությունը (տե՛ս Gero, Notes, p. 26): Նամակում միտացող հունարանությունները չեն հաստատում այս կարծիքը:
- 583. Ապագա կայսր Կոստանդին V-ը (741—775):
- 584. Ավլուստոնը Կոստանդնուպոլսի գլխավոր հրապարակն էր, գտնվում էր սբ. Սոֆիայի եկեղեցուն կից, այժմ Ալպոսֆյամեյզանը: Հրատարակը շորս կողմից շեր-

- չապատված էր սյունաշարերով, այստեղ կային բազմաթիվ կարեր շենքեր, այդ թվում Մազնավրան, Աննաբ, սր. Իրենի բաղիլիկան, բազմաթիվ հիշատակներ:
585. Հիսուն կենտինար ոսկին հավասար է 360.000 դահեկանի:
586. Մագիստրոսի մասին տե՛ս Կոստանդին Փրահեմին, էջ 217, ծանոթ. 26: Վերջին գործերից՝ Yannopoulos, La société, p. 44—47:
587. Այլ աղբյուրներ, այդ թվում Գեորգ Վանականը, Առն Քերականը, Կեղրենսուր հիշատակում են Անատոլիոն բանակաթեմի գործար ոմն պատրիկ Միսինիոսի, որ գործել էր նույն ժամանակներում, և ուսումնասիրողների կողմից նույնացվում է Քեոփանեսի Միսինիոս Հանդակեսի հետ (տե՛ս Γεωργίου Παναγιώτου, Στοιχειώδες Πεντάκτισμα, σελ. 579—593): Ուսումնասիրողները չեն պարզել մականվան նշանակությունը: Դա, անկասկած հայերեն ժողովրդական «տինգ» (լավ, գեղեցիկ) բառն է, ծագումով պարսկերեն, պահպանված աղբյուրների միջոցով: Արպես հայերեն անձնանուն հանդիպում է մեկ անգամ ուշ շրջանում (Անառայան, Անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 320): Բացառված չէ, որ այս Միսինիոս Հանդակեսը հայազգի էր:
588. Բնագրում՝ Իջնի: Հավանաբար ասորի էր, քանզի անունը՝ Իշնի ասորական է:
589. Բնագրում՝ Զրչուտա ԵՍՍ ՄԵՂԻՍ: Եկատի ունի Կոստանդնուպոլսի Երկար կոչված պարսպի պահպանությանը նշանակված դոմեստիկոսին: Պաշտոնը սահղծվել էր Անատասիոս 1 կայսեր ժամանակ: Այն ժամանակ գլխավորում էին երկու հոգի՝ Երկար պարսպի վիկարիոսները (տե՛ս Guillard, Le compte des murs, p. 17—25):
590. Աղորիտը (լատ. accubitum) հին Հռոմում բազմոց էր, որի վրա բազմում էին ճաշելու համար: Երբ արգելիս ակուրիտներ Ուտոնի ձևով դասավորված կազմում էին մեկ արկիլին (երբ բազմոց): Տրիբունալին այստեղ նշանակում է դահլիճ: Հետևաբար 19 ակուրիտներով ընդունելությունների մի դահլիճ էր:
591. Եզիդ II իրն Արզալմալիք (720—724):
592. Միքայել Ասորին գրում է Եզիդ, որդին Մուհամադի (Michel le Syrien, t. II, p. 489):
593. Մոնտանոս աղանդապետի հետևորդները: Հերձվածք ծագել է II դ. երկրորդ կեսին Փոյուգիալում՝ եկեղեցու փլուզած բարձրի դեմ պայքար մղելու կոչով: Հարցի մասին հատուկ տե՛ս Sharf, The Jews, The Montanists, p. 37—46: Հատուկ հրեաների մասին այս շրջանում՝ եսյլին, Byzantine Jewry (գլուխ չորրորդ): Ընդհանրապես այս շրջանի աղանդավորների (պավլիլիկանների, մոնտանյանների, փոյուգիացիների, աթինգանների, աբբասյանների, տեորագիտների և այլն) մասին տե՛ս Guillard, L'hérésie, p. 299—324:
594. Հմմտ. «Իսկ զմար փոխ է Իզիտ... որ դիաշ և զպատկեր եբարձ յերկր. և զխոզն սպանաներ, մինչ խեղդեցա...» (Muyldermans, La domination, p. 54):
595. Եկատի ունի Առն III-ի պայքարը սրբապատկերների դեմ, որի համար նա և իր հետևորդները ստացան պատկերաժարտ մականունը: Պատկերապաշտները Առնին և պատկերամարտներին ընդհանրապես մեղադրում էին տվյալ հարցում արարների աշակերտելու, հետևելու մեջ: Հարցի մասին տե՛ս Vasiliev, The Iconoclastic Edict, p. 23 և հտ.: Grabar, L'iconoclasm, p. 94 և հտ. (apud: Лунинский, Очерки, стр. 174):
- Պատկերամարտական շարժումը շատ ուժեղ էր Հայաստանում: Այն կար արդեն VI դ. վերջում և VII դ.: Պատահական չէ այդ առթիվ գրված և Վրթանես Քերթողին վերագրվող երկը՝ ի պաշտպանություն սրբապատկերների: Հովհան Մայրա-

- գոմեցին 682 կամ 683 թ. Աղվանից եպիսկոպոս Դավթին գրած նամակում հիշում է, թե Մովսես կաթողիկոսի օրոք (574—604) երեք հոգևորական՝ Հեսուն, Թագեսուն ու Գրիգորը բարոզում էին, թե պետք է սրբապատկերները եկեղեցիներում վերացնել: Այդ մասին տե՛ս Der Nersessian, Image Worship, p. 69 և հտ.: Հովհան Օձնեցին իր «Ընդդեմ Պապիկեսանց» ճառում խոսում է ներսես (III) կաթողիկոսի ժամանակ Աղվանից կաթողիկոսի կողմից հալածված պատկերամարտների մասին (Der Nersessian, Une apologie, p. 379—403: Այս հոգվածի հայերեն թարգմանությունը տե՛ս հետևյալ գրքում. Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երեվան, 1975): Եսև Alexander, An ascetic sect, p. 151—160:
596. Բնագրում՝ Եղջիթ: Միքայել Ասորին նրան անվանում է Բեշեր: Թեոփանեսը 6233 թ. տակ հիշում է մի պատրիկ Բեսեր, որին անվանում է «սարակինոսամիտ»: Հայկանարար նույն անձնավորությունն է (տե՛ս Michel le Syrien, t. II, p. 503): Ասեք, սակայն, որ Բ. Հեմմերդինգերը, որ հատուկ ուսումնասիրություն է նվիրել Թեոփանեսի Եղջիթին գտնում է, որ Բշիրը մտացածին անձնավորություն է, պատկերների պաշտամունքի տեսության Մանսուրի (Հովհան Դամասկոսյան) և պատկերամարտ կայսր Առն III-ի միջև կատարված անսպասելի սինթեզի արդյունքը: Նա ընդհանուր գծեր է գտնում մի կողմից Մանսուրի և Բշիրի, և Բշիրի ու Առն III-ի միջև: Տե՛ս Hemmerdinger, ВНСНР, p. 6—7: Ավելորդ չէ նկատներ, որ Ե. Կեղեցիը Բշիրի փոխարեն կարգում է Визир (վեզիր) (!): Տե՛ս «Сборник документов», стр. 111:
597. Նակոլիան գտնվում էր Փոյուգիալում, ժամանակակից Սեյդի Դադիի մոտ (Ramsey, HGAM, p. 144), Պարթևներու գետի ափին:
598. Հիշում իրն Արզալմալիք (724—743): Ղևոնդ պատմիչը նրան անվանում է «Շամ որ է Հեշմ»: Նրա օրոք արարական լուծը Հայաստանում անչափ ծանրացավ: Հիշումը, գրում է Ղևոնդը, «չառաջնում ամի իշխանութեան խրոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ առաքել զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի շարեօք... և բազում վտանգ հասուցանէր աշխարհս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ զուր ապրել ումք յանհարին վտանգիցն: Եւ յայնմհետէ առաւել ծանրացաւ ձեռն նորա ի վերայ աշխարհս Հայոց» (Ղևոնդ, էջ 100—101): Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 333, Եսև 368: Հիշամի հարկային ծանր բաղաբանություն մասին գրում է և Միքայել Ասորին (Michel le Syrien, t. II, p. 490):
599. Հռոմի պապ Ստեփանոս III (II), Ենթագրաբար՝ 752—757 թթ.:
600. Լոնդրոնացիների ռեթ (թագավոր) Աստուլֆոսը (Aistulf կամ Astolf, 749—756 թթ.): Նա շարունակից իր հոր՝ Լուիտպրանդի զործը՝ Բյուզանդիայից և Հռոմի պապից Իտալիան նվաճելու համար: 751 թ. գրավեց Ռավեննան և նպատակ դրեց գրավել Հռոմն ու այն դարձնել իր պետության մայրաքաղաք: Չուղենալով օգնության դիմել բյուզանդացիներին, Հռոմի պապ Ստեփանոսը դիմեց ֆրանկների իշխան Պիպինին:
601. Ֆրանսիայի իշխան (752-ից՝ թագավոր) Պիպին Կարճահասակը (752—768): Կարոլոս Մեծի հայրն էր, Կարոլոս Մարտելոսի որդին: Ֆրանսիայի Կարոլինգյան հա-

629. Խաղարների խաբանի:
630. Նախապես կոչվում էր Զիլակ (Մաղիկ): Հետագայում «չիլակ» կոչվեց բյուզանդական կայսեր պաշտոնական հանդերձանքի մի տեսակը: Տե՛ս Կոստանդին Միքաեանի, էջ 134, 301: Հմմտ. *Артамонов, История хазар, стр. 233*:
631. Սա ցույց է տալիս, որ մինչ այդ Բյուզանդիայում զլխահարի զորություն չուներ: Նրա դանձուժը Թեոփանեսը համարում է արարական ազդեցություն հետևանք:
632. Մայրագույն առաքյալների (իմա՝ Պողոսի և Պետրոսի) անձնական սեփականությունները համարվող:
633. Հոռմի պապ Ջաբարիա (741—752):
634. Սուլեյման իբն Հիշամը: Նա էր զլխավորում 740 թ. արշավանքը Բյուզանդիայի դեմ:
635. Բնագրում *Σιδθηρον χαστρον*: Այս «երկաթե բերդը», ամենայն հավանականությամբ, լի խուլանում 104-րդ էջում հիշված «երկաթե բերդի» հետ, քանզի նախորդը գտնվում էր Վրաստանում, սարակիստներին ենթակա, հավանաբար, վրացու ձեռքում, այնինչ այս երկաթե բերդը գտնվում է բյուզանդացիների ձեռքում և Բյուզանդական կայսրության տարածքում:
636. Մարիանոս պատրիկը հիշատակվում է և մի փոքր հետո (էջ 124): Վ. Գ. Վասիլևսկին կարծիք է հայտնել, որ նա կարող է նույնանալ պատկերամատյանների «էկլիպս» օրենսգրքի ճեղինակներից մեկի՝ Հյուպատոս, պատրիկ և անտիգրաֆես Մարիոսի (կամ Մարիոսի) հետ: Հմմտ. *Липшиц, Право и суд, стр. 196—197*:
637. Ըստ կր Ստրենջի (*Le Strange, The Lands, p. 152* և ծանոթ. 2) Աֆրոն Կարաչիսարը: Ակրոյինոսի ճակատամարտը տեղի ունեցավ 740 թ. մայիսին: Արարների հրամանատարներն էին ըստ արարական աղբյուրների Սուլայման իբն Հիշամը, Ղամր իբն Ցազիդը, Մալիբ իբն Շուայբը՝ Մալաթիայի ամիրան և ալ-Բատտալը: Արարական աղբյուրները ճակատամարտի մասին խոսում են շատ ավելի մանրամասն ու հանգամանալից: Ճակատամարտում սպանվեցին Մալիբն ու Բատտալը: Վերջինս հուշակվեց Իսլամի նշանավոր նահապեհներից մեկը և ըստ Գրեգուարի տեղ գտավ Մալաթիայի ամիրա Օմար իբն Արդալլահ ալ-Ակտայի (+863 թ.) մասին ստեղծված արարական էպոսում (*Grégoire, Sayyid Battal, p. 574—575*):
638. Մալաթիայի ամիրա Մալիբ իբն Շարիբը (Շուայբը):
639. Ալ-Բատտալ Արդ Ալլահ, նշանավոր «ղազի» (հերոս, բայ) Օմմայան շրջանի, որ մասնակցել է բյուզանդացիների դեմ մղված բազմաթիվ կռիվների, նա 728 թ. Մուսուլիա իբն Հիշամի առաջամաս զորքի գլուխն անցած զբաղեց Պափլագոնիայի Գանգրա բազարը: 731/732 թթ. մասնակցեց մի այլ արշավանքի, որտեղ սպանվեց նշանավոր Օմմայան «ղազի» Արդ ալ-Վահաբ իբն Բուխուրը: 732/733 թթ. (կամ հաջորդ տարին), Մուսուլիա իբն Հիշամի՝ Փուլուգիայում կատարած արշավանքի ժամանակ Ակրոյինոսի շրջանում գերի վերցրեց Կոստանդին անունով մի բյուզանդացի զորավար: Վերջին անգամ հիշվում է 740 թ. զեպելրի առնչությամբ, երբ Սուլայման իբն Հիշամը հարձակվեց Բյուզանդական կայսրության արևելյան տարածքի վրա: Նրա մի զորամասում, որը զլխավորում էր Մալաթիայի կառավարիչ Մալիբ (Թեոփանեսի Մեկիբը) իբն Շարիբը (կամ Շուայբը), ծառայում էր և Բատտալը: Նրանք զլխովին պարտություն կրեցին Ակրոյինոսին (ևս III-ի և նրա որդի Կոստանդին կողմից և ընկան ռազմի դաշտում: Ալ-Բատտալը հետագայում դարձավ էպիկական հերոս: Մանրամասն տե՛ս *M. Canard-ի al-Battal, և Dhu-*

- Himma և I. Mélikoff-ի al-Battal հոդվածները* Encyclopédie de l'Islam—ում, տ. 1, էջ 1136—1137 և հտ. II էջ 240—246):
640. Փուլուգիայի ամուր բաղաբ, Գալատիայի սահմանին մոտ, եփեսոսից Կապադովկիա տանող առևտրական մեծ ճանապարհի վրա: VI դ. Հինրոկլեսը Սիրնաղան համարում է Փուլուգիա Սալուտարիա կոչված նահանգի 23 բաղաբներից մեկը: Նրա տեղում այժմ գտնվում է էքսի Կարաչիսար բաղաբը:
641. Լևոն Իսավրացին համարվում է ասորի: Այդ մասին տե՛ս Առաջաբանում:
642. Հինրակիտների մասին տե՛ս վերը, ծանոթ. 348:
643. Անտիոքացիների Պերիտիոս ամիրը համապատասխանում է փետրվարին:
644. Վիժագիր մի արձանագրության մեջ ասված է, որ Նիկիայի պարիսպները վերականգնվել են Լևոն և Կոստանդին կայսրերի կողմից 727 թ. արարների դեմ կայսրության տարած հաղթանակի առթիվ: Արձանագրության մեջ, ի միջի այլոց, գրված է, որ հիշյալ կայսրերը օրարձրացրին հարյուր ոտք բարձրություն ունեցող աշտառ, որը ղոժարություն կատուցեց փառավորյալ պատրիկ և կուրապաղատ Արրակ, որը ղոժարություն կատուցեց Արտավազդի մասին է, Օպսիկիոն տավազդը: Խոսքը Լևոն III-ի փեսա հայազգի Արտավազդի մասին է, Օպսիկիոն բանակաթեմի ղորավարի: Արձանագրության մասին տե՛ս *Успенский, Две надписи, стр. 180—183*: Հմմտ. *Липшиц, Очерки, стр. 115, прим. 105*:
645. Աղբյուրներում բուր օգտագործվում է որպես դիմարի հոմանիշ: 12 միլիարեոն մեկ ոսկեդրամի է հավասար, իսկ մեկ միլիարեոնը՝ 12 ֆուլի (փող):
646. Բերդաշինությունը, այնպես ինչպես և կամրաշինությունը և նման աշխատանքներ պետական իրավասության մեջ էին մտնում: Բերդաշինություն ֆինանսավորման և պետական իրավասության մեջ էին մտնում: Բերդաշինության ֆինանսավորման և կոնստանդինոպոլիսի մասին տե՛ս *Trojanos, Καστρωκισια, S. 53*: կոնստանդինոպոլիսի այս տեղի մասին տե՛ս *Trojanos, Καστρωκισια, S. 53*:
647. Թեոփանեսը նշում է մի բանի տոմար: Հոռմայեցիների (իմա՝ Կոստանդինուպոլիսի) տոմարի համաձայն աշխարհի արարչագործության 6248 թ. համապատասխանում է տոմարի համաձայն աշխարհի արարչագործության 6232 թ.: Նույնպես: Ինչ վերաբերում է մ.թ. 740 թ., Ալեքսանդրացի 1063 թ., այն է Սելևկյան տոմարի, այսպիսով համապատասխանում է 752 թ.: Թեոփանեսը, պարզ է Սելևկյան թվականը հաշվում է ոչ թե 312 թ. մ.թ.ա., այլ մ.թ.ա. 323 թ.:
648. Փակագծերի մեջ առնված նախադասությունը վերականգնված է Անատասիոս Բիբլիոթեկարիոսի թարգմանության հիման վրա:
649. Հավանաբար մատաղը նկատի ունի: Նույն բանի մեջ Թեոփանեսը մեղադրում է և Նիկիեթոր I կայսեր:
650. Հայազգի նշանավոր պետական գործիչ: Նիկիայում, Ստամբուլ բապուսիի և Գյուլբապուսիի միջև, «Արտավազդի աշտառակ» կոչված պատի վրա պահպանվել է Արտավազդի հուշարձան արձանագրությունը. որտեղ նա կոչվում է փառավորյալ պատրիկ և կուրապաղատ: Տե՛ս *Успенский, Две надписи, стр. 180—182* (արմ *Mapp, Аркаун, стр. 26*):
651. Օպսիկիոն բանակաթեմի Կրասոս բաղաբը Թեոփանեսը մի այլ տեղում (էջ 192) տեղադրում է Փուլուգիայում: Հավանաբար գտնվում էր Տեմրիսի գետի ափին, Դոնի մոտ (էքսի շեհիր) արևելք, ռազմական ճանապարհի վրա, Մեղեոնից արևելք (*Ramsay, HGAM, p. 435*):
652. Բաղաբ հին Փուլուգիայում, այժմ կոչվում է էքսի շեհիր:
653. Տե՛ս. ծանոթ. 596:

696. Ակնարկ Արքայանների հանդես գալուն իտրասանում և նրանց կողմից Օմմայանների տապալման: Արքայան ապստամբները կրում էին սև դուլնի զգեստներ և զորքներ, որոնք համարվում էին հարստության նշանակներ: Իշխանության տիրանալուց հետո սև զգեստը դարձավ խորասանյան զորքերի պաշտոնական հանդերձանքը (DAI, II, p. 76):
- Այս մավրոֆորները (սևազգեստները) հնարավոր է նույնանում են «Գիդենիս Ակրիաս» էպոսում հիշված «սևազգեստներին» (μαυροχιτώνται): Բնչպես ցույց է տալիս Թեոփանեսը մի քիչ հետո, մավրոֆորները զրազաշտական պարտիկներ էին: Ղևոնդը չի հիշատակում նրանց, բայց խոսելով ապստամբ Աբու Մսլիմի մասին, նրան համարում է «խորամանկ սաստիկագիտական ազանդովն» (էջ 125):
697. Բնագրում՝ λαις: (ժողովուրդներ), որ գործեր էլ է նշանակում:
698. Նկատի ունի Օմմայան հարստությունը:
699. Բնագրում՝ Ἐχίψ (Ἄχιψ, Ἐχίν):
700. Այս Արուսուլիմի նկատի ունի Ղևոնդ պատմիչը: Տե՛ս հարող ծանոթագրությունը: Կազանկատվացիի նրան հիշում է «Աբու Մսլիմայ իտրասանայ իշխանին...» ձևով (Մովսես Կաղանկատվացի, էջ 333): Եւ զիտե նակերս վախճանի մասին, «...սպան նա (իմա՛ Աբու Աբասը) գաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս իշխանութիւնն» (էջ 334):
701. Նրան գիտե Ղևոնդը. «Ապա յես այնորիկ միարանեալ զզօրս իտրասան աշխարհին՝ կացուցանէին զօրովարս ի վերայ նոցա զՊահաթրա և զԱբու-Մսլիմ ոմն, որ էր խորամանկ աստեղագիտական ազանդովն» (Ղևոնդ, էջ 125):
702. Բնագրում՝ Ἰβινδός:
703. Բնագրում՝ Ἰβινδός: (Իբն Զուբայրա):
704. Բ Օրինաց, ԼԹ, 30:
705. Մովսեսի սպանության մասին մանրամասնություններ ունի Ղևոնդ պատմիչը. «Եւ զօրացեալ զօրք Արդլայի՛ յարձակէին ի վերայ նորա զազանաբար, զիմեալ հասանէին ի բանակն Մրուանայ, և հարեալ սատակէին ի նոցունց հարուածս սաստիկա յոյժ յոյժ: Չի սանն լինել զթիւ տնկելոցն ի միում նուազի ՅՈՒ (300.000) արանց հեծելոց... և հասանէին մինչև ի զդեկանն կազմած պարտակին և ի վրանն Մրուանայ, և զնա ինքն հարեալ սատակէին» (Ղևոնդ, էջ 126—127): Տե՛ս նաև Մովսես Կաղանկատվացի, էջ 333. «Մրուան, Մահմատայ որդի՛ ամս շորս, սա սպան զԿուրիչիս գլխաւորս Տանկաց արս վաթտուն՝ զսպանողս Վլիթայ ամիրային՝ առաջի իւր պակարկեալ սպանողաց: Եւ եկն Աբու Աբաս ի Մարաց օգնականութեամբ և զօրօք Աբու Մսլիմայ իտրասանայ իշխանին և սպան զՄրուան և կալալ զիշխանութիւնն ամս եօթն»:
706. Հունահռոմեական ժամանակաշրջանում Տրախոնիտիս էր կոչվում Պաղեստինի՝ Դամասկոսից հարավ բնակած գավառներից մեկը:
707. Աբու Աբբաս Աբդալլահ ա-Սաֆֆահ իբն Մուհամմադ, Աբրասյան հարստության հիմնադիրը: Հմմտ. «Աբու Աբաս էր Աբդալլահ Մահմադայ որդի» (Մովսես Կաղանկատվացի, էջ 333):
708. Աբու Ջաֆար Աբդալլահ ալ-Մանսուր իբն Մուհամմադ: Ղևոնդը նրան նախորդից տարբերելու համար անվանում է «միւս Աբդալ» (էջ 127): Սրա զազանաբարտ գործունեության մասին Հայաստանում գրում է նույն Ղևոնդը (էջ 127—128):

709. Իմա՛ Քունիս:
710. Նկատի ունի Գիրբալտարը (Ջիրբալտար), որին ղեռնա 711 թ. տիրացել էր Տարիբ իբն Սալիդը: Մերձակա լեռան վրա նա ամրություն կառուցեց, որն իր անունով կոչվեց Ջիբել ա-Տարիբ (Տարիբի լեռ), որից և աղավաղված ձևով այժմ Ջիրբալտար:
711. Իսպանիան նկատի ունի: Մուսը գործողը Հիշամի թոռ Աբդ ա-Ռահմանն էր՝ 755 թ. նա 756-ին գրավեց Կորդովան:
712. Նույն բանն է ասում Ղևոնդը. «Եւ զայս ամենայն շարիս և զղղղմունս պատերազմաց և զառժունս քաղաքաց և հեղմունս արեանց կատարեալ ամս զ՝ վախճանի» (Ղևոնդ, էջ 127):
713. Միջնագրում եպիկուրյաններին ավտոմատիստ էին անվանում, քանզի նրանց փրկիստգալության համաձայն ամեն ինչ ինքնաբերաբար, բախտի բերմամբ է առաջացել և ոչ կանխագիտություն: Գրիգոր Մագիստրոսը (Քղթեր, էջ 158—159) թոնորակեցիներին ամենաձախ թե՛ի առնչությամբ գրում է, թե նրանք «ի շարն կատարելագոյնք են և կարող են ընդունել զմահացու դեղն... բարոզն իբրև անյուսութեան ամենեկին և անաստածութեան իբրու զեպիկուրեանցն»:
714. Այսինքն դարձրեց կայսերակից: Լեոն IV միահեծան թագավորն էր 775-ից:
715. Խոսքը Աբրասյան հարստության հիմնադիր Աբու Աբբաս Աբդալլահ ա-Սաֆֆահի մասին է (750—754):
716. Գեսիոս ամիրը հունիսն է:
717. Անտիոքի պատրիարք Թեոդոսուսը (750/751—774 թթ.):
718. Խոսքը Կարին-Թեոդոսուպոլիսի և Մելիտենի (Մալաթիա) բաղադրի մասին է (բուլղար պատմաբանները քիսայմամբ կարծում են, որ խոսքը վերաբերում է Օսրոնի Թեոդոսուպոլիսին, արար. Ռաս-ուլ-Այն քաղաքի տե՛ս ԽՅՅՈՒՄ. ԿՄ VI, ՏՐԻ. 269, քրմ. 13): Մի քիչ հետո (6247 թ.) ինչպես ցույց է տալիս Թեոփանեսը, այս հայերին, ինչպես և ասորիներին, կայսրը գաղթեցրեց Թրակիա, որոնք այնտեղ տարածեցին պավլիկյան աղանդը: Ասել է, գաղթականները պավլիկյան աղանդավորներ էին: Պակաս կարեոր չեն և Նիկեոսի պատրիարքի հաղորդածները: Եւսի նա ցույց է տալիս, որ Թեոդոսուպոլիսն ու Մելիտենեն կայսրը գրավեց հայ և ասորի բնակիչների օժանդակությամբ (ὁμοσολίτα τῶν προσεταχόντων), որ այդ բնակիչները գաղթեցվեցին Թրակիա և պատճառ դարձան պավլիկյան գաղափարների տարածմանը (Nicephori Refutatio, col. 508—509): Իբ «Համառոտ պատմություն» մեջ Նիկեոսը հաղորդում է, որ Կոստանդին կայսրը Թրակիայում քաղաքաշինություն կատարեց, որտեղ բնակեցրեց Մելիտենից ու Թեոդոսուպոլիսից գաղթեցրած հայերին և ասորիներին՝ սիրով հոգալով նրանց կարիքները (Nicephori Breviarium, p. 74): Հետաբերիր տվյալների կարելի է հանդիպել Գեորգ Վանականի պատմական երկում: Նրա ասելով Կոստանդին V-ը, արաբական խալիֆայության մեջ զնացող զահակալական պայքարից օգտուվելով, արշավում է Ասորիքի կողմերը և «վերցնելով իր աղազականներին՝ հայ և ասորի հերետիկոսներին, Բյուզանդիոն վերաբնակեցրեց, որոնցից շատերը հաստատվելով Թրակիայում, մինչև օրս գովանում են թշվառական Պետրոսի թեոպոսթասների [ազանդը]» (Georgii Monachi Chronicon, p. 752): Մի այլ տեղում նույն հեղինակը «Ասորիքի կողմերի» փոխարեն գրում է «Հայաստանի և Ասորիքի կողմերը» (էջ 763):

Քացի բյուզանդական աղբյուրներից, այս դեպքերի մասին մանրամասն խոսում են և հայ ու ասորի հեղինակները: Առնձ պատմիչը գրում է, թե «...շարժեալ թագաւորն Յունաց ի կայսերական արքունեան մտիցն՝ բազում և ծանր ամբողջի գայր հասանէր յաշխարհն Կարնոյ ի քաղաքն որ կոչի Քէոզուպոլիս: Եւ իբրև յական թօթափէ կործանէր զղղեակ պարիսպ ամրոցին արքայն Կոստանդին որ էր որդի Առնի, և քացեալ գտուն գանձուցն՝ բառնայր բազում կշիռ՝ ոսկւոյ և արծաթոյ գտանէր ի գանձի անդ զնշան տէրունեան խաչին, զոր առեալ տանէր ընդ ինքեան: Նա և զզօրսն քաղաքին և զընակեալսն ի նմա Սառակիսոսն բառնայր նոցին բնտանեօքն յաշխարհն Յունաց: Եւ բազումք ի բնակչաց զաւառացն խնդրեալ յարթայէն դի բնկեսցին զանուր լծոյ ծառայութեանն Խամայիլ յանձանց և զնացին զկնի նորա»:

Եւ նորա տուեալ հրաման, վաղվաղակի հանգերձեալ զաղիսս իրեանց՝ խաղացին յառաջ, ապափնեալք ի զօրութիւն տէրունեան խաչին և ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իրեանց, և հաստաձեւալք անկան ի կողմն արքային բարեպաշտի» (Առնձ, էջ 129):

Նշելով արաբական խալիֆայության մեջ զնացող զահակալական պայքարի մասին, Ազապիտո Հիերապոլսացիցն ցույց է տալիս, որ «կայսրը հարձակվում ու գրավում է Մալաթիան և, գերեզմարելով բնակիչներին, վերադառնում է»։ Շարունակելով իր պատմությունը, նա գրում է, որ նույն տարին հետո հրամանատար Քուշանը, վերցնելով Հայաստանի բնակիչների մեծ մասը, տեղափոխում է հունաց կողմերը (էջ 531)։ Գրանից հետո Կոստանդինը հարձակվում է Քալիբալայի (Կարինի) վրա, գրավում այն և գերեզմարում նրա բնակիչներին: Սալաճ իբն Ալին, արաբական ու պարսկական զորքերով արշավում է հույների դեմ և վերադառնում առանց որևէ հաջողության: Նա միայն քչեց տարավ հայերին ու ալաններին, որոնց հույները Հայաստանից էին տարել, իրենց պատրիկ Քուշանի հետ, և հաստատեց Ասորիքում: Այդ օրվանից սկսած հույների թագավորները ջանում են իրենց կայսրության մեջ հայեր հաստատել՝ ամենուրեք սահմանի մոտիկ վայրերում, (Agapitos, p. 544):

Ինչպես նրևում է Միքայել Ասորու տվյալներից, 752 թ. առաջ, երբ Կոստանդին V-ը գրավեց Թեոդոսուպոլիսը, Մելիտենի վրա մի հարձակում էլ է եղել «Արմենիակների զորավար Աշկիրաշի» կողմից: Այս զորավարն այն ժամանակ ասպատակել է քաղաքի ողջ շրջանը և Ռոմանիա փոխադրել քաղաքի հայ ու հույն բնակչության մեծ մասը (Michel le Syrien, t. II, p. 506): Իսկ այս արշավանքի մասին, որ Միքայել Ասորին թվարկում է 1066 (775) թ., նա գրում է. «Հռոմայնցիների կայսր Կոստանդինը արշավեց Հայոց Թեոդոսուպոլիս վրա, որին հայերն իրենք անվանում են Գարնոթրաղաք (Կարնոյ քաղաք), արարենքը՝ էրդերում, իսկ հույները՝ Քալոնիքալա (իմա՝ Կալիկալա): Նա գրավում է այն, գերեզմարում ամբողջ բնակչությանը և քաղաքը թողնում ավերակ: Կամախի բերդում կայազոր հաստատելով, նա վերադարձավ Կոստանդնուպոլիս» (Michel le Syrien, t. II, p. 521—522): Հմմտ. Միխայել Ասորի, 1871, էջ 348, 1870՝ էջ 359):

Կոստանդին կայսրը ավերեց Կարինը, քանզի հույների նպատակն էր մի ավերակ չեզոք գոտի ստեղծել, որը նրանց կանչատեր և կմեկուսացներ խալիֆայությունից, իսկ արարենքը, ընդհակառակը, աշխատում էին այս սահմանային գոտում

Բյուզանդիայի դեմ ուղղված բերդեր ու ամրություններ կառուցել (Տեր-Սևակյան, Ամիրայությունները, էջ 47, նույնի՝ Армения, стр. 100):

Ամենայն հավանականությամբ այս հայերից Կոստանդինը զորամասեր կազմակերպեց, որոնց մասին հիշատակություն կա Ստեփանոս Նորավայի վարքում (στέφανος τῶν Ἀρμενίων: Տե՛ս Vita sancti Stephani, col. 1156: Հմմտ. նաև Քարթիկյան, Հայ-բյուզանդական նոթեր, էջ 129—131): Ավելացնենք այստեղ, որ հայերը Ֆիլիպուպոլիսում առանձին համայնք էին կազմել, նրանց շրջանում այլ ազգության ներկայացուցիչներ չեն եղել, քանզի այդ բանը օրենքն արգելում էր: XII դարի վերջում ապրած Կիտրոսի եպիսկոպոս Հովհաննեսին Դյուրախիոնի արքեպիսկոպոս Կոստանդին Կավախիսը հարց է տվել, «իրավունք ունե՞ն արդյոք հայերը այն քաղաքներում, որտեղ բնակվում են, եկեղեցիներ կառուցել»: Հովհաննես եպիսկոպոսը դրան պատասխանել է. «Սկզբանե աճաի քրիստոնյաների (իմա՝ քաղկեդոնականների) շրջաններում ու քաղաքներում թուլլատրելի է այլաբնու ու այլազգային ժողովուրդների» այն է հրեաների, հայերի, խմայելացիների, հազարացիների և այլ նմանների բնակությունը, բայց ոչ քրիստոնյաների (քաղկեդոնականների) հետ խառն, այլ նրանցից անշատ: Այդ նպատակով ա՛ա այդ ժողովուրդներից յուրաքանչյուրին հասցնելով են վայրեր՝ կամ քաղաքների մեջ, կամ դքսում, այն հաշվով, որ ներփակված լինեն և դրանցից դուրս չընդարձակեն իրենց բնակությունները... Այդ առումով ա՛ա հայերն էլ որ շրջանում որ ներփակված են, իրավունք ունեն առանց խոչընդոտի և՛ եկեղեցիներ կառուցել, և՛ իրենց հերձվածք դավանել» (տե՛ս Ρ α λ λ η - Π ο τ λ η , Σύνταγμα κανόνων, τόμ. Ε', σελ. 415):

- 719. Գերմանոս պատրիարքի:
- 720. Թեոփանեսը փոխանակ ժողովի» (σύνθετος), արհամարհարար այն կողմ է «ատյան» (συνέθρονον): Հիերիայի պալատում 754 թ. գումարված ժողովը (վերջին նիստը՝ օղոստոսի 8-ին կայացավ Վլախենայի տաճարում) ուղղված էր պատկերամարտության դիրքերի ամրապնդմանը: Մասնակցեցին 338 եպիսկոպոս: Ժողովը գլխավորում էր եփեսոսի եպիսկոպոս Թեոդոսիոսը, նախկին կայսր Տիրերիոս-Ապսիմարոսի որդին, քանզի պատրիարք Անաստասիոսը մահացել էր 753 թ. վերջերին: Եվ քանի որ իրենց ներկայացուցիչներին չէին ուղարկել ո՛չ Հռոմի պապը, ո՛չ Արևելքի պատրիարքները, հակառակորդ ճամբարը ժողովը կոչեց «անգլուխ»: Ժողովը խստիվ արգելեց սրբապատկերների պաշտամունքը, կարգադրեց ոչնչացնել դրանք և նրանց պատկերապաշտների կարկառուն ներկայացուցիչներ Գերմանոս Պատրիարքին, Հովհան Գամակացուն և ուրիշներին:
- 720ա. 754 թ. եկեղեցական ժողովի «հավատո հանգանակը» պահպանվել է 7-րդ տիեզերական ժողովի (787 թ.) արձանագրություններում: Թեոփանեսը լուծյամբ է անցնում այդ «հավատո հանգանակի» կողմով:
- 721. Կոստանդնուպոլիսի պատրիարք Կոստանդին II-ը (754-766):
- 722. Այսինքն՝ սլավոններ:
- 723. Ինչպես տեսնում ենք, Աբու Մուսլիմին սպանողը վախճանված ամիրապետ Աբդալայի եղբայր Աբդալան է (մյուս Աբդան): Կաղանկատվացի գրում է, որ նրան առաջին Աբդալան սպանեց. «...և սպան նա գաղտուկ Աբու Մուսլիմ, յորժամ եհաս յիշխանութիւնն. և յետ նորա սպանմանն և ինքն վախճանեցաւ: Աբու Զափր, որ կոչեցաւ Աբդալա՛հ, նորին եղբայր, ամս քսան և երկու...» (Մովսես Կաղանկատվացի, էջ 334):

724. Արարների խալիֆա Աբու Ջաֆար Աբդալլահ ալ-Մանսուր իրն Մուհամմադ (754—775 թթ.):

725. Պողոս I պապը աթոռակալել է 757—767 թթ.: Նրա փոխհարաբերությունների մասին Բյուզանդիայի հետ տե՛ս *Miller, Byzantine-papal relations*, p. 47—62:

726. Հետաքրքրական է նշել Առն Քերականի ասածը (Քեև հաղիվ թե դա ճիշտ լինի), թե Կոստանդինը Քրակիրայից բացի, այս հայերին ու ստորինների նաև Կոստանդնուպոլիս բնակեցրեց (*Leon Grammaticus*, p. 185):

727. Վերջին քանհինգ տարում մեզանում և արտասահմանում հսկայական աշխատանք է կատարված պալլիկյան շարժման ուսումնասիրության ուղղությամբ: Գլխավոր աշխատությունների մասին տե՛ս Առաջարանում, էջ XXXVIII:

728. Իմա՛ Կոստանդնուպոլիս:

729. Կատարիկա (ստորին) շրջանների տակ նկատի ունի Պելոպոնեսը (տե՛ս *Σπράτσου, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 181*):

730. Հիշատակվում է Հին կտակարանում որպես Լոտի որդի Մոաբի հետերոզների երկիր: Գտնվում էր Մեդյալ ծովից արևելք: Հին կտակարանում տեղագրվում է Սրբիթովի դիմաց:

731. Տե՛ս և ծանոթ. 343: Ինչպես ասվել է, բյուզանդական հեղինակները մի քանի Սկլավինիա գիտեն: Տվյալ փաստը ջուլց է տալիս, որ այստեղ խոսքը Մակեդոնիայի Սկլավինիայի մասին է, ավելի ճիշտ՝ Մակեդոնիայի Սկլավինիաների (Քեոփանեսը այդ տեղանունն այստեղ հոգնակի թվով է բերում, տե՛ս *Sk'u Lemerte, Philippes: Նաև Македoна, Македонские славяне, стр. 82*): Մի փոքր ավելի ուշ շրջանի բյուզանդական հեղինակ Հովհաննես Կամենիատեսը Քեսադոնիկին շրջանում հիշում է սլավոնների երեք ցեղ՝ դրոպովիտներ, սազուլատներ և ստրիմոնցիներ (*Ioannes Cameniatae*, p. 496): Նրանք VI—VII դդ. այստեղ եկան Դանուբի ձախ ափից:

732. Ենթադրվում է Հուլիպը: Բերիա անունը նրան տվել է Սելևկոս Նիկատորը՝ Մակեդոնիայի համանուն բաղաբի անունով: Պաղոմոսը կոչում է խալիբոն (*Χαλιβών*):

733. Մելաս (Սև) գետը Քոնստանտին է:

734. Լոզոթետների մասին ընդհանրապես տե՛ս Կոստանդին Միլանաձին, էջ 291—292: Քեոփանեսի հիշատակած այս Լեոնը աղբյուրներից հայտնի առաջին դրոմոսի լոզոթետն է:

735. Բնադրում՝ Σπηλαίου:

736. Դոկիտոս գիսավոր աստղի մասին տե՛ս ծանոթ. 291:

737. Արար. Գարեկ: Վայր հյուսիսային Ասորիքում, Ազազի շրջանում, Մանբիջից Անտիոք տանող ճանապարհի վրա: Հիշվում է դեռ ասորեստանյան ժամանակներից (Գարիգո): Գարեկը գտնվում է Հայեպից վերև, մի ընդարձակ դաշտում (Մարչ Գարեկ), որտեղ հաճախ և օձմայանների, և արքայանների ժամանակ ճամբարում էին արարական զորքերը և նախապատրաստվում Բյուզանդիայի դեմ գործողությունների (տե՛ս *D. Sourdel-է հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. II, էջ 73—74*):

738. Արար. ալ-Բասրա, քաղաք Միջագետքում, Շաբթ ալ-Արարի վրա, Բաղդադից 420 կմ հարավ-արևելք: Հին Բասրան գտնվում էր ժամանակակից Ջուբայր գյուղում: Պարսից տիրապետության ժամանակ կոչվում էր Վահիշտարադ Արդաշեր: Արարական քաղաքը կառուցվել է 638 թ. մարզաբեի ընկեր Ուրա իրն Ղազվանի կողմից պարսից քաղաքի տեղում (արարները կոչում էին ալ-Նուտայրա) Օմար իրն ալ-Նուտ-

տարի հրամանով որպես բանակատեղի: Մանրամասն տե՛ս *Ch. Pellat-է հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. I, էջ 1117—1119*:

739. Նկատի ունի Անդրես Կրետացուն: Կատաղի պատկերապաշտ էր: Վարքը գրել է Սիմեոն Մեսաֆրաստեսը (*Migne, Patrologia graeca, t. 115, col. 1109—1128*):

740. Հոռմի պապ Կոստանդինը (767—769):

741. «Տոհմիկ տերերի» տակ բուլղար պատմաբան Ջլատարսկին ենթադրում է Վոկիլ կամ Ուկիլ խանական ծագում ունեցողներին, որոնցից էին սերում բուլղարական առաջին խաները (տե՛ս *Златарски, История I, 1, стр. 212—213*: Ապստամբու Քյան մասին հատուկ տե՛ս *Beševliev, Thronwirren in Bulgarien, S. 67—82*):

742. Տելեցիս (Տելեց, 761—764 թթ.):

743. Այսինքն՝ Արտանաս գետի շրջանում (տե՛ս *Nicephori Breviarium, p. 77*):

744. Բառարաններն այս բառի իմաստը չեն տալիս: «Քսիլոն» նշանակում է փայտ, «պանդուրա» հավանաբար իրանական բառ է (հմտ. հայերեն բանտ), որ կապանք է նշանակում կամ հանցավորի ոտքը զարնված շղթան (Անադյան, Արմատական՝ բառարան, հտ. I, էջ 409):

745. Իշխանության գլուխ անցավ 764 թ.: Ենթադրվում է, որ Սարինոս (արտասանվում է Սավինոս) Քուրթերեն բառ է *sävän* (սիրոդ, *säv-ից՝ սիրելի*: տե՛ս *Moravcsik, Byzantinoturcica, Bd. II, S. 282*: Նաև՝ *Beševliev, Protobulgarische Inschrift, S. 2*):

746. Քաղաքական վտարանդիների և քաղաքական ապաստանի հարցը բյուզանդա-բուլղարական հարաբերություններում հաճախ է բարձրացել: Քաղաքական ապաստան էին հայցում երկու կողմից էլ: Բացի Սարինոսից, այդպիսին հայցել էր մոտ տասը տարի հետո նաև խան Տելեբիզը (տե՛ս էջ 159): Խան Կրոմի՝ Միթայել I-ի հետ վարած բանակցություններում քաղաքական ապաստանի խնդիրը ամենակարևորներից էր, բյուզանդական արքունիքում մեծ վեճեր առաջացրած (տե՛ս 6305 թ. տակ): Հարցի մասին մանրամասն տե՛ս *Анжелов, Политическите емигранты, стр. 112 и сл.*:

747. Պազանոս խանը իշխել է 767—768 թթ.:

748. Հավանաբար նույնանում է մի փոքր առաջ հիշատակված Բասրասոս (Բասրա) քաղաքի հետ, որի մասին տե՛ս ծանոթ. 738: Անաստասիոս Բիրիլիոթեկարիոսը գրում է *Basrason* (var. *Barason, Bafrason, Afrason*):

749. Իմա՛ խաղարները:

750. Ջիզբիան (*Ζιζβια*) գտնվում էր հին Սարմատիայում, Կովկասյան լեռներից Ազովի ծովը ընկած տարածության վրա:

751. Այժմ՝ Միդիեն, արևելյան Քրակիրայի ծովափնյա քաղաք, Քուրթիայի կազմում:

752. Կոստանդնուպոլսի Ակրոպոլսի, որ գտնվում էր քաղաքի եվրոպական մասի արևելյան ծայրամասում, սբ. Սոֆիայից հյուսիս-արևելք:

753. Աղանդապետ Նեստորիոս (Նեստոր) Մարիամին աստվածածին չէր համարում, այլ Քրիստոսածին: Տե՛ս ծանոթ. 253:

754. Խալիֆա Աբու Աբդալլահ Մուհամմադ իրն ալ-Մանսուր ալ-Մահդին (775—785):

755. Այս հաշտության պայմանագրի տարեթիվը որոշ չէ: Նիկեիոս պատրիարքը նշում է 763 թ., Քեոփանեսը՝ 765: Ըստ Ջլատարսկու տեղի ունեցավ 767 կամ 768 թ. (*Златарски, История I, 1, стр. 220—224*):

756. Սկամարների ժողովրդական շարժումը բռնկվեց Հռոմեական կայսրության հյուսիսային ստրվիներին նորիկում (V դ.): Սկամարները աշակցում էին Բյուզանդիա ներխուժած սլավոններին և խարխուլում ստրկատիրական հասարակարգի հիմքերը: «Սկամար» բառը լեզբարարդական ծագում ունի և նշանակում է «գորգ», «ափաղակ», այդպես էին կոչում իշխող դասակարգերը Հռոմեական իշխանությունների դեմ դիմված պայքարի դուրս եկած շահագործվող դասակարգերին: Թեոփանեսի երկում սկամարները սլավոնների դաշնակիցներ են հանդես գալիս: Նրանց մասին տե՛ս *Dmitrievs*, Движение скамаров, стр. 3—14:

757. Թեոփանեսի մի ձեռագիր տալիս է *Τούναξ* բնթերցումը: Ենթադրում են, որ խոսքը ժամանակակից Կամիա գետի մասին է (հին բուլղարերեն Тыча): Տե՛ս *ИЗВОРИ*, том VI, стр. 272, прим. 6:

758. Բնագրում՝ *αόλαξ*: Ոմանք կարծում են, որ խոսքը բուլղար խաների պալատների մասին է, որիչներ հունարեն այդ բառի տակ *αυλ-ներն* են տեսնում, գլուխը՝ աուլներ: (Տե՛ս *ИЗВОРИ*, том VI, стр. 272, прим. 7):

759. Գամատրի լեռը գտնվում է Բյուֆանիայում, Խրիսուպոլից (Ուսկուլոպոլ) արևելք: Կայսերական որսառեղի էր: 711 թ. այստեղ ճակատամարտ տեղի ունեցավ Հուստինիանոս II-ի և Վարդան-Ֆիլիպպիկոսի միջև:

760. Ստեփան Նորավկայի վարքը պահպանվել է Մինչև մահապատժի ենթարկվելը Ստեփանոսը Պրոպոնտոս կղզին էր անցորդել, որտեղ նա «հրաշագործում» էր: Նրան էր դիմել անգամ Սիրոպայում գտնվող «հայկական զորաբանակից» մի դինվոր՝ Նուլնպոս Ստեփանոս անունով, հավանաբար Թեոդոսուպոլիս-Կարինի կամ Մնչիտենի այն հայ պապիկյաններից, որոնք Կոստանդին V-ի կողմից 756 թ. Քրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքն էին տեղափոխվել: Այդ մասին մենք կարդում ենք հիշյալ վարքում (տե՛ս Քարթիկյան, Հայ-բյուզանդական նոթեր, էջ 129—131: Նրա մասին տե՛ս նաև *Лопарев*, Жития святых, стр. 119—145, *Kaegi*, The byzantine armies, p. 58—59, *Huxley*, On the Vita of St. Stephen, p. 97—108:

761. Պրոֆեսիոնալ զորքերը, որ ընդհանուր ձևով «տազմատա» էին կոչվում, ենթարկվում էին (IX դ. վերջում) վեց խմբի՝ *σχαλαί, έκταξουβίτωρες, ίχανάτοι, έριθμοί, νούμαρα, όπτιματοι*: Սխոյանները կենտրոնացած էին և՛ մայրաքաղաքում, և՛ նահանգներում: Նախած ժամանակին, կային 7—12 սխոյաներ, որոնց չորսը անըլտրի կազմում կար մոտ 500 զինվոր: Էքսուբիտորները բազկացած էին 18 դամարտական, չորսը անըլտրում 700 զինվոր: Արիթմոնները հիշված են նաև վիզյա կամ կայսերական վիզյա անվամբ և նրանց պարտականությունն էր ապահովել կայսեր անվտանգությունը նրա արշավանքների ժամանակ: Եկանատոսները կազմակերպվեցին նիկեփոր I-ի կողմից և մեծաթիվ չէին: Նուներոսները հիշված են VII դ. սկզբում, հայտնի չէ նրանց թվական կազմը: Օպտիմատոսները հաստատված էին Բյուֆանիայում, որտեղ ստեղծվեց Օպտիմատոսների բանակաթեմը: Նրանք բյուզանդական բանակում օժանդակ դեր էին խաղում: Հարցի մասին տե՛ս *Yannopoulos*, La société, p. 145—147:

762. Ըստ Ստեփանոս Նորավկայի վարքի՝ հեթանոսների և բռնի մահով վախճանվածների փոքր (էջ 1177): Սա ցույց է տալիս, որ դեռևս VIII դ. հեթանոսների համար առանձնացված էր հատուկ գերեզմանատուն:

763. Բնագրում՝ *Αρχιλόγ*: Մի բանի ձեռագիր և նիկեփոր պատրիարքը (*Nicephori Breviarium*, p. 82) տալիս են *Αρχιλόγ* բնթերցումը, ենթադրվում է Անբելաուս

ձովափնյա քաղաքը, այժմ՝ Պոմորիե Բուլղարիայում (*ИЗВОРИ*, том VI, стр. 273, прим. 2):

764. Սպաթարի մասին տե՛ս Կոստանդին Միրանաձին, էջ 234: Եղել են երկու տեսակի՝ «սպաթար» և «կայսերական սպաթար»: Հիշվում է VII դարից: Բարձր աստիճան էր և կրում էին բարձր պաշտոնյաները: Սպաթարը և՛ պատվաստիճան էր, և՛ սեռ պաշտոն: Կայսերական զվարդիալի մի գործառու կազմված էր սպաթարներից, որը կոչվում էր նաև «մանցավիտների գործառու» (*Yannopoulos*, La société, p. 54—55): Թեոփանեսը հիշյալ սպաթարի մասին գրելիս ավելացնում է՝ *κατά τον Βησιρ*, որ համարվում է ընդմիջարկություն: Թեոփանեսի լատիներեն թարգմանության մեջ այդ բառերը բացակայում են: Տե՛ս *Hemmerdinger*, ВНΣНР, p. 6: Βησιρ-ի մասին տե՛ս և վեր, ծանոթ. 596:

765. Կանդիդատի մասին տե՛ս Կոստանդին Միրանաձին, էջ 298—299: Նաև՝ *Yannopoulos*, La société, p. 59—60: Ե՛վ պաշտոն էր, և՛ պատվաստիճան:

766. Այսինթե՝ Կոպրոնիմոսը: Իբրև թե մկրտության ավագանում Կոստանդինը կեղտոտել էր, դրա համար թշնամիները նրան կոչել են «կոպրոնիմոս» («թրբանուն»):

767. Իշխանաց կղզիների խոշորագույնը, որ թուրքերն այժմ կոչում են Բուլուկագա (*Մեծ կղզի*): Այստեղ կային կայսերական պալատ, երեք արական և մեկ իգական վանքեր:

768. Կոստանդնուպոլիսի պատրիարք Նիկետաս I-ը (766—780):

769. Բնագրում՝ *γράμματα «գիր»* (գրագիտություն):

770. Հյուսիսային Իսրայելի թագավոր էր: Աչքի ընկավ որպես ծայրահեղ կոապաշտ և ճհովային պաշտողների հալածող: Բաադի պաշտամունքը դարձրեց պետական կրոն (տե՛ս Գ Քաղաքութեանց, ժԶ, 28, ԻԲ, 38, Բ Մնացորդաց, ժԸ, 1 և հտ.):

771. Սբ. Եվփեմիան ծնվել էր Քաղկեդոնում, գաղանարեկ եղավ 238 թ.: Նրա գերեզմանի վրա կառուցվեց մեծ եկեղեցի, որտեղ 451 թ. կայացավ Քաղկեդոնի տիեզերական ժողովը: Հետագայում նրա աշյուներ տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, իսկ 766-ին՝ Լեմոնոս կղզին:

772. Նկատի ունի Կոստանդին V-ի թոռ Կոստանդին VI կայսեր (790—797) և նրա մայր Իրենեին (797—802), որոնց օրոք առաջին խավրաքի կայսրերի պատկերամարտական քաղաքականությունը ետ մղվեց: Հիշյալ կայսրերը անգամ եկեղեցական ժողով զումարեցին և վերականգնեցին պատկերապաշտությունը:

773. Կոստանդնուպոլիսի Տարասիոս պատրիարքը (787—806):

774. Լախանոդարիոնը (թարգմանաբար նշանակում է «բանչարանոցի օձ») հիշատակվում է որպես Ասիայի արխոնտ և պատկերապաշտների ու վանականների ոխերիմ թշնամի: Նրա մասին տե՛ս նաև սբ. Ստեփանոս Նորավկայի վարքում (*Vita sancti Stephani*, col. 1165):

775. Մանի անունը Բյուզանդիայում հազվագյուտ է հանդիպում: «Չար Մանիի» տակ նըկատի ունի III դ. նշանավոր աղանդապետ, մանիքեոսյան հիմնադիր Մանիին:

776. Հոռոմի պապ Ստեփանոս IV-ը (768—772):

777. Լատ. solea: Բյուզանդական եկեղեցիներում բնմի և իկոնոստասի միջև ընկած տարածությունը, որը, որպես կանոն, փակված էր լինում ցանկապատով:

778. Բնագրում՝ *άνευλις*, որ կարելի է քննորդի էլ թարգմանել:

779. Այսինթե Կոստանդնուպոլիսի տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները, որ բազմած էին ձիարշավարանի ամֆիթատրոնում:

- 780. Ստոմայի մասին տե՛ս ծանոթ. 57:
- 781. Կոչվում էր Պելագիոսի գերեզմանատուն՝ նրան մոտիկ այդ անունով սբբի տաճար լինելու պատճառով:
- 782. Բառացի նշանակում է «անհուշ», շիշատակվող, հիշատակության ոչ արժանի, լռութան արժանի: Տե՛ս նաև նոր բառերը Հայկազյան լեզվի («անյուշ բառը»): Կոստանդին V-ի վանականներին «ամենմոռեմտոս» կոչելու մասին վկայում է և Ստեփանոս Նորավայրի վարքը, որի համաձայն Կոստանդին V-ը վանականներին սբեմք «խավարսիև» անվանեց, իսկ վանականներին՝ կոսպաշա (Vita sancti Stephani, col. 1112. Նաև 1132):
- 783. Նկատի ունի Փոյուղիայի առասպելական հարստության տեր Բագավոր Միդասին, որ այդ պատճառով գերահարուստ մարդու կերպար է դարձել:
- 784. Խելեան ձմեռային թիկնոց էր, որ հազնում էին խիտոնի վրալից:
- 785. Տիրազուց հիմնադրվել է Լոփխանոս կայսեր կողմից, բայց հաղվադեպ էր շնորհվում: Մեղ հետաքրքրող շրջանում կրկու անգամ է հանդիպում, այստեղ և Լեոն IV-ի կողմից Եղեղիմոսին շնորհվելու անուշխամը (տե՛ս 6268 թ. տակ): Տիրազուսի մասին շատ բան հայտնի է: Տե՛ս Yannopoulos, La société, p. 40—41:
- 786. Ընմտ. Անտիոս Երբակացու Մատենադրությունը, էջ 254, «Մանր բաժանեալ զդանականն լինի՝ սմէս (իմա՝ սեմիսին) Բ, տրմէս (իմա՝ տրիմիսին) Գ, ...կերատ ԻԻ...»: Կոստանդին V-ի և Եղեղիայի որդիներից, Խրիստոֆորոսը ծնվել էր 753 թ. առաջ, նիկեոսի ծննդյան թվականը հայտնի է: Երկուսն էլ Կոստանդին V-ի կողմից կեսար հռչակվեցին 769 թ. ապրիլի 2-ին: Նրանք ունեին կրկու որդիներ ևս՝ Նիկետասին, որ ծնվել էր 763 թ., և Անթիմոսին՝ ծնված 768/769 թ.:
- 787. Հետաքրքիր է նշել, որ «տղամարդ» միտքը արտահայտել է ἀνδρωπος բառով («մարդ»):
- 788. Քաղկեդոնիկ հողերահանների գլխի ծածկոցը: Տվյալ դեպքում նա հավանաբար շալման նկատի ունի:
- 789. Լոռում պալլիոն էին կոչվում ամեն տեսակի քառակուսի կամ ուղղանկյուն կտորները, որ տարբեր նպատակներով էին օգտագործվում. վարագույր, անկողնի ծածկոց, սավան, զորգ և այլն: Պալլիոն էր կոչվում նաև հունական հիմատիոնի օրինակով կարված հանդերձանքը, Եկեղեցում պալլիոն էր կոչվում երեք մատ լայնութիամբ բրդից կտորը, որի վրա կային վեց սև մետաքսե խաչեր: Այդ գեղում էր մետապոլիտի ուտին:
- 790. Դեռևս Կոստանդին V-ի կենդանության օրոք, նրա որդի Լեոնը կայսր (կայսերակից) էր հռչակվել: Բյուզանդիայում դա արվում էր իշխող հարստության ապագան ապահովելու դիտավորությամբ:
- 791. Լոռուի պապ Ագրիանոս I-ը (772—795):
- 792. Բնագրում՝ Βανδάλι: Գուցե Բանու կայս, այսինքն կայսիկները կամ նրանց ցնդապետը:
- 793. Սրան Քեոփանեսը այլ տեղում չի հիշատակում: Հենց Կոստանդին կայսեր Թագավորության ժամանակ Ղևոնդը հիշատակում է մի արար կառավարիչ «...որում Մալին կոչվին, որ էր այլ անօրէն և արիւնահեղ» (Ղևոնդ, էջ 133):
- 794. Խոսքը Միքայել Լախանոզրակոնի մասին է, Քրակեսիոն բանակաթեմի զորավարի Տե՛ս ծանոթ. 774:
- 795. Այսինքն՝ Կոստանդին V կայսեր:

- 796. Յուկանիստերիոն (պարսկերեն չու-բան, այժմ՝ շուհան խաղից): Ձիարշավարան էր Կոստանդնուպոլսում: Հավանաբար նույն անունով այլ ձիարշավարաններ էլ կային կայսրության այլ քաղաքներում: Ձիու վրա նստած գնդակ էին խաղում: Այդ խաղը հիշում է անգամ Մատթեոս Ուոհայեցին. «խաղ գնդին ի մայտանն» (Մատթեոս Ուոհայեցի, էջ 32):
- 797. Ապագա Կոստանդին VI կայսրը, Կոստանդին V-ի որդի Լեոնի (Լեոն VI-ի) որդին: Ինչպես պարզ երևում է Քեոփանեսի այս շարադրանքից, Բյուզանդիայում ընդունված էր նորածինին տալ պապի (հետևաբար՝ տատի, եթե երեխան աղջիկ էր) անունը այն դեպքում միայն, եթե այդ պապը (տատը) վախճանված էր:
- 798. Այսինքն՝ Թանաքով ծնծել, դաջել (տատուիրովա), հնարավոր լինելու համար ներքանց տարբերել: Հայկական աղբյուրները ևս ընդգծում են այս Արղայայի ընշաքաղցությունը և նրա օրոք Հայաստանում ծանրացած հարկապահանջության մասին: Ղևոնդի ասելով «...իշխանութեանն Արղայայի միւսոյ յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց. բանդի դժոխան ագահութիւն անհամբոյր թշնամուն ոչ շատացաւ ուտել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հօտիս և բմպել զարին իրրև զշուր զարհամարհես ևոցա. այլ համօրէն գրոյր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք... շնոր կոտանօք, գեշարանօք և կախաղանօք և դանտ տանչանօք կեղէին պեկանս մարդկան: Յորմէ փախստեալ կղէալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զողեալ թագլին...» (Ղևոնդ, էջ 135):
- 799. Բոյար (բնագրում՝ Բուլան) և Յիգատոս (ճիշտը՝ չիգատ) պրոստորույթարական տիրուհուներ են: Քեոփանեսը Յիգատը բերում է որպես հատուկ անուն: Կարծիք է հայտնվել, թե մեղ հայտնի «չիգատ»-ն է (Bury, A History, vol. II, p. 474, n. 3): Քեոփանեսի առանհն թարգմանիչը թարգմանել է «цуган» (!):
- 800. Իմա՝ խան Տելերիզը (768—777):
- 801. Գտնվում էր Մակեդոնիայի կենտրոնում: VII դարում Քեսաղոնիկի մոտ բնակվում էր սլավոնական բերդիտների ցեղը, որոնք 676 թ. մասնակցեցին քաղաքի պաշարմանը: 685—687 թթ. քաղաքի վրա հարձակվեցին Ստրիմոն (Ստրամիցա) գետի ափին բնակվող ստրիմոնիտները: Է. Կրյշիցի կարծիքով Լուսինիանոս II-ը հենց այս շրջանների վրա արշավեց 687 թ. (Липица, Славянская община, стр. 157: Նույնի՝ Византийское крестьянство, стр. 138: Նույնի՝ Очерки-стр. 30: Հմտտ. ծանոթ. 804):
- 802. Այսինքն՝ Օպտիմատոն բանակաթեմի ղինվորներին:
- 803. Պատերազմն այստեղ տեղի ունեցավ 774 թ.: Կիթտոսիան միջև օրս ճշգրտություն չի տեղադրվում: Չլատարակու կարծիքով գտնվում էր բուլղարական Չագոբխայում, բուլղարաբյուզանդական արևելյան սահմանի մոտ (Златареки, История, I, 1, стр. 232, прим. 1):
- 804. Կոստանդին V-ի Բուլղարիայի վրա կատարած արշավանքների մասին հատուկ տե՛ս Beševliev, Die Feldzüge, S. 5—17:
- 805. Ժամանակակից Լուլի Բուրգազը Քուրբիայում:
- 806. Այժմ՝ Սիլիվրիա՝ Քրակիայի հարավային ծովափին:
- 807. Թարգմանաբար նշանակում է «Կոթ բերդ»: Գտնվում էր Մարմարայի ծովում՝ Հերզոմոնի և Քեոզոսիոսի պարսպի միջև:
- 808. Հատուկ գոհունակությամբ է հիշում նրա մահը Ղևոնդ պատմիչը. «Են ինքն Արղալցեալ ամենայն ախորժակօք շարասէր կամաց իւրոց և ճնշեալ զղոխ իւր և բազմանս ար-

ծախարկութեան աստի, և ազահեալ զազահուիբին շար տան իւրոյ՝ ընդունէր զմարգարէին նշովսն. և յուսակորոյս սատակեր անդէն ընդ հուպ ի նմին ամի...» (Ղևոնդ, էջ 153—154): Մովսես Կաղանկատվացին գրում է, որ նա «մեծաւ ի Գումբէթն Աբրահամու» (էջ 334):

- 809. Լևոն IV կայսր (775—780):
- 810. Ղևոնդը նրան անվանում է «Մահմետ Մահադի որդի նորա» (այսինքն՝ Աբդուլայի, էջ 154): Խոսքը Աբու Արգալլահ Մուհամմադ ալ-Մահհի իբն ալ-Մանսուրի մասին է, որ հայ պատմիչի ասելով, «էր աղետական քան զհայր իւր և լուսագոյն բարոր», թէն չի մոռանում ավելացնել, որ «Յէպտէտն զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝ սահայն վասն զիւտի արծաթոյն հանդեաւ երկիրս առ փոքր մի շար տառապանաց վրտանգին» (Ղևոնդ, էջ 154—155): Կաղանկատվացին նրան անվանում է «Մադի, որ կոչի Մահմատ, որդի Արգալլահի» (էջ 334):
- 811. Նա Գրիգորի որդին էր և Արիշիսի՝ Բենեդեկտսի առաջին լոմբարդացի իշխանի (758—787) ազգականը: Իսկական անունը Ազելիզիս էր (Guiland, Les patrices, p. 320—321):
- 812. Հիշվում է Ղևոնդի պատմության մեջ. «Եւ ինքն Մահմետ... զբռնարեալ զօրս՝ տայր ի ձեռս զօրավարի միոջ իւրոյ կորօր, որում անուն էր Աբաս և առաքէ զնա յաշխարհն Յունաց» (Ղևոնդ, էջ 155):
- 813. Սա ազդուրներում հանդիպող առաջին հիշատակությունն է, երբ բյուզանդական հպատակության բոլոր խափերը՝ սենատը, բանակը և դեմոսը, կայսրն հավատարմության երդում են տալիս: Սովորության վերաբերյալ ան՝ս Svoronōs, Le serment de fidélité, p. 109: Հետագայում այդ կարգը դարձավ սովորական: Նույն տեղում, էջ 111, «Արհեստանոցների աշխատողների» տակ ենթադրվում են Կոստանդնուպոլսի համբարությունների ղեկավարները: Թեոփանեսի այս տվյալը պարզ ցույց է տալիս, թէ արհեստավորները զգալի դեր էին խաղում երկրի քաղաքական կյանքում VIII—IX դդ. (Հմմտ. Липунца, Очерки, стр. 122): Արհեստավորների հետ կարևոր դեր էին խաղում նաև դեմոսները՝ քաղաքների կազմակերպված բնակիչները, որոնք հակադրվում էին անկազմակերպ «ժողովրդին» λαός-ին:
- 814. Այս Կոստանդնիս Թեոփանեսը նոր է կոչում՝ նախորդ տարին վախճանված պապի՝ Կոստանդին V-ի հետ լշինաթիւս համար: Թագավորից 780-787 թթ. որպես Կոստանդին VI:
- 815. Ենթադրվում է սյունաշարքը:
- 816. Գարեկոնի մասին տե՛ս ժանոթ, 737:
- 817. Թնադրում՝ Καριστερότης: Վիմագիր արձանագրություններում և ձեռագրերում հունարեն Β* և Κ* տառերի գրությունն ձևը նույնն է և երբ խոսքը հազվադեպ հանդիպող օտար անվան կամ տեղանվան մասին է, հրատարակիչները տարակուսանքի մեջ են ընկնում: Օրինակ՝ էյրեկի արձանագրության մեջ հիշվող «Վիխկացի»-ն: Բյուզանդագետները կարդում էին այնպես, ինչպես գրված էր՝ «Գիխկացի (տե՛ս Bartikian, La généalogie, p. 265—266): Պարզ է, որ Թեոփանեսը գրել է Βαριστερότης — Վարադոտրոց (Անաստասիոս Բիբլիոթեկարեոսը գրում է Basterotzes: Theophanis Chronographia, rec. C. de Boor, vol. II, p. 299): Թեոփանեսի «Վարադոտրոցը» Վարադոտրոց կարգաց (հարցականով) առաջին անգամ Ք. Պատկանյանը (տե՛ս История халифов», стр. 162: Տե՛ս և Պեյցեր,

Սկզբնատրուիինք, էջ 33—34 (ժանոթ. հայ թարգմանիչ Գարանֆիլյանի), նաև Աղոնց, Մամիկոնյան իշխանուհին, էջ 362):

- 818. Ենթադրվում է Մուշեղիկը: Գրիգորի հայրանունը պարզ վկայում է նրա հայագրի լինելու մասին: Ինչպես տեսնում ենք, Թեոփանեսը հիշում է շորս հայ բարձրաստիճան գինվորականների՝ բանակամեծերի զորավարների անուններ՝ Արտավազդ, Վարադոտրոց, Տաճատ և Մուսուլակի որդի Գլիգոր, այսինքն լրացնում է հենց հայկական ազդուրների տվյալները: Ղևոնդը գիտե միայն երկուսին. «Կարգէ (Լևոն կայսրը) ի վերայ նոցա զօրավարս երիս, որք էին երկու ի նոցանէն ի նախարարացն Հայոց, անուն միում Տաճատ ի տանէ Անձևացեաց, և երկրորդն Արտավազդ ի տանէ Մամիկոնեանց, և միւսն ի զօրացն Յունաց» (Ղևոնդ, էջ 155):
- 819. Թեոփանեսը ռազմական գործողությունները տեղագրում է Գերմանիակայում (Մարաշ): Հետաքրքիր են Ղևոնդի տվյալները. «...առաքէ վաղվազակի արքայն զօր բազում ի վերայ Բասանաստանի (բատ Ք. Պատկանյանի՝ Ասորիքը՝ Բար-էլ-Շամ, История халифов, стр. 162, прим. 220). որում Բիշանն կոչի... որոց (իմա՛ զօրավարաց) խաղացեալ յառաջ զօրօք բազմօք՝ հասանէին ի կողմանս Կիլիկեոց և Բիշանու, և սփռեալ զապատակս իրեանց ի վերայ աշխարհին՝ առին զբազում քաղաքս և զգաւասս և զգիւս...» (Ղևոնդ, էջ 155—156):
- 820. Բնագրում՝ Խօճաշի:
- 821. Այսինքն Սոֆիանե պալատում, որ սկսել էր կառուցել 568 թ. Հուստինոս II կայսրը և կոչել իր կնոջ Սոֆիայի անունով: Գտնվում էր Բոսֆորի ափական ափին, ժամանակակից Չեզեյբոյլի տեղում:
- 822. Հմմտ. Ղևոնդ, էջ 156. «Եւ երթեալ յանդիման լինէին կայսերն Յունաց հանդերձ բազում աւարաւ. և բազում զովութեամբ ընդունէր կայսրն Լևոն զօրս իւր, և մեծամեծ պատիւս ընծայէր զօրազլխաց իւրոց...»:
- 823. Խոսքը հակորիկ ասորիների մասին է: Այս գաղթի մասին վկայում է և Միքայել Ասորի (Michel le Syrien, t. III, p. 2): Նրա հայ թարգմանիչը ասորիների հետ հիշում է և հայերին:
- 824. Միջագետքից (վայրը նշում է միայն Միքայել Ասորի) Թրակիա զաղթեցված ասորի հակորիկները, ամենայն հավանականությամբ, հաստատվեցին Ֆիլիպպուպոլիս քաղաքում և երկար զարեք պահպանեցին իրենց գոյությունը: Գեոուս Ալեքսիոս I Կոմնենոս կայսեր օրոք (1081—1118) Ֆիլիպպուպոլիսում կային հակորիկ ասորիներ, որոնք հակապետական խռովությունների ժամանակ միշտ միանում էին նույն քաղաքում բնակվող պավլիկյաններին (տե՛ս Anne Comnène, Alexiade, t. III, p. 181): Այս գաղթի մասին ընդհանուր ձևով հիշատակում է և Ղևոնդը. «Եւ ինքեանք առեալ զբազմութիւն խոսործաղանձիցն վարեցին յաւարի, զորոց զթիս գերեւոցն ասնն լինելուսն ընդ ժն բիւր արանց, զորս առեալ տանէին յաշխարհն Յունաց» (Ղևոնդ, էջ 156): Միքայել Ասորիի գաղթած ասորիներին «ուղղափառ» է անվանում, հարկավ, իր տեսանկյունից (Michel le Syrien, t. III, p. 2: Հմմտ. նաև Միխայել Ասորի, 1871, էջ 353): Հայ թարգմանիչը գրում է «Հայս» և Ասորիս ուղղափառ, և բնակեցոյց ընդ ինքեան ի Թրակիա»: «Հայս»-ը հավանաբար իր ավելացրածն է: Այդպես է նաև 1870 թ. հրատարակության մեջ, էջ 364:
- 825. Կոստանդնուպոլսի պատրիարք Պավղոս IV-ը (780—784):

- 826. Ազգա խալիֆա Աբու Զաֆար Զարուն առ-Ռաշիդ իրն ալ-Մահդին: Դևոնդի ասելով (էջ 157) արշավողը Աբասն էր (Թեոփանեսի Աբասովային), որին օգնութիան հասավ և Հայաստանի արար ոստիկան Յզդզը:
- 827. Իմա՛ Երուսաղեմ:
- 828. Լիսիասի տակ, հավանաբար, ենթադրվում է Անտիոքու նախնանքի խորհրդական Լիսիասը, որ մասնակցեց էբրայեցիների ապստամբութեան ճնշման, Երուսաղեմի պարիսպների տապալման և բազում հրեաների կոտորման (տե՛ս Բ Մակաբայեցուց, ԺԱ, և Հտ.): Իսկ Ազդիկոյաբար գուցե Հուլիոս Ազդիկոյաբար, հռոմեական զորավար (I դ.):
- 829. Հունարենում՝ Տյուրոֆագոս: Այդպես է հույն եկեղեցում կոչվում բարեկենդանի կիրակիին հաջորդող շաբաթը, որի ժամանակ թեև արգելվում է միս ուտելը, թույլատրվում է օգտագործել պանիր, կաթ, յուղ և ձու: Դա կատարվում է որպես նախապատրաստություն մեծ պահքին: Ըստ ավանդության տյուրոֆագոսը շաբաթը հաստատեց Լեբակիլոս I կայսրը՝ հոստովի դեմ տարած հողթանակից հետո:
- 830. Պրոտոսպաթարի մասին տե՛ս Կոստանդին Միրանձիմ, էջ 212—213:
- 831. Պապիսս պալատական պաշտոն էր, որի կրողը ներքինի էր լինում: Գոյություն ունեին կրեթ պապիսս՝ Մեծ պալատի, Մագնավրայի պալատի և Դափնեի պալատի (Yannopoulos. La société, p. 70 և ծանոթ. 426):
- 832. Այսինքն՝ ամիրայուտի որդին: Տե՛ս ծանոթ. 826:
- 833. Զարուն առ-Ռաշիդը գրավեց 780 թ. սեպտեմբերին: Միբայել Ասորին բերդը կոչում է Սեմալոս (Michel le Syrien, t. III, p. 1):
- 834. Փոքրասիական թեքակզու արևմտյան մասը: Տե՛ս ծանոթ. 557:
- 835. Նկատի ունի Քրիստոսի աշակերտներին:
- 836. Ռ. Գիլյանը ենթադրում է, որ այս Վարդաբ հետազայում ենթում է ստացել, որ 792 թ. բուլղարների դեմ պատերազմին մասնակցած պատրիկ Վարդաբը, հավանաբար, նույն անձնավորությունն է (Guiland, Les patrices, p. 327):
- 837. Գոմվում էր Կիլիկիայից Տավրոս առնող լեռնանցքներից մեկի շրջանում (Ramsey, HGAM, p. 355):
- 838. Այս անկեղտի տարբերակները պահանջվել են և այլ սղրչությունում (Reinach, Un intrus byzantin, p. 52—62):
- 839. Խոսքը Կարողու Մեծի, Եարվմանչի մասին է (800—814):
- 840. Կայսեր գանձապետը:
- 841. Պրիմիկերիոս էին կոչվում ասորին հոգևորականության (կիսասարկավազից ցած) վերակազմերը: Գոմվում էին նախկուպոսների ենթակայության մեջ: IX դ. վերջում աստիճանավոր ներքինիների հիերարխիայում պրիմիկերիոսը գտնվում էր շորրորդ տեղում: Պրիմիկերիոսը և՛ պաշտոն էր, և՛ պատվաստիճան:
- 842. Ἐρσίδρος (կարմիր) բառից: Թեոփանեսը տալիս է Ռոտրոդոս անվան հունարեն թարգմանությունը:
- 843. Բնագրում՝ Γραικῶν γράμματα καὶ τῶν γλωσσῶν: Ինչպես տեսնում ենք, նրա խոսքը լեզվին է վերաբերում, Թեոփանեսը չի դորձածում Բωραὶος հռոմայեցի բառը (որ միջնադարում օգտագործվում էր նաև «հույն» նշանակությամբ): «Գրեկոս» նշանակում է «հույն քրիստոնյա», իսկ «հռոմայեցի» (հայերեն՝ հռոմ) նշանակում է Հռոմեական կայսրության քաղաքացի՝ անկախ ազգությունից (տե՛ս Τσάρας, Τὸ νόημα τοῦ Γραικῶσας, σελ. 146—147):

- 844. Քաղաք Փոքր Ասիայում, Գորիլիսից (այժմ՝ Էսբի շենիր) հարավ: VI դ. Հինրոկիեսը հիշատակում է այն որպես Փոյուզիա Մայուտարիա պրովինցիայի 23 բաղաձայնից մեկը: Նախկուպոսության կենտրոն էր՝ Արեադոնի մետրոպոլիտության ենթակա:
- 845. Ռամզին ուղղում է Բարեննու ու տեղագրում Օպսիկիոն և Թրակեսիոն բանակաթեմերի սահմանադրին:
- 846. Ռամզին ուղղում է Βαρύγ (Bariv) և տեղագրում Բարեննուսի (անսիկ շրջանի Գրանիկոս) գետաբերանի մոտ (Ramsey, HGAM, p. 159): Անաստասիոս Բլեբլիոթեկարիոսը գրում է Barim: Տե՛ս և ծանոթ. 845:
- 847. Այսինքն՝ կայսրուհի Իրենեն:
- 848. Տաճարի մասին շատ արժեքավոր մանրամասնություններ պահպանել է Ղևոնգը: Տաճարից է տալիս, որ Տաճարը արարների մոտից փայտել է Կոստանդին V կայսրից: Տաճարը նրան սիրալիբ կերպով էր ընդունել, Վրի լառաշագուն է համբավում ծանուցեալ էր զարիտիան նորա» (էջ 158—159): Կայսրը սկզբնական շրջանում նրան ուղարկել էր բուլղարների դեմ, որտեղից նա վերադարձավ հողթանակած: Դրա վրա կայսրը նրան «կարգեր զօրավար ի վերայ Գ Քիբ արանց, և կայր ի հնազանդութեան արքային Յունաց ամս ԻՔ» (էջ 159): Մենք գիտենք, որ նա Բուկլարների բանակաթեմի ղորավարն էր, հավանաբար և այլ բանակաթեմերի, քանի որ 22 տարի ընդ կարող նույն բանակաթեմում ծառայել: Ղևոն VI կայսրը մահից հետո (780) Տաճարի հարաբերությունները Կոստանդին VI-ի և նրա մոր՝ Իրենեի հետ վատանում են և նա փախչում է արարների մոտ: Ապագա խալիֆա Զարուն առ-Ռաշիդը Տաճարին «հայր իբ անուանեաց... և մեծամեծ պատուօք ընծայել նա»: Իսկ խալիֆան էլ «տայր նմա դատիս իշխանութեան ի վերայ երկրիս Հայոց, և ստաթ է զնա յաշխարհն իբ մեծա շքեղութեամբ» (էջ 159): Հայաստանի ոստիկան Օթմանը Տաճարին այլ նախարարների հետ միասին ուղարկեց խազարների դեմ, այդ ընթացքում էլ նա հիվանդացավ ու վախճանվեց (Ղևոն, էջ 160—161):
- 849. Կային մի քանի տեսակի լոգոթեթիեր: Որպես կանոն հարկային պաշտոնյաներ էին նրանց մասին հատուկ տե՛ս Miller, The Logothete of the Drome; Guiland, Les Logothètes:
- 850. Բնագրում՝ Βεργουα: Չչիոթել Լալեպի հետ, որը ևս այդպես է կոչվում, ոչ էլ Մակեդոնիայի նույնանուն քաղաքի Այստեղ խոսքը Արեևիայան Ռումելիայի Բերոն (Βερόνη) քաղաքի մասին է, այժմ՝ Կաղանլիկ Բուլղարիայում (ըստ ուրիշների՝ Ստարա Զագորան): Գտնվում էր Ֆիլիպպոպոլիս-Անքիալոս և Ադրիանուպոլիս-Նիկուպոլիս ad Istrum ճանապարհների վրա և տիրապետող դիրք ունի այժմյան Շիպկայի կիրճի վրա:
- 851. Հավանաբար՝ վերականգնել:
- 852. Այժմ՝ Պուլգիլ քաղաքը Բուլղարիայում:
- 853. Այժմ՝ Պոմորիե Բուլղարիայում, Բուրղազի շրջանում: Խոսքը, հասկանալի է, ոչ թե քաղաքի կառուցման մասին է (այն գոյություն ուներ VI դ. մ. թ. ա.), այլ, հավանաբար, վերականգնման: 740 թ. Թրակիայում երկրաշարժ էր տեղի ունեցել և այլ քաղաքների թվում տուժել էր և Անքիալոսը:
- 854. Աբու Մուհամմադ Մուսա ալ-Հադի իրն ալ-Մահդի (785—786): Հմմտ. Ղևոն, էջ 161. «Ապա յետ նորա Մուս է փոխանորդ զիշխանութիւն հօր իւրոյ ամ ա»: Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 334. «Մուս է ամ մի»:

- 855. Կոստանդնուպոլսի Տարախոս պատրիարքը (784—806):
- 856. Տե՛ս Ա Կորնթ., Թ, 27:
- 857. Այսինքն՝ Պետրոս առաքյալի: Հմմտ. Մատթ. ԺԶ, 18. «Ջի դու ես վեմ, և ի վերայ այդք վիմի շինեցից զկեղեցի իմ»: Յովհ. Ա, 40. «Սիմոնի (իմա՛ Պետրոսի) վիմի»:
- 858. Հմմտ. Մատթ. Ը, 12. «Ելցեն ի խաւարն արտաքին»:
- 859. Խոսքը նիկիական հանգանակին է վերաբերում:
- 860. Լևոն III-ին նկատի ունի:
- 861. 754 թ. ժողովի:
- 862. Տե՛ս Բ Տիմոթեոս, Բ, 9:
- 863. Նկատի ունի Աբու Ջաֆար Հարուն առ-Ռաշիդ իբն ալ-Մահդիբն (786—809): Հմմտ. Ղևոնդ, էջ 166. «Յետ սորա կացեալ Ահարոն որդի Մահմետի եղբայր Մուսէի ազահ՝ և արծաթատէր»: նաև՝ Կաղանկատվացի, էջ 334. «Հարուն՝ Մադիայ որդին, զոր Մադիունն կոչեն, ամս քսան և հինգ.—սա նեղութիւն անշախ հասոյց աշխարհի և վասն այնր բազում զաւառք Հայոց փախեան ի Հոռոմս»:
- 864. Արար հեղինակների համաձայն մեռավ 786 թ. սեպտեմբերի 15-ին:
- 865. Ժողովը գումարվեց 786 թ. հուլիսի 31-ին: Բայց ինչպես ցույց է տալիս Քեոսիանսը, կայսերական պահակախմբի զինված միջամտության պատճառով ստիպված եղավ դադարեցնել իր աշխատանքները: Այն դումարվեց 787 թ. նիկիա քաղաքում և տեղ սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 13-ը: Այն հայտնի է որպես 7-րդ տիեզերական ժողով և վերջինն էր, որ Արևելյան եկեղեցին ճանաչում է որպես տիեզերական: Հայտնի է, որ առաջին տիեզերական ժողովը 325 թ. կայացավ նույն նիկիա քաղաքում: Ժողովի վերաբերյալ նորագույն գործիչի տե՛ս *DARROUZES*, *Listes episcopales*, p. 5—76; *Manitiz*, *Synoptic greek accounts*, p. 147—186:
- 866. «Կատեխումենա» է կոչվում պրոնատոր կամ նարթեքը, որտեղ քրիստոնեության սկզբնական շրջանում սովորաբար կանգնում էին կատեխումենոսները (նրանք, ովքեր նախքան մկրտվելը պիտի լսեին քրիստոնեական վարդապետությունը և «փորձվեին»): Այդտեղ էին կանգնում նաև հրապարակայնորեն իրենց մեղքերը խոստովանողները:
- 867. Բնագրում՝ νεοκλήριον: Մարաթոնի ճակատամարտի հաջմական ավարտից հետո (մ.թ.ա. 490 թ.) Աթենք շտապած և պարտիկների դեմ հույների տարած հաղթանակի ավետիք բերած զինվորի կոչն է:
- 868. Զինվորական կայան էր, գտնվում էր Օպտիմատոն քանակաթևում: Վերջինիս կենտրոնը նիկոմեդիա քաղաքն էր:
- 869. Նիկիայի ժողովին մասնակցում էին Հոռոմի Աղրիանոս պապի, Ալեքսանդրիայի Պոլիտիանոս պատրիարքի, Անտիոքի՝ Քեոզորեստոսի և Երուսաղեմի Եղիայի ներկայացուցիչները (տոպոտերետես): Նախագահում էր Կոստանդնուպոլսի Տարախոս պատրիարքը:
- 870. Տե՛ս ծանոթ. 865:
- 871. Բնագրում՝ τέρμα: Հայերը այդ բառը թարգմանում են «տոմար» (որ տոմարի՝ տարեցույցի, ժամանակագրական սխառնմի հետ ոչ մի առնչություն չունի): Հունարենում նշանակում է հատոր, զիբք, վավերագիր (տե՛ս Անատոլյան, Արմատական բառարան, հտ. IV, էջ 419—420), նաև որոշում:

- 872. Հավանաբար նույնանուն է Իսադրիայի Ապաղնային, որտեղ, ըստ Պրոկոպիոս Կեսարացու *Հուստինիանոս I-ը վանք կառուցեց* (*Ramsey*, HGAM, p. 356):
- 873. Ա. Գրեգուարը կարծիք է հայտնել, որ հիշյալ Գիոզենեք բյուզանդական էպիկական հերոս Գիոզենիս Ակրիտասի պատմական նախատիպն է (տե՛ս *Grégoire*, «Օ Διγενής» *Ακριτας*, p. 36): Սակայն Գիոզենեք (նշանակում է Ջևածին), և Գիզենիսը (Երկածին) տարբեր հասկացողություններ են:
- 874. Ստրիմոնը նույնանուն գետի վերին հոսանքում գտնվող զավառ էր, Սեբրե և Մել-նիկ քաղաքների հյուսիս ընկած շրջանը: VIII դ. կելսոսը էր, իսկ Կոստանդին Ծիրանածինի ժամանակ վերածվեց բանակաթևի:
- 875. Ստրատիոտիկոնի լողոթեքը վարում էր ժամանակակից ուղմական միևիստրի պաշտոնը:
- 876. Տե՛ս ծանոթ. 811:
- 877. Այսինքն սբ. Մամասի պալատը, որ կառուցել էր Լևոն I կայսրը 469 թ. Կոստանդնուպոլսում բնակված մեծ հրկեհից հետո, որի ժամանակ ավերակ դարձավ Սրբազան պալատը: Այն գտնվում էր սբ. Մամաս անունը կրող թաղամասում, որ նույնանուն է ժամանակակից Բեռլիթաշի հետ:
- 878. Բնագրում՝ Βαΐουλος, լատ. *baJulus*: Բառացի նշանակում է բեռնակիր և ունի փոխաբերական իմաստ՝ պետական զործերի բեռները կրող: Բյուզանդական կայսրության ժամանակ այդպես էր կոչվում վեներաբլի ներկայացուցիչը (հյուպատոսը) Կոստանդնուպոլսում:
- 879. Տե՛ս ծանոթ. 729:
- 880. Այդ անունով բազմաթիվ վայրեր կային Բյուզանդիայում՝ Կարիայում, Լիկիայում, Լյուդիայում, Պիսիդիայում և այլուր: Պարզ չէ ո՞ր մեկը նկատի ունի:
- 881. Ալեքսիոս Մուսուլեմ (կամ Մուսելի՝ Մուշեղ) նշանավոր հայազգի բնաանիքից:
- 882. Ըստ Ռամզեյի նույնանուն է Ստրաբոնի Յարոյայի հետ, որ գտնվում էր Բյութանիայում, Ասկանիայի լճի հարավային ափին (Ասկանիան Նիկիայի լիճն է, որ այժմ կոչվում է Իզնիկ գյուղը):
- 883. Այս բերդի ավերակները գտնվում են Ազրիանուպոլսից 20 կմ հյուսիս-արևելք, Պրովադի գյուղից հարավ:
- 884. Բուլղարիայի խան Կարդամբ (777/8—803 թթ.):
- 885. Բնագրում՝ Ἀνδρούς πόριος:
- 886. Անեա Կոմենեների տվյալներով տեղագրվում է Ցամբուլի և Գոլոնի միջև: Այլ կարծիքների մասին տե՛ս *ЛАНКОЗА-ПЕТКОЗА*, О территории, стр. 129:
- 887. Բնագրում՝ Παγχαρτίος: Անունից ելնելով կարելի է ենթադրել, որ նա, ամենայն հավանականությամբ, հայազգի էր, թեև պետք է ասել, որ հանդիպում են *Παγχαρτίος* անունով և ոչ հայազգի գործիչներ:
- 888. Ալեքսիոս Մուսուլեմին (Մուշեղին): Տե՛ս ծանոթ. 881:
- 889. Այսինքն Արմենիականների բանակաթևի զինված ուժերը:
- 890. Բյուզանդական աղբյուրներում «արմենիականներ» ասելով նկատի ունեն Արմենիականների բանակաթևի զորքերը կամ բնակչությունը, որ կարող է, ինչպես այստեղից պարզ երևում է, և հայեր լինեն:
- 891. Քեբասա (արար. Գաբեսա, Միքայել Ասորին գրում է Ռարասահ) բերդը հիշում է ղեռնա Պլինիոսը և համարում Լիկանիայի քաղաք՝ Տավոսում: Գտնվում էր Պոզանդոսում հանդիպող ուղմական երկու ճանապարհներից մեկի վրա: Գրանցից

- մեկը Տիանայից, մյուսը՝ Հերակլիա-Կյուրիստայից, Կիլիկյան դռների միջով տանում էին դեպի Տարսոս (Ramsey, HGAM, p. 339):
892. Բնագրում՝ *καταξέραιον*: Տե՛ս ծանոթ. 909 և 953:
893. Նույնացվում է այժմյան Սակար պլանինայի հետ, իսկ Անփայտ Աբրոլեբան՝ Դերփիշկա մոգիլայի՝ Բուզարիայի Ավիլենգրադի շրջանի ժամանակակից Ետիտ գյուղի (H30pυ, TOM. VI, cTp. 277, քրիմ. 4):
894. Բնագրում՝ *ἀνεψίος*, որ նշանակում է և «քեռորդի»:
895. Հոռոմի պապ Լեոն III-ը (795—816):
896. Բնագրում՝ *καθίσαι εις γωνίαν (անկյունում նստել)*:
897. Միրանի դահլիճը, այսինքն՝ պալատը (Παλατιόν) քառակուսի շենք էր, իր անունը պարտական է կառուցման ժամանակ օգտագործված ծիրանի-կարմիր մարմարյա սյունների ու պատերին: Հին սովորության համաձայն կայսրուհիները այստեղ էին լույս աշխարհ բերում թագածուհանգինին, որի պատճառով էլ նրանք Միրանածին էին կոչվում: Հայտնի չէ երբ և ում կողմից էր կառուցվել: Պալատը ծովահայաց էր, գտնվում էր Առֆիանե նավահանգստի մոտ, Պրոպոնտիսում, քաղաքի ելքուղական թերակղզու հարավ-արևելքում (Janin, Cons. byz., p. 121—122):
898. Կարդոս Մեծը թագադրվեց 800 թ. դեկտեմբերի 25-ին:
899. Նկատի ունի Իրենեի միանձնյա թագավորությունը 797-ից 802 թթ.: Նախապես նա թագավորում էր իր որդի Կոստանդին VI-ի հետ՝ 790—797 թթ.: Իրենեն առաջին կայսրուհին էր, որ թագավորեց միահեծան, բայց քանի որ հոռոմեական ավանդույթի համաձայն կայսեր իշխանությունը կապված էր բանակի զերագույն հրամանատարության հետ, Իրենեն օրենսդրական հրամանագրերում կոչվում է ոչ թե «թագուհի», այլ «թագավոր» (Ostrogorsky, Histoire, p. 211):
900. Կոստանդին V-ի:
901. Թերապիայի նախնական անունը Ցարմակե էր (թունավորող), Թերապիա (ապաշինում, բուժում) կոչվեց Աստտիկոս պատրիարքի կողմից (406—425)՝ վայրի լավ կլիմայի պատճառով: Այժմ կոչվում է Փարաբիլյա և օգափոխության վայր է: Գրանդրում է Բասֆորի նեղուցի մեջտեղում, նրա արևմտյան ափին (Janin, Cons. byz., p. 438—439):
902. Մալազինայի մասին տե՛ս ծանոթ. 868:
